

291.99
4-30

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՅՈՒՎՎՈՄ Է 1987 Ք.

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՅԵՐԿԵՐ

I

Պ Ր Ա Կ

1258

1. ԳՈՐԾԱԴՈՒԼ
2. ՆՇԱՆՎՐԻՔ
3. ԿԱՐՄԻՐ ՊԱՐՏԻՋԱՆՆԵՐ
4. «ԱԶՆԻՎ ԺԱՂԱՔԱՑԻՆՆԵՐ»


A 29872




ՊԵՏԼՐԱՏ

1987

ՅԵՐԵՎԱՆ









ԳՈՐԾԱԴՈՒԼ

Պիես 3 գործ . 1 պատկերով

Բանվորական կյանքից

1905 թ . Քրիլիտի

*Սույն պիեսը գրված է 1906 թվին և առաջին անգամ բեմա-
գրվել է 1912 թ . մայիսի 26-ին, Քրիլիտիում, նախկին Արախ-
տական թատրոնում, զերասան Արմենյանի ղեկավարությամբ :*

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Գեվորգ Բաղդանիչ — զործարանատեր
2. Մազբազ — նրա կինը
3. Սիրամուշ — նրանց հոգեվորդին
4. Վահան — զործարանի բժիշկ
5. Ստեփան — զործարանի կառավարիչ
6. Գրիգոր —
7. Շաբո —
8. Սիմոն —
9. Գարեգին —
10. Արշակ
11. Գոգիս —
12. Սեակ —
13. Ճուսիկ —
14. Մանուշ—
15. Սաքո —
16. Մարգար — Գեվորգի տան ծառան
17. Հերիֆնազ — Գեվորգի աղախինը
18. Պետրոս — Գեվորգի պարտիզավանը
19. Գիգուլի — պանդոկատատեր
20. Արտո — պանդոկոսում աշխատող
21. Վոստիկանական պաշտոնյա
22. Քաղափապահ
23. Բանվորներ, սագանդար և պարողուհիներ

զործարանում աշխատող
բանվորներ

Բանվորուհիներ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Բեմը մերկայացնում է գործարանի սեղանատունը: Նախամաշի ժամն է: Բանվորներն ու բանվորուհիները իրենց բանվորական խալաքներով, սեղանների շուրջը նստած, մախամաշում են:

Տ Ե Ս Ի Լ 1

Արշակ, Գրիգոր, Շաֆրո, Սիմոն, Մամուշ, Սարոս
և այլ բանվորներ ու բանվորուհիներ:

Գրիգոր.— (Լրագիր է կարդում):

Ընդգծելով վճռական «Գոտեմարտի» մեջ գյուղացիների ու զինվորների կատարելիք մեծ դերը, կոնֆերենցիան գյուղացիութան հարցի վերաբերյալ, վերջիններիս հեղափոխական վոզին բարձրացնելու և նրանց պրոլետարիատի շուրջը համախմբելու նպատակով, հանձնարարեց անհապաղ ձեռնամուխ լինել գյուղացիական հեղափոխական դեմոկրատիկ ձևով կառուցված կոմիտեների ստեղծմանը, վորոնց նպատակն է գյուղի փաստացի ազատագրումը:

Արշակ.— Կոնֆերանսի վերաբերյալ եզ հոռվածը մի բոլոր թող և տես մենչևիկների պարագլուխը Ժորդանյան 1894 թվին ինչ ա գրել: (Կարդում է):

«Նյութապես միացած ազգը, միացած է նաև դադափարապես: Բոլորն ել ձգտում են զարգացնել ազգային աշխատանքը, ամբացնել ազգը»: (Բոլորը ծիծաղում են):

Միմնն.—Միծաղելու եղտեղ ի՞նչ կա, վոր ծիծաղում եք:

Գրիգոր.—Միծաղելու բան չատ կա, յեթե միայն հասկանաս: (Արշակիմ) դու շարունակի: Եդ տեսակ հողվածներով մենչևիկներին ամեն բուպե կարելի ե խփել:

Արշակ.—Նրանց խփելու համար ես տեղ ուրիշ ավելի հետաքրքիր բան կա: (Կարդում ե):
ՃԱԳԳԻ վեհությամբ շահադրուլած են թե՛ բուրժուա - առևտրականը և թե գյուղացին ու բանվորը. դե արի ու մի ծիծաղի:

Մանուշ.—Իսկապես, վոր զարմանալու բան են գրել:

Գրիգոր.—Չարմանալու վոչինչ չկա: Մենչևիկները բուրժուաների առաջ խունկ ծխող մարդիկ են:

Միմնն.—Իսկ դուք ո՞ւմ առաջ եք խունկ ծխում:

Մանուշ.—Բու առաջ... (Բուրբը ծիծաղում են):

Շաֆրո.— (Միմնիմ) Կժեց: Լսի՛ր, Մանուշ, փոխարինարար ինձ մի կտոր շաքար տուր:

Մանուշ.— Փոխարինարար յես վոչվոքի շաքար չեմ տալիս: Ա՛ռ, վերցրո՛ւ: (Շաֆարը տալիս ե):

Շաֆրո.— (Միմնիմ) Տեսնո՞ւմ ես, Մանուշն ինչքա՞ն բարեսիրտ կին ա:

Միմնն.— Յես նրա բարեսիրտությունն առայժմ չեմ տեսել: (Բանվորներին աչքով ե անում):

Մանուշ.— Դե՛, դե՛, լեզուդ քեզ քաշի՛, խոսքդ ճանաչի՛: Յես քու իմացած կնիկարմատներից չեմ չայնիկը կվերցնեմ կտամ գլխովդ, իմ բարեսիրտությունս դու են ժամանակ կտեսնես, հողեմ գլուխդ... փչացած... չի ել ամաչում...:

Միմնն.— Դե՛ լավ, ել ինչի՞ յես նեղանում: Ես բուպեյիս քեզանից բարեսիրտություն հո չպահանջեցի:

Գրիգոր.— Ուշադրություն մի դարձրու:

Միմնն.— Պաշտպան դուրս յեկավ: Նրա մտքում յեթե մի՛ բան չլիներ, եդ խոսքը նա չեր ասի:

- Գրիգոր.— Ձենդ կարի՛ր, սարսաղ մունդուռի՛կ:
- Սիմոն.— Ձենդ ե՛լ կարի՛ր ու սասդ ե՛լ կարի՛ր,
ախմա՛խ:
- Գրիգոր.— Եդ ո՞ւմն ես ախմախ ասում: (Ուզում է
նրան խփել. Արշակը բռնում է):
- Արշակ.— Նստի՛ր տեղդ, նրա հետ ի՞նչ ես գլուխ
դնում: Դու գիտես, վոր նրա լեզուն ոճի լեզու յե-
նա ամենքին կխայթի:
- Գրիգոր.— Նրա խայթող լեզուն հարկավոր է արմա-
տից հանել, վոր ել չկարողանա վոչվոքի խայթել:
- Մանուշ.— Յես վոր իմացել եյի ձեր մեջ կռիվ եւ
ոսջանալու վոչվոքի շաքար չեյի տալ: Տղա-
մարդկանց խասիաթն ա. մի դատարկ բանից
ի՛նչ ասես՝ վոր չսարքեն:
- (Գոգիան, մի փունջ ծաղիկ ձեռքին, պարելով
նքս է գալիս):

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնք և Գոգիա

- Գոգիա.— Տաշի՛-տուշի՛, տաշի՛-տուշի՛: (Բոլորը
ծափ են տալիս, իսկ նա պարում է):
- Արշակ.— Գոգիա՛, քեզ ի՞նչ ա պատահել: Ի՞նչ ես
իմացել...
- Գոգիա.— Ուրախ բան. կինս ազատվել ա, տա-
շի՛-տուշի՛, տաշի՛-տուշի՛...
- Սաքո.— Կինդ ի՞նչ ա բերել, Գոգիա՛,
- Գոգիա.— Տղա՛, տաշի՛ -տուշի՛. տաշի՛ - տուշի՛...
- Մանուշ.— Աղջիկ բերած լիներ, դու ետպես չեյիր
զժժի:
- Գոգիա.— Թաքուն գնացի, պարտեզը մտա ես ծաղկի
փունջը կաղմեցի, իրիկունը գնալուց կտանեմ
կտամ կնոջս ու նորածին տղայիս ել կգրկեմ և

կուրախանամ: Տաշի'—տուշի', տաշի'—տուշի': (Պա-
րելով դուրս ե գնում):

Սաքոն.— Առաջին յերեխան ծնողների համար քաղցր
ա լինում:

Մաճուշ.— Մի քանի տարուց հետո, յերբ վոր մի
երկուան ել իդ նոր ելածի կողքին կշարվեն, ել չի
ուրախանա:

Շաքոն.— Չմոռանաս, Սիմոն, գործից դուրս դալու
ժամանակ Գոգիայի յախից բռնենք քաշ տանք չի-
րաչխանեն: Նրան տղա յե յեղել, մաղարիչն ես
գլխից հարկավոր ա խմել, վոր տղան բախտա-
վոր լինի:

Սիմոն.— Իհարկե, մինչև յեկեղեցի տանելը կնուծ-
քը չիրաչխանումը պետք ե անել վոր յերեխան
խելքով լինի:

Մաճուշ.— Բու կնուծքը յերևի չիրաչխանում են
արել, դրա համար ել դու եղպես խելքով ես:

Սիմոն.— Իհարկե, խելքով եմ:

Մաճուշ.— Հողս քու խելքով գլխիդ, սաղ որը խմե-
լուց աչք չես բաց անում:

Սիմոն.— Յես աշխատում եմ, յես ել խմում եմ, կամ
թե չե, քու մարդը, կարծում ես, քի՞չ ա խմում:
Մի գնա Յարալովի զավոդի բանվորներին հարցը-
րու, գործից դուրս ա դալիս թե չե, մինչև
տուն դալը Գիգոլի պաղվալն ա մտնում, իրեն
մի լավ դրստում ու հետո դալի:

Մաճուշ.— Մի բարի պտուղ ել նա չի: Յես նրան
չեմ պաշտպանում: Հողս նրա պխանից գլխին:
Ամեն պալուչկի որը Գիգոլի պաղվալից յես նրան
զուով եմ տուն բերում:

(Պեսարսը մի բուռ տրորված ծաղիկներ ձեռքին,
բարկացած, ներս ե մտում):

Նույնի և Պետրոս

Պ Ե Մ Ի Ր Ո Ս.— Հազար անգամ ասել եմ, ծաղկանոց մի՛ք մտնի, ծաղիկներին ձեռք մի՛ք տալ, չի լինում... քսենց ել աներեսություն կլի՞... ձեր պատճառով քանի՞ անգամ ինձ նկատողություն են արել: Դուք, վոր չեք ամաչում, ախպեր, յես ամաչում եմ:

Ա Ր Չ ա կ.— Եղ ի՞նչ ե պատահել, Պետրո՛ս բիճա: Եղ ո՞վ ե քեզ նեղացրել:

Պ Ե Մ Ի Ր Ո Ս.— Դուք եք նեղացնում, ել ուրիշ ո՞վ պիտի նեղացնի, եղ զահրումար ծաղկանոցի վրա սաղորը տանջվում, չարչարվում եմ, հոգիս դուրս ա դալիս, աչքիս լույսը թափվում ա, իսկ դուք դնում եք, ծաղիկները քաղում եք, հերիք չի, մնացածն ել վտտի տակ եք տալիս, կոխկրտում ու փչացնում: Ծաղկանոցի հետ բա մարդ ետպես կվարվի՞: Բա սա վայրենություն չի՞:

Դ Ր Ի Վ Ո Ր.— Պետրո՛ս բիճա, հասակավոր մարդ ես. մի քանի ծաղկի համար մի՞թե կարելի յե եսքան բանվորներին վիրավորել: Յենթադրենք մի բոպե, վոր բանվորներից մեկը, սիրտն ուզեց, դնաց ծաղկանոցից մի յերկու հատ ծաղիկ քաղեց, դրա համար դու պետք ե դաս դալմաղալ բարձրացնե՞ս:

Պ Ե Մ Ի Ր Ո Ս.— Ես ի՞նչ ա ասում, ա՛յ ձեզ մատաղ: Վո՞նց թե՛ սիրտն ուզում ա. շատ մարդու սիրտ չա՛տ բան ա ուզում, բայց թե տվողն ո՞վ ա:

Ա Ր Չ ա կ.— Փիլիսոփայություն մի արա. սրանից հետո յեթե դու մեր բանվորների ու բանվորուհիների համար ամեն որ ծաղիկ չես բերի, լավ իմացի՛ր, վոր քու ծաղկանոցումը մի հատ ծաղիկ չի մնալու:

Պ Ե Մ Ի Ր Ո Ս.— Սրանց լեզվի՛ն, սրանց խոսալո՛ւն,

ընենց ել մի պահանջում են, կարծես ծաղկանոցի տերը իրանք ըլին:

Արշակ.—Ծաղկանոցի տերն ել մենք ենք, գործարանի տերն ել ու ամբողջ յերկրի տերն ել...

Պետրոս.—Ծաղկանոցը զավթեցին սըրծան, հըմի ել գործարանն ու ամբողջ յերկիրն են ուզում զավթեն: Իշտահներիդ քացախ: Հրես դնում եմ Գևորգ Բաղդանիչին հայտնեմ, տեսնենք դուք վո՞նց եք ծաղկանոցը զավթում: (Դուրս ե գնում):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք և Գարեգին

(Գարեգինը տխուր ու տրտում մերս ե գալիս):

Գրիգոր.—Գարեգի՛ն, տխուր ես:

Արշակ.— Ի՞նչ ա պատահել:

Գարեգին.—Վաղոն պատերազմի դաշտից վերադարձել ե:

Գրիգոր.— Դե լավ, ուրախանալու փոխարեն դու տխրո՞ւմ ես:

Գարեգին.— Յեթե դուք իմանայիք՝ ի՞նչ վիճակի մեջ ե, դուք բոլորդ ել կտխրեյիք... մի թևն ու մի վոսը չկա: (Լաց ե լինում):

Բուռը.— Խեղճ Վաղո... դոչադ տղամարդ եր:

Արշակ.— Ափսո՞ս, ինչպիիդ դարձավ...

Գրիգոր.— Յեթե ինչպիիդ չլիներ, դու կարծում ես թո՞ւյլ կտային նրան տուն գալու:

Գարեգին.— Վաղոյի ասելով՝ ոտուաց զորքի կեսն ինչպիիդ ա:

Գրիգոր.— Ի՞նչ կա վոր: Ինչպիիդներին կուղարկեն տուն, սպանվածներին կլցնեն հողի տակ, իսկ մահացածներով նորից պատերազմը կշարունակեն:

Գարեգին.— Բայց խնդիրը նրանումն ա, վոր ասում ա՝ պատերազմը չի շարունակվում:

Շաքրո.— Ինչպե՞ս. ասում ա՝ պատերազմը չի շարունակվում:

Բ Ն Լ Ո Ր Ր.— Ուրեմն հաշտությունն ա կայացել:

Գ Խ Բ Գ Ի Յ.— Հաշտությունն ել չի կայացել. ասում ա՝ դրությունը չի սկսել ա, թիկունքի կռիվ ա ոկըսւմ է: Զինվորները, ասում ա, հրացանները դեմ են տվել դեներալներին ու ոֆիցերներին:

Գ Բ Ի Գ Ո Ր.— Հեղափոխությունը հիմա վոր կսկսվի՞:

Գ Խ Բ Գ Ի Յ.— Հեղափոխությունը, ասում ա, ենտեղ արդեն սկսած ա: Ճապոնացիները առաջ են շարժում: Ռուսաց զորքը նահանջում ա: Ադմիրալ Ռոստոմովենսկու եսկադրոնը ծովում խորտակվել ա ինքն ել դերի ա ընկել: Զորքը պատերազմի դաշտից ինքնակամ, ասում ա, թողնում հետանում ա: Մեծ քաղաքներում, ասում ա, բանվորները գործադուլ են անում, շատ տեղ, ասում ա, նրանք բարեկադային կռիվների յեն անցել:

Շ Խ Բ Ր Ո.— Յես զարմանում եմ, լրագրերում ինչի՞ եղ մասին՝ վոչինչ չեն գրում:

Գ Բ Ի Գ Ո Ր.— Վոր թույլ տան, կգրեն:

Ս Ի Մ Ո Յ.— Մրանք եղ ինչ վոր ասում են, դու կարծում ես՝ ճի՞շտ են ասում: Սեղի արի՛: Ռուսաց զորքի անունը լսելիս արար աշխարհ սարսափում ա, Ճապոնյան ինչացո՞ւ յա, վոր նրա առաջ կանգնի: Սուտ ա: Ո՞վ ասեց, թե եսկադրան ծովում խորտակվել ա: Ո՞վ ասեց, թե ռուսաց զորքը պատերազմի դաշտից ինքնակամ կերպով հեռ ա դալի: Ո՞վ ասեց, թե բանվորները մեծ քաղաքներում գործադուլներ են անում և բարեկադային կռիվների յեն անցել:

Գ Խ Բ Գ Ի Յ.— Վաղոն ա ասում:

Ս Ի Մ Ո Յ.— Վաղոն վոչինչ ել չի ասում: Եղ բոլորը մեր հնարած բաներն ա: Դուք դրանով ուզում եք մեր բանվորների միտքը պղտորեք, մեր մեջ խառնակություն գցեք:

Շ Խ Բ Ր Ո.— Սուտ արե՛ք Գեվորգ Բաղդանիչը դալիս ա:

Նույնք, Գեվորգ և Ստեփան

Նրանց մերս գալու ժամանակ բոլորը վոտֆի յեմ կանգնում. իսկ Գրիգորն ու Արշակը մտած՝ շարունակում են լրագիր կարդալ) :

Գրիգոր.— (Կարդում է) «Այնուհետև կոնֆերանցիան անցավ սպառազինման և զվճառական գոտեմարտի» հարցին...» :

Գեվորգ.— Ստեփան, սրանք այստեղ նախաճաշելու՞ յեն յեկեկ, թե լրագիր կարդալու համար : Ղեկավարութունդ թույլ է : Սեղանատունը դրադարան—ընթերցարանի յե վերածվել : Յեթե նրանք այստեղ ընթերցանությամբ կդրադվեն, պարզ է, վոր աշխատանքի ժամերին նրանք պետք է նախաճաշեն : Սրանում յերկու կարծիք լինել չի կարող : (Գուրս է գնում) :

Ստեփան.— (Արշակին) Ձեր տղեղ վերաբերմունքի պատճառով, յես նկատողության արժանացա : Ի՞նչ է նշանակում գործարանատիրոջ ներկայությամբ դեմոնստրատիվ կերպով նստել ու լրագիր կարդալ :

Գրիգոր.— Այս ի՞նչ նորութուն է : Առաջին անգամն ենք իմանում, վոր լրագիր կարդալու համար ձեզնից նախորդք թույլտվութուն եր հարկավոր վերցնել :

Ստեփան.— Այդ նորութուն չէ, խնդրում եմ ասածներս չաղավաղել : Այդ տարրական քաղաքավարության կանոններից մեկն է : Յեվ դուք այդ պետք է հասկանայիք :

Գրիգոր.— Դե ի՞նչ արած, տղեա բանվորներ ենք : Քաղաքավարության կուրսեր չենք անցել : Լրագիր կարդալն էլ մեզ արգելում էք : Քաղաքավարության կանոններն էլ վո՞րտեղից մենք սովորենք :

Արշակ. — Պարոն կառավարի՛չ, մեր ազատ ժամն է:
Խնդրում եմ մեզ չխանդարել: Գևորգ Բաղդանիչը
մեզ է սպասում, գնացե՛ք:

Ստեփան. — Ա՛խ, սկսեցես, յես բոլորովին մոռա-
ցա... (Դուրս է գնում):

Գարեգին. — Քաղաքավարի կերպով դու նրան դուրս
արի՛ր:

Արշակ. — Քաղաքավարու՛թյան տարրական կանոն-
ներն արդեն յես սովորեցի...

Բոլորը. — Այ ի՛նչ շուտ սովորեցիր...

(Բոլորը ծիծաղում են: Գործարանի աշխատանքի
հրավիրող շշակը տալիս են: Բոլորն էլ վեր են կե-
նում, իրենց քեյի բաժակները, քեյամանները և
այլն հավաքում ու դուրս գնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է ծխախոտի գործարանը՝ աշխատանքից առաջ: Աջ ու ձախ դազգյահներ, նստարաններ: Դազգյահների վրա բուքուն, գիլգու լիֆը և դատարկ տուփեր կամ հնարավորութեան սահմաններում դնել ուրիշ գործիքներ:

Դեպի խորքը տանող կամարաձև մուտքից յերևում են գործարանի մյուս բաժանմունքում աշխատող բանվորներն ու բանվորուհիները:

Տ Ե Ս Ի Լ 1

Գեորգ, Ստեփան և Արրահամ

(Արրահամը սաստիկ հիվանդ է և շարունակ հագում է):

Արրահամ.— *Սաղեյի՛ն, դուք ինքներդ տեսնում եք, ծում եմ, վոր՝ ձեզ համար մեծ դոմար չի:*

Գեվորգ.— *Իու ստիպում ես ինձ կրկնել ասածներս: Ասացի, վոր չեմ տա, հետևապես, կանգնելդ դուր է:*

Արրահամ.— *Սաղեյի՛ն, դուք ինքներդ տեսնում եք, վոր հիվանդ եմ, վորքի վրա կանգնել չեմ կարողանում. հազն ինձ սպանում ա... դոնե մի յերկու ասուրի:*

Գեվորգ.— *Վոչ մի դրոշ: Իմ կամքս այսպես է ուզում, հանդիմանել դուք իրավունք չունեք: Ահա տեսնում ես այն կանոնադրութունը (ցույց տալով պատի վրա)—այնտեղ վորոշված են թե իմ և*

Թե ձեր պարտականութիւնները: Իսկ յեթե կա մի կետ, վորին դուք համաձայն չեք, այդ դեպքում կարող եք թողնել գործարանս և հեռանալ: Անգործ բանվորներ՝ շատ ամեն որ գլուխս տանում են իրենց դիմումներով:

Ստեփան.—Անցյալ որը տասը հոգի նորից յեկել էյին, յես չընդունեցի:

Գեվորգ.—Լսո՞ւմ ես, հիվանդներին պահել, առողջներին մերժել: Ինչո՞ւ համար: Վոչ մի գործարանատեր իրեն թույլ չի տա նման բաներ:


Բժիշկ պահանջեցիք, ավի: Աշխատանքի ժամերը կրճատեցիք, համաձայնվեցի: Ռոճիկներդ պահանջեցիք ավելացնել, ավելացրի: Ուրիշ ել ի՞նչ եք ուզում: Ամիսը չլրացած՝ նոր պահանջ կներկայացնեն, կարծես մեծ աշխատանքի վրա յենք: Վո՛չ, սիրելի՛ս. արտոճակներդ չափավորե՛ք. ձեր խաղեյիներին համար դուք վտակու ամբարներ չեք լցնում: Առանց այն ել՝ ապրանքները կուտակվել են. սպառելու հնարավորութիւն չկա: Ի՞նչ կասես, Ստեփան:

Ստեփան.—Ճշմարիտ խոսքի դեմ ո՞վ կարող ե առարկել: Ինձ թվում է, վոր մեր բանվորութիւնը ձեր բնավորութիւնից դո՛ւ պիտի լինի. նրանց վերաբերմամբ դուք միշտ ել համբերող և զիջող եք յեղել:

Արքաիւս.—Լավ եք ասում, պարոն Ստեփան: Ուրազի նման դուք միշտ մի կողմն եք տալում: Ախր մի քիչ ել մեզ համար մտածե՛ք, մեր դրութիւն մեջ ել մտե՛ք: Մի ահագին ընտանիք ինձ ե նայում, ստացած ոտճիկս յեթե յես տանեմ դեղորայքի տամ, հապա նրանց յես ինչո՞վ կերակրեմ:

Գեվորգ.—Այդ իմ գործս չե: Յես պարտավոր չեմ ձեր ընտանիքի հոգան ել քաշելու: Աշխատում եք, ձեր վարձն ել ստանում եք:

Ստեփան.—Գեորգ Բաղդանի՛չ, ինձ թվում է, յեթե նրանց պահանջն արդարացի և որինական լիներ,



այդ կանոնադրութեան մեջ գրված պիտի լիներ:
(Սիմոնը մերս ե գալիս ու կանգնում իր տեղը և
սկսում ե աշխատել):

Արքա համ.—Պարոն Ստեփանն, արդարացի ու որինական շատ պահանջներ կան, վոր նույնպես եդ կանոնադրութեան մեջ չեն գրված... Բժիշկը յեթե արվում ե, որենքով հիվանդի դեղի փողն ել պիտի արվի...

Գեվորգ.—Ձե, ինչպես տեսնում եմ, դատդ լավ ես սովորել... Ինձ հետ որենքով ես խոսում: Դե', ի՞նչ ես չորացած փայտի նման ցցվել առաջս... Կորի՛ր, աչքիցս հեռացի՛ր...

Ստեփան.— (Արքա համին) Ինչո՞ւ յես զուր տեղը արյուն պղտորում: Քեզ վոր ասում են՝ դնա՛, դու խսկույն պիտի դնաս:

Արքա համ.—Կդնամ, բա հո յես եստեղ չեմ մնալու:

(Այս փաշելով և գլուխը շարժելով, դանդաղ փայլերով դուրս ե գնում):

Գեվորգ.—Համարձակվում ե հետս որենքով խոսել: Որենքը, ըստ յերելույթին, դու լավ չես հասկացել: Անիրավ:

Ստեփան.—Իսկապես վոր անիրավություն ենանում:

Գեվորգ.—Սիմոնն, դեռ գործը չսկսված, դու արդեն յեկել ես և աշխատում ես:

Սիմոն.—Առաջին անգամը չի, խաղեյի՛ն: Միշտ ել սվիսատկից առաջ եմ գալիս:

Գեվորգ.—Իսկ ի՞նչպես ե, վոր ընկերներդ թույլ են տալիս և վորչինչ չեն ասում:

Սիմոն.—Ի՞նչ նրանց գործն ա, քան թե իրենց հետ կանգնեմ զավգակություն անեմ, ավելի լավ չի՞ դամ աշխատեմ, գործս առաջ դցեմ:

Գեվորգ.—Լսո՞ւմ ես, Ստեփանն: Ահա թե ինչո՞ւ իմ հին բանվորներն ինձ մոտ միշտ պատիվ են վայելել: Աշխատասեր ու ազնիվ բանվորներին յես միշտ սիրել ու հարգել եմ, բայց, ինչպես տես-

նում եմ, նախանձ ու չար մարդիկ ամեն կերպ աշխատում են իմ ու սրանց մեջ յերկպառակություն դրել և սրանց իմ դեմ լարել:

Ա տ Ե փ ա մ .—Միմո՛ն, բժշկի մասին ե ասում:

Ս Ի մ ռ մ .—Գիտեմ, հասկանում եմ: Եդ նորություն չի: Նա իր յեկած որվանից, իր քաղցր լեզվով, իր ջուռարաջուռա խոսքերով ու մասլահաթներով մեր բանվորներին իր կողմն ա գրավել: Վոր իմանաք՝ նա ի՞նչ լեզու ունի, ո՞, պա՛, պա՛, պա՛, ... շահմար ոճին իր բնից կհանի: Ժողովներում յեթե տեսնեք՝ վո՛նց ա խոսում, կմնաք զարմացած:

Գ Ե վ ռ Գ .—Ուրեմն բժիշկը ժողովներ կ՞լ ե անում:

Ս Ի մ ռ մ .—Ի՞նչպես չե, մեր բանվորները միշտ գնում են, մի անգամ ել յես գնացի:

Ա տ Ե փ ա մ .—Գեվորդ Բաղդանի՛չ, ասածներս կարծեմ յենթադրություններ չեն:

Գ Ե վ ռ Գ .—Այո՛, Ստեփա՛ն: Ինձ համար այժմ ամեն ինչ պարզ ե: Լսի՛ր, Միմո՛ն, դու ասացիր, վոր նրանց ժողովներում յեղել ես:

Ս Ի մ ռ մ .—Հա, մի անգամ յեղա, ենպես, ասի՛ տեսնեմ ի՞նչ կա, ինչ չկա:

Գ Ե վ ռ Գ .—Դրա համար դու չկարծես, թե յես քեզ վրա նեղանում եմ: Յես միայն ուզում եմ իմանալ, թե ժողովներում բժիշկը ինչի՞մ մասին ե խոսում:

Ս Ի մ ռ մ .—Ձեա գիտա՞, խաղեյի՛ն, նա ուրիշ ել ինչի՞մ մասին կխոսա. դիփ մեր ու ձեր մասին ա խոսում:

Գ Ե վ ռ Գ .—Իմ մասի՞ն. ի՞նչ, վոր յես ձեզ հարստահարո՞ւմ եմ, ձեզ շահագործո՞ւմ իմ. առավտից մինչև յերեկո ձեզ տանջում—չարչարո՞ւմ եմ և դուք, տգետ ու խեղճ բանվորնե՛ր, տրտունջն ու բողոքը ձեր սրտում, ստիպված եք իմ առաջ խոնարհվել, իմ ստրուկը, իմ գերին, ճորտը լինել:

Ս Ի մ ռ մ .—Պաղեյի՛ն, ընենց տեղին խոսում եք, կասեք դուք ել ժողովումն եք յեղել ու նրանց ասած խոսքերն եք լսել: Եդ, ինչ վոր դուք ասացիք, եդ բոլորը բանվորներին ասել ու հավատացրել ա:

Նա նրանց ամեն ժամանակ հեղափոխական քա-
րողներ ա կարդում և ինչ վոր մի մեծ կռիւ համար
պատրաստում:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Լսո՞ւմ ես, Ստեփան, չպետք և հետա-
ձգել, հարկավոր և նրան անմիջապես դործարանից
հեռացնել քանի դեռ ուշ չի:

Ս Ի Մ Ո Յ.— Ուշ և, խաղեյի՛ն, նրան հեռացնելով բան
չի դառնա: Մեր բանվորների մեջ ընենցները կան,
վոր եղ բժշկից վոչնչով պակաս չեն:

Ս տ Ե փ ա Յ.— Գրիգորի և Արշակի մասի՞ն ես ասում:

Ս Ի Մ Ո Յ.— Հա՛, հենց դրանք են, վոր կան: Գուք
դրանց լավ չեք ճանաչում: Նրանց են յերկեն մա-
զերի տակը հաղար սատանաներ կան նստած: Գի-
տեք՝ դրանք քանի՞ զավոզի բանվորների յեն
գժվացրել ու դարաստովկա անել տվել: Ամեն տեղ
հո բժիշկն ինքը չի գնում: Շատ անգամ դրանց
ա դրկում: Դրանք վոր կան, Փոնոգրաֆ են.
բժիշկն իր իմացածը լցրել ա մեջները ու դրել
եստեղ: Ինքը որեսի դենը վոր չլինի ել, նրա ձենը,
նրա խոսքերը մենք եստեղ ամեն որ լսում ենք:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Նրա ձայնը յես այնպես կը-
կտրեմ, վոր դուք հավիտյան չլսեք: Լսի՛ր, Ստե-
փա՛ն, նրանց ազգանունները դու կդրես և կտաս
ինձ: Իսկ դու, Սիմո՛ն, սրանից հետո նրանց վրա
առանձին ուշադրութ՛յուն դարձրո՛ւ: Հետեւիւր
նրանց ամեն մի քայլափոխում. ո՞ւր են գնում.
ո՞ւմ հետ են տեսնվում. ո՞ւմ հետ ի՛նչ են խոսում,
ի՛նչ են մտածում: Ժողովները յե՞րբ կամ վո՞րտեղ
են նշանակում: Մի խոսքով այդ բոլորն իմացիր և
իմացածդ արի ժամանակին ինձ հայտնի՛ր: Դրա
համար դու ինձնից լավ վարձատրութ՛յուն կստա-
նաս: Հավատարիմ մարդկանց յես գնահատել գի-
տեմ: (Ստեփանին) Վո՞րքան ուժիկ և ստանում:

Ս տ Ե փ ա Յ.— Ամիսը յերեսուն ուռբլի:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Սրանից հետո կդարձնես նրա ուժիկն
ամսական հիսուն ուռբլի: Յեթե միայն նա ճշտու-
թյամբ կկատարի իր վրա դրված պարտականու-

Թյունները: Հը', ի՞նչ պատահեց: Ինչո՞ւ այդպես
խորը մտածմունքի մեջ ընկար: Յերևի դժվարա-
նում ես: Բո կամքն ե, յես քեզ չեմ ստիպում: Յես
միայն ցավում եմ, վոր յերկար տարիներ ինձ մոտ
աշխատելուց հետո այսոր դու գործարանը պիտի
թողնես ու հեռանաս:

Սիմոն.—Ի՞նչի խաղեյին: Յես ձեզ ի՞նչ արի, վոր
ուզում եք ինձ հեռացնել: Ախր չե վոր տանը կին,
յերեխաներ ունեմ:

Գևորգ.—Նրանց մասին դու պիտի մտածես: Դու
կաշխատես ինձ մոտ, թե մի ուրիշը, ինձ համար
այդ նշանակություն չունի: Այստեղ ուրիշ խնդիր
կա, այդ այն ե, թե՛ քաղաքական խնդիրներում
ո՛վ ի՞նչպես ե իրեն պահում:

Ստեփան.—Ծիշտ ե ասում Գևորգ Բաղդանիչը:
Մեր գործարանում աշխատող ոտար ազգի բան-
վորները քայքայիչ աշխատանք են տանում, իսկ
դուք լուծում եք կամ նրանց կործանարար աշխա-
տանքներին ինքներդ կուրորեն մասնակցում:

Գևորգ.—Դուրս շարտել նմաններին: Անբարեհույս
բանվոր, թեկուզ հայ, ինձ հարկավոր չի:

Սիմոն.—Յաղեյին, ախր...

Գևորգ.—Առանց ախր—մախրի:

Սիմոն.—Լավ, խաղեյին. ինչպես վոր հրամայում
եք, յես ենպես կանեմ:

Ստեփան.—Ա՛յ մալաղեց: Դրանով դու ազացու-
ցեցիր, վոր դու իսկական հայ ես:

Գևորգ.—Բա, իհարկե: Վերջի վերջո այդ սոցիա-
լիզմը, այդ հեղափոխությունը վրացիների և
հրեաների դործն է: Մենք հայերս ինչ հաշիվ ու-
նենք ամեն տեսակ դավադարի մեջ ընկնելու:

(Գործարանի շշակը սուլում ե: Բանվորներն ու
բանվորուհիները խալաթներով անբս են գալիս:
Նրանցից մի մասն անցնում են մյուս բաժանմուն-
քը, իսկ մյուսները մնում են բեմի վրա և սկսում
աշխատել. գիլգի յեմ լցնում, ծայրերը կտրում,
տուփերի մեջ դարսում, կշեռֆով թուփում կշում
և այլն):

Նույնք, Շաքրո, Գարեգին, Սաքո, Մանուշ և ուրիշները, հետո Գրիգոր և Արշակ:
(Գրիգորն ու Արշակն ամենավերջը «Մարտիրոսոս» շվացնելով գալիս են):

Ստեփան.— Ի՞նչ եք շվացնում. փողոցումը չեք: Հազար անգամ ձեզ ասել եմ՝ դործարան ներս մտնելիս ձեզ վայելուչ պահե՛ք:

Գեվորգ.— Ասածդ յերբ չեն հասկանում, տուգանքը նրանց հասկացնել կտա:

Գրիգոր.— Վոտքներս դեռ ներս չդրած՝ աչքներին արդեն ծուռ յերևացինք:

Գեվորգ.— Դե բավականն ե, դու խոսելու համար չես յեկել: Ստեփան, լավ հսկի՛ր: Յեթե թույլ տաս, նրանք ամբողջ որը կխոսեն, հեքյաթներ կըպատմեն: Հաշիվներին ուշադրություն դարձրո՛ւ: Տես ով ի՞նչ է ստանում և վորքանի՛ դործ շինում: Այն դեպքում, յերբ մեկի աշխատանքն իր ստացածով չբազմապատկվեց, դո՛ւրս, դո՛ւրս շարտել... Ծույլ և շատախոս բանվորներ ինձ հարկավոր չեն: (Ստեփանի հետ խոսելով գնում են):

Գրիգոր.— Վոտքներս ներս ենք դնում թե չե, սկրտում են վրաներս խոսալ: Յերկու բոպե վոր ուշանում ենք, տուգանում են: Մի բոպե պարապ կանգնենք, նկատողություն կանեն:

Գարեգին.— Իսկ իրենք, վոր ամբողջ որը պարապ ման են դալիս, դրա համար վոչ խոսող կա, վոչ նկատողություն անող:

Շաքրո.— Ե՛դ եր պակաս, վոր նրանց վրա խոսաք: Չե՞ վոր դործարանի տերն ու տիրականը նրանք են. որենքն ու իրավունքը նրանց ձեռքին ա:

Գրիգոր.— Հենց եդ որենքներն ու իրավունքներն ա, վոր նրանց ձեռքից մենք պետք է խլենք: Վոր ել չկարողանան մեզ ստրկացնել, մեր արյունը քամել, մեր միտքն ու հոգին թունավորել...

Սիմոն.—Փոնոգրաֆ, կատարյալ ֆոնոգրաֆ: Լսի՛ր, ես որննքնեբրին դուք վոր չեք հավանում, ձեր հավանած որննքնեբրը վո՞րտեղ ա, մենք չենք տեսնում:

Շաֆրոն.—Կա՞, վոր տեսնես:

Արշակ.—Ձկա, բայց մենք կատեղծենք:

Սիմոն.—Փոնոգրաֆ, կատարյալ ֆոնոգրաֆ:

Շաֆրոն.—Լսե՛ք, յես ձեզ մի բան ասեմ: Եղ խոսքերը կառավարությունը վոր լսի, կդան շլինքնեբրիդ տալով կտանեն ժանդարսկի ուպրավինին: Ի՞նչ դործ ունեք, անջախ գլուխներս դինջ ապրում ենք:

Արշակ.—Ապրեի ել կա, ապրեի ել: Մեր և Գևորգ Բաղդանիչի ապրելու մեջ, կարծեմ, վոր մի քիչ տարբերություն կա:

Սիմոն.—Դեռ աչքածակի նման, դուք չենց մի գլուխ ուրիշի ունեցվածքի վրա յեք նախանձում: Յեթե դուք ուզում եք նրանց պես ապրել, գնացե՛ք դուք ել նրանց պես ջաններդ ջափա տվե՛ք, դուք ել կունենաք:

Գրիգոր.—Տո՛, վողորմելի՛, հալալ աշխատանքով, հալալ քրտինք թափելով յեթե հարստանալու հնար լիներ, աշխարհիս յերեսին մենք ամենահարուստը կլինեյինք: Բայց ո՞ւր ա, ամենից շատ աշխատում ենք, ամենից շատ չարչարվում ու տանջվում ենք, վոչ որներս ա լավանում, վոչ կյանքներս փոխվում... ելի են սովածն ենք, ելի են տկոբը... իսկ նրանք...

Սիմոն.—Ելի գնացին, յեկան, նրանց յախիցը կպան: Նրանց հացով կերակրվեք, նրանց շվաքով ապրեք, ելի դուք նրանց վրա խո՞սաք. բա աստոծ վեր կունի՞: Լսե՛ք, յես ձեզ մի ճիշտ խոսք ասեմ, չնեղանաք: Առաջ դուք խելոք, նամուսով տղերք եյիք, ամենքը ձեզ սիրում ու հարգում եյին: Համա ինչ վոր եղ բժիշկն յեկավ, դուք մի անգամից փոխվեցիք ու խարաբ ելաք: Դուք ել են առաջվանը չեք. գլխներդ ինչ վոր քամի ա մտել, խելքներդ թամամ կորցրել եք ու արոււններդ կրտ-

բել: Եւ վոչ մեծ ու պատիկ եք ճանաչում եւ վոչ ել խազեյնի պատիւի հասկանում: Գլուխս եք բարձրացրել ու ինչ-վոր անիրագործելի բաների մասին եք մտածում:

(Մյուս բոլոր բանվորները ծիծաղում են):

Գրիգոր.— Հետո՞:

Սիմոն.— Հետո ե՛ն, վոր մենք պարզ ու աշխարհ գիտենք, վոր եղ ասածներէց վոչ մեկն ել ձեր խելքի ու մտքի բանը չի: Ուրիշից սովորած, ուրիշից անգիր արած խոսքերով ո՞ւմն եք զարմացնում:

(Բոլորը ծիծաղում են):

Շաֆրո.— Ինչի յեք ծիծաղում. ճիշտ ա ասում: Դրանք բոլորը բժշկի սովորացրած խոսքերն ա:

Սիմոն.— Յես զարմանում եմ, նրանում ի՞նչ են տեսել: Ուսումնական վոր ա, մեծ բա՞ն եք կարծում: Քի՛չ ուսում առածներ կան, վոր յերկու եշի դարի չեն կարողանում բաժանել: Կամ թե չե՛ նա վոր խելքը գլխին մարդ լինի, կգա սրանց նման գյաղա գյուղեքի հետ գլուխ կղնի՞: Սրանք ել վոր շաշ չլնեն, նրա ասածներին կհամարտա՞ն: Ել չեն մտածում, վոր եղ մարդն ետոր ետեղ ա, եզուց ո՛վ ա իմանում ուր ա գնալու կորչի, դուր տեղն ընչի՞ յեք ձեր հացին քացով տալի, Գևորգ Բաղդանիչի աչքից ընկնում:

Գրիգոր.— Տո՛, վողորմելի, Գևորգ Բաղդանիչի աչքից դու նո՛ր պետք ե ընկնես: Գլուխդ ել վոր ծախես, մատներդ մոմ շինես նրա առաջ վառես, միեւնույնն ա, նա քու թշնամին ա, դու նրա...

Շաֆրո.— Են ոյինները, վոր դուք եք բերում նրա գլխին, թշնամի չե, հոգեհան հրեշտակ ել վոր դառնա, էլի քիչ ա: Բայց էլի աստոծ կյանք տա նրան, էլի նա՛ յե, վոր համբերում ա, էլի ն՛ա յե, վոր մեզ համար ցավում, մտածում ա:

Արշակ.— Նա յե մեզ համար ցավում ու մտածում — հա՛, հա՛, հա՛...

Գ ա ր ե գ .—Համա ցալող մարդ ես գտել 'հա': Ճար
ունենան, առաջնորդ մինչև գիշերը մեզ կաշխա-
տեցնեն, չեն թողնի, վոր մենք մի ազատ շունչ
քաշենք:

Ս Ի մ ն ճ .—Ախպե՛ր, դե բոլա ա, ելի՛, իծի ցալ հո
չդառաք գլխներին: Սեւոք եք, ձեզ համար
կացի՛ք, ի՞նչ եք կպել մեր յախիցն ու պոկ չեք
դալի: Մեղնից ձեռք քաշեք, ելի՛:

Ս ա ր ո .—Դու շնորհակալ չե՞ս, վոր չիմացած բանը
նրանք քեզ սովորեցնում են:

Ս Ի մ ն ճ .—Ըհը՛. ահաս-մահաս՝ քոտ Մկոն եր գըլխ-
ներին պակաս: Դու ել վոր խալխին խրատող
դուրս յեկար, ամեն ինչ կդրսավի: Ես տուն
քանդվածները, կասես յեկեղեցումը կանգնած՝
«խոնարեցո ապրեցո» լինեն ասելիս: Մեկը վեր-
ջացնում, մյուսն ե սկսում:

(Բոլորը ծիծաղում են)

Շ ա ֆ ր ո .—Ինչի՞ յեք ծիծաղում, ճիշտ ա ասում,
զահլաներս տարաք, գլուխներս քամեցիք, եսքան
ել խոսալ կլինի՞, վոր դուք եք խոսում:

Գ ր Ի գ ո ր .—Գոնե դու ել ա մի՛ խոսա: Ա՛յ վողոր-
մելի, մոռացե՛լ ես, վոր առաջնորդներն ենքան վաղ
եյիք դալի, իրիգներն ուշ գնում, վոր շարաթ-
ներով յերեխաներիդ յերեսը չեյիք տեսնում...
Նրանք դիտելին, վոր հայր ունեյին, բայց նրան
չեյին ճանաչում:

Ս Ի մ ն ճ .—Տ՛ո, տունը քանդված, դե բոլ ա, ելի՛,
քանի՞ խոսաք: Բերանումդ լեզո՞ւ ա, թե ջրադացի
չախչախ: Առաջնորդանից կդան մինչև իրիգուն՝
ա՛ո, ա՛ո, ա՛ո, բ՛ո, բ՛ո, բ՛ո, ո՛, ա՛ո, ա՛ո,
բ՛ո, բ՛ո, բ՛ո...

(Բոլորը ծիծաղում են)

Պա՛, պա՛, պա՛, գլուխներս տարան, ելի՛: Մենք
վոր չենք խոսում, ձեր նամուսին ի՞նչ ա յեկել:
Ճաշից հետո դիտունանք ել խալխին խրատող
դուրս յեկան: Մեկը թատրոն ա հրավիրում,

մեկը ժողովի ա կանչում, մյուսը գիրք ա առա-
ջարկում: Կարծես մենք գիրք կարդալ վոր ուզե-
նանք, գրքերի տեղը չենք իմանում:

Արշալ.—Սաղմոսի ու Նարեկի նման գրքերի տեղը,
իհարկե՛ս, իմանում եք, վերցրե՛ք կարդացե՛ք ու
կարդացե՛ք:

Սիմոն.—Դուք, վոր Մարքսի ավետարանն եք կար-
դում, նրա համար ա խելքներդ ավելացել: Տես-
նում եմ, վո՞նց չե: Վոր չասեք ել, յես ձեր վո-
րացալը հասկանում եմ: Սրանից հետո ինչքան
ուզում եք՝ խոստացե՛ք: Մի բան, վոր ձեր ասած-
ները ես մի ա կանջիցս մտնում ա, ես մեկիցը
դուրս գալիս:

Գրիգոր.—Յանի ես դահրումարը գլո՞ւխ ա, թե տակը
ճղված մեշոկ, մի կողմից մտածը, մյուս կողմից
դուրս ա գալիս:

(Բոլորը ծիծաղում են)

Սիմոն.—Եդ լեզուներդ ձեր գլխին թե մի փորձանք
չբերի, բաս յես Սիմոնը չըլնեմ: Կտեսնեք, կ'լի...
լպտովածնե՛ր...

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնք, Գոգիա, հետո Արրահամ

Գոգիա.—Բժիշկը յեկել ե. ով ուզում ե՛ թող գնա:
(Այդպես կանչելով՝ գնում ե բոլոր բաժանմունք-
ները ու բոլորին հայտնում):

Արրահամ.—Բարով ձեզ, տղե՛րք:

Բոլորը.—Այ ասուու բարին, բարով յեկար:

Գրիգոր.—Արրահամ, ի՞նչ արիր:

Արրահամ.—Ի՞նչ պետք ե անեմ. դեղի փողը չեն
տալիս, գործարանիցն ել դուրս են անում:
Հիվանդությունս մի կողմից, անգործությունը
մյուս կողմից — ինձ մտածել ա տալիս, թե ինչ ա
լինելու իմ վերջը, չեմ հասկանում:

Արշալ.—Չհասկանալու բան չկա: Դուրս կգաս,

գործազուրկներէ թիվը մեկով կալեւանա՛ն:
(Արքահամը տարուքեակի վրա նստած՝ մտա-
ծում է):

Ս Բ Ք Ն.— Կողքս ցալում ա. դնամ բժշկի մոտ:
(Գնում է):

Ա Բ Բ Ա Խ Ա Մ.— Տասնհինգ տարի էս կեղտ ու մրի մեջ
տանջվիր ու չարչարվիր, էս անտեր դաղդյահահների
վրա միտք ու վտակորդ մաշի և վերջումը կոնիցզ
բռնած, շինքիդ տալով դուրս շարտեն... բա սա
որենք ա՞... Ծնված որից աչք ենք բաց արել, մի
լավ որ չենք տեսնում...

Գ Բ Ի Գ Ո Ր.— Կտեսնենք, Արբահա՛մ, կտեսնենք: Հույ-
սող մի՛ կտրիր: Եղ որերը մեղմից շատ հեռու չեն:

Ա Բ Բ Ա Խ Ա Մ.— Ա՛խ, ո՞ւր ա թե տեսնենք... եղ լավ
որերին յես դուրբան: Եղ որերին յեթե յես գերեզ-
մանում պառկած ել վոր լինեմ, գործի հրավիրող
նրա գուղտկի քաղցր ու անուշ ձինը լսելուս պես
հարություն կառնեմ, թեկուզ տասնութ ժամ
աշխատելու համար յես նորից գործարան կը-
վաղեմ... էս դժոխքը կանչող սև գուղտկի ձայնն
ամեն անգամ լսելուց, վոր յես անիծել և միշտ
չոռ դահրումար եմ ասել, են լավ որերին կարմիր
գուղտկի ձայնը լսելուց յես ջան-ջան կկանչեմ...

(Լուռ մտածում է):

Ա Բ Չ Ա Կ.— Գնա բժիշկի մոտ, նա քեզ մի խորհուրդ
կտա:

Գ Բ Ի Գ Ո Ր.— Ուրեմն չես յեղել նրա մոտ: Դե վեր կաց
դնա՛, ել մի՛ սպասի: Նրա ընդունելության ժամը
չուտով կվերջանա: Գնանք նրա մոտ:

Ա Բ Բ Ա Խ Ա Մ.— Գնանք տեսնենք: (Գրիգորն ու Արքա-
համը գնում են, իսկ Սաքոն բժշկի մոտից վերա-
դառնում է):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնիք և Սաքո

- Սաքո.—Ինչ քաղցր մարդ ա ետ բժիշկը: Նրա խոսալը, նրա համեստ, մարդավարի վերաբերմունքն ուղղակի մարդու սիրտը դրավում ա:
- Սիմոն.—Յես ինչպես տեսնում եմ, բժիշկը դրան ել կնքեց:
- Արշակ.—Եդ բժիշկը քեզ ել ա կնքելու, խելքդ ո՞ւր ա:
- Շաֆրո.—Եդ տնաքանդը դրուստ վոր տերտեր հո չի՞, հասնողին կնքում ա:
- (Բոլորը ծիծաղում են)

Տ Ե Ս Ի Լ 5

Նույնիք, Գևորգ, Ստեփան, հետո Արթուր

- Գեվորգ.—Ձեր զալմաղալի ձայնը փողոցումն ել լսվում: Դուք խոսելու՞ համար եք ոտճիկ ստանում, թե գործ չի՞նելու համար: Անամոթնե՛ր... սովորել եք ամբողջ որը դունչ— գնչի տալ և խոսելով որ մթնացնել:
- Արշակ.—Մի բոպե վոր մեր խոսելու վրա հասաք, դուք կարծում եք, վոր մենք ամբողջ որը խոսում ենք:
- Ստեփան.—Յեթե չեք խոսում, նշանակում ե, վոր գործ ել չեք շինում:
- Արշակ.—Իսկ մեր գործը յերևի դուք եք չինում, պարո՛ն:
- Գեվորգ.—Ձայնդ կտրի՛ր, անիրավ. այստեղ միայն դո՛ւ չես: Բացի քեզնից ուրիշներն ել կան: Ձեռիցդ յերկու կողակի գործ չի դուրս գա, իսկ խոսելիս յերկու արշին լեզու կհանես: (Դառնալով Արթուրի մոտ): Դու ինչո՞ւ յեկար: ցցվեցիր անաջա, յես քեզ ասացի, վոր քեզ փող չպիտի տամ:

- Արքահամ.— Ձեր կամքն է, կարող եք և չտալ:
- Գեվորգ.— Դու համարձակ ես խոսում:
- Արքահամ.— Քաշվելու ի՞նչ ունեմ: Փառք աստծո-
դողություն, ավազակություն չեմ արել:
- Գեվորգ.— Դու յերա՞դ ես տեսել, ինչ է:
- Արքահամ.— Յերեկը մարդիկ յերազ չեն տեսնում:
Տասնչինգ տարի ձեր դործարանում աշխատելուց
հետո հիվանդացել եմ: Միջոց ավելք ինձ բժշկվե-
լու:
- Գեվորգ.— Հիվանդները կարող են դնալ հիվանդա-
նոց: Այստեղ դործարան է, հիվանդանոց կամ
անկեղանոց չէ:
- Արքահամ.— Յերբ յես յեկա ձեզ մոտ աշխատելու,
բոլորովին առողջ էյի, բայց ձեր դործարանի
պայմանները, նրա խոնավությունը հիվանդանա-
լուս պատճառ են դարձել, հետևապես դուք պար-
տավոր եք ինձ բժշկել կամ բախարարել և ապա
հեռացնել:
- Գեվորգ.— Սուտ ես ասում. իմ դործարանի պայ-
մանները բոլորովին վատ չեն և վոչ էլ խոնավ:
Իզուր պատճառներ մի՛ վորոնիր և վոչ էլ բավա-
բարվելու հույս ունեցիր: Հիմա քո ներկայու-
թյամբ սրանց կհարցնեմ: Սիմոն, առաջինը դո՛ւ
ասա:
- Սիմոն.— Ի՞նչ ասեմ, խաղեյի՛ն: Տասնութ տարի յե՛
յես այս դործարանում աշխատում եմ, դեռ չեմ
հիշում, վոր յես մի որ հիվանդացած լինեմ:
- Գեվորգ.— Իսկ յեթե դործարանի պայմանները վատ
լինեյին ու դործարանը խոնավ դու ել կհիվան-
դանայիր, այնպես չե՞:
- (Սիմոնը գլխով դրական նշան է անում: Գրիգորը
ներս է գալիս):
- Ահա, տեսնո՞ւմ ես: Սպասի՛ր, մի ուրիշին ել
հարցնեմ. յես համոզված եմ, վոր նա ել նույնը
կհաստատի: Այո՛, նրանք քեզ նման ստախոս չեն:
Նրանք ճշմարիտը կասեն: Շաքրո՛, դու ի՛նչ կա-
սես:

Շ ա ֆ ր օ .— Խ ա զ Ե յ Ի ն , յ Ե ս Ե Լ ն ու յ ն ր Կ ա ս Ե մ , Ի ն չ վ օ ր Ս Ի մ ո ն ն ա ս ա ց :

Ա ր շ ա Կ .— Ի ս Կ յ Ե ս բ ո լ յ ր օ Վ Ի ն Հ ա Կ ա ռ ա Կ ր Կ ա ս Ե մ : Ա յ օ ' , ձ Ե ր դ օ ր ծ ա ր ա ն Ի պ ա յ մ ա ն ն Ե ր ր վ ա տ Ե ն և Հ ա Կ ա ռ ո ղ ջ ա պ ա Հ ա Կ ա ն : Գ օ ր ծ ա ր ա ն ու մ Հ Ի վ ա ն դ ու թ յ ա ն դ Ե ս ք ր վ օ չ ա ռ ա ջ Ի ն ն և և վ օ չ Ե Լ վ Ե ր ջ Ի ն ր : Շ ա տ Ե ր ն Ե ն ա յ ս տ Ե ղ Հ Ի վ ա ն դ ա ց Ե Լ ու դ ու ր ս շ ր պ ր ր տ վ Ե Լ . ն ու յ ն վ Ի ճ ա Կ ն Ե Լ մ Ե ղ Ե ս պ ա ս ու մ : Ի ս Կ դ ու ք , ճ շ մ ա ր տ ա Խ օ ս վ ա ր պ Ե ա ն ն Ե ր , յ Ե Թ Ե Հ ա մ ա ր ձ ա Կ ա թ յ ու ն չ ու ն Ե ք Ի ս Կ ու թ յ ու ն ն ա ս Ե Լ ու , դ օ ն ն Լ Ե Լ ու ք ա ջ ու թ յ ու ն ր Ի ու ն Ե ց Ե ք :

Գ Ե Վ Ո Ր Գ .— Գ Լ Խ ա ր Կ ղ վ Ե ր ց ր օ ' Ե և դ ու ր ս Կ օ ր Ի ' ր , ա ն Ի ր ա ' վ . դ օ ' Ե յ Ե ս ս ր ա ն ց Ի ս Ե Լ ք Ի ց Հ ա ն ո ղ ր : Գ Ե Հ օ ' Լ ա : Ա ռ ա ն ց ու շ ա ն ա Լ ու :

(Ա ր շ ա Կ ր Խ ա Լ ա ք ր Կ ա ն ու մ Ե և Գ Լ Խ ա ր Կ ր դ Ե ու մ) :

Ա ր շ ա Կ .— Ը ն Կ Ե ր ն Ե ր . . .

Գ Ե Վ Ո Ր Գ .— Լ ա Ի ' ր , դ ու և ա յ ս տ Ե ղ ա յ Լ Ե ս ը ն Կ Ե ր ն Ե ր չ ու ն Ե ս : Գ ու ր ս Կ օ ր Ի ' ր : (Հ ր ա մ Ե) : Ս տ Ե փ ա ' ն , դ ն ա ս ր ա . Հ ա չ Ի վ ն Ե ր ր տ օ ' Ե ր և ճ ա ն ա պ ա ր Հ դ Ի ' ր :

Ս տ Ե փ ա մ .— Գ ն ա ն ք :

Ա ր շ ա Կ .— Թ ' ո ղ , յ Ե ս Ի ն ք ս Կ գ ն ա մ :

(Ս տ Ե փ ա մ ն ու Ա ր շ ա Կ ր Գ Ե ու մ Ե ն)

Գ Ե Վ Ո Ր Գ .— Ա ն Ի ր ա ' վ , դ ու ք շ ա տ Ե ք Լ ր ր ա ց Ե Լ : Ձ Ե ր չ ա փ ն ու ս ա Հ մ ա ն ր Կ օ ր ց ր Ե Լ Ե ք : Պ ա տ Ի վ , Հ ա ր դ ա ն ք ա ս ա ծ Հ ա ս Կ ա ց ո ղ ու թ յ ու ն ր ձ Ե ղ Հ ա մ ա ր ա յ Ե ս դ օ յ ու թ յ ու ն չ ու ն Ի : Բ ո լ յ ր օ ղ Լ Ե ղ ու յ Ե ք ա Ե Լ , Ի ր ա վ ու ն ք ն Ե ր Ե ք պ ա շ տ ա պ ա ն ու մ :

Գ ա ր Ե Գ Ի մ .— Յ Ե ր ր ն ա վ օ տ ն ա Հ ա ր վ ու մ Ե , ա յ օ ' , պ Ե տ ք Ե ս պ ա շ տ ա պ ա ն Ե Լ :

Գ Ե Վ Ո Ր Գ .— Դ Ե Հ Ի մ ա Ե Լ ս ա : Տ օ ա ն Ի ր ա ' վ , դ ու չ ր տ Ե ս ա ' ր ' ը ն Կ Ե ր ո ղ ղ Ի ն չ օ ' Ե Հ ա մ ա ր դ ու ր ս ա ր Ի . դ ու Ե ' Լ Ե ս ու ղ ու մ դ ն ա ս դ ու ր ս ր ս ո վ ա ծ Թ ա փ ա ռ Ե ս :

Գ ա ր Ե Գ Ի մ .— Ո ' Ե ր դ ն ա մ ա չ Խ ա տ Ե մ , վ օ ր մ Ի ց ա մ ա ք Հ ա ց Ի փ ո ղ չ ս տ ա ն ա մ : Յ Ե Թ Ե Կ ու ղ Ե ք ճ Ի շ տ ն Ի մ ա ն ա Լ , ս ո վ ա ծ ն ա յ Ե մ ն ա Լ ու վ Ե ր ջ ր , ո վ ու ր Ի շ Ի ա չ Խ ա տ ա ն ք ն Ե ու տ ու մ , ու ր Ի շ Ի ք ր ա Ի ն ք ո վ ա պ ր ու մ :

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ձայնդ կտրի՛ր, լակոտ: Դու ի՞նչպես ես
համարձակվում իմ ներկայութեամբ այդպես խո-
սել: Յես քո ընկե՞րն եմ, ի՞նչ ե: Իմ ներկայու-
թեամբ ձայն-ծալաուն հանելու դուք իրավունք
չունեք: Դիտարկող վերցրո՛ւ և դուրս կտրի՛ր,
(Գարեգիմը խալաթը հանում է և գլխարկը դնում
գլխին):

Գ Կ Ր Ե Գ Ի Մ.—Դուրս եք անում, իրավունք ունեք,
բայց վա՛յ այն որը, վոր այդ իրավունքները ձեր
ձեռքից կխլվեն: (Գնում է):

Գ Ե Վ Ո Ր Գ.— Դուրս կտրի՛ր, անպիտա՛ն, խառնակի՛չ:
(Արքաիսկի) դու ինչո՞ւ համար ես կանգնել, դու
եւ դուրս կտրի՛ր, դու եւ ինձ հարկավոր չես:

Ա Ր Ր Վ Ի Մ.—Յերբ առողջ եյի, ձեզ հարկավոր եյի,
իսկ այսօր, յերբ այս ապականված փոշելից ողում
քրտինք թափելով կյանքս փչացրի, առողջու-
թյունս կորցրի, այլևս ձեզ հարկավոր
չեմ, դուրս եք դցում ինչպես մի անպետք փալաս:
Ո՛ւր դնամ, յերեխաներս տանը սոված ինձ են
սպասում: Գնամ նրանց ի՞նչ ասեմ, ի՞նչ պատաս-
խան տամ: Գնանք ջուրը թափվենք. դուք խիղճ
չունեք: Դուք, վոր ամիսը մի անգամ գործարան
չեք մտել, հարյուր-հազարների տեր եք դառել,
իսկ յես՝ վողորմելիս տասնհինգ տարի շարունակ
ես կեղտ ու մրի մեջն եմ փտել, ես դազգյահների
վրա կյանքս ու հողիս մաշել-եսոր յես տասնհինգ
կոպեկ չունեմ՝ տանեմ հացի տամ, յերեխաներիս
կերակրեմ...

Գ Ե Վ Ո Ր Գ.— Դու շա՞տ պիտի խոսես:

Ա Ր Ր Վ Ի Մ.—Եւ չեմ խոսում. յես դնում եմ: Ահա
տեսնում եք բժշկի կողմից հաստատված այս
վկայականը, սրանով ձեզնից յես իմ բավարարու-
թյունս կստանամ... այո՛, կստանամ... (դուրս
է գնում):

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ահա թե ինչն է նրան լեզու տվել:

(Բարկացած դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ 6

Բանվորներն առանց Գեվորգի

Գ ր ի գ ո ր .—Համբերել այլևս անկարելի յե... Ընկեր-
նե՛ր, ահա տեսնում եք, թե ի՛նչ ե կատարվում
ձեր շուրջը. սա մի հայելի յե, վորտեղ բոլորիս
պատկերն ե փայլում... (Շաֆրոն ու Սիմոնը
ծիծաղում են): Յե՛վ դուք ընկերներ եք համար-
վում... ձեր ընկերներին դործարանից խաշտառակ
կերպով դուրս են անում, իսկ դուք կանգնել,
ծիծաղում եք... Ո՞ւր ե ձեր ընկերական զգաց-
մունքը... ո՞ւր ե ձեր մեջ դասակարգային դի-
տակցութիւնը... Ե՛հ, դուք փշրանքներով ապ-
րող մարդիկ... ծախված հոգիներ...:

(Խալաքը հանում ե, գլխարկը դնում ու շտապ-
շտապ գնում մյուս բաժանմունքը):

Տ Ե Ս Ի Լ 7

Ս ի մ ո ն .—Ընկերները հիմի թող վզները քորեն: Յես
չեյի՞ ասում, վոր սրանց լեզուն իրանց գլխին
փորձանք ա բերելու:

Շ ա ֆ Ր ո .—Մազալուն են եր, վոր ես մի հոգևորը,
նրանց դուրս անելուց, ձենը վոնց փորն եր դցել.
ասա սկի խոսե՞ց. հա՛, հա՛, հա՛: (Ծիծաղում ե):

Ս ի մ ո ն .—Վո՞նց խոսեր, խոսելու համար չե՞ր, վոր
են յերկուսին դուրս արեց... հա՛... հա՛... (Ծի-
ծաղում ե):

Մ ա ն ու շ .—Դուք դեռ ծիծաղելու սիրտ ունեք...
Թո՛ւ ձեր նամուսին... (Սաքոյիմ) աղջի՛, վե՛ր
կաց. սրանց հետ աշխատելը մեզ պատիվ չի
բերում:

(Մանուշն ու Սաքոն խալաքները հանում են,
գնում մյուս բաժանմունքը):

Ս ի մ ո ն .—Գնացե՛ք, գնացե՛ք, յերանի սալսեմ

դնաք... դուռններս ավելի հանգիստ կլինի:
Տեսնում ես ինչ ստվեց:

Շ ա ֆ ր ու .— Ի՞նչ ես կարծում, ես դործում խաղեյինը
մեղավոր աս:

Ս ի մ ո ն .— Մկի ել մեղավոր չի: Ախր ի՞նչ են մտա-
ծում, ո՞ւմ հետ են սպոր անում, ո՞ւմ հետ են
քայլա քայլի տալիս: Ել ի՞նչ խաղեյին աս, վոր
իր բանվորների վրա չպիտի բարկանա. իհարկե,
կրտրկանա ել, կխոտա ել: Յերբ ուղենա, կաշխա-
տացնի, յերբ չուղենա, կանիցդ բռնած, շնքիդ
տալով դուրս կանի. մարդը խաղեյին աս, իրավունք
ունի:

Շ ա ֆ ր ու .— Են դուրս արածներին հիմի տեսնեք
բժիշկը հաց աս տալու կապահի՞:

Ս ի մ ո ն .— Բժիշկն իրա համար շատ ունի, մնաց վոր
դրանց ել տա:

Շ ա ֆ ր ու .— Դե վոր չունի, ել ո՞ւր աս բանվորներին
դիտահան անում ու նրանց տեղից ու հացից զրկում:

Ս ի մ ո ն .— Աստոծ գիտենա՛ են դուրս արածների տեղը
յես վոր լինեմ, կզնամ եղ բժիշկի յախից կբռնեմ,
ինքան կտամ, վոր նա իր յեկած ճամբեն մոտանա:

Շ ա ֆ ր ու .— (կամչում Ե): Ճուտի՛կ, թութուն բե՛ր,
գելլի բե՛ր:

Ճ ու տ ի կ .— Ի՞նչ թութուն, ի՞նչ գելլի: Բոլոր
բաժանմունքներում բանվորները զարատով կա յեն
արեւլ, դուք կանգնել, թութուն եք ուզում, գելլի
յեք ուզում:

(Բոլոր բաժանմունքներից բանվորներն աղմուկով
մերս եմ մտնում):

Նույնք, Գրիգոր, Մանուշ, Սաքո, Գոգիա և մյուս
բաժանմաններում աշխատող բանվորներն ու
բանվորուհիները:

Բուլոբը.—Գործադուլ, գործադուլ...

Սիմոն.— Խելագարվեցի՞ն, ինչ ե...

Բուլոբը.—Գործադուլ... գործադուլ...

Շաֆրո.—Դուք գժվել եք, դուք խելագարվել եք.
Ի՞նչ գործադուլ, ի՞նչ բան:

Սիմոն.—Եստեղ որվա ուտելու մենք հաց չունենք,
դուք գործադուլ եք անում: Խալխին սովից կոտո-
րելու մի՞տք ունեք:

Գրիգոր.—Իսկ վոր ամբողջ ժամանակ աշխատում
ենք, շատ կուշտ ենք լինո՞ւմ: Մենք միշտ ել քաղ-
ցած ենք, միշտ ել սոված: Ամբողջ տարվա մեջ
յերևի յերկու որ միայն կուշտ ինք լինում, դա
գատկին ե լինում և ջրորհնեքին... բայց դուք մի
մտանաք, վոր փողոցում Թափառող շներն ել այդ
որը բան-ման են գտնում...

Բուլոբը.—Ճիշտ ե:

Գրիգոր.—Յեթե ճիշտ ե, մենք պիտի բողոքենք,
մենք պիտի պայքարենք, մենք պիտի կռվենք...
մի՞թե մեր ճակատագիրն ե միշտ և ամենուրեք
զրկանք ու հալածանք կրել և լուսթյամբ տանել:

Բուլոբը.— Վո՞չ, մենք լուել չենք կրատող... մենք
պետք ե կռվինք... մենք պետք ե բողոքենք...

Շաֆրո.—Ինչո՞ւ կռվել, ինչո՞ւ բողոքել...

Սիմոն.— Խնդրանք ամեն ինչ կարելի յե անել:

Գրիգոր.— Մեր իրավունքը վերականգնելու համար
մենք նրանցից դժուրթյուն, վողորմություն աղեր-
սող աղքատներ չենք... մենք գործադուլ ենք
հայտարարում և կռվի միջոցով մեր պահանջները
դնում:

Բուլոբը.—Յերկարաբանության ժամանակ չե...
հարցը դնենք քվեարկության:

Գ ր ի գ ո թ .—Թող այդպես լինի... Ով համաձայն է
գործադուլին, թող ձեռք բարձրացնի:
(Բացի Սիմոնից ու Շաֆրոյից, բոլորը ձեռք են
բարձրացնում):
Բ ո լ ո թ ք ք .—Գործադուլ... գործադուլ...

Տ Ե Ս Ի Լ 9

Նույնք, Գեվորգ և Ստեփան

Գ Ե Վ Ո Ր Գ .—Այս ի՞նչ է նշանակում... գործը թողած՝
դուք այդ ո՞ւր եք գնում:
Գ ր ի գ ո թ .— Այնտեղ, մեր դուրս արված ընկերների
մոտ: Իսկ յեթե դուք այդ չեք ուզում, կատարեցեք
մեր այս պահանջները, ընդունեցեք մեր դուրս
արված ընկերներին... Թե չե մենք մերը կանենք:
(Տալիս է պահանջաբերքը: Գեվորգը վերցնում է
և լուռ կարդում):
Գ Ե Վ Ո Ր Գ .— Սրանցից և վոչ մեկը:
(Պահանջաբերքը պատռում է):
Գ ր ի գ ո թ .— Ընկերներ՛ր, մեր պահանջը չհարգվեց...
Այդպես ել պիտի լիներ: Ինքնակամ կերպով նրանք
մեզ վոչինչ չեն տվել և չպիտի տան... Հեռեապես
մեր կռիվը կռիվ է: Մեկը ամենքի, ամենքը՝ մե-
կի համար, թող այս լինի մեր նշանաբանը...
Գնա՛նք, ընկերներ՛ր...
Բ ո լ ո թ ք ք .—Գնա՛նք... գնա՛նք...
(Գնում են):
Գ Ե Վ Ո Ր Գ .—Գնացե՛ք, կորե՛ք խառնակիչներ՛ր:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Բեմը ներկայացնում է Գևորգ Բաղդամիչի տունը: Կահավորված է կիսաասիական և կիսայեվրոպական թեթև կահկարասիներով: Մարգարը մոմով հատակն է սրբում ու յերգում:

Տ Ե Ս Ի Լ 1.

Մարգար, հետո Հերիֆնագ
 Մարգար.—«Բաղալո ջա՛ն, բաղալո՛,
 — «Հաքարի շիր, բաղալո,
 «ձեր բաղի ծառի նուշը...
 «պաչեմ Հերիքնագի թուշը:
 «Բաղալո ջա՛ն, բաղալո՛,
 «Հաքարի շիր, բաղալո՛.
 «բաղչի միջին կա համեմ,
 «սիրտս սրտիդ մեջ քամեմ,
 «բաղալո ջա՛ն, բաղալո՛,
 «Հաքարի շիր, բաղալո՛...»

Մարդ շուն ըլի, գել ըլի, հարուստի տանը նոքար չըլի: Արդար ես, թե մեղավոր, հասնողը դլխիդ դմփացնում ա: Բանվորները զարաստովկա անեն, աշխատանքի չգան—նոքարն ա մեղավոր: Աղջիկ—պարոնի շորերը մաղխական չափսովը չկարի—նոքարն ա մեղավոր: Կուխնումն են անտեր մկները բզբզեն, մուրարի բանկան վեր ընկնի կոտրի—նոքարն ա մեղավոր: Քամին փչի, քուչումը Փանառը հանգցնի—նոքարն ա մեղավոր: Շունը կապած տեղից դուրս պրծնի, խալխին դզզի—նոքարն ա մեղավոր: Մի մեծ յերկրաշարժ ըլի, ա-

դի տունը քանդվի — ելի կասեն նոքարն ա մե-
ղավոր: Ախր նոքարն ի՞նչ քար տա իր գլխին,
վո՞ր ջուրն ընկնի: Մի յերկու շահի փող են տա-
լի, տասն անգամ թիֆերովս հանում են, հետո ել
ասում են, թե խալիսը դինջ չի մնում, զարաս-
տովկա յեն անում: Ախր վո՞նց չանեն:

Հ եր ի ֆ ն ա գ . — Մարդար, հլա չես վերջացրե՞լ:

Մ ա ր գ ա ր . — Ինձ մի՛ խոսացրու, տեսնում ես, վոր
չարացած եմ:

Հ եր ի ֆ ն . — Սաղեյինը վոր լանվորների վրա չարացել
ա — եդ յես հասկանում եմ, դո՞ւ ում վրա յես չա-
րացել — եդ չեմ հասկանում:

Մ ա ր գ ա ր . — Յես ել քե՛զ վրա յեմ չարացել:

Հ եր ի ֆ ն . — Ինչի՞նչ:

Մ ա ր գ ա ր . — Նրա համար, վոր յես քեզ ինչ վոր ա-
սում եմ, դու ինձ չես լսում:

Հ եր ի ֆ ն . — Ինչ ես ասել, վոր չեմ լսել:

Մ ա ր գ ա ր . — Հաղար անգամ ասել եմ, թող մի ան-
գամ պաչեմ, չես լսում:

Հ եր ի ֆ ն . — Ը՛հ, հողս գլխիդ, յես ել ասեմ՝ բա՛ն ա
ասում:

Մ ա ր գ ա ր . — Դա ամենալավ բանն ա, աշխարհիս յե-
րեսին դրանից լավ բան չկա: Հերիքնազ ջա՛ն,
խուլվաթ տեղ ա, ոչով չի տեսնի, թող մի անգամ
պաչեմ: (Ուզում եմ բան բռնել, մա խուսափում եմ):

Հ եր ի ֆ ն . — Թո՛ղ, թե չե ձեն կտամ: Գործդ վերջացը-
ր՛ւ, արի՛, աղջիկ պարոնը քեզ տեղ ա ուղար-
կում: (Դուրս ե գնում):

Մ ա ր գ ա ր . — Սաղ որը վորսկան շան նման դես ու դեն
կվազեցնեն, հետո ել կասին՝ դնա պուլը սրբի՛,
կուխնում կեղտոտ ամանները լվա՛, բակը ավլի՛,
վոտնամանները մաքրի՛, ծաղիկները ներս տա՛ր,
դուրս բեր . . . աստված վկա, ես հարուստների սըր-
տում ես քան խղճմտանք չկա: (Մատի ծայրը ցույց
տալով): Մրանց ձեռքին հողիս դուրս ա յեկել:
(Նստում ե բազկաթոռին): Ուխա՛յ, ես զահրու-
մար կրեսելի վրա նստելուց ինչ դինջ ա ըլում,

ե'... կասես, հողիդ արքայութեան մեջտեղում պարզած ըլի: Ախպեր, տեսնո՞ւմ եք՝ ես հարուստները իրենց փտած ջանի դադարը վոնց են խմանում:

(Դրսից վտտփի ձայն ե լսվում, մտած տեղից վեր ե կենում, արձոններն ուղղում և փախստվ մրանց փոշին սրբում):

Տ Ե Ս Ի Լ 2

Մարգար, Գևորգ և Ստեփան

Գ Ե Վ Ո Ր Գ.—Այդ համառ լակոտները թող լավ խմանան, վոր յես ամեն միջոցի կգիմիմ և նրանց արժանի պատիժը կտամ: Լսի՛ր, Մարգար:

Մ ար գ ար.— (Մի կողմ) Տե՛ր, դու փրկյա՛լ ի չարե'..

Գ Ե Վ Ո Ր Գ.— (Ապտակում ե) Տո հայլա՛ն, քեզ հետ մարդ ե խոսո՞ւմ, թե չե: Անիրա՛վ, դու ել ես լրբացել. աչքերդ կհանես, կաշիդ կմաշկես: Լսի՛ր, բանվորներից յեթե դալու լինեն, ներս չթողնես: Դե դնա, կորի՛:

Մ ար գ ար.— (Մի կողմ) Ելի լավ պրծա: (Գնում ե):

Գ Ե Վ Ո Ր Գ.— Հայտարարութեանս դրի՛ր, և կպցրո՛ւ գործարանի դռանը, վոր իբր ժամանակավորապես գործարանը փակում եմ և դնում արտասահման:

Ս տ Ե փ ա ն.— Լավ միտք ե. այդ մասին յես հենց մտածում եյի:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Մտածելը բայական չե, հարկավոր ե գործնական լինել: Գործադուլը յերկար ե տևում: Դրա համար ի՞նչ ես մտածում:

Ս տ Ե փ ա ն.— Ճիշտ ասած, Գեվորգ Բաղդանիչ, դժվարանում եմ մտածել, վորովհետեվ ըստ յերեվուլթին, անիրավները գործադուլը լավ են կազմակերպել: Իսկական աղբյուրից յես տեղեկութեանս եմ ստացել, վոր ուրիշ գործարանի բանվորներն իրենց ստացած ոտճիկի մի վորոշ տոկոսը հատկացնում են մեր գործադուլավոր բանվորներին:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Ահա թե ի՞նչ, Բայց դու ի՞նչպես կարողացար իմանալ:

Մ տ Ե փ ա ն.— Միամիտ մարդկանցից ամեն ինչ կարելի չե իմանալ: Բավական ե մի քաղցր հայացք, կեղծ ժպիտ, ոտճիկների ավելացման խոստում, և այնուհետև ձեք առաջ կրացվի դադարների մի ամբողջ շարան:

(Դրսից աղմուկ)

Գ Լ Ո Ր Գ.— Մտեփա՛ն, մի դնա տե՛ս՝ այդ ի՞նչ աղմուկ ե... բանվորները չլինեն...

(Մարգարե ու Սիմոն իրար փաշխելով ներս են գալիս):

Տ Ե Մ Ի Լ 3

Նույնք, Մարգար և Սիմոն

Մ արգար.— Ձե՛մ թողնի, չե՛, աղեն ասել ա՛՛ վոչվոչքի չթողաս...

Սիմոն.— Թո՛ղ, ի՞նչ ես խեղդում, քոլի ա՛րջ...

Մարգար.— Ձե՛մ թողնի... յես չթողի, աղա՛:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Ձոռ աղա, զահրումար աղա... դու ինձ սրտաճաք արիր. Հայվա՛ն, յեթե դու մյուս անգամ իմ ասած խոսքը սխալ ես հասկացել, աչքերդ կհահահահ: Տո՛, հիմա՛ր, դու չգիտե՞ս, վոք Սիմոնն իմ հավատարիմ բանվորներէցն ե:

Մ արգար.— Ձե՛յի իմանում, աղա՛: (Մի կողմ) Իմացած լինեյի, թամիզ կխեղդեյի: (Դուրս ե գնում):

Սիմոն.— Շորերիս թամաչա արեք, կասես շան ըռեխ ըլե՛մ ընկած: Ել մի սաղ տեղ չի մնացել: Թամիզ պատուել ա:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Լավ, լավ, դու ել միայն քո շորերի հոգան ես քաշում: Ա՛ռ ես փողը, վերցրո՛ւ, կդնաս քեզ համար նորը կառնես: (Փող ե տալիս): Դե՛, պատմի՛, տեսնե՛մ՝ ի՞նչ լուր ունես: Բանվորները դալու մասին ի՞նչ են մտածում:

Սիմոն.— Եսոր, եզուց ա, խաղեյի՛ն, ելած-չե՛լած-

ները ծախել, դրավ են դրել: Մի քանի զավոդի
բանվորներ իրենց սոճկի մի վորոչ տոկոս տալիս
եյին մեր բանվորներին, հիմա ել չեն տալիս:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ի՞նչո՞ւ:

Ս Ի մ Ն Ո Ս.—Նրա համար, վոր նրանց մոտ կրճատում-
ներ ա գնում և նրանք հնարավորութուն չունեն
տալու:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Այդպես, այդպես...

Ս Ի մ Ն Ո Ս.—Հա՛, չմոռանամ ասել՝ միկիտան Գիզոյին
հո ճանաչում եք:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ո՞վ է այդ միկիտան Գիզոյը:

Ս տ Ե ֆ ա Մ.—Մեր գործարանի գլխացի գինեվա-
ճառն է:

Ս Ի մ Ն Ո Ս.—Հա՛, հենց նա յե, վոր կա, եղ գինեվաճառը
գինու պաղպաղի կողքին մանրավաճառի խանութ
եւ ունի, մեր բանվորներին նա նիսիա ապրանք ա
բաց թողնում: Նրանով բանվորները մի կերպ յո-
լա յեն գնում. եղ վոր չլիներ, զարաստովհան հի-
մի վաղուց վերջացած կլիներ:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ահա թե վո՛րտեղ ե թաղնված շան գլու-
խը: Լսի՛ր, Ստեփա՛ն, կանցնես այդ գինեվաճառի
մոտ, այդ ապուշին կհասկացնես, վոր բանվորնե-
րին նա այլևս ապառիկ մթերք բաց չթողնի: Հա-
կառակ դեպքում, յես այդ մասին կհայտնեմ՝ ուր
վոր հարկն ե: Սիմո՛ն, բանվորների մասին ել ի՞նչ
գիտես:

Ս Ի մ Ն Ո Ս.—Բանվորների մեջ զալմաղալ ա ընկել. մի
մասը կողմնակից ա գործադուլը շարունակելուն,
իսկ մյուս մասը մտածում ա, վոր զան ձեզ խընդ-
րեն:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Վոր գործը սկսեմ՝ դան աշխատեն-
լսո՞ւմ ես, Ստեփա՛ն:

Ս տ Ե ֆ ա Մ.—Յես այդպես ել կարծում եյի:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ուրիշ կերպ լինել չեր կարող: Լսի՛ր,
Սիմո՛ն, բանվորներին կասես, վոր Գևորգ Բաղ-
դանիչն անորոշ ժամանակով գործարանը փակում
ե և ինքը գնում ե արտասահման: Ստեփա՛ն, այդ

մասին հայտարարութիւնը յեթե չեզ կայցրել, պետք ե կայցնես: (Սիրաճուշը դռան արանքից լսում ե): Սիմոն, դու քո խոսքը շարունակի՛ր. նրանց մասին ել ի՞նչ դիտես:

Սիմոն.— Բանվորներն ետըր ժամը հինգին ժողով են նշանակել, վոր խորհրդակցեն դործադուլը շարունակելու մասին: Եդ խորհրդակցութեանը կարծես բժիշկն ել ա մասնակցելու:

Գեվորգ.— Այդ լավ ե: Զգուշ աղվեսը յերկու վտարով ե թակարդ ընկնում: Ստեփան, ել սպասելու ժամանակը չե, շտապի՛ր վոստիկանապետի մոտ:
(Խոսելով դուրս ե գնում):

Տ Ե Ս Ի Լ 4

Սիրաճուշ և հետո Հերիֆնազ

Սիրաճուշ.— Ատելի՛ մարդիկ, այստեղ դուք ինչ-վոր դիվային ծրագիր եյիք մշակում, բայց դուք այն իրադործել չեք կարող: (Նստում ե գրասեղանի առջև, գիրք ե գրում և դնում ծրարի մեջ):
Հերիֆնա՛զ, Հերիֆնա՛զ:

Հերիֆնազ.— Համե՛, ի՞նչ եք հրամայում, բարիչնա՛:

Սիրաճուշ.— Յես քեզ քանի՞ անգամ զգուշացրել եմ, վոր այդ «Համե», «բարիչնա» բառերը մյուս անգամ չկրկնես: Լսի՛ր, Հերիֆնա՛զ, դու պետք ե դնաս բժշկի մոտ:

Հերիֆնազ.— Կգնամ, բարիչնա՛, հարցնելն ամոթ չի՛նի, հիվանդ հո չեք:

Սիրաճուշ.— Այո՛, Հերիֆնազ, հիվանդ եմ. և այս նամակով յես բժշկից դեղ եմ խնդրում, յեթե կտա, կրերես: Բայց շուտ պետք ե դնաս, վոր նա տանը լինի, ժամը 5-ին նա ուրիշ տեղ պետք ե գնա: Լսի՛ր, Հերիֆնազ, այդ մասին մեր տանը վոչվոք չպետք ե իմանա:

Հ Ե Ր Ի Բ Ա Պ .— Բարիչնա, աղջիկ-պարոնն Ե՞լ չիմա-
նա:

Մ Ի Ր Ա Մ Ա Ղ .— Վոչվոք, հասկանում ես, վոչվոք:

Հ Ե Ր Ի Բ Ա Պ .— Աչքիս վրա, ընենց գնամ դամ, վոք
սատանան ել չիմանա: (Մարքը վերցնում և ու
գնում):

Մ Ի Ր Ա Մ Ա Ղ .— (Նայում և ժամացույցին): Արդեն ժա-
մը չորսից կես անց է: Յեթե ուշացավ, ժողովում
բոլորը կարող են ձերբակալվել:

Տ Ե Ս Ի Լ 5

Մ Ի Ր Ա Մ Ա Ղ, Գ Լ Ե Ր Գ, Մ ա գ ք ա ղ, հետո Մ ա ր գ ա ր
և վ ա հ ա մ

Գ Ե Վ Ո Ր Գ .— Ահա թի ի՞նչ. ուրեմն իմ տանը, իմ սե-
փական հարկի տակ հեղափոխական ոջախ և
ստեղծվել, վորի մասին յես դադափար անդամ
չունեմ. Մարգա՛ր, Մարգա՛ր:

Մ ա ր գ ա ր .— Համձե՛, աղա՛:

Գ Ե Վ Ո Ր Գ .— Գնա, բժշկին կանչի՛ր: Ասա՛ աղան քեզ
հես դործ ունի: Թող ես ըոպեյիս դա ինձ մտա:
(Մարգարը դուրս և գնում): Գիտեմ, գիտեմ՝ վո՛ր-
տեղ և թաղված ոճի գլուխը... Ծուռով ամեն ինչ
կպարզվի: (Մարգարը վագելով մերս և մտնում):

Մ ա ր գ ա ր .— Աղա՛, նա վոր տանը չըլնի, ուրիշ վո՞ր
գոխտուրը բերեմ:

Գ Ե Վ Ո Ր Գ .— Գնա կորի՛, այստեղ հիվանդ վոչվոք չկա
(Մարգարը դուրս և գնում):

Մ Ի Ր Ա Մ .— Ինչո՞ւ համար ես դու նրան կանչում:

Գ Ե Վ Ո Ր Գ .— Դու այդ հետո կիմանաս: Յես, ինչպես
տեսնում եմ, նա ձեր միջոցով սերտ կապեր և
ստեղծել. և այստան մեջնա դադտնի աշխատանք-
ներ և տանում: (Յերկարատև լռություն): Գեղեցիկ
և հարուստ ոճիտով աղջիկ... յերջանիկ ու փառա-
վոր կյանք... փայլուն ապագա: Բանվորության
կուսակցական աշխատանք... դործադուլ... հեղա-
փոխություն, ... Չե, լավ և մտածված, լավ և

ծրադրված... հա՛, հա՛, հա՛... լավ միտք ե, լավ
ախորժակ ե:

Սիրամ.— Ձուր եք անհանդատանում, նա ամենևին
այդ մտադրութիւնը չունի: Մեր մտերմութիւնն
առաջացել ե դեռևս ուսանողական կյանքից...

Գեվորգ.— Գուցե և աշակերտական կյանքից:

Սիրամ.— Այսինքն դրանով դուք ի՞նչ եք ուզում ա-
սած լինել:

Գեվորգ.— Այսինքն դրանով յես այն եմ ուզում ասել,
վոր բացի ձեր մեջ յեղած սիրո կապերից, կա նաև
այսպես կոչված գաղափարական կապ, վորն ա-
վելի յե ամրացնում ու կապում ձեզ միմյանց:

(Վահանք մերս ե գալիս)

Ահա քո սիրելին, քո հերոսը: Նա յե այդ շիտթ-
ները լցնում քո գլուխն: Դաստիարակում եք բան-
վորներին, սոցիալիզմ եք քարոզում: Հա՛, հա՛,
դուրս կորիր իմ տնից, քեզ հետ այլևս զործ ու-
նենալ չեմ ուզում: Խառնա՛կիչ:

Վահան.— Գեվորգ Բաղդանիչ...

Գեվորգ.— Դուք դեռ համարձակվում եք իմ դեմ
խոսել:

Վահան.— Գուցե կհրամայեյիք սողալ ձեր վտաքերի
տակ:

Գեվորգ.— Լռի՛ր, ապերախտ, քո կողմից ներողու-
թիւն խնդրելու փոխարենն՝ ե այդ: Ասա խնդրեմ,
ի՞նչ իրավունքներով դու այն հիվանդ բանվորի՛ն
վկայական ամիր: Յեվ այդ կեղտոտ թղթի կտորի
պատճառով ստիպված պիտի լինեմ հինգ հարյուր
ոտւրի տալ մի քոստո բանվորի, վորի վրա
թքելն անգամ ամսոսում եմ:

Վահան.— Բայց դուք մոռանում եք, վոր ա՛յդ քոստո
բանվորն ամբողջ տասնհինգ տարի իր ուժն ու
յեռանդը ձեր ոգտին ե սպառել: Յեվ դուք նրա
քայքայված առողջութիւնը վերականգնելու հա-
մար այդ չնչին դումարն անգամ խնայում եք:
Բայց չե վոր այդ նույն «քոստո» բանվորի ջրախն-

քի դառը կաթիլներն են, վոր ձեզ միջոց են տալիս
այս հոյակապ պալատներում ապրելու, մինչդեռ
իրենք մութ ու խոնավ ներքնահարկներում ընկած,
ցամաք հացի կարոտ՝ որ են անցկացնում...

Գ Ե Վ Ո Ր Գ.— Լռի՛ր բավական ե: Ազիտացիա անելու
համար չես յեկել դու այստեղ: Ազիտատորների
տեղը այստեղ չէ: Այդ տեղը յեթե դու չդիտես.
մենք քեզ ցույց կտանք:

Վ ա հ ա մ.— Այդ ի՞նչ սպառնալիք ե:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Հանցագործների վերաբերմամբ սպառնա-
լիքը քիչ ե: Նրանք պետք ե չեզոքացվին և իրենց
արժանի պատիժը ստանան:

Ս Ի ր ա մ.— Դուք շարունակ պատիժների մասին եք
մտածում: Յեթե չեմ սխալվում, այդ առթիվ
դուք մի փոքր առաջ նույնիսկ խորհրդակցութուն
ունեյիք և ինչ վոր պատժի ծրագիր եյիք մշա-
կում:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Լռիր, անպատկա՛ռ: Դու այս տեղ վե-
րահակիչ ես նշանակված, ինչ ե, վոր ամեն քայ-
լափոխում հեանում ես ինձ: Լի՛րբ, անզգա՛մ:
(Հարձակվում ե նրա վրա, իսկ Մագքաղը նրան
բռնում ե):

Մ ա գ ք ա ղ.— Սպասիր, ի՞նչ ես ուզում անել:

Ս Ի ր ա մ.— Ինքնադատատան ե ուզում տեսնել:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Լսեցրու նրան:

Մ ա գ ք ա ղ.— Նա լուել ե: Գնանք, դու մի փոքր
հանգստացիր: (Գեվորգին դուրս ե տանում):

ՏԵՍԻԼ 6

Սիրամուշ և Վահան

Վ ա հ ա մ.— Սիրանուշ, այդ ի՞նչ լսեցի, դու այդ
ի՞նչ ասացիր:

Ս Ի ր ա մ.— Կպատմեմ, յես քեզ բոլորը կպատմեմ:
Բայց նախքան այդ՝ պիտի հեռանալ այստեղից:
Վահան, սիրելիս, ամբողջ կյանքով քեզ եմ պար-
տական, դու փշրեցիր իմ կաշկանդված մտքի կա-

պանքները և այս որ դարձյալ դու ես, վոր իմ
ազատարարի դերը պիտի ստանձնես: Այսանքիցս
դատ, ուրիշ բան չունեմ և ահա այն քեզ եմ
տալիս, տար ինձ, հեռացրու այստեղից...

Վ ա հ ա ն.—Ուրեմն վորոշել ես անպատճառ հեռանա՞լ:

Ս ի ր ա ն.— Այո՛, հեռանալ և վորքան կարելի յե՛
չուտ: Գեղ հետ ամենաաղքատ խրճիթում մի կտոր
ցամաք հացով յես ավելի ուրախ, ավելի յեր-
ջանիկ կլինեմ, քան սրանց հետ: Ի՞նչ եմ անում
նրանց այս շքեղութունը, այս պերճանքը, բազ-
մատեսակ խորտիկներով լի այն ճոխ սեղանը,
յերբ նա ուրիշի քրտինքով, ուրիշի բերանից խըլ-
ված պատաններով և ճոխացրած:

Վ ա հ ա ն.—Գնանք, հեռացիր այս խորթ ու ոտար
միջավայրից, ուր վիշտն ու տանջանքն և քեզ
բաժին ընկել: (Վահանը Սիրանուշի հետ դուրս
եմ գնում: Իսկ Գեվորգն ու Մագքաղը մտնում
են: Գեվորգը պատրաստվում է դուրս գնալ):

Մ ա գ ք ա ղ.—Մեղավորը դու յես: Յես քեզ հազար
անգամ ասացի, վոր հողեորդի մեզ պետքը չի:
Դու ինձ չլսեցիր: Դե հիմա քաշի: Շատերը նույն
խոսկ կարծում եյին, վոր նա մեր իսկական աղջիկն
է:

Գ ե վ յ ր գ.—Յես չգիտեյի թե կրճքումս ոճ եմ տա-
քացնում: Բայց յես նրանց անպատիժ չեմ թողնի:
(Խոսելով դուրս եմ գնում):

ՏԵՍԻԼ 7

Մարգար և Հերիֆնագ

(Մաղկամանը յերկուսով ներս եմ բերում):

Մ ա ր գ ա ր.— Ը՛, անտեր մնաս... Տունը՝ ծաղիկներ
ա, բաղջան ծաղիկներ ա, բալկոնը ծաղիկներ ա,
պաղեզը՝ ծաղիկներ ա... ես ծաղիկների փողով
յարար քանի՞ սոված բանվորներ կկշտանան: Մեր
զարաստովկա արած բանվորների կնանիքը են որը
յեկել եյին, դռան առաջ վզները ծռած կանգնել:

նրանց յերեխեքն ել իրանց մօր փեշից բռնած, մրմնջալով լաց եյին ըննում. Հերիքնա՛ղ ջան, են ա լացս դալիս եր, մոտս թե փող ունեցել եյի, աստօժ դիտենա, դիփ կաայի նրանց:

Հ եր ի ֆ ն ա գ.— Աղան ել տվեց, վո՞նց չե... Գարա- դաժոյ կանչել տվեց ու բոլորին հեռացրեց:

Մ ա ր գ ա ր.— Կոտորվեք, քյասիրնե՛ր, կոտորվեք... յանի ես չի՞՞ ձեր որբ... ա՛խ, վոչինչ չեմ ուզում, յերկու սհաթ աստված դառնամ:

Հ եր ի ֆ ն ա գ.— Դու ել միթամ բան ասիր, վո՞ր աստ- ված դառնաս՝ ի՞նչ պիտի անես:

Մ ա ր գ ա ր.— Ա՛յ թե ինչ. ամենից ասաջ աշխարհը շուռ կտամ, այսինքն յերկինքը դա ներքե, դեաինը դնա վերե: Հետո մարդկանց կիտիեմ ու կհրամայեմ որիորդները՝ տիկիները դառնան, տի- կիները՝ որիորդներ, հարսը սկեսուր դառնա, սկեսուրը՝ հարս, տղամարդը կնիկ դառնա, կնի- կը՝ տղամարդ, քյասիրները հարստանան, հա- բուստները քյասիրանան, մեռելները սաղանան, սաղեքը մեռնեն... դու են վախտը թամաշա արա, թե մեջները ի՞նչ դալարալղ կընկնի... հա՛, հա՛, հա՛...

Հ եր ի ֆ ն ա գ.— Դա չլինելու բան ա:

Մ ա ր գ ա ր.— Բա լինելու բանը վո՞րն ա, դու աս՛ա:

Հ եր ի ֆ ն ա գ.— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, դիտիս ցավը բռնեց:

Մ ա ր գ ա ր.— Խե՛խճ Հերիքնաղ, յերկու շարաթ ա՛ դիտացավից մեռնում ես, մտիկ տվող չկա: Համա մի որ են սատկած Մօփսիկը քիչ կնձկնձում եր, են բուպեյին վերցրին Փայտոնը դրին, տարան դոխտուրի մոտ: (Հերիֆնագի գլխին յերկու ձեռ- քով խփում է): Մեռնես, մեռնե՛ս, վո՞ր սրանց մոտ մի շան չափ ել պատիվ չունես:

Հ եր ի ֆ ն ա գ.— Գլխիս ի՞նչ ես խփում...

Մ ա ր գ ա ր.— Յանի ես չի՞՞ քյասիրի՛ որբ... Հերիքնաղ ջան, նեղացա՞ր, վա՛յ յես քու հոգին ուտեմ... արի բարիչենք:

Է Ե Ր Ի Ֆ Ն Ա Պ.— Թ՛ո՛ղ... (Ուզում ե գնալ):

Մ ա ր գ ա ր.— Կա՛ց, ո՞ւր ես գնում. հաղիվ ազատ խոսելու ժամանակ ունենք: Աղան դուրս գնաց, աղջիկ պարոնն ել բարիչնի գնալուց հետո չգիտեմ ինչով ա գրադված: Տունը մնացել ա միղ, նստենք, ջանասենք, ջան լսենք: Հերիքնա՛ղ ջան, դու կխմանաս, բարիչնան ինչի՞ համար գնաց:

Է Ե Ր Ի Ֆ Ն Ա Պ.— Ինչի՞ համար պիտի գնար, բժշկին սիրում եր, նրա հետ խոսք մեկ արին ու վեր կացավ գնաց:

Մ ա ր գ ա ր.— Հերիքնա՛ղ ջան, մի խոսք ասեմ Հո չե՞ս նեղանա:

Է Ե Ր Ի Ֆ Ն Ա Պ.— Ասա՛ տեսնեմ:

Մ ա ր գ ա ր.— Հերիքնա՛ղ ջան, բա չես ասի յես ել քեզ վրա յեմ սիրահարվել և հոգով-սրտով սիրում եմ, արի մենք ել խոսք մեկ անենք ու սրանցից հեռանանք:

Է Ե Ր Ի Ֆ Ն Ա Պ.— Մրանցից հեռանանք, բա մեր ծառայութ՛յո՞ւնը:

Մ ա ր գ ա ր.— Ել ծառայութ՛յուն չենք անի, կգնանք մի վորեւե դործարանում կընդունվենք ու յերկուսով միասին բանվորութ՛յուն կանենք:

Է Ե Ր Ի Ֆ Ն Ա Պ.— Բանվորութ՛յունը լավ ա:

Մ ա ր գ ա ր.— Վա՛յ յես քու հոգին ուտեմ: Հերիքնա՛ղ ջան, դե վոր ըտենց ա, մենք միավորվեցինք, թող մի սրտալի պաչեմ:

(Գրկում ե ու համրուրում; Դրսից վտտի ձայն ե լսվում):

Է Ե Ր Ի Ֆ Ն Ա Պ.— Թ՛ո՛ղ, մարդ ա դալիս...

Մ ա ր գ ա ր.— Պա՛հ, դրանց տունը քանդվի: Բա ես պես վախա կզան, մարդու կխանդարե՞ն... (Դուրս եմ գնում):

Մանուշ, Սաքոն, բանվորուհիներ, փոքրահասակ
 յերեխաներ և հետո Մագքալ. բանվորուհիները
 ցնցոտիներով և կիսամերկ յերեխաների ձեռքից
 բռնած ներս են գալիս և զարմացած նայում:

Սաքոն.— Վո՛ւյ, զոռանամ, ես ի՞նչ լիբը տուն ա...
 ամեն ինչ կա, վոր ասես մի բան պակաս չի:

Մանուշ.— Մենակ ասուու տված կրակն ա պակաս:

Սաքոն.— Աղջի, ես ինչ մեծ հայելի ա, պա՛հ, պա՛հ,
 տերդ մեռնի: Եսքան ել մեծ հայելի: Վտտից զը-
 լուխ մեջն երևում ենք: Ես դահրումար կարկատա-
 նը երեկ կպցրի, ես որ նորից քանդվել ա: (Հայե-
 լու մեջ նայում է):

Մանուշ.— Քանի դու եղ հայելու առաջ կանգնես,
 պակաս բաներ վրադ շատ կերեմի, սիրտդ խարա-
 կլինի, լավ չի, դեսն արի:

Ի. Բանվորուհի.— Աղջի, սուս արա, մարդ ա
 գալիս:

Մանուշ.— Գալիս ա դա, ի՞նչ եք վախենում: Թե
 վոր վախենալու էյիք, ել ի՞նչի համար եք յեկել:
 (Մագքալը ներս է մտնում):

Մագք.— (Շեմքից) Մարգա՛ր, Հերիքնա՛դ: Ես ո՞ւր
 են կորել, մարդ չկա:

Մանուշ.— Ինչպես թե մարդ չկա, բամենք ի՞նչ ենք
 խաղեյկա ջան, յեթե դործ կա, տվեք մենք կանենք:

Մագք.— Դուք ո՞վ եք. ի՞նչի համար եք յեկել:

Մանուշ.— Մենք ձեր դործարանի բանվորուհիներն
 ենք: Մրանք ել ձերբակալված բանվորների կանայք
 են: Բայց դուք ինչո՞ւ գունատվեցիք: Յերեմի
 մրտում եք: Մտաններին հրամայե՛ք՝ թող ձեզ հա-
 մար մի տաք շալ բերեն գցեք վրաներդ:

Սաքոն.— Եղ դռան առաջ միք կանգնի, հանկարծ
 սկզբադնյակ կանի, կմբսեք— կհիվանդանաք, լավ
 չի:

Մագք.— Ինչո՞ւ համար են այդ խոսքերը:

Մ ա ն ու շ . — Եղ խոսքերը նրա համար են, վոր կանգնելը ձեզ համար լավ չի: Ձեր եղ նազուկ վտարերը կանգնելուց կհոգնեն, դուք նստեք, իսկ մենք կկանգնենք, չե վոր կանգնելուն մենք սովոր ինք:

Մ ա գ ք . — Վերջապես դուք ի՞նչի համար եք յեկել, ի՞նչ եք ուզում:

Մ ա ն ու շ . — Մենք ուզում ենք, վոր դուք միշտ եսպես բախտավորության մեջ լինեք: Փառավոր կերպով ապրեք, կյանք վայելեք: Մեզ պես նեղ որեր չաեսնեք:

(Գեվորգը ներս ե գալիս և գարմացած նայում):

Տ Ե Ս Ի Լ 9

Նույնք և Գեվորգ

Գ Ե Վ Ո Ր Գ . — Այս ի՞նչ ե նշանակում: Ի՞նչու համար եք հավաքվել այստեղ:

Մ ա ն ու շ . — Լսել ենք, վոր դուք դնում եք արտասահման, յեկել ենք ձեզ ճանապարհ դնենք:

Գ Ե Վ Ո Ր Գ . — Թողեք ձեր այդ հիմարությունը: Յես ժամանակ չունեմ ձեզ հետ գլուխ դնելու: Յեթե աշխատանքը սկսելու մասին եք հետաքրքրվում, դեռ յերկար պիտի սպասեք: Իսկ ինչ վերաբերվում ե բանտարկվածներին, այդ խնդրով դուք ժանդարմակի ուպրավենին պիտի գնաք:

Բ ո լ Ո Ւ Բ . — Նրանք թույլ չեն տալիս, վոր գնանք:

Մ ա ն ու շ . — Յեթե ձեր միջնորդությունը լինի, նրանք և թույլ կտան և նույնիսկ նրանց բոլորին կազատեն:

Գ Ե Վ Ո Ր Գ . — Այդ իմ իրավունքի սահմաններից դուրս ե:

Ս ա ք ո . — Իսկ ձերբակալել տալը ձեր իրավունքի սահմաններից դուրս չե՞ր:

Բ ո լ Ո Ւ Բ . — Ինչպես վոր ձերբակալել եք տվել, ենպես կլ դուք կարող եք ազատել տալ:

Գեվորգ.— Նրանց ազատում չկա:

Բուրբ.— Պատճառը՞:

Գեվորգ.— Պատճառը դուք ժանդարմսկի ուպրավ-
լինից կարող եք դնալ իմանալ:

Բուրբ.— Ա՛յ քանդվի, բրիչակ դառնա ձեր ժան-
դարմսկի ուպրավլինին ել, ձեր կառավարությունն
ել, ձեր որենքն ել...

(Հարձակվում են նրա վրա, նա իսկույն դուրս է
վազում: Նրանք սկսում են իրերը ցարդ ու
փշուր անել):

Գեվորգ.— (հորփից): Այդ ի՞նչ եք անում: Ինչո՞ւ
համար եք այդ իրերը փչացնում:

Բուրբ.— աչքդ ել ենք հանում:

Չայնբ.— Հողս քու գլխին ել, քո իրերի գլխին ել:

».— Հերիք ա ինչքան դուք տանջեցիք մեզ:

».— Դուք զրկել-կողոպտել եք մեզ:

».— Դուք ծծել-քամել եք մեր արյունը:

».— Դուք քանդել-հիմնահատակ եք արել մեր տու-
նը, մեր ոջախը...

(հորփից ձայներ):

Չայն.— Մինչև պետի գալը տունը բոլոր կողմից
չբջապատեք և առանց նրա կարգադրության վոչ
վոքի դուրս չթողնեք:

Չայնբ.— Լսում ենք:

(Քաղաքապահը հարբած Ռերս է գալիս):

Տ Ե Ս Ի Լ 10

Նույնք, քաղաքապահ, հետո վոստիկանակամ
պաշտոնյա:

Քաղաքապահ.— Բուկի վե՛րիս...

Մանուշ.— Ռուսերեն մենք չենք հասկանում: Հայե-
րեն ասա տեսնենք ի՞նչ իս ասում:

Քաղաքապահ.— Ռուսերեն չեք հասկանում, իսկ զա-
բաստովկա անել, Գեվորգ Բաղդանիչի տան իրերը
ջարդ ու փշուր անելը հասկանո՞ւմ եք:

Մ ա ն ու շ . — Հ ե տ ո՞ :

Ք ա դ ա ֆ ա պ ա հ . — Հ ե տ ո ե ն , վ ո Ր դ ու Ք գ եղ եց ի կ թ ղ յ ու ն ն եր ե ք , կ ա ր ե լ ի յ եր ձ եր փ ե տ ու ը ն եր ը ք ա մ ու ն տ ա լ . . . (Մ ո ս ե ն ու մ ե Մ ա ն ու շ ի ն) :

Մ ա ն ու շ . — Հ ե ո ա ց ի ր , յ ես ձ եր ո ս ի մ ա տ ու շ կ ա ն եր ի ց չ եմ : Հ ո զ ս գ լ ի ս ի դ , տ ա ր ի ն տ ա ս ն եր կ ու ա մ ի ա դ ու Ք ը տ ն ն ց հ ա ր ր ա ծ պ ի տ ի լ ի ն ե ք : Ե ն ք ա ն խ մ ե լ տ ր ա ք վ ե լ ե ս , վ ո Ր ե լ վ ո ս ք թ վ ր ա կ ա ն գ ն ե լ չ ես կ ա ր ո զ ա ն ու մ : Գ ի ն ու տ կ ճ ո Ր ի ն մ ա ն կ ա ն գ ն ա ծ տ ե ղ դ տ ր մ ր տ մ ր ու մ ե ս :

Ք ա դ ա ֆ ա պ ա հ . — Հ ե տ ո՞ :

Մ ա ն ու շ . — Հ ե տ ո ե ն , վ ո Ր ք ի թ դ փ տ ա ծ ք ա գ ր ի շ ա ն ի ն մ ա ն ի ր ե ս ի ց դ կ ա ի ս ա ը ն կ ե լ , բ ո ն ն ն ք հ ու պ տ ա ն ք , ո վ ա ի մ ա ն ու մ եր կ ու վ ե դ ր ո գ ի ն ի թ ա փ վ ի :

(Բ ո լ ո Ր ը ս կ ս ու մ ե ն ծ ի ծ ա ղ ե լ) :

Ք ա դ ա ֆ ա պ ա հ . — Ձ ա յ ն եր դ կ տ ր ե ք : Կ ն կ ա ք ա զ ա ր մ ի ք շ ի ն ի : Դ ու Ք ք ա ն տ ա ր կ յ ա լ ն եր ե ք : Դ ու Ք չ գ ի տ ե ք , վ ո Ր ք ա ն տ ա ր կ յ ա լ ն եր ի ն խ ո ս ե լ ը ը ն դ հ ա ն ր ա պ ե ս ա ր գ ե լ վ ու մ ե :

Մ ա ն ու շ . — Խ ո ս ե լ ը ա ր գ ե լ ու մ ե ք , տ ն ի ց դ ու ր ս գ ա լ ը ա ր գ ե լ ու մ ե ք , գ ո Ր ծ ա ղ ու լ ը ա ր գ ե լ ու մ ե ք , խ ա գ ե յ ի ն ն եր ի դ ե մ բ ո ղ ո ճ ե լ ն ա ր գ ե լ ու մ ե ք . . .

Ք ա դ ա ֆ ա պ ա հ . — Մ ա լ չ ա՛ տ . դ ու Ք ո Ր ե ն ք ի հ ա կ ա ո ա կ խ ո ս ք եր ե ք ա ս ու մ : Յ ես ս Ր ի կ ք ա շ ե մ ե բ ո լ ո Ր ի դ կ կ ո տ ո Ր ե մ : (Ս ու Ր ը մ եր կ ա ց ն ու մ ե) :

Յ եր ե խ ա ն եր . — Մ ա յ Ր ի կ ջ ա՛ ն . . .

(Բ ո լ ո Ր ը ս ա ր ս ա փ ա ծ ֆ ա շ վ ու մ ե ն մ ի կ ո ղ մ : վ ո ս տ ի կ ա ն ա կ ա ն պ ա շ տ ո ն յ ա ն մ ի խ ու մ ր վ ո ս տ ի կ ա ն ն եր ո վ ն եր ս ե գ ա լ ի ս) :

Վ ո ս տ ի կ . պ ա շ տ ո ն յ ա . — Ս ր ա ն ք ե ն բ ու ն տ ո ղ չ ի կ ն եր ը :

Ք ա դ ա ֆ ա պ ա հ . — Հ ր ա մ ա ն ք ե ս , ձ եր դ գ ե ր ա զ ա ն ց ու թ յ ու ն :

Վ ո ս տ ի կ . պ ա շ տ ո ն յ ա . — Դ ու ր ս տ ա ն ե լ բ ո լ ո Ր ի ն :

(Բ ո լ ո Ր ը դ ու ր ս ե ն գ ն ու մ : Ի ս կ Գ ե վ ո Ր գ ն ու Ս տ ե փ ա ն ը խ ո ս ե լ ո վ ն եր ս ե ն գ ա լ ի ս) :

Տ Ե Ս Ի Լ 11

Գեվորգ և Ստեփան

Ստեփան.—Ուրեմն այդպես, նշանակված ժամին ժողովատեղը շրջապատում են և այնտեղ յեղողներին բոլորին ձերբակալում: Բայց ճանապարհին այն անպիտան Գրիգորը, ինչպես և լինում, կարողանում է փախչել:

Գեվորգ.— Այդ լավ չէ: Պետք է միջոցներ ձեռք առնել նրան եւ, բժշկին եւ ձերբակալելու և մյուսներին մոտ ուղարկել: Թող այնտեղ նրանք միմյանց քարոզեն «յեղրայրություն», «ազատություն», «հեղափոխություն», «սոցիալիզմ»: Հա՛, հա՛, հա՛...

Տ Ե Ս Ի Լ 12

Նույնք և Գրիգոր

Գրիգոր.— Պատիվ ունեմ ներկայանալու: Տե՛ր, և դու, հավատարիմ ծառա...

(Գեվորգն ու Ստեփանը սարսափով միմյանց յերեսի յեմ նայում):

Գեվորգ.— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում:

Գրիգոր.— Ձեր բանվորության կողմից ուղարկված ներկայացուցիչ եմ: Ընկերներս պահանջում ին՝ միջամտեք ուր հարկն է, ազատել տաք մեր բանտարկված ընկերներին:

Գեվորգ.— Պարոն ներկայացուցիչ՛, դուք եք, վոր իմ հրամանիս պիտի յենթարկվեք: Լսի՛ր, քո ընկերներին ազատում չկա: Մինչև դուք բոլորդ բանա չուղարկվեք, դուք չեք խրատվի, լեզուներդ չեք կարճացնի:

Գրիգոր.— Բանտերով եք ուզում մեզ ընկճել, մեր լեզուն, մեր միտքը կաշկանդել... վողորմելինե՛ր,

դուք եք, վոր բանտի անունը լսելիս դողում,
սարսափում եք, մենք սարսափելու վոչինչ չու-
նենք:

Գեվորգ.— Յերբ ձեզ այնտեղ կտանջեն, կաշիներդ
կքերթեն, դուք կսարսափեք:

Գրիգոր.— Մեր կաշին ձեզ պես բարի մարդիկ վա-
ղուց են քերթել...

Գեվորգ.— Ձայնդ կտրի՛ր, անպատկա՛ռ: դու Հաս-
կանո՞ւմ ես՝ ի՛նչ ե նշանակում տիրոջ դեմ Հակա-
ռակվելը: Դու չդիտե՞ս, վոր բավական ե իմ մի
ակնարկը, և դուք մտրակների տարափների տակ
բանտը կքշվեք...

Գրիգոր.— Իսկ դուք չդիտե՞ք, վոր բավական ե մեր
այս ջուտ բազուկների մի Հարվածը, և բանտը
կփլվի ձեր դիմին...

Գեվորգ.— Ստեփա՛ն, վոստիկանությանը Հայտ-
նիր...

Գրիգոր.— ՁՀամարձակվե՛ս տեղից շարժվել...

Գեվորգ.— Ուրեմն դու չե՞ս ուզում քո կամքով Հե-
ռանալ, կորչել այստեղից:

Գրիգոր.— Իսկ դուք չե՞ք ուզում Հարգել մեր առա-
ջարկը և լսել մեր ձայնը:

Գեվորգ.— Ավելի շուտ յես ձեր ձայնը կկտրեմ, քան
կհարգեմ:

Գրիգոր.— Տեսնենք ո՛վ զւմ ձայնը կկտրի...

(Ատրճամակն ուղղում ե նրանց վրա. նրանք սար-
սափով քաշվում են մի կողմ, իսկ Գրիգորն իր
ատրճամակը նորից դնում ե գրպանը և լուռ հե-
ռանում: Գեվորգն ու Ստեփանը յերկար ժամանակ
կանգնած միմյանց յերեսի գարմանով նայում
են):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է պանդոկ: Դեպի խորքը տանող կամարածև անցքերից յերևում են հատուկ տեղեր, վարտեղ նույնպես համախորդներ մատած՝ խմում են: Պանդոկի մի առանձին մասում մի փոքրիկ բեմ, վարտեղ սագանդարները նվագում են, իսկ յերբեմն արևելյան տարագով պարողներն ու պարողուհիները դուրս են գալիս ու պարում:

ՏԵՍԻԼ 1

Գարեգին, Արշակ, Արրահամ, հետո Սիմոն

(Սրանք յերբեմով մի առանձին սեղանի շուրջը մատած խմում են):

(Սիմոնը գաղտագողի մտեմում է):

Գարեգին.— *Ձգո՛ւյշ... մեզ լսող կա: (Սիմոնին) Ինչի՞ համար ես կանգնեմ, Սիմո՛ն: Յեթե խմել ես ուզում, արի՛ մի բաժակ դինի տամ խմի՛ր: (Սիմոնը հարբած է ձևանում և բուրբուկիմ ձայն չի հանում):*

Արշակ.— *Արի խմի՛ր, խմելուց հետո փակ լեզուդ խսկույն կրացվի: Գինին զորավոր հատկութունն ունի: Նա կույրերին աչք է տալիս, կաղերին՝ վոտ, աղքատներին՝ հարստութուն, համբերին՝ լեզու:*

Սիմոն.— *Յես վոչ կույր եմ, վոչ կաղ և վոչ եմ աղքատ:*

- Արշակ.—Նշանակում ե, վոր դու վերջին տեսակին ես պատկանում, այսինքն համբ ես. յեթե դու մե բաժակի խմես, են ըոպեյին բլբուլ կդառնաս:
- Սիմոն.—Բլբուլ կդառնամ, թե ազոավ, այդ քո դործը չե: Դու այն ասա՛, դործադուլը յե՞րբ ե վերջանում:
- Արշակ.—Եղ հարցն ինչո՞ւ համար ես ինձ տալիս: Գնա դիմի՛ր Գևորգ Բաղդանիչին, այդ հարցի պատասխանը թող նա տա:
- Սիմոն.—Գործարանի տերը թեև նա յե, բայց դործը սկսելու կարգադրությունը մենք ձեզնից ենք սպասում: Դուք՝ կուսակցականներդ եք եղ դործերը ղեկավարում: Կապլիմեստրի նման, դուք ձեր մատը վոր կողմը վոր շարժում եք, մեր բանվորությունը են կողմն ել թեքվում ա...
- Գարեգիմ.—Եղ ո՞վ ա քեզ եղպես ասել:
- Սիմոն.—Ո՞վ պիտի ասի: Մենք ենքան ել հիմար չենք, վոր չհասկանանք: Ձեր մասին մենք ամեն ինչ գիտենք: Վոր դուք ետեղ խմելու համար չեք նստել, եղ ե՛լ գիտենք:
- Արշակ.—Լավ ես սկսել, շարունակի՛ր:
- Սիմոն.—Իհարկե կշարունակեմ: Դուք կարծում եք՝ յես ձեզնից կվախենա՞մ. իսկի ել չեմ վախենա: Դո՛ւք ինձնից վախեցեք: Պալլիցիան ձեզպեսներին ճրադուլ ե փնտրում:
- Արշակ.—Հետո՞:
- Սիմոն.—Հետո են, վոր դուք անխիղճ ու անաստված մարդիկ եք: Վոր դուք բանվորներին խայտառակ կերպով խարում եք: Դուք մեզ համար չեք մտածում: Ունքը շինելու տեղ դուք մեր աչքը հանեցիք:
- Արշակ.—Վոչինչ, լավ ես ճառում: Լսի՛ր, եղ խոսքերի համար Գեվորգ Բաղդանիչից դու ինչքա՞ն փող ես ստացել:
- Սիմոն.—Գեվորգ Բաղդանիչը եղ տեսակ բաների համար յեթե փող տալու լիներ, դու ել կստանայիր:

- Արշակ.—Դու կարծում ես, վոր ամեն մարդ կհամար-
 ձայնվի՞ Գեվորդ Բաղդանիչի լրտեսը լինելու։
- Արքաեամ.—Տո վորորմեքի՞, դու հասկանո՞ւմ ես,
 թե ի՞նչ ես անում։
- Գարեգին.—Դիտե՞ս, թե ո՛ւր ես գլորվել...
- Սիմոն.—Յես, յես...
- Արշակ.— Լուի՛ր, դու արդարանալ չես կարող։ Այդ
 մասին մենք ամեն ինչ գիտենք։ Վոր դու այս
 բոսիցիս հարբած չես, և դիտամբ հարբած ես
 ձեանում, այդ ևս գիտենք... Յես քեզ կխեղդեմ.
 յես քեզ կսպանեմ, դավաճա՛ն, հուղա՛...
 (Դաշույնով ուզում է նրան խփել, Գարեգինն ու
 Արքաեամը բռնում են։ Սիմոնը, ոգտվելով հան-
 գամանքից, իսկույն դուրս է վազում)։
- Արքաեամ.— Սպասի՛ր, ի՞նչ ես ուզում նրանից։
 Քարված ու մոլորված բանվորի հետ ես լեզվով
 չեն խոսում։
- Արշակ.— Նա խարված ու մոլորված բանվոր չե. նա
 մատնիչ է. նրա հետ ուրիշ լեզվով չի կարելի
 խոսել. նրան պետք է խփել և շան սատակ անել։
 (Բեմի վրա սագանդարը նվազում է, և պարոզները
 դուրս են գալիս և պարում)։

Տ Ե Ս Ի Լ 2.

Նույնի և ուրիշ գործարանի յերեք բանվոր

- Բանվոր.— Յես մի որ վոր գինի արագ չխմեմ, ևն
 որն ինձ համար որ չի։ Դուք կարծում եք, վոր յես
 չե՞մ հասկանում, վոր խմելը մնասակար. բան ա-
 յես եդ հասկանում եմ. դրա համար շատ եմ
 մտածել և ուզել եմ թարդ անեմ... և ամեն անգամ
 մտքումս դրել եմ, վոր ես վորոցով բոլորովին
 չանցնեմ... չի լինում։ Եդ զահրումար գինին ու
 արաղը մի ենպես զորություն ունեն, վոր ուր ել
 գնալիս լինեն, մազնիսի պես քաշում, ինձ դեսն
 են բերում։

II. Բանվոր.—Եղ արդեն պիանիցություն ա :

I. Բանվոր.— Պիանիցություն չի, դու չես հասկանում : Աշխատանքի ժամանակ յես քեզանից ել շատ եմ աշխատում, իսկ պիանից մարդը աշխատել չի կարող : (Նայում ե բեմի վրա պարոզ կանանց) : Ամեն անգամ ես սազանդարի նվազի են քաղցր ու տնուշ ձենը յես վոր լսում եմ... են պարող կանանց որորան ու շորորալը յես վոր տեսնում եմ, ուզում եմ, թե սաղ որը դամ եստեղ նստեմ ու խմեմ : Հա՛, հա՛, հա՛ :

III. Բանվոր.— Սա ել մի ուրիշ տեսակի պիանիցություն ա... հա՛, հա՛, հա՛...

II. Բանվոր.— Շունը շնից, յերկուսը մի տնից : Կիրակնամուտ ա, նստենք, որնեքս անցկացնենք : Մեր դարդն ու ցավը մոռանանք : (Նստում եմ դատարկ սեղանի շուրջը) :

ՏԵՍԻԼ 3

Նույնին և Գրիգոր

(Գրիգորը շտապ ներս ե մտնում ու գնում Արշակի կողքին նստում) :

Արշակ.— Ի՞նչ արիբ :

Գարեգին.— Ինչո՞վ վերջացավ :

Գրիգոր.— Չհամաձայնվեց... Վորոչեցի խփել, յերկուսին ել տեղն ու տեղը շանսատակ անել... Բայց չարի...

Արքա համ.— Լավ ես արել...

Գարեգին.— Տեսորով բան դուրս չի դա, մի կտրած գլխի տեղը ուրիշը կբուսնի...

(Արտոն մտնելուս ե Թաթոսի նստած սեղանին) :

Արտո.— Ի՞նչ եք հրամայում :

I. Բանվոր.— Յերկու խելադա կախեթի կարմիր գլխի :

II. Բանվոր.— Յերկու շամփուր ել խորոված :

III. Բանվոր.— Կարմիր պամիդորն ու բադրիջանն ել հեար :

Արտոն.—Ես նմուտիս: (Գնում է):

Արշակ.— Քու մասին վոստիկանությանը նրանք
Հայտնած կլինեն. դու առայժմս վոչ մի տեղ չը-
պիտի յերեվաս:

Արքահամ.— Ճիշտ է ասում, վեր կաց դեմ': (Արտոն
գիմիմ, հացը, պանիրը, կանաչեղևը և բակալնե-
րը բերում է դնում թաքոսի սեղանի վրա: Գիմիմ
նրանք լցնում են ու խմում: Գրիգորը դուրս է
գնում):

I. Բացվոք.— Գինին տեղովը մին թույն էլ վոր դառ-
նա, մարդ հենց ուզում աս, վոր խմի: Ավետարա-
նումը գրված աս, վոր գինին Քրիստոսի արյունն
աս, արաղը՝ Պիղատոսի արտասուկը: Վոր եղ
սուրբ գրքի թասածները ճիշտ աս, յես դրանում չեմ
կասկածում: Վորովհետև վոչ ավետարանը սուս
կխոսի, վոչ տերտերն ու վոչ էլ տիրացուն:

II. Բացվոք.— Ճիշտ աս ասում:

I. Բացվոք.— Յես էլ ձեզ հարց եմ տալիս. խմելը դուք
ի՞նչպես եք հասկանում:

III. Բացվոք.— Խմելը յես խմել եմ հասկանում:

I. Բացվոք.— Չե՛:

II. Բացվոք.— Խմելը յես լակել եմ հասկանում:

I. Բացվոք.— Ըղորմի հորդ, դու լավ ես հասկացել...
Ուրեմն խմե՛նք լակողների կենացը:

II. Բացվոք.— Խմե՛նք:

III. Բացվոք.— Խմե՛նք... (Խմում են):

ՏԵՄԻ 4

Նույնք, Գրիգորի և Արտոն

Գրիգորի.— Արտոն ջան, հենց ապրիս, ասա թող
բեսեղկեն սարքեն ու ամեն ինչ պատրաստեն:
Շարաթ որ է, դնացող-եկող շատ կուլի: Իս մի
տեսնիմ՝ սրանք ետաի ի՛նչ ին անում: Անիծածնե-
րը խմելու համար հո չեն դալիս. գինին մահանա

յե, ուրիշ վոչինչ: Ո՛վ ե իմանում՝ ի՞նչ սովեա ին-
անում: Վո՞նց ել կամաց ին խոսում:

(Մտտեցում ե Արշակին):

Արրահամ.— Համեցե՛ք, պարոն Գիգուլի՛:

Գիգուլի.— Վա՛հ, Արրահամ՝, դուն ի՞ս... վա՛յ, իս
ձեր հոգուն մատաղ... Դե ասեք տեհնիմ՝
վո՛ւնց իք...

Արրահամ.— Ե՛հ, ապրում ենք, ե՛լի:

Գիգուլի.— Դուք ի՞նչ իք անում:

Արշակ.— Անգործ մարդիկ ի՞նչ կանեն: Վերցրե՛ք մի
բաժակ գինի անուշ արեք: (Գիգուլին գինու բակալը
վերցնում ե ձեռքը):

Գիգուլի.— Ես աստուծ կինք տա մեր դուշմանին, վոր
մեր լավը տեհնում ե, աչքն ե զոռանում, ուղում
ե թե մոտ դա վնասի, ծնզնիքն ե թիլանում. հե-
վից կանգնած մտիկ ե տալիս աղի պես հալվում
ե, մոմի պես վառվում...

(Խմում ե):

Արրահամ.— Անուշ, — անուշ:

Գիգուլի.— Անուշ կենաք: Գիտե՞ք ինչ կա: Առանց
դուշմնի մարդը մե գրոշ չարժե: Դուշման թե
կուենաք, ձեր գործին դուք մուղայիթ կուլիք:

Արշակ.— Գիգուլին ճիշտ ե ասում: Եքստրա նրա
կենացը: (Խմում են յերեքով):

Գիգուլի.— Ենորհակալ եմ: Սաղ ըլիք, համաշա
ըսենց կամպանիով դաք քե՛Ք անիք...

Գարեգին.— Պարոն Գիգուլի, ես ի՞նչ քե՛Ք ա...
Յերբ վոր գործի կընդունվենք, քե՛Ք կանենք:

(Վեր են կենում):

Գիգուլի.— Գործը դատարկ բան ա... դուք շախով
կացե՛ք: Զիդ պես տղերանց համար ամեն ինչ փեշ-
քաշ ե: Ել վո՞ր որվա համար ինք ետի ննդած:
(Արշակը, Գարեգինը և Արրահամը դուրս են
գնում): Կորե՛ք, կորե՛ք, սարսաղ մունդոխիկներ:
Յես ձեզ լավ եմ ճանաչում: Գիտեմ՝ ի՞նչ
պատուհներ իք: Զեզ աուն թողնելու չի, համա ի՞նչ
արած...

(Դուրսը ազմուկ) :

I. Բաճկո՞ւր. — Գիգոյի՛, Արտոն ի՞նչ ելավ, ո՞ւր
մնաց :

Գիգոյի. — Ես նմուտիս : Արտո՛, ջա՛լդ արա :

Արտո. — Բերում եմ :

(Արտոն խորովածը բերում է դնում սեղանին և
ինքը հեռանում : Դուրսը ազմուկ) :

II. Բաճկո՞ւր. — Գիգոյի՛, ես ի՞նչ դալմադալ աս :

Գիգոյի. — Գևորգ Բաղդանիչի զարաստովկա արած
բանջորներն են :

III. Բաճկո՞ւր. — Ի՞նչ են ուզում :

Գիգոյի. — Աստված վունչ գիգի գրանց դուխն ու
արիվը : Դրանք իրենց զարաստովկով զաՀլա տա-
րան : Դրանց բանը, ախպեր, խիստ մազալու յե :
Քանի զարաստովկա չեյին արել, դրանք խիստ
մինձ-մինձ եյին խոսում : Այ մենք ես կոնինք, են
կոնինք, մի խոսքով, մինձ պլաններ եյին քաշում,
Համա փուտա դուրս եկավ : (Գնում է) :

II. Բաճկո՞ւր. — Լսի՛ր, կարծեմ՝ քո կինն ել Գևորգ
Բաղդանիչի գործարանումն աս աշխատում :

I. Բաճկո՞ւր. — Դու ելնրան Հիշելու ժամանակ գտար :

II. Բաճկո՞ւր. — Սրա կնոջը դու չես ճանաչում,
կնիկ եմ ասում, է՛... ԸՀը՛. անունը տվի, ասն
ու գողը ջանն ընկավ :

III. Բաճկո՞ւր. — Եդքան վախենո՞ւմ աս :

I. Բաճկո՞ւր. — Վոր տեսնես, դու ել կվախենաս :

Կնիկ Հո չի, ազրայել աս : Անիծվածը Հմի վորտեղ
վոր աս, սատանի նման կգա-կրսնի առաջս :
Արտո՛, յերկու խելազա գինի բե՛ր, քանի ընիկս
չի յեկել :

Արտո. — Ես նմուտիս : (Գիմին բերում է) :

Տ Ե Ս Ի Լ 5

Նույն, Գիգոյի, Շաքրա և ուրիշ մի քանի բաճկո՞ւրներ
Գիգոյի. — Շատ նՀախ արիք. ո՞վ եր ձեր դուխը
կտարում, տեսում եք՝ ջիրներիդ գրոշ չկա,

տանը ուտելու հացի թիքա չունիք, ի՞նչ եք փէք անում ու զարաստովկա անում: Վուր արիլ իք, դնացեք համը տեհե՛ք, վոր ուրիշ վախան ել եդ թափուր տուտուց բաներ չանիք: Վոր մող իք ըլում ետտի, ի՞նչ իք փիքը անում. դուքանս վուր լիքն իք տեհնում, գանս են դիփն ել իմն Լ': Են չայը, շաքարը, հացը, պանիրը, միսը, նափթը, ես վուր ձեզ նիսիա բաժնիմ, իժում տիրունջ ի՞նչ ջուղար տամ: Չե՛, ախպեր, չեմ կանս, ենննց ել զարար իմ անում:

Շ ա ֆ բ ու .— Պարոն Գիգոլի, ետքան ժամանակ շատից-քչից դու մեզ քոմագ ես արել: Հիմա ի՞նչ պատահեց, վոր եսպես կարականապես մերժում ես: Կարգադրի խանութից մեզ նիսիա ապրանք բաց թողնին: Եսոր, եզուց դործը կսկսենք, քու պարտքը կտանք:

Բ ու յ ո թ ը .— Իհարկե կտանք:

Գ ի գ ո յ ի .— Գանս չիմ դիդի: Որեսի դենը ել ոչովի նիսիա ապրանք չեմ տալի: Թեկուզ աստոծը ինքը դիփիր դա, թե մարդիկ, իմացե՛ք: Անթե չե ետտի դուքնի տեր հո մինակ յես չեմ, շատերը կան: Ինչո՞ւ նրանցմեն չեք ուզում:

Բ ո յ ո թ ը .— Ուզում ենք, բայց մերժում են, չեն տալիս:

Գ ի գ ո յ ի .— Նրանք վուր չեն տալիս, յես ինչի՞ տամ: Չե՛, ախպեր: Գիտեք ինչ կա, քան թե ինձ եք խընդրում, ուխրո լավ կուլի գնանք Գևորգ Բաղդա-նիչին խնդրենք, թող զավոդը բաց անի, համ ծեղ համա լավ կուլի, համ իրա համար, համ ինձ համար:

Տ Ե Ս Ի Լ 6

Նույնք և Սեակ

Ս Ի Ե Ա Կ .— Ի՞նչ եք հավաքվել ետտեղ, դուրս յեկեք գնանք... Գևորգ Բաղդանիչին, ասում ա, սպանել են:

ուտենք, կարմիր գինին 'խմենք, դուշմանի աչքը
հանենք:

Մ ա ն ու շ .— Առաջ քու աչքը հանեմ, հետո սրանցը:
Ա'յ մարդ, դու չե՞ս ամաչում, դու գետինը չե՞ս
մտնում: Գու խայտին գցել ես տուն, յեկել ես
եստեղ խորոված ուտում, գինով տրաքվում: Այ
հարամ լինի, քնթովդ դուրս դա... յարար վոնց ա
եդ թիքեն բողաղովդ կուլ գնում, ինչի վոսկոս չի
դառնում, բզիդ մնում:

1. Բ ա ն վ զ ը .— Ա'յ կնիկ, լռի՛ր, ամոթ ա...

Մ ա ն ու շ .— Ձենդ կարի՛ր, ամոթը են ա, վոր թեզ տանը
սոված ես թողնում ու ինքդ գայլիս եստեղ քեֆեր
սարքում: Անխի՛ղճ, անաստված, աչքերս ջուր
ա կտրում սաղ շարաթ սպասելով, վոր մի քանի
կոպեկ փող կատանաս, կրերես, կտանք մեր ցա-
վին, մեր դարդին... իսկ դու ստանում ես ու բե-
րում եստեղ քոս ու փուչ անում... Այ քանդվի՛,
բրիչակ դառնա, վոր ձեր արու՜քրախնքով ձեռք
բերած աշխատանքը չբերեք ածեք ես քանդվածը,
ես բրիչակը...

1. Բ ա ն վ զ ը .— Ա'յ կնիկ, դե բոլ ա, սրանց կշտին դու
ինձ բոլորովին խայտառակ արիր:

Մ ա ն ու շ .— Բու աչքն ել դուրս դա, սրանցն ել հե-
տը: Մի բարի պտուղ ել սրանք չեն: Հողս սրանց
գլխին: Սրանք վոր նամուսով, արուսով մարդիկ
լինեն, կզան եստեղ կնասե՞ն: Տո՞ւն չունեն, ցա՞վ
չունեն, թե դարդ չունեն: Վե՛ր կաց գնանք...

1. Բ ա ն վ զ ը .— Հավ, դու գնա՛, յես քիչ հետո կգամ:

Մ ա ն ու շ .— Յես քեզ ասում եմ՝ վե՛ր կաց թե չե՛ ես
խելադան գլխովդ յեկավ... (խելադան բարձրաց-
նում է):

1. Բ ա ն վ զ ը .— Գիժ ա ես մունդուիկը: (խելադան նրա
ձեռքից խլում է):

Մ ա ն ու շ .— Գիժն ել ես ու բնեդյանն ել ես: Հողեմ
գլուխդ:

1. Բ ա ն վ զ ը .— Վո՞րտեղից եկավ ես ստանան: Սպա-
սի՛, թող փսոսա տամ ու գնանք:

Մ ա ն ու շ .— Ձեռք կտրի՛ր, թե չե աշխարհը դիտիդ
կմխնացնեմ, դու ի՞նչ իրավունքով իմ յերեխանց
ուղղին փստնի պետք ե տաս: Քոռանաս, խմելու
համար դուխդ դու ենքան կորցրել ես, ել վոչ
տուն ես ճանաչում, վոչ կնիկ ու վոչ ել յերեխա...
(Քարշ տալով դուրս ե տանում)

III. Բ ա ն վ ո թ .— Ես կնիկը մեզ լա՛վ խայտառակեց...
Վեր կաց՝ մենք ել դնանք, քանի մեր կնանիքն իլ
չեն յեկել մեզ քաշ տալով տարել:

(Յերկուսով դուրս են գնում)

Գ ո գ ի ա մ մ ի կաթսա ձեռքիմ՝ Գ ի գ ո լ ի հետ ներս ե
գալիս:

Տ Ե Ս Ի Լ 8

Գ ի գ ո լ ի, Գ ո գ ի ա, հետո Ս հ ա կ

Գ ո գ ի ա .— Սրանից ավելի իմ տանը ել ուրիշ բան չի
մնացել:

Գ ի գ ո լ ի .— Ես դոռազան ի՞նչ ա, վոր բերել ես: Տար
կորցրո՛ւ: Յես եստի աղբի յաշշիկ չունեմ:

Գ ո գ ի ա .— Դատարկ ձեռքով յես վո՞նց տուն դնամ...
(Արտասվում ե): Յերեխես յերկու որ ա՛ նշխարք
չի դրել բերանը... Նա հիվանդ ե:

Գ ի գ ո լ ի .— Արտո՛, ես պղինձը վիկա՛լ, ասե ի՛նչ ե
ուղում, մի իմքին իրան տո՛ւ թող տանի: Մեղք ե:
(Սհակը ներս ե գալիս մի հին խալի ձեռքիմ):

Ս հ ա կ .— Գ ի գ ո լ ի ջա՛ն, ես խալին վերցրո՛ւ, ասա՛ թող
մի քիչ բանը—ման տա, տանենք ուտենք, տեսնենք
ի՛նչ ա դալիս գլխներս: Հույս ունեյինք, թե ես
որ—եզուց դործարանը կբացվի, կդնանք կաշխա-
տենք, եդ հույսն ել կտրվեց: Թաղեյինին սպանե-
լուց հետո դործարանը բոլորովին կկողպվի:

Գ ի գ ո լ ի .— Գեվորդ Բաղդանիչի սպանվելը հաս-
տա՞տ ա:

Ս հ ա կ .— Եղպես խոսում են: Մեր դործարանի բժշկին
հո ճանաչում ես:

Գ ի գ ո լ ի.—Վոնց չե: Նա իմ հարեանն ե: Գեորգ
Բաղդանչին չբլնի՞ նա յե սպանել:

Ս հ ա կ.—Սպանելու մասին յես խարար չեմ, բայց
ասում են, վոր Գեորգ Բաղդանչի աղջկա վրա նա
սիրահարված ե յեղել, ուղեյա, չեն ավել:

Գ ի գ ո լ ի.—Դրա համար ել նրան սպանել ե ու
աղջկան դոռով տարել: Ա՛յ քեղ մաղալու բան: Եդ
մուկդուրիկը աղա Մահմադ խանը հո չի՞, վոր դոռով
ուզում ա աղջիկ փախցնի: Յես զարմանում եմ,
արբազովնի, յեքա սլատվական մարդ եդ հանգի
բանը նա վո՞նց ե լայիղ անում: Դե արի ու նիսիա
բաժնե: Չե՛, ախպեր, դնա գլխիդ չարեն տես:
Որեսի դենը ձեզ վոչինչ չեմ տալու: Մինչկլի որս
ել վոր տալիս եյի, զավոդի խաթրու եյի տալիս:
(Սեակը խալիմ ձեռքին՝ տխուր ու տրտում սրտով
դուրս ե գնում):

Տ Ե Ս Ի Լ 9

Գ ի գ ո լ ի, Արշակ և Գարեգին

Արշակ.—Արտո՛, մի կվարթ պիվա բե՛ր:

(Արշակն ու Գարեգինը նստում են իրենց նախկին
տեղը, Արտոն գարեջուրը տանում ե):

Գ ի գ ո լ ի.—Դուք ձեր բժշկին շատ եյիք գովում...
եդ ի՞նչ են ասում:

Գ ար Ե գ ի ն.—Նրա համար շատ մարդ, շատ բան կա-
րող ե ասել, իսկ դուք պետք ե հավատա՞ք:

Գ ի գ ո լ ի.— Ինչի՞ չեմ ավտա, թե կի ասում են: Գի-
տե՞ք ինչ ա: Նա իմ հարեանն ե, յես նրան լավ
եմ ճանաչում: Նրամեն ամեն բան հավատալու յե:
Դիսի դրանց մեղքն ե, վոր աշխարհն եսենց խարար
ելավ: Ուսում են առնում, խելոքանալու մազիբը,
ուրիտ գժվում են ու գալիս են եսաի, մենք սո-
ցիալ ինք, կոսե: Ելաստված, խեչ, հավատ սրբու-
թյուն չկա: Ել մինձ, պատիկ, աղա, նոքար սրի-

կաշիկ, դժոբնիկ, չինովնիկ, տերտեր, տիրացու.
վարդապետ չնեն, կոսեւ Ու ըսենց Հազար Չուսա
տուտուց-մուտուց բաներ: Չե՛, ախպեր, դուք ինչ
կուղեք ասեք, ուսումնականները դիփ մեաի թո-
կով կապելու դժեք են:

Գարեգիմ.— Հա՛, Հա՛, Հա՛...

(Գարեգիմն ու Արշակը ծիծաղում են):

Գիգուի.— Ինչ եք ծիծաղում: Ձեր արևը, դրուտ
իմ ասում: Մեր քաղաքը դրանք խարար արին: Ել
առաջվանը չի: Հե՛յ գիդի, շարթեն՝ մե ջեր որթա-
ճալի բաղերում համքրներով քեֆ կոնեյինք, իժում
դուռուկը առաջներս դցած, թայդյուն ու վառած
մոմերը ձեռներիս գալիս եյինք տուն... Ո՞վ եր
հարցնում, ան ո՞վ դարեդվա կոներ ու վարես խոսք
ասի: Համա ինչ լուս ընկան սուտի քրիստոսները,
ես անարխիստներն ու պրոպագանդիստները,
մեր քեյին ել, մեր ուրախությունն ել դիփ
մեաի մոշյա ելավ: Միր դրախտի բարերար քա-
ղաքը դժոխքից ու վարես դարձրին: Ամեն որ բոմբ
ե, ինչ գահրմար ե, գցում են ու խալխին պանտի
հանդը գլդի դլոր անում: (Արշակն ու Գարեգիմը
ծիծաղում են): Դրանց ահեմեն մարդ չի կանա
տնից դուրս գա: Աստոծ գիդենա, զգվեցրել են,
զգվեցրել:

Արշակ.— Ձեզ զգվեցնողները, պարոն Գիգուի՛, ժո-
ղովրդի տականքներն են:

Գիգուի.— Տականքները կի չե. դիփ ետ ուսումնա-
կաններն են:

Գարեգիմ.— Ուսումնականները, ընդհակառակը, ժո-
ղովրդին լուսավորելու համար են մտածում...

Գիգուի.— Վունց վոր ձեր բժիշկն ե մտածում: Փար-
մասիոն վարդապետի նման մող ե անում իր
կուշտը. ել սապոժնիկ ասես, ել կալատուզ, ել
փալանդուզ, ել քիսաչի, ել փոնչի, թավաթ գժիր
ին, ուփրո գժվեցնում ու գցում խալխի. ջանին:
Նրա տունը դռխտուրի տուն կի չեր, դառել իր

Համլարարի մեյդանը, ինչ թափուր թոկից փա-
խած, մլթոնի ստես, վուր չի մտնում:

Արշակ.—Բժշկի մոտ ամեն մի հիվանդ իրավունք
ունի ներս մտնելու: Իսկ այն, ինչ դուք մտածում
եք, միանդամայն սխալ է:

Գիգուլի.— Բժիշկը մաշ սոցիալ չե՞:

Արշակ.— Իհա՛րկե չե:

Գիգուլի.— Բա ի՞նչ է, թե վուր սոցիալ չե:

Գարեգիմ.— Անկուսակցական:

Գիգուլի.— Անկուսակցականս վո՞ւրն է, առջի ան-
դամս իմ լսում: Կուլի ետ ել նոր պարտիա յե:
Ախպե՛ր, ես մուշղուիկ տեղում են դղա խալիս չկա,
ինչ դղա պարտիա կա: Սոցիալիստ, Հնչակիստ,
չանտաժիստ Փեղերալիստ, անարխիստ... Անիծ-
վածների անունն ել ահ է, վայ թու մի բաշ դուս
դան ու ցցվեն առաջդ, դե, հանե ու նրանց փուղ
թափազա արա:

Գարեգիմ.— Անկուսակցականները նման բաներով
չեն գրադվում:

Գիգուլի.— Նրանք կարմիր փեչատով նամակներ չե՞ն
դրում, հարստներից փուղ չե՞ն ուզում:

Գարեգիմ.— Ամինեհին:

Գիգուլի.— Ա՛յ քեզ լավ բան: Մուլափ, Հարցնելն
ամոթ չըլի, անկուսակցականներ շատե՞րը կան:

Գարեգիմ.— Շատ, ժողովրդի մեծ մասը անկուսակ-
ցականներ են: Ինչպես տերտերը, տիրացուները,
սարկավազները, դերասանները, դատավորները,
կաթուղիկոսները, յեպիսկոպոսները:

Գիգուլի.— Թե քու մամի հողին կու սիրիս, ետ ի՞նչ
զորբա պարտիա յե, բաս գլուխս մեռնի, թե խլա-
պոտ չանիմ, ու վաղն յեվեթ չլին չգրվիմ:

Արշակ.— Դուք արդեն գրված եք:

Գիգուլի.— Ո՞վ, յե՞ս:

Արշակ.— Դուք ել, ձեր կինն ել, ձեր յերեխաներն ել:

Գիգուլի.— Վա՛հ, վո՛ւնց թե. պարտիում յես վուր
գրած ըլիմ, յես չիմ գիտենա՛: Անթե չե, եդ

պարտինն ի՞նչ խիստ իմ հալնի, վուր հանդերձ
ընտանիոք գրվիլ իմ: Չի՛, ախպեր, յաղլիշ կու-
լիս, միր մեջ եղ թավուր բան չկա:

Արշակ.—Յեկ վոչ ել եդ տեսակ կուսակցութուն կա,
վոր դուք գրվիք:

Գիգուի.— Մաշ...

Արշակ.—Անկուսակցական, նշանակում ե վոչ մի
կուսակցության չպատկանել:

Գիգուի.—Ետենց ասա, ե՛, հեր ոխնած, կինաղամ
լեղիս պատուից:

(Գարեգիմն ու Արշակը ծիծաղում են):

ՏԵՍԻԼ 10

Նույնք, Շաքրո, Սիմոն, Սեակ Գոգիա և մի
խումբ այլ բանվորներ ու բանվորուհիներ:

(Ազմուկով ներս են մտնում)

Բուրբ.—Ո՞ւր ե բժիշկը, ո՞ւր ե նա, թող դուքս
գա, մենք նրա հետ գործ ունենք... նա մեզ խա-
բեց. նա մեզ գործից զրկեց...

(Ազմուկ)

Գիգուի.—Վա՛հ, ի՞նչ եք բղավում, ի՞նչ եք դռները
կոտրատում, դաշաղներ հո չեք: Բժիշկի հիդ
գործ ունեք, գնացե՛ք նրա տունը, ինձ մոտ ո՞ւր
եք գալի:

Սիմոն.—Գնացի՛նք, տանը չեր: Ենտեղ մեզ ասացին,
վոր բժիշկն ինքն ուզում ե մեզ տեսնել:

Բուրբ.—Մեզ տեսնելու համար նա ուրիշ տեղ չեք
գնա:

Սիմոն.—Գեորգ Բաղդանիչի դուռը բոլորովին մեզ
թույլ չեն տալիս գնալու: Ապա ի՞նչպես անենք
մենք, ո՞ւմ տեսնենք, ո՞ւմ հետ խոսենք...

Բուրբ.—Մեզ բժիշկն և հարկավոր, նրան տվեք մեզ:
Մենք նրա հետ գործ ունենք: Նա մեզ խաբեց, նա
մեզ գործից զրկեց... (Ազմուկ):

Գիգնի.— Գիժ ին ես մուշղուիկները: Իժուս ի՞նչ
իք բղավում: Բղավել չըլնի, թե չե, չեստի կու
բղավեմ, վոր ձենս Հաշտրախան կզնա... Ձիղ
ասում եմ, թե խելք ունիք, մուշղ կացեք, փասա-
փուսաներդ քաշեք, թե չե ես նմուտիս դարադա-
վոյ կու կանչիմ բռնել կուտամ: Ջարաստովչչիկ,
բուստովչչիկ... Հարամզադեք... Ինձմին դուք
վախեցե՛ք, հա՛...

Բուրբ.— Մենք վոչվոքից չենք վախենում...

Գիգնի.— Մաթրախի շրփչրփոցը լսեք, կու վախե-
նաք...

Շաքրո.— Ձենդ տաք տեղից ա դուրս գալիս: Դու,
վոր կերել, կշտացել ես, մեզ ել հարցրու, Ի՞նչ...

Բուրբ.— Յերկու որ ե՛ մենք հաց չենք կերել...

Գիգնի.— Փոսումը քիչ հաց կա, գնացեք կերե՛ք,
ձեզ ո՞վ ե դադադա անում:

Բուրբ.— Փոսի տեղը մենք ել գիտենք, փող վոր
չուենք...

Գիգնի.— Վուր աշխատեք, կուեննաք:

Սիմոն.— Մենք աշխատում եյինք, ինչի՞ բժշկի պես
մարդիկ յեկան խանդարեցին ու մեզ ես որը գցե-
ցին:

Արշակ.— Սուտ ես ասում, սրիկա՛, խառնակիչ... ձեզ
եսոր գցողը նա չեր... Յեվ բավական չե, վոր դու
բանվորության միտքն ես պղտորում, այլև ուրիշի
դժբախտության պատճառ ել ես ուզում դառ-
նալ... Յես քու կյանքիդ վերջ կտամ... մատ-
նի՛չ, Հուդա՛... (Ուզում ե հարձակվել, իսկ Գա-
րեգիմը մրամ պահում է):

Ասա՛, ինչո՞ւ համար ես սրանց հավաքել, ին-
չո՞ւ համար ես սրանց գրգռում բժշկի դեմ, նա
քեզ ի՞նչ ե արել...

Բուրբ.— Ի՞նչ եք սրան լսում, սա դուրս արվածնե-
րից ե. գնանք. գնանք... (Գնում են):

Գարեգիմ.— Ամբոխը հրահրում են բժշկի գեմ:
Գնանք նրան գտնենք և զղուշացնենք:
(Յերկուսով դուրս եմ գնում: Լուցկի վամա-
ռոզ փոքրիկ տղամ կամչելով մերս և գալիս):

Տ Ե Ս Ի Լ 11

Գիգուի, ձուտիկ և ֆաղաֆապահ

- ձուտիկ.— Պապիրո՛ս, սպիչկի, վաքսի, միլա, պաչ-
տալոյ բումազի՛, կոնվերտի:
- Քաղաֆապահ.— Ո՞ւր ես գնում, սպասի՛ր: Այս
թուղիկները դո՞ւ ելիր փողոցում տարածում:
- ձուտիկ.— Ի՞նչ թուղիկ. դա բասպրադաժի հայտա-
բարությունն ա. մի մարդ յերկու մանեթ փող տը-
վեց, ասեց ես բասպրադաժի հայտարարությունը
տարածի՛ր, յես ել տարածում եմ:
- Քաղաֆապահ.— Գնանք այդ մարդուն ինձ ցույց
տուր:
- ձուտիկ.— Նրա հասցեն եղտեղ գրված ա... պապի-
րո՛ս... սպիչկի, վաքսի, պաչտալոյ բումազի՛,
կոնվերտի... (Ուզում ե դուրս գնալ, ֆաղաֆա-
պահը մրան բռնում է):
- Քաղաֆապահ.— Սպասի՛, սրիկա՛, այտեղ յես նրա
հասցեն չեմ գտնում:
- ձուտիկ.— Ես վո՞րտեղ ես ման գալիս, ա՛յ, ես
ներքևի մասում կլինի գրած:
- Քաղաֆապահ.— Ա՛ռ, կարդա տեսնե՞մ վո՞րտեղ է
գրված:
- ձուտիկ.— Յես անգրագետ եմ, դո՛ւ կարդա:
- Քաղաֆապահ.— (Կարդում է) «Գաղտնի տպա-
րան»:
- ձուտիկ.— Բա ասում ես՝ չի գրած. դաղտնի տպա-
րանը, ուրեմն բասպրադաժի ա յենթարկում,
նշանակում ա, վոր ես մարդն ել ենտեղ կլինի:
- Քաղաֆապահ.— Չգիտե՞մ ի՞նչդ ես. հիմար, թե.

Ինձ ես հիմարի տեղ դրել (ապտակում ե) :

Ճ ու տ ի կ . — Վ ա յ մ ե , դ ե դ ի ջ ա ' ն , վ ա յ մ ե , դ ե դ ի ջ ա ' ն . . .

Ք ա ղ ա ք ա պ ա հ . — Գ ն ա ն ք ք ա ղ ա ք ա մ ա ս , ք ե զ դ ե դ ի ջ ա ն ր ա յ ն տ ե ղ ց ու յ յ կ տ ա ն ք :
(Մ ե ծ ե լ ո Վ ն ր ա մ դ ու ր ս ե տ ա մ ու մ) :

Գ ի գ ո լ ի . — Ա ր ս ո ջ ջ ա ն , հ ե ն յ ա պ ր ի ս , ե ս ա ի մ ու ղ ա յ ի Թ կ ա յ , յ ե ս գ ն ու մ ի մ . տ ն ի յ ի ն ձ կ ա ն չ ի լ ի ն :
(Գ ի գ ո լ ի ն դ ու ր ս ե գ ն ու մ . ի ս կ Գ ա ր ե գ ի ն ր Ա ր շ ա կ ի հ ե տ խ ոս ե լ ո Վ ն ր ս ե գ ա լ ի ս) :

Տ Ե Ս Ի Լ 12

Ն Ո Ւ Յ Ն Ք , Գ Ա Ր Ե Գ Ի Ն և Ա Ր Շ Ա Կ

Ա ր շ ա կ . — Տ ա ր ա ն ի յ հ ե ն յ ե ս ք ու ղ ե յ ի ս ե մ դ ա լ ի ս :
Յ ա ր ա կ ա ն մ ա ն ի ֆ ե ս ու ր տ ա զ ա դ ր վ ա ծ ե և մ ի ք ա ն ի ք ու ղ ե յ ի յ հ ե տ կ հ ռ ա պ ա ր ա կ վ ի :

Գ ա ր ե գ ի ն . — Ու ր ե մ ն հ ա ր կ ա վ ո ր ե շ տ ա պ ի լ :

Ա ր շ ա կ . — Յ ե ս կ ա ր ծ ու մ ե յ ի մ ե ր տ ղ ա ն ե ր ի յ ա յ ս տ ե ղ կ յ ի ն ն ն : Ն ր ա ն յ հ ա ր կ ա վ ո ր ե ն ա խ ա պ ա տ ր ա ս տ ե լ :
Ու ր ի շ գ օ ր ծ ա ր ա ն ի ք ա ն վ ո ր ն ե ր ն ա ր ղ ե ն տ ե ղ յ ա կ ե ն :
Մ ա ն ի ֆ ե ս ու ր հ ռ ա պ ա ր ա կ վ ն յ թ ե չ ե , կ ա զ մ ա կ ե ր ա զ վ ա ծ կ ե ր ա ղ ո Վ դ ու ր ս ե ն ք դ ա լ ու փ ող ո յ :

Գ ա ր ե գ ի ն . — Ի ս կ կ ա զ մ ա կ ե ր ա ղ ու Թ յ ու ն ր , ը ն դ հ ա ն ր ա պ ե ս , մ ա ն ի ֆ ե ս ու ի մ ա ս ի ն ի ' ն չ կ ա ր ծ ի ք ու ն ի :

Ա ր շ ա կ . — Բ ա յ ց ա ս ա կ ա ն : Բ ա յ յ ա յ ն ու մ ե ն ա յ ն ի Վ , կ ա զ մ ա կ ե ր ա ղ ու Թ յ ա ն կ ող մ ի յ հ ռ ա հ ա ն ղ վ ա ծ ե ա յ ղ դ ե ա զ ք Վ ո ր ա կ ս ա գ ի տ ա յ ի ա յ ի ն յ ու Թ ո զ տ ա գ օ ր ծ ե լ :
(Խ ոս ե լ ո Վ դ ու ր ս ե ն գ ն ու մ) :

Ա ր տ ո . — Ի ' ն չ ի ե կ ա ն , ի ' ն չ ի գ ն ա յ ի ն : (Լ ր ա գ ր ա վ ա հ ա ո փ ո գ ր ա հ ա ս ա կ տ ղ ա մ ե ր ք փ ող ո ս ու մ ք ա ր ճ ր ա ճ ա յ ն հ ա յ տ ա ր ա ր ու մ ե ն) :

Ձ ա յ ն ր . — Հ ե ո ա գ ի ր . . . հ ե ո ա գ ի ր . . . հ ե ո ա ք ր ք ի ր լ ու ր . . . կ ա ո ա վ ա ր ա կ ա ն մ ա ն ի ֆ ե ս ո . . . Ս ո ս ք ի ու թ ող ո վ ի ա զ ա տ ու Թ յ ու ն . . .

(Գ ն վ ո ր գ Բ ա ղ ղ ա մ ի չ ք շ փ ո ք վ ա ծ ն ր ս ե գ ա լ ի ս) :

մուտի առջևից անցնում են: Գրիգորը Արքայապետ
հետ խոսելով գալիս է: Նրանց կուրծքը գարդարված
է լինուերով):

Տ Ե Ս Ի Լ 14

Գրիգոր. — Այլ մասին դու անհոգ կաց: Մխիթնդում
դիմախոսական դելեգացիան հայտարարեց, վոր սակ-
րավորների վաշտը և հրաձիգ գունդը մեզ հետ է:
Նշանակում է, վոր և դեպք յեթև պատահելու լի-
նի, նրանք անշուշտ մեր կողմը կանցնեն: (Շարու-
նակում են լուռ խոսակցությունը. հարբեցողների
խումբը ներս է գալիս):

1. Հարբեցող. — Եյ, խաղեյին, մեզ ողի տվեք: Ա-
զատություն է: Մենք խմել ենք ուզում: (Նստում
են սեղանի շուրջը: Արտոն ողի է տալիս նրանց):

2. Հարբեցող. — Կարժիրներ են...

1. Հարբեցող. — Խորհրդակցում են...

3. Հարբեցող. — Չխանդարե՞մ նրանց խորհրդակցու-
թյունը...

(Փեշի տակ պահած կացիներ հանում է): Խփե՞մ.

1. Հարբեցող. — Սոստիք, խփելու ժամանակը կղա,
կխփենք... իսկ սոստիք հարկավոր է խմել: Թա-
գավոր կայսրը ժողովրդին ազատություն է տվել
խմելու համար:

Գրիգոր. — Սև հարյուրյակայիններ են:

Արքայապետ. — Հարկավոր է հեռանալ... (ուզում են
գնալ):

(Լսվում են սվիստոկի ձայներ):

2. Հարբեցող. — Սկսվեց...

1. Հարբեցող. — Մենք ևս սկսենք... Սոստեցեք,
սրիկաներ...

Գրիգոր. — Ինչ էք ուզում.

2. Հարբեցող. — Ուզում ենք մեզ կարժացնել-
չուն — շան վրադիք...

(Կացիներով հարձակվում են նրանց վրա: Գրիգո-
րը ատրճանակը կրակում է: Նրանցից մեկը սպաճ-
վում է, իսկ մյուսները փախչում են):

- Գրիգոր.— Սե Հարյուրյակային— խուլիզաններ...
- Արրահամ.— Այ ինչի մասին եյի կասկածում: Ես ել
քեզ ազատություն:
- Գրիգոր.— Մանիֆեստով շնորհած ազատությունը
ուրիշ կերպ լինել չեր կարող: Գնանք, ետեղ
մնալը վտանգավոր է:
- Արրահամ.— Ճիշտ ես ասում, գնանք:
(Ուզում են դուրս գնալ, փողոցում սկսվում է հրա-
ցանաճգություն: Գրիգորն ու Արրահամը նորից
հետ են գալիս):
- Գրիգոր.— Կռիվ և սկսվել... Վոստիկանները այս
կողմն են գալիս: (Լսվում է կանանց ու յերեխանե-
րի նիշ ու աղաղակ: Ներս են գալիս 1-2-րդ հար-
քեցողները, վոստիկան և ֆաղաֆապահներ):

Տ Ե Ս Ի Լ 15

Նույնք, վոստիկան, 1-2-րդ հարքեցողներ և ֆաղա-
ֆապահներ

1. Հարքեցող.— Նրանք այստեղ են:
- Վոստիկան.— Մբա՛նք են մարդասպանները. սրի-
կաներ... Թագավոր կայսրը ձեզ ազատություն է
շնորհել, իսկ դուք ապստամբություն ու հեղա-
փոխություն եք ուզում առաջ բերել...
- Գրիգոր.— Թագավոր կայսեր շնորհած ազատությու-
նը մեզ պետք չի...
- Մեր ազատությունը ինքներս ձեռք կրերենք...
- Վոստիկան.— Լռի՛ր, սրիկա, դու դեռ համարձակ-
վում ես խոսել...
(Մուրը հանում է և ուզում է նրան խփել. Գրիգորը
ատրճանակով կրակում է և ատրճանակը ձեռքին
դուրս է վազում: Վոստիկանը անշնչացած ընկնում է
գետին. իսկ ֆաղաֆապահներն սկսում են նրա հե-
տևից կրակել):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

„ՆՇԱՆԴՐԵՔ“

Պիես 4 գործ. 5 պատկերով

1917—20 թիվ

Քրիլիսի

Սույն աշխատության յերկու հատվածները «Բանդիաներ» և
«Նախորդակին» վերնադրերով, 1922 թվից, առանձին բրոշյուրնե-
րով հրատարակել են:



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ԲԱԴԱԼ ԱՄԻ— չքավոր գյուղացի
2. ԱՌԱՔԵԼ— չքավոր գյուղացի
3. ՄՈՒԿՈՒՉ— չքավոր գյուղացի
4. ԽԵՉԱՆ— չքավոր գյուղացի
5. ՋԱՔԱՐ— Բաղալ ամուսնացած, Բաղվի բանվոր
6. ՅԵՂԻՇ— Բաղալ ամուսնացած, գյուղում աշխատող դարբին
7. ՄԻՆԱՍ— Չաքարի հորեղբոր վորդին
8. ԳՅՈՒԼԻՉԱՐ— Բաղալ ամուսնացած
9. ՄԱՐԻԱՄ բաջի— Բաղալ ամուսնացած կինը
10. ՎԱՐԹԻ բաջի— Առաքելի կինը
11. ՅԵԳՈՐ— գյուղի խանութպան
12. ՀԵՂԻՆԵ— Յեղորի կինը
13. ՄԱՆԻՇԱԿ— նրանց աղջիկը
14. ՂԱՉԱՐ— Յեղորի հետ աշխատող դարբին
15. ՍՀԱԿ— Յեղորի հետ աշխատող դարբին
16. ՀԱՍԱՆ— չքավոր թուրք գյուղացի
17. ԱՎՈ ամի— գյուղի հովիվ
18. ՀԱՆԴԱՊԱՀ
19. ԳԱԼՈՒՍՏ աղա— գյուղի ունեւոր
20. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ— նրա գործավարը
21. ԽՄԲԱՊԵՏ
22. ՔՅՈՒՎԱ
23. ՏԻՐԱՅՈՒ
24. Գ Ջ Ի Ր
25. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ, ՄԱՈՒՉԵՐԻՍՏԵՆԵՐ, ՀԱՆԴՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՅ
ՏԱՆՈՂ ԱՂՋԻԿՆԵՐ



ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Քեմք մերկայացնում ե Յեզոբի տան բակը:
Գարնամ լուսնկա գիշեր ե: Մանիշակն ու Գյուլի-
գարը ցամկապատի մոտ կանգնած խոսում են:

Տ Ե Ս Ի Լ 1

Մանիշակ և Գյուլիգար

Գյուլիգար.—Մեր Չաքարից նամակ ենք ստացել:
Մանիշակ.—Ի՞նչ ա գրում:

Գյուլիգար.—Գրում ա, վոր ես եկող ամսին Մի-
նասի հետ դալիս ենք ամառվա ամիսներն գյու-
ղում անցկացնելու:

Մանիշակ.—Չաքարը Յեղիշից փոքր յեղբայրդ ե,
իսկ Մինասն ո՞վ ե, յես նրան չեմ ճանաչում:

Գյուլիգար.— Մինասն իմ հրոխպոր տղան ա,
քաղաքում բանվորություն ե անում, բայց վա-
ղուց ա գյուղից դուրս ա եկել: Վոր դա, ան-
պատճառ քեզ կծանոթացնեմ: Աղջի՛, ետոր դու
մի տեսակ տխուր ես յերևում, ասա՛ ի՞նչ ե պա-
տահել:

Մանիշակ.— Տխուր եմ... Լսի՛ր Յեղիշն
ինչո՞ւ ես քանի որ ե չի յերեվում, ասա՛ նրան
վոր այսոր անպատճառ անցնի ինձ մոտ, մի շատ
կարևոր գործի մասին յես ուզում եմ նրա հետ
խոսել:

Գյուլիգար.—Կասեմ, իսկ դու ինչո՞ւ մեզ մոտ չես
գալիս, ի՞նչ ա պատահել: Առաջներում շուտ-շուտ

դալիս եյիբ, իսկ հիմա վոտդ մեր տնից բոլորովին
կտրել ես: Ել չես յերևում: Ճիշտն ասա՛, մեր
Յեղիշից հո խոտվ չե՞ս:

Մ ա ն ի շ ա կ .— Ոոտվել չեմ, բայց...

Գ յ ու լ ի գ ա ր .— Բայց ի՞նչ, ասա՛, ի՞նչ ա պատահել:

Մ ա ն ի շ ա կ .— Վոչինչ չի պատահել... (Յանկապատի
վրա հենված՝ լաց ե յ ինում):

Գ յ ու լ ի գ ա ր .— Վոչինչ չեմ հասկանում: Ձերոնք յե-
կան, յես դնացի: (Գյուլիգարը գնում ե, իսկ
Յեգորն ու Հեղինեն խոսելով մերս եմ գալիս):

Տ Ե Ս Ի Լ 2

Մ ա ն ի շ ա կ , Յ Ե գ ո ր և Հ Ե ղ ի ն Ե

Յ Ե գ ո ր .— Ել մի՛ յերկարացրու, մեյդանում իշի պոչ
չին կտրում: Իմացի՛ր՝ վորտեղ ի՞նչ կարելի յե
խոսել:

Հ Ե ղ ի ն Ե .— Դու գուր ես նրանից ամեն ինչ ծածկում:
Պարզ ու աչկարա ասա՛, թող նա ել իմանա:

Մ ա ն ի շ ա կ .— Մրանից հետո ձեր ասելը բոլորովին
ավելորդ ե: Յես արդեն ամեն ինչ գիտեմ:

Յ Ե գ ո ր .— Ավելի լավ: Ուրեմն դնա որինավոր հագնը-
վի՛ր, պատրաստվի՛ր, վոր հիմա վորտեղ վոր ե՛
Գալուստ աղան իր մարդկանցով կգա:

Մ ա ն ի շ ա կ .— Յեթե ինձ համար են դալիս, թող իզուր
տեղը նեղութուն չկրեն:

Յ Ե գ ո ր .— Քեզ համար նշան են բերում:

Մ ա ն ի շ ա կ .— Յես նշանվելու բոլորովին մտադրու-
թյուն չունեմ:

Յ Ե գ ո ր .— Դրանք ավելորդ խոսքեր են: Ա՛յ կնիկ, դու
ինչի՞ համար ես կանգնել: Գնա պատրաստութուն
տես, են մարդիկ հիմա կգան: Հարկավոր ե նրանց
պատվով ընդունել:

Հ Ե ղ ի ն Ե .— Դու ըսկի մտածո՞ւմ ես, թե ի՞նչ ես ասում:

Յ Ե գ ո ր .— Դե ել նորից մի՛ սկսի գլխիս դայլի ավե-
տարան կարդալ: Ամեն ինչ մտածված և վերջա-

ցած ե: Գնացի՛ք, մարդավարի Հաղնվի՛ք, նրանց
մտտ ամոթով շմնանք:

Հ Ե Պ Ի Յ Ե.—Ա՛յ մարդ, ախր սա բան ա՞, վոր դու յես
անու՛մ:

Յ Ե Գ Ո Ր.—Կարճ: Ի՞նչ յս ուզում ասել:

Հ Ե Պ Ի Յ Ե.—Յես ուզում եմ ասել, վոր յեթե աղջկադ
ուզում ես մարդու տալ, մի բերան նրան Հարցրո՛ւ,
նրա կամքն իմացի՛ և տես՝ ինքք ո՞ւմն ա ուզում
գնալ:

Յ Ե Գ Ո Ր.—Առանց Հարցնելու ել յես արդեն իմանում
եմ, թե նա ո՛ւմն ե ուզում գնալ:

Հ Ե Պ Ի Յ Ե.—Ուրեմն նշանակում ե, վոր ումը ինքն
ուզում ե, նրան ել պետք ե տալ: Իմ կարծիքով
Բաղալինց Յեղիշը ավելի Հարմար չիեսացու յե,
քան Գալուստ աղան:

Յ Ե Գ Ո Ր.—Ա՛յ կնիկ, դու գժվե՞լ ես, ինչ ե: Աշխարհիս
յերեսին՝ մարդը կտրվե՞լ ե, վոր գնանք են զոտտ
դարբնի Հեռ բարեկամություն անենք: Նրա կեղ-
տոտ շորերի՞ն եմ կարոտել, թե նրա սև ու մրոտ
ձեռքերի՞ն: (Մամիշակը յերեսը դարձնում ե ու լաց
ե լիմում):

Հ Ե Պ Ի Յ Ե.—Ա՛յ մարդ, ինչի՞ յես Հակառակվում: Կեղ-
տոտ շորերը, սև ու մրոտ ձեռքերը մարդու սրտի
Հեռ ի՞նչ կապ ունեն: Յեթե նրանք իրար սիրել,
իրար Հավանել են, ել սրանից Հեռո Հակառակվելն
ի՞նչ միտք ունի:

Յ Ե Գ Ո Ր.—Հետո՞:

Հ Ե Պ Ի Յ Ե.—Հետո ե՛ն, վոր մենք ուրիշ յերեխա չու-
նենք, Մամիշակը մեր մինու՛ճարն ա, նշանակում
ե, վոր մենք ուզենք-չուզենք՝ նրա կամքովը պիտի
գնանք, մանավանդ վոր Յեղիշը յերիտասարդ,
խելքով նամուսով, արուսով տղա յե...

Յ Ե Գ Ո Ր.—Բավական ե: Վե՛րջ տուր: Սելքդ Հավաքի՛ր
գլուխդ և մտածի՛ր, թե ի՛նչ ես խոսում: Գալուստ
աղի նման պատվավոր մարդուն թողած, գնամ
Բաղալինց Յեղիշի Հեռ բարեկամություն անե՞մ:

Տեսնող—լսողն ինձ ի՞նչ կասի: Ախր ո՞վ և Բաղաս-
լանց Յեղիշը, մի մարդ, վոր ծնված սրից աչք և
բաց արել, չաքուջ— դնդանից ավելի ուրիշ բան չի
տեսել... Մի մարդ, վոր տարին տասներկու ամիս
աղքատությունից ու չքավորությունից դուրս՝ լայ
ոչ ու կյանք չի ապրել. եղ տեսակ մարդուն յես
աղջիկ տամ, վոր նա առաջնորդանից մինչև իրի-
կուն աչքը ճամբին մնա, թե իր մարդը դարբնացում
ամբողջ որը փութսի ու կրակի առաջ արյուն—քրք-
տինք օյիտի թափի ու հազար ու յի նեղություն-
ներով ու շարշարանքներով մի քանի կռակի փող
աշխատի ու բերի, դրանով տուն պահի, կնիկ
պահի յերեխա մեծացնի՞... չե՛, չե՛, եղ տեսակ
հիմարություն յես չեմ անի:

Հեղիցն.— Հիմարություն չի:

Յեգոր.— Բավական է, ել մի՛ շարունակի, եղ խնդրի
չուրջը յես այլևս վոչինչ չեմ ուզում լսել: Վճռո-
ված, փերջացած է: (Մանիշակը քարճաճայն
լաց և լիցում): Հազար տարի էլ, վոր լաց լինես,
միևնույն է, լաց ու կոծով իմ վորոշումը դու չես
փոխելու: Զավակները ծնողաց կամքին հակառա-
կելու իրավունք չունեն: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ 3

Հեղիցն և Մանիշակ

Հեղիցն.— Անիծվի խասյաթը... դու կարծում ես,
թե դրանով յերեխիս բախտավորացնո՞ւմ ես...

Մանիշակ.— Ա մե՛ր, դուք ես ի՞նչ կրակի մեջ եք ինձ
դցում... Գնդակով խփելիք և միանգամից ինձ
սպանելիք՝ ավելի լավ չե՞ր... Գալուստ աղան
հասակավոր մարդ է, նրա մի վտան արդեն դե-
րեզմանումն է, դուք ի՞նչ եք մտածում, վոր ինձ
տալիս եք նրան... նրա հետ յես ի՞նչպես կարող
եմ ապրել... նրան յես ի՞նչ սրտով կարող եմ

սիրելի... նրա ձեռքին իմ սիրտը կսևանա, իմ որ
ու կյանքը կխալարի... (Լաց ե լիմում):

Հ ե ղ ի ն ե.—Սև ըլեր են որը, վոր նա հանդիպից, յես
ի՞նչ անեմ, ի՞նչ հողը տամ գլխիս...

Մ ա ն ի շ ա կ.—Ինչ ուղում եք՝ արեք, նրան չեմ գնա...
Թող կզցեմ վիզս, կխեղդվեմ, նրա տունը յես վոս
չեմ գնի... կբարձրանամ քարափներինց, կընկնեմ
տակը, ինձ կսպանեմ, Գալուստ աղի նման կյանքն
անցած հասակավոր մարդու հետ յես մի որ չեմ
ասլրի... (Լաց ե լիմում):

Հ ե ղ ի ն ե.—Ինձ վոր ասում ես, յես ի՞նչ անեմ... յես
ի՞նչ հողը տամ գլխիս...

Մ ա ն ի շ ա կ.—Յեթե դուք ինձնից ձանձրացել և մի
կտոր ցամաք հացն անգամ խնայում եք ինձ տայ,
յես իմ կամքով ես տնից կհեռանամ... Կգնամ,
կընկնեմ փողոցները և հավիտյան կկորչեմ...
(Լաց ե լիմում):

Հ ե ղ ի ն ե.—Իմ խեղճ յերեխա... դու քու հորդ չե՞ս
ճանաչում: Տասը տարի ել վոր նստես լաց ըլես,
աղի արցունքներ թափես, միևնույն ե, նրա քարա-
ցած սրտում գուժ չես շարժի: Հանգստացի՛ր,
քանի նրանք դեռ չեն յեկել, գնամ հորդ հետ նորից
խոսեմ, գուցե կարողանամ նրան մի կերպ համո-
զեմ... (Գնում ե ներս, իսկ Յեղիշը փողոցի կող-
մից գալիս ե):

Տ Ե Ս Ի Լ 4

Մանիշակը և Յեղիշ

Յ ե ղ ի շ.— Մանիշակ, այս ի՞նչ եմ լսում... ուրեմն
դու քու համաձայնությունը տվել ես... վո՛չ, դու
այդ չեյիր անի, յենթադրությունս սխալ ե... դու
լաց ես լինում, այդ նշանակում ե, վոր ծնողներդ
քու կամքի հակառակ գործ են բռնում... Հիմա
արդեն յես ամեն ինչ հասկանում եմ... այդ մա-
սին դու կարող ես այլևս վոչինչ չասես...

Մ ա ն ի շ ա կ.—Ամբողջ որը յես լաց իմ յեղել... յես
շարունակ քու մասին եյի մտածում, յես ուզում
եյի քեզ տեսնել, քեզ հետ առանձին խոսել... լալ
ե, վոր յեկար, բայց այստեղ յես դժվարանում
եմ... Հայրս տանն ե. նա առանց այն ել քեզ վրա
բարկացած ե: Հանկարծ դա, մեզ միմյանց հետ
խոսելիս տեսնի, ավելի կբարկանա:

Յ ե ղ ի շ.—Բարկանում ե՝ թող բարկանա, միևնույն
ե, նա քեզ վռչինչ չի կարող անել: Յես քեզ ամեն
կերպ կպաշտպանեմ:

Մ ա ն ի շ ա կ.—Ոնդիրն ինձ պաշտպանելը չի... աստ-
ված իմ. նա դալիս ե, գնա, հեռացի՛ր...

Յ ե ղ ի շ.—Կգնամ, կհեռանամ, բայց քեզ հետ ուզում
եյի խոսել:

Մ ա ն ի շ ա կ.— Այսօր դու ինձ հետ վռչինչ մի՛ խո-
սիր... Յեղի՛շ ջան, խնդրում, աղաչում եմ, գնա՛,
հեռացի՛ր, քանի հայրս չի յեկել... (Յեզորը և
Հեղինեն խոսելով գալիս են):

Տ Ե Ս Ի Լ 5

Նույնք, Յեզոր և Հեղինե

Յ ե զ ո Ր.—Այս ի՞նչ ե նշանակում... դու ինչո՞ւ հա-
մար ես յեկել. քեզ ո՞վ հրավիրեց. դու ի՞նչ գործ
ունես այստեղ:

Յ ե ղ ի շ.— Կարևոր գործով եմ յեկել. գործս վերջաց-
նելուց հետո անմիջապես կհեռանամ, անհո՞գ կաց:

Յ ե զ ո Ր.— Հենց այս բուպեյիս հեռացի՛ր. քո այստեղ
մնալը միանգամայն ավելորդ ե: Փուչ կենդանի՛,
յես քո միտքը հասկանում եմ: «Կարևոր գործը»
իզուր տեղը պատճառ մի՛ բռնի ու դա այստեղ
սիրաբանութ՛յամբ զբաղվի:

Յ ե ղ ի շ.— Յես սիրաբանութ՛յամբ զբաղվելու համար
չեմ յեկել: Միայն ձեզ ուզում եմ հայտնել, վոր
յես ու Մանիշակը վաղուց միմյանց խոսք ենք
տվել և անկեղծ սրտով միմյանց սիրում ենք...

Յ Ե Գ Ռ Բ.—Ձայնդ կորի՛ր, մյուս անգամ դու չհամարձակվե՛ս իմ ներկայութեամբ եղ տեսակ խոսքեր ասելու: Լակո՛ւտ...

Յ Ե Ղ Ի Չ.— Ինչի՞ համար եք գուր տեղն ինձ վիրավորում:

Յ Ե Գ Ռ Բ.—Շատ մի՛ խոսա, հեռացի՛ր, դո՛ւքս կորի՛ր իմ անից, չհամարձակվես մյուս անգամ իմ տունը վրոք դնել:

Յ Ե Ղ Ի Չ.—Յես վատ նպատակով չեմ յեկել քո տունը:

Յ Ե Գ Ռ Բ.—Ինձ բոլորովին չի հետաքրքրում քո այստեղ գալու նպատակը: (Գալուստ ազամ յերկսեռ հյուրերի հետ, սագանդարի նվագակցութեամբ յերգելով ու պարելով՝ փողոցի կողմից գալիս են: Գալուստ ազի ձեռքին՝ մի մեծ ծաղկեփուռ, իսկ ծառաների ձեռքին՝ սկուտեղի մեջ գանազան նվերներ):

Տ Ե Ս Ի Լ 6

Նույնք, Գալուստ ազա, հյուրեր, ծառաներ և սագանդար:

Հ յ ու ր ե ր .— Բարի հաջողում, Ջիլավխաննեց Յե՛գոր:

Գ Ե Վ Ռ Բ Գ .— Բարի գալուստ մեր թանկագին հյուրերին, համեցե՛ք, համեցե՛ք...

Գ ա լ ու ս տ .—Յես կարծում եմ, վոր ձեր հարգելի և պատվելի ընտանիքը անհամբեր սրտով մեզ սպասելիս կլինեն... Գալուստ ազան ճշտապահ և որինակելի մարդ է: Կարծեմ ճիշտ նշանակված ժամանակին եմ յեկել... չեմ ուշացել...

Յ Ե Գ Ռ Բ .—Իսկական ժամանակին եք յեկել, Գալուստ ազա: Ուշանալու մասին վրչ մի խոսք:

Գ ա լ ու ս տ .—(Ծառաներին) Դուք ինչի՞ համար եք կանգնել, եղ նվերները հանձնեք ըստ պատկանելութուն...

(Ծառաները խոնջաներով բերած նվերները տանում

եմ Հեղինեյի և Մանիշակի մոտ: Մանիշակը յե-
րեսը դարձնում է և քաշվում մի կողմ, իսկ Յե-
ղիշը Գալուստ աղին ատելուք-յամբ նայում է:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՊԱՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Բաղայի տան բակը, ցանկա-
պատով շրջապատված: Ցանկապատի մի կողմը
փողոց է, մյուս կողմը՝ Յեղիշի փոքրիկ դարբնոցը,
իր բոլոր պարագաներով—փուխ, գնդան և այլն:
Գարնան յերեկոյն: Սեակն ու Ղազարը կաշվի գոգ-
նոցները առաջները կապած, քեկները հշտած,
դարբնոցում աշխատում են:

Տ Ե Ս Ի Լ 1

Սեակ, Ղազար և Յեղիշ:

Սեակ և Ղազար.—(Մեղմ ձայնով յերգում են):

I

Անվախ ընկեր դիմենք շար—շար
Կովում հողով ամրանանք
Ազատության վեհ ճանապարհ
Հարթենք կրծքով մեզ համար:

II

Ժամն է հասել մեր մեծ դատի
Դեպի պայքար դեպի մարտ
Չենք վախեցել ու չենք վախի
Մուժ ու թերից բիրտ տմարդ:

III

Հուժկու բազկով դեն շարտենք
Անարդ լուծը բռնության
Յեվ մայր հողի կրծքին մեխինք
Ալ դրոշն ազատության:
(Յեղիշը դռան շեմֆին նստած լուռ մտածում է):

Ղ ա գ ա ր .—Յեղիշ, քեզ ի՞նչ ա պատահել: Ինչի՞ չես խոսում:

Ս հ ա կ .—Քու թՀար-թյուրուրից յերևում ա, վոր քեզ մի բան ա պատահել: Ասա՛ տեսնենք, բանն ինչո՞ւմն ա:

Ղ ա գ ա ր .—Արա, տնաքա՛նդ, ջվալի բերան չեն պատ-
ռում, մեր տված Հարցին պատասխանի՛ր, ի՞նչ ես նորահարսի նման գլուխդ կախել և լուռ նստել:

Յ ե դ ի շ .—Ջիւղխանենց Յեզորի լաղջկան ես գիշեր պսակո՞ւմ են:

Ղ ա գ ա ր .—Եղպես ասա, հիմա հասկացա, թե բանն ինչումն ա: Լսի՛ր, հաստատ իմացե՞՛լ ես:

Յ ե դ ի շ .—Իմացած չլինեյի, չեյի ասի...

Ս հ ա կ .—Չե, խնդիրը լուրջ ա: (Յերկարատև լռու-
թյուն):

Յ ե դ ի շ .— Յերեգի նշանեցին, իսկ եսոր ուղում են պսակեն...

Ղ ա գ ա ր .—Յես զարմանում եմ, Գալուստ աղան իմ հորս թայն ա, եդ տնաքանդը ի՞նչ ա մտածում. վոր են ջահել աղջկան ուղում ա: Կամ թե չե՛ Ջիւղխանենց Յեզորը հացի տեղ խոտ ա ուտո՞ւմ, թե իլիսին ձի ա քացի տվել, վոր իր ազապ աղջկան վորբեվերի մարդու ա տալիս:

Յ ե դ ի շ .—Դու փող ասա, վորբեվարին ու ազապը ո՞վ ե հարցնում: Գալուստ աղի կարողութունը շատերի աչքն ե կուրացնում:

Ղ ա գ ա ր .—Յես Գալուստ աղա-մաղա չեմ ճանաչում: Հրես գնում եմ, գլխումը տամ, հարսնացուն ձեռքիցը խլեմ:

(Կաշվի գոգնոցը հանում ե ու դեմ շարտում):

Յ ե դ ի շ .—Գալուստ աղան հարստության տեր մարդ ե, նրա գլխին տալը ենքան ել հեշտ գործ չե:

Ս հ ա կ .—Կա՛ց, Ղազա՛ր, յես ել եմ դալիս: (Գոգնոցը հանում ե):

Յ ե դ ի շ .—Նստե՛ք տեղներդ, քառասուն ձեզպեսներն ել, վոր գնան, նրան վոչինչ անել չեն կարող:

Գալուստ աղան գլուղի իշխանն է, նրա տերն ու տիրականը, նա ինչ վոր հրամայի, ինչ կամենա, որենք է, պետք է կատարվի:

Ղ ա գ ա ր . — Եղպես որենք մեր դավթարում չի դրված:

Յ ե դ ի շ . — Գրված է թե չե, նա այդ չի հարցնում, նա հազար ինձպես ու քեզպեսին հրամայելով իր կամքը կատարել կտա:

Ղ ա գ ա ր . — Ի՞նչ ես ասում, խելքի արի, ես են ժամանակները չի, վոր Գալուստ աղան իր մատը վոր կողմը բարձրացնի, մենք կանգնենք, եշի նման դռանք... եղ ժամանակները թռա՛վ, գնաց: Լսի՛ր, դու ես գործի մեջ բոլորովին մի՛ խառնրվի, ինչ վոր արվելու յե, Սհակի հետ մենք յերկուսով կանենք, դու գործ չունես:

Յ ե դ ի շ . — Ի՞նչ եք ուզում անել:

Ղ ա գ ա ր . — Վոչինչ: Գալուստ աղի հարսանիքում մենք ետոր հրավիրված ենք: Գնում ենք շնորհավորենք:

Յ ե դ ի շ . — Նա ձեզ թույլ չի տա, վոր դուք ներս մըտնեք: Ծառայողներին կհրամայի, շինքներիդ տալով ձեզ դուրս կանեն:

Ղ ա գ ա ր . — Թող մի փորձեն, դու ես ժամանակ թամաշա արա, թե նրանց գլխին ի՞նչ հարսանիք եմ կանգնացնում... Տունը տակն ու վրա կանեմ, քարը քարի վրա չեմ թողնի: Տնաքանդի սիրտը կնիկ ա ուզում, թող դնա իր հասակին մեկը ճարի ու նրա վրա պսակվի: Շան տղի քոփակը ի՞նչ ա յեկել ուրիշի սիրածի վրա աչք դրել:

Յ ե դ ի շ . — Դատարկ խոսակցությունն է: Մանիշակը ձեռքիցս դուրս ե գնում... (Խորատուզվում է մտփերի մեջ: Յերկար լռություն):

Ղ ա գ ա ր . — Տնաչե՛ն, իգիթ տղա յես, եղպես չուտ հուսահատվելը քեզ վայել չի. դեռ ժամանակ կա, մի բան կանենք:

Յ ե դ ի շ . — Վոչինչ չենք կարող անել, ուշ է:

Ս հ ա կ . — Ուշ չի, սիրտդ մի՛ կտորի:

Ղ ա գ ա ր . — Սպասե՛ք . լավ բան միտքս ընկալ :

Յ ե դ ի շ . — Ի՞նչ :

Ս հ ա կ . — Ասում ես՝ դնանք Ջիլավխանենց Յեզորին
Համոզե՞նք :

Ղ ա գ ա ր . — Ձե՛ :

Ս հ ա կ . — Ասում ես՝ դնանք Գալուստ աղին խփենք
սպանե՞նք :

Ղ ա գ ա ր . — Վոչ խփել, վոչ սպանել, վոչ դես, վոչ
դեն . յես ենպես մի բան պետք ե անեմ, վոր Գա-
լուստ աղան Ջիլավխանենց Յեզորի աղջկա անու-
նը լսելուց մի վերստ հեռու փախչի :

Յ ե դ ի շ . — Ձեմ Հասկանում :

Ղ ա գ ա ր . — Քու Հասկանալու կարիք չկա : Յես իմ ծը-
բադիրն արդեն կազմեցի : ՄՀա՛կ, ընկի՛ առաջ :

Ս հ ա կ . — Գնանք : (Ղագարի հետ դուրս ե գնում) :

Յ ե դ ի շ . — Ձեմ Հասկանում . . .

(Արհեստանոցի դուռը կոզպում ե և տխուր
սրտով գնում տուն : Բաղալը և Մարիամը
խոսելով՝ փողոցի կողմից գալիս են) :

Տ Ե Ս Ի Լ 2

Մարիամ և Բաղալ

Բ ա դ ա լ . — Մինչև աղջկա մտքումը չըլներ, Հարսա-
նիքն եղպես շուտ գլուխ չեր դա :

Մ ա ր ի ա մ . — Նրա միտը քրքրվի, նրա արոււը կառը-
վի, մտքումը վոր ըտենց բան ա ունեցել, ել ո՞ւր
եր խեղճ՝ երեխիս խարում :

Բ ա դ ա լ . — Քու երեխիդ ինչ վոր անեն, Հախն ա : Յես
նրան Հաղար անգամ ասել եմ՝ եդ աղջկանից դու
ձեռ քաշի, ինձ չլսեց : Դե Հիմի թող խելքը Հավա-
քի գլուխը : Ասած ա՛ մեծի՛ խոսք չլսողը, վոտքը
քարով կտա :

Մ ա ր ի ա մ . — Դրա մասին խոսալը Հմի ավելորդ ա :
Գնա Ջիլավխանենց Յեզորին բալբի մի կերպ Հա-
մոզեա :

Բ ա դ ա լ .—Յես քեզ բան եմ ասում, դու կանգնում՝
ելի քու եչն ես քշում: Ջիւղայիսանենց Յեզորը,
Գալուստ աղին թողած, քեզ աղջիկ կտա՞: Նրա
լիքը տունը, նրա հարուստ ոջախը թողած, մեզ
հետ բարեկամութիւն կանի՞: Քեզ եմ հարցնում:
Եդ ըլելու բան ա՞:

Մ ա ր ի ա մ .— Ըտենց ա, ա՛յ մարդ, դու ճիշտ ես
ասում:

Բ ա դ ա լ .—Մարդ իր յորդանի գորա վոտ կմեկնի:
Ջիւղայիսանենց Յեզորը մեզ հավասար մարդ չի:
Նրա հետ բարեկամութիւն անել մենք չենք կա-
րող: Ջիւղայիսանենց Յեզորի աղջիկը մեզ համար
հարսնութիւն չի անի: Յես ընենց խոնարհ, հա-
մեստ հարս բերեմ, վոր ամեն առաջնու ձեռքիս
ջուր ածի, ճղված շորերս կարի-կարկատի, կով
կթի, մածուն մերի, բուրդ գզի, թել մանի,
դուլպա դործի:

Մ ա ր ի ա մ .— Ըտենց ա, ա՛յ մարդ, դու ճիշտ ես ասում:
Դե, յես մտածում եմ, ընենց անենք, վոր քիչ ել
երեխիս սրտովն ըլի:

(Գյուլիգարը տնից դուրս ե գալիս բակը):

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնք և Գյուլիգար

Գ յ ու լ ի գ ա ր .— Ա՛ մեր, ի՞նչ ելար, ո՞ւր մնացիր:
Մինչև հիմա մոքերանց տուն տասն անգամ կգնա-
յի ու կգայի, իսկ դու վոր գնում ես, ել գալ չկա:
Ճամբին քառասուն տեղ կկանգնես ու սրա-նրա հետ
ժամերով մասլահաթ կանես: Ել չես ասում՝ դնամ
տեսնեմ տունը ի՞նչ ա պատահել:

Մ ա ր ի ա մ .— Աղջի՛, դու ի՞նչ ես շփոթվել, առանց ին
ել տեսնում ես, վոր սիրտս շուռ ա յեկել, դու
մի կոնից ես շուռ բերում: Դի ասա՛ տեսնեմ՝
ի՞նչ ա պատահել:

Գ յ ու լ ի գ ա ր .— Կովը նախրից տուն չի յեկել:

Մարիամ.—Վա՛յ, հողը գլխիս: Աղջի՛, բա ել ո՛ւր
ես կայնել: Գնա հարեանից հարցրո՛ւ, նրանց կո-
վի հետ մտած կլինի իրենց գոմը:

Բարալ.—Գնանք տեսնենք, յեթե ենտեղ չելուվ, ես
ժամանակ յես ձեզ հետ կխոսեմ:
(Յերեքով միասին դուրս են գնում: Իսկ Ղազարն
ու Սհակը ծպտված մերս են գալիս):

Տ Ե Ս Ի Լ 4

Սհակ, Ղազար, հետո գգիր

Սհակ.—Յես վախենում եմ մեզ տեսնող ըլեր:

Ղազար.—Ֆորմներս փոխել ենք, տեսնողը չի ճանա-
չի: Գնանք Յեղիշին գործի ելությունը պատմենք,
մի գուցե նա համաձայն չլինի, հետո անհամ բան
կստացվի:

Սհակ.—Վոչ մի անհամ բան, զուր տեղը ժամանակ
չկորցնենք: Մենք նրա կամքի հակառակ գործ չենք
բռնում:

(Գգիրը հարբած, փոզոցի կողմից յերգելով, գա-
լիս է):

Ղազար.—Մ.ս... (Դեմքները բաշլուղով ծածկած հե-
ռաճում են):

Գգիր —(Յերգում է) «Դիլիջան Ֆայտոն զանխտ կա-
նեմ»

«Յար յարո, ջան, քեզի մեր տուն տանեմ.

«Յանա-յանա, ես ել բախտի բան ա...

«Ալ բլուզդ յես եմ, շալ բլուզդ յես եմ,

«Մարոյի կարած բլուզը յես եմ»...

Գալուստ աղի հարսանիքն ա: Գեղի աղսախկալ-
ներն ու քեղխուղաները զնացել են: Նրանց հրա-
վիրել են, իսկ ինձ չե: Վնաս չունի: Առանց հրա-
վիրելու ել յես պարտավոր եմ զնալ: Վորտեղ
քյոխվան, ենտեղ ել գգիրը, սա ընդունված ո-
րենք ա:

(Նույն յերգը յերգելով դուրս է գնում, իսկ Բա-
ղալը, Մարիամը և Գյուլիգարը մերս են գալիս):

Բաղալ, Մարիամ, Գյուլիգար

Բ ա ղ ա լ .— Կոտորվի ձեզ պես բաշարմազ խալիբը: Մի կով պահելու ել վոր շնորհք չունեք, ել ո՞ւր եք աշխարհիս յերեսին ապրում: Քոռանաք դուք: Հրեա քանի սհաթ ա նախիրը յեկել ա, հլա դուք նոր եք իմանում, վոր կովը չկա: Վախտին ինչի՞ իմաց չեք անում, թողել եք կես գշեր ա դառել ու նոր եք ասում: Ես մթնովը յես հմի ո՞ւր գնամ. այ քոռանաք դուք... քոռանաք... (Բաղալը դուրս ե գնում):

Մ ա Ր Ի Ա մ .— Հերդ սուտ չի ասում: Մարդ իր գործին արթուն պտի ըլի: Խեղճ հալիվորը ջարդված-բեզարած՝ հանգից նոր եր յեկել, ելի նորից գնաց ընկավ չուրերը: Յերանի վոտքս կոտորվեր, ես որ յես տնից դուրս չգայի:
(Խորֆում աղմուկ-իրարանցում):

Ձ ա յ ն ե ր .— Տարա՞ն, տարա՞ն, տարա՞ն...

Մ ա Ր Ի Ա մ .— Վա՞յ, հողը գլխիս, մեր կովը տարել են...

Գ յ ու լ ի գ ա Ր .— Կաց, ա՛ մեր, սա կովի ղալմաղալ չի. մեր կովի պատճառով գյուղում ես տեսակ աղմուկ չեյին բարձրացնի, հրեն յեկեղեցու զանգերը տալիս են: Եստեղ լուրջ բան կա... գնանք իմանանք...

Մ ա Ր Ի Ա մ .— Հարկավոր չի... գնանք տուն...
(Մարիամը և Գյուլիգարը մերս են գնում, իսկ Բաղալը, գգիրը և մի խումբ գյուղացիներ, փայտերով ու գեմֆերով զինված, փողոցի կողմից գալիս են: Գյուղացիներից մի ֆանիսը լապտերներով են):

Քյոնիսվա, գգիր և մի խումբ գյուղացիներ

Քյոնիսվա.—Նրանք շատ հեռուները դնացած չեն լինի: Քիչ վոր արագ շարժվեք, նրանց կհասնեք: Դե, ել մի՛ք կանդնի, ամենքդ մի կողմի վրա դնացե՛ք: Բոլոր կասկածավոր տեղերը կնայեք: Աչքից վոչ մի ծակ ու ծուկ բաց չթողնե՛ք: Գնացեք, ել մի՛ք ուշանա:

(Գյուղացիները դուրս են գնում, իսկ տիրացուն 1-ին գյուղացու հետ խոսելով գալիս):

Տ Ե Ս Ի Լ 7

Նույնք, տիրացու և 1-ին գյուղացի

Տիրացու.—Վաղուց ա, վոր մեր դեղումը եսպես բան չեր պատահել: Հին, մոռացված սովորությունն ելի նորից սկսում ե: Հարկավոր ե սրա առաջն առնել, ես տեսակ խայտառակություններին վերջ տալ:

Քյոնիսվա.—Տիրացու, յես զարմանում եմ, վոր դու եղպես միամիտ ես ձեվանում, դու պիտես, վոր դեղումը աղջիկ փախցնելը աթաղան ու բարաղան մնացած սովորություն ա: Եդ սովորությունը վոչ վերջացել ա և վոչ ել նոր ա սկսվում: Դրա վերջ տալը, յես կարծում եմ, վոր իմ իրավունքների սահմանից դուրս բան ա: Ինձ թվում ա, վոր եդ խայտառակությունը, վոնց վոր դու յես ասում, յեկեղեցական սուրբ որենքներից ա բղխում: Դրա առաջը դո՛ւք պիտի առնեք:

Տիրացու.—Այսինքն: (Քթախոտ ե քաշում):

Քյոնիսվա.—Այսինքն, վոր յեկեղեցական որենքներով պսակվողների առաջ ենպես դժվարություններ եք ստեղծում, վոր կնդա տեր դառնալու համար մար-

դիկ ստիպւած Կն լինում զնալ զոռով աղջիկ
փախցնել:

1-ին գլուղ.— Յես իմ աստոծը, քոխլան դրուստ
ասում: Աղջիկ ու տղա յեթե իրար սիրում են, Հա-
վանում են, Հարկաւոր ու տալ: Յեթե Հովին,
պարզ ա, վոր զոռով փախցնելու յեն:

Տիրացու.— Այդ Հաշվով Ջիւալխաննց Յեզորի
աղջկա փախցնողը ո՞վ պիտի լինի:

Քյոնիսվա.— Ով վոր ե, նրանց տուն ու տեղին ծա-
նոթ մարդ ա: (Ձիքուխը ծխում է):

1-ին գլուղ.— Ասում են, վոր քիչ առաջ նրանց բաղ-
չի դռանը յերկու բաշլղաւոր, խանչալները կա-
պած, մարդիկ են յերևացել:

Քյոնիսվա.— Սուտ բան ա, վորչոք չի Համարձակվի
գա մեր գեղից աղջիկ փախցնի: Յեկողները մեր
գեղի տղաներն են: Նրանք զաստի Հազուստները
փոխել են, վոր տեսնողը նրանց չճանաչի:

1-ին գլուղ.— Իմ կարծիքը Բաղալանց Յեղիչի վրա
յե զնում: Չունքի են առաջներում, կարծեմ, նա
առաջարկություն ա արել, իսկ նրանք մերժել են:

Քյոնիսվա.— Դե վոր ըտենց ա, Հախն ա, թող Հիմի
ճուտը կորցրած թխցկանի նման ընկնեն քամակի-
ցը, յանա-յանա ման գան:

1-ին գլուղ.— Յեղիչը քու՞ աղգականն ա, նրա Հա-
մար ես դու ըտենց խոսում:

Տիրացու.— Աղգական չե՞ ով ուզում ա լինի, Հա-
սած աղջկան տանը պահելը դժար ա: Աղջիկ թայ-
Փան նավթի ու կրակի որինակի բան ա, նրանց
երկուսին վոր իրար մոտեցրիր, պատարն անխու-
սափելի յա:

1-ին գլուղ.— Տիրացուն դրուստ ա ասում:

Տիրացու.— Ջիւալխաննց Յեզորի աղջիկը ետը
Բաղալանց Յեղիչին ա տեսնում, նրան ա սիրում.
վաղը նա մի ուրիշին կտեսնի, նրան կսիրի:

Ք յ յ յ վ ա .— Ի՞նչ ես առաջարկում :

Տ ի ր ա ց ու .— Գեղի որենքն ա, վոր հասած աղջկան տնից դուրս չպտի թողնել: Մինչև մարդու տալը նա ուրիշ աղամարդու յերես չպտի տեսնի: Հարկավոր ա նրանց դցել տուն, դռները վրան կողպել ու ամանաթի պես պահել:

Ք յ յ յ վ ա .— Հետո՞ :

Տ ի ր ա ց ու .— Հետո, ուզող ազան դուրս եկավ թե չե, կոնիցը բռնեք, իրեն տվեք, թող տանի: (Դուրս ե գնում):

1-ի ն գ յ ու ղ .— Ըտենց վոր ըններ, ես որվա փորձանքը սկի չեր պատահի: Չե՛, մեր տիրացուն խելքը գըլխին մարդ ա:

Ք յ յ յ վ ա .— Խելքը գլխին մարդն եսքան տարի առանց կնդա չեր մնա: Խելքը գլխին մարդը Գալուստ աղան ա, վոր յերկու որ առանց կնդա չդիմացավ: Տնաքանդը յերկու կնդա գլուխ կերել ա, վրա յերեքն ել ուզում ա ուտի: Շան տղի քոփակը վորտեղ մի սիրուն կնիկարմատ ա տեսնում, գնում նրա յախիցն ա բռնում:

1-ի ն գ յ ու ղ .— Խոստովանք ըլի, եղ մարդն իր բերանի լաղաթն իմանում ա, փտփուկ թիքա յեր ճարել, բայց չթողին, թե վայելի, ձեռքիցը խլեցին տարան:

Ք յ յ յ վ ա .— Աչքն ել հանեցին, մեծ մարդ ա, չի մանչո՞ւմ՝ ազապ աղջկա հետևիցն ա ընկել: Նրանից մեծ թոռներ ունի:

1-ի ն գ յ ու ղ .— Դու են ասա, պառաված ձին գարի չի ուտո՞ւմ:

Ք յ յ յ վ ա .— Ուտում ա, բայց չի մարսում:

(Յերկուսով ծիծաղում են, իսկ Հեղինեն լաց լինելով գալիս ե):

Նույնի և Հեղինե, հետո գլուղացիներ

Հեղինե.—Քյոխվա՛ ջան, վերև աստված, ներքևը դու, մի ճար արա՛, երեսխա խլեցին, տարան...

Քյոխվա.—Տանելուց հետո ել յես ի՞նչ կարող եմ անել: Հիմա ո՞վ ա իմանում՝ նրան ո՞ւր տարան, վո՞ր ձորերում թաղցրին, վո՞ր քարափներում պահեցին: Նրանց փնտրելու համար մարդիկ դնացել են, թող գան տեսնենք՝ ի՞նչ խաբար են բերում: Հրես դալիս են: (Մի քանի գլուղացիներ անրս եմ գալիս): Հը՛, ի՞նչ արիք,—դտա՞ք:

1-իմ գլուղացի.— Քյոխվա՛ ջան, ելտեղ չթողինք, ամեն տեղ դնացինք, ման յեկանք, բայց չգտանք, նրանց իզն ու թողը չկա:

Հեղինե.—Հողը՛ գլխիս, յերեսիս կորավ...

Քյոխվա.—Փնտրելը կարծեմ վոր սրանից ավել չի լինի: Գզիրն ել մի դար տեսնենք: Փողոցում կանգնել և լաց լինելը ավելորդ ա, գնա տուն: Մինչև առավոտ նրանց տեղը յերևի կիմանանք: Վոնց վոր ըլի, խաբարը մի տեղից դուրս կդա:

1-իմ գլուղացի.—Ճիշտ ա՛ ասում, փողոցում քու մնալն ավելորդ ա, գնա՛ տուն:

Հեղինե.—Երեսխա կորցնելուց հետո գնամ տուն, ի՞նչ անեմ: (Լաց ե լինում):

Քյոխվա.—Դե լավ, մի աղջկա պատճառով դուրսն երդ հո չպիտի մահու տաք: Ուր վոր ել լինի, մի որ կդա: Զուր տեղն ի՞նչ էք վոտ ու ձեռ ընկել: Եդ տանող շան տղեն բալքի հենց Գալուստ աղիցն ել լավ մարդ ա: Ընենց մի սուգ ու շիվան էք բարձրացրել, կասես աշխարհը դլխներին քանդվեց: (Գլուղացիների հետ դուրս ե գնում):

Հեղինե.—Երեսխա կորցնելուց հետո աշխարհն ել ա գլխիս քանդվել, տունն ել ու տեղս ել...

(Լաց լինելով դուրս ե գնում):

Գալուստ, Յեզոբ և հետո Յեզիշ

Գալուստ.—Հազար տարի մնա, չեմ հավատա,
ասածներդ դուրս չի մանի:

Յեզիշ.—(Ներս Ե գալիս և կամզնում ա հետևից
լուս մայում):

Յեզոբ.—Ուրեմն քո կարծիքով մենք դիտավորյալ
կերպով ենք եղ դեպքը նախապատրաստել:

Գալուստ.—Այո՛: Քո աղջկա դիտությամբ, նրա
ցանկությամբ և տեղի ունեցել նրա փախուստը:

Յեզոբ.—Դուք սխալվում եք, Գալուստ աղա: Իմ
աղջիկն են տեսակ չի դաստիարակված, վոր հայ
մարդուն թողած, թուրքի հետևից դնա:

Գալուստ.—Յես չեմ հասկանում: Դրանով դու քո
աղջկա կեղտոտ արարմունքնես ուզում արդարաց-
նել, թե ինձ ես հիմարի տեղ դրել: Յես քեզ
ասում եմ, վոր քու աղջկա փախցնողը թուրք
չի, հասկացի՛ր:

Յեզոբ.—Իսկ ո՞վ ե, յեթե թուրք չի:

Գալուստ.—Նրա ով լինելը դու ինձանից լավ
գիտես...

Յեզոբ.—Հը՛մ, հասկացա, գիտեմ՝ ում մասին եք
ակնարկում... բայց թե...

Յեզիշ.—Ձիլավխանենց Յեզոբ, ինչո՞ւ յես հակա-
ուակվում, Գալուստ աղան սուտ խոսող մարդ չի:
Նա ինչ վոր ասում ե, ճիշտ ե ասում: Մանիշակին
փախցնողը յես եմ, ուրեմն ել ի՞նչ կարիք կա նը-
բան ուրիշ տեղ փնտռելու: Մա՛եք մեր տուն Մա-
նիշակին վերցրեք տարե՛ք. թող ձեր նորափեսի
սիրտը չկոտրվի:

(Խորհում ուժեղ ալմուկ, գգիբը գինված գյու-
ղացիներին հետ, լապտերը ձեռներին ազազակե-
լով, գալիս են):

Ձալմեր.—«Ձիլավխանենց Յեզոբի աղջկան գտանք
բերինք»:

Նույնի, և գյուղացիներ

- Յ Ե Գ Ո Ր.— Կարծեմ ասացին, վոր Մանիշակին գտել են...
- Գ Գ Ի Ր.— Ձիլավիսանենց Յեզո՛ր, մուշտուլուղը տո՛ւր, ձեր Մանիշակին գնացինք, գտանք բերինք ձեր տուն:
- Յ Ե Գ Ո Ր.— Ձեր մուշտուլուղն իմ աչքիս վրա, բայց դուք ինձ են ասեք, Մանիշակիս վո՞րտեղից գտաք, վո՞րտեղից բերիք...
- Գ Գ Ի Ր.— Ճգնավորի քարի տակը վոտ ու ձեռը կապած ընկած եր, վերցրինք ու բերինք:
- Գ ա լ ու Ս տ.— Դուք չիմացա՞ք տանողն ո՛վ ա յեղել:
- Գ Գ Ի Ր.— Ով վոր ա, մինչև ճգնավորի քարի տակը տարել ե ու ենտեղ Մանիշակին թողել ու ինքը վախել:
- Յ Ե Գ Ո Ր.— Մանիշակին դուք վոչինչ չհարցրե՞ք, նա ի՞նչ ա ասում:
- Գ Գ Ի Ր.— Հարցրինք, ձեն - չհանեց: Վախությունից նրա լեզուն կապվել ա:
- Յ Ե Գ Ո Ր.— Յերեսիս հո չե՞ն՝ վնասել...
- Գ Գ Ի Ր.— Վնասելը խարար չեմ, համա...
- Յ Ե Գ Ո Ր.— Համա ի՞նչ...
- Գ ա լ ու Ս տ.— Ասա, մի՛ վախենա:
- Գ Գ Ի Ր.— Վախիլը չեմ վախենում, Գալո՛ւտ աղա, բայց թե...
- Գ ա լ ու Ս տ.— Բայց թե ի՞նչ...
- Գ Գ Ի Ր.— Բայց թե ամաչում եմ, վոր ասեմ...
- Գ ա լ ու Ս տ.— Եստեղ բացի մեզանից, ուրիշ մարդ չկա, ասա՛, մի՛ ամաչի...
- Գ Գ Ի Ր.— Ամոթ չլնի ասել, տակի շորը վրիցը հանել էյին...
- Գ ա լ ու Ս տ.— Հը՛մ... ասում ես՝ հանել էյի՞ն...

- Գ գ ի ր .— Հրամանք ես, Գալուստ աղա, հանել եյին: Թ ե գ ո ր .— Դու թո աչքովը տեսել ես, թե հենց ընկնց լեզվիդ գոռ իս տալիս: Գ, գ ի ր .— Յեթե տեսած չլինեյի, չեյի ասի... ա՛յ խալիս, մենք մեր պարտականությունը կատարեցինք, դնա՛նք... Բ ո յ ռ ր ք .— Գնա՛նք... (Գյուղացիները դուրս եմ գնում, իսկ Հեղինեմ նւրախ-նւրախ վագելով գալիս է):

Տ Ե Ս Ի Լ 11

Գալուստ, Յեգոր, Յեղիշ և Հեղինեմ

- Հ ե ղ ի ն Ե .— Ա՛յ մարդ, Մանիչակին բերել են: Ինչի՞ համար ես եստեղ կանգնել, դնանք տուն, Գալուստ աղա, դու ել արի՛ Մանիչակը յեկել, քեզ ե սպասում: Գ ա յ ռ ւ ս տ .— Ձեր Մանիչակն ել սրանից հետո թող ինձ չսպասի... Գալուստ աղան ուրիշի ձեռից ընկած ծաղիկը գետնից չի վերցնի... (Դուրս է գնում): Հ ե ղ ի ն Ե .— Ա՛յ մարդ, բա դու չլսեցի՞ր՝ նա ինչ ասաց... Թ ե գ ո ր .— Լսեցի: Հ ե ղ ի ն Ե .— Աղջկանդ թողնում ա, բա ինչի՞ ձեն չես հանում... Թ ե գ ո ր .— Ա՛յ կնիկ, ել ձեն մնա՞ց, վոր հանեմ... Տնով-տեղով խայտառակվեցինք... խոսակցության առարկա դարձանք... Հ ե ղ ի ն Ե .— Ա՛խ, աստված ջան, ես ի՞նչ կրակ ու պատիժ բերի մեր գլխին... Թ ե ղ ի շ .— Եդ կրակն ու պատիժը դուք բերիք ձեր գլխին: Հարուստ փեսացու, լիքը տուն, հայտնի յջախ եյիք փնտռում, գտաք, ուրիշ ել ի՞նչ եք

ուղում: Եորերը կեղատա, ձեռքերը զյոճրոտ ու
մրոտ արհեստավոր ու բանվոր մարդու հետ դուք
լայկը չարիք բարեկամութիւն անել: Դուք խար-
վեցիք Գալուստ աղի հարստութեան ունրա «բար-
ձրը» դիրքին և ձեզ համար ես պատմութիւնը
ստեղծեցիք...

Հ Ե Պ Ի Ա Ե.—Եդ պատմութիւնը չէր ստեղծվի, յեթե
սրա կոպտութիւնը չլիներ: (Ամուսնում) Այո',
մեղավորը դու յես. քու պատճառով երեխիս աս-
նունը արատավորվեց. մեր ոջախի նամուսն ու
պատիվը հողին հավասարվեց... (Լաց և լինում):

Յ Ե Պ Ի Ղ.—Ձեր ոջախի պատիվը, ձեր աղջկա անունը
նորից կվերականգնվի, յեթե միայն դուք կամե-
նաք... Ձեր Մանիչակին, ինչպես առաջ, հիմա ել
յես նրան նույն սրտով սիրում եմ: Սրտով սիրած
ծաղիկն իր ընկած տեղումն ել հոտ կուեննա...
Իսկ եդ հոտսլվեա ծաղիկը Գալուստ աղի հոտած
քթին դուր չեկավ...

Հ Ե Պ Ի Ա Ե.—Այ մարդ, Յեղիշը նորից առաջարկու-
թիւն ա անում, ի՞նչ իս պատասխանում:

Յ Ե Գ Ո Ր.—Յես... յես դեմ չեմ... իրա կամքն ե, ինչ-
պես վոր ինքը կամենում ե, թող ենպես ել լինի...
Յես կարծում եմ, վոր Մանիչակի կամքի հակառակ
բան արած չենք լինի, յեթե եստեղ Յեղիշին մենք
մեր համաձայնութիւնը տանք: Քո դամաթն եր,
Յեղի՛շ ջան, տա՛ր, քեզ հալալ...

(Յեղիշն ու Յեգորը միմյանց ձեռ սեղմում են,
իսկ Հեղիանն Յեղիշի ցակատը համբուրում է):

Հ Ե Պ Ի Ա Ե.— Յես գիտե՛յի, վոր մեր Մանիչակը վերջի
վերջո քեզ եր արժանանալու... Գնամ խնամի
Մարիամին իմաց տամ...

(Գնում է Յեղիշեցի տուն):

Յ Ե Գ Ո Ր.—Գնա՛, տեսնում եմ, վոր քու սրտովն ելավ:
Լսի՛ր, Յեղիշ, գեղում բարձրացրած գիշերով ես
դալմադալը, դու գիտես, վոր խոսակցութիւննե-
րի տեղիք կտա:

Յ Ե Ղ Ի Զ .— Հասկանում եմ՝ ի՞նչ ես ուզում ասել :

Յ Ե Գ Ո Ր .— Հասկանում ես, ավելի լավ : Չարախոս մարդկանց բանբասանքներին վերջ տալու համար հարկավոր աս, վոր հենց ես գիշեր ձեզ նշանենք : (ՅԵՂԻԶԻ հետ կանգնած լուռ խոսում են, իսկ Բաղալը ցանկապատի հետևից կովը բշելով տանում է գոմը) :

Տ Ե Ս Ի Լ 12

Նույնք, Բաղալ, հետո ՀԵՂԻՆԵ, Մարիամ և Գյուլիգար (Գյուլիգարի ձեռքին նրազ) :

Բ ա ղ ա լ .— Հո՛, հո՛, քյոփողլու ասրանք. կորչելու վախտ ես դառն՞լ : Գնա մտի դո՞մը :

Յ Ե Գ Ո Ր .— Բարի աջողում, խնամի՛ Բաղալ :

Բ ա ղ ա լ .— Ի՞նչ ասաց... խնամի Բաղալ... :

Յ Ե Գ Ո Ր .— Խնամի Բաղալ, չլինի՞ թե կովը կորել էր... :

Բ ա ղ ա լ .— Կո՞վս, հա կորել էր, դառ : (Մի կողմ)

վոչինչ չեմ հասկանում : Աղջի՛, ճրագը դեսը բե՛ր :

Յ Ե Գ Ո Ր .— Ա՛յ կնիկ, գործդ վերջացրի՞ր :

Հ Ե Ղ Ի Ն Ե .— Մենք մեր գործը վերջացրինք, գուք ել ձեր գործը վերջացրեք, գնանք :

Մարիամ .— Ա՛յ աղա, Յեղիշ, դու ես ի՞նչ բանի յես :

Ա՛յ մարդ, բա չես ասի, Յեղիշը սրանց Մանիշակի

վրա ես գիշեր նշանվում աս : Խնամի Հեղնարը յե-

կել աս, վոր մեզ հրավիրի :

Բ ա ղ ա լ .— Աստվա՛ծ, յերկի՛նք... յես ես բանից վոչինչ չեմ հասկանում... :

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ՊԱՏԿԵՐ ՅԵՐՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Յեզոբի տան բակը: Նշանդրեֆի առթիվ բակում արտաֆին շուֆ է տրված: Ամեն մի անկյուն կանաչներով ու ծաղիկներով զարդարել են: Մի ֆանի տեղ գունավոր քրքից փոֆրիկ լապտերներ են ֆաշ արել և ալն:

Ներսում յերածշտուրթյուն, նվագ, ծափ և պար: Ուշ գիշեր է: Հյուրերը դուրս են գալիս բակը և պատրաստվում են գնալու: Նրանք բոլորը հարբած վիճակում են:

Տ Ե Ս Ի Լ 1

Քյոխվա, գգիբ, տիրացու, 1-ին գյուղացի
հետո Յեզոբ

Քյոխվա.—Յեզիշը խելոք վարվեց: Նա գիտեր, վոր գյուղացու բերանը բամբասանքի համար արշի-նով է բացվում: Եդ դեպքը նրանք խոսակցության առարկա եյին դարձնելու, տարին տասներկու, միս մաստակի նման ծամեն:

Տիրացու.—Անունը կոտրած աղջկերքը, բնդունված եր, վոր տարիներով իրանց հորանց տանը կմնային: Իսկ Ջիլավիտանինց Յեզոբի աղջկա մուշտարին որ առաջ դռանը կանգնած եր: Տնաշենը սկի չթողեց մի գիշեր վրայով անցնի:

Գգիբ.—Քյոխվա ջան, իբավունք տուր՝ մի խնոք ել յես ասեմ:

Ք յ յ յ վ ա .— Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ասում :

Գ գ ի ր .— Յես վոր դնում եմ բազար աման առնելու ,
Թարսի նման միշտ կոտորածն ա ձեռս ընկնում :
(Բռնորը ծիծաղում են) :

Ք յ յ յ վ ա .— Ա՛ շաշ , բա դա ասելու խոսք ա՞ :

Գ գ ի ր .— Քյոխվա՛ ջան , յես ծուռ մտքով չասեցի ,
Թողեք խոսքս թամամացնեմ :

Ք յ յ յ վ ա .— Դե լավ , ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ասում :

Գ գ ի ր .— Յես ե՛ն եմ ասում , վոր կոտորած ամանն ել
իր քոս մուշտարին ե ունենում . . .

(Տիրացուն և 1-ին գյուղացին ծիծաղում են : Յե-
գորը ներս ե գալիս և լուռ նայում) :

Ք յ յ յ վ ա .— Ձենդ կարի՛ , ախմա՛խ , ենքան լակել ես ,
վոր խելքդ թամամ կորցրել ես : Ել վոչ խոսքի
տակն ես ճանաչում , վոչ դլուխը : Դե ել ի՞նչ ես
կանդնել , դնա՛ , աչքիցս հեռացի՛ . . .

Գ գ ի ր .— Քյոխվա՛ ջան , յես եդ խոսքը են մտքով չա-
սեցի , վոր դու նեղանաս : (Դուրս ե գնում) :

Տիրացու .— Դե՛ , մենք ել դնանք :

1-ին գյուղ .— Գնանք , ուշ ա :

Ք յ յ յ վ ա .— Մնաս բարով , Յեդո՛ր : Աստոծ բախտա-
վոր անի :

Տիրացու .— Աստոծ նրանց մի բարձի ծերացնի :

1-ին գյուղ .— Բախտավոր ըլնեն , աստոծ փոշմա-
նություն չտա :

Յեգոր .— Շնորհակալ եմ . . . փոխարենը ձեր վորդոց
լինի . . .

(Նրանց միմչև փոզոցը տանում , նանապարե
ե դնում , Հեղինեն շտապ ներս ե գալիս) :

Տ Ե Ս Ի Լ 2

Յեգոր և Հեղինե

Հեղինե .— Լսի՛ր , ա՛յ մարդ :

Յեգոր .— Ինչի՞ն յես շփոթվել , ասա տեսնեմ՝ ի՞նչ
կա , ի՞նչ ե պատահել :

Հ ե ղ ի Յ ե .— Գալուստ աղան մարդ ա ուղարկել, քեզ ուզում ա տեսնի:

Յ ե գ ո թ .— Մրանից հետո ել նա ինձ հետ ի՞նչ գործ ունի: Մաղրել ե ուզո՞ւմ: Գնա տա՛՛ եղ սպասվից յես շնորհակալ եմ:

Հ ե ղ ի Յ ե .— Ա՛յ մարդ, նա քեզ դրա համար չի՛ կանչում: Լսի՛ր, բանն ուրիշ տեսակ ե փոխվում... բա չե՞ս ասի, սրանք մեզ խարել են:

Յ ե գ ո թ .— Ինչպե՞ս թե խարել են:

Հ ե ղ ի Յ ե .— Լսի՛ր, Մանիշակի փախցնելը սարքովի բան ա յեղել...

Յ ե գ ո թ .— Ի՞նչ ես ասում ա՛յ կնիկ, դու գժվե՞լ ես, ի՞նչ ե... Քեզ ո՞վ ասեց, դու վո՞րտեղից այդ ի՛մացար... Գալուստ աղայի ուղարկած մարդն ո՞ւր ա, գնա՛, նրան կանչի եստեղ: (Հեղիմեց գնում ե): Սպասի՛ր, նրան կանչել հարկավոր չի: Յես կգնամ և ինքս նրա հետ կխոսեմ: (Յեզորը դուրս ե գնում: Իսկ Յեղիշն ու Ղազարը մերս եմ գալիս, Ղազարը սաստիկ խմած ե և հագիվ կարողանում ե վտափ վրա կանգնել):

Տ Ե Ս Ի 1 3.

Յեղիշ և Ղազար

Յ ե ղ ի 2 .— Ղազա՛ր ջան, խնդրում եմ, քեզ լավ պահի՛ր, շուրուխ մի՛ արա...

Ղ ա զ ա ր .— Ի՞նչ ես ասում, շուրուխս վո՞րն ա... յես քե՞Ք եմ անում: Յես ուխտ եյի արել, վոր քու նշանդրեքում մի լազաթին քե՞Ք անեմ ու դու՛նմանի աչքը հանեմ, Յեղի՛շ ջան, դու հասկանո՞ւմ ես՝ ինչ եմ ասում: Գասխոշ, Գալուստ աղա, դասխոշ... Հի՛յ, փափախդ քամին տանի, Մանիշակին փախցնող բաշուղավոր թուրք: Գալուստ աղի ճանկերից են անմեղ վորսը լավ փախցրի՛ր... Հա՛... Հա՛... Հա՛...

- Յ ե ղ ի շ.—Ղազար ջան, եղ խոսքերն եստեղ մի ասա, կլսեն:
- Ղ ա զ ա ր.—Յես ել Հենց նրա Համար եմ ասում, վոր լսեն: Ի՞նչ ես վախենում: Յես վոր կամ, Հողեառ Գարբել հրեշտակն եմ, վատ մարդու դոշին կշոքեմ, բողազին հուպ կտամ, հողին կառնեմ... յես ազրահիլ եմ, բոլորին թեփրահան կանեմ...
- Յ ե ղ ի շ.—Ղազա՛ր ջան, դու ազրահիլ ես, դու ամենքին թեփրահան կանես, ախր եղ խոսքերը, դու վոր եստեղ ասում ես, մի ուրիշը կլսի ու կդա մեզ թեփրահան կանի:
- Ղ ա զ ա ր.—Դու անհո՛գ կաց, մեզ թեփրահան անողները դեռ իրենց մոր փորիցը չեն ծնվել: Ի՞նչ ա, վոր հարբած եմ, նրա Համար ես ասո՞ւմ: Մի՛ վախի, ինչքան ել վոր հարբած լինեմ, Գալուստ աղի նման տասը մարդու պատասխանը կտամ: Դասխոշ, Գալո՛ւստ աղա, դասխոշ, հնդուհավը կամա՛ց կեր, վոսկոռները բողազումդ չմնահա՛...հա՛...հա՛...:
- Յ ե ղ ի շ.—Ղազա՛ր ջան, ուրեմն դու ինձ չես լսում:
- Ղ ա զ ա ր.—Ղազարին դու յե՞րբ ես բան ասել, վոր նա քեզ չի լսել: Ասա՛, ի՞նչ ես ուզում: Գնամ Գալուստ աղին խփեմ, շանսատակ անե՞մ: Նրա տունն ու տեղը քանդեմ, հիմնահատակ անեմ: Ասա՛: Ի՞նչ ես ուզում...
- Յ ե ղ ի շ.— Յես ուզում եմ, վոր դու լուրջ պահես քեզ:
- Ղ ա զ ա ր.—Լուրջ պահեցի, հետո՞:
- Յ ե ղ ի շ.— Հետո, հրես մերոնք դուրս են դալիս: Կը դնանք մեր տուն, ենտեղ քեզ հետ միասին լուսելուս կնստենք մի լավ քեֆ կանենք: Գալիս ի՞:
- Ղ ա զ ա ր.— Գալիս ե... (Նրա ձեռքը սեղմում ե. Բաղալը, Մարիամը, Մանիշակը, Գյուլիգարը, Սեակը և ուրիշ հյուրերը, սագանդարն առաջներն արած, ծափ տալով և պարելով դուրս են գալիս րակը):

Նույնք, Բաղալ, Մարիամ, Մանիշակ, Գյուլի-
գար, Սիակ, հյուրեր, սագանդար և հետո Յեզոբ
և Հեղինե:

Սիակ.—Աստված սիրողը թող պարի:

Ղազար.— Յես ասածուն չեմ սիրում, բայց պարե-
լու յեմ: Դե մի թարաքամի տվեք, տեսնեմ:

(Սագանդարը նվագում է, Ղազարն սկսում է
պարել, իսկ մյուսները տակտով ծափ են տալիս):

Սիակ.—Կեցցե՛ս, Ղազար՛, կեցցե՛ս... շուտով քեզ
համար ել մի հալալ կաթնակեր կճարենք...

Ղազար.—Դրա ժամանակը չի: Մի ուրիշ յեղանակ
նվազեք, նորահարսը պարում աս:

Բոլորը.—Պրո՛սիմ, պրո՛սիմ...

(Մանիշակն ու Գյուլիգարն սկսում են պարել):

Սիակ.— Ա՛յ շարաշ... (Բոլորն առանձին-առանձին
մոտեցնում են և պարողների ձեռքում փող դնում):

Ղազար.— Հրես խնամի Յեզոբն ել յեկավ: Հմի
հերթը նրանն: Դե՛, խնամի ջան, կաներդ բար-
ձրացրո՛ւ տեսնեմ: Ա՛ խալիս, ծափ տվե՛ք:

Յեզոբ.— Թո՛ղ ինձ...

Բաղալ.— Խնամի՛ Յեզոբը մենակ չի ուզում պարել:
Մենք յերկու հալիվորներս միասին կպարենք:

(Ինքը պարում է և նրան հրավիրում):

Յեզոբ.— Թո՛ղ, յես պարելու սիրտ չունեմ...

Բաղալ.— Ինչպես տեսնում եմ՝ խնամուս նեղացրել
են: Ի՞նչ է պատահել, խնամի Յեզո՛ր:

Յեզոբ.— Եդ խնամի խոսքը դու մյուս անգամ ինձ
չասես... մեր միջ խնամություն չկա... դնացե՛ք,
կորե՛ք իմ տնից... Ձեզ պես խարերանների հետ
յես բարեկամություն անել չեմ ուզում:

Մանիշակ.— Հայրի՛կ:

Յ Ե Գ Ո Ր.—Ձայնդ կտրի՛ր, լի՛րբ, անզգա՛մ, յես քու
հայրը չեմ:

Յ Ե Ղ Ի Չ.—Ձեզ ի՞նչ պատահեց, չեմ հասկանում:

Յ Ե Գ Ո Ր.—Դու շատ լավ ես հասկանում: Իզուր տեղը
դու քեզ անհասկանալու տեղ մի դնի:

Ղ ա գ ա ր.—Գինին յես եմ խմել, մեջ տեղ սրանք են
հարբել...

Յ Ե Գ Ո Ր.—Դե՛, ել ինչի՞ համար եք կանգնել, ո՞ւմն
եք սպասում... դուրս գնալու համար ձեզ համի-
ցեք չպտի անեմ, գնացե՛ք, կորե՛ք եստեղից, յես
ձեզ աղջիկ չեմ տալիս:

Յ Ե Ղ Ի Չ.—Ձիլավխանենց Յեզո՛ր, խելքդ դլուխդ հա-
վաքի՛ր և մտածի՛ր, թե ի՞նչ ես ասում: Մեր մեջ
ամեն ինչ խոսվել, վերջացել է:

Յ Ե Գ Ո Ր.— Ձուրի բան չի, կամքի բան է. Յես իմ
աղջկան ումը վոր ուզեմ նրան ել կտամ...

Բ ա դ ա լ.—Եդ դու առաջուց պետք է մտածեյիր, հմի
արդեն ուշ ա: Աղջկադ նշանել, պրծել ենք:

Յ Ե Գ Ո Ր.— Նշանել եմ, պսակել հո չե՞մ, նշանը միշտ
ել կարելի յե քանդել:

Յ Ե Ղ Ի Չ.—Նշանը կարող ես քանդել, իսկ մեզ միմ-
յանցից բաժանել դու չես կարող: Մենք հենց ես
բոպեյիս միասին դուրս կգանք այստեղից:

Յ Ե Գ Ո Ր.—Յեթե թույլ տան, կգնաք...

Յ Ե Ղ Ի Չ.—Մենք կգնանք, տեսնեմ ո՞վ է արգելում...
(մոտեցում է Մանիշակին):

Յ Ե Գ Ո Ր.—Հեռացի՛ր, իմ աղջկան մոտենալու դու
իրավունք չունես... նրան ուրիշ տեր ունի:

Յ Ե Ղ Ի Չ.—Նրա տերը յե՛ս եմ...

Ղ ա գ ա ր.—Ձիլավխանենց Յեզո՛ր, դիտիս ուղեղը
ժաժ ա դալի... կտամ շանսատակ կանեմ, մեղք
ես...

Յ Ե Գ Ո Ր.—Ձենդ կտրի՛, ախմա՛խ, դու ո՞վ ես, դու
ինչացո՞ւ յես, վոր կանգնել մեծ-մեծ խոսում
ես...

Ղ ա գ ա ր .—Դու քիչ կա՛ց, հիմա կտեսնես՝ յես ո՛ւյ
եմ: Յեղի՛շ, նշանածիդ կռնիցը բռնած դու՛րս
արի: Ե՛յ, խնամի ես, ի՞նչ զահրուդիրիլ ես, ճա-
նապարհ տու՛ւր, թող նշանածներն անցնեն:

Յ ե գ ո ր .—Ձիւլալխանենց Յեզորն աչքերը բաց՝ ձեզ
աղջիկ չի տա, վոր դուք տանեք... (Երմբում
կանգնում է):

Ղ ա գ ա ր .—Յես ասում եմ՝ զո հոժար կամքովը լի-
նի, վոր չես ուզում, յես իմը կանեմ, յես ինչպես
վոր սկսել եմ, ենպես ել կվերջացնեմ:

(Յեզորիմ բռնում է ու դնում ծնկան տակ):

Հ ե ղ ի ն Ե .—Ողնեցե՛ք... ողնեցե՛ք...

(Յեղիշը Մանիշակի քեիցը բռնած՝ ուզում է
դուրս գնալ, Գալուստը, Բյոխվան և գգիրը ներս
են գալիս):

Տ Ե Ս Ի Լ 5.

Նույնի, Գալուստ, Բյոխվա և գգիր

Գ ա լ ու ս տ .— Տեսնո՞ւմ ես, սրանք ես տեսակ են
աղջիկ նշանում... յիթե մենք քիչ ուշ վրա հաս-
նելի՛նք, են խեղճ մարդուն սրանք անպատճառ
կսպանելի՛ն:

Բ յ ո խ վ ա .—Յեղի՛շ, դուք ի՞նչ բանի յեք:

Յ ե ղ ի շ .—Մեզ ես տեղն են հասցրել... մենք մեղա-
վոր չենք:

Գ ա լ ու ս տ .—Մեղավորն ես մարդն է, վոր սրանց
աղջիկ չի ուզում տա և նրանք զոռով ուզում են
տանել:

Յ ե ղ ի շ .—Աղջիկն ինքն իր հոժար կամքովն է գալիս,
մենք նրան զոռով չենք տանում:

Գ ա լ ու ս տ .—Մուտ ես ասում, ավազա՛կ:

Յ ե ղ ի շ .—Ավազակը դու յես, վոր որը ցերեկով ուրի-
շի տներն ես թալանում և նրանց վերջին ունեց-
վածքը ձեռքներիցը խլում:

Գ ա լ ու ս տ .—Ձենդ կարի՛, լակո՛տ:

Յ ե ղ ի շ .— Ինձ պես լակտոր քեզ պես ճաղա-պարտնի՞ն
ձենը վաղուց պետք է կտրած լիներ, վոր տղրու-
կի նման կպել ես մեր ջանին, մեր արյունը
ծծում, մեր սիրտն ու հոգին վառում...

Գ ա լ ու ս տ .— Քյոխվա՛, լոկցրո՛ւ նրան...

Քյոխվա .— Յեղի՛շ, յես քեզ կարգի յեմ հրավի-
րում: Յես թույլ չեմ տա, վոր իմ ներկայու-
թյամբ Գալուստ աղին անպատվես:

Գ ա լ ու ս տ .— Եղ անպատվության համար իր ժա-
մանակին իր տեղումը մենք կխոսենք: Իսկ հիմա
յես պահանջում եմ, վոր դուք սրան անմիջապես
ձերբակալեք:

Յ ե ղ ի շ .— Նախքան ինձ կձերբակալեն, քու դատու-
վճիռն ետեղ իմ ձեռքով կանեմ... ավագակ...

(Դաշույնով խփում է Գալուստին, վիրավո-
րում և դաշույնը ձեռքին դուրս վազում):

Մ ա ն ի շ ա կ .— Յեղի՛շ... (Լաց ե լինում):

Քյոխվա .— Բռնե՛ք նրան...

(Գորի հետ գնում են նրա հետևից):

Մ ա ր ի ա մ .— Վա՛յ ինձ, յերեխես կորավ... (Լաց ե
լինում):

Բ ա դ ա լ .— Տուններս քանդվեց...

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

1-ԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է գյուղի հանդը: Բարձր լեռան ստորոտում, կիսափուլ չարդախի մոտ հանդվորները կրակ են արել և նրա շուրջը նստել, տախանում են: Գարնանային ցուրտ և խավար գիշեր է:

Տ Ե Ս Ի Լ 1.

Չափար, Խեչան, Մուկուչ, հետո Մինաս:

Մուկուչ.— Ի՞նչ էս անում, Խեչա՛ն, փո՛ւհ, աչքե-
րըս քոռացրի՛ր: Եդ զահրումար ծուխը դենը
կորցրո՛ւ:

Խեչան.— Աբա, դե յես վո՞նց անեմ, վոր ծուխը
դեսը չգա: Ես փեռերը քաշեմ, իբար կպցնեմ,
որինավոր վառվի, բալքի մի քիչ տաքանանք:
Ցրտից մեռանք, կոտորվեցինք...

Մուկուչ.— Ընենց խոսում ես, կարծես դու ել Մի-
նասի ու Չափարի հետ նոր ես քաղաքից յեկել:
Տնաչե՛ն, դեղումը ծնվել ես, չոլումը մեծացել,
ցրտից դու ել ես վախենո՞ւմ: Չափա՛ր, դու ինչի՞
յես մտքի ծովն ընկել... Գլուխդ դի՛ր եդ խուր-
ջինի վրա, յաինջին քաշի՛ վրադ, քնի՛: Հմի
վորդի վոր ա լիսը կբացվի:

(Մինասը՝ վորսորդական հրացանը ձեռին
«իմտերմացիոնալ» յերգի յեղանակը սուլե-
լով՝ ներս է գալիս):

Մինաս.— Հանդվոր ընկերներին բարև:

Բ ո լ Ո Ր Ը.—Բարով յեկար, վորսո՛րդ ընկեր:

Մ Ի Յ ա ս.—Եդ ինչո՞ւ մինչև հիմա չեք քնել: Քնեք
հանգստացե՛ք, վոր կարողանաք առավոտյան
թարմ ուժերով աշխատանքի դուրս գալ: Լսի՛ր,
Չաքա՛ր, Բաղալ ամին քո կատարած աշխատան-
քից դո՛հ ե, ըստ յերևույթին լավ ես տիրապե-
տում հողադործութեան: Ոստտվանք լինի, յես
արդեն սկսում եմ մրսել:

Չ ա ք ա ր.—Արի կրակի մոտ նստի՛, տաքացի: Չուր
ես եսպես վաղ տնից դուրս յեկել:

Խ ե չ ա մ.—Իսկահան ժամանակն ա, վորո՞ի զնացողը
ճշնավորի քարի տակին լուս ու մութին նստած
պիտի լինի:

Մ ու կ ու չ.—Ճիշտ ա ասում, մեր սարերում վորսն
ես ժամանակին ա սկսում յերևալ:

Մ Ի Յ ա ս.—(Կրակի շուրջը նստած՝ մեղմ ձայնով յեր-
գում է):

«Յելի՛ր՝ ում կյանքը անիծել է,

Ով ճորտ է, մերկ և ստրուկ.

Արդեն վառվում են մեր սրտերը,

Արդեն կռվի յենք մենք ձգտում:

Այս հին աշխարհը կփոքենք մենք

Մինչև հիմքերը—և հետո

Մեր նոր աշխարհը կշինենք մենք,

Ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե մեր վերջին կռիվը և պայքարը

մեր մեծ,

Ինտերնացիոնալը աշխարհը կփրկի»:

Մ ու կ ու չ.— Մինա՛ս ջան, ուրիշ յերգ յերգի, եդ
յերգը վտանգավոր ա:

Մ Ի Յ ա ս.—Ռուսական առածն ասում է՝ գայլերից
վախեցողն անտառ չպետք է մտնի:

Չ ա ք ա ր.—Գեղամիջին ձայններս կտրում են՝ հերիք
չի, ես չոլումն ել ձայն չողտի հանենք... բանիդ
կա՛ց: (Լսվում է սրնգի ձայն):

Մ Ի Յ ա ս.—Ո՞վ է այս կես գիշերին սրինգ նվագում և

նրա վողրածայն մեղեդու տխուր մրմունջներով
այս ահաւոր լուսթյունը խռովում:

Ձ ա ք ա ր.—Չորան Ավոն ա, Մինա՛ս ջան, սրնդի եղ-
քաղցր ձայնովն ե նա իր վոչխարներն արածացը-
նում: (Ավոն կանգնում ե բարձր ապառաժի վրա
և իր սրինգը նվագում ե: Իսկ նրանք ուշադիր
լսում են: Յերկարատև լուսթյուն):

Մ ի ն ա ս.— Լավ լսեցե՛ք, սա են սրինգն ե, վոր հե-
ռաւոր սարերի մութ անկյուններում ճամբն
կորցրած ու մոլորված վոչխարները հավաքվում,
բերում, հոտին ե միացնում... Սա են սրինգն ե,
վորի ձայնը լսելուն պես, հովվի հավատարիմ ըն-
կերները ականջները սրած, վոխերիմ թշնամուն
են սպասում... Սա են սրինգն ե, վորի ձայնից
խրախուսված, հովվի կովող զոչերը ապառաժի
գլուխն են բարձրանում և անդունդների խորքը
գլորվում...:

(Սրինգը նվագելով, Ավոն հեռանում ե):

Խեղճ ու թշվառ Այժ, մշտնջենական խա-
վարը ճնշում ե վորոնող միտքը ու հոգիդ և դու
սրինգը նվաղելով թափառում ես ու խարխալում
համատարած այս մութ խավարի մեջ... (Պատ-
րաստվում ե գնալու):

Ձ ա ք ա ր.—Ո՛ւր ես գնում...

Մ ի ն ա ս.— Չորան Ավոյին ուղում եմ տեսնել և նրա
սրնդի նվազը կրկին անգամ լսել...

(Դուրս ե գնում, իսկ մյուսները խարույկի
շուրջը պառկում են քնելու: Յերկար լուս-
թյուն):

(Բաղալ ամին ներս ե գալիս, խարույկի մոտ
կանգնում և լուռ նայում ե):

Նույնք և Բաղալ

Բ ա ղ ա լ .—Քնած են:

Մ ն ի կ ն ի չ .—Քնած չենք, Բաղալ ամի, Հենց նոր պառկեցինք: Սաղ գշերը նստած՝ զրից էլինք անում:

Բ ա ղ ա լ .—Ռանչպար մարդը գշերը վոր անքուն մընաց, էլ նա կարա՞ց քրեկն աշխատի...

Ջ ա ֆ ա ր .—Ինչի՞ համար ես յեկել: Առանց քեզ էլ ես աշխատանքները դնում են: Գնա տուն, հանգըստացի՛:

Բ ա ղ ա լ .—Յես կհանդատանամ, յերբ վոր հողի տակ կլինեմ: Քանի դեռ հողի յերեսին եմ, ինձ հանգըստութուն չկա... Մինասն ո՞ւր ա, նրա համար եմ յեկել...

Ջ ա ֆ ա ր .—Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել:

Բ ա ղ ա լ .—Են անիծվածները յեկան, տունը խուզարկեցին և Մինասին հարցրին:

Ջ ա ֆ ա ր .—Ի՞նչ պատասխանեցիր:

Բ ա ղ ա լ .—Ի՞նչ պտի պատասխանեմ: Հարցրին՝ ո՞ւր ա դնացել, ասի՛՝ դնացել ա վորսի: Թողին, սուս ու փուս հեռացան:

Խ ե չ ա ն ի .—Ինչպես յերևում ա՛ նրա մասին խարար տանող ա ըլել:

Բ ա ղ ա լ .—Խարար են տարել, վոր վորսկան շան պես հետևիցն ընկած հոտոտելով ման են դալիս... ես քանդված յերկրում մարդ իր գլխի տերը չի... կարծես պարտավոր ենք ամեն անգամ նրանց տեղեկութուն տալ, տունդ ո՞վ յեկավ, ո՞վ դնաց... ինչի՞ համար յեկավ, ո՞ւր դնաց: Անիծվե՛ք դուք: Մինչկեւ որս մեր տունը Յեղիշի համար էլին դրանք դնում, դալիս, հիմի էլ Մինասի համար են սկսել դնալ, դալ. եղ անիծվածներն ենք աններու յեն, վոր եզ խեղճի գլուխն էլ ու-

տեն, վոնց վոր Յեղիշիս գլուխը կերան... Ա՛խ,
իմ կորած բալա՛...:

(Լաց և լինում):

Ձ ա ֆ ա ր.—Ուրիշները մեռելների հետեից լաց կլնեն,
իսկ դու կենդանի մարդու համար ես լաց լինում:

Բ ա ր ա լ.—Կորածն ու մեռածը մի հաշիվ ա:

Ձ ա ֆ ա ր.—Կորածն ու մեռածը մի հաշիվ չի: Մե-
ռածն անվերադարձ դնում ե, կորչում, ել նրան
յետ դալ չկա, իսկ կորած մարդը վորտեղ վոր
լինի՝ մեկ սր դուրս կգա կերևա: (Ականջին):
Լսի՛ր, Յեղիշի տեղն յես արդեն իմացել եմ: Շու-
տով մենք նրա հետ կապ կատեղծենք: Մեր ընդ-
հատակյա աշխատանքների ընթացքում Յեղիշն իր
զինված խմբով մեզ կոգնի: Սրանից հետո նրա
մասին դու կարող ես բոլորովին չմտածել:

Բ ա ր ա լ.—Ճիշտ ես ասո՞ւմ, թե հորդ սիրտ տալու
համար ես հնարել ես պատմությունը:

Ձ ա ֆ ա ր.—Վոչ մի պատմություն, յես քեզ խաբելու
տրամադրություն չունեմ:

Բ ա ր ա լ.—Հմի հավատում եմ: Սրանից հետո ել
դարդ չեմ անի: Դու դրա մասին մորդ հետ խոսել,
նրան վորևե բան ասե՞լ ես:

Ձ ա ֆ ա ր.—Յես չեմ ասել, դու կասես: Դե յես գնամ,
Մինասին գտնեմ և նրան զգուշացնեմ:

(Գնում և):

Բ ա ր ա լ.—(Մի կողմ) Ես խաբարը մերը վոր իմանա,
ուրախությունից խելքը կկորցնի: Ե՛հ, վառք
ասուու. բախտիս չարիս ու Փալազը կարծես նոր
սկսում ա պտտել... Չաքարս ոտարությունից յե-
կավ, Յեղիշիցն տեղեկություն ստացա... Չե՛, ես
մի բանը նրանք լավ են մտածել, վոր Յեղիշի հետ
կապ են ուզում հաստատել: Գաղտնի աշխատան-
քում նա սրանց կոգնի... (Ձիու սմբակների
ձայն): Ես ո՞վ ա դալի... են անիծվածները չըլ-
նե՞ն: (Նայում և դեպի հեռուն): Ձին կանգնեցը-
րեց, ձիուց վեր, յեկավ, վորտքով գալիս ա դպա
դեսը:

Բաղալ և Համբարձում

Համբ.— Բարի աջողում, Բաղա՛լ ամի:

Բաղալ.— (Սառք) Բարով յեկար:

Համբ.— Բաղալ ամի, դրանք քնել են, եղ վո՞նց ա,
վոր դու չես քնում: Յեղիչի համար, յերևում ա,
վոր դու շատ ես մտածում:

Բաղալ.— Յես ել վոր չմտածեմ, բա ել ո՞վ պտի
մտածի:

Համբ.— Սրանից հետո կարող ես չմտածել: Չաքարդ
քաղաքից յեկավ, նա քեզ քոմադ կանի: Լսի՛ր,
Բաղա՛լ ամի, Չաքարի հետ են նոր եկած մարդն
ո՞վ ա:

Բաղալ.— Ախպորս տղան ա:

Համբ.— Ինչի՞ համար ա յեկել:

Բաղալ.— Վո՞նց թե ինչի համար ա յեկել: Ետ ի՞նչ
հարցաքննություն ա:

Համբ.— Դե լավ, ել ինչի՞ համար ես նեղանում:
Յես հարցնում եմ, իսկ դու կարող ես չախտա-
խանել: Ախպորդ տղան վորսի դնալ, կարծեմ,
շատ ա սիրում... Գիշերներն ել, ասում են, մի-
մի անգամ մնում ա ետեղ, հանդվորների հետ
խոսակցություն ա ունենում... նրանց հետ շատ
հետաքրքիր դրիցներ ա անում սոցիալիզմի մասին,
հեղափոխության մասին հետաքրքիր պատմու-
թյուններ պատմում...

Բաղալ.— Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել:

Համբ.— Ի՞նչ պետք ե ասեմ: Հենց ընենց, խոսք յե-
կավ, խոսում եմ, ի հարկե, ուրիշի ներքին դոր-
ծերում յես ի՞նչ հաշիվ ունեմ... ինչ ուզում են՝
թող անեն. դրանից յես վոչ ոգուտ ունեմ, վոչ
վնաս... սրանք ընչի՞ համար են եսքան յերկար
քնել... Խ՛յ, խաղեյիննե՛ր, վե՛ր կացեք: Ռանչ-
պար մարդն եսքան յերկար չի քնի: Քու՛նը ձեզ

կթուլացնի, լավ չի... (Մտրակով խփում է
նրանց վոտեբրին) :

ԽԵՆՁԱՆ.— Ինչի՞ համար ես խփում :

ՄՈՒԿՆԸ.— Քեզ ո՞վ իրավունք տվեց :

ԽԵՆՁԱՆ.— Յեթե Գալուստ աղի տանը ծառայում ես,
եղ դեռ չի նշանակում, վոր դու ել նրա նման
գլխներին իրավունքներ պտի բանեցնես :

ՀԱՄՐ.— Յես իրավունք բանեցնելու տրամադրու-
թյուն չունեմ : Յես ծառայող մարդ եմ, իմ ի՞նչ
հաշիվն աս, յես Գալուստ աղի կարգադրություն-
ներն եմ միայն կատարում : Գալուստ աղան կար-
գադրել աս, վոր ետոր դուք ձեր բոլոր գործը թող-
նեք, գաք նրա համար աշխատեք : (Յերկար լռու-
թյուն) : Կարծեմ լսեցիք, ինչվոր յես ձեզ ասեցի :

ԲՈՂՈՐԸ.— Լսեցինք :

ՀԱՄՐ.— Լսելուց հետո հարկավոր աս, վոր իմ տված
հարցին պատասխանեք :

ԽԵՆՁԱՆ.— Պատասխանի համար մենք դեռ կմտա-
ծենք :

ՀԱՄՐ.— Ուրեմն դուք չեք ուզում Գալուստ աղի կար-
գադրությունը կատարել :

ԽԵՆՁԱՆ.— Գալուստ աղի կարգադրությունը մեզ հա-
մար որենք չի : Ասենք հիմա որինք—մորենք չկա...
Մի գնա տես խորհրդային յերկրում ինչե՞ր աս կա-
տարվում :

ՀԱՄՐ.— Ինչե՞ր աս կատարվում, պատմիր տեսնեմ,
հետաքրքիր աս : (Նստում է նրանց մոտ) :

ԽԵՆՁԱՆ.— Են աս կատարվում, վոր հիմա կրուզոմ
ազատություն աս, հողը գյուղացիներին, գործա-
բանը բանվորներին վերադարձնելու որենք աս հրա-
տարակված :

ՀԱՄՐ.— Հետո՞

ԽԵՆՁԱՆ.— Հետո ե՛ն, վոր եղ որենքը մեզ ել աս վերա-
բերում, մեզ վրա ել աս տարածվում...

ՀԱՄՐ.— Եղ ո՞վ աս ձեզ ասել :

ԽԵՆՁԱՆ.— Ով վոր ասել աս, եղ քո հաշիվը չի :

Համբ. Իհարկե, իմ ի՞նչ հաշիվն ա: Ուրիշի ներքին գործերում, ընդհանրապես, յես սովորություն չունեմ խառնվելու: Սոսք ընկալ, դրա համար ել յես հարցրի: Մնաք բարով:

Խեչան.— Գնաս բարով... (Համբարձումը գնում ե):

Մուկուչ.— Եդ ի՞նչ քաղաքավարի կերպով ես ճամբու դնում:

Խեչան.— Թե նա ազգիսն ա, յես ել պոչն եմ: Շուն շան վորդի՛, դիտմամբ խոսացնում ա, վոր մեզնից խոսք դուրս քաշի ու խարար տանի: (Մյուս հանդիպոթներն ել գալիս են):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք, Առաքել, Հասան և գյուղացիներ

Առաքել.— Բարի աջողում:

Մուկուչ.— Ասու բարին, բարով եկաք:

1-ին գյուղ.— Անասելի ցուրտ ա ես դիշեր:

Խեչան.— Նստե՛ք, տաքացե՛ք: Հասա՛ն, դու եդ ի՞նչ բանի յես:

Հասան.— Գուես տանում ա, դուք խոսացե՛ք, յես քնում եմ: (Առանձնանում ե ու քնում):

2-րդ գյուղ.— Գիշերվա ես այազն ասեղների նման մարդու ջանի մեջն ա մտնում, ոսկոռներումը ծակծկում, ձեր աղբաթը խեր կրակ եք արել, մի քիչ կտաքանաք:

1-ին գյուղ.— Գնած էյի, քանի աչքս բաց արի, սրանց կրակը շարունակ վառվում եր: Յես ասի կխտար վեր դցած խորովելիս կըլլինեն:

Խեչան.— Դու ել խորովածի իշտահով յեկար, տեհար զատ չկա:

Առաքել.— Բաղալ ամի, դու ինչի՞ յես սուս արել, ընչի՞ չես խոսում, Չաքարը յեկել ա, ուրախանալու փոխարեն տխրե՞լ ես:

2-րդ գյուղ.— Բաղալ ամու վրա մեծ մաղարիչ կա:

1-ին գյուղ.— Ճիշտ, յես մոռացել եմ: Չաքարը
գործի լավ ժամանակին եկալ: Քեզ քոմազ կանի:
Բաղալ.— Քոմազ կանի եղ ել խոսք ա՞... դալուն պես
ամբողջ գործը վերցրել ա իր ձեռքը: Շատ ապրի,
յեկալ, ջանիս հասալ:

1-ին գյուղացի.— Բա ո՞ր ա Չաքարը, չի յերևում:
Բաղալ.— Ըստեղ եր, Մինասը դնում եր, յափնջին
մոռացել եր հեար վերցնի: Յափնջին տարալ տա
իրան: Ես սառը ողին նա սովոր չի: Առանց են ել
նրա առողջութունը բոլորովին քայքայված ա,
կմբսի ու նորից կհիվանդանա:

Մուկուչ.— Քաղաքում ապրողները դիտի ըտենց են:
Ուշ ու մաքները անալիս են գրքերի ու գաղեթնի,
իրենց առողջութունները կորցնում:

Խեչան.— Մինասը քեզ որինակ, տնաչենը կարծես
մոմից շինված ըլի. տաքը տալուց հալվում ա,
ցուրտը տալուց՝ սառչում:

Բաղալ.— Եդ բոլորը անկանոն կյանքի հետևանք ա,
դրա համար ել քաղաքում բժիշկները նրանից ձեռք
են քաշել, ուղարկել գյուղ:

3-րդ գյուղ.— Սուտն ու զորթը խաբար չեմ,
համա տուտ եմ, վոր Աինասն իրան սուտի հի-
վանդ ա ձևացրել և գեղը ուրիշ նախատակով ա յե-
կել:

Մուկուչ.— Թշնամու խոսքեր ա: Մի՛ք հավատա:

1-ին գյուղ.— Նրանից ամեն ինչ հավատալու ա:
Նրա թհար-թհուրից յերևում ա, թե նա ի՞նչ խել-
քի ու մաքի տեր մարդ ա: Ասում են, վոր նա
գործարաններում գործադուլ կազմակերպողներից
ա: Հարկավոր ա նրանից զգուշ լինել:

Խեչան.— Այսինքն:

1-ին գյուղ.— Այսինքն՝ նրա գլխին յեթե մի բան
պատահել ա, վայն եկել ա մեզ տարել, Սիրիբը
դեսն ենք թողնելու:

Մուկուչ.— Եդ ո՞վ ա քեզ եղպիս հասկացրել:

3-րդ գյուղ.— Ուրիշն ինձ բան չի ասել: Յես իմ աչքով եմ տեսել: (Խեչամն ու Մուկուչը ծիծաղում են): Ինչի՞ յեք ծիծաղում: Են որը նրան քյոխվի հետ խոսելիս տեհա, մնացի զարմացած... Եղ տնաքանդը վախ ասած բանը սկի չի իմանում: Խոսքերը կարկուտի նման վրա յա տալիս, աչքերիցը կրակ թափում... Քյոխվի բերանում թուքը ցամաքել եր, լեզուն կապվել: Մի խոսք ել ա չը կարաց ասի ու նրա ջուղարը տա:

2-րդ գյուղ.— Յես զարմանում եմ, եղ վո՞նց ա, չոր քյոխվան համբերել ա, դամչին չի քաշել, շինքակոթին տալով դուստաղ արել:

Հասան.— Մրանց գլուխը յարար քարի՞ց ա, թե յերկաթից, վոր չի ցավում: Եսքան խոսալում ախր ի՞նչ ա ածած, յես չեմ հասկանում... Զարդված, բեղարած, ունչպար խալիս եք, գնացե՛ք, քնեք դինջացե՛ք... Ի՞նչ եք յեկել, ես կես գիշերին խալիսին քնահարամ անում: Խոսալուն ել մի ժամանակ կըլնի... (Դուրս ե գնում):

Առաքել.— Ծիշտ ա ասում, խոսալով ընկանք, չի մացանք, թե լույսը վոնց բացվեց:

1-ին գյուղ.— Գնանք:

2-րդ գյուղացի.— Գնանք, եզուց կիրակի յա, ետր աշխատանքները մի քիչ շուտ վերջացնենք, գնանք տուն: Քանի գիշեր ա՛ տուն չենք գնացել: (Դուրս են գնում):

Բաղալ.— Նրանք գնացին իրանց գործին, վեր կացե՛ք՝ մինք ել գնանք մեր գործին, Մուկու՛ւչ, դու գնա յեգները քշի դան: Զաքարն ընչի՞ ուշացավ...

(Մուկուչի հետ դուրս ե գնում):

Խեչամ.— Ես լուսարացին «առավոտ լուսոն» ել չեմ իմանում, թե ասեմ: Վիզդ կտորի, տե՛ր Սհակ, խեղճ հորս յերկու հորթը կերար, մի որինավոր գրիլ - կարդալն ինձ չտովորեցրիր... (Դուրս ե գնում): (Բեմը սկսվում ե լուսավորվել: Խորհից

յսվում են խոսակցուքյան ձայներ: «Արա, յեզ-
մերը էջի՛»... «Ջեյրամին ձեմ տո՛ւր»... «Հո՛,
հո՛, հո՛, մարալ... հո՛, հո՛, Ջեյրամ»... իսկ մի
ուրիշը յերգում է)

«Ահա ծագեց կարմիր արև,
«Տաք ու պայծառ է որը,
«Դե՛, քաշեցե՛ք, սիրուն յեզներ,
«Առաջ տարե՛ք արորը»...

Տ Ե Ս Ի Լ 5

Գալուստ ազա և Համբարձում

Գալուստ.— Հը՛, ի՞նչ են անում:

Համբ.— Ձեն համաձայնվում:

Գալուստ.— Ի՞նչպես թե չեն համաձայնվում: Գնա,
նրանց կանչի՛ հստեղ:

Համբ.— Գալուստ աղա, կանչելդ դուր է: Նրանք
ասում են, վոր մենք մինչև մեր գործը չվերջացը-
նենք, ձերը չենք սկսելու: Ասում ա՛ հիմա կրու-
դոմ ազատություն է:

Գալուստ.— Ինչպե՞ս թե ազատություն: Ուրեմն
նրանք իրավունք են համարում Գալուստ աղի հա-
մար գործ չանի՞ն, աշխատանքը յերեսի վրա
թողնե՞ն... Ուրեմն նրանք ազատությունն եսպե՞ս
են հասկանում... Մեր յերկրում նրանց եղ տեսակ
ազատություն չի տրված: Պեղքները թող հավաքեն
գլխները, ինչպես վոր մինչև հիմա աշխատել են,
ենպես ել սրանից հետո դան աշխատեն:

Համբ.— Նրանք ասում են, վոր խորհրդային յերկ-
րում հողը գյուղացիներին, գործարանը բանվորին
վերադարձնելու որենք ա հրատարակվել, վոր եղ
որենքն իրենց ել է վերաբերում, իրենց վրա ել է
տարածվում:

Գալուստ.— Եղ ասողները շատ նհախ են անում,
գլուխները քարով են տալիս: Պորհրդային յերկ-
րի հետ մենք կապ չունենք: Հայաստանում մենք

մեր սեփական իշխանությունը, մեր սեփական որենքներն ունենք... վա՛յ նրան, ով եղ իշխանությունը չի ճանաչի և նրա որենքներին չի հստատակցի: Ուրեմն, դու ասում ես, վոր նրանք չեն համաձայնվում:

Համբ.— Չհամաձայնվելն ես տեսակ ա: Նրանք ուզում են առաջ իրենց գործը վերջացնեն:

Գալուստ.— Առաջ իրենցը, հետո իմը... Լավ, թող եղպես լինի, բայց թե վերջում իրենք կփոշմանեն:

Համբ.— Իմ կարծիքով նրանք մեղավոր չեն:

Գալուստ.— Քու կարծիքով, ուրեմն, մեղավորը յե՞ս եմ:

Համբ.— Վոչ ել դուք եք: Մեղավորը բուրրովին ուրիշ մարդ ա: Եղ մարդը, ճիշտ ա, ինքն ամեն տեղ չի յերևում, բայց թե նրա կատարած աշխատանքի արդյունքը ամեն տեղ յերևում ե...

Գալուստ.— Չեմ հասկանում...

Համբ.— Գալուստ աղա, յես քեզ վաղորոք զգուշացնում եմ. նա են տեսակ մի թունավոր ոճ ա, վոր վերջիվերջո ձեզ կվնասի: Նրա դեմ դուք ժամանակին միջոցներ ձեռք առեք, թե չե հետո ուշ կլինի:

Գալուստ.— Եղ ոճին կզցեմ վտարերիս տակ, կտրորեմ, նրա գլուխը կջախջախեմ, դու միայն նրա տեղը, նրա ով լինելն ինձ ասա:

Համբ.— Նրա տեղը, նրա ով լինելը դուք ինձնից լավ գիտեք:

Գալուստ.— Հասկացա... (Մտածում է):

Համբ.— Դե վոր հասկացաք, ել հետաձգելու ժամանակը չի: Հրեն քյոխվան հանավորների հետ կանգնած՝ խոսում ե: Գնամ նրան կանչեմ: Դուք նրա հետ ես խնդիրը լուծեք: (Դուրս է գնում):

Գալուստ և Բաղալ

Բ ա ղ ա յ ւ . — Ես անտեր սամին ել կոտրվելու ժամանակ դտալ: Կարծեմ մի վախտ յես ես թփերի տակ պահել եյի: Տեսնեմ՝ մնո՞ւմ աս:

(Թփերի տակ սկսում ե փնտրել):

Գ ա յ Ո Ւ Ս Մ . — Սպասի՛ր, եղ սամին դու հետո կտեսնես, վաղ չի: Լսի՛ր, Բաղալ ամի, հասակավոր մարդ ես, յես քեզ խղճում եմ, Յեղիշի տեղը դու մեղ ասա, միևնույն աս, մենք նրան կգտնենք և նրա հետ դու ել կպատժվես:

Բ ա ղ ա յ ւ . — Պատժվելուց յես չեմ վախենում, յես եմ որվանից եմ պատժվել, վոր յերեխես ջու պատճառով փախստական դառալ...

Գ ա յ Ո Ւ Ս Մ . — Նրա փախստական դառնալն ի՞մ պատճառով եր, թե ուրիշի, եղ կարևոր չի: Կարևորն են ե, վոր յեթե դու նրա տեղը չասես, յես ստիպված կըլնեմ կառավարության առաջ խնդիր դնել, վոր ձեզ մեր յերկրից տնով-տեղով աքսորեն: Լսի՛ր, ձեր տանը են նոր եկած մարդն ո՞վ աս:

Բ ա ղ ա յ ւ . — Ախպորս տղեն աս:

Գ ա յ Ո Ւ Ս Մ . — Ինչի՞ համար աս յեկել, ի՞նչ դործ ունի նա ետեղ...

Բ ա ղ ա յ ւ . — Հիվանդ աս, բժշկների խորհրդով մի քանի ամսով յեկել աս հանգստանա: Յես կարծում եմ, վոր դրա համար ձեզնից նախորդք թույլալու-թյուն չպիտի վերցնեն:

(Սամին վերցնում ե և դուրս ե գնում):

Գ ա յ Ո Ւ Ս Մ . — Լեզուները սկսում են յերկարել, հետները խոսալ չի լինում...

Գալուստ, Քյոլսվա և Համբարձում

Քյոլսվա.—Բարեւ, Գալո՛ւստ ազա:

Գալուստ.—Բարեւ:

Քյոլսվա.—Ասա տեսնեմ՝ ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել: Ինչի՞ համար ես ինձ կանչել:

Գալուստ.—Քեզ մոտ յես գանգատ ունեմ: Ի՞նչ պատիժ կտաս դու են մարդուն, յեթե տեսնես, վոր եղ մարդը կառավարութեան դեմ ե գնում և նրա որենքներին հակառակ դործ ե բռնում:

Քյոլսվա.— Ըտենց շաշերի հետ գործ ունենալը, ճիշտն ասած, մի քիչ դժվար ա:

Գալուստ.—Իսկ յեթե տեսնես, վոր եղ շաշը իր շաշութենով ուրիշներին ել ե շաշացնում:

Քյոլսվա.—Եղ տեսակ շաշերի շինքակոթից կրոնեմ, կզցեմ դամշու տակ, ենքան կտամ, մինչև վոր կխելոքանա:

Գալուստ.—Իսկ յեթե չխելոքանա ու իր իմացածը նորից շարունակի...

Քյոլսվա.—Եղ դեպքում նրա վրա ու ձեռքը կկապեմ և կուղարկեմ խելացնորների ապաստարան, թող նրան ենտեղ բժշկեն: Վճուլած և ստորագրված ա:

Գալուստ.—Ըղորմի հորդ, լավ վճուցիր:

Քյոլսվա.—Վճիռը կայացրի, բայց թե չիմացա եղ ինչերը ո՞ւմն ա վերաբերում: (Մտածում ե): Հը՛մ, իմացա, թե եղ եչն ում ախոռումն ա զըռում: Ծիշտն ասած, դրա համար յես ել եմ մտածել, վորովհետև եղ իշու քացին, վախենում եմ, մի որ ել ինձ դիպչի: Հարկավոր ա դրա պոչը վախտին խուզել:

Գալուստ.—Սուղելով բան չի դառնա, հարկավոր ե եղ պոչը տակից կտրել և դեն գցել:

Ք յ յ յ վ ա .— Դուք ինձ են ասեք, նրան մեղադրելու փաստեր ունե՞ք, թե հինց սրանից, նրանից լսած խոսք ու զրից ա :

Հ ա մ բ .— Պոսք ու զրից չի . . . հանդիորներին նա ինչ վոր ասել, ինչ վոր նրանց հետ խոսել ե, յես եստեղ պաղորոնի գրել և վկաներին ել տակին ստորագրել եմ տվել : (Գրուք յուներ ցույց ե տալիս) :

Ք յ յ յ վ ա .— Ձե', որինական գործ ես բռնել : Դատարարաններում յերեմի շուտով ատվակատու թյուն կանես :

Հ ա մ բ .— Եդ շնորքն ել վոր չունենամ, Գալուստ ադան ինձ մի բոպե չի պահի : Ես դայավլենին գրել եյի, վոր ձեղ դրավոր կերպով ներկայացնեմ, բայց քանի վոր գործը եսպես դատավորվեց, թույլ տվեք, վոր իմ դրածը յես ինքս կարդամ : (Կարդում ե) :

«Հարգելի և մեծապատիվ պարոն քյոխվա» . . .

Գ ա յ յ յ ս տ .— Ա' շաշ, դու եդ նամակ ես գրել, թե դայավլենի . . .

Հ ա մ բ .— Նամակի ձեռով սկսում եմ, դայավլենիի ձեռով վերջացնում :

Ք յ յ յ վ ա .— Դու լավ կանեյիք դայավլենիի ձեռով սկսեյիք, դայավլենիի ձեռով ել վերջացեյիք : Ինչեկիցե : Շարունակի՛ր :

Հ ա մ բ .— (Կարդում ե) : Ձեր ազնիվ ուշադրությունն եմ հրավիրում քաղաքից նոր յեկած Մինաս անունով մի վոմն «տիրոջ հավատարիմ ծառայողները լիզող դյադա, կամակատար ստրուկ» . . . Հա', չմոռանամ ասել, վոր եդ խոսքերն ինքն ա ինձ ասել, ու հմի նրա ասած եդ խոսքերը նորից յես իրեն եմ վերադարձնում :

Ք յ յ յ վ ա .— Են խոսքերը, ինչ վոր նա քեզ ասել ա, դա ինձ բոլորովին չի հետաքրքրում :

Հ ա մ բ .— Ճիշտ ե, ձեղ համար հետաքրքիր չի, բայց Գալուստ ադի համար, յես կարծում եմ, վոր հետաքրքիր կլինի :

Գ ա լ ու ս տ .—Գալուստ աղան եղ տեսակ ախմախ բաների համար գլուխ չի կտրում: Եղ զխկումը դեսը տուր, ինչ վոր ասելու յես, մի յերկու խոսքով բերանացի ասա՛, վերջանա դնա, ի՞նչ ես շարականի նման սխտը սհաթ յերկարացնում: (Ձայավիճիմն ձեռքից վերցնում ե ու պատում):

Հ ա մ բ .—Մտքիս թեւը կտրեցիք, չգիտեմ՝ ինչի մասին խոսեմ:

Ք յ յ վ ա .—Դու նրա մասին խոսա՛, թե նա հանդավորներին ի՞նչ ա ասել, նա նրանց հետ ինչի՛ մասին ա խոսել:

Հ ա մ բ .—Նա հանդավորների հետ հողը պարարտացնելու և նրանից առատ բերք ստանալու մասին ա խոսում:

Ք յ յ վ ա .—Հետո՞:

Հ ա մ բ .—Հետո, յեթե իրա խոսքերով ասելու լինեմ, «փոխադարձ ոգնության, համայնական աշխատանքի, միության համերաշխության» մասին ա խոսել:

Ք յ յ վ ա .—Գալուստ աղա, նրա ասածների մեջ հակապետական ու հակաորինակ յես վոչինչ չեմ տեսնում:

Գ ա լ ու ս տ .—Նշանակում ա, վոր նրա ասածների միտքը դու լավ չես հասկանում: «Համայնական աշխատանք»—«փոխադարձ ոգնություն»—«միություն»—«համերաշխություն» և այլն, և այլն: Դու կարծում ես սրանք քամու բերած անմիտ ու անխմաստ խոսքե՞ր են: Ձե՛, սրանք մտածված, մեկը մյուսից խորիմաստ դադափարներ են, և եղ դադափարները Ռուսաստանում բայլչեիկներն են հնարել... իսկ նրանց հնարած ամեն մի բանը հակապետական ե և հակաորինական:

Ք յ յ վ ա .—Այսինքն ի՞նչպես:

Գ ա լ ու ս տ .—Այսինքն ենպես, վոր եղ «Համայնական աշխատանք, փոխադարձ ոգնություն» նշանակում

և, վոր մարդիկ իրենց մասնավոր դործը, իրենց անհատական աշխատանքը թողնեն, ընդհանուրի մասին մտածեն, փոխադարձորեն միմյանց շահերը պաշտպանեն:

Թ յ յ յ Վ ա.— Հետո, նպատակը:

Գ ա յ Ն Ա Ա Ս.— Նպատակը են և, վոր յերկիրը տակն ու վրա անեն, ունեվորներին ու իշխանավորներին կոտորեն, վոր ել աշխարհիս յերեսին վոչ հողատեր լինի, վոչ փողատեր, վոչ քյոխվա լինի, վոչ գզիր, վոչ տերտեր լինի, վոչ տիրացու: Ուրիշ խոսքով՝ նրանց ուղածը հեղափոխություն ա, սոցիալիզմ, ազատություն, հավասարություն:

Թ յ յ յ Վ ա.— Դա չլնելու բան ա... հեղափոխություն չե, թեկուզ յերկրաշարժ լինի, յերկինքն ու յերկիրն ել վոր փուլ դա, Հայաստանում քյոխվաությունն ու գզիրությունը, տերտերությունն ու տիրացությունը մնացել ա, ելի կմնա... դրանք վերանալու բան չի... Գնանք, յես նրա գլխին մի ենպես ոյին խաղամ, վոր նա հեղափոխությունն ել մոռանա, ազատությունն ել ու հավասարությունն ել:

(Նրանք դուրս են գնում, իսկ Ջաֆարը Յեղիշի հետ խոսելով գալիս են: Յեղիշը ծպտված է: Յափնջիմ ուսերիմ և բաշլղը գլխովը փաքաքած):

Տ Ե Ս Ի Լ 8

Յեղիշ և Ջաֆար

Ջ ա ֆ ա ր.— Տեղեկություն կա, վոր Կարմիր Բանակը Բազմից արդեն դուրս ե յեկել: Նրանք, թեև դանդաղ, բայց հաստատ քայլերով առաջ են շարժվում: Նրանք մոտենում են միզ: Մենք ամեն բոպե կազմ ու պատրաստ սլիտի լինենք: Կոմիտեն մեզ այդպես ե հրահանդում:

Յ ե ղ ի շ.— Այդ բոլորը լավ ե, բայց...

Ջ ա ֆ ա ր.— Բայց ի՞նչ:

Յ Ե Ղ Ի Զ.—Այն, վոր նախքան Կարմիր Բանակի դալը, թշնամու դեմ անհավասար ուժերով մենք պիտի դուրս գանք:

Զ ա ֆ ա ր.—Անհավասար ուժ չենք: Մենք կը գերազանցենք: Կազմակերպութիւնն այդ ուղղութեամբ բավական մեծ աշխատանք ե տարել: Մեր մարտական շարքերն որ որի սովարանում են ու խտանում: (Խորքից լսվում ե խմբական յերգի ձայն): Մենք այդ խնդրի շուրջը յերկար խոսեցինք: Հանդիորների համար հաց բերող աղջիկները դալիս են. լավ չի, վոր նրանք քեզ տեսնեն: Քանի դեռ նրանք չեն յեկել, հարկավոր ե շտապ կերպով հեռանալ: Դե, յես դնացի: Տղաներին մեր կողմից կը բարեես: Յտեսութիւն:

(Դուրս ե գնում)

Յ Ե Ղ Ի Զ.—Յտեսութիւն: (Խմբական յերգի ձայնը հետզհետեւ մոտեցնում ե) Ինչ քաղցր յերգում ին: Վաղուց ե յես յերգի ձայն չեմ լսել: Նրանք մեր գյուղի աղջիկներն են: Կարծես բոլորը ծանոթ դեմքեր ին: Ախ, ինչպես կուզենայի նրանց մտախց տեսնել, նրանց հետ խոսել... Սպասիր, այն մեկը մեր Գյուլիզարն ե, մյուսը — Մանիշակը... այո, նրանք են: Նրանք այս կողմն են գալիս:

(Յեղիշը քագնվում ե ժայռի հետևում: Աղջիկները ծաղիկներով զարդարված, յերգելով գալիս են):

Յեղիշ, Գյուլիգար, Մանիշակ և մի խումբ աղջիկներ:

(Վերսկից հանկարծ քար է գլորվում, բոլորը սարսափած ոչնչանում ցրվում են գամագամ կողմի վրա: Յեղիշը դուրս է գալիս և շշուկով Մանիշակին կանչում):

Յեղիշ.— Մանիշակ, Մանիշակ, այս կողմն արի...

Մանիշ.— Աստված իմ, ձայնը ծանոթ է... բայց ո՞վ էք դուք... յես ձեզնից վախենում եմ...

Յեղիշ.— Մի՛ վախենա, Մանիշակ, յես եմ... (Բաշլուղը գլխից հանում է):

Մանիշ.— Յեղիշ... (գրկախառնվում են):

Ձայներ.— Մանիշակ... Մանիշակ...

Գյուլիգար.— (Խորքից) Աղջիկ, Մանիշակ, ո՞ւր մնացիր:

Մանիշ.— Նրանք ինձ են փնտռում:

Յեղիշ.— Քաշվենք այս կողմ մեզ չտեսնեն: (Թագնքվում են ժայռի հետևում: Իսկ Գյուլիգարը մյուս աղջիկների հետ գալիս են և զարմացած նայում):

Բոլորը.— Մենք տեսանք, վոր մի յափնջավոր տղամարդու հետ նա կանգնած խոսում էր:

Գյուլիգար.— Հողս ձեր գլխին. ձեր աչքին ամեն ժամանակ ու ամեն տեղ տղամարդ ա յերևում: Ձգիտեմ ի՞նչ իմացաք. թխականը կորցրած ճուտերի նման ամենքդ ճվճվալով մի կողմի վրա փախաք:

1-ին աղջիկ.— Ս.ս.ս. կարծես տղամարդու խոսակցության ձեն էր...

Գյուլիգար.— Դե, հիմա ել տղամարդու խոսակցության ձեն լսեցին...

2-րդ աղջիկ.— Խոսակցության ձեն չե, բայց կարծես ինչ վոր քար գլորվեց...

Բոլորը.— Վույ, հանկարծ բանդիտ չլինի...

Գ յ յ Ա լ ի գ ա ր . — Ըհ, հողս ձեր գլխին. ետքան հանդ-
վորների մեջ բանդիտը սիրտ կանի գա՞: Պեկեներդ
հավաքեք գլխներիդ: Հրե՛ն, դաշնիկներն ին:

1-ին աղջիկ. — Ըհ. հողս նրանց անարուս գլխին: Գիչ
մնաց թե ահուց լեղիս պատուէր:

2-րդ աղջիկ. — Են տունը քանդվածները վո՛րտեղ են
բարձրացել... պա՛հ պա՛հ, պա՛հ...

3-րդ աղջիկ. — Տես վոնց ել իրար դրկել ու քաղցր
զրից են անում: Նրանք անպատճառ մարդ ու կնիկ
կլինեն:

Գ յ յ Ա լ ի գ ա ր . — Ըհ, հողս գլխիդ: Մարդ ու կնիկ
իրար հետ զրից անելու համար ել ուրիշ տեղ
չգտա՞ն, յեկել քարափի գլուխն են բարձրացել:
Նրանք նոր սիրահարվածներ կլինեն, նստել իրար
սեր են բացատրում: (Բոլորը ծիծաղում են): Մի-
ծաղելու ժամանակը չի, գնանք Մանիշակին գրո-
նենք:

Բ ո լ ո ր ք . — Գնանք:

Բ ո լ ո ր ք . — Գնանք: (Յերգելով դուրս են գնում: Իսկ
Յեղիշը Մանիշակի հետ խոսելով գալիս են):

Տ Ե Ս Ի Լ 10

Յեղիշ և Մանիշակ

Մ ա ն ի շ ա կ . — Կու՛ժը վերցրի, գնացի աղբրից ջուր
բերելու: Հանկարծ տեսնեմ դ՛ու ենտեղ կանդնած
ես, ձեն եմ տալիս, չես լսում: Պոսացնում եմ,
չես խոսում: Սիրտս լցվեց ու սկսեցի լաց լինել:
Հենց եդ ժամանակ քնից արթնացա: Տեսա, վոր
յերազ ե:

Յ ե ղ ի շ . — Հետո՞:

Մ ա ն ի շ . — Հետո են, վոր ամբողջ ժամանակ քո մասին
եմ մտածում:

Յ ե ղ ի շ . — Մտածելու կարիք չկա: Եսոր, եզուց ա,
ամեն ինչ կվոխվի և վոչ միայն չերազում,

այլ ամեն ժամանակ մենք միասին կլինենք...

Մ ա ն ի շ 2.—Կատկածու՞մ եմ... Գալուստ աղան ինձնից ձեռ չի քաշում: Ամեն որ նա միք առն մարդ ա ուղարկում, և ծնողներս ամեն կերպ ուղում են ինձ համոզել... յես մերժում եմ և պատճառաբանում, վոր հիվանդ եմ: Դիտմամբ տնից դուրս չեմ գալիս: Սա առաջին անգամն է, վոր յես տնից դուրս եմ յեկել: Քեզ հանդիպելուց հետո յես վոչ մի դեպքում ել տուն չեմ վերադառնա: Ուր վոր դնաս քեզ հետ կգամ: Յես ուղում եմ միշտ քեզ հետ լինել, առանց քեզ յես մի որ չեմ ապրի... (լաց ե լինում):

Յ ե ղ ի շ 2.—Լաց լինելու կարիք չկա. հարկավոր ա մտածել, թե ինչ կարելի յե անել: Ինձ հետ յես քեզ կտաննելի, բայց ո՞ւր տանեմ... Թռչունի նման ետոր ետեղ ենք, մի ուրիշ որ բոլորովին այլ տեղ: Մեր թշնամիները մեզ հանգիստ չեն տալիս որ ու գիշեր. նրանք մեզ հալածում են. մենք շարունակ վտանգի յենք յենթարկում մեր կյանքը... քու կյանքը նույնպես վտանգի յենթարկել յես չեմ կարող... այո՛, չեմ կարող...

Մ ա ն ի շ ա կ.—Ի՞մ կյանքը միշտ ել վտանգի յե յենթարկված... Գալուստ աղան մի որ խնդիրը կարուկ կղնի և մերոնք իմ կամքի վրա կբռնանան... յես վախենում եմ...

Յ ե ղ ի շ 2.—Լավ, ինչպես վոր դու վորոշել ես, թող եղպես ել լինի... Գնանք:

Մ ա ն ի շ ա կ.—Գնանք...
(Նրանք դուրս են գնում: Գյուլիգարը և մյուս աղջիկները Մանիշակ, Մանիշակ կանչելով, գալիս են):

Բ ո լ ո ռ ք.—Ձկա:

1-ին աղջիկ.—Բա հիմա ի՞նչ պտի անենք:

2-րդ աղջիկ.—Ի՞նչ պտի անենք:

- 3-րդ աղջիկ.— Եսքան փնտռեցինք, վոր չկա:
- 1-ին աղջիկ.— Աղջկերք, սպասեք յես ձեզ մի բան ասեմ: Մանիշակը դուցե զնացել է իրենց տուն:
- Բոլորը.— Տիշտ է ասում, զնացած կլինի իրենց տուն: Իսկ մենք դուր տեղը նրան փնտռում ենք: (Բոլորը ծիծաղում են: Վարքին բանջարով լիքը սուփրեմ շալակին ներս է գալիս):
- Վարքի.— Ձեր ձայնը սաղ հանդը վեր ա կալել: Բա դուք չե՞ք ամաչում: Արուսներդ կտրվի: Եսքան հանդվորների առաջ դուք վո՞նց եք կանդնում ու յերգում:
- Գյուլիգար.— Վարթի՛ բաջի, հանդվորները հեռու յեն, նրանք մեզ չեն տեսնում, նրանք մեր ձայնը չեն լսում... (Աղջիկները ծիծաղելով և յերգելով գնում են):
- Վարքի.— Վոր չեն տեսնում, դուք ըտենց պաի դժվե՞ք ու իրար դլխովն ընկնե՞ք... Վատներս բեզարել ա, նստեմ ես աղբրի կողքին, քիչ զնջանամ:
- (Շալակը դնում է մի կողմ և աղբյուրի մոտ նըստում):

Տ Ե Ս Ի Լ 11

Վարքի և Ավո

(Ավոն փոքրիկ խուրջինը ուսին, չումախը ձեռքին գալիս է):

- Ավո.— Բարի աջողում, Վարթի՛ բաջի:
- Վարքի.— Այ աստու խերն ու բարին քեզ, Ավո՛ ամի, բարով հազար բարի յեկար:
- Ավո.— Առավոտվանից նշարք չեմ դրել բերանս: (Նստում է աղբյուրի մոտ, խուրջինից հաց է հանում և սկսում է ուտել): Վարթի՛ բաջի, արի նստի հաց ուտենք:
- Վարքի.— Շնորհակալ եմ, դու անուշ արա: Դեպք գալիս Մինասին տեհա: Խելի վախա նստած:

խոսում ելինք: Հարց ու փորձ եր անում: Վո՞նց
ես ապրում, որդ վո՞նց ա անցնում... գլխիս
եկածը գլխի մեկ-մեկ նրան պատմեցի... խեղճ
տղան պատմածս լսեց ու ինքն ել դարդոտվեց:
Անասելի խելքով ու ջիզարով տղա յա...

Ավո.—Մեղքով ու ջիզարով ա, բայց թե մեր գեղում
մի փարա մարդկանց աչքի փուշն ա դառել...
Նրան չեն սիրում: Ասենք սկի հարկավոր ել չի,
վոր եղ մարդիկ նրան սիրեն:

Վարքի.— Քյամբախտ տղա յա, ըսենց յերեսա յեր,
վոր հերն ու մերը մահացան: Հմի աստված պա-
հի, ինքը մեծացել, մեծ տղա յա դարձել, իսկ
ծնողները չկան, ափսոս, կենդանի չեն, վոր նրան
տեսնեն, ուրախանան...

Ավո.—Վերցրո՛ւ, Վարթի՛ բաջի, կտանես, կտաս
երեսեսքը կուտեն: Վերցրո՛ւ, Վարթի՛ բաջի, ամա-
չելու, քաշվելու տարի չի:

Վարքի.— Ծնորհակալ եմ, աստո՞ժ քեզ յերկար որ ու
ուժրք տա, վոր դու քո խեղճ տեղով յեթիմներիս
համար ես մտածում... Բերանիդ թիքեն կտրեցիր,
նրանց ասիր:

(Վարքի՞ն հացը վերցնում, դնում է բոխչի մեջ):

Ավո.—Եղ ի՞նչ ասելու խոսք ա, Վարթի՛ բաջի: Եղ
մի թիքեն ավելի կերած, կամ պակաս, ի՞նչ
նշանակություն... յեթիմներիդ կշտացնելու հա-
մար աչուրի ու ցորենի լիքն ամբարներ ա հար-
կավոր, եղ յես չունեմ... (Զիբուխը լցնում է ու
սկսում է ծխել):

Վարքի.— Ունեցողն ել չի տալիս...

Ավո.— Չեն տա, Վարթի՛ բաջի, չեն տա... ուժ ի՞նչ
վեջն ա, թե աշխարհը սովից կոտորվում ա: Ուժ
ի՞նչ վեջն ա, թե մեր յեթիմները քուչեքումը
թափված, շների բերանից հոտած վոսկորներ ին
խում, իրենք ուտում... Ուժ ի՞նչ վեջն ա, թե
մեր անտուն, անտեր չափահաս աղջկերքը խուլ
ու մութ անկյուններում, մի կտոր ցամաք հացի

համար իրանց պատիւը ու նամուսն են ծախում...
Ա՛խ, Վարթի՛ բաջի, ասելու շատ բան կա, համա
ամեն բան ասել չի ըլում...

Վ ա ր ք ի.—Ըտենց ա, Ավո՛ ամի, ըտենց ա...

Ա վ ո.—Ամեն բան ասելու համար լեզուներս կապված
ա, բերաններս փեչառված... Ամեն մի տեղից վեր
կացող շաթուքյասան մաուզերը կապել ա կող
քին, պատրոնները շարել դռին... ձեն հանել,
խոսալ չի ըլում... դուխները տաքացրել են, աչ
քերը արնով լցրել. կույի համար նրանց ջանք յեռ
ու քոր ա գալի... Կույի չելած տեղը՝ նրանք
զոռով կույի են ստեղծում: Որ չի լինում, վոր մի
թուրքի դեղ չքանդեն ու նրանց ունեցած—չունե
ցածը թալանեն... Բոյուք—Վեդու կույի՞ տակ,
Չանգիրասարի թալա՞նն ասեմ, վո՞ր մեկն ասեմ...

Վ ա ր ք ի.—Յերեխիս եղ կույիներում տարան սպանե
ցին յեթմներս վիզը ծռած, ձեռքը ծոցներումը
թողին... (Լաց ե լիմում): Մի աչխատող ձեռք
դրանց վո՞րին հասցնի... Խեղճ հալիվորս ի՞նչ
չաբչարանքով, ի՞նչ նեղությունով աչխատանքի
յա դուրս գալիս, անիծվածները գալիս, խանդա
րում են, չեն թողնում, թե հանգիստ սրտով իր
գործն անի... Որը տասն անգամ գալիս են յեզնե
րը ձեռիցը իլում, իրան ել հետը կոռ տանում...
պարտքի տակ խրվել ենք... տանը որո՞ւս ուտելու
հաց չունենք... (Լաց ե լիմում):

Ա վ ո.—Դարդ մի՛ անի, Վարթի՛ բաջի, սիրտդ ոյի՛նդ
պահի... նեղ որերի լեն որն ել կդա... յեթիմ
ներիդ ել աստված ողորմած ա... (Զիրույի
մոխիրը քափում ե ու նորից լցնում ու քաշում):

Վ ա ր ք ի.—Յեթիմներիս աստված ել ա մտացել,
մարդիկ ել:

Ա վ ո.—Ըտենց չի, Վարթի՛ բաջի, ըտենց չի... Յե
թիմներիդ համար ելմտածող մարդիկ կան... (Ա
կանջիմ) Եղ մարդկանցից մեզ մտտ ել են յեկել...
նրանք բոլոր քաղաքներում ու գյուղերում ման

են դալիս... Քյասիբ քյուուբ խալիսի քաշած նեղ
որը տեսնում են... Նրանք մի բան կանեն...

Վարթի.— Լսում ենք ու չենք տեսնում...

Ավն.— Կտեսնենք, Վարթի՛ բաջի, կտեսնենք... Եղ
որերը մեզնից շատ հեռու չեն. ես սունկի պես
բանած բուրժուական փոքրիկ պետութունները
յերկար չեն դիմանալու: Եսոր, եղուց ա, բաթ-
միչ են ըլելու, գնան, կորչեն... Լսի՛ր, Վարթի՛
բաջի, ես ինչ վոր ես քեզ ասում եմ, դու ուրիշին
չասե՛ս... (Խոսելով դուրս եմ գնում: Իսկ Ջաֆա-
րը, Մուկուչը, Խեչոն, Առաֆելը և Հասամը գալիս
են, չարդալի տակից յուրաքանչյուրն իր սուփ-
րեմ վերցնում և աղբյուրի մոտ նստում ու սկսում
ե մաշել):

Տ Ե Ս Ի Լ 12

Ջաֆար, Մուկուչ, Առաֆել, Հասամ, 1-ին և 2-րդ
գյուղացիներ, գզիք և հետո հանդապահ

Ջաֆար.— Չորրազոռի աշխար ա. լավ հողամասերը
դարդուղի ճանապարհներով իրենք սեփականել են,
իսկ տակի մնացած քարոտ ու քոլոտ անպեռք
հողամասերը թողել են մեզ: Դե արի, ջանդ դուրս
դա, խեղճ ու չքավոր գյուղացի, գիչեր-ցերեկ
տանջվի, չարչարվի, մատներով ու յեղունդներով
եղ հողը չանդուի, փորփորի, թե դրանից բան ա
դուրս դալու, վոր դրանով տուն պահես, կառա-
վարության հարկը վճարես; տոկոսներով պարտ-
քըդ տաս:

Մուկուչ.— Մեր տեղ ես քարելը լեզու կառնեյին
ու կխոսեյին, իսկ մենք լռել ու պապանձվել ենք:

Բուռը.— Լռելով բան դուրս չի դա, ձեններս պեռք
ե բարձրացնենք: (Գզիքը մերս ե գալիս):

Գզիք.— Ձեններդ վոր բարձրացնեք, ձեր ձենը
կտրելը դժվար ա: Կամ թե չե ձեն բարձրաց-
նելով, դուք կարծում եք, նոր հողարածանու-

Թյուն ա ըլնելո՞ւ, ձեզ նոր հողամասեր են տա-
լո՞ւ:

Ձ ա ֆ ա ր.— Յեղածներն ել ձեռներիցս կխլեն, նրանք
ձեզ հոժար կամքով վոչինչ չեն տա...

Գ գ ի ր.— Վոր չպահեք, իհարկե, վոր վխլեն: Հրեն
թշնամին քթներին տակ կանգնած ա:

Հ ա ս ա ց.— Հարցնելն ամոթ չլնի, վո՞ր թշնամու
մասին ա քո խոսքը:

Գ գ ի ր.— Իմ խոսքը քու հավատակիցների մասին ա,
վոր հրես պատրաստվում ենք նրանց քիթն ու
պոռունկը մի լայլ ջարդենք, Ղարսը ձեռքներիցը
խլենք:

Հ ա ս ա ց.— Քիթ ու մուռ ջարդելուն դաշնակցական-
ները սովոր են: Նրանց փեշակն ա...

Գ գ ի ր.— Ձենդ կարի', ախմա'խ, դամչիս կքաշեմ,
կաշիդ կպլոկեմ: Հայի դյուղում ապրում ես,
բավական չի, համարձակվում ես դաշնակցական-
ների հասցեյին խոսալ: Մրա համարձակությունը
տես: Լսեք ի՞նչ եմ ասում, նոր հրաման ա: Հաց-
ներդ կերե'ք, վերջացրե'ք, դնացե'ք յեղները քշեք
դա: Եսոր դուք բոլորդ կոռ պտի դնաք:

Ա ն ա ֆ ե լ.— Աչքներս լույս: Յերկու որ չկա՝ կոռից
վերադարձել ենք, եսոր նորից կոռ են տանում:

1-ին գ յ ու ղ ա ց ի.— Մի յեզ վեր ե ընկել, սատկում
ա, լուծը գետնին ա մնացել: Եդ կոռ դնալու հը-
րաման տվողները թող բարեհաճեն յեզան հախը
վճարեն, դնամ մի յեզ առնեմ, վոր ուզած ժա-
մանակ առանց խոսալու դուրս դամ:

2-րդ գ յ ու ղ ա ց ի.— Հրեն խոփիս բերանը ծռվել
ա, դարբնին դրստիլ տալու համար փող չունեմ:
Եդ հրաման տվողները դրա համար թող մտածին:

Գ գ ի ր.— Դուք եդ ի՞նչ տեսակ եք խոսում:

Ձ ա ֆ ա ր.— Ի՞նչ տեսակ ենք խոսում, յեղները բո-
լորովին ուժից ընկած են, հազիվ հազ մեր գործն
են անում. նրանք կոռ դնալ չեն կարող:

Գ գ ի ր.— Դրանք դատարկ խոսք ու գրից ա: Ես որվա

կողը սովորական կոտերից չի: Հրամանն ա յեկել:
Ձորքը տեղաշարժությունն ա կատարում: Ռազ-
մամթերքը տեղափոխելու համար բոլոր տեսակի
փոխադրական միջոցներն ու քաշող ուժը մորիլի-
զացիայի յեն յենթարկվում:

Մ ու կ ու չ.—Ելի կռիվ հոտ ա դալիս:

Ա ո ա ֆ ե յ լ.—Ա, քննեքս լույս, վաղուց ա կռիվ չեք
յեղել:

1-իմ գ յ ու լ Պ ա ց ի.—Կռիվ չե, աշխարքն ել վոր իրար
դլխով ընկնի, յես տեղից շարժվողը չեմ:

2-րդ գ յ ու լ Պ ա ց ի.—Վոր վիզս կտրեն ել, վոտս վոտի
աղաք չեմ դնի, բոլ ա, քանդվեցինք...

Գ գ ի ր.—Դուք եղ ի՞նչ տեսակ եք խոսում, կառա-
վարությունը վոր իմանա, եղ խոսքերի համար
դիտե՞ք ձեզ ինչ կանի:

Բ ո լ ո ր ք.—Ինչ ուզում ա՝ թող անի:

Ջ ա ֆ ա ր.—Կառավարությունը թող իր համար նախ
փոխադրական միջոցներ ստեղծի, հետո կռիվ
ու պատերազմի մասին մտածի:

Բ ո լ ո ր ք.—Մենք կռիվ չենք ուզում:

Գ գ ի ր.—Ձեզ ո՞վ ա հարցնում՝ ուզում եք, թե չե:
Կառավարության հրամանն ա, պատրաստվեք,
ես ա դալիս եմ: (Գնում ե):

Ջ ա ֆ ա ր.—Կռիվ դնալը կառավարության հրամանն
ա, կոռ դնալը կառավարության հրամանն ա,
վաշխառուններին հրեշտվոր տոկոսներով պարտք
տալը կառավարության հրամանն ա... եղ հրա-
մաններով ետոր ամենքը մեզնից պահանջում են,
խսկ եղ պահանջներն արդյոք մենք բավարարելու
հնարավորություն ունե՞նք: Դրա մասին վոչ վոք
չի մտածում:

Խ Ե չ ա մ.—Քանդված յերկիր ա, տեր ու տիրական
չկա:

Ա ո ա ֆ ե յ լ.—Յես ձեզ ասեմ, թե վոր ես անգամ ել
մենք կոռ դնացինք, մեր սայլերից ու լծկաններից
բոլորովին ձեռք պտի քաշենք:

Մ ու կ ու չ .— Ծիշտ ա ասում . են տոաջին անգամն
ել, վոր դնացինք, սայլերի մի մասը ճամբին
կտարվեց, իսկ մի մասն ել զորքի հետ դնացին
ու ել հետ չեկան: Յեվ ետոր մեր դյուղացիներից
չատերը վոչ սայլ ունեն, վոչ լծկան:

Հ ա ս ա մ .— Գյուղացին վոր լծկան չունեցաւ, ել ինչի՞
յա պետք . վզից քար կապի, տար դցի ջուրը:

Ա ն ա լ ի ի .— Հրես գզիբը նորից եկաւ:

Գ գ ի բ .— Դուք դեռ ետե՞ղ եք, ախպեր, ես ի՞նչ տե-
սակ ժողովուրդ ա: Կառավարութեան հրամանը,
վոր մի ուրիշը լսի, գլուխը կկորցնի, իսկ սրանք
արխային նստել, ճաշում են: (Համդայախը վա-
զելով անքս ե գալիս):

Հ ա մ ղ ա պ ա հ .— Ի՞նչ ես կանգնել, տակից գլխից
խոսում: Արի՛, քոխվան քեզ կանչում ա:

Գ գ ի բ .— Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել:

Հ ա մ ղ ա պ ա հ .— Ոհանջանենց Կարոյի անասունը
մտել ա Մալումանց Ալազի բաղը, ծառերը
փչացրել, հիմի նրանք կանգնել կոչում են, քու
ներկայութունը կարեվոր ա:

Գ գ ի բ .— Դե վոր ըտենց ա, գնանք: Իսկ դուք պատ-
րաստովե՞ք առավոտը ծեղը դեռ չբացված արողնի
պունկտում լինել: Ովքեր նշանակված ժամա-
նակին չներկայանան, հինգ հարյուր մանեթ
չտրաֆ պտի տան, կամ թե հինգ ամիս բանտում
նստեն: (Գնում են):

Ջ ա ֆ ա ր .— Դրա մասին դեռ մենք կմտածենք...

Խ ե չ ա մ .— Տնաքանդն ենքան խոսաց, վոր յերկինքն
ել սկսեց վորոտալ: (Ուժեղ ամպրոպ):

Ա ն ա ֆ ի .— Անձրե ա գալու, վե՛ր կացեք: (Բաղայր
չտալ անքս ե գալիս):

Նույնք, Բաղալ, հետո խմբապետ ու մաու-
գերիստներ

Բ ա ղ ա լ .— Չաքա՛ր ջան, են անիծվածները Մինասի
քամակից ընկած՝ ման են գալիս:

Ջ ա ֆ ա ր .— Նա հմի դալու յա ետեղ. Հարկավոր ա
նրան դդուչացնել, վոր չդա: (Ջաֆարը շտապ
դուրս ե գնում):

Խ ե չ ա ն .— Յերանի Մինասին գտներ... յես վախում
եմ նրան չգտնի:

Մ ու կ ու չ .— Եղ տնաշենը մի տեղ չի նստում...

Բ ա ղ ա լ .— Ես գշեր, Հակառակի նման, փիս յերազ
եմ տեսել... (Նրանք ուզում են գնալ, խմբապետը
մաուգերիստների հետ մերս ե գալիս):

Խ մ ր ա պ ե տ .— Ո՞ւր եք գնում... սպասեցե՛ք...

Մինասին տեղը ձեզնից ո՞վ կարող ե ինձ ասել...

Խ ե չ ա ն .— Նրա տեղը մենք չգիտենք...

Խ մ ր ա պ ե տ .— Չգիտե՛նք... գուցե և գիտեք, բայց
չեք ուզում ասել... Վոչինչ... մենք նրան կը-
գտնենք... սրիկանե՛ր... (Դուրս են գնում):

Մ ու կ ու չ .— Վայն յեկել, մեղ տարել է, յեթի
Մինասին գտել են... Գնամ նրա հետեից...
(Դուրս ե գնում):

Բ ա ղ ա լ .— Ամենքդ մի կուի վրա գնացե՛ք: Նրան
ասե՛ք՝ թող ես քարափներում ծածկվի... նրանց
աչքին չերևա... մինչև տեսնենք ի՛նչ ա գալիս
դլիսներս: (Դուրս են գնում: Բեմը միստոժամանակ
դատարկ ե: Ուժեղ վորտ: Ավոն ապառաժի
գլխին կանգնած՝ իր վոչխարներն ե հավաքում):

Ավո, Մինաս, հետո խմբապետ և մաուգերիստներ

Ա վ ո .— Թփր՛ոս... հե՛, հե՛, հե՛, Թփրոոս... Ե՛հ,
հե՛, հե՛, ... ա՛յ անլեզու հեյվաններ, ի՞նչ եք

գլխներդ կորցրել, ո՞ւր եք գնում... (Սրբնգր
նվագելով հեռանում է: Ուժեղ վորոտ ու փայլակ:
Մինասը հրացանը ձեռքին գալիս է):

Մինաս.— Խեղճ ու թշվառ Այր... այս փայլատա-
կող շանթ վորոտի մեջ չի լսվում թո՛ւ սրնդի
ձայնը... յերկնքի ու յերկրի ահեղ կռիվն է
այստեղ: Մաքառման ու պայքարի որհասական
այս ժամին սրնդի այդ քաղցր ու հմայող մեղեդու
տեղ բողոքի ու ըմբոստացման յերգը հնչեցրո՛ւ...

Ջաֆարի ձայնը.— Մինա՛ս, Մինա՛ս... դե՛սն
արի... դե՛սն արի...

Մինաս.— Յեկա: (Դուրս է գնում): (Մաուզերիստ-
ները խմբապետի հետ ներս են գալիս):

Խմբապետ.— Նա այս կողմն անցավ... հետևե՛ք
նրան... (Դուրս են գնում: Հարդառատ անձրև,
փայլակ, վորոտ):

Տ Ե Ս Ի Լ 15

Խեչան, Առաֆել, Հասան, հետո հանդապահ
(վագելով գալիս են մտնում չարդալսի տակ):

Հասան.— Ջահրումար անձրևն ես ի՞նչ յաման վրա
տվեց:

Առաֆել.— Մենք մի կերպ տեղ հասանք... վա՛յ
նրան, ով չորումը բաց յերկնքի տակն ա մնա-
ցել...

Հանդապահ.— (Խորփում) Արա, փախեք հե՛յ, հե-
ղեղ է փախե՛ք... հեղե՛ղ է:

Խեչան.— Արա, դու ի՞նչ ես թո՛ւ հարայ-հրոցով
խալխին լեղաճաք անում: Գիղի խալխն ենքան
եղ հեղեղից չեն վախենա, ինչքան թու եղ ձենիցը:

Հանդապահ.— Ջահնդամը, թե կվախենան. բա վոր
հեղեղի ուխտն ընկնեն, լա՞վ ա: Արա, փախե՛ք,
հե՛յ, հեղեղ ա, հեղեղ ա՛... (Կանչելով դուրս
է գնում):

- Առաքել.—Մեր գլխին քաշ ելած ես սև ու մութ
ամպերը մեզ լավ բան չեն խոստանում...
- Խեչամ.—Ես անձրևը կաղձես կտրվելու միտք չունի,
քանի դնում, վարարում ա...
- Հասամ.—Անձրևից մնաս չի դա, յես կարկուտից
եմ վախենում: Կարկուտը վոր դա, մեր ցանքը
քոռ ու փուչ կանի...
- Առաքել.—Վա՛յ, չորանա լեզուդ, Հասա՛ն, քո
ասելն ու կարկուտի դայը մեկ ելավ... (Մու-
կուչը՝ ժայռի գլխին կանգնած):
- Մուկուչ.—Արա, փախե՛ք, ե՛հեղեղ ա, հեղեղ...
Խեչամ.—Են տնաքանդն ո՞ւր ա բարձրացել: Արա,
Մուկո՛ւչ... (Սաստիկ վորտու ու փայլակ):
- Մուկուչ.—Հե՛յ...
Խեչամ.—Մ՛յ չոռ, զահրումա՛ր: Արա, տնաքանդ,
իծի նման ի՞նչ ես բարձրացել եդ քարափի գը-
լուխը: Քանի կայծակը չի խփել, քեզ շանսատակ
արել, վե՛ր արի, կորի՛:
- Մուկուչ.— Արա, մի յեկե՛ք թամաշա արեք, պա՛հ,
պա՛հ, պա՛հ, չտեսնված հեղեղ ա... Հազար
փթանոց քարեր ա գլորում... աթղահա ծառեր
ա տակահահան արել ու տանում... արա, փախե՛ք,
ե՛հ, հեղեղ ա՛, հեղեղ ա՛: (Հեռանում ե):
- Առաքել... Յես զարմանում եմ, ի՛նչի՞նչ ես հեղեղի
մասին Յեփրեմ վերդում վոչինչ չեն գրել:
- Հասամ.—Գրած վոր ըլեր՝ մեր պապերը յերկնքին
հասնող են բարձր սարերը թողած, չեյին դա ես
դետի դրադին տուն չինի, վոր հմի հեղեղը բարձ-
րանա, քչի ու տանի...
- Խեչամ.—Ձեր խելոք ջանին միռնեմ, վոր եսոր
ամենքդ ել իմաստուն եք դառել և ձեր պապերին
ել չեք հավանում... Ես դետն առաջներում մի
բարակ առու յա ըլել: Եդ հմի յա, վոր ըտենց
մեծացել ա ու իր հունից դուրս ա դալիս... (Խոր-
ֆում աղմուկ, իրարանցում: Յեկեղեցու գանգերը
խփում են, վորպես տագնապի նշան):

Առաքել.—Ես ի՞նչ բան ա... ես ի՞նչ դալժադալ
ա...

Խեչաճ.—Յեկեղեցու զանգերը տալիս են...

Հասաճ.— Գեղին անպատճառ մի փորձանք ա պա-
տահել: (Մուկուչը վազելով գալիս է):

Տ Ե Ս Ի Լ 16

Նույնի և Մուկուչ

Մուկուչ.— Ի՞նչ էք մտել չարդախի տակ, գլուխ-
ներդ ազատում... Հեղեղը գեղն ա հասել...
դուրս եկեք դնանք...

Քուլարը.— Գնա՛նք, գնա՛նք... (Գնում են):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

4-ՐԴ Պ Ա Տ Կ Ե Ր

Բեմը ներկայացնում է գյուղի հրապարակը: Գյուղացիները հավաքվել, հեղեղի թողած հետևվանքների մասին են խոսում: Խորհրց ձայներ. «Յերեսես կորավ... մարդս չկա... ախպերս ո՛ւր ա...»
և այլն:

Տ Ե Ս Ի Լ 1

Քյոնյվա, տիրացու, վարքի, Առաքել, Խեչան, Մուկուչ, Հասան, 1-ին և 2-րդ գյուղացիներ և ուրիշները

Քյոնյվա.— *Ղալմաղալ մի՛ք անի... ղալմաղալով բան դուրս չի դա... Հրես հանդիորները եկան, թողեք տեսնենք՝ նրանք ի՛նչ են ասում...*

Խեչան.— *Հեղեղը ո՞ւմ տունն ա քանդել... Ո՞ւմը ինչ վնաս ա տվել...*

Բոլորը.— *Ասե՛ք մենք ել իմանանք:*

Քյոնյվա.— *Հանգստացե՛ք, վոչինչ չկա... Հեղեղը գեղին մեծ վնաս չի տվել... ղրաղի տներն են մի քիչ քանդվել...*

Տիրացու.— *Ասենք՝ ղրանք ել հենց քանդվելու բան եյին... Հեղեղն եկավ, վորը քանդվելու յեր՝ քանդվեց, վորը մնալու յեր՝ մնաց...*

Բոլորը.— *Ի՞նչ ա նշանակում, վորը քանդվելու յեր՝ քանդվեց... վորը մնալու յեր՝ մնաց...*

Խեչան.— *Ինչի՞ սեւեւան ուրիշի տներն ել չքանդեց... Ինչի՞ սեւեւան ել, սովն ել, հիվանդու-*

Թյունն ել գեղի զրաղի տներն են մտնում, մեր քանդվող տներն են միշտ քանդվում...

Մ ու կ ու չ .— Ընչի՞ եղ հեղեղը, եղ սուլը, հիվանդու-

թյունը հարուստների տներն ել չեն քանդում...

Խ ե չ ա մ .— Ինչո՞ւ նրանց տներից ել սուռ ու չիվանի՞

ձենը չի լսվում...

Ա ն ա ֆ ե ի .— Եղ սուռ ու չիվանը մենակ մեզ համար

ա ստեղծվե՞լ...

Բ ո լ ը ր ք .— Եղ դահրումար հեղեղն ել, սուլն ել,

հիվանդությունն ել քյասիրի տներն ա միշտ մտնում,

նրանց տներն ա միշտ քանդում...

Տ ի ր ա ց ու .— Եղ ինչե՞ր եք դուք մտածում... եղ ի՞նչ

խոսքեր եք դուք խոսում... ուշքի յեկե՛ք... փոր-

ձանքը վոր դալիս ա, նա չի հարցնում, թե ու՛մ

տունն ա մտնում... եղ հեղեղը սուլորական հե-

ղեղներից չեր, դա աստվածանից ուղարկած,

յերկիրնիցից յեկած պատիժ եր, վոր յեկավ յերևաց

ու անփորձ անցավ...

Ք յ ո յ Վ ա .— Անփորձ չեր անցնի, յեթե գետի զրաղի

են մեծ չինարին չըլներ, եղ հեղեղը գեղը սրբելու

յեր տանի...

Գ գ ի ր .— Յես իմ աստոծը՝ քյոխվան ճիշտ ա ասում:

Գետի զրաղի են մեծ չինարին թե վոր չլներ,

եղ հեղեղը ամբողջ գյուղը սրբելու յեր տանի.

գեղում ել վոչ հարուստի տուն եր մնալու,

ել վոչ քյասիրի...

Տ ի ր ա ց ու .— Նշանակում ա՝ ասուռ կամքը, նրա

նախախնամությունն եր, վոր ետ չինարին իր տեղում

անասան մնաց, և մեր ժողովրդի բախտը ետ ծառի լինել—

չլինելուց եր կախված: Ուրիշ խոսքով՝ աստված խղճաց ու իր ամենակարող զորությամբ

մեզ ոգնության հասավ և փրկարար ծառն իր տեղում հաստատ

մնաց: Յեվ ետր ամեն մի հավատացյալ հայ քրիստոնյայի սուրբ պատականությունն

ա գնալ յեկեղեցի, սրբերի առաջ ծունր դնել, աղոթք անել,

վոր նախախնամու-

Թյունը նրա արմատներին եւ ավելի ուժ ու զորու-
թյուն տա, վոր նրա ազատարար ու փրկարար
ճղները չվաք անեն ձեր գլխին և խնամող ճոր
նման ամեն մի փորձանքից մեղ պահեն ու պահ-
պանեն... (Ձեռքերը յերկինք պարգած՝ աղոթում
ե) :

(Մարիամը լաց լինելով՝ Բաղալի հետ գալիս ե) :

Տ Ե Ս Ի Լ 2 .

Նույնք, Բաղալ, Մարիամ և հետո հանդապահ

Քյոն յվա.— Մարիամ բաջի, ընչի՞ համար ես լաց
լինում... Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել...

Մարիամ.— Հանդավորներն եկան, Չաքարս չկա...
Վախում եմ նրան մի բան պատահած ըլի...

Քյոն յվա.— Մի՛ք վախի, նրան բան չի պատահի:
Ձեր Չաքարը գիրքիում ընկած են վախասներիցը
չի, վոր հեղեղը նրան քշի, տանի: Դուք անհոգ
կացեք, Ձեր Չաքարը խեղդվող պտուղ չի: Մինասի
հետ նա նստել, վեր ա կացել. հեղեղից ազատվե-
լու հնարը նա նրանից սովորած կլինի: Հրես հան-
դապահն եկավ, նրանից կհարցնենք, կիմանանք:
(Հանդապահը քրջված շոքերով մերս ե գալիս):
Հը՛, ասա տեսնեմ, Գյունեյի արտերից ի՞նչ խա-
րար ես բերել: Ասում են, վոր կարկուտը ցանք-
սին մեծ վնաս ա տվել:

Հանդապահ.— Գյունեյի արտերը յես չեմ գնացել:

Քյոն յվա.— Ինչի՞ չես գնացել... շուն շան վորդի՛...
(Մտրակով խփում ե): Կաշիդ կպլոկեմ, խելքդ
ո՞ւր ա գնում...

Հանդապահ.— Քյոխվա՛ ջան, կյանքիդ զուրբան,
մի՛ խփի, թող ասեմ...

Քյոն յվա.— Վոր չես գնացել, ի՞նչ պիտի ասես...

Հանդապահ.— Քյոխվա՛ ջան, հենց են ա՛ ուզում
եյի գնամ, կարկուտն ու անձրևը մի բաշ վրա
տվեց ու ել չկարացի:

Գ գ ի ր.—Տո ախմա՛խ, դա ասելու խո՞սք ա, վոր դու
ասում ես:

Ք յ յ յ Վ ա.—Դե արի ու սրա ջուղարը տուր: Տո
ախմա՛խ, հանդապահության պաշտոնը քեզ ինչի՞
համար են տվել, վոր դու չպտի իմանաս՝ եղ
սելափն ու կարկուտն ո՛ւմ ցանքան ա փչացրել,
կամ ումը ի՛նչ վնաս տվել:

Գ գ ի ր.—Յես իմ աստոծը, քյոխվան ճիշտ ա ասում:
Դու ծեծվելու արժանի մարդ ես: Դու վոր իմ
տեղ լինես՝ գզրի պաշտոնում քեզ մի որ չեն պա-
հի: Գզրությունը դու հեշտ բան չգիտենաս:

Հ ա մ ղ ա պ ա հ.—Բանը չիմացած, դու ել մեծ-մեծ
խոսում ես: Անձրևը մի կոնից եր գալի, հեղեղն
ու կարկուտը՝ մեկել կոնից, գլխիցս ձե՞ռք եյի
քաշել, վոր ըտենց ժամանակ չոլ դու ա դամ:

Խ ե չ ա մ.—Ադա՛, տնաքանդ, գեղը թողած, դու քո
գլխի դարդն ես քաշո՞ւմ:

Հ ա մ ղ ա պ ա հ.—Ձե՛, քու դարդն ել եմ քաշելու: Յես
չլնելուց հետո շատ հարկավոր ա, սաղ աշխարհը
քանդվի, թեկուզ գեղն ել հետը... դուք, վոր ձեր
արտերիցն եսքան յերկմիտ եյիք, ինքներդ կոնայիք
ու կտեսնեյիք: Չուր տեղից ի՞նչ եք ամենքդ մի
կոնից վրա տվել ու խալխին յախա-բողազ անում:

Մ ու կ ու չ.—Դե վոր մենք եյինք գնալու՝ մեր ցան-
քերին, մեր արտերին մտիկ տանք, ել դու ին-
չացո՞ւ յես: Ել ինչի՞ յենք քեզ փող տալի:

Հ ա մ ղ ա պ ա հ.—Ձեր տված մի քանի կոպեկի համար
դուք ուզում եք, վոր յես գնայի հեղեղի ուխն
ընկնեյի: Մի սյուրու յերեխանց տեր մարդ եմ,
ինձ վոր մի փորձանք պատահեր, դուք նրանց
պահելու եյի՞ք... ասում եք, ախր վո՞նց գնայի...

Ք յ յ յ Վ ա.—Բա սրանց Չաքարը վո՞նց ա գնացել:

Հ ա մ ղ ա պ ա հ.—Գնացել ա, վոր հեղեղն առաջն արած
տանում եր, ե՛...

Մ ա ր ի ա մ.—Վա՛յ ինձ, տունս քանդվեց... որս խա-

վարեց... ես ի՞նչ լսեցի... ես ի՞նչ իմացա...
(Ուշաքափ վայր ե ընկնում):

Մուկուչ.—Աբա, անաքա՛նդ, Չաքարի համար դու
վոր ըտենց բան գիտեցիր, ինչի՞ առաջուց մեզ
չեցիր ասում:

Խեչամ.—Պոսալու ժամանակը չի, դնանք... (Դուրս
ե գնում):

Մուկուչ, Առափել, Հասամ.— Գնա՛նք... (Դուրս
են գնում):

Քյոնյալ.—Ա՛ խալիս, դուք ի՞նչ եք շշուղեւ, են խեղճ
կնիկը ուշքից դնացել ա, գլխին ջուր ածե՛ք, ա-
կանջներից քաշե՛ք...

Տիրացու.—Քանի շունչը վրեն ա, յերեսը դեպի
աղոթարան դարձրե՛ք:

Բաղալ.—Ա՛ կնիկ, ուշքի արի՛: Աչքերդ բաց արա՛,
ա՛խ, աստված ջան, ես ի՞նչ կրակ թափեցիր մեր
գլխին:

Տիրացու.—Աստված վոր մեկին պատժել ուզենա,
առաջ խելքն ա նրա գլխից առնում... Դրանից
հետո մարդն ինքն իրան ա պատժում: Չաքարի
նման գնում ա կամ հեղեղի ըսեխ ընկնում, կամ
գելի...

Քյոնյալ.— Սրանց Չաքարը գլխից ձեռ քաշած
մարդ եր: Եդ սեւալն եւ վոր չլներ, ես քարափ-
ներից նա իրան մի որ գցելու յեր տակը:

Բաղալ.—Մի՛ վախի, ա՛յ կնիկ, տղերքը դնացին:
Հմի վորդի վոր ա, Չաքարին վերցրած, հետները
կրերեն:

Վարթի.— Ճիշտ ա ասում, տղերքը դնացին. հմի
վորդի վոր ա, Չաքարը կդա:

Մարիամ.— Ո՞ւր ա... ինչի՞ չի գալի... ինչի՞ ու-
շացալ...

Բաղալ.— Կդա՛, ա՛յ կնիկ:

Վարթի.— Ճիշտ ա ասում, կդա:

Տիրացու.— Չաքարի դալն ու չգալը նրանից ա
կախված... (Մատուլ յերկիմքն ե ցույց տալիս):

Մարիամ՝ մաջի, ավետարանին մի արբեչում աղ-
լուխ խոստացի՛ր, Չաքարն անվորձ կզա տեղ
կհաննի...

Մարիամ.—Տուն ու տեղս նրան փեշքաչ ա... մի
արբեչումի աղլուխն ի՞նչ ա, վոր յես խնայեմ...

Քյոյսվա.—Եդ աղլուխ—մաղլուխը դատարկ բան ա:
Ես փորձանքից ձեր Չաքարը թե վոր ազատվեց,
արժան ա, վոր դուք մի յեղը մորթեք. արբեչումի
աղլուխով դուք մենակ տերտերին ու տիրացվին
կբալարարեք, իսկ ես ժողովդին ի՞նչ եք պա-
տասխանելու: (Քյոյսվեմ բեղերը վոլորելով դուրս
ե գնում):

Գգիբ.—Մարիամ՝ մաջի, հո լսեցիր՝ քյոխվան ինչ
ասեց: Քյոխվի ասածը դյուղացու համար որինք
ա, պետք ա կատարվի: Մատաղ մորթելն ել հո
կառավարության հրաման չի, վոր սպասեք
վերի դուրից դա... վաղվանից յեղը կմորթեք...
(Դուրս ե գնում):

Բադալ.—Հեղեղի ըռելը սրա՛նք պետք ե ընկնեն,
Չաքարն ի՞նչ մեղավոր ա...

Վարբի.—Աղջի Մարիամ, աչքդ լիս, հրեն Չաքարը
գալիս ա...

Մարիամ.—Այ աչքի լսով կենաս, Վարթի՛ բաջի
աստված բալեքդ պահի:

Բադալ.—Ա՛ կնիկ, տիհար, յես վոր ասի կզա՞:

Տիրացու.—Ինչպես յերևում ա՝ Չաքարի ճակատին
հեղեղում ընկնիլը գրված ա ըլել, իսկ
'խեղդվիլը՝ չե... (Չաքարը քրջված ու պատա-
ռոտված շորերով, առանց գլխարկի, խեչանի ու
Մուկուչի ուղեկցուքյամբ, բոլորովիմ քուլացած
ներս ե գալիս):

Նույնք, Ջաֆար, Մուկուչ, Խեչան

Մարիամ.—*Բոյ ու բուսաթիղ մեռնեմ, Ջաֆար ջան... քեզ ին դուրում սելավից աղատող Հրեշտակների թևերին դուրբան, ազի՛զ բալլա... (Գրկում և ու համբուրում):*

Բադալ.—*Ջաֆա՛ր ջան, ախր դու եղ վո՞նց արիր:*

Ջաֆար.—*Ձգիտեմ... մտա դետը, վոր անցնեմ, Հեղեղը Գյուլեյի ձորից հանկարծ վրա հասավ:*

Առաֆել.—*Ջաֆա՛ր ջան, Գյուլեյի արտերից մեզ մի բան ասա: (Յերկար ժամանակ Ջաֆարը լուռ մտածում և, իսկ մյուսները կասկածամեղով նայում են):*

Ջաֆար.—*Գյուլեյյում ել արտ չկա. հույսներդ կարե՛ք... կարկուտից ու Հեղեղից ցանքսերը բոլորովին փչացել են...*

Առաֆել.—*Ջաֆա՛ր ջան, դու եղ ի՞նչ ասեցիր: Յեռուրիչ տեղ ել ցանք չուենեմ. ետ մի արտին եյի մտիկ տալիս... Մերմացուն Գալուստ աղից պարտքով եմ վերցրել: Յես նրան ի՞նչ ասեմ, ի՞նչ ջուղար տամ: Ձմեռը չեկած նորից դռնեդուռ ենք ընկնելու՝ սրանից-նրանից վողորմություն խնդրենք:*

Խեչան.—*Եղ զահրումար կարկուտն ու Հեղեղը մեր արտերի Հես ինչի՞ մեզ ել չեն վոչնչացնում... (Լաց և լիճում):*

Բնլարը.—*Արտներս փչացավ. նշանակում ա տուններս քանդվեց... (Գլուխները քաշ՝ մտածում են):*

Ջաֆար.—*Իմ արտս ել ա փչացել, իմ տունս ել ա քանդվել... մեր արտ փչացնողը, մեր տուն քանդողը յերանի մարդ լիներ, թեկուզ հազար դըլխանի մի Հրեշ, յես իմ ատամներով նրան հազար կտոր կանեյի... Բայց նա աներևույթ թշնամի*

յե, վորի դեմ վոչ կուլիլ կարող եմ... և վոչ ել
բողոքել...

Բ ն ի ն ր ք.—Ախ, աստված ջան, ես ի՞նչ կրակ ու
պատիժ բերիք մեր գլխին...

Տ ի ր ա ց ու.— Փորձանքը յերբ դալիս աս, դռներդ
չոքում, դուք են ժամանակ եք միայն աստված
մտաբերում: Մինչև վզներդ խրվել եք մեղք ու
կրակի մեջ, ասածուն մոռացել, սրբերն ու յե-
կեղեցին ուրացել: Ձեզ դարձի բերելու համար
վոչ միայն կարկուտ ու հեղեղ, յերկնքից կրակ
եւ վոր թափվի ձեր գլխին, ձեզ համար դարձյալ
քիչ աս...

Բ ա ղ ա յ ի.—Տիրացու, բա ես աշխարհում ել ուրիշ մե-
ղավոր մարդիկ չկա՞ն:

Տ ի ր ա ց ու.—Ի՞նչպես չկան: Դժոխքն ու վերջին
ահեղ դատաստանի որը բա ել ո՞ւմ համար աս
ենտեղ ամենքն ել իրենց մեղաց պատիժներն են
կրելու:

Ձ ա ֆ ա ր.—Աստծու ու յերկնքի անունով ել կրակ ու
պատիժ չմնաց, վոր չթափվեր մեր գլխին: Վո՛չ,
տիրացու, եղ բոլորը սուտ ոս շինծու հեքյաթներ
են, եղ հեքյաթներին մենք այլևս չենք հավա-
տում... բավական է, վորքան դուք մեզ խա-
րեցիք...

Տ ի ր ա ց ու.— Մեղա ասու, մեղա ասու... (Յեր-
կնքից ե ցալում և յերեսը խաչակնում):

Ձ ա ֆ ա ր.— Լսի՛ր, տիրացո՛ւ, մենք արդարության
և ճշմարտության ենք հավատում, իսկ եղ արդա-
րությունն ու ճշմարտությունը վոչ ենտեղ ենք
տեսնում, վոչ ել ետեղ...

Տ ի ր ա ց ու.—Անքննելի ու անիմանալի յե նրա կամքն
ու խորհուրդը: Համբերություն ունեցեք, և դուք
կտեսնեք նրա արդարությունն ու վողորմու-
թյունը:

Ձ ա ֆ ա ր.—Համբերությունն ել վերջապես չափ ու

սահման ունի: Ծնված որից աչք ենք բայ անում.
Համբերութեան քարոզներ ենք լսում, իսկ ոգնու-
թյուն, վողորմածություն յերբեք չենք տեսնում...

Տիրացու.—Անհամբեր մի՛ լինի, Ջաքա՛ր, նա բարի
յե ու վողորմած...

Ջաքար.—Նա բարի յե ու վողորմած նրանց համար,
վոր յերբեք չեն վարում, չեն ցանում, բայց միշտ
կուշտ են լինում... Գնանք, ա՛հեր, գնանք, ա՛
մեր, նրա բարությունն ու վողորմությունն մենք
չենք ուզում... (Ջաքարը ծնողների հետ դուրս
ե գնում):

Տիրացու.— Ըտենց կխոսես, վոր հեղեղի ըռիս
կնկնես, ե՛...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

2-ՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը մերկայացնում է յեկեղեցու բակը: Կենտրոնում գյուղի յեկեղեցին՝ իր կիսավեր զանգակատնով: Աջ կողմում հողաքումք գերեզմաններ, իսկ ձախ կողմում՝ փողոցի ցանկապատին կից ոջախ, վորտեղ մեծ պղինձներով մատաղի կերակուրն են պատրաստում: Տիրացուն բուրվառը ձեռին, յեկեղեցական շապիկը հագին, յեկեղեցուց յերբեմն դուրս է գալիս, բուրվառը պատից կախում, զանգերը խփում ու կրկին բուրվառը զցելով՝ մերս է գնում:

ՏԵՍԻԼ 1

Առաքել և հանդապահ

Առաքելը գումավոր չքի աղյուխը գոգնոցի տեղ առջևով կապած, շերտիք ձեռքին՝ կերակուրն է խառնում, իսկ հանդապահը պղնձի տակ ծխացող փայտերն է ուղղում:

Առաքել.—*Եղ թող մնա, ոջախի հետ դու գործ չունես: Եղ փետն ինքն իրան կվառվի, դու գնա ջիգյարը կարտի, պատրաստի, վոր հմի քոխվան մի քանի մարդու հետ գալու յա, խորովենք տանք, նստեն զխտկվեն:*

Համդապահ.—*Դե լավ, ջիգյարը մենակ նրանց ա պատկանո՞ւմ: Ես մատաղը հո մենակ նրանք չեն արել, դյուղի ամբողջ հասարակությունն ա արել:*

Նշանակում աս, վոր եղ ջիգյարն ել ու ամեն ինչն
եւ ժողովրդին հավասար պտի բաժանվի ու ամենքը
հավասար բաժին պտի ստանան:

Առաջինը.— Հավասար բաժին ստանալու համար մեր
ժողովուրդը դեռ շատ կսպասի: Սոսալու քամա-
նակը չի. ահադին դործ ունենք կատարելու: Դու
գնա ե՛ն արա, ինչ վոր քեզ ասում են: (Ձաքարը,
բյոխվամ ու գգիրը խոսելով իրար հետ գալիս են):

ՏԵՍԻԼ 2

Նույնի, Ձաքար, բյոխվա և գգիր

Քյոխվա.— Ձաքար ջան, մեզնից ինչի՞ յես նեղա-
նում. դու նրանից նեղացի, ով վոր գնացել,
խարար ասովել: Հրեն Մինասի յեղնա նա նորից
մարդ աս դարկել, յես նրան ի՞նչ ասեմ:

Ձաքար.— Ինչ վոր քեֆդ տալիս աս, են ասա՛, ինձ
ինչի՞ յես հարցնում:

Քյոխվա.— Լսի՛ր, Ձաքա՛ր, գա քեֆի բան չի: Ես-
տեղ ստար մարդ չկա, խոսքի դուրը յերեսիդ յես
կասեմ: Հեռու-մոտիկ ասդական ենք. ասած աս՝
չունը ջան միս կուտի, ոսկորը դեն չի՛ դցի: Յես
քեզ հարցնում եմ, ինչ վոր դու ինձ կասես, յես
եւ կգնամ նրան են կասեմ:

Ձաքար.— Եդ յեկած մարդուն դու գնա ասա՛, վոր
Մինասն ետեղ չի:

Քյոխվա.— Եդ եկած մարդուն ասենք թե խարե-
ցինք, են խմբապետին եւ հո խարել չե՞նք
կարող: Հրեն ամբողջ դյուրը շրջապատել աս և
խուզարկութունը սկսել: Վոր քունջ ու պուճա-
խում եւ վոր պահված լինի, միևնույն աս, հայտ-
նարբերելու յա: Լսի՛ր, յերեզի մեր դյուրում
Մինասին տեսողներ են յեղել:

Ձաքար.— Դե վոր դու իմ ասածին յես հավատա-
լու, եւ ինչի՞ յես իզուր տեղը ինձ խոսեցնում:

Ք յ յ յ վ ա.— Ախր մի ընենց խելքը գլխին բան ա՛տա, վոր յես հավատամ, հետո գնամ՝ ուրիշին ել հավատացնեմ:

Ձ ա ք ա ր.— Ես ի՞նչ տեսակ անհավատ մարդիկ են: Յես ձեզ նորից ասում եմ, վոր Մինասն խտեղ չի, նա յերեգի հեռագիր ստացավ, վեր կացավ ու գնաց:

Ք յ յ յ վ ա.— Ախր նա վո՞նց գնաց, վոր նրան տեսնող չելավ: Ստանա չեր, թե ասեմ դետնի տակ մտավ ու մե բաշ չքվեց... գնալուց անպատճառ տեսնողներ կլինեյին:

Գ գ ի ր.— Մպասե՛ք, նոր միտս ընկավ: Յերեգի իրի-գուն ջրաղացի կռնով յես դեսն էյի գալի, խոստովանք ըլի, քիչ խմած էյի, կատարս տաք եր, լավ վարավուրդ չարի, բայց թե ընենց աչքի տակով տեսա, վոր Մինասն առլի դրաղովը դուրսը քաշ արած գնում եր:

Ձ ա ք ա ր.— Իմ ասածն ի՞նչ եր: Լավ ա, վոր դու քո աչքովն ես տեսել: Նշանակում ա, վոր բստեղ սուտ ասելու և խարելու վոչինչ չկա: Միայն հարկավոր ա խմբապետին իմաց տալ, վոր խուզարկությունը դադարեցնեն: Ժողովրդին իզուր տեղը չանհանդստացնեն: Առանց են ել մեր ժողովուրդը դրգոյած ա, մի բան կպատահի, ձող համար լավ չի:

Ք յ յ յ վ ա.— (Գգիրին) Տնաքա՛նդ, ըտենց բան վոր իմացել էյիր, ինչի՞ վախտին չեյիր ասում, իզուր տեղն ել ես մարդուն անհարմար դրության մեջ դրինք: Գնանք, խմբապետին հասկացնենք դործի էյությունը: (Քյոյսվան գգրի հետ դուրս ե գնում, իսկ Ձաքարը կանգնած մտածում է):

Ձ ա ք ա ր.— Գեղից դուրս գնալ չի կարող, մնալ ել վտանգավոր է... (Դուրս է գնում):

ՏԵՍԻԼ 3

Բաղալ, հետո Մարիամ

- Բ ա ղ ա լ .— Լսի՛ր, Առաքել, մեր Չաքարին չես տեսե՞լ:
- Ա ռ ա ք է լ .— Չաքարը քիչ առաջ քյոխվի հետ կանգնած՝ ետեղ խոսում եր, չիմացա՛ ո՛ւր գնացին:
- (Մարիամը մերս Ե գալիս):
- Մ ա ռ ի ա մ .— Ա՛յ մարդ, եղտեղ ի՞նչ ես կանգնել, արի՛, բան եմ ասում:
- Բ ա ղ ա լ .— Գիտեմ՝ ի՞նչ ես ասում. յես ել՝ հենց դրա համար եմ յիկել: Չաքարը քիչ առաջ ըստեղ ա ելել, գնացել ա:
- Մ ա ռ ի ա մ .— Բա հմի նրան վո՞րտեղ ճարենք:
- Բ ա ղ ա լ .— Ել վո՞րտեղ կճարես, անիծվածները գեղը ամբողջովին շրջապատել են, փողոցով անց ու դարձը թույլ չին տալիս: Ո՞ւր գնաս, ո՞ւմ հարցնես:
- Մ ա ռ ի ա մ .— Քոռանան դրանք, ժողովրդին եսքան չարչարել կըլնի՞. իրկու որում չորս անգամ առւններս խուզարկել են:
- Բ ա ղ ա լ .— Շնորհակալ չե՞ս, վոր դրանով պրծնում ենք: Գնանք, տեսնենք՝ ի՞նչ ենք անում... (Խոսելով դուրս են գնում): (Միմասը գյուղացու հրամաշ հագուստով, գլուխը բաշլուղով փաթաթած, մուր ապակիներով ակնոցն աչքերին, քառը ձեռին, խեչամի հետ խոսելով, մերս Ե գալիս):

ՏԵՍԻԼ 4

Խեչան և Միմաս

- Խ շ ա ն .— Կարկուտն ու սելավը մեր գեղի արտերը փչացրին, դրա համար ել փրկչի մասունքը բերել ենք, մատաղ ենք մորթել, հանդիսավոր պատարբադ ենք անում, եսպես նշանավոր որ գեղը նոր

եկած աշուղը յեկեղեցու դռանը նստած՝ սաղ
ածելիս կլինի: Դե՛, ժամանակը մի՛ կորցնի նստի
ես քարի վրա ու շնորքդ ցույց տո՛ւր: (Մինասը
նստում է քարի վրա ու սկսում է նվագել: Գյու-
ղացիները հավաքվում են նրա շուրջը: Գալուստ
աղան և Համբարձումը կանգնած՝ հեռվից նայում

են):

Տ Ե Ս Ի Լ Ե

Նույնի, Մուկուչ, գյուղացիներ, հետո Գալուստ
և Համբարձում

Մ Ի Յ ա ս.— (Թառի նվագակցությանը արտասանում
է):

«Տառապանքի այս աշխարհում
«Յես մի անբախտ կույր աշուղ,
«Սաղը ձեռիս թափառում եմ
«Քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ.
«Միշտ շրջում եմ ու խորխորում
«Համատարած խաղարի մեջ,
«Կյանքի դաժան ճիրաններում
«Տառապում եմ յես անվերջ...»

Գ ա լ ու ս տ.— Ինչի՞ համար են սրանք հավաքվել: Յես
ուր վոր գնում եմ, դրանեմ հանդիպում: (Մոտե-
նում է): Ի՞նչ էք ազատվի նման հավաքվել ես հո-
տած ջամդակի վրա: Դուք ձեր կյանքում ել
մարդու յերես չե՞ք տեսել: Սաղի ձայն չե՞ք
լսել: Հրեն յեկեղեցու դանդերը տալիս են, պատա-
րազն արդեն սկսել ա, ժամ դնալու, աղոթք
անելու փոխարեն, դուք հավաքվել էք ետեղ,
քոռ աշուղի՞ն էք ականջ դնում: Քոռ աշուղն ինքն
ի՞նչ ա, վոր նրա ստած յերգը, նրա ածած սազն
ի՞նչ լինի: (Գնում է յեկեղեցի):

Խ Ե չ ա ն.— Նրան մի հարցնող ըլի, ի՞նչ քու հաշիվն ա՝
մենք յեկեղեցո՞ւմ աղոթք կանենք, թե դուրսն

ես աշուղին կլսենք, դրա համար քու սիրան ինչի՞
ա ցալում: Յեկեղեցին յեթե ողտավեա անդ
լիներ, դու մեզ ներս չեյիր հրավիրի: Դպրոցի
դռները մրաներս պինդ կողպում են, յեկեղեցու
և սրբերի դռներն առաջներս լին բաց անում, ես
ի՞նչ շան տղութունն ա, մաւդ չի հասկանում:

1-ին գլուղացի.—Արա, չիչ կամաց, Գալուստ
աղան սուր աղանջներ ունի, կիմանա:

Խեչան.— Իմանում ա, թող իմանա, Գալուստ աղա-
չդառավ, դիտներին կրակ ու պատիժ դառավ:
Հերիք ա ինչքան նա մեր արյունը ծծեց: Գլխիցս
ձեռ կքաշեմ, փափախը զալլբի կտամ, խելքն
ո՞ւր ա դնում: Տարին տասներկու ամիս նրա
ձեռքին մենք յեսիր հո չպտի մնանք:

Առաքել.— Դու ետոր հավի սիրտ ես կերել: Յերեմի-
մտուցել ես, վոր նրան մեքսիլով փող ենք պարտք:
Ետոր-եղուց ժամանակը լրանա, հողեառ հրեշտա-
կի նման դալու յա բկներին չոքի:

Խեչան.— Յեկեք՝ ձեզ մի բան ասեմ:

Բնլորը.— Ասա... (Հավաքվում են նրա շուրջը):

Խեչան.— Յեթե չեմ սխալվում, դուք բոլորդ ել նրան
մեքսիլով փող եք պարտ, ճի՞շտ ա:

Բնլորը.— Ծիշտ ա:

Խեչան.— Փողի տոկոսներով նա ձեզ բոլորիդ ել
լիմոնի պես ըսենց հուպ ա տալիս, սոկը քամում,
ճի՞շտ ա:

Բնլորը.— Ծիշտ ա:

Խեչան.— Ուրեմն հարկավոր ա ենպես մի դրություն
ստեղծել, վոր Գալուստ աղան ձեզնից վոչ միայն
փող չպահանջի, այլ թե ձեզ հանդիպած ժամանակ
յերեսը շուռ տա և ուրիշ ճամբով դնա:

Բնլորը.— Եդ լավ միջոց ա, մեզ սովորեցրու:

Խեչան.— Յեկեք ես կողմ: (Բնլորը մոտենում են) Դե,
լսեցե՛ք, յես ձեզ ինչ վոր կասեմ, դուք ել կրկնեք:
Սկսում եմ, Գալուստ աղից և նմաններից աղա-
մելու համար:

- Բ ո լ Ո Ր Ր .— Գալուստ աղից և նմաններից ազատվելու համար:
- Խ ե չ ա մ .— Հարկավոր աս:
- Բ ո լ Ո Ր Ր .— Հարկավոր աս:
- Խ ե չ ա մ .— Վոր մենք...
- Բ ո լ Ո Ր Ր .— Վոր մենք...
- Խ ե չ ա մ .— Սրանց գլխներին տանք:
- Բ ո լ Ո Ր Ր .— (Լուսնայում են և յետ քաղվում):
- Խ ե չ ա մ .— Ինչի՞ չեք ասում, դե ասեք, ե:
- Բ ո լ Ո Ր Ր .— Ախր դժվար աս, վո՞նց ասենք:
- Խ ե չ ա մ .— Դե չեք ասի, հոգիներդ դուրս դա: (Տարին տասներկու ամիս պարտքի տակ տնքացեք: Ել մյուս անգամ չգանգատվեք:
- Ա ն ա ֆ ե յ .— Ճիշտ աս, դժվար աս, տարին տասներկու ամիս պարտքի տակ տնքալը, բայց թե քու եղ առաջարկությունն ել հեշտ բան չի: Ետ անիծվածները, վոր իմանան, կրոնեն, բոլորիս կշնդա-կահարեն, տնով, տեղով կաքսորեն:
- Ա ն ա ֆ ե յ .— Ձե, մենք ըսինց ոխկովնի բան չենք անի:
- Խ ե չ ա մ .— Ձեք անի, վոր լեզուներդ ել կարճ կմնա, ե... (Գալուստն ու Համբարձումը յեկեղեցուց դուրս են գալիս):
- Գ ա լ Ո Ւ Ս Ս .— Հանդիսավոր պատարագի ժամանակ յեկեղեցում ասեղ զցիս, դետին չպտի ընկնի: (Մտնեմում ե աշուղին) Լսիր, աշո՛ւղ, ընդունված սովորություն աս, աշուղին յերգը լսելուց հետո, փող կտան, իսկ յես ուզում եմ հակառակն անեմ, առաջ փողը տամ, հետո յերգդ լսեմ: Յերգի տեսնեմ, եղ ի՞նչ զորություն կա զո յերգի մեջ, վոր մեր ժողովուրդը քու յերգը լսելու համար եսքան իրար գլուխ աս կտորում: (Տիրացուն գանգերը խփում ե, իսկ Գալուստը գրպանից արծաթ փողը հանում ե ու գցում աշուղի առջև): Վերցրու փողը և սկսի: (Աշուղը վեր ե կեմում և լուսն հեռանում: Նրանք զարմացած մայում են):

Համբ.—Ես տեսակ դիպեց, կյանքումս առաջին ան-
դամն իմ հանդիպում: Մի կողակ կ ստանալու հա-
մար ուրիշ տեղ ժամերով կյերդի, իսկ եստեղ դեռ
չյերդած փողը տալիս եք, չի վերցնում: Սա ուղ-
ղակի անսպասվությունն աս:

Գալուստ.—Ես անպատվության համար հարկավոր
ա նրան պատժել: (Դուրս ե գնում):

Համբ.—Պատժելը, պատժել, բայց թե ես արծաթ
փողն ափսոս աս, վոր դեանին ընկած մնա:
(Փնտռում ե):

Մուկուչ.—Ձեռ գտնում, վնաս չունի, թող մնա:
Առ ես արասին վերցրու, նեղությունդ գուր չը-
կորչի... (Գրպանից փողը հանում ե և գցում նրա
առաջ):

Համբ.—Վերցրու՛ւ, տա՛ր, մածունի տո՛ւր, լցրու գըլ-
խիդ: (Դուրս ե գնում): (Միմասը սագը ձեռքից
գալիս ե):

ՏԵՍԻԼ 6

Խեչան.— Տնաքանդ, դու ինչի դնացի՞ր, Գալուստ
աղից վախեցա՞ր: Դու ել հո նրան վեքսիլով փող
չես պարտ, դու ինչի՞ յես վախենում:
Դու աշուղ մարդ ես, դու նրա ասա-
ծին ականջ մի արա, գլուխդ քաշ, դու քու եչը
դուդ ճամբովը քչի դնա: Ի՞նչ գործ ունես, թե ով
ինչ աստում: Համա ես մի բանը դու լավ իմացի,
վոր սրանից հետո մեր ջուրն ու Գալուստ աղի ջու-
րը մի առվով չի դնալու... նստի, ես իմ երված
սրտիս վրա, մի լավ բան ասա լսեմ...:

(Միմասը նստում ե քարի վրա, սագը նվագում
ու արտասանում: Բոլորը հավաքվում են նրա շուր-
ջը և ուշադրությամբ լսում):

Միմաս.— «Ե՛յ մարտիկներ դուք, ե՛յ տխտաններ
դուք,

«Տիագճի շեփորն ե զիւ շեփորում,
«Դեպ բարիկաղը, դեպ բարիկաղը,

«Մեղ արդար դատն ե դրոհի կանչում:

«Փա՛ռք Իլիշին մեր, կեցցե՛ կոմունան,
«Կորչի՛ կապանքն, աքսոր ու բանտ,
«Դեպ բարիկաղը, դեպ բարիկաղը,
«Մեր վոխն անհուն ե, վորոտ ու շանթ:

«Ֆյուր ու հազար ենք, շարքերով կուռ ենք,
«Պոռթկում, հորդում ենք հեղեղ, հորձանք,
«Դեպ բարիկաղը, դեպ բարիկաղը,
«Կորչի՛ խավարը, կեցցե՛ նոր կյանք»:

(Գրիբը փողոցի կողմից շտապ-շտապ գալիս է):

ՏԵՄԻԼ 7

Նույնի և գրիբ

Գրիբ.— Կոտորվի ձեզ պես խալիսը, վոր դեղի վոչ
մեծն եք ճանաչում, վոչ պատիկը: Արուսեերդ
աստվածանից կտրվիլ ե, մեռոնը ճակատներիցդ
վեր եկել պրծիլ... Ե՛յ, աշուղ ես թե ինչ զիբիլ
ես, Գալուստ աղան կարգադրել ա, վոր եսոր դու
ժամի դռանը յերդ չասես (վառֆով հրում ե): Վե՛ր
կաց, փաստ-փուսեդ քաշի, թե չե կտամ սազդ
կջարդեմ, գլուխդ ել հետը...

Մի քառ.— Ո՞վ է այդ մարդը, վորից դուք եղքան
սարսափում եք...

Գրիբ.— Գեղը վոր մտար առաջին անգամ դու նրան
պտի ճանաչեյիր... Նա գալուստ աղան ա, մեր
դեղի անրն ու տիրականը: (Դուրս ե գնում):

Մի քառ.— Գնա ձեր Գալուստ աղին հայտնիբ, վոր
թափառական աշուղները չեն ճանաչում աղաներին

ու բեզեբրին և չեն յենթարկվում նրանց հրամաններին... (Դուրս ե գնում):

Խ Ե Ն Ա Մ.— Ըտենց հուպ սուր, մի վախի...

Ա Ն Ա Ֆ Ե Լ.— Վտնց վոր երեկում ա, պատարագը վերջացել ա, տերտերը ժողովրդի հետ դենն ա դնացել, իսկ քոխվան տիրացվի հետ դեսն ա դալիս: Տար սուտրեն քցի:

Խ Ե Ն Ա Մ.— Մատաղի հոտը քթներովն ա կտել: Ուտուու իշտահուվ ա դալիս:

Տ Ե Ս Ի Լ 8

Նույնք, քոխվա, տիրացու

Տ Ի Բ Ա Գ Ն Լ.— Ողորմի աստված:

Ա Ն Ա Ֆ Ե Լ.— Ողորմի ծնողաց:

Ք Յ Ն Խ Ս Վ Ա Մ.— Առաքել, ի՞նչ հալի յես: Իհարկե, խոսքը ջիգյարի խորովածին ա վերաբերում:

Ա Ն Ա Ֆ Ե Լ.— Յերկու շամփուր պատրաստել եմ:

Չ-Բ Ղ Գ Յ Ն Լ Ղ.— Յերկու շամփուր ջիգյարի խորովածով բան դուրս չի դա: Ետ խաշլամից մի քանի կտոր հանի, թող անուշ անեն:

Ք Յ Ն Խ Ս Վ Ա Մ.— Այ դորանաս դու, վոր մեծավորի պատիվը հասկանում ես:

Տ Ի Բ Ա Գ Ն Լ.— Ավետարանում դրած ա, հարգս հարգավորաց, պատիվս արժանավորաց:

(Հանդապահը տանում ե սուփրեն գետնին փռում և սեղանի աներածեշտ բոլոր պարագաները դնում: Քյոխվան, գգիրը և տիրացուն նստում են):

Ա Ն Ա Ֆ Ե Լ.— Ա խալիս, դուք ընչի՞ չեք նստում: Նրստեք, հասարակական մատաղ ա, ձեզ ել փայկհասնի:

(Նրանք նստում են. հանդապահը ողու շիշը բալայների հետ տանում ե և ուզում ե ինքը լցնել):

Ք յ ն յ վ ա.— Դեսը տուր, եղ նեղությունը մենք կքա-
չենք:

(Ինքն իր համար լցնում է և համոզում է մյուս-
ներին): Քանի խորովածը չեն բերել, վերցրեք
մի-մի ստաքան խմենք:

Գ գ ի բ.— Լուսթյուն, զյոխվան բան ա ստում:

Ք յ ն յ վ ա.— Ա՛ խալիս, իմ ասելն են ա, վոր ետրվա
մատաղի նպատակը ձեզ հայտնի ա, բացատրելն
այլեւորդ ա, ընդունելի մատաղ լինի. ինչ սրտով,
ինչ խորհրդով, վոր արել եք, աստված լսող և կա-
տարող յեղիցի:

Բ ն ի ռ բ.— Ամե՛ն (լսում եմ, իսկ Առաքելը խորովա-
ծը բերում է):

Ք յ ն յ վ ա.— Սրանց կտրտած խորովածին թամաչա
արեք, չորս կտորը, վոր մի անդամից դցնեմ բե-
րանս, չորսն էլ ատամներին արանքներումը կկոր-
չեն: Առաքել, դու ես ի՞նչ բանի յես:

Ա ն ա ֆ ե յ լ.— Յես մեծ-մեծ եյի կտրտել, եկան ասին
մանրացրու, յես էլ մանրացրի:

Տ ի բ ա ց ու.— Ես ասողի բերանը յերելի պատիկ ա
յեղել, վախեցել ա մեծ թիքեն բողաղին մնա:

Ք յ ն յ վ ա.— Գյուղացու բերանը մեծ ա, հեռեապես
նրա թիքեն էլ մեծ պիտի լինի: Ժողովրդական
մատաղը դուք, վոր ետենց եք արել, ձերը վոր լի-
նի, ասա հավի կուտ եք շինելու դնեք առաջներս:
Հրես յես ձեզ ասում եմ, յեթե սուփրի վրա էլ ես
բանը նկատեմ, աստված վկա, ձեռիցս չեք պրծնի:
Ղամշին կքաչեմ, կաշիներդ կպլոկեմ: Վճռված և
ստորագրված ա:

Ա ն ա ֆ ե յ լ.— Քյոխվա ջան, սա ըսենց վրտի վրա թե-
թե՛վ զակուսկի ա, սուփրի վրա ամեն բան որ-
նայոր կլինի:

Ք յ ն յ վ ա.— Ես բակալներն էլ փոխեք, մենք մադիս-
կաներ չենք, վոր ես մատնոցները դրել եք առաջ-
ներս: Սրանով հիվանդները բժշկի ոնցեպտով

դրած դեղը միայն կարող ե խմել (Բակալը շար-
տում է) :

Առաքել.— Համձեցե՛ք (Թեյի բաժակը տալիս է) :

Տիրացու.— Առաքել, զյոխվի եղ կարգադրությունը
ինձ ել ասվերարեում : (Առաքելը մի քեյի բաժակ
բերում, նրան է տալիս) :

Գրիբ.— Ա խալիս, յես կարծում եմ, վոր որինակա-
նությունը խախտված չի լինի, յեթե սրանք մեր
ստաքաններն ել փոխեն : Չունքի զյոխվի ե տիրաց-
վի մեծությունը մեզնով աս, ուրեմն ետ արտոնու-
թյունը մեզ ել կվերարերի :

Առաքել.— Լավ, լավ, ձերն ել կփոխեմ (Մի կողմ) :
Սրանք, վոր չայի ստաքանով են սկսել, քանը խա-
րար աս : Ետ արողը սրանց հերիք չի տալու :

(Բոլորին քեյի բաժակ է տալիս) :

Գրիբ.— Հարցնելն ամոթ չլինի, ես մեր տերտերն
ո՞ւր աս, նրա բացակայությունը աչքի աս ընկնում :

Քյոնսվա.— Վոնց վոր տեսնում եմ, մեր տերտերն իր
թանը շատ աս թանկ ծախում :

Տիրացու.— Տերտերը մեղավոր չի, նա խիստ նեղա-
ցած էր :

Քյոնսվա.— Ումնի՞ց ե նեղացել :

Տիրացու.— Մեր հարգելի ժողովրդից : Եսպիսի մի
արտակարգ որ, վոր մեր ժողովուրդը յեկեղեցի
դնալու համար իրար դուռն պետք ե կտարեր, բայց
թե իրականում ի՞նչ տեսանք... Յեկեղեցին հա-
մարյա կիսով չափ դատարկ եր : Բոլորը զնացել,
քոռ աշուղին եյին թամաշա անում : Կոներս կո-
տրովեց զանգակները տալով, նրանք խլացել ու
չեյին լսում : Ոեղճ տերտերը զանձանակ աս ման
ածում յեկեղեցում, մարդ չկա, թե խաչհամբույր
դցի, իսկ դցած ժամանակն ել ձեռքները չի դո-
րում, թե մի քանի կոպեկ ավել դցեն, իսկ դուրսը
յես իմ աչքովը տեսա, վոր աշուղի առաջ արծաթ
փող են շարտում : Ասա՛ խնդրեմ, ես որինակա՞ն
բան աս : Տերտերը չըլնի, դու ըլնես, չես նեղանա՞ :

Ք յ յ յ վ ա.— Ետ ինչի ժամանակին չեք հայտնում,
դամչիս քաշեմ նրանց կաշին պլտկեմ, վոր նրանք
ժամի դուռն ել մոռանան ու իրանց տված խաչ-
համբւյրն ել: Լսի՛ր:

Գ գ ի ր.— Լսում եմ: (Խսկույն վոտփի յե կանգնում):

Ք յ յ յ վ ա.— Գնա տես մեր ժողովուրդն ինչ ելավ:
Ինչի համար են ուշանում: Թող դան հենց մի ան-
դամից նստենք մատաղն ուտենք վերջացնենք: Են
աշուղին ել, յեթե կհանդիպես, յախիցը բռնի,
քաշ տուր, յես մի դրան տեսնեմ եղ ինչ տեսակ
ջանավար ա, վոր մեր խալխին ըսենց դժվացրել
ա, նրա մասին քիչ առաջ Գալուստ աղան ել մի
քանի խոսք խոսեց: Դու գնա, ել մի կանգնի:

(Գգիրը դուրս ե գնում):

Տ ի ր ա ց ու.— Յես ուզում եմ մի կենաց առաջարկեմ.
բայց թե ես մեր արագը վերջանալու վրա ա:

Ք յ յ յ վ ա.— Առաքել, դու ես ի՞նչ բանի յես: Ետտեղ
կարծեմ մի ինչ վոր տկճոր ա յերևում: Ետ որհ-
նածը քաշ տուր դեսը:

Ա ն ա ֆ ե լ.— Տկճորը մնա, բոթիլներով կրերեմ:

Ք յ յ յ վ ա.— Ինչով ուզում ես բեր, հաշիվը մեկ ա:
(Խորքում ազմուկ, իրարանցում):

Մի տեսեք, ետ ինչ խարար ա: (Խեչանն ու Մու-
կուչը դուրս եմ գնում և անմիջապես Ջաֆարի,
Մինասի, Բաղալի, Վարթու, Ավոյի և գգիրի հետ
ներս գալիս):

ՏԵՍԻԼ 9

Նույնք, Ջաֆար, Մինաս, Բաղալ, Ավո, Վարթի
և գգիր:

Ջ ա ֆ ա ր.— Գեղը եկած ոտարական մարդուն փոխա-
նակ պատվելու, դուք նրան հալածում եք: Դա բո-
լորովին պատիվ չի բերում:

Գ գ ի ր.— Ոտարական մարդն իբ լիզուն կարճ կպահի:

Մի որ չկա նրա դալը, սաղ գեղը տակն ու վրա յա
արել: Դրա գլուխը հարկավոր ա ջարդել:

Ք յ յ յ յ յ.— Եղ արդեն քո գործը չի, դա ինձ ա վե-
րարեբլում: Որենքն ու իշխանությունն իմ ձեռ-
քին ա, իմ Ֆունկցիաների մեջ թող վոչ վոք
չխառնվի: Յես վոր եստեղ նստած եմ, եստեղ իմ
ներկայությամբ դու մինչև անգամ իրավունք չու-
նես խոսալու, կամ թե մեղավորին ինքնադատա-
տան անելու: Կառավարության որենքը յես
կպաշտպանեմ, մեղավորին, յեթե կարիք կա, յես
ինքս կպատժեմ: Արդարությունն ես ե պահան-
ջում: Վճռված և ստորագրված ա:

(Գիճի յե լցնում ու խմում):

Հը', տիրացու, վո՞նց հավանեցիր: Կարծեմ լամ
ճառեցի:

Տ ի ր ա ց ու.— Պակաս տեղ չուներ: Ըսենց մի խելքը
դիտին ճառ, վարչապետ Սատիսոփի բերանիցն եմ
միայն լսել: (խմում է): (խմբապետը, Գալուստ
աղան, Համբարձումը և մաուգերիստները գալիս
են):

ՏԵՍԻԼ 10

Նույնք, Գալուստ, Համբարձում, հետո
խմբապետ և մաուգերիստներ

Գ ա լ ո ս ու.— Սուղարկությունն արդեն վերջացել է,
խել նրան վոչ մի տեղ չեն գտել: Անիծվածը վոտ-
քով գլխով կորել է:

Հ ա մ ր ա ր ճ ա լ մ.— Նա անպատճառ գնացած կլինի:
Գյուղում յեթե լիներ, նրան կգտնեյին:

Գ ա լ ո ս ու.— Գյուղը գինվորներով չըջապատված է,
գյուղից դուրս դալ նա վոչ մի գեպքում չեր կա-
րող: Հրես խմբապետը գալիս է: Տեսնենք նա ինչ
է ասում:

(Նրան տեսնելուս պես բոլորը վոտփի յեն կանգ-
նում):

Խմբապետ.— Վոչ վոք տեղից չջարժվի... (Գիմն-
լով քյոխվիմ) Լտիր, քյոխվա: Այստեղ յեղողներին
բոլորին դուք ճանաչո՞ւմ եք:

Քյոխվա.— Մեր գեղի խալխն ա, ինչպե՞ս չեմ ճա-
նաչում...

Խմբապետ.— Ուրիչ ոտարական մարդ չկա՞ ես-
տեղ...

Քյոխվա.— Ոտարական մարդն մենակ ետ աշուղն
ա...

Խմբապետ.— (Մոտենում ե աշուղին) Ասա, ո՞վ ես
դու...

Աշուղ.— Յես նա յեմ, վորին դուք փնարում եք...

(Գլխի բաշուղը և ակնոցները վերցնում ե և հա-
մարձակ կանգնում նրանց առաջ):

(Բոլորն ապշած նայում են):

Խմբապետ.— Վերջապես դու բռնվեցիր...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

5-ՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է անտառ, շրջապատված բլուրներով և ուղղահայաց ֆերձերով: Լուսնկա գիշեր է: Յեղիշի կտուրքն անտառում ֆնած է: Մանիշակը ծառի տակ նստած կարկատան է անում: Իսկ Յեղիշն ու Ղազարը հրացանները ձեռներին կանգնած խոսում են:

ՏԵՍԻԼ 1

Յեղիշ և Ղազար

Յեղիշ.— Մինասի և Ջաքարի գալուց հետո խոշոր գործ է կատարված: Են առաջին անգամ, վոր Աշոտ մին Մինասից դրուժյուն էր բերել, նա ենտեղ գրում եր, վոր կաղմակեքսչական աշխատանքները լավ են դնում, կուսակցականների ու համակրողների թիվն որըստորե ավելանում է: Մի խոսքով, տղերքը լավ գործ են տեսնում:

Ղազար.— Նրանք ենտեղ են տեսակ պայմաններում գործ տեսնեն, իսկ մենք աշտեղ նստենք և անգործության մատնվենք: Անգործությունից ետեղ մարդ կգժվի... (Մտախոհ շարունակ ծխում է):

Յեղիշ.— Վոչինչ, կգա ժամանակ, վոր մենք ել կաշխատենք, դու կարծում ես, վոր մենք շարունակ ես անտառում ընկած անգործության ենք մատնվելո՞ւ:

Ղազար.— Առայժմ անգործության ենք մատնված, թե ապագայում ինչպես կլինի, ես չգիտեմ: Լսիր,

Յեղիշ, ընդհատակյա կուսակցական կոմիտեյի
հետ մեր կապը հաստատվելուց հետո, դու մի տե-
սակ փոխվիլ ես:

Յեղիշ.— Այսինքն:

Ղազար.— Այսինքն, վոր դու մի բան անելու ժամա-
նակ կարողանում ես ինքդ քու մեջ խորանալ, մի
խնդրի շուրջը — տասը տեսակ մտածել: Ինքդ քեզ
հարց տալ, պատասխան ստանալ: Իսկ յես եղ չեմ
կարողանում: Յես վոր մտածում եմ, իմ ընկեր-
ներն ենտեղ աշխատում են, դժվարություններ են
տանում, վոր դաշնակները նրանց ամեն բոպե բռ-
նում, աքսորում են, սպանում են, իսկ յես ետեղ,
հրացանը ձեռիս նստած, վոչինչ չեմ անում, նրանց
ոգնել չեմ կարողանում, բարկությունից քիչ ա
մնում, թե սիրտս պայթի...

Յեղիշ.— Եղ նրանից ա, վոր դու կուսակցական աշ-
խատանքը լավ չես պատկերացնում: Աշխատանքի
բաժանման սկզբունքը քեզ համար պարզ չի: Դու
մոռացար, վոր Մինասն Ավոյի ձեռքով ուղարկված
գրության մեջ ինչ եր գրել: Յեթե մոռացել ես,
յես քեզ կհիշեցնեմ:

Ղազար.— Յես չեմ մոռացել: Յես տեսնում եմ, վոր
կոմիտեն մեզանով հետաքրքրվում ա, շարունակ
մեզ համար գնեք և ամեն տեսակ ուղղամթերք ա
ուղարկում... յեմ յես հասկանում եմ, վոր մի որ
եղ գնեքերն ու ուղղամթերքը մեր միջոցով գոր-
ծողքվելու յե...

Յեղիշ.— Դու ինչո՞ւ համար ես նստել:

Մաթիշակ.— Կարծեմ դու տեսնում ես, թե ինչի
համար եմ նստել: Բոլորի հազուստները մաշվել
են ու քրքրվել: Կարկատում եմ:

Յեղիշ.— Ցերեկով ինչո՞ւ դու այդ չես անում:

Մաթիշակ.— Ցերեկով հնար չկա:

Յեղիշ.— Ինչո՞ւ:

Ղազար.— Հասկանալի յե թե ինչու: Յես ինչպես
տեսնում եմ Մանիշակը չի ուզում ասի, իսկ յես

կասեմ: Տղաները պարզն ասած, ամաչում են ցե-
րեկով Մանիշակի ներկայութեամբ շորները հանել:
Դրա համար ել նրանք գիշերները քնելուց առաջ
իրենց պատուած շորերը տալիս են և առավոտյան
պատրաստի ստանում:

Մ ա ն ի շ ա կ .— Մինչև ձեր խոսալը, յես իմ գործն
արդեն վերջացրի: Սրանք տանեմ տամ իրենց,
գնամ քնեմ: (Կարկատած շորերը ձեռքին դուրս ե
գնում):

Յ ե ղ ի շ .— Սըս... վոտքի ձայներ:

Ղ ա գ ա ր .— Տղաներին իմաց տամ:

Յ ե ղ ի շ .— Հարկավոր չի... Տղաները քնած են: Ամեն
մի դատարկ բանի համար չարժի նրանց անհան-
գստացնել: Յերեվի քամուց թփերը կամ ծառի
ճյուղերը չարժվեցին: Բայց համինայն դեպս,
զգուշութուն ե պետք... Դու այդ կողմ գնա, իսկ
յես այս կողմը: (Նրանք ծառերի արանքից նայում
են):

Ղ ա գ ա ր .— Յեղիշ, դեսն արի, մի տես, ենտեղ կար-
ծես մարդ ե յերեվում. հրեն, ծովեց դեպի ան-
տառ... կարծես դեսն ե դալիս...

Յ ե ղ ի շ .— Ի՞նչ ես կարծում, ո՞վ կարող ե լինի:

Ղ ա գ ա ր .— Բալի Ալո ամին, ա:

Յ ե ղ ի շ .— Յեթե նա լիներ, մեր պայմանական նշանը
կտար:

(Յերեք անգամ կրկնվող սուլոցի ձայն):

Ղ ա գ ա ր .— Հրեն պայմանական նշանը տվեց: Յես քեզ
չստացի՞, վոր նա կլինի:

(Դուրս են գնում և մի փոքր հետո Ավոյի հետ վե-
րադառնում: Խուրջինը Յեղիշն ե վերցրել, իսկ
հացի մեշուկը Ղագարը: Խոսելով գալիս են):

Յեղիշ, Ղազար և Ավո

Ավո.— Կոմունիստների դեմ խիստ հալածանք ա սկսվել: Մեր տղաներին հանդստություն չեն տալիս: Ամեն որ մարդկանց տները խուզարկում են ու հախ ու նհախ տեղը նրանց բանտարկում: Տղաներից շատերն են բռնված: Մինասն ես վերջին որերս մի գիշերվա մեջ տասը տեղ եք փոխում:

Յեղիշ.— Մինասը, յեթե կասկածի տակ եր, դյուղից պիտի հեռանար, նրա հեռանալուն դուք պիտի ոժանդակեյիք:

Ավո.— Գյուղը չըջապատված եր, հեռանալու հնար չկար:

Յեղիշ.— Նախքան չըջապատվելը դուք եղ պիտի անեյիք: Դրա համար կազմակերպությունը մեզ հուպ կտա...

Ավո.— Հեռանալու համար Չաքարը նրան մի քանի անգամ առաջարկել ա, ինքը չի համաձայնվել...

Ղազար.— Դու են առա, նրան վորտեղ ին պահում գեղումն ա, թե տարել են ուրիշ տեղ: Յեթե տարած լինին, գործը դժվարանում ա, իսկ յեթե գեղումն ա, կարելի ա մի բան անել:

Յեղիշ.— Ի՞նչ պիտի անես:

Ղազար.— Են պիտի անեմ, վոր նրա տեղը կիմանանք, կգնանք վրա կտանք ու նրան բռնված տեղից կազատենք...

Յեղիշ.— Վրա տալով բան դուրս չի դա, նրան ազատելու համար հարկավոր ա ուրիշ բան մտածել: Եղ անիծվածները, յես վախենում եմ հենց ես գիշեր նրան վերջացնեն և մենք վոչինչ չկարողանանք անել...

Ավո.— Յենոքանց Յեփրեմի տղան են որը Չաքարի հետ խոսալիս ա ըլել, նա ասել ա, վոր կոմունիստներին յերբ բռնում են, ել պահել չկա, Վսարում

են, իբր թե տեղափոխում են ուրիշ տեղ, բայց ճամբին խփում են ու սպանում և հետո հայտարարում, վոր փախչելիս ա ըլել, նրա համար ել խփել սպանել են... (Լսվում է պայմանակումն նշանը):

Յ ե ղ ի շ.— Մեր պայմանական նշանը... Ո՞վ պետք է լինի: Տղաները բոլորը քնած են: Ես ղիշեր պահակը մենք ենք: Վոչվոք մեզնից չի բացակայում: Ո՞վ կըլնի...

Ղ ա գ ա ր.— Ով վոր է, մեր տեղին ու նշանին տեղյակ մարդ ա:

Ա վ ռ.— Ձըլնի՞ թե մերոնցից ըլնեն. ձեր պայմանական նշանը Ջաքարին հայտնել եմ, շուքի նա մարդիկ ա նշանակել, վոր հետևեն և Մինասին տանելու դեպքում դան ձեզ իմաց անին:

Յ ե ղ ի շ.— Ուրեմն նրանք են, բայց կարող ա ուրիշ մարդ լինել, համենայն դեպս, իմաց տուր, թող տղաները վեր կենան, պատրաստվեն: Իսկ յես քաշանամ տեսնեմ: (Յեղիշը հրացանը ձեռքին դուրս է գնում: Ղագարը գնում է տղաներին վեր կացնում, իսկ Ավոն խուրջիցից փամփուշտներն ու բերած ատրճառակները խնամքով հանում է և նայելուց հետո դնում է գետին):

Տ Ե Ս Ի Լ 3

Ղագար, Սեակ, Ավո և խմբի տղաները

Ղ ա գ ա ր.— Տղերք ջան, վեր կացեք, շուտ, ե՛լ միք ուշանա, մեզ համար դործ ա բացվել:

Ս հ ա կ.— Մի անգամ չելավ, վոր քու պահակ յեղած ժամանակ, մի որինավոր քնեմ: Յես վախում եմ, վոր դու նորից հանաք ես անում:

Ղ ա գ ա ր.— Իհարկե: Դրա համար ել ձեզ քնից արթնացրի, վոր դնանք դաշնակցական մատուցերիստներին հետ մի քիչ հանաք անենք...

Բ Ո Ւ Ն Ր Ր.—Յանի քեզանից մարդ բան կհասկանա...

Ղ ա գ ա ր.—Լսեք, Մինասին բռնել են, կարծեմ վոր սա հանաք չի:

Բ Ո Ւ Ն Ր Ր.—Պահո՞... ափոսո... (Տգամներն արագ արագ սկսում են պատրաստվել, իսկ Ավոն իր հետ նոր բերած հեռադիտակը դրել է աչքերին և նայում: Ղագարը մտնելում է նրան):

Ղ ա գ ա ր.—Եղ հեռադիտակը, Ավո ամի, դու նո՞ր ես բերել:

Ա վ ո.—Նոր եմ բերել, բայց թե ինչքան վարավուրդ եմ անում, աչքիս դատ չի յերևում:

Ղ ա գ ա ր.—Իհարկե չի յերևա: Առաջինը, վոր սխալ ես բռնել և հակառակ կողմից ես նայում: Իսկ յերկրորդն էլ, վոր գիշեր է, վոչինչ չի յերևա: Բայց լավ բան ա: Սա կտանք Յեղիշին, վորպես մեր ղեկավարի, իսկ ես ատրճանակներն ել կտանք նրանց, ովքեր չունեն: Ավո ամի, ուրիշ ել ի՞նչ ես բերել մեզ համար:

Ա վ ո.—Մրանք ել փամփուշաներ են: Սա ել ձեր հացն ա: Սա ել կենտրոնից ստացված դրություններն են, Չաքարը զարկեց, վոր դուք ել կարդաք, ծանոթանաք: Մուղայիթ կաց, չը կորցնեք: Սա ել քամած մածուն ա: Սա ել պանիր ա, վերցրեք: Գիշեր - ցերեկ չոլերումն եք ընկած, սովի տարի ա, շատ բան բերել չենք կարողանում: Վոչխարները մի-մի անդամ արածացնելու համար դեսը կբերեմ, կաթ կը կթեմ, կտամ կխմեք, ջաններդ պնդանա: Ո՞վ ա իմանում, եզուց մյուս որը հազար ու մի փորձանք կզա գլխներիդ, եղ փորձանքից դուրս գալ ա հարկավոր...

Ղ ա գ ա ր.—Դուրս կգանք, մի վախի, դավխող ջան, արի սրանք հավաքիր տար «պահեստումդ» տեղավորիր: (Սեակն ու խմբի մյուս տղաները մտնելում են և գարմացած նայում):

- Բ ո լ ո թ ր ք .—Վ ա չ , վ ա չ , տ ար ճ ա ն ա կ ն Ե ր , փ ա մ փ ու շ ա ն Ե ր , հ ե ո ա ղ ի տ ա կ , հ ա ց , պ ա ն ի ր , մ ա ծ ու ճ , Ա վ ո ' ա մ ի , ե ս ի ' ն չ լ ա վ բ ա ն Ե ր ե ս բ Ե ր ե լ մ ե ղ հ ա մ ա ր :
 Ա վ ո .— Դ ու ք դ ո չ չ ա ղ կ ա ց Ե ք , լ ա վ բ ա ն Ե ր հ լ ա շ ա տ ե մ բ Ե ր ե լ ու : Հ ր ե ս ն ր ա ն ք ե լ յ Ե կ ա ն :

Տ Ե Ս Ի Լ 4

Ն ա յ ճ ֆ , Ջ ա ֆ ա ր և Յ ե ղ ի շ

- Ջ ա ֆ ա ր .— Ջ Ե ր ր ա կ ա լ լ Ե լ ու ո ր վ ա ն ի ց մ ե ն ք ն ր ա վ ր ա հ ա կ ո ղ ու ֆ յ ու ճ ու ճ Ե ր : (Ն ա յ ու մ Ե դ Ե պ ի հ ե ո ու մ) :
 Յ ե ղ ի շ .— Ի հ ա ր կ Ե , ու ր ի շ կ Ե ր ա յ ն ր ա տ ա ն Ե լ ու ր ո պ կ ն դ ու ք չ Ե յ Ե ք ի մ ա ն ա : Դ Ե ' , տ ղ Ե ր ք ջ ա ն , դ ու ք դ ի տ Ե ք , վ ո ր Մ ի ն ա ս ի ն ձ Ե ր ր ա կ ա լ Ե լ ե ն և հ ի մ ա բ Ե ր ե լ ու յ Ե ն , տ ա ն Ե ն : Ն ր ա ն պ Ե ա ք Ե ա զ ա տ Ե լ :
 Ջ ա ֆ ա ր .— Յ ե ղ ի շ , Մ ի ն ա ս ի ն բ Ե ր ու մ ե ն . . .
 Յ ե ղ ի շ .— Դ Ե շ ա տ ա պ Ե ց Ե ք , Ժ ա մ ա ն ա կ չ ա տ ի կ ո ր ց ն Ե լ . . . (Ա մ ր ո ղ ջ խ ու մ ք ր Ե ր ա ց ա մ ն Ե ր ք ձ Ե ո ֆ ն Ե ր ի մ զ ա մ ա ու ղ ղ ու ք յ ա մ ք ց ր վ ու մ Ե մ դ Ե պ ի ա մ ո տ ա ղ ի խ ու ր ք : Ք ի չ հ Ե տ ո ս կ ա վ ու մ Ե Ե ր ա ց ա մ ա ձ գ ու ք յ ու մ) :

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Բ

Յ-Ր Դ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Բերը ներկայացնում է փողոց: Մի կողմը Գալուստ աղի յերկհարկանի տունն է դեպի փողոցը նայող լուսամուտներով և պատշգամբով, իսկ մյուս կողմը նրա ցորենի ամբարն է. կամարածն է դուռ և ցուցանակ, վորի վրա լսոշոր տառերով գրված է. «Ամբար»: Վերին հարկի բաց լուսամուտներից լսվում է գրամաֆոնի նվագածուրյան ձայներ: Գյուղացիները դատարկ մեշոկները ձեռներին, ամբարի դռան առջև նստած սպասում են: Իսկ Գալուստ աղան, խմբապետը պատշգամբում նստած՝ ճարդի յեմ խաղում:

Տ Ե Ս Ի Լ 1

Գալուստ, խմբապետ, հեջան, Մուկուչ, 1-ին և 2-րդ գյուղացի:

Գալուստ.—Շեշ ու բեշ...

Խմբապետ.—Փանջ ու ջհար...

1-ին գյուղացի.—Գալուստ աղի տունը յես շատ եմ յեկել, դնացել. գիտեյի, վոր Գալուստ աղան իրա տանը թառ, քյամանչա ունի, համա իզ գրամաֆոնը չեյի իմացել. յերևում ա, վոր Գալուստ աղան գրամաֆոնն ել ա ունեցել:

Խեջան.—Գալուստ աղի տանը մենակ ասածու տված կրակն ա պակաս, նա գրամաֆոնն ել ունի ու ամեն ինչ ել: Դու մեր դարդը քաշի, վոր մի կատու ել

չունենք, թե մուկ բռնի: Են անտեր մկնիբը մեր
քունջ ու պուճախներում սաղ որը ջիրիզ են խա-
ղում ու իրար դիտով աթրմա թռչում:

Հ ա ս ա մ.—Արա կեչան, դու կգիտենաս, Դանել աղան
հարուստ կըլինի՞, թե Գալուստ աղան: Գո խել-
քով եզ երկուսից վո՞րը շատ փող կունենա:

Խ Ե չ ա մ.—Նրանց փողերի հաշիվը յես չեմ իմանում,
բայց են եմ իմանում, վոր եզ յերկուսն էլ մեզնով
են հարստացել, եզ յերկուսի ամբարն էլ մենք ենք
լցրել:

1-ի մ գ յ ու ղ ա գ ի.—Ախպեր, յես դարձանում եմ, թե
վոր ուրիշի ամբարնիբը լցնում ենք, բա վո՞նց ա
մենք մեր ցորենի հորը կարում չենք լցնենք:

Հ ա ս ա մ.—Ղորթ, եզ ինչիցն ա:

Խ Ե չ ա մ.—Եզ նրանից ա, վոր մեր ցորենի հորը են
դիտից ընենց ա շինված, վոր մեր լցրած ցորենը
մի ուրիշ ճամբով գնում, նրանց ամբարներումն
ա թափվում:

Մ ու կ ու չ.—Ընդուր էլ Գալուստ աղի գրամաֆոնն
ըտենց դիլ ձեն ա հանում ի՛...

Խ Ե չ ա մ.—Եզ ցորենի ամբարը վոր չլինի, Գալուստ
աղի իրա ձենն էլ կկտրվի, իրա գրամաֆոնինն էլ:
Դրանք դատարկ բաներ են, հրես երկու սհաթ ա
մենք ըստեղ կանգնած սպասում ենք, իսկ Գա-
լուստ աղան բալկոնում արխային նստած նարդի ա
խաղում:

Մ ու կ ու չ.—Կսպասենք, ճարներս ինչ: Գալուստ
աղան ինքը կուչա ա, նրան շատ հարկավոր չի,
թե մենք ես լիքը ամբարի կողքին սոված կսատ-
կենք:

Հ ա ս ա մ.—Գալուստ աղան մեղավոր չի, մեղավորը
մենք ենք: Ասած ա, մուկը ինքը մի վոչինչ բան
ա, համա յեղի քիլի մեջ, վոր ընկնում ա, յեղը
մուռտտովում ա: Մինասինը չլինի, ինքը մի դատ
չի, համա նրա յերեսից յեղի քիլեքն ա մուռ-
տտովել:

ԽԵՅԱՆ.—Դուք սխալվում եք, յեղի քիլեն, թե վոր
խտանկ ա, նրա մեջ մուկ չե, թիկուզ կատու ել
վոր ընկնի, են յեղը չի մուռտառովի:

ՄՈՒԿՈՒՆ.—Ձուք տեղը վոչ կատվին մեղք դրեք,
վոչ մկանը: Գալուստ աղան իր ուզած մարդուն
լավ ա ճանաչում, ով վոր նրա խոսքը լսում ա,
նրա կամքը կատարում, ես ամբարի դռները ամենից
առաջ նրա համար են բացվում, ցորենը
նրա մեշոկներն ա լցվում:

ՀԱՍԱՆ.—Աշխարհիս յերեսին խոսք լսելուցն ու
կամք կատարելուց հեշտ բան ի՞նչ կա: Որես
դենը յես նրա խոսքը կլսեմ, ով վոր հարկավոր
ժամանակ ինձ փող կտա, սոված ժամանակ—հաց:

1-ին գՅՈՒՂԱԳԻ.—Ասած ա ձին ու ջորին կովեցին,
քացին եշին կպավ: Հմի մերն ա, ուրիշները Գա-
լուստ աղին նեղացնում են, մեջտեղ մենք ենք
տուժում:

2-րդ գՅՈՒՂԱԳԻ.—Եդ նրանից ա, վոր ամեն մի
ասածին հավատում ենք:

1-ին գՅՈՒՂԱԳԻ.—Վոր իմանամ յերկնքից ինձ հա-
մար ասողեր են վեր բերելու, ուրիշի ասածներին
վոչ հավատացել եմ, վոչ իլ կհավատամ:

ԽԵՅԱՆ.—Վոր չես հավատացել, ի՞նչդ ա ավելացել.
մեզնից բեթար քաղցած ու աղւորը դու յես. տնա-
քանդ, վրեդ թամաշա արա ու ընենց խոսա, ե'...
եդ ինչ ա քու հալը... մի հին քրքրված չուխա ու-
նես, վոր իշի փալանի նման ամառ, ձմեռ վրիցդ
չի փոխվում. աղա Մահմադ խանի ժամանակից
մնացած մի պատուոված արխալուղ ունես, վոր
Սուրբ կարապետից յեկած քյանդրբազի շորի նման
վրեն ենքան ջուռա—ջուռա կարկատան ես կպցրել,
վոր ել չի իմացվում թաղա վախան ինչ դույնի ու
ինչ կտորից ա ըլել: (Գալուստ աղան ներս Ե
գալիս, նրան տեսնելուն պես բոլորը վառքի յեմ
կանգնում):

Նույնի, Գալուստ և հետո Համբարձում

Գալուստ.— Հը, եդ ի՞նչ խաբար ա, չլինի թե կոչում եք:

1-ին գլուխը.— Ձե, Գալուստ աղա, չենք կոչում, չենք ընենք խոսում ենք:

Գալուստ աղա.— Հա, չկովեք, կռիվը լավ բան չի, սերով կացեք: Կովից խեր չկա: Այ աղա, Համբարձում:

Համբարձում.— Համձե, ի՞նչ եք հրամայում:

Գալուստ.— Գնա ամբարի դուռը բաց արա, տես ես մարդիկ ինչ են ուզում: Յերկու սՀաթ ա ետեղ կանգնած, նրանք մեզ սպասում են:

1-ին գլուխը.— Գալուստ աղա, երկու սՀաթ չե, տասներկու սՀաթ ել կսպասենք, ի՞նչ կա վոր:

Գալուստ.— Ինչի՞ սպասեք, իմ ամբարը Դանել աղի ամբարը չի, վոր խալիը դնա նրա դռանը որերով կանգնի: Ինձ մոտ յեկողը զուր տեղը ժամանակ չպաի կորցնի: Ժամանակը թանգ արժի: Գնա ես մարդկանց ճամբու դիր: (Համբարձումը գնում ե, ամբարի դուռը բաց անում):

2-րդ գլուխը.— Գալուստ աղա, ես գլխիցն ենք ասում, վոր մենք փող չունենք. ցորենը դու մեզ նիսիս պտես տա:

Գալուստ.— Եդ վո՞նց ա, Դանել աղին թողած, իմ կուշան եք յեկել: Ինչպես յերևում ա, Դանել աղեն ձեզ նիսյա չի տալիս: Վնաս չունի, նա չի տալի, յես կտամ: Յես են մարդկանցից չեմ, վոր մեր ժողովրդի պահանջներին ընդառաջ չգնամ: Մեր ժողովուրդը լավ ժողովուրդ ա, բայց թե նրա միտքը ուրիշները պղտորում են:

Հասար.— Գալուստ աղա, դու դրուստ ես ասում:

Գալուստ.— Գալուստ աղան սուտ ասելու սովորութուն չունի: Մինասն եր, վոր իմ ասածներս ձեզ ծուռ մտքով եր բացատրում:

1-ին գյուղացի.—Գալուստ աղա, ճի՞շտ ա, վոր Մինասը փախել ա:

Գալուստ.—Ինքը չի փախել, այլ փախցրել են: Գիշերը նրան տանելու ժամանակ բանդիտները վրա յեն տվել, կանվոյներից յերկուսին սպանել, նրան ել փախցրել են: Սոսալով ընկա, մոռացա հարցնեմ՝ դուք ի՞նչ եք ուզում:

Հասամ.— Հացներս պրծել ա, Գալուստ աղա:

1-ին գյուղացի.—Գալուստ աղա, դու մեզ քոմադ պտես անի:

Գալուստ.—Ձեզ ել վոր քոմադ չանեմ, բա ուրիշ ել ո՞ւմն եմ քոմադ անելու: Հեռու դեղրանքից հազար ու մի տեսակ անծանոթներ դալիս են ինձնից փող են ուզում, տալիս եմ, դեղականս յեկել, ցորենն ա ուզում, չպե՞տք ե տամ: Գնացե՛ք, տարե՛ք՝ ինչքան քեֆներդ տալիս ա. քանի յես կամ, դուք նեղություն չեք քաշիլ: Հենց իմացեք՝ են ամբարը ձերն ա, յես ել են ամբարում կանգնած՝ ձեզ համար մի ծառայող եմ, տանողի մեշոկները կլցնեմ, բերողինը կդատարկեմ:

1-ին գյուղացի.—Սաղ ըլես, Գալուստ աղա, աստված քեզ յերկար կյանք տա:

Հասամ.—Քու շվաքը մեր գլխից անպակաս ըլնի. աստված ոջախդ հաստատ պահի, քու մեկը հազար անի:

Գալուստ.— Շատ ապրեք, զորանաք: Աստված վկա, քեֆս դալիս ա, վոր ձեր բերանից հայ քրիստոնեյի վաշել խոսքեր եմ լսում: Ձեր արելը վկա, սիրտս ուրախանում ա, յերբ տեսնում եմ արածս լավությունը մարդիկ հասկանում են ու դնահատում... Ա՛յ տղա, Համբարձում...

Համբարձում.— Համմե, ի՞նչ եք հրամայում:

Գալուստ.— Սրանց են լավ ցորենիցը կտաս, դինը կզամ յես կնչանակեմ:

Համբարձում.— Գալուստ աղա, դինը յես ել կնչանակեմ:

Գալուստ.—Գինը նշանակելու համար դու եկզամին
չես տվել: Ասա տեսնեմ, թվարանություն դիտե՞ս:

Համբարձում.— Գալուստ աղա, դու ինձ մի աչ-
քով ես մտիկ տալիս. թվարանությունն ինչ ա-
վոր, իմ վարժապետն ինձ կոտորակներ ել ա սո-
վորացրել:

Գալուստ.—Դե, վոր դու քոնց դուրսդ դովում ես,
ասա տեսնեմ, մեկ անգամ մեկ ի՞նչ կանի: Ի՞նչ
ես ծիծաղում, ասա մի ամաչի:

Համբարձում.—Մեկ անգամ մեկ, կանի մեկ:

Գալուստ.—Տեսա՞ր, վոր չիմացար: Յերկու անգամ
յերկու, ի՞նչ կանի:

Համբարձում.— Յերկու անգամ յերկու կանի
չորս:

Գալուստ.—Սլի չիմացար. վոնց վոր տեսնում եմ,
քու վարժապետը կոտորակները քեզ լավ չի սովո-
րեցրել: Մեկ անգամ մեկ կանի տասնը մեկ...
յերկու անգամ յերկու—կանի տասնըչորս: Տեսնում
ես, վոր կոտորակները դու լավ չես իմանում, իմ
ամբարը մտնողը—եզ կոտորակները պտի դիտենա:
(Գալուստ ազեմ Համբարձումի հետ մտնում է
ամբարը):

Տ Ե Ս Ի 1 3

Գյուղացիները մեռակ

1-ին գյուղացի.— Ճակատիս մեռոնը վկա, աչ-
խարհիս յերեսին սրանից լավ մարդ, չկա: Սրանից
դենն ով վոր ես մարդուն փիս ա առել, իմացեք,
վոր փիսը հենց ինքն ա:

Հասամ.—Գալուստ աղեն խղճմտանքով, ինսաֆով
մարդ ա ըլել, մենք բխարար: Հողն ըլնի մեր
հոտած խաների ու բեզերի գլխին:

Պեչամ.— Մեր Գալուստ աղին ել, ձեր խաներին ու
բեզերին ել քաղցած գայլերն ուտեն... թե նրանք

Հասկանում են խղճմտանքն ու ինսաֆը ի՛նչ բան
ա: (Մտնում է ամբարը):

Մ ու կ ու չ .— Գնացե՛ք, գնացե՛ք, եղ զուռնի ձենը
դուք հետս կիմանաք: (Մտնում է ամբարը):

Ձ-բ դ գ յ ու զ .— Սրանք ես ի՞նչ տեսակ մարդիկ են:
Գալուստ աղան յեթե ցորենը շտար, կտանյին փիս
մարդ ա, ցորեն ենք ուզում, չի տալիս, իսկ վոր
տալիս ա. ելի փիս մարդ ա: Սրանց բանը մարդ
չի Հասկանում: (Ներս եմ գնում):

Խ ե չ ա ն .— (Յորեմի լիքը մեշուկը դուրս է բերում):
Գալուստ աղա, ցորենը լավը չի, շատ ա կեղ-
տոտ:

Գ ա լ ու ս տ .— Ձենդ կտրի՛, ախմա՛խ, ձեռք ցորեն ա
ընկել, չես ել հալանում, ամբողջ յերկիրը սովից
կոտորվում ա... ճամբեքը բռնված . ի՞նչ դժվա-
րությամբ յես ձեզ համար ցորեն եմ ձեռք բե-
րում, իսկ դուք շնորհակալության փոխարեն
կանգնում, մեծ-մեծ խոսում եք...

Խ ե չ ա ն .— Գալուստ աղա, ախր վո՞նց չխոսամ. ցո-
րենդ շատ ա կեղտոտ, սա վոր տանեմ, մաքրեմ,
տակին բան չի մնա: Իսկ դու ինձնից սրա փոխա-
րեն բրինձի նման ջոկած սերմացու ցորեն ես պա-
հանջելու: Բա յես մեղք չե՞մ:

Գ ա լ ու ս տ .— Դու ընենց ես խոսում, կարծես զուռով
եմ եղ ցորենը քեզ տալիս. չես ուզում, թող մնա,
յերկար խոսալը հարկավոր չի: Ա՛յ տղա, Համ-
բարձում, արի ես ցորենը վերցրո՛ւ, հետ տար:
(Դուրս է գնում):

Խ ե չ ա ն .— Վոր թողնեմ՝ կտանի:

ՏԵՍԻՒ 4

Խեչան և Համբարձում

Հ ա մ բ ա ր ձ ու մ .— Յես վոնց վոր տեսնում եմ, եղ
մեշուկը շատ ա ծանր, դու չես կարում տանի:
Տո՛ւր դեռ: (Ուզում է տանել):

Խեղամ.— Թո՛ղ, ի՞նչ ես ուզում:

Համբարձում.— Ձլսեցի՞ր, Գալուստ աղան ինչի՞ համար ինձ կանչեց: Թող մեշուկը տանեմ, դատարկեմ:

Խեղամ.— Եդ ինչի՞ցն ա, մենք մի խոսքը տասն անգամ ասում ենք, խլանում ես, չես լսում, իսկ Գալուստ աղան, վոր մի կիսաբերան խոսքը քեզ ասում ա, դու ըտենց շուտ լսում ես: Գնա՛, Գալուստ աղան քեզ շատ բան կասի, նրա ամեն մի ասածը դու չպտի լսես:

Համբարձում.— Նրան թողած, բա յես քեզ պտի լսե՞մ, ախմա՛խ:

Խեղամ.— Ախմախ ել ես, մեկն ել ավել. Գալուստ աղի կշտին վոր ծառայում ես, հենց իմանում ես քեզանից կվախենա՞մ, մի խոսքիդ տասը ջուղար կտամ, խելքդ ո՞ւր ա գնում:

Համբարձում.— Դե արի ու համբերի:

Խեղամ.— Դե արի ու մի համբերի. վոր տեղովդ մի կրակ դառնաս, ի՞նչ կարաս անի: Տնաքա՛նդ, ծառայող մարդ ես. Գալուստ աղին դու ետք հարկավոր ես, պահում ա, եզուց հարկավոր չեղա՛ր, պոչիցդ բռնելու ա, սաստիած կատվի նման դուրս շարտի: Խելքդ հավաքի՛ դոււխդ, ձեռքիցդ յեկած լավությունն արա, թե չե հետո կփռչմարնես:

Համբարձում.— Հերիք ա, դլխիցդ դատարկե՛մատարկ դուրս տաս:

Խեղամ.— Յես քեզ ինչ վոր ասում եմ, դու հասկացի՛ր: Գալուստ աղեն արդեն հասկացել ա, դրա համար ել ահ ու դողը ջանն ա ընկել: Գիշերները քուն չունի: Նրա հանգստությունը խանգարվել ա: Նա հույսը դրել ա թափանչավոր մարդկանց վրա, բայց թե դրանով ել փրկություն չկա: Դրանցից մի յերկուսին են դիշերն են անտառի մեջ դրբել. են մյուսներին ել յերևի ետք-եզուց

կսկսեն՝ դուրեկ... ինչպես տեսնում ես, հաւածը սկսվում ա։
Համբ.— Ընչի՞ համար ես դու ինձ եղ խոսքերն ասում։

Խեչան.— Եղ խոսքերը յես նրա համար եմ քեզ ասում, վոր դու քո հաշիվը վերցնես։ Լսի՛ր, Գալուստ աղի կշտին հարյուր տարի ել վոր ծառայես, վոչ աղա կդառնաս, վոչ խան։ Ուրեմն խելքըդ հավաքի՛ դուրեկը և քեզ որինսավոր պահի՛։

Համբ.— Այսինքն։

Խեչան.— Այսինքն, աշխարհ ա ելի, ո՞վ ա իմանում, հանկարծ կպատահի, վոր Գալուստ աղան աղայությունից կզրկվի, հետո մարդիկ դուրս կդան, հին մեղքերի համար քեզ ել նրա հետ կբռնեն ու մի լավ հուպ կտան...

Համբ.— Եղ լեզուդ չլինի, ազոավները աչքերդ կհանեն։ Ես տնաքանդներն ամբարը մտնելիս կատու յեն դառնում, դուրս դալուց ասլան-դափլան, հեաներն ել խոսալ չի լինում։ Վերցրո՛ւ, դնա՛, Գալուստ աղան նորից չգա, քեզ եստեղ տեսնի։

Խեչան.— Տեսնում ա տեսնի, վոչ նրանից եմ վախենում, վոչ քեզնից։

Համբ.— Յորենը տալուց հետո պարզ բան ա, վոր չես վախենա։ (Գնում է ամբարը)։

Խեչան.— Քու հորն ողորմի, ցորենը թե չե դուք հենց մուֆթա յեք պալիս։ (Մեշուկը շալակում և դուրս է գնում)։

ՏԵՄԻԼ 5

Առաքել, վարքի, ծառաներ, Գալուստ, Համբարձում, Մուկուչ, Հասան, 1-ին և 2-րդ գյուղացի։ (Ծառաների ձեռքին մի հատ սամա-վար, կերակրի պղինձներ, քավա, ֆավկիր, շամփուր, խաֆյանդագ, կարպետ և այլն իրեր։ Ծա-

ոսմերն առաջից վազում են, իսկ Առաքելն ու
վարքիմ ցրանց հետևում են) :

1-ին ծառա.— Գնացե՛ք, կորե՛ք, ի՞նչ եք քոռ աղ-
քատի նման ընկել քամակներիցս :

2-րդ ծառա.— Մենք մեր գլխու բան չենք բռնի,
Գալուստ աղան մեզ ինչ վոր հրամայել ա, մենք
նրա հրամանն ենք կատարում :

Վարքի.— Գալուստ աղի տունը Հախ միայն տերը
քանդի... տափակ սև քարն ընկնի նրա գլխին...
ոխտը գլուլլա դիպչի նրա ջանին :

Գալուստ.— Ես ի՞նչ խաբար ա, Առաքել, դու ես
ի՞նչ բանի յես, ձեր ձենը սաղ գեղը վերցրել ա :
Բա դուք չե՞ք ամաչում, գետինը չե՞ք մտնում...
դարաչու նման մարդ ու կնիկ ի՞նչ եք կանգնել,
ձեն-ձենի տվել : Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել :

Առաքել.— Սրանից ավել ել ի՞նչ եյիք ուզում, վոր
պատահեր : Հարամու պես յեկար վրա տվիր,
տուն-տեղս թալանեցիր, ուզում ես, վոր ձեն ել
չհանե՞մ :

Գալուստ.— Պարտք ուզելուց փիս մարդ ենք դառ-
նո՞ւմ : Բա են վո՞նց ա՝ տանելու ժամանակը
մենք վոչինչ չենք ասում : Դու են ասա՛, պարտքդ
բերել ե՞ս :

Առաքել.— Բա սրանք ի՞նչ ա :

Գալուստ.— Պարտքը տալուց հետո արի, սրանք
հավաքիր տա՛ր, եղ գիրիլներն ինձ հարկավոր
չեն : Եղ ել չդառնա են որվանը. նոքարին դրկում
եմ ձվի համար, դու վերցնում, նրան դատարկ
ձեռքով ճամբու յես դնում : Բա յես հավատա՞մ,
վոր դուք ձեր տանը մի տասը հատ ձու չունեյիք :

Վարքի.— Վոր ունենանք՝ մինք կուտենք, քեզ ինչի՞
յենք տալիս :

Գալուստ.— Դուք ել վոր ձու չուտեք, աշխարհը
կքանդվի, ցամաք հացը բողազներովդ կուլ չի
գնո՞ւմ : Զու ուտող մարդն իր պարտքը մինչև
որս տված, պրծած կլիներ :

Առաքել.— Տվել եմ, շատ եմ տվել: Յերկու տարի պարտք տալով հողիս դուրս ա յեկել, բայց ի՞նչ անեմ, վոր խողի ճուտերի նման տակոսներն ա մի գլուխ ավելանում, իսկ իմ պարտքը վոչ պրծնում ա ու վոչ ել պահասում:

Մուկնուչ.— Ես են թվարանությունն ա, Գալուստ աղա, վոր ասում եյիր. «մեկ անգամ մեկ— կանի տասնմեկ»: Մեկ տվել ես, տասնմեկը նրանից պահանջում ես:

Գալուստ.— Դրանք դարտակ խոսքեր են, գլուխս չեն մտնի: Առաքել, ինչի՞ համար ես կանգնել, դնա են մնացածն ել բե՛ր, թե չե կգամ ելած—չե-լածդ կհավաքեմ, կբերեմ:

Առաքել.— Դրանից ավելի յես իմ տանը ել ուրիշ բան չունեմ, իմ ունեցած—չունեցածը դրանք ա, վոր հավաքել ու բերել եք, տունս քանդել:

Գալուստ.— Քո տունն են վախտը քանդվեց, վոր դու ինձնից թողուն գնացիր Դանել աղից ցորեն վերցրիր: Դու հենց իմանում ես՝ եդ չիմացա՞: Գալուստ աղան քառասուն հազար աչք ունի, նա իր տանը նստած տեղը իմանում ա, թե վորտեղ ի՞նչ ա կատարվում:

Բերածներդ տեսնեմ ի՞նչ ա, վոր սրանք մարդ ու կնիկ ըսենց վոտ ու ձեռ են ընկել: (Նայում է իրերին): Ես գլխիցն ասեմ՝ ես սամավարը ձեզ հարկավոր չի:

Վարբի.— Ինչի՞, մենք չայ խմել չենք ուզո՞ւմ:

Գալուստ.— Քու հորն ողորմի: Քու պապն ել հենց սամավարը կողքին հողին տվեց: Չայ խմել թե վոր ուզում եք, մի պղինձի չալդան առեք, նրանով չայ խմե՛ք: Դուք ել, վոր սամավարով չայ չխմեք, աշխարհը կքանդվի: Մարդ իր յորդանի գյուրա վոտ կմեկնի: (Տնտղում է մյուս իրերը):

Լսի՛ր, ես կարպետն ել ձեզ հարկավոր չի:

Առաքել.— Ինչի՞, մենք իսան չե՞նք, մեր յերեխեքը գետնի վրա հո չպտի՞ նստեն:

- Գ ա լ Ո Ւ Ս Մ.— Եղ ոճի լեզուդ քեզ քաշի՛, դնա՛, դըլ-
խիցս հեռացի՛ր:
- Ձ ա ք ա ր.— Կգնամ, բա հո եստեղ չե՛մ մնալու, յես
սխալվի եմ, կրակն ուրիշի տունն ա ընկել, իսկ
ծուխը քո տնից ա դուրս դալիս:
- Գ ա լ Ո Ւ Ս Մ.— Ձենդ կտրի՛, լակո՛տ:
- Ձ ա ք ա ր.— Գալուստ աղա, յես լակոտ չեմ, յես ել
մարդ եմ, ինչպես և դու...
- Գ ա լ Ո Ւ Ս Մ.— Դու վոր ինձ պես մարդ լինեյիր, քու
հոր պարտքը հիմի վաղուց տված կլինեյիր, դե
տո՛ւր, ե՛լի... ինչի՞ չես տալիս:
- Ձ ա ք ա ր.— Չունեմ, վոր ունենամ՝ կտամ:
- Գ ա լ Ո Ւ Ս Մ.— Ունես, թե չունես, իմ գործը չի,
պարտք ես, պետք ե տաս: Չունես, վոր ըսենց ես
խոսում, վոր ունենաս՝ աշխարհ կքանդես. ել
ի՞նչ ես կանգնել, դոչաղ աղա յես, ամեն ինչի դու
չնորք ունես, գնա ավազակություն արա՛, մարդ
սպանի՛ր, մարդ թալանի՛, բեր իմ պարտքս
տո՛ւր:
- Ձ ա ք ա ր.— Մարդասպանություն, ավազակություն
անելու յեթե յես սովոր լինեյի, ամենից առաջ
յես քեզ կսպանեյի, քեզ կթալանեյի, վոր տգրու-
կի նման կպել ես մեր ջանին, մեր արյունն ես
ծծում, մեր հողին հանում... սաղ գեղը տնքում ա
քու ձեռին, ել տուն չի մնացել, վոր չքանդես,
ել կին, յերեխա չի մնացել, վոր չլացացնես:
(Դիմելով ցորեն տանող գյուղացիներին): Իսկ
դուք, խեղճ վողորմելիներ, սրանց տեսեք՝
ձեր որը լաց ըլեք: Եղ ցորենի ամեն մի
հատիկն ասեղ ա դառնալու՝ ձեր բկին շարվի:
Ցորենի տեղ դուք եղ մեշոկներով կրակ
եք տանում, ձեր տուն ու տեղը կրակ դցեք
ու վառեք:
- Գ ա լ Ո Ւ Ս Մ.— Ձենդ կտրի՛ր, լակո՛տ, եղ խոսքերի
համար դու բանտ կնստես:

Ձ ա ֆ ա ր .— Բանալը քեզ նմանների համար պիտի շին-
 ված լինի, վոր որը ցերեկով մարդ էս թալանում
 և սրանց նմանների ունեցած—չունեցածը ձեռքից
 խլում... Ասա՛, քանի սրանց նմանների տուն ու
 տեղն էս քանդել, սրանց նմանների ողբիս կրակը
 ու մոխիրը հանդցրել, մինչև վոր էս ամարաթն
 էս շինել. քանի՞ սրանց նմանների ցորենի հորերն
 էս դատարկել, նրանց յերեխեքի բերաններից պա-
 տառը կտրել, մինչև վոր էս ամբարներն էս
 լցրել... Գնանք, Առաքել ամի, գնանք, Վարթի՛
 բաջի, ձեր խեղճութունն ու անճարութունը թող
 նա չտեսնի:

(Ձափարը, Առաքելը և Վարթին դուրս են
 գնում):

Մ ու կ ու չ .— Մենք ել գնանք:

Գ ա լ ու ս տ .— Դո՛ւք ինչի համար եք գնում: Ինչի՞
 համար եք եղ ցորենը թողնում, վերցրե՛ք, տա-
 րե՛ք:

1-ին Գ յ ու ղ ա ց ի .— Հարկավոր չի, թող մնա:

2-րդ Գ յ ու ղ ա ց ի .— Ավելի լավ ա՛ մենք սոված
 մնանք, քան թե եղ ցորենը տանենք:

Հ ա ս ա ն .— Գալո՛ւտ աղա, դու շատ անինսաֆ մարդ
 ես... (Դուրս են գնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

4-րԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը մերկայացնում է Բաղալի տան բակը:
Շրջապատված է կիսափուլ ցամկապատով:
Ցանկապատի մի կողմը Բաղալի մի հարկանի,
հողի կտուրով ծածկված տունն է, իսկ մյուս
կողմը՝ փողոց:

ՏԵՍԻՒ 1

Մարիամ և Գյուլիգար

(Բակում կանգնած խոսում են):

Գյուլիգար.— Յերեկի գազտնի ժողով կամ խորհրդակցություն է յեղել, վոր ուշացել է: Անտեղի նա չեր ուշանա, կամ թե սա առաջին անգամ հո չի, շատ անգամ ա պատահել, վոր նա գիշերները տուն չի յեկել, և վոչ մի անգամ ել դու դրա համար եղջան չես անհանգստացել. ես որ քեզ ի՞նչ ա պատահել, յես չեմ հասկանում:

Մարիամ.— Ես որ ուրիշ որերի նման չի. կսոր նրան մի բան ա պատահել յերեկ. հերդ ինչի՞ եսքան ուշացավ, գար տեսնենք՝ ի՞նչ խարար ա բերում: Քանի հավերը հավարնից դուրս չեն յեկել, գնա են կարմիր վորձակն ու սև հավը բռնի, մորթենք...

(Ձեռները դեպի յերկինք պարզած՝ աղոթում է):
Ո՞վ Մարիամ աստվածածին, դու բարեխոս ըլես... աղջի՛, ինչի՞ համար ես կանգնել. ախր յես քեզ բան ասեցի:

Գյուլիգար.— Յես չեմ հասկանում. կարմիր վորձակն ու սև հավը ինչի՞ համար եք մորթում:

Մարիամ.— Եղջու հաշիվը չի. յես քեզ ինչ վոր ասում եմ, դու գնա, ընենց արա՛:

(Մարիամն ու Գյուլիգարը գնում են ներս, իսկ գյուղացիները հավաքվում են փողոց):

ՏԵՍԻԼ 2

Առաֆել, Հասան, հանդապահ, 1-ին և 2-րդ գյուղացի:

Առաֆել.— Ասում են, վոր Կարմիր Բանակն արդեն Հասել ա Ղազար:

1-ին գյուղ.— Եդ Հաշվով, ուրեմն, Ղազար-Շամ-չաղինում ել դաշնակներ չկան:

Առաֆել.— Չկան: Կարմիր Բանակը դալուց նրանք մի քիչ կովել են և տեսել են, վոր դիմադրել նրանց չեն կարող, թողել փախել են:

2-րդ գյուղ.— Վայ թե սուտ լինի:

Առաֆել.— Ինչի՞ պետք է սուտ լինի: Ա՛յ, Հրեա Չաքարից կհարցնենք, իսկությունը կիմանանք: (Չեռֆի շոմաղով բակի դուռը ծեծում է): (Գյուլիգարը դուրս է գալիս):

Աղջի՛, Գյուլիգա՛ր, Չաքարին ասա մի դուրս գա:

Գյուլիգար.— Չաքարը տանը չի:

Առաֆել.— Բա ո՞ւր ա գնացել:

Գյուլիգար.— Չգիտեմ: Երեկ գիշերվանից նա տուն չի յեկել:

Առաֆել.— Բադալ ամուն կանչի:

Գյուլիգար.— Նա ել տանը չի:

1-ին գյուղ.— Չէ՛, ետեղ մի բան կա:

2-րդ գյուղ.— Ուրեմն Առաքելի ասածները կարծես Հաստատվում են:

Հասան.— Երանի Հաստատվի:

Առաֆել.— Հաստատվելուն ամենքս ուրախ կլինենք, բայց յես մի ուրիշ բան ել եմ մտածում: Վայ թե Չաքարին ել ու Հորն ել եդ անիծածները բռնած ըլեն ու են խեղճերը խաբար չըլնեն:

2-րդ գլուխ.— Ամեն ինչ սպասելի ա: Պատմում են,
վոր են որը հարևան գյուղում գիշերը մտել են
մեկի տունը, մարդու ծոցից կնկան դուրս բերել
ու տարել:

Բնութիւնը.— Հետո՞:

2-րդ գլուխ.— Հետո են, վոր մի գիշեր պահում են
ու նորից վերցնում ճամբու դնում:

Առաջինը.— Քաղաքում ավելի մեծ խայտառակու-
թյուններ են կատարվում: Ասում ա թատրոնում
ներկայացման ժամանակ, մարդը կողքին նստած,
կնկա թևից բռնած զոռով վերցնում, տանում են:

Բնութիւնը.— Դե լավ, բա ենտեղ իշխանութիւն
չկա՞:

Առաջինը.— Ա՛յ բաթմիշ ըլի եդ տեսակ իշխանու-
թյունը: Եդ խայտառակութիւն կատարողները
հենց եդ իշխանութիւն մարդիկը չե՞ն: Դրանց քո-
քը կտրվի: Տնաքանդները կարծես Իրանի Նա-
դիր շահի նազիր-վեզիրներն են, թաղի-թուլի
նման հոտոտելով ման են գալիս, վորտեղ մի սի-
րուն կնիկ կամ ջահիլ հարս են տեսնում, զոռով
բռնում-տանում են:

2-րդ գլուխ.— Քանդված յերկիր ա, տեր ու տիրա-
կան չկա, ով ինչ ուզում ա, ընենց ել անում ա:

Հասան.— Իրանի անունն ա բեղնամ, ձեր Հայաս-
տանը Իրանից անցել ա...

1-ին գլուխ.— Հեռու ինչի՞ յես գնում. են որը տա-
նը չեմ ըլել, մտել են մեր դամից թոխլի վերցրել,
տարել: Խնայում եյի, թե մորթեմ, յերեխեքն
ուտեն, նրանք վերցնում են տանում:

2-րդ գլուխ.— Մի խոսքով Դադաստանի սարերում
բուն դրած ավազակները են չեն անի, ինչ վոր
սրանք են անում...

Բնութիւնը.— Ձե՛, դանակը բկներիս դեմ ա առել...

1-ին գլուխ.— Յերանի բայլուկիկների գալը ճշտվեր:

Առաջինը.— Ո՞ւր ա, մի ըտենց բան ըլեր: Յես
նրանց գալող ճամբին դուրբան- ուր վոր դնում

են, խեղճ ու կրակ ժողովուրդը աչք ա բաց
անում ու իր համար ազատ ու հանգիստ ապ-
րում...

Բ ու յ ո թ ը:— Բաղալ ամին հրես յեկալ:

ՏԵՍԻԼ 3

Նույնք, Բաղալ, հետո Մարիամ և Գյուլիգար

Ա ն ա ֆ ե յ լ.— Ա՛յ մարդ, ո՞ւր մնացիր, դե արի, է՛.
երկու սհաթ ա յեկել եստեղ քեզ ենք սպասում:

Բ ա ղ ա յ լ.— Ինչի՞ համար եք սպասում, ի՞նչ եք ու-
զում ինձանից: Ձեզ բաժանելու համար յես վոչ
փող ունեմ և վոչ ել ցորենի լիքը ամբար: Գնա-
ցե՛ք Գալուստ աղի մոտ, նա ցորենի ամբար ել
ունի, փող ել:

1-իմ գ յ ո լ ղ.— Մենք նրա փողն ել չենք ուզում, ցո-
րենն ել... սրանից հետո նրա յերեսը մենք չենք
տեսնի... մեր կապը մենք վերջնականապես նրա-
նից կտրեցինք, ել պրծալ, վերջացալ...

Բ ա ղ ա յ լ.— Յերեկ դուք ուրիշ յերգ եյիք յերզում,
եսոր ուրիշ... Խեր ըլի, ի՞նչ ա պատահել...
Ձե՛ չե՛: Դուք զուր եք Գալուստ աղի հեա թշնա-
մանում. դնացե՛ք, Գալուստ աղին հասկացրե՛ք,
վոր նրա հակառակորդը, նրա վոխերիմ թշնամին
Մինասն ա, Չաքարն ա, Յեղիչն ա, յես եմ...
Թող մեզ բանտարկել տա, թող մեզ աքսորել տա:

Ա ն ա ֆ ե յ լ.— Մի՛ վախի, Բաղալ ամի, դու մինակ
չես... խնդիրը յեթե մի հոգու կամ յերկուսի
համար ըլի, նրանք համ կբանտարկեն, համ կաք-
սորեն, իսկ եսոր, յեթե ամբողջ ժողովուրդն ա
իբ դուխը բարձրացրել, նրանք ել Մինասի և
Չաքարի նման են մտածում, բանտարկել նրանց
չենք կարող: Բանտում եղքան մարդու տեղ չի
անի:

2-րդ գլուխ.— Գալուստ աղան, վոր ամեն տեղ իրա փողի ուժն ա ցույց տալիս, մենք ել մեր ուժը նրան ցույց կտանք: Հերիք ա, ինչքան մենք նրա սարուկը դառանք...

1-ին գլուխ.— Ծիշտ ա ասում, դնանք, եղ հրեշին տանք շանսատակ անենք, տուն ու տեղը քանդենք, հիմնահատակ անենք... նրա ցորենի են լիքը ամբարն նալթ լցնենք, վառենք, բալքի դեղը նրա ձեռքից ազատվի...

Բ ա ղ ալ.— Դրանով դուք վոչ Գալուստ աղին կզատեք, վոչ դեղը նրա ձեռքից կազատեք... Գալուստ աղան ինքը մեղավոր չի, ես որենքներն են մեղավոր, վոր նրան գել են դարձնում, մեզ պես անլեզու վոչխարներին զզոզելու համար... Բա դուք չե՞ք իմանում՝ նրանք ո՞ւմ անունից են խոսում, ումնով են մեր դեմ կոչում... բա դուք չե՞ք տեսնում, վոր մեր բերանից դուրս յեկած մի համարձակ խոսքը ինչ որի յե մեզ հասցնում... յես ձեզ հարցնում եմ. ո՞ւր ա Մինասը, ո՞ւր ա Յեղիշը, նրանք ո՞ւր դնացին, ինչի՞ համար դնացին, ինչի՞ նրանք իրանց տնից - տեղից դադար դյուռն ընկան... յեթե եսպես շարունակվի, դեռ շատերը կգնան, դեռ շատերը կկորչեն... դնացե՛ք (բարձր ձայնով գոռում է) դնացե՛ք, ասում եմ, եստեղ մի՛ք կանգնի, կզան եստեղ, ձեզ կտեսնին, դուք ել իմ որը կընկնեք, մեղք եք...

(Նրանք ապշած նայում են և ապա կամաց-կամաց հեռանում: Իսկ Բաղալը յերկար ժամանակ, նրանց հետևից կանգնած նայելուց հետո, նստում է ցանկապատի մոտ ընկած գերանի վրա և գլուխը յերկու ամբրի մեջ առած՝ լուռ մտածում է):

ՏԵՍԻՒԼ 4

Բաղալ, Մարիամ և Գյուլիգար

Մ ա Ր Ի Ա մ.— Աղջի՛, Գյուլիգա՛ր, ի՞նչ բանի յես...

շուտ արա՛, ձեռքիդ գործը վերջացրո՛ւ, կարպեան
ու մեծ դռշակը բե՛ր, ես եյվանուսը փոխի՛: Արևոս
որ ա, նրանք ետեղ կնստեն: Ներսը յես վախե-
նում եմ նեղվածքութ՛յուն անի:

ԳՅՈՒԼԻԳԱՐ.—Ընչի՞, եդ քանի՞ հոգի յեն ըլելու
վոր:

Մարիամ.—Մի տասը հոգի կըլնեն: (Մատենքի վրա
բվում է և յուրաքանչյուր մեկի անունը տալուց
մի մատը ծալում): Քյոխվան ա, տերաերն ա,
տիրացուն ա, հետո...

ԳՅՈՒԼԻԳԱՐ.— Լավ, անունները մի տուր, ադրա-
նոցը լցնելու գիրքիլներ են: Հոդս դրանց գլխին,
գյուղական շների նման տարին տասներկու ամիս
ուրիշի դաներն են ընկած, կարծես իրանց տանն
ուտելու հաց չունեն: (Գնում է):

Մարիամ.—Աղջի՛, ձենդ կարի՛. ես պատերն ականջ-
ներ կունենան, կլսեն: Քոտանան նրանք, նրանց
բերանը մինչև ոսկոս չգցենք, նրանք մեզ կուտեն:
Խեղճ երեխես փշի վրա ա կանդնած, նրանից եմ
վախում: (Եյվանի անկյունում դրված մեշուկից
կուտ է լցնում կոնֆի մեջ, վրը տանի հավերիս
տա: Բադալը գնում է բակը):

Տ Ե Ս Ի Լ . 5

Բադալ, Մարիամ և Գյուլիգար

Բադալ.—Եդ ի՞նչ ա, ո՞ւր ես տանում:

Մարիամ.— Կուտ ա, տանում եմ տամ հավերին:

Բադալ.—Եդ կուտը դուք պահեք ձեզ համար... Հա-
վերը թող կոտորվեն... դուք ձեր հոգսը քաշեք...
հաց չի ճարվում, ճամբքը բռնված ա: Դեպ
վոչինչ չեն թողնում անցնի: Իսկ յեղածն ել մեր
ձեռքը չի ընկնում: Փող են ուզում, իսկ մենք փող
չունենք: Նխիա ել մեզ ո՞վ կա... (Գյուլիգարը
կարպետը բերում, գցում է, գնում է և բերում
դռշակը և յերկու մուրաֆա, եյվանում հյուրեոի
համար պատրաստում):

- Բ ա դ ա լ .— Ես ո՞ւմ համար եք պատրաստութիւն տեսնում :
- Մ ա ր ի ա մ .— Ես որ քրոխիկն ու տերտերն իրենց մարդկանցով դալու յին մեզ մոտ ճաշի :
- Բ ա դ ա լ .— Ո՞վ ա նրանց հրավիրել :
- Մ ա ր ի ա մ .— Յես : Յեկեղեցում տիրացուն մոտեցաւ, ասում ա՛ դուք բան խոստացաք ու ձեր խոստումը չկատարեցիք :
- Բ ա դ ա լ .— Դե լավ, դու նրան ի՞նչ ես խոստացել :
- Մ ա ր ի ա մ .— Բա միտդ չի՞, վոր ավետարանի համար յես մի արբեշումե աղլուխ խոստացա ու չտվի, հմի եդ աղլուխի պատճառով ա, ասում ա, վոր դուք եդքան նեղութիւններ եք քաշում :
- Բ ա դ ա լ .— Հետո՞ :
- Մ ա ր ի ա մ .— Հետո ե՛ն, վոր ասում ա, իսոր մի կարմիր վորձակ ու մի սև հավ կմորթես ու տերտերին, քրոխիկին ու մի քանի հոգու ել կվերցնեմ, տերտերը ձեր տունը կորհնի, կփարատի և սրանից հետո ել դուք նեղութիւն չեք քաշի :
- Բ ա դ ա լ .— Հետո, ասում ես նրա հետ ել ուրիշ ովքե՞ր են դալու :
- Մ ա ր ի ա մ .— Տերտերն ա, տիրացուն ա, քրոխիկն ա :
- Բ ա դ ա լ .— Բա գզիրը չի՞ դալո՞ւ :
- Մ ա ր ի ա մ .— Քրոխիկն եկած տեղը պարզ բան ա, վոր գզիրն ել կգա :
- Բ ա դ ա լ .— Գզրի հետ յերեւի չավուչն ել կգա, քեթխուղեքն ել կգան, կանցելյարում նստած պիտերն ել կգա :
- Մ ա ր ի ա մ .— Յես նրանց չեմ կանչել :
- Բ ա դ ա լ .— Գիտեմ, վոր դու նրանց չես կանչել, յեթև գան, նրանց հո դուրս չե՞ս անելու :
- Մ ա ր ի ա մ .— Իհարկե, ի՞նչպե՞ս կարելի ա նրանց դուրս անել :
- Բ ա դ ա լ .— Լսի՛ր, ասենք եդ տերտերն ու տիրացուն կգան, տունդ կորհնեն ու կփարատեն, իսկ մյուսներն ի՞նչ են անելու, նրանք ինչի՞ համար են

դալիս... Ա՛յ կնիկ, դու խելքդ կորցրել ես, մենք տանը որվա ուտելու հաց չունենք, դու հրավերք ես սարքում: Հետո ո՞ւմն ես հրավիրում, մեր թշնամիներին, մեր արյունը ծծողներին... Հարկավոր չի, թող նրանք չզան մեր տունը: Աղջի՛, սրանք հավաքի՛, տար կորցրո՛ւ... (Դռնակը, մութափամբը, կարպետը վերցնում, շարտում Ենթը): Եդ տեսակ հյուրերից մենք ինչքան հետու լինենք, ենքան լավ ա... թխածներդ յերկու փութ հաց ա, եդ ել վոր նրանց ուտացնեք, վաղը դուք ի՞նչ եք ուտելու, դրա մասին դուք մտածեք...

Մարիամ.—Մենք քար ուտենք, մենք ամեն ինչից թող զուրկ մնանք, միայն թե յերեսխաս ազատ մնանրան խոսք ասող, ձեռք տվող չլինի: Ամեն որ վոր եդ փողոցովը մի մարդ ա անցնում, վախությունից լեղիս ջուր ա կտրում, ամում եմ՝ ես ա եկան յերեսխի տանեն... Յերեսխի տանելուց հետո տունս թեկուզ վոսկով լիքը-ինչի՞ս ա պետք... (Մարիամը լաց Ե լիմում):

Բարալ.—Ա՛յ կնիկ, ելի դու սկսեցիր քու լացը: Առանց են ել յես շփոթված եմ, ձեր լաց ու կոծով դուք ել մի կողմից եք ինձ շփոթեցնում... յես քեզ հազար անգամ ասել եմ, ելի ասում եմ, մի գործ, վոր ուզում եք անել, խորհրդով արեք... խորհուրդով բռնած գործին փշմանություն չկա...

Մարիամ.—Խեչանը յերեզի ասեց՝ յեթե հացներդ պրծել ա, մի մեշուկ ցորեն մի տեղից յես ճարել եմ, ասում ա, կեսը ձեզ կտամ:

Բարալ.—Մի մեշուկ, կամ կես մեշուկ ցորենը մեր յարեն չի սողացնի: Տարվա ապրուստ ա հարկավոր... տարին տասներկու ամիս խշխատիր և եսոր դատարկ նստիր... Ե՛հ, ես ել կյա՞նք ա, ես ել ո՞ր ա, վոր մենք ենք ապրում... գետնին սողացող մրջյունները, ցորենի հատիկներ հավաքելով, իրանց համար տարվա պաշար ունեն,

խիչ յես, վոր ցորենը կալից մեշոկներով եմ կրել,
եսոր յես որվա ուտելու հաց ջրանեմ... (Նստում
ե ու մտածում):

Մարիամ.— Վո՛ւյ, քուսնամ: Քյոխվան տիրացվի
հետ գալիս ա: Աղջի՛, Գյուլիզար, կարպետը
գցի՛, դռնակը փակ՛: Շո՛ւտ, քանի չեն յեկել: Ա՛յ.
Մարդ, ինչի՞ յես նստել, վի՛ր կաց, հրավիրի՛ր
նրանց:

Տ Ե Ս Ի Լ 6

Նույնք, Բյոխվա, տիրացու և հետո՝ գգիր:

Քյոխվա.— Բարի աջողում, Բադա՛ւ ամի:

Բադաւ.— (Սառք) Բարով եկաք:

Տիրացու.— Բադաւ ամին նեղացած ա յերևում:

Մարիամ.— Նեղացած չի, աստմն ա ցավում, հա-
մեցե՛ք, նստե՛ք:

Քյոխվա.— Մարիամ բաջի, վոր ասում ես, պտի
նստենք: (Նստում են):

Տիրացու.— Բայց լավ չի, վոր Բադաւ ամու ատամը
ցավում ա: Եդ գահրումար ատամացավը յես
քաշել եմ, շատ դժվար ա... (Գգիրը շտապ ներս
ե մտնում):

Գգիր.— Քյոխվա՛ ջան, շուտ արա հասի՛, կենտրոնից
մարդ ա յեկել:

Քյոխվա.— Պա՛հ, դրա տունը քանդվի. եդ ի՞նչ վատ
ժամանակ եկավ, լի՛ր, ել մի կանգնիր, դնա մի
տեղից թոխլի ճարի՛, տո՛ւր, թող մորթեն, պատ-
րաստեն: Եդ կենտրոնից եկած մարդը սոված
չպետք ե մնա:

Գգիր.— Քյոխվա՛ ջան, բա վոր չտա՞ն

Քյոխվա.— Վո՞նց թե չտան, ի՞նչ իրավունք ունեն
չտալու: Կտեսնես, յեթե հակառակում են, չեն
տալիս, վզակոթներին տո՛ւր, մտի՛ր դո՛մը, քաշի՛,
գոռով դուրս բե՛ր: Յես քեդ իրավունք եմ տալիս:
(Քյոխվան, գգիրը և տիրացուն դուրս են գնում):

Բադաւ.— Վզակոթին տալը սովորել եք. յես ձեք
ավագակ հերն անիծեմ:

- Մարիամ.— Այ՛ մարդ, մի դնա տե՛ս՝ եղ կենտրոնից յեկած մարդն ինչի՞ համար ա յեկել:
- Բաղալ.— Կամ աղն ա պակաս, կամ մաղը, նրանք ուրիշ ել ինչի՞ համար կզան: (Դուրս ե գնում):
- Մարիամ.— Աղջի՛, եղ կենտրոնից եկած մարդը Ջաքարին բռնելու համար չըլնի՞ եկած, հողը գլխիս... յերեխիս վոր հանկարծ դան, բռնեն, տանեն... (Լաց ե լինում):
- Գյուլիգար.— Ա՛ մեր, դու ել բանը չիմացած, կանգնել, լաց ես լինում: Եղ կենտրոնից յեկած մարդը դուցե բոլորովին ուրիշ նպատակով ե յեկել:
- Մարիամ.— Յերանի եղպես լինի: Դե հավաքի դրանք տանենք: Կամ թե չե թող մնա, բալքի նրանք նորից գալիս են:
- Գյուլիգար.— Ջահրումար դառնա նրանց գայն ել ու դնալն ել: (Մարիամի հետ գնում ե մերս):

Տ Ե Ս Ի Լ 7

Բաղալ, Բյուսվա, Առաքել, Հասան, հանդապահ
և 1-ին ու 2-րդ գյուղացի

- Բաղալ.— Մուկը ծակը չեր մտնում, ցախավելն ել պոչից կապեցին: Մեր ցավը, մեր դարդը մեզ հերիք չեր, եղ դահրումար հարկն ել մի կոնիցն եկավ ավելացավ:
- Բյուսվա.— Ել կանգնելու, խոսալու ժամանակը չի: Գնացե՛ք, ճարե՛ք, բերե՛ք:
- Բուլոբը.— Վո՞րտեղից ճարենք, վո՞րտեղից բերենք, տեսնում ես, վոր չունենք:
- Բյուսվա.— Ունեք, թե չունեք, կենտրոնից յեկած մարդն եղ չի հարցնում: Նա յերկու ահաթ ձեզ սրոկ ա տվել, ինչ ուզում եք արեք, եղ նշանակված սրոկում կտաավարության հարկը հավաքած պետք ե լինի: Դրանից ավել են մարդն ել ուրիշ բան չի ուզում լսել և չի ուզում հասկանա:
- Բաղալ.— Հարկավոր ա նրան հասկացնել...

Ք յ յ յ վ ա .— Բաղա՛լ ամի, դու քեզ մի քիչ կարգին պահի, եղ խոսքը կենտրոնից յեկած մարդու անգաջը ընկնի, քեզ տեղն ու տեղը կչորացնի:

Բ ա դ ա լ .— Ինչ ուզում աս, թող անի: Յես կերթամ, եղ կենտրոնից եկած մարդու առաջին կկանգնեմ ու եղ խոսքը նրա յերեսին կասեմ: Թող նա բարեհաճի դա մտնի մեր տները, իր աչքովը մեր դրությունը տեսնի ու հետո դնա հրամաններ տա... հրամաններ ու պրիկազներ մենք շատ ենք լսում, իսկ սզնություն ու փրկություն մենք չենք տեսնում...

Ք յ յ յ վ ա .— Բաղա՛լ ամի, դու հասկանո՞ւմ ես՝ ինչ ես խոսում:

Բ ա դ ա լ .— Յես հասկանում եմ: Յես ուզում եմ, վոր իմ ասածներն ուրիշներն ել հասկանան ու իմանան, վոր մեր ժողովրդին վոչ եղ կենտրոնից յեկած մարդիկն են հարկավոր, վոչ ել դրանց տված հրամաններն ու պրիկազները:

Ք յ յ յ վ ա .— Բաղա՛լ ամի, յես քեզ զգուշացնում եմ: Յեթե մյուս անգամ դու կհամարձակվես եղ տեսակ անպատասխանատու հայտարարություններ անել, ել չեմ համբերի, կբռնեմ, կզցեմ վոտիս տակ, դամ չին կքաշեմ, ենքան կտամ, վոր կաշիդ կպլոկվի:

Բ ա դ ա լ .— Դու անհող կաց, վրաս կաշի չկա, վոր դու պլոկես: Իմ կաշին վաղուց պլոկել են:

Ք յ յ յ վ ա .— Հալիվոր մարդ ես, յես քեզ խղճում եմ: Հենց եղ խոսքերի համար քեզ կարելի յե տասնըհինգ տարով նստացնել:

Բ ա դ ա լ .— Նստածները քիչ են, ինձ ել տարեք նրանց կողքին նստացրեք: Վնաս չունի, թող ինձնով մեկն ել ավելանա: (Քաշվում է մի կողմ, չիբուխը լցնում և սկսում է ագահաբար ծխել):

Ք յ յ յ վ ա .— Դուք նրա ասածներին անգաջ մի՛ք դնի: Գնացե՛ք, դեսից-դենից մի կերպ ճարե՛ք, քննե՛ք տվե՛ք: Կանգնել-խոսախոյ բան դուրս չի դա:

ԲՆԼՈՐԸ.—Վոր չունենք, վո՞րտեղից ճարենք, վո՞րտեղից բերենք տանք:

ՔՅՆԽՎԱ.—Ես ի՞նչ տեսակ անհասկացող խալխ են: Ուրեմն ձեր միտքն ա, վոր կառավարութեան հարկ չտաք:

ԱՆԱԲԵԼ.—Ո՞վ ա ասում, մեր խոսքը կառավարութեան հարկը տալու մասին չի:

ՔՅՆԽՎԱ.—Բա ինչի՞ մասին ա:

ԱՆԱԲԵԼ.—Մեր խոսքը նրա մասին ա, վոր սելայն ու կարկուտը մեր արտերը փչացրին: Կառավարութեան հարկը տալու մենք հնարավորութեան չունենք:

ՔՅՆԽՎԱ.—Անցյալ տարի չորութեանը մահանա արիք, ես տարի սելայն ու կարկուտն եք պատճառ բռնում: Ուրեմն եղ հաշվովը դուք մեր կառավարութեանը վոչ մի տարի հարկ չպիտի տաք. եղ տեսակ որենք չկա: (Արագ փայլերով դուրս ե գնում):

ԲԱՊԱԼ.— Չկա, հարկավոր ա ստեղծել...

(Խորքում աղմուկ, իրարանցում):

ԱՆԱԲԵԼ.—Ես ի՞նչ դալմաղալի ձեն ա:

Ի-ԻՄ ԳՅՆԼՊԱԳԻ.—Ընչի՞ յեն մարդիկ վազվզում:

ՀԱՍԱՑ.—Չընի՞ բալլեիկները դալխ են:

ԲՆԼՈՐԸ.—Գնանք տեսնենք: (Դուրս եմ գնում):

(Տիրացում գրի հետ գալիս ե):

Տ Ե Ս Ի Լ 8

Ն

Տիրացու և գրի

Տիրացու.—Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել:

Գրի.—Են ա պատահել, ինչ վոր պտի պատահեր. արար աշխարհն իմացել ա, եղ վո՞նց ա դու չես իմացել:

Տիրացու.—Գնացել էյինք հարևան գյուղը, նրա խարք պատրաստենք, վոր վաղը հանդիսավոր պատարագ անենք:

Գ զ ի ր.—Եդ պատարադը վաղը բայլը երկնները կանեն,
դուք նեղութունն չքաշեք:

Տ ի ր ա ց ու.—Վոչինչ չեմ հասկանում:

Գ զ ի ր.—Կհասկանաս. վոսոգելու կարիք չկա:

Տ ի ր ա ց ու.—Տե՛ր, փրկյա դու զմեզ ի չարե...
(Յերեսը խաչակնքում է):

Գնամ Գալուստ աղին դանեմ, նրանից իմանամ,
քեզանից մարդ բան չի հասկանում:

(Ուզում է գնալ, զգիրը նրա հետևից բռնում է):

Գ զ ի ր.—Ճամբեքը բռնված ա, ո՞ւր ես դնում, հնար
ըլեր յես ել կգնայի: Մրանից ապահով տեղ չկա,
նստենք, սպասենք, տեսնենք, ի՞նչ ա գալիս
դլիններս: Ասում են՝ Գալուստ աղան բայլը երկ-
նների գալը հենց վոր իմացել ա, իր քյոչ ու բար-
խանեն հավաքել և պատրաստվել ա, վոր դնա-
հանկարծ Չաքարը դեղի դինված տղաների հետ
ես կողմից, Յեղիչն ել իր խմբով են մյուս կող-
մից, դուրս են գալիս առաջները կտրում:

Տ ի ր ա ց ու.—Ուրեմն քու ասելով բայլը երկնները դեռ
չեն յեկել: Ե՛հ, փառք ասածու...

Գ զ ի ր.—Ձեն յեկել, բայց թե կզան:

Տ ի ր ա ց ու.—Ինչպես տեսնում եմ, դու ինձ ձեռ ես
առել: Քյոխվին կասեմ, վոր եդ անպատասխա-
նատու հայտարարութուններիդ համար քեզ մի
լավ պատժի:

Գ զ ի ր.—Ի՞նչ պատիժ, ինչ քյոխվա, ինչ փլան, ի՞նչ
փոտան. բայլը երկնները գալիս են. նրանք վոր
յեկան, ինձ ել, քեզ ել, քյոխվին ել բռնելու յեն,
կոխեն ծակուււր:

Տ ի ր ա ց ու.—Տե՛ր, դու փրկյա՛ զմեզ ի չարե...
(Ձեռները բարձրացրած դեպի յերկինք՝ աղոթում
է իսկ խորքում՝ հրացամազուրյում):

Գ զ ի ր.— Ես աղոթքներն իրենց ուժ ու զորութունից
բնկան: Հեղափոխութուն ա, տիրացո՛ւ... եդ ա-
ղոթքներն ել սրանից հետո վոչինչ չեն ոգնի, փր-
-

կուխիուն չկա, հրեն նրանք կռվելով դալիս են...
քանի չեն յեկել, արի փախչենք...

Տիրացու.—Փախչե՞նք... (Վագելով գնում են, իսկ
Բաղալը, Մարիամը և Գյուլիգարը տնից դուրս
են գալիս և վազում փողոց):

Բաղալ.— Ես ի՞նչ տրաքտրաքոց ա, ես ի՞նչ ձեն ձուն
ա...

Մարիամ.— Ա՛յ մարդ, չըլնի՞ եղ կենտրոնից յեկած
մարդը Չաքարին բռնել ա, տղերքը գնացել,
Յեղիշին իմաց են տվել, նա ել իր խմբով յեկել ա,
վոր Չաքարին ազատի:

Գյուլիգար.—Դու ել բան հնարեցիր:

Բաղալ.— Մուս արե՛ք, տրաքտրաքոցը կարծես
կտրվեց, բայց թի մարդիկ սկսեցին իրար խառ-
նվել...

Գյուլիգար.— Հրեն մի մարդ հրացանը ձեռին վա-
զում ե դեպի մեր կողմը...

Մարիամ.— Բա ել ընչի՞ համար եք կանգնել, ա՛յ
մարդ, գնանք, մտնենք տուն, դռները կողպենք:

Բաղալ.— Վոր մտար տուն, դռները կողպեցիր, են
ա, ե՛լի, ազատվեցիր: Ղարսի բերդը կռվում չդի-
մացավ, քու եղ քոսոտ տունն ա դիմանալո՞ւ:
Վոր մի պինդ քացով տաս, պատերն ել ու դուռն
ել ջարդ ու փշուր կըլնի:

Գյուլիգար.— Ա՛ մեր, հրացանը ձեռքին վազող
մարդը մեր Չաքարն ա:

Բաղալ.— Տեսնես ինչի՞ համար ա վազում:

Մարիամ.— Չըլնի՞ յերեխիս ուզում են բռնեն: Հողը
գլխիս:

Գյուլիգար.— Հրես յեկավ...

Տ Ե Ս Ի Լ 9

Նույնի և Ջաֆար

Ջաֆար.—Ա՛ հեր, աչքդ լուս, փափազդ կատար-
վեց: Դաշնակների ձեռքից դուրսը վերցրինք:
Կարմիր Բանակն ել հրեն դալիս ե վոր գնա Յերե-

վան, դեպի դաշնակցականների մայրաքաղաքը... Ձեզ ի՞նչ պատահեց, ուրախությունից լեզուներդ կապվել էո չի՞. դե՛, մի ասե՛ք՝ կեցցե՛ր Պորհրդային Հայաստանը:

Բ ու յ ո թ ը.— Կեցցե՛ր Պորհրդային Հայաստանը... .

Ջ ա ֆ ա ր.— Եդ չեղավ, հիմա ել հո դաշնակցականները չկան դիմներդ կանգնած, վոր վախենում եք... սրտալի ասե՛ք... .

Բ ու յ ո թ ը.— Կեցցե՛ր Պորհրդային Հայաստանը... .

Ջ ա ֆ ա ր.— Ա՛յ այդպես... խոսալով ընկա, մոռացա, վոր կարմիր դրոշակը տանելու համար եմ եկել... կարմիր դրոշակը վո՞րտեղ եք պահել:

Մ ա ր ի ամ.— Աղջի՛, դարմանի տակն ա, գնա բի՛ր:

Բ ա դ ա լ.— Դե, ել մի՛ք ուշացնի: Աղջի՛, արի՛, գնանք բերենք: (Բադալը և Գյուլիգարը գնում են):

Մ ա ր ի ամ.— Ա՛յ տղա, գիշերը չեկար, լեղիս ճաքեց, յես ասի ձեզ բռնել են... .

Ջ ա ֆ ա ր.— Ծիշտ ա, նրանք վորոշել էյին մեզ բռնել, բայց մինչև նրանք մեզ կրոնեյին, մենք նրանց բռնեցինք և նստացրինք: Ես ի՞նչ բան ա, կարմիր Բանակը դեռ չեկած, նրանց համար դուք արդեն պատրաստություն եք տեսել: Բայց նրանք եստեղ չպետք է մնան: Նրանք ես ճամբովը գալիս են՝ անցնեն: (Բադալը կարմիր դրոշակը բերում է):

Բ ա դ ա լ.— Ա՛ռ, դրոշակը վերցրո՛ւ. տես ինչ լավ մնացել ա:

Ջ ա ֆ ա ր.— Դե, յես գնացի... (Դրոշակը վերցնում և ուզում է գնալ):

Բ ա դ ա լ.— Ախր չպատմեցիր, թե եդ անիծվածների գործը ինչո՞վ վերջացավ: Յեղիշն ո՞ւր մնաց, ի՞նչ ելավ:

Ջ ա ֆ ա ր.— Դրա ժամանակը չի... գնամ կարմիր Բանակին դիմավորենք, նրանց ճամբու դնենք, հետո Յեղիշի հետ միասին կգանք, մանրամասնորեն կպատմենք: (Դուրս է գնում):

Բ ա դ ա յ 1.— Խելօք ա մտածել: Կարժիբ բանակին
կարժիբ դրոշակով պեաք է դիմավորել: (Հեռվից
լսվում է ցնծութեան և կեցցեմերի աղաղակ: Յե-
րաժշտախումբը «Ինտերմացիոնալ» է նվագում):

Ձ ա յ ն եր.— Կեցցե՛ կորճրդային Հայաստանը...
Կեցցե՛ Հոկտեմբերյան Հեղափոխութիւնը...
Կեցցե՛ Կոմունիստական կուսակցութիւնը...
Կեցցե՛ Կարժիբ Բանակը...

Բ ա դ ա յ 1.— Մի հարցնող ըլի, մենք ինչի՞ համար ենք
ըստեղ կանգնել: Գնանք, խորճրդային են թառլան
արծիւներին տեսնենք. նրանց աղատարար, նրանց
փրկարար թևերին ղուրբան... (Յեղիշը հրացանը
ձեռին Մամիշակի հետ ներս է գալիս):

Յ ե դ ի շ.— Բարե ձեզ...

Մ ա բ ի ա մ.— Բարեիդ ու արեիդ ղուրբան... (Գրկում
ու համբուրում է):

Բ ա դ ա յ 1.— Յեղի՛շ ջան, իմ կորած բալա՛... (Գրկա-
խառնվում են ու համբուրվում):
(Հեռվից լսվում է ուռաճերի ու կեցցեմերի աղա-
ղակը):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Շ Ը

Վ Ե Ր Ջ




ԿԱՐՄԻՐ ՊԱՐՏԻՋԱՆՆԵՐ

5 տար, 8 պատկերով

Պատկան մեամակություն ունեցող մյուսերը վերցված են Հա-
յասանի յեվ Վրասանի պե. արխիվներում յեղած դոկումեն-
տներից:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Բոգեմսկի— գործարանի կառավարիչ
2. Բեժան Բեկ— գյուղի ունեւոր
3. Պրիստավ
4. Վալադյան— չեզոք գոնայի գաշնակցական կոմիտար
5. Կացիտաձե— չեզոք գոնայի վրաց ջինվոր
6. Վաստ— չեզոք գոնայի վրաց ջինվոր
7. Դաքիկո— չեզոք գոնայի վրաց ջինվոր
8. Գալուստ— գործարանի բանվոր
9. Սիմոն— գործարանի բանվոր
10. Շամիր— գործարանի բանվոր, Հուլն
11. Մակար Ենստակով— գործարանի բանվոր ուսու
12. Տիգրան— գործարանի բանվոր
13. Սահակ— գործարանի բանվոր
14. Լազո— ընդհատակյա կոմիտեյի անդամ
15. Յեմնոֆ— Գալուստի Հայրը, չքավոր գյուղացի
16. Խաբուս— Գալուստի մայրը
17. Նազիկ— Գալուստի քրոջ աղջիկը, 13 տար․
18. Անուշ— այրի չքավոր կին
19. Գործավար
20. Բանվորներ, պարտիզաններ, ջինվորներ, գյուղացիներ և մատուցիչներ



ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Բիմը ներկայացնում է յերկաթուղու կայարան: Ապրանքատալ, 4 գոմի ՅԵՂԱՐ, տանիքի և աստի-
նանների վրա ուղևորները նստած՝ սպասում են
գնացքի շարժվելուն: Չմոռան ցուրտ և խավար
գիշեր է:

Տ Ե Ս Ի Լ 1

ՅԵՆՈՒՖ և ՇԱՄԻԼ

ՅԵՆՈՒՖ.—*Ես նամակ բերողը Գալուստի համար ու-
րիշ բան չասե՞ց:*

ՇԱՄԻԼ.—*Նամակ բերողին յես չեմ տեսել: Եղ նամակը
Եվստանց Սիմոնը ինձ տվեց: Նրան ել Շեստակով
Մակարն եր տվել: Դե յես դնացի:*

ՅԵՆՈՒՖ.—*Սողոսի՛, ուրիշ ելի մի քանի բան հարց-
նեմ:*

ՇԱՄԻԼ.—*Յենո՛ք բիճա, յես վրազ եմ, սպասելու
ժամանակ չունեմ: (Ականջին): Ընկեր Լազոն
դադարի հանձնարարականով ինձ ուրիշ տեղ ա-
ռուղարկում: Են տեղից կվերադառնամ, հանդիսս
սրտով կնստենք, կխոսենք: (ՅենոՒՖն ու Շամիլը
դուրս են գնում իսկ վալադյանը, պրիստավը և
Բեժամ բեկը, յերկաթուղու բուֆետի դռան առաջ
կանգնած, խոսում են: Նրանք սաստիկ հարբած
են):*

վալադյամ, պրիստավ և Բեժամ բեկ

Վ ա լ ա դ . — Սահմանները հայտարարել են փակված : Գաղթականների հետագա մուտքը Վրաստանի տերիտորիան՝ արդեն դադարեցված է :

Պրիստավ . — Եղ լավ չելավ : Մեզ համար խայտառակ դրուժյուն է ստեղծվելու : Վրաց շաարի առաջ պրոպուսկներ ստանալու համար ահագին ժողովուրդ է հավաքվել : Նրանք ենտեղ իրար գլուխ են կոտրում :

Բ Ե Ժ ա մ . — Դրանք ել հո թամամ զահլա տարան : Ամեն անգամ մի նոր դեկրետ են հրատարակում և մեր առաջ դժվարություններ ստեղծում :

Վ ա լ ա դ . — Պետք է խոստովանել, վոր այդ դժվարությունները ձեզ համար յերբեմն աշխատանքի նոր աղբյուրներ են ստեղծում . . .

Բ Ե Ժ ա մ . — Ավելի լավ է, վոր դրա մասին մենք կստեղ վոչինչ չխոսենք :

Պրիստավ . — Դրա մասին, յես կարծում եմ, վոր բուՖետում միայն կարելի յե խոսել . . . (Միժաղելով դուրս եմ գնում) :

Տ Ե Ս Ի Լ 3

Ուղևորներ և հետք 1-ին մաուզերիստ

1-ին ուղևոր . — Գլուխներս տարար, զգնանք ազատ ու անկախ Հայաստան : Ես ել քու ազատն ու անկախը, տե՛ս ու փառավորվի՛ր :

2-րդ ուղևոր . — Ասում եյիր, թե գործարաններ կան, արհեստանոցներ կան, բա ո՞ւր են : Տույց տո՛ւր, զնանք աշխատենք :

1-ին ուղևոր . — Խոսելը, յես կարծում եմ, վոր ավելորդ է : Մի կերպ պրոպուսկ ձեռք բերենք, դրնանք կորչենք : Մի քանի կոպեկ փող ունեյինք, յերկու ամիս անգործ մնացինք, կերանք վերջա-

ցրինք: Մի քանի որ ել յեթե մնանք սուլամահու-
թյան թեկնածու կզրվենք:

2-րդ ուղևոր.— Հակառակի նման երեկվանից սա-
մանները հայտարարել են փակված և վոչ վոքի
պրոպուսկ չեն տալիս:

3-րդ ուղևոր.— Ասում են՝ եստեղ ինչ-վոր մեկը
վրաց շտարում պաշտոնյաների հետ կապեր ունի,
կաշառքով պրոպուսկներ և ձեռք բերում և վոս-
կով վաճառում:

1-ին ուղևոր.— Մեզ վոսկի վո՞րտեղից է: Վոսկի
ունենայինք՝ եստեղ ի՞նչ գործ ունեյինք: Լսի՛ր,
մի բան ասեմ: Արի վոտքով գնանք, անտառների
միջով դուրս գանք մինչև Շուլավեր, իսկ Շուլա-
վերից դենը հեշտ է:

3-րդ ուղևոր.— Ճիշտ և ասում, վոտքով գնանք:

2-րդ ուղևոր.— Դու ո՞ւր ես գալիս. դու մնա՛, քու
ազատ ու անկախ Հայաստանի գործարաններում
ու Ֆարբիկաներում կաշխատես: (Միծաղելով
դուրս եմ գնում, իսկ մաուզերիստը «Մեր Հայ-
րենիք» յերգելով գալիս է):

1-ին մաուզերիստ.— Եսքան ել փողովուրդ կլինի՞:
Վադոններում ասեղ դցելու տեղ չկա: Եսքան
գաղթում են, եսքան կոտորվում են, եսքան
ջարդվում են, ելի չեն պրծնում... չե՛, ելի մի
պատերազմ և հարկավոր... (Մոտեցնում է աստի-
նանների վրա ֆեւած ուղևորին): Ե՛յ, պարո՛ն քա-
ղաքացի... ես տնաքանդն աստիճանների վրա
քնել ա, հանկարծ կզլորվի, գլուխը կջարդի,
յերկաթուղու նաշալստվան ինձ պետք է մե-
ղադրի... Ե՛յ, պարո՛ն քաղաքացի, քաղաքացի՛,
քաղաքացի՛... (Ատրնամակն ողում կրակում է:
Աստիճանի վրա ֆեւած ուղևորները գլորվում են
նեբքև և սկսում գոռալ):

Ուղևոր.— Սպանեցի՛ն, ոգնեցե՛ք...

1-ին մաուզերիստ.— Չախդ կարի՛ր, ի՞նչ ես
արջի նման գոռում... (Մտրակով խփում է):

Ուղեւոր.—Ինչի՞ համար ես խփում, խփելու դու ի՞նչ
իրավունք ունես:

Մառագեթիստ.—Ես մտրակն ինչո՞ւ համար են տվել
մեր ձեռքը: Յեթե տվել են, նշանակում է, վոր
մենք խփելու իրավունք ունենք: Իրավունքի մասին
դու ուրիշ անգամ չխոսաս, թե չի կաշիդ կպլոկեմ:
(Դիմելով մյուս ուղևորներին): Պատահկա դեռ չի
յեղիլ, դուք ինչո՞ւ համար եք նստել վազոնները:

Բռնորդ.—Կանդուկտորը մեզ թույլ է տվել...

1-ին մառագեթիստ.—Կանդուկտորը թույլ է տվել,
իսկ յես թույլ չեմ տալիս, իջե՛ք ցած...

Բռնորդ.—Հաղիվ ենք բարձրացել: Գնացքը հիմա
կշարժվի. ինչո՞ւ համար իջնենք ու նորից բարձ-
րանանք...

1-ին մառագեթիստ.—Ձեզնից բաներ մի՛ք հնարի:
Ես դնացքն ետք ել ե հստեղ, վաղն ել: Մազութ
չկա, իսկ առանց մազութի դնացքը տեղից չի
շարժվի:

Բռնորդ.—Ինչո՞ւ մազութ չկա:

1-ին մառագեթիստ.—Ձկա, վորովհետև չկա:

Ձայններ.—Ձկա, չկա, իսկ կռիվ ու թալան կա՞...

1-ին մառագեթիստ.—Ի՞նչ ասացիք:

Ձայններ.—Են ասացինք, ինչ վոր հարկավոր եր...

Մառագեթիստ.—Շատ մի՛ խոսաք, ցած իջե՛ք.
միևնույն է, ես պոյեղդը դնացողը չի:

Բռնորդ.—Պատճա՞ռը:

1-ին մառագեթիստ.—Պատճառը յես ձեզ հայտ-
նեցի:

Բռնորդ.—Նշանակում է, վոր մենք այստեղ շարաթ-
ներով նստելու յենք:

1-ին մառագեթիստ.—Շարաթներով չեք նստի:
Գնացել են անտառից վառելափայտ բերեն:

Բռնորդ.—Ուրեմն վառելափայտով պետք է պարա-
վողը տաքացնեք:

Ձայններ.—Աչքներս լույս... տասը որում մենք
Յերեվան չենք հասնի:

Բ ո յ ո թ ր ք . — Քանդդի ես տեսակ յերկիրը... Թ յ ո՛ւ...
 1-ին մառագերիստ. — Յերկրի վրա թքելու դուք ի-
 րավունք չունեք... (Մտրակով սկսում ե աջ ու
 ձախ խփել: վագոնում և վագոնի տանիքին նըս-
 տած բոլոր ուղևորներն իջնում են գանազան կողմ
 և ցրվում): Գնացե՛ք, պլատֆորմում սպասեք,
 յերբ վոր սպասողկա կլինի, կդաք կնստեք: (Անուշը
 փոքր յերեխայի հետ գալիս ե): Ես թռչունը
 վո՞րտեղից յեկամ: (Խորագնին նայում ե և բխտերը
 սրում):

Տ Ե Ս Ի Լ 4

1-ին մառագերիստ, Անուշ, յերեխա և հետո
 2-րդ մառագերիստ

Ա ն ու շ . — Ախար ինչի՞ հետս յեկար. յես հժի հասած
 կլինեյի դյուղ: Ես գիշերվա կեսին մենակ մենք
 ի՞նչպես գնանք:

1-ին մառագերիստ. — Յես կգամ, քեզ ճանապարհ
 կգնեմ (Անուշը կասկածամեով նայում ե): Յես իմ
 հերթափոխությունը արդեն հանձնում եմ: Մինչև
 դյուղ մենք միասին կգնանք... (Մի կողմ): Գե-
 ղեցիկ թռչուն ե... արժե արա փետուրները քա-
 մուն տալ:

2-րդ մառագերիստ. — (Գաղտագողի մոտենում ե):
 Դուք եստեղ տարգավա՛ցա կենեք... Հա՛... Հա՛...
 Հա՛...

1-ին մառագերիստ. — Ինչպես տեսնում եմ, գլուխդ
 քոր ե դալիս: Քանի գլուխդ չեմ շարդել, քշվի՛
 եստեղից...

2-րդ մառագերիստ. — Մո՛, փեղավանդ, ո՞ւմ գը-
 լուխը կշարդես... (Նրանք սկսում են իրար խփել:
 Անուշը յերեխայի քեից բռնած՝ դուրս ե վագում,
 իսկ ուղևորները խմբվում են նրանց շուրջը ու
 նրանց կովին նայում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է չեզոք գոտու դաշնակցական կոմիսարի առանձնատեսնյակը

Տ Ե Ս Ի Լ 1

Վալադյան և Կացիդան

Վ ա լ ա դ .— Ստացված տեղեկությունների համաձայն ժողովրդական դիարդիան յերկու դնդացիրներով անցել և մեր սահմանը և քչել տարել դյուղացիներից չորս հարյուր դյուխ վոչխար: Յեւ յես կարծում իմ, վոր մեր յերկու հարեան հանրապետությունների բարի դրացիական հարարերությունները չարվելու համար, դուք անմիջապես միջոցներ ձեռք կառնենք, նախ՝ դյուղացիներին վերադարձնելու նրանցից խլած վոչխարները, և ապա՝ մեղավորներին ամենախիստ պատիժը տալու:

Կ ա ց ի դ ա ձ Ե .— Յես խոստանում եմ այդ խնդիրը դնալուն պես պարզել և անմիջապես լուծում տալ: Սակայն ինձ թվում է, վոր այդ ամենը դատարկ և աննշան բաներ են: Նույնիսկ չարժե ուշադրություն դարձնել դրանց վրա:

Վ ա լ ա դ .— Ի՞նչպես: Գուցե դատարկ և աննշան բան էք համարում և այն, վոր դուքնոր զորք էք առաջ քաշում, վստահ ձեր ուժերի վրա կամ ապավինելով ոտար պետության ոգնությանը, մտադիր էք չեզոք դատին ընդմիշտ ձեր ձեռքում պահելու:

Կ ա ց ի դ ա ձ Ե .— Ըստ յերևույթին դուք մեծ թյուրիմացության մեջ էք: Նախ, վոր իմ կառավարությունն ոտար պետության ապավինելու ամենևեին

կարեք չի դդում: Յեւ յերկրորդը, վոր մեր գործի առաջքաշումը թուրքերի արշավից պաշտպանելու համար ե միայն:

Վ. ա | ա դ | յ ա ն . — Պաշտպանելու, թե հարձակվելու, այդ դեռ հայտնի չե, սակայն այդ մասին յես իմ կառավարութեանը հայտնել եմ: Սպասում եմ համապատասխան կարգադրութեան:

Կ ա ց ի դ ա ձ ե . — Այդ ձեր գործն ե: Սակայն յես ձեզ հետ ավելի լուրջ խնդիրների մասին եյի ուզում խոսել:

Վ. ա | ա դ | յ ա ն . — Յես ձեզ լսում եմ:

Կ ա ց ի դ ա ձ ե . — Բազմում մոտ որերս տեղի յե ունեցել արևելյան ժողովուրդների կոնֆերանս, վորտեղ չեղոք զոնայի ներկայացուցիչը, ըստ յերևույթին հայ բոլշևիկ, ղեկուցել և հայտարարել ե վոր, դաշնակցականները և վրաց մենշևիկները խեղդում և ճնշում են Լուսիա աշխատավոր ժողովրդին տնտեսապես ու բարոյապես: Յեւ նա խնդրել ե սովետական կառավարութեան ոգնութեանը:

Վ. ա | ա դ . — Ահա թե ի՞նչ: Իրոք, վոր դուք ավելի լուրջ խնդիր չոչակեցիք... Դրութեանը քանի դնում, ավելի յե բարդանում. ինձ թվում ե, վոր բնդհանուր թշնամու դեմ մենք միացյալ ճակատ պիտի կազմենք:

Կ ա ց ի դ ա ձ ե . — Այո՛, միացյալ ֆրոնտ: Մեր յերկու հարևան ժողովրդի բարեկամական շահը մեզ այդ ե թելադրում: Առայժմ: (Դուրս ե գնում):

Վ. ա | ա դ . — Ցտեսութեան: (Մտածում ե): Հարկավոր ե հեռագրել կենտրոն: Դրութեանը լուրջ ե: Կոմունիստական վարակի դեմ հարկավոր ե կտրուկ և սպառիչ միջոցների դիմել: Բոլշևիզմը տարածվում ե: (Խորատուզվում ե մտքերի մեջ): Դժվարին ժամանակներում ենք ապրում... Հայրենիքը վտանդի մեջ ե: Հայաստան, Հայաստան, աշխարհ դու դրախտավայր... Սակայն այսօր քս այս չքնաղ ու պայծառ հորիզոնում կարմիր վտանգն ե բարձրանում. նա հասունանում ե և

Թիկունքում. մեր սեփական տանը... բուռնիզմ...
չլուտների և բոկոտների իդեալը... (Ձեռքով խոս-
քում և սեղանին):

Ջնջե՛լ...

(Գործավարը կնիված ծրարը ձեռքին ներս և
գալիս):

Գործավար.—Շտապ և հույժ կարևոր: (Համձմում և
ծրարը և դուրս գնում):

Վալադյան.—Ներքին գործոց մինիստրութիունից:
«Ձեզոք գոտու հայ կոմիսարին: Անմիջապես
ուղարկել արտաքին գործոց մինիստրին բոլոր այն
փաստաթղթերը, վերոնք վերաբերում են վրաց
գործերի չեզոք գոտին անցնելու դեպքերին: Վե-
րոհիչյալ տեղեկութիւնները հարկավոր են մինիս-
տրութիանս, վրաց կառավարութիւնը համապա-
տասխան բողոք ներկայացնելու համար»: (Ձան-
գահարում է: Գործավարն իսկույն ներս է գալիս):

Գործավար.—Ի՞նչ էք հրամայում:

Վալադյան.—Դուք այն պաշտոնական գրութիւն-
ները մի՞թե չեք ուղարկել:

Գործավար.—Ուղարկված է:

Վալադյան.—Յերևի դեռ չեն ստացել:

Գործավար.—Ուրիշ ասելու բան ունեյի՞ք:

Վալադյան.—Ուրիշ ասելու բան չունեմ: Տես՝ ո՛վ
կա այդտեղ սպասող, ներս հրավիրի՛ր:

Տ Ե Ս Ի Լ 2

Վալադյան, Սահակ, 1-ին և 2-րդ գյուղացի.

Գյուղացիները պատառոտված շորերով, մոքալ
փափախներով, յերկար չամախները ձեռներին՝
ներս են մտնում, գլխարկները վերցնում և խո-
նարի գլուխ տալիս:

Բ ո յ ո թ ը.—Բարև ձեզ:

Վալադյան.—Ո՞վ էք դուք:

Յ ե ն ո ւ ք.—Դելեկատներ ենք, պարո՛ն կոմիսար:

Վալադյան.—Դելեկատներ՞ր եք...

- Բ Ն Լ Ո Ր Ը.— Հրամանք եօ, պարոն կոմիսար, ղելի-
զատներ ենք:
- Վ ա լ ա ղ յ ա մ.— Միենույն բառերը բոլորի կողմից
կրկնելու կարիք չկա:
- Ս ա հ ա կ.— (Մի կողմ) Սկզբից մեր դործը խարար
արինք:
- Վ ա լ ա ղ յ ա մ.— Ինչո՞ւ համար լռեցիք: Չարմանալի
մարդիկ են: Կամ բոլորը միասին կլռեն, կամ բո-
լորը միասին կխոսեն: Առաջացե՛ք, բայց մե՛կդ
խոսեք:
- Յ ե ն ք.— Սահակ բիճա, մեր մեջն ավելի հասակավոր
մարդը դու յես, զնա ու խոսա՛:
- Ս ա հ ա կ.— Եղ դուք ճիշտ եք ասում, բայց թե պաշտո-
նական մարդկանց հետ խոսելու յես սովոր չեմ,
վախում եմ, վայ թե լեզուս կապ ընկնի, կամ թե
չե հանկարծ բերնիցս մի սխալ խոսք դուրս պըծնի,
դործը ջիղ խարար անենք: Դու խոսա:
- Վ ա լ ա ղ յ ա մ.— Յեբկա՞ր պիտի սպասեցնել տաք...
Այդ մեր խորհրդակցությունը դուք նմխքան այս-
տեղ դալը կարող եյիք անել, պատմեք տեսնեմ՝
ինչի՞ համար եք յեկել:
- Ս ա հ ա կ.— Մենք յեկել ենք, պարոն կոմիսար մեր
դեղի դրության մասին ձեզ պատմենք:
- 1-ի ն գ յ ու ղ ա ց ի.— Դրա համար ել առաջները ձեզ
վրա խնդրագիր դարկել ենք:
- 2-րդ գ յ ու ղ ա ց ի.— Խնդրագրով բան դուրս չեկավ,
դրա համար ել մենք վեր կացանք, մեր վոտով
յեկանք ձեր կուշտը, բալբի մեր ցավին մի դար-
ման անեք:
- Վ ա լ ա ղ յ ա մ.— Պատմի՛ր տեսնեմ՝ խնդիրն ինչո՞ւմն
ի:
- Ս ա հ ա կ.— Խնդիրը նրանումն ա, պարոն կոմիսար,
վոր մեր գեղի ժողովուրդը շատ ա նեղվում:
Նետրալնի գոնը մեր գլխին կրակ դառավ: Ամեն
որ խուզարկություն, ամեն օր ձերբակալություն,

սպանութիւն, թալան, կոտորած, ծեծ, լաց,
կոծ...

Վ ա լ ա դ յ ա ն.—Յեւ ռովքե՞ր են այդ սպանութիան
հեղինակները:

Ս ա հ ա կ.—Դե յես վո՞նց ասեմ: Նրանք, ե՛լի, պարո՛ն
կոմիսար... յերկու կողմից ել հուպ են տալիս.
մեկը վերջացնում, մյուսն ա սկսում... արանքում
մենք ենք տրորվում... ա՛յ, ըսենց ա չեզոք
գոտին...

Վ ա լ ա դ յ ա ն.— Չեզոք դատու լիազորութիւնը ձեզ
չի տրված:

Յ ե ն ք.—Լավ, վոր ըսենց ա, դեղի մասին կխոսենք.
ձեզ մոտ տանող-տանողի ա, տեր ու տիրական
չկա. բոլորի թուրն ել կարուկ ա: Մարդու գլուխն
ու սոխի գլուխը մի գին ա: Մի մահանա յեն ճա-
րում, գալիս, մտնում աները, ելած-չելածներս
հավաքում, տանում...

Վ ա լ ա դ յ ա ն.— Հետո՞...

Յ ե ն ք.—Հետո, վոր անմեղ ու անշար մարդկանց ել
բռնում, բանտարկում են, կամ թե աչքներին
առաջ տեղն ու տեղը խփում, սպանում: Բա
սա որե՞նք ա, բա սա հայութիւնն ա...

Վ ա լ ա դ յ ա ն.—Որե՞նքի յու հայութիան մասին վո՛չ մի
խոսք...

Յ ե ն ք.—Իսկ վրացիների մասին կարելի՞ յա խոսել:

Վ ա լ ա դ յ ա ն.—Կարելի յե: Միայն առանց ավելորդա-
բանութիւնների:

Յ ե ն ք.—Ավելորդ բան չեմ ասի: Պարո՛ն կոմիսար,
ինչպես ձեզ հայտնի յա, մեր գեղի վար ու ցանքն
ես տարի լավ բերք երխոստանում, բայց չթողին:
Նրանց են լեռուչի ատրյա՞դ են ասում, ի՛նչ են ա-
սում, վերցրին, իրենց անասուններին կերցրին,
մեր գեղի ամբողջ վար ու ցանքը վտախ տակ փը-
չացրին, ու հիմի մնացել ենք ըսենց դատարկ...

Վ ա լ ա դ յ ա ն.—Հետո՞, հետո՞...

Յ ե ն ք.—Հետո ե՛ն, վոր մարդ չի հասկանում՝ ես
յերկրի տերն ե՛վ ա, յեթե նրանք են, բա դուք

ինչացո՞ւ յեք. յեթե դուք եք, բա ել նրանք
ինչացո՞ւ յեն... Մի խոսքով, բարելոնյան խառ-
նակությունն ա, մարդ չի հասկանում:

Վ ա լ ա ղ յ ա մ.— Լռի՛ր, բավական է, յես քեզ թույլ
չեմ տալիս խոսել:

Յ ե ն ա ք.— Բուկնեքիցս բռնել, խեղդում են, ախար
վո՞նց չխոսամ: Վախտ ու բեվախտ գալիս մտնում
են մեր տները խուզարկելու նպատակով, բայց թի
անթույլատրելի բաներ են անում:

Վ ա լ ա ղ յ ա մ.— Այդ բոլորը վրացիների գործն է:

Յ ե ն ա ք.— Հայերն ել են անում:

Վ ա լ ա ղ յ ա մ.— Հայերի մասին վո՛չ մի խոսք: Հա-
յերից դժգոհելու դուք ամենեկին հիմք չունեք:
Փառք ասածո, հիմա մենք ազատ ու անկախ
Հայաստան ունենք: Դուք այլևս չեք նեղվում:

Ս ա հ ա կ.— Նեղվում ենք, պարո՞ն կոմիսար, նեղվում
ենք:

Վ ա լ ա ղ յ ա մ.— Յես ձեզ հասկանում եմ: Դուք նեղ-
վում եք սակավահողության պատճառով: Յեվ
խոլուր չե, վոր այս խնդրով մեր կուսակցությունը
բոլորից շատ է մտահոգված: Այդ կապակցու-
թյամբ մեր կառավարությունն ոտար պետու-
թյունների առաջ հարզ է հարուցել և նրանք
խոստացել են ամենամոտ ապագայում սահման-
ների վերաբաժանման խնդիրը վերանայել:
Հետևապես, այդ խնդիրը հիմնականում շուտով
կլուծվի: Յեվ այնուհետև մեր յերկրի սահման-
ներն այնքան կլայնանան ու կմեծանան, վոր մեր
դյուզացիությունը սակավահողությամբ այլևս
չի նեղվի:

Յ ե ն ա ք.— Են ճանապարհը, վոր դուք եք բռնել, յես
վախում եմ, վոր մեր յերկրի սահմանները վոչ
թե լայնանան ու մեծանան, այլ ընդհակառակը,
ավելի նեղանան ու փոքրանան:

Վ ա լ ա ղ յ ա մ.— Մերո՛ւկ, դու սկսում ես քաղաքական
հարցեր շոշափել. յես այդ թույլ չեմ տա:

Յ Ե Ա Ն Բ.—Յես անուամ ու անկիրթ մարդ եմ, յես
ի՞նչ գիտեմ՝ քաղաքական հարցերն ինչ բան ա:
Խոսքը բերանս դալիս ա, ասում եմ:

Վ ա լ ա ղ յ ա մ.—Առանց մտածելու և կշռադատելու վոչ
մի խոսք չպիտի ասեք:

Յ Ե Ա Ն Բ.—Ուրիշ խոսքով՝ դուք մեր լեզուն կտրում
եք, բայց դա արդարությունն չի...

Վ ա լ ա ղ յ ա մ.—Արդարության մասին վո՛չ մի խոսք:

Յ Ե Ա Ն Բ.—Արդարության մասին վոչ մի խոսք,
որենքի մասին վոչ մի խոսք, հայերի մասին վոչ
մի խոսք. յես չեմ հասկանում, եստեղ ել մինք
ինչի՞ համար ենք յեկել: (Գյուղացիներին):
Դո՛ւրս յեկեք՝ դնանք...

Վ ա լ ա ղ յ ա մ.—Լսի՛ր, բավական ե, քավթառ չուն,
ապա թե վոչ յես քեզ տեղն ու տեղը կզնդակա-
հարեմ: (Բռունցքով խփում է, գետին գլորում և
վոտով հրում): Սրիկա՛, յես արդեն սկսում եմ
քեզ հասկանալ: Իսկական դեմքդ ճանաչել: (Զան-
գահարում է: Գործավարը ներս է գալիս):

Գ ո ռ ծ ա վ ա ր.—Ի՞նչ եք հրամայում:

Վ ա լ ա ղ յ ա մ.—Պահակներին կանչի՛ր այստեղ:

Գ ո ռ ծ ա վ ա ր.—Լսում եմ: (Դուրս է գնում: Պահակ-
ները գալիս են):

1-ին գյուղացի.—Ների՛ր, պարո՛ն կոմիտար:

2-րդ գյուղացի.—Հալիվոր խեղճ մարդ ա, մեղք
ա:

Ս ա հ ա կ.—Կարիքն ա ստիպում, վոր նա բտննց
խոսում ա:

Վ ա լ ա ղ յ ա մ.—Վո՛չ մի խոսք: (Պահակներին): Տա-
րե՛ք, սրան բանտարկե՛ք: (Պահակները ՅԵԱՆԲին
ծեծելով դուրս են տանում): Այժմ դուք մեր
խոսքը շարունակեք:

Ս ա հ ա կ.—Ել ի՞նչ շարունակեմ, պարո՛ն կոմիտար:
Ասելու խոսքս մոռացա: Յես են եյի ասում, վոր
մեզ ամեն ինչից զրկել են, ինչ ունեյինք, չու-
նեյինք վերցրել, տարել են: Ել վոչ քաշող ուժ
ունենք, վոր սրանից հետո վար ու ցանք անենք,

էլ վոչ տանը ալիք ունենք, վոր նստենք ուտենք: Մնացել ենք ըսենց դարտակ ու տկլոր: Յեթե կառավարութիւնը մեզ նյութական ոգնութիւն ցույց չտա, մենք սովից կկոտորվենք:

Վ ա լ ա ղ յ ա մ .— Ի՞նչ եք ուզում ասել, յես չեմ հասկանում:

1-ին գ յ ու ղ ա ց ի .— Պարո՛ն կոմիսար, մենք ուզում ենք ասել, վոր մեր ժողովուրդը պահանջում ա:

Վ ա լ ա ղ յ ա մ .— Ժողովուրդը պահանջելու իրավունք չունի: Նա միայն խնդրել կարող է:

1-ին գ յ ու ղ ա ց ի .— Վնաս չունի, թող ձեր ասածը լինի: Ժողովուրդը խնդրում ա, վոր կառավարութիւնը հարկն ու տուրքը ես տարի մեզնից չզանձեք:

Վ ա լ ա ղ յ ա մ .— Լո՛ւի՛ր, բայական է: Հարցը պարզ է: Յես ձեր միտքը հասկանում եմ: Դուք անիշխանականներ եք, կառավարութիւնը հարկերն ու տուրքերը դուք չեք ուզում վճարել:

Ս ա հ ա կ .— Պարո՛ն կոմիսար, մենք եղպես բան չասեցինք:

1-ին գ յ ու ղ ա ց ի .— Մենք ուզում ենք ասել:

Վ ա լ ա ղ յ ա մ .— Ի՞նչ եք ուզում ասել, իզուր եք դուք աշխատում անմեղ ձեանաւ: Դուք ազգի ու հայրենիքի դավաճաններ եք: Ձեզ պետք է հայրենի հողից վտարել, կամ բոլորիդ սրի քաշել և կոտորել:

Ս ա հ ա կ .— Պարո՛ն կոմիսար, թո՛ւյլ տուր՝ ասեմ:

Վ ա լ ա ղ յ ա մ .— Վոչինչ հարկավոր չի ասել: Յես ձեզ կտրուկ հայտարարում եմ, վորոչիված հարկերն ու տուրքերը, յեթե նշանակված ժամանակից մի բոպե ուշացրել եք, դուք բոլորդ կձերբակալվեք: Այդպե՛ս, կզնաք և բոլորին կհայտնեք:

Ս ա հ ա կ .— (Մի կողմ): Եդ մենք գիտենք, թե ի՞նչ կհայտնենք: Գնա՛նք: (Դուրս եմ գնում: Յերկարատե լռութիւն):

Վ ա յ ա դ յ ա մ . — Գ ժ գ ո չ ու թ յ ա ն ա լ ի ք ն եր ը Հ ե ա գ Հ ե ա ն լ ա յ ն ծ ա մ ա լ ե ն ը ն դ ու ճ ու մ . . . գ յ ու լ ղ ա ց ի ու թ յ ու ճ ն ը մ բ ո ս տ ա ն ու մ ե , բ ո լ չ ե ի գ մ ի ու կ ո մ ու ճ ն ի գ մ ի թ ու ն ա մ ո թ վ ա ր ա կ ի ա ր դ յ ու ճ ն ե ա յ ս բ ո լ ո Ր Ր : (Զ ա մ գ ա ն հ ա ր ու մ ե : Գ ո թ ծ ա վ ա ր ը ն ե ր ս ե մ տ ն ու մ) : Ո ՞ վ կ ա ա յ դ ա ն ղ :

Գ ո թ ծ ա վ ա ր . — Ս պ ա ս ո ղ ն եր ը շ ա տ ե ն , բ ա յ ց մ ի կ ի ն ի ր յ ե ր ե խ ա յ ի Հ ե ա գ յ ու լ ղ պ ի ա ի գ ն ա , խ ն դ Ր ու մ ե , վ ո Ր ա ո ա ջ ի ն Հ ե ր թ ի ն ի ր ե ն ը ն դ ու ճ ն ք :

Վ ա յ ա դ յ ա մ . — Ա յ դ կ ն ո ջ ն Հ ա յ ա ն ի , վ ո Ր յ ե ս ա յ լ և ս վ ո ջ վ ո թ թ ի չ ե մ ը ն դ ու ճ ու մ :

Գ ո թ ծ ա վ ա ր . — Լ ս ու մ ե մ : (Գ ու ր ս ե գ ն ու մ) :

Վ ա յ ա դ յ ա մ . — Ս ր ի կ ա ն ե ՛ ր , Հ ա յ ր ե ն ի թ ի դ ա վ ա ճ ա ն ն ե ՛ ր , յ ե ս ձ ե ղ ց ո ՛ւ յ ց կ տ ա մ . . . (Գ ո թ ծ ա վ ա ր ը ն ե ր ս ե գ ա յ ի ս) :

Գ ո թ ծ ա վ ա ր . — Ա յ ն կ ի ն ը խ ն դ Ր ու մ ե , վ ո Ր ի ր ե ն ը ն դ ու ճ ն ք : Հ ե ա ը մ ի փ ո թ թ ր յ ե ր ե խ ա ու ճ ի , ա ս ու մ ե Հ ե ո ու գ յ ու լ ղ պ ի ա ի գ ն ա մ :

Վ ա յ ա դ յ ա մ . — Թ ո ղ ն ե ր ս դ ա , ի ս կ մ յ ու ճ ն եր ի ն Հ ա յ ա ն ի ՛ ր թ ո ղ ն ր ա ն ք գ ն ա ն , վ ա ղ Ր դ ա ն :

Գ ո թ ծ ա վ ա ր ը . — Լ ս ու մ ե մ : (Գ ու ր ս ե գ ն ու մ) :

Տ Ե Ս Ի Լ 3

Վ ա յ ա դ յ ա մ , Ա ն ո շ և յ ե ր ե խ ա մ

Ա ն ո շ ը յ ե ր ե խ ա յ ի ք և ի ց բ ո ն ա ծ մ տ ն ու մ ե և լ ու լ կ ա ն գ ն ու մ : Վ ա յ ա դ յ ա մ ը հ ի ա ց ա ծ ն ա յ ու մ ե) :

Վ ա յ ա դ յ ա մ . — Գ Ր ա վ ի չ դ ի մ ա գ ծ ե ր , ն ա ղ ու լ և շ ք ե ղ ի ր ա ն , յ ե ր կ ա ր ու թ ա վ մ ա ղ ե ր , ս և ու խ ո շ ո Ր ա չ ք ե ր . . . ս ա տ ա ն ա ն տ ա ն ի , ա յ ս ց ն ց ո ս ի ն եր ի մ ե ջ ա ն գ ա մ պ ա Հ պ ա ն վ ա ծ ե ն ր ա ա ր տ ա ք ո կ ա ր դ ի գ ե ղ ե ց կ ու թ յ ու ճ ը . . . (Մ ո ս ե ն ու մ ե) : Բ ա ր և ձ ե ղ , ի ն չ ո ՞ վ կ ա ր ո ղ ե մ ձ ե ղ ծ ա ո ա յ ե լ . . . բ ա յ ց ի ն չ ո ՞ւ չ ե ք վ ո ս թ ի կ ա ն գ ն ե լ , խ ն դ Ր ե մ ն ս ա ե ք : (Թ և ի ց բ ո ն ա ծ ն ր ա մ ու գ ու մ ե տ ա ն ե լ բ ա գ կ ա ք ո թ ի ն ն ս տ ե ց ն ե լ , ի ս կ Ա ն ո շ ը ք և ը ն ր ա մ ի ց ա գ ա տ ու մ ե) :

- Անուշ.— Թողե՛ք, յես նստել չեմ ուզում, այսպես լալ ե:
- Վալադյամ.— Ձեր կամքն է, ինչպես կուզեք (Նրստում ե իր տեղը): Յես ձեզ լսում եմ:
- Անուշ.— Գիշերը կայարանից տուն վերադառնալու ժամանակ... (Արտասուքները խեղդում են և նուսյլես յի կարողանում շարունակել):
- Վալադյամ.— Նշանակում է, վոր գիշերը կայարանից տուն վերադառնալու ժամանակ ձեզ վորևէ դժբախտութ՞յունն է պատահել... .
- Անուշ.— Այո... յեկա ձեզ մոտ այդ մասին բողոքելու և ձեզնից ոգնութ՞յուն խնդրելու... .
- Վալադյամ.— Նշանակում է, վոր դուք ոգնութ՞յան կարիք եք դդում: Շատ բարի: Հարկավոր ոգնութ՞յունը մենք ձեզ ցույց կտանք: Յերեխան ըստ յերեկոյթին մրսում է: (Նրան վերցնում, նստեցնում է բազկաքոռին): Յերեխան հագնելու ուրիշ շոր չունի՞:
- Անուշ.— Հագնելու շոր վո՞րանդից է: Իմ գլխի շալով ծածկել եյի, գիշերը կայարանից տուն գնալու ժամանակ մի ղինված մարդ առաջ կտրեց շալը յերեխայի վաշից վերցրեց ու ինձ ել... (Յերկու ձեռքերով յերեսը ծածկում է ու հեկեկում):
- Վալադյամ.— Ինքնըստինքյան հասկանալի յե... բացատրելու կարիք չկա... Ե՛հ, ի՞նչ արած, դուք մեղավոր չեք, անկախ ձեր կամքից այդ դժբախտութ՞յունը տեղի յե ունեցել... պետք է հաշտվել կատարված իրողութ՞յան հետ... Լաց լինելու և մտահոգվելու կարիք չկա... յեթե դուք անչափահաս սրիորդ լինեյիք՝ պատահած դեպքի սարսափեցնող հետևանքների վերաբերմամբ ձեր մտահոգութ՞յունը թերևս հասկանալի լիներ... Մինչդեռ դուք յերեխայի տեր, չափահաս կին եք, այդ տեսակ դատարկ բանի համար կանգնել դուք տեղից լաց եք լինում:

Անուշ.—Ինչ ասեցի՞ք... դուք տեղի՞ց եմ լաց լինում, ուրեմն կանգնեմ յերեսներիդ ծիծաղեմ...

Վալադյան.—Ծիծաղելու ել կարիք չկա: Ես ի՞նչ լավ յերեխա ունեք, սրան կարելի չէ տեղավորել վորբանոցում, իսկ ձեզ ընդունել մեզ մոտ ծառայության... Համաձա՞յն եք... (Գրկում է նրան և ուզում է համբուրել, իսկ նա հրում է և քույր չի տալիս):

Անուշ.—Թո՛ղ ինձ: Ի՞նչ ես ուզում ինձնից, յես դրա համար չեմ յեկել ձեզ մոտ... Առանց ես ել, դուք տեսնում եք իմ դրությունը: Ոգնելու փոխարեն դուք ինձ ավելի յեք ուզում կործանել...

Վալադյան.—Մխավում եք, յես ձեզ կործանելու ամենևին մտադրություն չունեմ: Ձեր իսկ նոգտի տեսակետից, յես ձեզ լավ առաջարկություն եմ անում... (Ուզում է Պորից գրկել):

Անուշ.—Ձեմ ուզում, թո՛ղ, մեծ պաշտոնի տեր մարդ ես, ամոթ չի՞ քեզ համար, ձեր դիրքի ու բարձր շրջանի սիրուն կնանիքն ու աղջկերքը թողած, ինձպես մի հասարակ կնոջ հետ եք ընկնում...

Վալադյան.—Իմ դիրքի և շրջանի կանանցից ամենագեղեցիկը դու յես, թույլ տուր գրկեմ այս նազուկ և շքեղ իրանդ և ջերմ համբույրներ քաղեմ այս վարդազույն շրթունքներից... (Ուզում է գրկել):

Անուշ.—Թո՛ղ, հեռացի՛ր ինձնից... Յես քու իմացած կնիկարմատներից չեմ... ձեն կտամ, արար աշխարհ կհավաքեմ գլխիդ և բոլորի առաջ կըխայտառակեմ... Դու վոր կամխար ես, կոպես ես անում, ուրիշները ի՞նչ պետք է անեն: (Յերեխայի ձեռքից բռնած՝ դուրս է գնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

վո՞նց անեմ, սարի պես տղա յեմ կորցրել...
չորս տարի աչքս ջուր կտրեց նրան սպասելով:
(Լաց և լինում):

ԱՅՈՒՂ.—Պաթո՛ւն մոգիր, քո դարդն ել շատ ա,
բայց թե ետք—եղուց քո կորցրածդ յես կզա, իսկ
ինչ, ինչ վոր յես եմ կորցրել, ել յես չի գա...
ուր վոր գնում եմ, ամենքը վրես խեթ—խեթ են
նայում... ինձ տեսնելիս յերեսները դարձնում
են, վոչվոք հետս չի ուզում խոսա... ասիր յես
ի՞նչ մեղավոր եմ (արտասովելով դուրս և գնում):

ԽՈՒՄՈՒՄ.—Պե՛ղծ կին... ջիգյարով աղջիկ ա...
ափսո՛ս, վոր աղջիկ ժամանակ չհաջողվեց նրան
հարս բերելի իմ տանը:
(Նազիկը մերս և գալիս):

Տ Ե Ս Ի Լ 2

ԽՈՒՄՈՒՄ և ՆԱԳԻԿ

ՆԱԳԻԿ.—Բարև, տատի՛ ջան... (Պիոնեքակաճ ձևով
ձեռքը բարձր բռնած՝ պատվի յե առնում): Ինձ
Գալուստ քեռին դրել եր, վոր խորհրդային յեր-
կրում կոմսոմոլները ես ձևով են բարևում:
Տա՛տի ջան, յես վոր պատվի յեմ առնում, դու
ել ինձ նման հապես ձեռք բարձրացրո՛ւ, կոմսո-
մոլի պատիվն ընդունի՛ր...

ԽՈՒՄՈՒՄ.—Ը՛հ, հողս գլխիդ, դու շատ ես իմանում,
թե կոմսոմոլը ինչ ա, կամ թե վոնց են նրանք
պատվի առնելիս ձեռքները բարձրացնում: Ասա,
դու նրանց տեսել ե՞ս:

ՆԱԳԻԿ.—Ամեն բան հո չե՞ն տեսնում, բայց թե
կարդալով ու լսելով սովորում են... Տատի՛ ջան,
աչքերդ կարծիր են, ինչպես յերևում և, Գալուստ
քեռու համար ելի դու լաց ես յեղել... Ա՛խ, մի
թամբած ձի ունենայի, կնստեյի ու կզնայի, Գա-
լուստ քեռուն կվերցնելի ու հետս կբերելի:

Խաբուս.—Բերող ըլելիք, ըտենց չելիք խոսի:
Լա՛ր, պապիդ ազատել են. եսոք նա դալու յա:
Նագիկ.—Տատի՛ ջան, ճիշտ ես ասո՞ւմ, վա՛յ. ի՞նչ
լա՛վ ելա՛վ. պապիս դալիս ե, ջան պապի՛, ջան
պապի՛: (Սկսում ե քնչկոտել և ձեռքն ընկած
իրեքը շարտել գետին):

Խաբուս.—Աղջի՛, գժ՛վել ճո չե՞ս: Ես ի՞նչ ես անում:
Դե լա՛վ, յես սրանք կհամարեմ. դու կուժը
վերցրո՛ւ, գնա ջուր բե՛ր, դեննք կրակի վրա տա-
քանա, պապիդ վոտներն ու գլուխը պտեմ լվա,
ճամբից ա դալի:

Նագիկ.—Աճեն՛ մի ճամբից եկած ժամանակ ան-
պատճառ վոտ ու գլուխ պետք ե լվանա՞լ: Եդ
ի՞նչ սովորութ՛յունն ա, յես չեմ հասկանում:

Խաբուս.—Բա վո՞նց ելիք ուզում, ոտաների
բաղնիսը մեղ վո՞րտեղից ա, վոր յերբ ուղենանք՝
դնանք լողանայնք:

Նագիկ.—Ռուսները իրենց բաղնիսը հետները չեն
բերել, նրանք յեկել, չինել են, մենք ել չինենք...

Խաբուս.— Ելի դու սկսում ես գլխիցդ մեծ-մեծ
դուս տա՞լ...

Նագիկ.—Տատի՛, դուրս տալ չեն ասի, ասա խո-
տալ...

Խաբուս.— Դե լա՛վ խոսալ... գլուխս մի՛ ցամայ-
րու, կուժը վերցրո՛ւ, գնա ջուր բե՛ր:

Նագիկ.—Ի՞նչ փիտն ես, տատի՛... Հենց վոր դալիս
եմ ձեր տուն, անպատճառ դու ինձ գործի պիտի
դես... յես վոր գործ անել ուղենամ, մեր տանը
դու կարծում ես գործ չկա՞, ենքան գործ կա
վոր...

Խաբուս.— Գործ կա՛ ինչի՞ չես անում... ո՛, դու
ընենց ծուլին ես, վոր հատդ չկա:

Նագիկ.—Մուլութ՛յան ինդիք չի, տատի՛:

Խաբուս.— Բա ինչի՞ ինդիք ա, ասա տեսնեմ:

Նագիկ.— Ծիշտն ասած՝ յեսել չեմ իմանում... բայց
թե տան գործը յես ընդհանրապես չեմ սիրում...

Խաբուս.— Վորսկան թագու պես սաղ որբ դես ու
դեն ես վազում, կուժը վերցրո՛ւ, գնա ջուր բե՛ր,
վորտեղ վոր ա պապիդ կգա, յես հլա ջուր չեմ
տաքացրել: (Կուժը վերցնում է, տալիս նազիկին
և մինչև դուռը նրան հրելով տանում):

Նազիկ.— Դե լավ, գնում եմ, գնում... (Գնում է):

Խաբուս.— Ես հմիկվա յերեսխեքը, պա՛հ, պա՛հ,
պա՛հ... Ասենք սա մեղավոր չի. ծնողներն են
մեղավոր, շատ են յերես տվել... Ընչի՞ համար
եմ յես եստեղ կանգնել... Խելքս թամամ կորց-
րել եմ... վոչ արածս եմ իմանում, վոչ դրածս:
Հա՛, գնամ, սջախ վառեմ, կրակ անեմ, մինչև
ջուրը կբերի: (Նազիկը դատարկ կուժը և մի
նամակ ձեռքին՝ ուրախ-ուրախ ներս է մտնում):

Նազիկ.— Տատի՛, թե իմացար՝ քեզ համար ի՛նչ եմ
բերել... (Նազիկը քազցնում է):

Խաբուս.— Աղջի՛, դու հլա չես գնացե՞լ: Դե արի
ու սրա հետ խոսա: Քեզ ասում եմ՝ գնա ջուր
բե՛ր:

Նազիկ.— Դու ել հենց ջուր հա՛ ջուր... տե՛ս, քեզ
համար Գալուստ քոռուց նամակ եմ բերել, իսկ
դու հենց մի գլուխ քո ջրի մասին ես մտածում:

Խաբուս.— Աղջի՛, դրուստ ես ասո՞ւմ, տուր տե-
նեմ... (Նազիկը նամակը տալիս է նրան):

Նազիկ.— Ա՛ռ, մինչև դու քո աչքով չտեսնես,
հավատա...

Խաբուս.— Իսկական նրա դիրն ա, քոռանամ յես...
Աղջի՛, ես նամակը քեզ ո՞վ տվեց:

Նազիկ.— Ել ուրիշ ո՞վ պտի տար, պապին տվեց,
հրեն ինքն ել խոսալով գյուղացիներին հետ դալիս
ա... ասաց՝ տա՛ր, տուր տատիդ, թող կարդա,
մինչև իմ գալը քիչ ուրախանա:

Խաբուս.— Փա՛ռք քու վողորմությանդ, ով Մա-
րիամ աստվածածին... (Լուռ, ձեռքերը յերկինք
պարզած, ծնկաչոք աղոթում է):

Նազիկ.— Քեռիս դալիս ա, ջա՛ն, ջա՛ն... տաչի՛-
տուչի՛... տաչի՛-տուչի՛... (Թռչկոտալով պա-

րում եւ Կարելու միջոցին ընկնում եւ Խաթունի վրայ)։ Վա՛յ, ներողութ՛յուն, տատի՛...։

Խաթուն.— Ել ի՞նչ ներողութ՛յուն, հողս գլխիդ, աղոթքս հարամ արիբ... (Յեմնքը և գյուղացիները խոսելով ներս են մտնում)։

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնք, Յեմնք, Սահակ, Տիգրան և մի խումբ գյուղացիներ

Տիգրան.— Յես իմ տանը ես բողոքիս վոչ հաց ունեմ, վոչ ել մի մսխալ ալյուր։

Սահակ.— Ո՞վ ունի, վոր դու ունենաս... Յեթե մեկ մի տեղից ողնութ՛յուն չհասնի, մենք սովից կկտորվենք։

Տիգրան.— Դե լավ, կենարոնում նստածներն ի՞նչ են մտածում։

Յեմնք.— Ի՞նչ ելիք ուզում, վոր մտածին. նրանք մեկ համար վոչինչ ել չեն մտածում։

Տիգրան.— Բա ասում են, վոր կառավարութ՛յունը ժողովրդին պիտի ողնի՞։

Սահակ.— Յեթե չի ողնում, գոնե նրանց պատժի, ով վոր ժողովրդին ես որն ա գցել։

Յեմնք.— Ժողովրդին ես քրը դցողը հենց իրենք են, դե արի ու նրանց պատժի, տեսե՛մ՝ վո՞նց ես պատժում։

Տիգրան.— Դու իմ ասածը չհասկացար։

Սահակ.— Տիգրանի ասածը նրանց մասին ա, վոր եստեղ շինքներիս նստած, մեր արիներ ծծում են։

1-ին գյուղացի.— Իմ կարծիքով կենարոնում նրստածները սրանց հետ կապ չունեն։

2-րդ գյուղացի.— Ծիշա ա ասում, նրանք ուրիշ են, սրանք ուրիշ...։

Յեմնք.— Ուրիշ չեն... նրանց կապը մեկ ա... նրանք խոսքը մեկ արած՝ մերը քանդում են, իրանցը դզում... ուրիշ խոսքով՝ ես կառավարու-

թյունը նրանց կառավարութիւնն ա... նրանց իշխանութիւնն ա, դուք նրանցից լավ բան մի՞ք սպասի... նրանց ձեռքին, յեթե հնար ըլի, ես արևի պայծառ լուսիցն ել մեզ կզրկին... ո՛ւր մնաց թե նրանք դան, մեզ Համար մտածեն... Ընկածներին սրանք քացով տալիս են, վոր ավելի խորը թաղվի...

Բ ու Ն ր ք.—Ճիշտ ա ասում...

Տ Ի Գ ր ա մ.—Ձեմ Հասկանում...

Յ Ե Ա Ն Բ.—Իհարկե չես Հասկանա... տարին տասներկու ամիս գլուխդ քաշ, դու քո քյասիրության հեռեիցն ես ընկել և չես տեսնում, թե դրսի աշխարհում ինչե՛ր ա կատարվում...

Տ Ի Գ ր ա մ.—Դու դրանով ի՞նչ ես ուզում ասել...

Յ Ե Ա Ն Բ.—Յես ուզում եմ ասել, վոր Հարկավար ա ես կոխմաներին վերջ տալ... Հարկավոր ա ես քանդված ու ավերված յերկրում աշխատանքի խաղաղ պայմաններ ստեղծել... Յեղբայրակից ազգերի և Հարևան Ժողովուրդների հետ Հարկավոր ա բարեկամորեն կապվենք և նրանց հետ Հաշտ ու խաղաղ ապրենք...

Ս ա հ ա կ.—Հեղափոխութիւնն ել հենց դրա Համար եր...

Յ Ե Ա Ն Բ.—Ի՞նչ Հեղափոխութիւն... ո՞վ ասաց, թե եստեղ Հեղափոխութիւն ա կատարվել... Հեղափոխութիւնից առաջ ել մենք ըսենց ելինք ապրում... Նիկոլայի կառավարութիւնը, ճիշտ ա, տապալել ա, բայց թե նրա անարդար որենքները դեռ մինչև որս մեզ մոտ Հիմնովին մնում են...

1-Ի մ գ յ Ու Ղ ա ց Ի.—Ելը ելի են եշն ա, մենակ փալանն ա փոխել...

Յ Ե Ա Ն Բ.—Իմ ասելն ավելնորդ ա, դուք ինքներդ տեսնում եք, ելի, վոր առաջվա նման, Հարուստն ելի Հարուստ ա մնացել, քյասիրը՝ քյասիր:

Բ ու Ն ր ք.—Ճիշտ ա ասում...

Տիգրան.—Յես դարձանում եմ, բա ել դուք ինչի՞
համար զնացիք...

Յեմնֆ.—Մեր զնալույ, դու հենց իմանում ես, ամեն
ինչ փոխվելու յե՞ր... Փոխվելու համար ընենց
հեղափոխութունն ա հարկավոր, մոնց վոր Գա-
լուստն ա դրում.

Տիգրան.—Բա՞վական ա: Խնդրում եմ սրանից հետո
բռնեց բաներ իմ կշտին չասես... ես պատերն ել
ականջներ կունենան, կլսեն...

Յեմնֆ.—Լսում են, թող լսեն, ի՞նչ կա վոր. կզնամ,
նորից մի յերկու ամիս կնստեմ...

Տիգրան.—Գնանք, ես մարդը զոռով խալիին կրակի
մեջ կդցի...

1-ին գյուղացի.—Տաքարյուն մարդկանց յես չը-
սիրեցի... զնանք...

Բնուր գյուղացիֆ.—Գնանք... (Տիգրանը և մյուս
գյուղացիները դուրս եմ գնում):

Յեմնֆ.—Դե արի՛ սրանց բան հասկացրո՛ւ...
Աստուծո՛ւ:

Աստուծո՛ւ.—Խնդիրն ել եղ ա, վոր սրանց նմաններին
հասկացնես... Բայց թե դա ամեն մարդու հու-
նարը չի: Աստուծո՛ւ հաջողա, Գալուստը դա,
սրանց հասկացնելու համար նա լեզու կդանի...

(Դուրս ե. գնում):

Նագիկ.—Պապի՛, դու լավ եյիր խոսում: Դու ինչ
վոր ասում եյիր, ճիշտ եյիր ասում: Գալուստ
քեռին իր նամակում հենց նույն բաներն եր
զրել: Պապի՛ ջան, նշանակում ե, վոր Գալուստ
քեռին և դու մի աստակ եք մտածում, կամ...

Յեմնֆ.—Կամ ի՞նչ:

Նագիկ.—Կամ Գալուստ քեռին ե եղ մտքերը քեզանից
սովորել, կամ դու յես նրանից սովորում:

Յեմնֆ.—Լսի՛ր, Նագի՛կ ջան, առաջիկա Ժամանակ-
ներում զավակներն եյին իրենց ծնողներից բան
սովորում, իսկ հիմա հակառակն ա, ծնողներն
են զավակներից սովորում:

Նագիկ.—Այդ նշանակում ա՛ առաջիկա Ժամանակ-

ներում դուք ելիք մեզ ղեկավարում, իսկ սրանից
հետո մենք պիտի ձեզ ղեկավարենք...

Խաբուս.— Զողոքու գլխին, միթամ բան ասիր:
Լա՛ր, ա՛յ մարդ, ես նամակը ճամբին ուշացել
ա: Ես գրածի հաշվով սրանից չորս որ առաջ
Գալուստը եկած պետք է լիներ:

Յեմնֆ.— Կգա, ե՛լի, ի՞նչ ես վազում: Տնաշենի
կնիկ, չորս տարի համբերել ես, մի չորս որ ել
համբերի՛... (Զիրուխը լցնում է ու ծխում):

Խաբուս.— Կհամբերեմ, ա՛յ մարդ, ո՞վ ա բան ա-
սում: Աղջի՛, դնա տուն, մերդ, ո՞վ ա իմանում,
հմի քու հետևից ման ա գալիս: Աղջի՛, ի՞նչի յա
ես կուժը՞ դատարկ ընկած, բա դու ջուր չբերի՞ր:
Հողը գլխիս, դե ել մի՛ ուշանա: Կուժը վերցրե՛ւ,
դնա ջուր բե՛ր:

Նագիկ.— Մինչև ջուր չբերեմ, դու ինձանից ձեռ չես
քաշելու... Ինչքա՞ն փիսն ես: (Կուժը վերցնում,
դուրս է գնում):

Յեմնֆ.— Յերեխին ինչի՞ յես նեղացնում:

Խաբուս.— Առաջոտվանից ասելով բեղարեցի, չկա-
րողացա մի կուժ ջուր բերել տամ: (Սիմոնն ու
Շամիլը ներս են գալիս):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք, Շամիլ, Սիմոն, Մակար և հետո Գալուստ

Սիմոն.— Յենձք բիձա, լսել ենք, վոր Գալուստը
գալիս ա, ճի՞շտ ա,...

Յեմնֆ.— Գրել ա, վոր գալիս եմ. հլա չի յեկել:

Շամիլ.— Վոր գրել ա, նշանակում ա՛ կգա: (Նագի-
կը կուժն ուսին վազելով ներս է մտնում):

Նագիկ.— Տատի ջա՛ն, աչքդ լույս, քեռին գալիս ա:
(Կուժը դնում ու ինքն ել անմիջապես դուրս
գնում): (Գալուստը կարմիր բամակայինի շորե-

բով, սակվոյածը ձեռքիմ, Նագիկի հետ ներս է
մտնում) :

Գ ա լ ու ս տ .— Բարե ձեզ :

Խ ա ր ու մ .— Բարեխո ու արեխո զուբբան, Գալ՛ւտ,
ջան, իմ աղիչ բալա . . . (Գրկախառնվում են ու
համբուրվում) :

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմբ մերկայացնում ե Անուշի բնակարանը՝ յերկու մասից բաղկացած: Առաջին մասը չափազանց անշուք կահավորված սենյակ ե, իսկ յերկրորդ մասը՝ ցածր, կիսափուլ ցամկապատով շքապատված բակ: Սենյակից դեպի բակը մայրող մի լուսամուտ: Լուսամուտի առաջ դրված ե մի քախտ, վորի վրա Գալուստը Անուշի հետ նստած խոսում ե: Լուսնկա գիշեր ե:

Տ Ե Ս Ի Լ 1

Գալուստ և Անուշ

Գալուստ.— Գիտե՞մ, մայրս ինձ եղ բոլորը պատմել ե... դրա մասին մտածել չարժե: Յես եղ խնդրին այնպես չեմ մոտենում, ինչպես վոր ուրիշներն են մոտենում... կարևորն այն ե, վոր յես առաջիկա պես քեզ սիրում եմ և ուզում եմ հետզ մաքուր սրտով կապվել:

Անուշ.— Չորս տարի առաջ եղ պեսք ե լիներ...

Գալուստ.— Կլիներ, յեթե զինվորութիւնն ինձ չխանդարեր: Զինվորութիւնը, համաշխարհային պատերազմը, նրանից հետո քաղաքացիական կռիւները յեկան խանդարեցին: Մնողներդ քո կամքի հակառակ վերցրին, քեզ տվին ուրիշին: Իսկ հիմա, քանի վոր ծնողներդ մահացել են, հետևապես խանդարող հանդամանքներն այլևս չկան:

Անուշ.— Կա, Գալո՛ւստ ջան, կա...

Գալուստ.— Յերեխայի մասին ես մտածում, յես նրան ամենայն սիրով կընդունեմ և իմ հարազատ յերեխայի նման կպահեմ:

Անուշ.—Յես դրա մասին չեմ կասկածում...

Գալուստ.—Հապա ուրիշ ի՞նչ... դուցի դու ինձ
այլևս չես սիրում...

Անուշ.—Սիրում եմ, բայց...

Գալուստ.—Բայց ինչ... ասա՛, մի՛ քաշվիր:

Անուշ.—Գալու՛ստ ջան, չորս տարի համբերել ես,
քիչ էլ համբերի՛ր:

Գալուստ.—Չորս տարի մենք կտրված ելինք,
իրարից հեռու, միմյանց չեյինք տեսնում... Իսկ
հիմա իրար մոտ ենք, իրար միշտ հանդիպում
ենք... և ամեն մի հանդիպելիս սիրտս կրակ է
ընկնում ու վառվում... Համբերել յես այլևս չեմ
կարող: (Ուզում է նրան գրկել, Անուշը նրան
մեղմ կերպով ընդիմանում է):

Անուշ.—Թո՛ղ, դրա ժամանակը չե...

Գալուստ.—Ճիշտ ես ասում, դրա ժամանակը չե...
Յես չկարողացա ինձ պահել... Թուլություն է իմ
կողմից... ներողություն: (Գլուխը յերկու ա-
փերի մեջ առած՝ մտածում է, մի փոքր հետո
Անուշը մոտենում է և ձեռքը դնում նրա ուսին):

Անուշ.—Նեղացա՞ր, Գալու՛ստ ջան, մի՛ նեղանա...
Իմ գլխին յեկածները դու չդիտես... Գալու՛ստ
ջան, յես քու տեսած, քու իմացած են առաջվա
Անուշը չեմ... Ինձ անանգել, ինձ ստորացրել,
ինձ հողի հետ են հավասարեցրել... Իմ սիրտը
չարությամբ է լցված... վրիժառության զգաց-
մունքն է իմ մեջ խոսում... մեր թշնամու հետ
յերբ դուք ձեր զործը կվերջացնեք, նրանից հետո
յես հավիտյան քոնը կլինեմ... յես քեզ սիրում
եմ, Գալու՛ստ ջան... (Գլուխը դնում է նրա
ուսին և հեկեկում):

Գալուստ.—Լավ, թող եղպես լինի... Ահ, հրեն
մեր տղաները յեկան: Լսիր, յես մոռացա քեզ
ասեմ, վոր ետր մենք ետեղ ժողով ունենք,
այսինքն մի փոքր պաղպղունի խորհրդակցու-
թյուն: Դու ասացիր, վոր քու տունն ապահով ա,

դրա համար մենք խորհրդակցությունը ետեղ
նշանակեցինք:

ԱՅՈՒՂ.— Ինչքան ուզում ասալահով լինի, դարձյալ
հույս դնել չի կարելի: Դուք ձեր խորհրդակցու-
թյունը յերբ վոր սկսեք, յես կմնամ ետեղ,
ոքմին գալու լինի, կգամ քեզ իմաց կանեմ (գնում
ե ներս):

Տ Ս Ս Ի Լ 2

Գալուստ, Ծամիլ, Սիմոն և Սահակ

Ծամիլ.— Ա, դու արդեն յեկել ես:

Սիմոն.— Գալուստ, խնդրեմ ծանոթանաս, Սահակ
ամին աս, առանց տոմսի կուսակցական:

Գալուստ.— Ծատ ուրախ եմ (ձեռքը սղմում է):

Սահակ.— Ծիշտա, Գալուստ ջան: Յես վաղուց քեզ
չեմ տեսել, բայց քու մասին ենքան լսել եմ, վոր
կարծես թե մենք վաղուցվա ծանոթներ ենք:
Ուրիշ խոսքով դու մեզ հեղաշրջել ես: Հա,
հա, հա...

Գալուստ.— Հարկավոր է, վոր դուք ել ուրիշներին
հեղաշրջեք:

Ծամիլ.— Եղ իրա հերթին: Իհարկե...

Սիմոն.— Լսիր Գալուստ, Սահակ ամուն տարանք
գործարանում ընդունել ամինք, արդեն երեկ-
վանից աշխատումա, վորպես սևազործ բանվոր:
Քու մասին ել կառավարիչի հետ խոսեցինք:

Ծամիլ.— Մենք նրան ասեցինք, վոր Գալուստը զին-
վորությունից վերադարձել աս, ուզում աս, դու
գործարանում աշխատի:

Գալուստ.— Ի՞նչ ասեց, համաձայնվո՞ւմ ե:

Ծամիլ.— Հենց բանն ել եղ աս, վոր չի համաձայն-
վում...

Սահակ.— Յես դարձանում եմ, ինչի՞ համար չպտի
համաձայնի: Ախար չե՞ վոր զինվորության

Շամիլ.—Թողեք դնամ, յերկուսին ել խփեմ, տեղն ու տեղը շանսատակ անեմ... վնասակար էլեմենաներ են, յես դրանց հերն անիծեմ... (Ատրմամակը ձեռին բռնած, ուզում է լուսամուտից իջնել: Գալուստը նրան բռնում է):

Գալուստ.—Մպասի՛ր, ո՞ւր ես գնում. գործն ուզում ես սկզբից փչացնել. ա՛յ քեզ տաք գլուխ: (Շամիլին քաշում է ներս և լուսամուտի փեղկից գաղտագողի նայում):

Պրիստավ.—Յես որենքից դուրս բան չեմ բռնի: Ով ինչ ուզում ա՛ թող սախ, ով ինչ ուզում ա՛ թող խոսի: Ի՞նչ ա, դուք կարծում եք, թե յես ուղտի անդաջում քնած եմ, և չե՞մ տեսնում, թե եստեղ ինչե՛ր ա կատարվում...

Անուշ.—Վ՛ւ, քոտանամ, մեր տան ժողովի մասին նրանք խմացել են: (Լուսամուտը կամաց ծեծում է):

Գալուստ.—Ան՛ւշ, դու տեղումդ հանդիստ նստի՛ր և մեզ մի՛ խանգարի՛ր: Մենք տեսնում ենք և նրանց խոսակցութունը լսում:

Պրիստավ.—Մեղնում նենց մարդիկ կան, վոր իմ պրիստավությանս համար նախանձից սրտները ճաքում ա: Նրանք, ճիշտ ա, յերեսիս չեն համարձակվում, բայց թե հետևիցս շատ բան են խոսում:

Բեժամ.—Ե՛ւ, թող խոսան, խոսալուն ի՞նչ ես անգաջ անում: Չավզակ մարդկանց փեշակը խոսալն ա, թաղավորի հետևիցն ել են խոսում, դարտակ խոսալուցն ի՞նչ ա դուրս գալիս, վոչինչ:

Պրիստավ.—Մեր ժողովուրդը դամշու տակ ա ծընվել ու մեծացել, նրանց լեզվով բան հասկացնելը դժվար ա: Ես դամշին ինչի՞ համար ա... ես որՀնածը մինչև նրանց մեջքին չդիպչի, և նրանց մեջքի կաշին մինչև մի տասը տեղից չլլոկվի, նրանք խելքի չեն գա:

Շամիլ.—Յես ձեզ ասում եմ՝ թողեք դնամ, դրանց խփեմ՝ շանսատակ անեմ... յես դրանց ձրիակեր

Հերն անիծեմ. ո՞ւմ դեմ ին կանգնել դրանք
Հարբա—գորբա անում: (Ուզում ե լուսամուտից
իջնել, Գալուստը նորից նրան բռնում ե):

Գալուստ.— Հիմարութուն մի՛ անի, քեզ ասում
եմ: (Ներս ե քաշում նրան):

Պրիստավ.— Սրա չեն ասել, վոր գյուղացու զը—
լուխը հաստ ա ըլում, միտքը՝ բարակ:

Անուշ.— Ը՛հ, հողս ձեր գլխին. խոսալու ել ուրիշ
տեղ չգտան, յեկել իմ դուռն են կտրել. — առանց
են ել հազար շուն ու գել վրաս խոսում ա:

Պրիստավ.— Իշին հարցրին՝ որեն քանի՞ վերստ ա
ճամբա կտրում, ասով բիղ նա խարար: Հմի յես
վոր կամ, ես չըջանի բիղն եմ, ես չըջանի իշխա—
նավորն եմ. որենք ու իրավունք իմ ձեռքն ա, յես
վոնց հրամայեմ, ես վողջ չըջանի խալխը ընենց
պտի ժաժ գա, իմ ուժ ու զորութենի առաջ նրանք
պետք ե խոնարհվեն:

Բեժամ.— Ասածներդ արդարացի յե: Եղ պատճառով
ել մեր կառավարության առաջ քու պատիվդ որ—
որի բարձրանում ա: Չեզոք զոնայում կամխարից
հետո պաշտոնի տեսակետից յերկրորդ մարդը դու
յես...

Պրիստավ.— Ինչի՞ յերկրորդը, այլ վոչ առաջինը:
Ամերիկացիները ես զնաչոկը ինչի համար նրան
թողած՝ ինձ ամեցին: Ամերիկացիները հիմար
մարդիկ չեն: Նրանք յերևի մի բան հասկանում
են: Պաշտոնի մասին քանի վոր խոսք ընկավ թող
քեզ մի բան հարցնեմ, դու ել գեղի պաշտոնին
ես, պետք ե վոր իմանաս: Ասա՛, խնդրեմ, մեր
յերկրի տերն ու տնորենը ներկա դեպքում ո՞վ ա:

Բեժամ.— Այսինքն ի՞նչ տեսակետից:

Պրիստավ.— Ամեն տեսակետից:

Բեժամ.— Յերկրի տերն ու տնորենը մեր կառավա—
րությունն ե:

Պրիստավ.— Չե՛, չիմացար, յերկրի տեր ու տնո—
րենը նա յե, ով ժողովրդին կերակրում, հազցը—

նում ու նրա վորբերին խնամում ա, իսկ ո՞վ ա եղ
անողը:

Բ Ե Ժ Թ Ա Ն.— Ամերիկացիները:

Պ ր ի ս տ ա վ.— Նշանակում ա վոր յերկրի տերն ու
տնօրենն ել նրանք են: Նրանց տված հացը,
քաղցր կաթը, տյուկերով շորերը չլիներ, մեր
ժողովուրդը ջրտից ու սովից կկոտորվեր, մի
ժարդ չեր մնա...

Բ Ե Ժ Թ Ա Ն.— Եղ բոլորը դու ճիշտ ես ասում: Բայց թե
մենք ինչի համար ենք հասեղ կանգնել, յես չեմ
հասկանում:

Պ ր ի ս տ ա վ.— Ինչի՞ յես վառում, յերևի մի հուն-
դամանք կա, դնանք տեսնենք՝ հասեղ ի՞նչ ա
կատարում: (Միմյանց հետ լուռ խոսում են):

Գ ա Վ Ղ Ա Ն Ա Մ.— Տղեք, պատրաստվե՛ք, նրանք դալիս
են... Լսի՛ր, Անուշ, եղ կացինը վերցրո՛ւ, դնա՛
բակը և ձեացրո՛ւ, իբր փայտ ես ելգում ճղել:
Դե շուտ, ել մի՛ սպասի...

Ա ն ու շ.— Հողը գլխիս, փորձանք ե պատահելու:
(Կացիներ վերցնում, գնում ե բակը և սկսում ե
փայտ ճղել):

Պ ր ի ս տ ա վ.— Ճիշտն ասած՝ յես եղ նպատակը չեմ
ունեցել: Բայց դե, քանի վոր յեկել ենք, մտնենք,
տեսնենք՝ ի՞նչ ա անում: Եղ շան աղի կնիկը,
ինչպես յերևում ա, ուժեղ մագնիտ ա, վոր միա-
ժամանակ մեզ յերկուսին ել միասին քաշել ա
դեսը...

Բ Ե Ժ Թ Ա Ն.— Եղ նրանից ա, վոր մենք յերկուսով ել
իրարից անկախ միեկնույն նպատակն ենք ունե-
ցել... Հա՛, հա՛, հա՛... (Միծառելով մտնում են
բակը):

Պ ր ի ս տ ա վ.— Աղջի՛, Անո՛ւշ, դու եղ ի՞նչ բանի յես:

Բ Ե Ժ Թ Ա Ն.— Անուշը ձմռան թաղարիք ա տեսնում:

Պ ր ի ս տ ա վ.— Անուշ, եղ ինչ ա, ուրիշ ցախ չունեն՞ա,
դրանով դժվար թե դու ձմեռը տաքանաս:

Բ Ե Ժ Թ Ա Ն.— Լսի՛ր, Անուշ, թե ցախի պակասու-
թյուն ես քաշում, ասա քեզ համար մի յերկու
արարա ցախ ուղարկեմ:

Անուշ.— Ծնորհակալ եմ, ձեր ցախը պահեք ձեզ համար:

Պրիստավ.— Առանց տղամարդի տունն ել մի բան չի: Լսիր, Անուշ, դու գիտես, վոր իմ ձեռի տակ ծառայողներ կան, հարկավոր ժամանակ դու ինձ իմաց արա, յես նրանց կուղարկեմ քեզ քոմագ կանեն: Փետ ճղելը կնգա գործ չի:

Անուշ.— Ծնորհակալ եմ... առանց քու ղրկած մարդու ել յես իմ գործը կանեմ... դու ետ քաղցր խոսքերով գնա ուրիշի սիրտը շահի... առանց մի վորևե պատճառի դուք ետեղ չեյիք գա: Ասեք տեսնեմ ի՞նչի համար եք յեկել... ի՞նչ եք ուզում ինձանից... բա յես իմ տանը մի բոպե ազատ ու հանգիստ նստելու իրավունք չպիտի ունենամ... յեթե ինձ վրա կասկածում եք, տարեք ինձ բանտարկեք... վախենում եք ձեր բանտերում ինձ համար տեղ չունենա՞ք... անհոգ յեղեք, ինձպեսների համար դուք տեղ չատ կըզանեք... որը տասը անգամ հետևիցս մարդ եք ղրկում:

Պրիստավ.— Որենքի առաջ ամենքը հավասար պատասխանատու յեն, քեզ վոր կանչում են, իհարկե պտես գա... լսիր, քու ողորմած հոգի մարդուն յես ճանաչում եմ... նրա կենդանության նրով, նրա հետ մի քանի անգամ նստել աղ ու հաց եմ կերել. ու հիմի ետ աղ ու հացը յես չեմ ուզում ուրանալ:

Անուշ.— Պարզ ասե՛ք, բանն ինչո՞ւմն ե, յես չեմ հասկանում:

Պրիստավ.— Բանը նրանում ե, վոր քեզ վրա կասկած կա... ասում են, վոր քու տանը բուլլեիկներ են գալիս—գնում: Նրանք ամեն ժամանակ ետեղ գաղտնի ժողովներ են անում: Ես քանի որս, կարծեմ ինչ վոր մի տեղից դուք զենքեր եք ստացել... ապստամբվելու պատրաստություն եք տեսնում...

Անուշ.—Ընենց բան եք ասում, վոր եփած հավը կծիծաղի. ի՞նչ ժողով, ի՞նչ գնեք, ի՞նչ աղըստամբություն... Եղ վո՞րտեղից եք դուք հնարել... եղ բոլորը թշնամու խոսքեր ա... ով վոր լսի, չի հավատար: Գնացե՛ք, գնացե՛ք, դուր տեղից խալխի վրա շառեր մի՛ք մողոնի, յես ինձ համար ել ուրիշ գործ չունե՞մ, դարդ չունե՞մ, ցավ չունե՞մ... վոր գնամ ըսենց բաների մեջ խառնըվեմ... ճիշտ ա, մարդուս մոտիկ ընկերները, պատահած դեպքում, մեր տուն գալիս ու գնում են... դե նրանք ընենց մարդիկ չեն... Հենց եսոր ել նրանք յեկել էյին... ձեր գալուց մի քանի բոսկե առաջ դուրս յեկան գնացին:

ԲԵԺԱՆ.— Յես քիչ առաջ ձեր փողոցով անցնում էյի, մի անծանոթ տղամարդ եղ չարդախի տակ հետդ նստած խոսում եր:

Անուշ.— Ծիշտ ա, իմ քեռուս տղան եր, չորս տարի յե՛ ինձ չեր տեսել, յեկավ ինձ տեսավ ու գնաց:

ԲԵԺԱՆ.— (Պրիստավիմ) Քեռու տղան ա ըլել:

Պրիստավ.— Լսի՛ր, Անո՛ւշ, մի բոսկեյով գնանք տուն, յես քեզ հետ առանձին գործ ունեմ:

ԲԵԺԱՆ.— Յես չեմ հասկանում: Յեթե դու նրա հետ առանձին գործ ունեյիր, ինչի՞ համար դու ինձ հետդ բերիր:

Պրիստավ.— Հասկանալի յե... դե վոր եղպես ե, տունը չեմ գնա... Լսի՛ր, Անո՛ւշ... (Թեից բռնում է և քաշվում մի կողմ):

Անուշ.— Հեռացի՛ր, հեռացի՛ր... ասրճանակից յես վախենում եմ, հանկարծ կտրաքի...:

Պրիստավ.— Դե լավ, ուրիշ անգամ յես քեզ մոտ առանց ասրճանակի կգամ: (Լուռ խոսում է Գրա հետ):

ԲԵԺԱՆ.— Տնաքանդը կպել ա ու ել ձեռք չի քաշում: Ներողություն ձեր ՚խոսալը կարծեմ մի քիչ յերկարեց: Գնալու ժամանակն ա, գնանք:

Պրիստավ.— Գնանք, գնանք: Լսի՛ր, Անո՛ւշ, մի որ

ստաճին կզամ, կնստենք, քիչ զրից կանենք...
ցտեսություն... (Գնում են):

Ա ն ու շ .— Ցտեսություն: Գնալներդ բլի, գալներդ
չբլինի... Հողս ձեր անամոթ գլխին: (Վազելով
գնում է լուսամուտի մոտ): Գնացին, դուք ձեր
ժողովը շարունակե՛ք: (Դուրսը քալստի վրա
նստում է և շարունակում է գուլպա գործել):

Գ ա լ յ ու ս տ .— Ան՛՛ւշ, դու նրանց հետ կարգին սերա-
բանություն եյիր անում:

Ս ի մ ռ ճ .— Ել ի՞նչ դարդ, մեկի տեղ յերկու կալալեր
ունես, հա՛, հա՛, հա՛... .

Շ ա մ ի յ .— Կալալերներդ գլուխը կացնող ջարդելու
եյի: Ախտ՛ս, վոր Գալուստը չթողեց:

Գ ա լ յ ու ս տ .— Դու են ասա՛, կալալերներդ քեզ հա-
մար կանֆետից-բանից բերե՞լ եյին, թե հենց
դարդակ եյին յեկել... .

Ա ն ու շ .— Քանի ես լուսամուտը բաց մնա, դուք շատ
կխոսաք... (Լուսամուտը ծածկում է: Մակարը
նուս գյուղացիների հետ ներս է գալիս): Պորհըր-
դակցությունը սկսվել ա, իսկ դուք նոր եք գա-
լիս:

Մ ա կ ա ր .— Ուշացել ենք: (Գնում են ներս):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեւը ներկայացնում է Յենոփի տունը: Յերկրորդ գործողության մեջ յեղած մույն կահավորությունը: Այստեղ ավելացնել հրացան և սեմյակի մի անկյունում՝ անկողնու ծալքը:

Տ Ե Ս Ի Լ 1

Գալուստ, Շամիլ, հետո Խաթուն

Գալուստ.— (Սեղանի առաջ նստած գիր է գրում):
Մանրամասնությունն այս նամակում գրված է... կհանձնես կոմիտեյի քարտուղարին և նրա հանձնարարություններն ու աված հրահանգները կըստանաս, հետո կբերես... (Ծրարը տալիս է նրան):

Շամիլ.— Դու անհող կա՛ց, ինչպես ասացիր, ենպես կանեմ... (Ծրարը վերցնում է և դնում գլխարկի տակ): Եստեղ ամենաապագայ տեղն ա: Ել ուրիշ ասելու բան չունե՞ս... յես գնացի:

Գալուստ.— Ճանապարհները վտանգված են... զգույշ յեղի՛ր...

Շամիլ.— Դու բոլորովին արխային կա՛ց... (Գնում է):

Խաթուն.— Ա՛ բալամ, ախր ճաշդ ստոսվ:

Գալուստ.— Ճաշի ժամանակ չի... տիսնում ես, վոր ձեռքիս վրազ գործ ունեմ: Լսի՛ր, մայրի՛կ, են կապոցը, վոր ավի քեզ և ասեցի պահիր, վորտե՞ղ ես դրել, բե՛ր:

Խաթուն.— Գնամ բերեմ: (Դուրս է գնում):

Գալուստ, Անուշ, հետո Խաքում

Խաքում.—Յես կարծեցի տանը չես լինի:

Գալուստ.—Ա՛, դու արդեն յեկար:

Անուշ.—Յեկա թռուցիկները տանեմ:

Գալուստ.—Թող մնա, յես ուրիշի ձեռքով կուղարկեմ:

Անուշ.—Ուրիշի ձեռքով հարկավոր չի, յես ինչս կտանեմ: Մինչև դու ուրիշի ձեռքով կուղարկես, կյանքդ ել վտանգի կեննթարկես:

Գալուստ.—Իսկ դու, վոր հիմա ուզում ես տանես, կյանքդ վտանգի չե՞ս յեննթարկում...

Խաքում.—Ես միտաթն ինչքա՞ն ծանր ա... կասես յերկաթ ըլի սրա մեջ դրած:

Անուշ.—Ինձ կասեյիր՝ յես կրեբեյի: Ինչո՞ւ համար ես մայրիկին նեղություն պատճառում: (Կապոցը մրա ձեռքից վերցնում է):

Գալուստ.—Դի՛ր այտեղ, մյուս անգամ մայրիկի հասցեյին դու նման արտահայտություններ չանես, նեղանում ե:

Խաքում.—Իհարկե կնեղանամ, ձեր գործին յես ել եմ ուզում մի բանով ոգնած ըլնեմ:

Գալուստ.—Լսո՞ւմ ես, կեցցե՛ մայրիկ, եղպես ել հարկավոր ե: (Գրկում է մրամ և համբուրում):

Խաքում.—Հողիս հանեցիր: Ինձ համբուրելով, ա՛րալամ, բան դուրս չի գա, ջահեյներին համբուրի՛ր, վոր լազաթ ստանաս... հա՛, հա՛, հա՛...

Գալուստ.—(Անուշին) Դե լավ, ինչո՞ւ կարմրեցիր:

Խաքում.—Խեղճին ամաչացրի: Աղջի՛, բանիդ կաց, խոսքը տեղն ա գալիս, կասեն. պառավների ասած խոսքերից չեն նեղանա... Պառավներն ել եղպես խոսքերով են ձեզ պես ջահեյներին՝ ուրախացնում ու իրենք ել մեջտեղ շահվում... (Դուրս է գնում):

Գալուստ.—Եղպես ել հարկավոր ա: («Ինտերնացիոնալ» յերգի յեղամակով սուլում է և քոռոցիկների կապոցը բաց անում):

Անուշ.—Դու խոստացար եղ յերգն ինձ սովորեցնել:
Գալուստ.— Յեղ կսովորեցնեմ: Նազիկին եղ յերգը
արտագրել եմ տվել, նրանից վերցրո՛ւ, խոսքերն
անգիր արա՛, սովորի՛ր, իսկ յեղանակը յես կսովո-
րեցնեմ: Նազիկը լավ սովորել է:

Անուշ.— Նազիկը շատ շնորհքով աղջիկ ե.ամեն ինչ
նա շուտ ե ըմբռնում:

Գալուստ.—Վորովհետև նրա մեջ հեղափոխական
ջիղ կա:

Խաթուն.—(Շեմֆից) Ա՛ տղա, քանի Անուշն ել ես-
տեղ ա՛ կերակուրը բերեմ, նստեք միասին կերեք:

Անուշ.—Յես կերել եմ, շնորհակալ եմ:

Խաթուն.— Ի՞նչ անենք, վոր կերել ես: Գնամ բերեմ,
նստե՛ք, Գալուստի հետ յերկուսով միասին կերի՛ք:
Միասին կերածը լավ կլինի, ախորժակով կուտեք:

Գալուստ.—Յեթե չի ուզում, ստիպելու կարիք չկա:
Լսի՛ր, Անուշ, յերկու մասի բաժանեցի: Ես մի
մասը դու կտանես, իսկ ես մյուս մասը Սիմոնը
կզա կտանի: Վրաց ատրյադում տարածելու հա-
մար ա:

Անուշ.— Դե՛, յես գնացի: Սրանք կտանեմ. հետո
կզամ, յեթե Սիմոնը դրանք տարած չլինի, յես
կտանեմ ինձ մոտ կպահեմ: Քեզ մոտ պահելը
վտանգավոր ե... վախենում եմ՝ մի բան պատա-
հի: (Թռուցիկները վերցնում ե ու դուրս գնում):

Խաթուն.— Վա՛յ, քուանամ...

Գալուստ.— Դե՛, ել մի՛ սկսի: Դրա ժամանակը չի:
Վերցրո՛ւ սրանք, մի ապահով տեղ դի՛ր, յես
ես բուպեյիս գալիս եմ:

(Ատրեանակը վերցնում դնում ե գրպանը և շտապ
դուրս գնում):

Խաթուն.— Ա՛ տղա, բա ճա՞շը:

Գալուստ.— (Դրսից) Պատրաստի՛, յես հիմա կզամ:

Խաթուն.— (Յերկար ժամանակ նրա հետևից՝ կանգ-
նած նայում ե):

Աշխարհիս բանը մաքը չի հասկանում: Ո՞ւմ մըտ-
քով կանցներ, վոր չորս տարուց հետո սրանք նո-

րից իրար կհանդիպեն ու նորից իրար կսիրեն:
Յերեկիս դամաթն ա ըլել... (Մտածում ե): Բա
վոր յերեկս ունի... Ե՛հ, ի՞նչ արած, իրար վոր
սիրում են... Ի՞նչ անենք, վոր վորրեկարի յե, բա
վոր սիրուն ա... սաղ գեղի աչքը դրա վրեն ա...
(Նազիկը շտապ մերս ե մտնում):

Տ Ե Ս Ի Լ 3

Խաբում, Նազիկ, հետո Գալուստ և Սիմոն

Նազիկ.— Տատի՛ ջան, քեռին տանը չի՞...

Խաբում.— Քեռիդ հենց նոր դուրս յեկավ, ի՞նչ կա,
ի՞նչ ա պատահել: Նրան բա՞ն եյիր ասելու...
Հրես յեկավ:

Գալուստ.— Մեր հաջողութիւնը գլխավորապէս,
կամուրջի խնդրի բարեհաջող լուծումից ե կախ-
ված: Այդ մասին յերևի մենք մտա որերս մի խոր-
հրդակցութիւն կունենանք... կազմակերպու-
թիւնը լուրջ պարտավորութիւն ե դրել քեզ վրա:

Սիմոն.— Յե՛վ յես կաշխատեմ ամեն կերպ կազմա-
կերպութեան տված պարտավորութիւնները ճշը-
տութեամբ կատարել և պատվով դուրս դալ նրա
առաջ:

Գալուստ.— Լազոն շրջանում իր կազմակերպչական
աշխատանքներն ա կատարում: Յերեկ սուբհան-
դակի միջոցով նրանից մանրամասնորեն տեղեկու-
թիւն ստացա (նամակը կարդում ե): Մեր դործե-
րը լավ են գնում: Մասսայի մեջ հեղափոխական
ալիքն որ որի վրա լայն ծավալ ե ընդունում...
ապստամբութեան գաղափարը բոլորին վողեւորել
ե... նրանք պահանջում են որ առաջ սկսել և ա-
պստամբութեան դրոշը բարձրացնել... (Նրանի
հաշիւմ են մի կողմ և խոսում):

Խաբում.— Ես մեր հալիվորն առավոտից դուրս ա
յեկել տնից, կես գիշեր ա դառել, չկա: Յարաւ:

Ի՞նչ ելալ, ո՞ւր մնաց, ինչի՞նք ետքան ուշացալ...
Հողը գլխիս, նրան մի բան պատահած չլինի՞...
Քոռանամ յես...

Ն ա գ ի կ .— Հեղափոխականի մայրն եղպես խոսքեր չի
ասի, ուրիշները կլսեն, ամոթ ա... Քու տեղ, վոր
մի ուրիշը լիներ, մի բոպե չեր սպասի, ա՛յ, են
հրացանը կվերցնեք, թշնամու դեմ կռալի դուրս
կդար... Իսկ դու տանը նստած՝ ինչի՞ մասին ես
մտածում... Ը՛հ, դու վախուկ...

Խ ա ք ու ճ .— Սրա լեզվի՞ն... սրա խոսալո՞ւն... Հողս
գլխիդ, տաներկու տարեկան ես, վոր ըտենց ես
խոսում, բա վոր մեծանաս, ի՞նչ կլինես...

Ն ա գ ի կ .— Կոմսոմոլ կլինեմ...

Խ ա ք ու ճ .— Կոմսոմոլը ի՞նչ ա... ետ ել թազա բան
ա՞...

Ն ա գ ի կ .— Քեռուն հարցրու, նա քեզ կասի... Խոր-
հրդալին յերկրում մի դնա տես կոմսոմոլներն
ինչեր են անում... Իսկ յես ամբողջ որը տանը
նստած, վոչինչ ել չեմ անում... (տխրում է):

Գ ա լ ու ս տ .— (Սիմոնիմ) Իսկ մինչ եդ, հավաքած
բոլոր տեղեկությունները կուղարկենք կոմիտե ե
մեր հետադա անելիքների մասին, անհրաժեշտ
հրահանգներն ու ցուցմունքները կստանանք...

Խ ա ք ու ճ .— (Նագիկիմ) Ինչի յես քիթդ քաշ արել.
Քունդ կտանի, գիշեր ա, վեր կաց դնա տուն: Հերդ
ու մերդ քեզ սպասելիս կլինեն:

Ն ա գ ի կ .— Սպասում են, թող սպասեն, քեռու հետ
յես առանձին գործ ունեմ:

Խ ա ք ու ճ .— Նրա խոսակցությունն ետոր չի վերջա-
նա: Ա տղա, ճաշն անջախ տաքացրել եմ, նստե-
լիր, ուտելիր: Ամեն որ ել ըտենց ա. հարյուր ան-
գամ պտեմ ասի, արի նստի հացդ կեր...

Ն ա գ ի կ .— Նրանց խոսակցությունն ե մեզ համար ես
բոպեյիս կարեվոր, թե քու եդ ճաշը... ո՞ւմ հետ
եմ խոսում... միևնույն ա, դու իմ ասածը չես
հասկանա... վորովհետե դու վոչ կոմսոմոլ ես,
վոչ ել կուսակցական: Դրա համար ել դու հե-

դաժնութեան անխառն քննելով չես հետաքրքրվում
և նրա մասին դու գաղափար չունես...

Խաթուն.— Մրա լիզվին, սրա խոսալուծ, հլա տես
յապատրակի պես վոնց ա ականջները խլշտրել և
նրանց խոսակցությունը լսում...

Նագիկ.— Մի՛ խանդարի... (Ուշադրությամբ լսում
ե նրանց խոսակցությունը):

Գալուստ.— Վոչ մի դժվարության առաջ մենք կանգ
չենք առնի... դրա համար ել մենք կարմիր պար-
տիզաններ ենք... իսկ կարմիր պարտիզանների դե-
բը քաղաքացիական կռիվներում շատ մեծ է:

Նագիկ.— Քեռի՛ ջան, իսկ կոմսոմոլները...

Գալուստ.— Նրանց դերն ել շատ մեծ է:

Նագիկ.— (Խաթունին) Ա՛յ, տեսա՞ր, թե՞ վոք ա-
սում ե՞մ:

Գալուստ.— Հա՛, յես մոռացա ասեմ, թուղիկներն
արդեն պատրաստել եմ:

Սիմոն.— Լավ հիշեցիր: Կգեմ մեշոկի մեջ, տեսնո-
ղը կկարծի, թե կարտոշկա յեմ տանում: (Թոռու-
ցիկների կապոցը վերցնում է): Ել ուրիշ ասելու
բան չունե՞ս:

Գալուստ.— Սպասի՛ր:

Խաթուն.— Եդ ամանը վերցրո՛ւ, դնա՛, թթու բե՛ր,
դե ել ի՞նչ ես կանգնել: Դրսի բան ըլեր, հիմի
տասն անգամ կատարած կլինեյիր, համա վոք
տան դործն ա ըլում, ջանդ դուրս ա գալիս...
Հողոս գլխիդ, թե դու աղջկա շնորք ունիս...
հարկավոր չի, մնա՛, մի՛ դնա:

Գալուստ.— Ես նամակը վերցրո՛ւ, կտաս ընկեր
Լադոյին:

(Ծրարը հանձնում է)

Սիմոն.— Հիմա կարող եմ դնալ:

Գալուստ.— Կոմիտեյից հրահանգները կատանաս և
հետդ կրեբես: Չգուշ կաց՝ չբռնվես, առանց են
ել բռնվածներ շատ կան:

Սիմոն.— Անհող կա՛ց, բռնվող պատուհներից չեմ:

(Մրաբը դնում է գլխարկի տակ) Դե', յես գնացի... ցտեսուիթյունն...

(Դուրս է գնում)

Գալուստ.— Յտեսուիթյունն...

Խաթուն.— Փառք ասածու, խոսալդ վերջացրիր, գնամ ճաշդ բերեմ՝ ուտես:

Գալուստ.— Դու ետք թո՞ ճաշով ինձ ուղղակի սպանեցիր:

Խաթուն.— Դե լավ, ել սրանից հետո չեմ ասի: Թող ըտենց մնա, կուզես կեր, կուզես մի՛ կեր, թո՞ կամքն ա...

Գալուստ.— Դե լավ, մի՛ նեղանա, ես խոսքը քեզ են մտքով չասեցի, վոր դու նեղանաս: Զղայնացած ժամանակ շատ անգամ ինքս ել չեմ իմանում, թե ինչպես յերբեմն կողիտ արտաճայտություններ իմ թույլ տալիս...

Նազիկ.— Քեռի՛ ջան, յես քեզ հասկանում եմ, եզ նրանից ա առաջ գալիս, վոր Վոսահյության ժամանակ ձեր միտքն ուրիշ տեղ ա լինում...

Գալուստ.— Նազիկը ճիշտ է ասում, խոսելիս շատ անգամ միտքս վրաս չի լինում: Իսկ հիմա միտքս վրաս է: Ասա՛, հիմա յես քեզ կլսեմ. դու նեղացել ես ինձանից, արի հաշտվենք: (Գրկում է մորը և համբուրում): Ա՛խ, մայրի՛կ ջան, մենակ դու չես, բոլոր մայրերն ել իրենց զավակների համար եղպես են մտածում... Բայց քաղաքացիական կռիվներում; մայրական այս քնքուշ փառաքշանքին ու խնամքին կարոտ՝ քանի՛ քանի՛ մայրերի զավակներ ընկան...

Խաթուն.— Խե՛ղճ ծնողներ... (Լաց է լինում):

Գալուստ.— Յես դրա համար չասեցի, վոր դու լաց լինես: Լաց լինել հարկավոր չի: Նազի՛կ, դու պատրաստ ես հեղափոխական ընկերների սկսած գործը շարունակելու:

Նազիկ.— Միշտ պատրաստ:

(Պիտներական պատիվ է բռնում)

Գալուստ.— Կեցցե՛ս... տեսնո՞ւմ ես, մայրի՛կ,

մեր Նազիկն ինչ քաջն ե: Նազիկ ջա՛ն, ինչո՞ւ մեր
ծնողներն խաղես լալկան են: (Նազիկի հետ լուս
խոսում ե):

Ն ա ք ու մ.— Խեղճ բլեն ձեր ծնողները, նրանք ձեր
ձեռին կրակն են ընկել... Ծնողներէ սիրտը ձեզ
համար կալի սաման ա, համ կտարում եք, համ
կոծկում... Հմի ել սրա հետ սկսեց: Տխսննք սրա
հետ յե՞րբ ա վերջացնում: Գնամ, կերակուրը
դնեմ կրակի վրա՝ տաքանա... (Գնում ե):

Ն ա զ ի կ.— Քեռի՛ ջան, խնդրում եմ խոսքը կտուրը
չգցես: Յես ուզում եմ ձեզ հետ աշխատել:

Գ ա լ ու ս տ.— Ժամանակը կզա, Գու ել կաշխատես,
դու դեռ հիմա փոքր ես:

Ն ա զ ի կ.— Ձեզնից յես մեծ դործ չեմ պահանջում...
փոքր դործ եմ ուզում: Յես ել ուզում եմ փոք-
րիկ ուժերով ձեզ ոգնած լինեմ:

Գ ա լ ու ս տ.— Իսկ քեզ ո՞վ ասեց, վոր մենք աշխա-
տանքներ ինք տանում: Մենք վոչ մի աշխատանք
չենք տանում:

Ն ա զ ի կ.— Դու կարծում ես՝ յես ձեր խոսակցու-
թյունը չեյի՞ լսում. բոլորը լսում եյի... ինչ վոր
դուք ծրադրել եք, այդ բոլորը յես դիտեմ:

Գ ա լ ու ս տ.— Դու ստում ես: Դու վոչինչ չգիտես:
Դու սատանայություն յես անում և ուզում ես
ինձնից խոսք դուրս քաշել:

Ն ա զ ի կ.— Իսկի ել չե: Ուզում ես ձեզնից լսածներս
յես մեկ-մեկ ասեմ:

Գ ա լ ու ս տ.— Ասա՛:

Ն ա զ ի կ.— Կամուրջ... դինամիտ... պայթյուն...
Կարմիր բանակ, ապստամբություն... Ա՛յ, տես-
նում ես, յես ամեն ինչ գիտեմ:

Գ ա լ ու ս տ.— Նախ, վոր դու ամեն ինչ չգիտես, և
յերկրորդը, ուրիշի խոսակցությունը լսելը լավ
բան չե: Յեթե մյուս անգամ նկատեմ, քեզ չեմ
ների:

Ն ա զ ի կ.— Քեռի՛ ջան, իզուր մի՛ բարկանա... Կոմսո-
մոլների կյանքից, կարծեմ, դու եյիք պատմում, թե

նրանք քաղաքացիական կռիվների ժամանակ
խնչպիսի հերոսություններ են արել... Կարմիր
Բանակին նրանք խնչպես աջակցություն և ոգնու-
թյուն են ցույց տվել:

Գալուստ.—Այդ բոլորը ճիշտ է, բայց դու, սիրելի
ս, մոռանում ես մի բան, վոք նրանք կոմսո-
մոլներ են, իսկ դու...

Նազիկ.—Իսկ յես, յես կոմսոմոլ չեմ, բայց հո կա-
րող եմ ձեզ ոգնել:

Գալուստ.—Որինակ:

Նազիկ.—Որինակ՝ յես ձեր հանձնարարությունները
կկատարեմ: Ուր վոք ուղարկելու լինեք, կզնամ,
թեկուզ հեռու ճանապարհ. մութ գիշեր, խուլ
անտառներ, դաշտ ու ձոր... մի խոսքով՝ ուր և
ինչի համար ուղարկելու լինեք՝ կզնամ:
(Խաթունը կերակուրի պղինձը ձեռքի՝ ներս է
գալիս):

Խաթուն.—Աղջիկ, եդ ուք ես գնում:

(Պղինձը դնում է սեղանին):

Նազիկ.—Մեր պիտի գնամ, յես վոչ մի տեղ ել չեմ
գնում:

Գալուստ.—Նազիկ ջան, դու տղա պիտի ծնված
լինելիք...

Նազիկ.—Աղջիկ լինելու յեթե գործին կխանդարի,
յես տղամարդու շորեր կհագնեմ:

Խաթուն.—Ձենդ կտրի՛, տղամարդու շորեր հագնե-
լով՝ դու տղամարդ չես դառնա: Ըտենց վոք ըլի,
կնանիքը գիպին ել տղամարդու շորեր կհագնեյին:
Հողը գլխիդ, յեքա աղջիկ ես դառել, դու ելի եդ
խելքին ես... Ի՞նչ ես նստել, արի մի աման կե-
րակուր լցնեմ՝ կե՛ր, գնա՛ ձեր տուն: Կես գիշեր
ա դառել, տանը քեզ սպասելիս կլինեն...

(Նազիկն ընկնված դուրս է գնում):

Գալուստ.—Ինչո՞ւ յես յերեսային վիրավորում:

Խաթուն.— Նա վիրավորվող պտուղը չի: Ա՛ռ,
վերցրո՛ւ, ճաշդ կե՛ր:

(Կերակրով լի ամանը դնում ե սեղանին, Գալուստը մտնում ե և սկսում ե ճաշել): Քանի գնում՝ դու որ-որի վրա մաշվում ես:

Գալուստ.—Վոչինչ բան ե...

Խաբուռ.—Վոչինչ բան ա: Մի տես՝ ի՞նչ ես դառել: Միտդ հալվել, դատարկ վոսկորներդ ա մնացել: Քանդվի եդ գործարանը, առաջ դու ըսենց չեյիր, եդ գործարանում դու ըսենց դատար... առաջուտը ծեղը չբացված՝ գնում եք. մինչև գիշերվա կեսը տանջվում ու չարչարվում: Վերջում մի քոս կոպեկի տեր չեք դառնում...

Գալուստ.—Հենց դրա համար ել աշխատում ենք, վոր եդ դրուժխանը վերջ տանք... մեր աշխատանքի տերը լինենք. մրիակերներին գործարանից դուրս չպրտենք:

Խաբուռ.—Մինչև առուն ջուր կգա, գորտի աչքը դուրս կգա... Աչքիս լիսը գնացել ա, որ ու կյանքս մաշվել՝ մինչև պահել, մեծացրել եմ... Հմի վոր տեսնում եմ՝ ըսենց որ-որի վրա հալվում ես, ջիզյարս մղկտում ա... բա ես քանդված ոջախումը սնունդ չլինի՞, տամ ուտես ու ջանի դաս: Են որը իմացա, վոր դու հիվանդ ես, աշխարհը գլխիս մթնեց...

Գալուստ.—Ել ուրիշ բան չունե՞ս խոսալու:

Խաբուռ.—Սրանից այել բա՞ն... աստված մի՛ արացե, քեզ վոր մի բան պատահի, յես ինչ հող տամ գլխիս... առանց քեզ յես մի որ չեմ ապրի... ել ո՞ւմ համար ապրեմ...

(Լաց ե լինում)

Գալուստ.— Հանդատացի՛ր... (Գրկում ե նրան): Քեզ ո՞վ ասեց, վոր յես հիվանդ եմ, ճիշտ ե, թոքերս քիչ թույլ են, գործարանում աշխատող բանվորներից շատերի թոքերն ել թույլ են, բայց նրանք քեզ պես լաց չեն լինում... լաց ու արցունքով ես պայմանները չեն փոխվի: Ես պայմանները համառկովի ու պայքարի միջոցով միայն

կարելի յի փոխել, իսկ կռվելու ու պայքարելու
ուժ իմ մեջ դեռ կա... դու անհող կա՛ց:
(Սիմոնն ու Շամիլը ներս եմ գալիս: Գալուստը
գարնացած նայում է նրանց):

Տ Ե Ս Ի Լ 4

Նալնի, Սիմոն և Շամիլ

Սիմոն.— Ճանապարհները բռնված են:

Գալուստ.— Թուրքիկներն ի՞նչ արիւր:

Սիմոն.— Ապահով տեղ ա դրած:

Գալուստ.— Բայց լավ չեղալ, համենայն դեպս
դուք պիտի գնայիք:

Սիմոն.— Ելի կգնանք, մի՛ վախի:

Շամիլ.— Վախենալով բան դուրս չի գա: Յես դը-
բանց հերն անիծեմ: Եսոք, եզուց ա, կտանք՝
դրանց քիթ ու մոութը կջարդենք:

(Հանկարծ նկատում է խաթունին)

Պաթո՛ւն մոզիւր, վո՞նց ես, քեֆդ հալդ. լսի՛ր.
Պաթո՛ւն մոզիւր, խելքդ ի՞նչ ա կտրում, ես աշ-
խարհում մենք լավ որ տեսնելո՞ւ յենք, թե հենց
մինչև վերջն էլ ըսենց քաշ ենք գալու:

Խաթուն.— Ա՛բալամ, յես իմանո՞ւմ եմ, վոր քեդ
ասեմ: Հրես, տեսնում ես ելի, ամիսներով մտով
կերակուրի համը չենք տեսնում: Կերածներս ցա-
մաք հաց ա, եդ ցամաք հացն էլ լավ է, թե ամեն
որ ճարվի... Ե՛հ, աստված վերջներս բարի ա-
նի...

Շամիլ.— Աստծուն վոր ընկալ, բանը խարաբ կըլ-
նի:

Խաթուն.— Ա՛ տղա, բոլ ա: Եդ կոապաշտությունը
թողե՛ք: Ինչ անում եք, արե՛ք, մենակ թե աստ-
ծուն մտահան մի՛ք անի, մեր խաչերն ու սրբե-
րը մի՛ք մոռանա: Մեռնեմ նրանց զորությունին:
(Սուփրան հավաքում է, ամանները ձեռքին
դուրս է գնում: Յենոքը ներս է գալիս):

Նույնք, Յեմնք, Խարուն, հետք Նագիկ

Յեմնք.— Ծները հոս են առել: Նրանք արդեն իմացել են, վոր Կարմիր Բանակը դեպից շարժելու յա, տարել կամուրջի տակ դիմամխտ են դրել, վոր ուզած բոպելին կամուրջը քանդեն:

Սիմոն.— Քանդում են քանդեն, Կարմիր Բանակը դենը դնալու համար ել ուրիշ ճանապարհ չի գտնի՞, թե ինչ:

Գալուստ.— Սխալ ես, Կարմիր Բանակը դենը դնալու համար, ինչքան ել շատ ճանապարհներ ունենա, այնուամենայնիվ, եղ կամուրջը մեզ հարկավոր ե... Ամեն կերպ մենք նրան պիտի պահպանենք... Ինչո՞ւ համար ին այդ արել: Դա արված ե վոչ միայն նրա համար, վոր հարկ յեղած դեպքում կամուրջը պայթեցնեն, այլև նրա համար, վորպեսզի հայ և վրացի ժողովուրդի միջև դոյուլթյուն ունեցող յեղբայրական ընդհանուր կապը կտրեն: Ահա նրանց հիմնական նպատակը:

(Նագիկը շնչասպառ մերս ե ընկնում)

Նագիկ.— Վայ, շունչս կտրվեց... Չուրարանց Մոսեսի տան կշտից մինչև եստեղ վազել եմ: Վրացի սալդաթները ընկան քամակիցս, ճամբեն ծռեցի, ուրիշ փողոցներով փախա յեկա դեսը, ել չկարողացան բռնել:

Գալուստ.— Պատմի տեսնեմ, թե ի՞նչ ե պատահել, ի՞նչու համար եյին վրաց զինվորները քեզ հետևում:

Նագիկ.— Եստեղից, վոր դուրս յեկա, զնացի մինչև մեր դռան առաջ, տեսնեմ թումանանց Վերդուչին, Թամթուշանց Գիզուլին, Չուրարանց Մոսեսին, վրացի սալդաթներն առաջներն արած տանում են... Նրանք ինձ, վոր տեսան, դիտով նշան արին: Յերեվի ինձ ուզում եյին հասկացնել, վոր դամ ձեզ իմաց անեմ...

Գալուստ.—Յեզ չես սխալվել... ինչպես յերևում
ե խուզարկութուն ե կատարվում... դրա համար
ել բոլոր ճանապարհները փակել են... Անիրավ-
ները ըստ յերևույթին, վորոչեւ են դիչերը մեղ
բոլորիս ձերբակալեն... Լսիր, Նազիկ, ժամանակ
մի կորցնի: Գնա Անուշին ել իմաց արա, ասա
նրան, վոր Թուցիկները ապահով տեղ դնի:
Բայց դուռը ճանապարհին քեզ չբռնեն:

Նագիկ.—Նրանք ինձ չեն կարող բռնել... (Գնում է):

Յեմնի.—Յես քեզ ասացի, վոր ետ չները հոտն առել
են: Դե ել ինչի՞ համար եք կանգնել, դուրս յեկեք
մի կողմի վրա դնացեք, եղ անիծվածները մեր
տունն ել կգան:

Գալուստ.—Շրջապատված ենք, տնից դուրս գանք թե
չե՞ կձերբակալեն:

Տ Ե Ս Ի Լ Ե

Նույնի, Անուշ, Սիմոն, Մակար և գյուղացիներ

(Բոլորը շփոթված ներս են գալիս):

Անուշ.—Գալուստ, գլուխդ ազատի՛ր: Վրացի աֆի-
ցերը մի խումբ գինվորների հետ գալիս ե:

Սիմոն.—Գյուղը շրջապատել են:

Մակար.—Բոլոր տներն սկսել են խուզարկել և կաս-
կածելի մարդկանց ձերբակալել:

Գալուստ.—Ել սպասելու ժամանակը չի, լուսամու-
տից իջե՛ք ցած: Իսկ դուք հույաներդ մի՛ք կրա-
րի... Մենք դեռ կտեսնվինք:

(Հրացանը վերցնում և մյուսների հետ լուսամու-
տից իջնում է ցած):

Յեմնի.—Լուսամուտը դուք կողպե՛ք, յես գնամ՝
չունը բաց թողնեմ... (Յեմնիք դուրս է գնում:
Անուշը լուսամուտը ծածկում է: Յեմնիք վերա-
դառնում է: Սենյակի դուռը ներսից բանալիով
կողպում է):

Խաբուց.—Կրակն բնկնի դրանց շանը...

Յեմնֆ.—Սո՛ւս, ձեն մի՛ հանեք...

(Դրսում հրացանի կրակոց և շան հաչոց)

Անիրազները շանը սպանեցին: Դուք մի՛ք կանգնի: Եղ յորդան—դաշակից վերցրե՛ք, գնացե՛ք ներսը գցե՛ք վրաներդ, պահեք միթամ ջնած եք:

Խաբուց.—Լավ ա ստում... մի յորդան ու մի բարձ վերցրու, գնանք: (Անուշն ու Խաբունը մի բարձ և մի վերմակ վերցրած՝ գնում են ներս: Դրսից դուրս ծեծում են):

Կացիդածե.—Դուռը բաց արե՛ք... Ձե՞ք լսում... յես ձեզ ստում եմ՝ դուռը բաց արե՛ք...

(Դուռը կոտրում են, Կացիդածեն ատրեանակը ձեռքիմ, զինվորների հետ ներս է մտնում):

Տ Ե Ս Ի Լ 7

Յեմնֆ, Կացիդածե և զինվորներ

Կացիդածե.—Ինչո՞ւ դուռը չեյիք բաց անում: Ինչո՞ւ համար ուշացրիք: Դու կարծում եյիր՝ փակած դուռը կրնկահան անել դժվա՞ր կլինի մեզ համար...

Յեմնֆ.—Կրնկահան անելու ի՞նչ կարիք կար: Քնած եյինք, ուշ արթնացա...

Կացիդածե.—Ստում ես դու, զավթա՛ս... (Ձիմվորներիմ): Խուզարկե՛լ: (Յեմնֆիմ): Լսի՛ր, ծերո՛ւկ, ճիշտն ասա, ինչո՞ւ դուռն իսկույն բաց չարիք, մա՞րդ եյիր թաղցնում, թե թուուցիկներ եյիր պահում:

(Ձիմվորներն անկողիները տակն ու վրա յեն անում: Խաբունը և Անուշը շեմքում կանգնած՝ նայում են: Անուշը շարվ փաթաթվել է, դեմքը համարյա թե չի յերևում):

Նույնք, Խաթուն և Անուշ

- Խաթուն.— Եղ տեղաշարերն ինչի՞ համար եք ըստնց
բերում, ասեղի հո չե՞ք ման դալիս: Թափում եք
գետնին եղ յորդան—դռշակը, կեղտոտում, թե
ի՞նչ. ախր դրանց կարելու և վանալու ժամա-
նակ անջքիս լուսը դնացել ա...
- Կացի դաձե.— Ձայնդ կարի՞ր, սլառա՛վ, քո անքի
լույսը մեզ շատ քիչ ե հետաքրքրում: Այլեի՞ լավ
ե դու ամենևին չխոսես: Հակառակ դեպքում,
տեսնում ես այս ատրճանակը: (Գտնում են Լե-
նինի քաֆցրած նկարը):
- Յեմնա.— Մի՛ խոսա, ա՛յ կնիկ, թող ինչ անում են՝
անեն:
- Կացի դաձե.— Այս ո՞ւմ նկարն ե, ո՞վ ե սրան բե-
րել:
- Յեմնա.— Մբբի նկար ա: Չգիտեմ՝ յերեխեքը վո՛ր-
տեղից են ճարել, բերել:
- Կացի դաձե.— Ձեր բոլո՞ր սրբերն են սրա նման:
- Յեմնա.— Յես սրբերին չեմ տեսել, բայց տեսնող-
ներն ասում են, վոր շատ նման ա:
- Կացի դաձե.— Ծերո՞ւկ, դու շատ խորամանկն ես...
յես այս սրբի նկարը կպատուեմ:
(Նկարն ուզում ե պատուել, Անուշը ճչում ե)
Այս ո՞վ եր... (Մտտեմում ե Անուշին և շայր նրա
գլխի վրայից վերցնում ե): Ծերո՞ւկ, դու քո տու-
նը սրբելով ու հրեշտակներո՞վ ես լցրել, ի՞նչ
ե... (Չինվորներին): Սրանց դո՛ւրս տարեք...
- Խաթուն.— Աղջի՛կ, Անո՛ւշ, դու ել արի՛:
(Անուշն ուզում ե նրանց հետ դուրս գնալ, սպան
նրա քեից բռնում ե ու պահում, իսկ մյուսներին
գինվորները դուրս են բերում):

Կացի դաճե և Անուշ

Կացի դաճե.—Սպասի՛ր, դու ո՞ւր ես գնում: Դու
այստեղ ինձ հարկավոր ես: (Ատրճամակը դնում
ե կորուրի մեջ): Այժմ մենք յերկուսով մնացինք:

Անուշ.—Հետո՞ ինչ, վոր յերկուսով մնացինք:

Կացի դաճե.—Դու համարձակ ես խոսում...
վրայիցդ յերևում ե, վոր դու բալլեիչկա յես...
սակայն պետք ե խոստովանել, վոր տղամարդ-
կանց գերելու բոլոր տվյալներն ամփոփվում են
քո մեջ, սատանան տանի, ուղղակի գծվել կա-
րելի յե... (Ուզում ե բռնել, մա խուսափում ե):

Անուշ.—Հետացի՛ր:

Կացի դաճե.— Զուր ես հակառակվում, միևնույն ե,
դու իմ ձեռքից ազատվել չես կարող... յես պետք
ե քեզ տիրանամ... Ավելի լավ ե, վոր դու քո
հոժար կամքով անձնատուր լինես... (Գրկում ե
նրան և համբուրում. Գայուսը լուսամուտից
հրացանը կրակում ե: Զինվորները ներս են գալիս):

Կացի դաճե.—Ընտանեացից կրակեցին... բռնեք
նրանց... (Ուշաքափ ընկնում ե: Զինվորները
լուսամուտից սկսում են կրակել: Յեճոճն ու
Խաքունը ներս են գալիս):

Խաքուն.— Վա՛յ ինձ, տունս քանդվեց...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Ալլահվերդու գործարանը
մեծ մավեսի տակ, բանվորները վազոնետկանե-
րով հանձնառուքը փոխադրում են ձուլարան:

Տ Ե Ս Ի Լ 1

Տիգրան, Սահակ, մի խումբ բանվորներ, հետո
Շամիլ և Անուշ

Տիգրան.— Չգիտեմ ինչիցն ա, ետոր մեջքս սաստիկ
ցավում ա:

Սահակ.— Մրսեկուց կլինի: Ել ռ.բիչ ինչից կլինի:

Տիգրան.— Շամիլը ուր գնաց. վազոնետկան լցվեց—
դար տաներ:

Սահակ.— Հրեն գալիս ա:

(Շամիլը Անուշի հետ խոսելով գալիս է)

Անուշ.— Դու ծիծաղում ես:

Շամիլ.— Բա ինչ. դու ուզում ես վոր լաց ըլեմ: Յե
իմ ծնված որն ել լաց չեմ ըլել:

Անուշ.— Լսիր, Գալուստից խարաբ չեկավ, յերկմիս
եմ, նրան մի բան պատահած չլինի:

Շամիլ.— Անհող կաց: Նրան վոչինչ ել պատահած
չի լինի: Պատպոնի աշխատանք ա, բա վոնց իշիր
իմանում: Երկափլավ չի, վոր աշկարա եփեն ու
խալիին բաժանեն... պատպոնի աշխատանքը
պահանջում է գաղտնապահ լինել...

Անուշ.— Գոնե նրա տեղը իմանայինք:

Շամիլ.— Նրա տեղը կոմիտեն իմանում է, բավա-
կանա: Ուրիշը վոր չիմանա ել, կարելի յե: Լսիր,
Թուրքիկները ինչ արիր:

Անուշ.— Ցւեւ եմ:

Շամիլ.— Դե ասա հիմի վորտեղ վորա ղլբըոցը ընկ-

նելու աս: Գնում ես: Թե վոր դալմազալ կրարձ-
րանա, արբի ինձ իմաց արա, (Անուշի դուրս ե գնում):
Ս ա հ ա կ.—(Տիգրանիմ): Կարող ա սխառահի, վոր
մեջքդ սաթրջամա ե ելել, ես դիչեր յախու դցել
սուր:

Շ ա մ ի լ.—Հողնելուց ա, հողնած մարդուն յախուն չի
ողնի, քեզ հանգստություն ա հարկավոր: Յեթե
հողնել ես, նստիւ հանգստացիր:

Տ ի գր ա մ.—Լավ ես ասում, հանգստացիր... յես վոր
հանգստանամ, բա իմ գործն ով անի:

Շ ա մ ի լ.—Գործի տիրու հերն ել անիծած... տարին
տասներկու ամիս գործ ենք անում, ինչի տեր
ենք: Ուղտի պոչի նման վոչ յերկարում ենք, վոչ
կարճանում: Նստենք, հանգստանանք: Եզուց-
մյուս որը վոտներս յերբ վոր կձգենք, վոչ վոք
չի ասելու, արդուլյա յեշաղն հարդա դը...
(Նստում եմ ու հանգստանում: Գալուստը մերս ե
գալիս):

Գ ա յ ռ լ Ս Ս Ս.—Կառավարիչը դալիս ա, վեր կացեք:

Տ ի գր ա մ.—Դե արի ու նստի... Հիմի գալու ա, սկսի
վրաներս խոսալ: Ես տնաքանդը, վոր մեզ շասեր
նստեք, մենք հո չեյինք նստելու, դրանից հո
մարդու խեր չի դա:

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնի, Բոգեմսկի և Գալուստ

Բ ո գ ե մ ս կ ի.—Չուլարանի բանվորները այնտեղ գործ
են պահանջում, իսկ դուք այստեղ դունչ-դնչի
տված լողրի նման նստել եք ու խոսում:

Գ ա յ ռ լ Ս Ս Ս.—Դուք ձեր նախատեսնված նորման մեզ-
նից ստանում եք, վերջացավ, մնացածը այլևս ձեզ
չի վերարբերվում, մենք ձեզ համար ավտոմատ
մեքենաներ չենք, վոր անդադար աշխատենք:

Հողնած ժամանակ յեթե մենք միքանի բույն նըստում—հանդատանում ենք, դրանով մենք հանցանք չենք գործում:

Բ ո գ ե մ ս կ ի .—Յեթե հանդատանալ էք ուզում, դուք ձեր տանը կարող եք նստել և հանդատանալ, իսկ քանի վոր գործարանումն եք գտնվում, հանդատի մասին խոսք լինել չի կարող: Խորհրդային յերկրում կարծեմ դու յեղել ես, ի՞նչու այնտեղ բանվորները լավ են աշխատում:

Գ ա լ ու ս տ .—Վորովհետև նրանք գիտեն ում համար են աշխատում:

Բ ո գ ե մ ս կ ի .—Այսինքն:

Գ ա լ ու ս տ .—Այսինքն, վոր մսագործները մորթված անասուններից մի տակ կաշի յեն հանում, իսկ դուք մեզնից յերկու տակ կաշի յեք ուզում հանել...

(Վագոնետկան հրելով տանում է: Իսկ Բոգեմսկիին յերկար ժամանակ մրա հետևից կանգնած լուսնայում է):

Բ ո գ ե մ ս կ ի .—Քո անբարեհույս լինելը ինձ համար վերջնականապես պարզվեց: Վաղվանից դու այստեղ այլևս չես լինի: (Դիմելով բանվորներին): Ձեր կատարած աշխատանքից յես ամենեվին դու՛ չեմ: Փոխադրող բանվորներին դուք այստեղ չատ եք սպասեցնել տալիս: Յեթե դուք այդպես կշարունակեք, յես սախաված պիտի լինեմ այս նույն գործի վրա ուրիշ բանվորներ ևս ավելացնելու կամ թե բանվորներին վճարելիք պրաստոյները դրել ձեր հաշվին...

(Բոգեմսկիին դուրս է գնում):

Տ ի գր ա մ .—Աչքներս լույս... մուկը ծակը չեր մընում, ցախավելը պոչիցը կապեցին:

Ս ա հ ա կ .—Ամեն որ մի բան են հնարում ու սկսում մեզ հույ սալ:

Բ ո լ ո բ բ .—Քանի մենք լռենք, սրանք մեզ հույ կտան:

Տ Ի Գ Ր Ա Ն .—Վոր խոսացաք են ա ելի, աշխարհը կդրըստեք: Կարիք չկա խոսալու: Կառավարիչ ա, եկամ մի քանի ավել-պակաս խոսք ասաց, վնաս չունի, թող ասի: Դրանով ձեր խանչալի քարը վեր չընկամ:

(Բնորքը լուռ աշխատում են, Գալստորը վագոնեակամ հրելով գալիս է):

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնք և գալուստ

Գ ա լ ու ս տ .—Ինչպես յերեվում ա, կառավարիչը ձեր պրուսիները ձգել ա... Հա, Հա, Հա...

Տ Ի Գ Ր Ա Ն .—Դու կանգնել ծիծաղում ես, իսկ կառավարիչը գալիս մեզ վրա յե նեղանում:

Գ ա լ ու ս տ .—Նեղանում ա, թող զնա սառը ջուր խմի: Նրա հերն ել անիծած: Պաղեյիների Հավատարիմ շունն ա... պաշտոնը նրան քոռացրել ա, ու չի տեսնում, թե ես Փրանցուզները, ես Հանքահորերի գլխին ինչ վնասատու դործեր են անում: Լսեցեք, յես ձեզ մի բան ասեմ...

(Բնորքը հավաքվում են նրա մոտ):

Բ ն ը թ ը .—Ասա, ասա:

Գ ա լ ու ս տ .—Սրանք իրանք զգում են, վոր եստեղ յերկար չեն մնալու, դրա համար ել դիտմամբ ամեն ինչ փչացնում են, վոր իրանց գնալուց հետո, եզ Հանքահորերը մենք չկարողանանք ոգտողործել, ինչպես հարկավորն ա...

Բ ն ը թ ը .—Ծիշտ ես ասում...

Տ Ի Գ Ր Ա Ն .—Դրանք դատարկ բաներ են... նազդը թողած, նիսիա բաների հետեից եք ընկել: Դուք լսեցիք կառավարիչն ի՞նչ ասեց...

Բ ն ը թ ը .—Ի՞նչ ասեց...

Տ Ի Գ Ր Ա Ն .—Ասում ա՛ յեթե դուք շարունակեք եղպես աշխատել, վոնց վոր աշխատում եք... ասում ա՛

յես ստիպված կլինեմ նոր բանվորներ ավելացնել
կամ թե պրաստոյը ձեր հաշվին գրել:

ԲՈՂՈՐԸ.— Եդ իմացանք:

ՏԻԳՐԱՅ.— Եդ իմացանք, բայց թե նրա միտքը դուք
չհասկացաք: Եդ խոսքերով նա ի՞նչ եր ուզում ա-
սել:

ԲՈՂՈՐԸ.— Ի՞նչ եր ուզում ասել:

ՏԻԳՐԱՅ.— Նա ուզում եր ասել, վոր յեթե դուք հան-
գիտ չմնաք, և դուրսնեք քաշ, վորնց վոր կարգն
ա, չաշխատեք, յես ձեզ դուրս կանեմ:

ԳՎԱՆԱՍ.— Թող դուրս անի, վոր դուրս արեց,
դու կարծում ես, աշխարհը քանդվե՞ց:

ՏԻԳՐԱՅ.— Ձի քանդվել, բայց կքանդվի: Առանց ես
ե՛լ իմ դրութունը վատ ա:

ՇԱՄԻԼ.— Արա, տնաքանդ, դու եդ ի՞նչ տեսակ ես
խոսում: Բանվոր դասակարգը թողած, մենակ բու-
դարդն ես քաշո՞ւմ:

ՏԻԳՐԱՅ.— Բա քու դարդն ե՛լ հո չեմ քաշելու: Յես
չլինելուց հետո շատ հարկավոր ա՝ աշխարհը շուտ
կգա, թեկուզ դործարանն ու պղնձի հանքերն ե՛լ
հետը:

(Խորհում աղմուկ, Անուշը վագելով գալիս է)

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնի և Անուշ

ԱՆՈՒՇ.— Գալուստ, ի՞նչ ես կանգնե՛լ, սրանց հավա-
քել գլխիդ. հրեն պրիստայր միլիցիոներով յեկել
ա քու հետեից...

ԳՎԱՆԱՍ.— Ինչի՞ համար, պատճա՛ռը...

ԱՆՈՒՇ.— Գործարանում թուրքիկները կարդալու ժա-
մանակ կառավարիչը վրա յե հասել և բանվորնե-
րի ձեռքին բռնել: Կառավարիչը քեզ ա մեղա-
դրում. ասում՝ ա՛հ ես բոլորը նրա արածներն ա:

ՇԱՄԻԼ.— Գալու՛ստ ջան, գնա՛, ե՛լ մի՛ ուշանա: Բա-
ցատրվելու ժամանակ չի: (Գալուստն ուզում է

փախչել, կառավարիչը, պրիստավը և միլիցիան
ներս են մտնում):

Տ Ե Ս Ի Լ 5

Նույնք, պրիստավ, Բոգեմսկի և միլիցիա

Բոգեմսկի.— *Հրեն նա յե, մտադրվել ե փախչե-
լու...* (Գալուստին հեռվից ցույց ե տալիս):

Պրիստավ.— *Կա'ց, ս'ւր ես փախչում...* յեթե
չարժվելու լինես, կխփեմ:

(Պրիստավը արքանակն ուղղել ե նրա վրա, իսկ
միլիցիան—հրացանը):

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ՅՈՒՆԻՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Բոգեմսկու առանձնատես-
յակը: Գրասեղան, աքռոներ—գրքերի պահարան,
հեռախոս և այլն: Յերկու դուռ, մեկն ընդհանուր
մուտքն է, մյուսը տանում է դեպի Բոգեմսկու
ննջարանը: Կենտրոնում դեպի բակը մայրո՞ղ յեր-
կու մեծ լուսամուտներ, վորտեղից յերեկում է
բակում տեղի ունեցող անց ու դարձը:

Տ Ե Ս Ի Լ 1

Պրիստավ, Բոգեմսկի և միլիցիոներ

Պրիստավ.— (Միլիցիոներներին) *խտեղ կանգնելու
կարիք չկա, գնա դուրսը: Յերբ վոր կարիք կզգամ
կկանչեմ, կգաս:*

Միլիցիոներ.— *Հստեմ եմ, ձերդ բարձրապատվու-
թյուն:*

(Միլիցիոները դուրս է գնում):

Բոգեմ.— *Սրբիկաներն ամբողջ գործարանը թող-
ցիկներով լցրել են: Սա ուղղակի խայտառակու-
թյուն է: Սա անտանելի դրուժյուն է: Այս մասին
յեթե կենտրոնական վարչությունն իմանա, ան-
կասկած, ինձ պատասխանատվության կհրավի-
րեն... Նույնիսկ պաշտոնից կարող են ինձ հեռաց-
նել...*

Պրիստավ.— *Ինչպես, ուրեմն դուք Ձեր պաշտոնից
հեռացվելու մասին եք միայն մտածում: Ներո-
ղություն: Եստեղ խնդիրը միայն պաշտոնից հե-
ռացվելու մասին չի: Սա քաղաքական նշանակու-
թյուն ունեցող լուրջ գործ է: Ես բոլորիս հեռա-*

խոսով կհայտնեմ, պուլիմյոսնի կամանդը մի պուլի զինվորներ հետները վերցրած դան:

(Հեռախոսը վերցնում է ձեռքը):

Բ Ն Ղ Ե Մ.— Ի՞նչ եք անում, ի սեր աստծու, վոչինչ հարկավոր չի: Ինձ թվում է, վոր ձեռք միջոցներով կարելի կլինի միջադեպը հարթել: Խնդիրը, այսպես ասած, ինքնըստինքյան մի հասարակ և սովորական բան է...

Պ Բ Ի Ս Ս Տ Ա Վ.— Ուրեմն մի հասարակ ու սովորական բանի համար դու ինձ ենտիղից եստեղ ես բերել տալիս: Յես քու ստորադրյա՞ն եմ... վո՞նց աքու բանը... ես բուպեյիս կարգադրի ձիուս առաջ խոս գցեն... խեղճ անասունն առավոտվանից վոչինչ չի կերել:

Բ Ն Ղ Ե Մ.— Ես բուպեյիս գնամ կարգադրեմ՝ ձիու առաջ խոս և գարի լցնեն: (Ուզում է գնալ):

Պ Բ Ի Ս Ս Տ Ա Վ.— Սպասի՛ր, ձիու համար մտածելով հանդերձ՝ ձիու տիրոջ համար ել պետք է մտածել: Առավոտվանից տնից դուրս եմ յեկել, բերանս նշխարք չեմ դրել: Իսկ դու գիտես, վոր առանց ուտելու մարդը չի ապրում: Իհարկե, գուցե մարդկա, վոր որերով ծոմ է պահում, իսկ յես ծոմ պահելու սովոր չեմ: Յեմ մտադիր ել չեմ սովորելու: Հիմա կարող ես գնալ:

Բ Ն Ղ Ե Մ.— Գնամ՝ ձեզ համար ճաշի պատրաստություն տեսնեմ:

(Ուզում է գնալ):

Պ Բ Ի Ս Ս Տ Ա Վ.— Կա՛ց, բացի եզ Գալուստից դործարանում խառնակչություն դցող ուրիշ ել ովքե՞ր կան, նրանց ել մեկ-մեկ ուղարկի՛ թող դան, մի թեթև հարցաքննություն կատարեմ: Մինչև դու ուտելու պատրաստությունը կտեսնես: Դե գնա՛, ինչ վոր անելու յես, շուտ արա՛, վերջացրո՛ւ, ուրիշ տեղ եմ գնալու: Գործ շատ ունեմ...

Բ Ն Ղ Ե Մ.— Իսկույն... (Դուրս է գնում):

Պրիստավ

Պրիստավ.— Քանի ետեղ վոչվոք չկա, կարգամ ու տեսնեմ՝ ես պրակլամացի մեջ ի՞նչ ա գրած, վոր ես բանվորները սրա համար իրար դուռն են ճղում: (Թռուցիկը գրպանից հանում է և հետաքրքրութեամբ նայում): Տե՛ս հլա, ինչքան էլ ապել են... Համբերութուն եմ ասում, հա՛... Տեսնենք՝ ի՞նչ են գրում: (Կարդում է): «Պրուտարներ բոլոր յերկիրների, միացե՛ք... սա արդեն յերեվում ա, վոր զաղաւոյնն ա... (Շարունակում է կարդալ): «Ընկերներ, դաշնակցականներն ու մենչեվիկներն իրենց նպատակ են դրել արյան մեջ խեղդելու բանվորների ու աշխատավորութեան լայն մասսաների ազատութեան մեծ գաղափարը... Արյան հեղեղներով նրանք ուզում են վոչնչացնել մեր ազատութեան ամեն մի ձգտումը. նրանք չեն ինայում վոչ ծերերին, վոչ կանանց և վոչ էլ փոքր յերեխաներին...» Ըմբո՛ւ, շուն շան վորդիք, տես հլա ի՞նչ են գրում:

(Բոգեմսկիին ներս է գալիս):

Բոգեմ.— Ամեն ինչ կարդադրված է:

Պրիստավ.— Եդ լավ ա: Ուրեմն ժամանակին ամեն ինչ կլինի:

Բոգեմ.— Ամեն ինչ. այդ մասին դուք բոլորովին անհոգ յեղե՛ք...

Պրիստավ.— Վորպեսզի յերկար ժամանակ չկորցնենք, միլիցիոներին ասա՛՛ կն բանվածին թող ներս բերի: Նախնական հարցաքննութունն սկսեմ:

Բոգեմ.— Իսկույն... (Բոգեմսկիին դուրս է գալիս, իսկ պրիստավը շարունակում է քռուցիկը կարդալ):

Պրիստավ.— «Ջրնկճվե՛ք, ընկերներ, վորքան ձեզ ճնշեն, վորքան ձեզ տանջեն ու հալածեն, այնուամենայնիվ հաղթութունը մերն է»: Եդ մենք դեռ

կատանենք՝ մե՞քն ա, թե՞ ձերը... (Բոզեմսկին և միլիցիոները Գալուստին ներս են բերում: Նրա ձեռները կապված են հետևից):

Տ Ե Ս Ի Լ 3

Պրիստավ, Բոզեմսկի, միլիցիոներ և Գալուստ

Պրիստավ.— (Միլիցիոներին) Յես մոռացել եմ՝ կնիքս հետս վերցնեմ. մի ձեռաց դնա՛, վերցրո՛ւ, բե՛ր:

Միլից.— Լսում եմ, ձե՛րդ բարձրապատվություն: (Միլիցիոները դուրս է գնում):

Պրիստ.— (Գալուստին) Անուն—ազգանունդ:

Գալուստ.— Տիտանյան Գալուստ:

Պրիստ.— Կուսակցական ես:

Գալուստ.— Կուսակցական եմ:

Պրիստ.— Վո՞ր կուսակցությանն ես պատկանում:

Գալուստ.— Դաշնակցության:

Պրիստ.— Ձե՛նդ կարի՛ր, ախմա՛խ: Դաշնակցական են դալաթը չի անի, ինչ վոր դու յես անում: Բայլ շեխկների հետը նստել, վեր ես կացել, դու ել անպատճառ նրանց դադափարի մարդ կլինես: (Դառնալով Բոզեմսկուն). Մրանց տանը ես քանի որը, վոր խուզարկության ժամանակ վրաց աֆիցներին խփել, վիրավորել են, դրա մասին դու ի՞մացե՞լ ես:

Բոզեմ.— Լսել եմ, բայց մանրամասնությունը չգիտեմ:

Պրիստավ.— Մանրամասնությունը հետևյալն է. սրանց տանը թիֆլիսից ինչ—վոր մի անձանոթ մարդ ու կնիկ են յեկած լինում: Խուզարկության ժամանակ վրացի աֆիցներն եղ թիֆլիսից յեկած կնոջը վոր տեսնում ա, իրեն կորցնում ա ու խուզարկությունը մոռանում: Դե վրաց աֆիցների բնավորությունը դիտես, ե՛լի: Նրանք վոր մի սիրուն կնիկարմատ տեսնում են, խելքահան են:

լինում: Ժամանակի խնայողութեան տեսակետից, անմիջապես բոլորին տնից դուրս են անում, վորպեսզի գործը տեղն ու տեղը վերջացնի:

Բ ը գ ե մ . — Հեռո՞՞:

Պրիստավ . — Հեռո ե՛ն, վոր եղ մոմենտին կնոջ ամուսինը վրա յե հասնում, աֆիցեբրին խփում վերայորում ե ու իր կնոջը վերցնում ու անմիջապես փախցնում:

Բ ը գ ե մ . — Ուրեմն, նրա ով լինելը դեռևս չի պարզված:

Պրիստավ . — Ձի պարզված, բայց շուտով կպարզվի: Վրացի աֆիցեբրը հիվանդանոցում պառկած ա, նա իրենց մարդկանցը կարգադրել է, վոր մինչև իր հիվանդանոցից դուրս դալը, եղ գործին ընթացք չտան: (Միլիցիոները՝ մերս ե մտնում, կնիքը հանձնում պրիստավին): Բերի՞ր, դե հիմա անցնենք մեր գործին: (Միլիցիոներին) Գու կարող ես գնալ: (Միլիցիոները դուրս ե գնում: Իսկ ինքը մտնում ե Գալուստին): Ես թուուցիկները ո՞վ ե բերել խտեղ, տարածել:

Գալուստ . — Ձգիտեմ:

Պրիստավ . — Գիտես, բայց չես ասում:

Գալուստ . — Յեթե իմանում ես, վոր չպիտի ասեմ, ել ինչո՞ւ համար ես հարցնում:

Պրիստավ . — Դեռ դու համարձակվում ես խոսե՞լ... (Ապտակում ե): Յես ձեր բայշևիկ հերն անիծեմ: Ռուսաստանից մեղ համար խաբար եք բերել: Ենքան կտամ, վոր բայշևիզմն ել կմոռանաս, մեղ չեվիզմն ել... շուն շան վորդի՛... (Գալուստին մտրակով խփում ե և նա վայր ե ընկնում):

Գալուստ . — Ձեռքերը կապած մարդու ծեծելը ձեզ համար մեծ քաջագործութուն ե... Իսկ դու, խաղեյինների փեշերը լիզող հալատարիմ շո՛ւն, մարակով դուք մեղ վոչինչ անել չեք կարող...

միևնույն և, դուք ձեր վերջին որերն ևք ապ-
րում...

Պրիստավ.—Ձեռք կարի՛ր, թե չե քացով կամ,
ատամներդ կխփվեն փորդ... Շուն շան վորդի՛.
ընկած տեղումդ ել դու հանդիստ չես մնում:
(Դուրսն աղմուկ, իրարանցում):

Բոգեմսկի.—Բանվորներն են... յեթե նրանք գան,
սրան այ՝ վիճակում տեսնեն, ահադին սկանդալ
կրարձրացնեն... սրան տանենք մյուս սենյակը:

Պրիստավ.—Վերցրո՛ւ տանենք... (Վտախով խփում
է): Ի՞նչ ես խողի նման դետնին պառկել. վե՛ր
կաց դնա մյուս սենյակը: (Պրիստավը և Բոգեմս-
կին նրան ծեծելով տանում են մյուս սենյակը:
Իսկ Անուշը մատնեթի ծայրի վրա գալիս է, մյուս
սենյակի դռան մեղփից նայում: Շամիլը գլուխը
յուսամուտից դուրս է հանում ու Անուշի հետ
խոսում):

Տ Ե Ս Ի Լ 4

Անուշ, Շամիլ, հետո պրիստավ և Բոգեմսկի

Շամիլ.— Աղջի՛, Անո՛ւշ, Գալուստին բերին ետեղ,
բա ո՞ւր ա:

Անուշ.—Սո՛ւս... գալիս են: Կգամ, ամեն ինչ կպատ-
մեմ: (Անուշն ու Շամիլը գնում են, իսկ պրիս-
տավն ու Բոգեմսկին մյուս սենյակից ներս են
գալիս):

Պրիստավ.—Նա ենտեղից հանկարծ չփախչի:

Բոգեմ.— Լուսամուտները վանդակապատ են,
փախչել նա չի կարող:

Պրիստավ.—Վոր ըտենց ա, վնաս չունի... Թող
ժամանակավորապես ընտեղ մնա, մինչև վոր մյուս-
ներին ել կհարցաքննենք... և վերջում դրանց հետ
մենք հաշիփ կնստենք... դե ել մի՛ ուշանա, դնա՛,
մնացածներին ել հավաքի բե՛ր...

(Կտավարիչը դուրս է գնում):

Եզուց յես ձեր հախից կգամ, շուն շան վորդիք...

խմացի՛ք, թե ո՛ւմ հետ դորձ ունեք: Յե՛ս ձեր իմացած մարդկանցից չեմ... Եզուց, մյուս որը վոր կիմանան՝ Հեղատիտիականների բունը քանդել եմ, նրանց բոլոր ղեկավարներին՝ բռնել, դու ե՛ն վախտը թամաշա արա, թե վոնց ամենքը ինձ մատով են ցույց տալու... (Դրսում ազմուկ): Թուրս վոչինչ, սուր ա: (Պատյանից հանում ե ու դնում տեղը): Յոթ փամփուշտ ել սրա մեջ ե: (Ատրքնանակը կորուրից հանում ե ու նորից դնում տեղը): (Ուժեղ ազմուկ): Անիծվածները յերևի դալիս են եստեղ... (Ընկնում ե այս ու այն կողմ, փախուստի մանապարհ չի գտնում): Մտնեմ մյուս սենյակը... (Գնում ե մինչև դուռը): Ձե՛, եստեղ չի կարելի, են շան տղան հանկարծ մի բան կանի: (Գնում ե դեպի լուսամուտը: Դուրսն ուժեղ ազմուկ: Լսվում ե վոտֆի ձայն): Գալիս են: (Մըտնում ե սեղանի տակ: Իսկ Անուշը ներս ե գալիս և գարնացած նայում):

Տ Ե Ս Ի Լ Ե

Պրիստավ և Անուշ

Անուշ.—Մեք ինչի՞ համար ես մտել սեղանի տակ:

Պրիստավ.—Ձեռքիցս բան վեր ընկավ... (Փնտրում ե):

Ո՛ւր կորավ ես զահրումարը... Հրես դտա...

(Դուրս ե գալիս սեղանի տակից): Քրախնքս վրա տվեց... Աղջի՛, Անո՛ւշ, դու եստեղ ի՞նչ ես շինում:

Անուշ.—Յես եստեղ եմ աշխատում. նոր եմ ընդունվել:

Պրիստավ.—Ախր ասում եմ՝ ինչի չես յերևում: Դե արի՛, կողքիս նստի՛ր, քեզ հետ առանձին խոսելու բան ունեմ: Մեք լավ ես արել, վոր դորձարանում ընդունվել ես. պարասպ տանը նստելով՝ սիրտդ կմաշվեր: Դե արի՛, ել նազ ու տուզ մի՛ արա... դու վոր չես դալիս, թող յես կգամ: (Մտնելում)

ե Անուշիմ, իսկ Անուշը իբր թե ատրճանակիցը վա-
խեցնում է, յետ է քաշվում) :

Ա ն ու շ .— Ձե՛, չե՛, դե՛նը դնա, յես ատրճանակից
վախեցնում եմ : Ատրճանակը տեսնելիս սիրտս ճա-
քում ա... (Ուզում է դուրս գնալ) :

Պ Ր Ի ս տ ա վ .— Սպասե՛ր, ո՞ւր ես գնում : Յես մտապել
եյի, վոր դու ես զահրումարից վախեցնում ես... են
անդամին ել ես զխկումի պատճառով հետդ մի յեր-
կու բողե կանգնել ու խոսել չկարողացա... (Ատրճ-
նանակը կորուրից հանում է և դնում սեղանին) :
Հիմի ել հո բան չե՞ս ասի...

Ա ն ու շ .— Հիմի ի՞նչ կարող եմ ասել... ատրճանակը
վրադ չե, վոր վախեցնամ :

Պ Ր Ի ս տ ա վ .— Թեկուդ վրաս լինի, վախենալու կարիք
չկա... բալլեիկները թող վախենան, վոր նրանց
վոխերիմ թշնամին եմ : Ձեռս ընկնեն, կտամ, շան-
սատակ կանեմ :

Ա ն ու շ .— Սկի բալլեիկ խփած կա՞ս : (Յետ յետ գնա-
լով մոտեցնում է սեղանին և ամնկատելի կերպով
ձեռը մեկնում, ատրճանակը վերցնում) :

Պ Ր Ի ս տ ա վ .— Խփել եմ, են ել վո՞նց... Աղջի՛, Ա-
նուշ, կոներդ ես ի՞նչ փափուկ են : Հետաքրքրե
ե՛ ի՞նչ ես ուտում, վոր եղպես չաղանում ես :
(Անուշն ատրճանակն ուղղում է նրան) :

Ա ն ու շ .— Չչարժվես տեղից և ձայն չհանես, թե չե
կխփեմ :

Պ Ր Ի ս տ ա վ .— Ըմբո՛... Աղջի՛, բա դու ասում եյիր,
թե ատրճանակից վախեցնում ես :

Ա ն ու շ .— Վո՛չ մի խոսք... ձեռքերդ բարձր... Գնա՛
մյուս սենյակը, շուտ, թե չե՛ կխփեմ...

Պ Ր Ի ս տ ա վ .— Գնում եմ, գնում եմ...

Ա ն ու շ .— (Ենթից) Գալո՛ւտ, դո՛ւրս արի : (Գա-
լուստը դուրս է գալիս) : (Պրիստավին) Ինչպես
վոր նրա ձեռքերը կապել ես, ենպես ել բա՛ց
արա, շո՛ւտ, թե չե՛ կխփեմ...

Պ Ր Ի ս տ ա վ .— Մի՛ խփի, բաց կանեմ : (Գալուստի

ձեռքերն արձակում ե: Գայուսը պրիստավին մի
քանի անգամ խփում ե):

Գայուստ.— Խփելն ենպես չի, եսպես ա... շուն
չան վորդի'... դնա', մտի'ր են սենյակը: Չգուշ
աղվեսը յերկու վտառով ե թակարդ ընկում:
(խփում ե մի քանի անգամ, գցում ներս ե դուռը
բանավիով կողպում): Ձայն չհանն'ս, թե չե կը-
գամ, կսպանեմ...

Տ Ե Ս Ի Լ 6

Անուշ ե Գայուստ

Անուշ.— Ա'ս ես ատրճանակը, պահի'ր մտող...
(Դուրսը ուժեղ աղմուկ):

Գայուստ.— Վաստիկաններն հանկարծ չգան...

Անուշ.— Սպասի'ր, լուսամուտից նայեմ... (Լուսա-
մուտից նայում ե): Վոչ վոք չկա— բոլորը հավաք-
վել են դրասենյակի առաջ: Լուսամուտից իջի',
նրանք քեղ չեն տեսնի:

Գայուստ.— Յես կիջնեմ, դու դնա՞վ դուրս արի'.
կգաս կամուրջի մոտ, ենտեղից միասին կփախ-
չենք...

Անուշ.— Լավ, դու դնա', ենտեղ սպասի'ր յես կը-
գամ... (Գայուսը լուսամուտից, իսկ Անուշը
դռնից դուրս են գնում):

Տ Ե Ս Ի Լ 7

Բոգեմսկի, Տիգրան, Սահակ բանվորներ ե վոս-
տիկան

Բանվորներ.— (Շեմֆից) Ինչո՞ւ համար եք բանվոր-
ներին ձերբակալում: Ազատեցե՛ք մեր ձերբա-
կալված ընկերներին...

Ձայներ.— Մենք գործադուլ կհայտարարենք, յեթե
մեր ընկերներին չազատեք...

Բոգեմսկի.— Նրանց ազատելու համար դուք պետք
ե դիմեք պրիստավին, նրա կարգադրությամբ են

ներանք ձերբակալված: (Ներս և գալիս և գարսա-
ցած նայում: Բանվորները նույնպես ուզում են
գալ, իսկ վոստիկանը բույլ չի տալիս: Բանվոր-
ները սկսում են աղմկել):

Բանվորներ.— Թույլ տվե՛ք՝ ներս դանք...

Վոստիկան.— Պրիստավը կազրադրել է, բացի բան-
վորներից, վոչ վոքի ներս չընդունեն:

Բանվորներ.— Թող գնանք, մենք նրա հետ գործ
ունենք... (Վոստիկանին հրում են մի կողմ և
իրենց մերս խուժում: Պրիստավը մյուս սենյակի
մերսից անդադար ծիծաղում է):

Բոգեմսկի.— Սա ի՞նչ բան է:

Պրիստավ.— (Ներսից) Ո՞վ կա այնտեղ... յեկե՛ք,
դուռը բաց արե՛ք...

Բոգեմսկի.— Նա յե... ինչո՞ւ համար է գնացել և
ո՞վ է դուռը նրա վրա կողպել... չեմ հասկանում...
(Դուռը բաց է անում, պրիստավը մերս է մըտ-
նում): Այդ ի՞նչ է նշանակում...

Պրիստավ.— Սա նշանակում է, վոք դու ավանակ
ես... վոք ասում եյին՝ պուլիմ յունի կամանդը
բերել տամ, դու չթողիր, են սրիկան փախավ...
Դե հիմի դնամ, նրան բռնի, տեսնեմ՝ ի՞նչպես ես
բռնում: Քեզ կառավարիչ նշանակողի հերն անի-
ծեմ. յես քեզ յերկու եչ դավերիա չեմ անի, ես
ահադին դործարանն ի՞նչպես են քեզ դավերիա
արել...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՑՐԴ ՊԱՏԿԵՐ

Բերք մերկայացնում է յերկաքուղու կայարանի բուփետր: Վաստն ու Դաքիկոն, սեղանի շուրջը մտած լուռ քեյ են խմում, իսկ Սանդրոն սրբիչն ուսին գցած, Բաղդադի աղուխը փարտուկի տեղ կապած, բուփետր կարգի յե բերում: Լսվում է շշակի գիլ ձայնը: Գնացքը գալիս է, ուղևորները գնացքից իջնում են և վազում դեպի բուփետր: Չմտան ուշ գիշեր է:

Տ Ե Ս Ի Լ 1

Սանդրոն, Վասոն, Դաքիկոն և ուղևորներ

1-ին ուղևոր.—Մի չիշ բորժոմ տվե՛ք:

2-րդ ուղևոր.—Չորս հատ պերաշկի:

3-րդ ուղևոր.—Յերկու բաժակ թեյ:

4-րդ ուղևոր.—Մի բաժակ կաթ:

5-րդ ուղևոր.— Մտով բուղբերբող:

Սանդրոն.— Միի մինուտ... սիի մինուտ...

Ուղևորներ.—Շտապեցե՛ք:

Ուղևորներ.— Ժամանակ չունենք յերկար սպասելու:

Ուղևորներ.— Չանգը հիմա կտան, զնացքից կուշանանք:

Սանդրոն.— Միի մինուտ, սիի մինուտ... (Շտապ կերպով բայրի պահանջները բավարարում է: Չանգը խփում են: Ուղևորները շտապ դուրս են գնում):

Վասոն.— Յեթե իմ պերիալիստական պետությունները պատերազմներից փորկե ողուտ կամ շահ չունենային, պատերազմին նրանք վաղուց վերջ տված կլինեյին: Նրանք զանազան խոստումներով փոքր ազգերին խարում են, գալիս, յերկրի հարստությունը հավաքում ու հեաները տանում են:

Դաքիկոն.— Դե լավ է, ես փոքր ազգերի կառավա-

բուժյունները մեխի գլուխներ են, թի հացի տեղ խոտ են ուտում: Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը բա նրանք չեն հասկանում:

Վ ա ս ու .— Հասկանում են:

Դ ա ք ի կ ո .— Բա ինչո՞ւ յեն թույլ տալիս:

Վ ա ս ու .— Վորովհետև եղ քաղաքականությունը բուր-
ժուական ա, իրենք ել բուրժուաներ են: Ուրիշ
'խոտքով' նրանք ինչ տեսակ զուռնա վոր փչում են,
սրանք ել են տեսակ պար են դալիս: Ուրիշ խոտ-
քով՝ ազգի ու հայրենիքի անվան տակ կործանում
են յերկիրն ու ժողովուրդը:

Ս ա մ դ ր ո .— Յես իմ հողիս, Վաստն ճիշտ ա ստում:
Դաշնակցականների կառավարությունն ել դրանց
որինակի բան ա, այսինքն նրանք իրենց քնած ժա-
մանակն ել ծովից-ծով Հայաստանի մասին են յե-
րազում, բայց թե առվից-առու Հայաստան չեն
կարողանում պահել:

(Յերեքով միասին ծիծաղում են):

Դ ա ք ի կ ո .— Եղ խոսակցությունը մեզ շատ հեռու կը-
տանի, վերցրո՛ւ թեյդ խմի, հիմա սառած կլինի:

Ս ա մ դ ր ո .— Յեթե սառել ա, տվե՛ք տաքացնեմ:

Վ ա ս ու .— Կարիք չկա... (քեյի բաժակը հրում ե մի
կողմ. գլուխը յերկու ասիերի մեջ առած մտածում
ե):

Ս ա մ դ ր ո .— (Դաքիկոյի) Սերահարված հո չի՞:

Դ ա ք ի կ ո .— Կին ունի:

Ս ա մ դ ր ո .— Գեղեցկուհի յե՞:

Դ ա ք ի կ ո .— Նրա գեղեցկությունն ու սղեղությունը
եստեղ ի՞նչ կապ ունի:

Ս ա մ դ ր ո .— Ո՛ր, շատ մեծ կապ ունի: Գեղեցիկ կա-
նայք միայն կարող են իրենց ամուսիններին վիշտ
ու մտահոգություն պատճառել: Բայց վոչինչ:
Վաղը կամ մյուս որը կուխները կվերջանան,
կզնաք տուն, ձեր կնանոց կողքին կպառկեք ու
ամեն ի՞նչ կմոռանաք:

Դ ա ք ի կ ո .— Ես կուխները վաղը կամ մյուս որը վեր-

ջացող կռիվներէց չեն: Բայց, այնուամենայնիւ,
կնոջս գրեւ եմ:

Վ ա ս ու .— Ի՞նչ ես գրեւ:

Դ ա ք ի կ ու .— Գրեւ եմ, վոր պատրաստվի՛ր, շուտով
կգամ:

Վ ա ս ու .— Շուտով կգամ... սիրելի՛ ընկեր, դու այդ
չպիտի գրեյիր... այո՛, չպիտի գրեյիր...

Դ ա ք ի կ ու .— Ինչո՞ւ:

Վ ա ս ու .— Վորովհետև դու յերաշխափորել չես կարող,
վոր այստեղից մենք կենդանի կվերադառնանք.
Միթե՞ դու չե՞ս տեսնում, վոր մեր շարքերն այս-
տեղ ամեն բոպե նոսրանում են... քանիսի՞ն բռն-
եցին, քանիսի՞ն զնդակահարեցին: Չորս տարի
դանազան Ֆրոնտներում քարչ դալուց հետո,
հազիվ էյինք տուն վերադարձել, բայց անիծված-
ները հանգիստ չտվին: Նորից կռիվ, նորից մորի-
լիզացիա: Նրանց թնդանոթի միս եր հարկավոր, և
դրա համար վոչխարի հոտի նման մեզ նորից քշե-
ցին և նորից բերին Ֆրոնտ...

Ս ա մ զ ր ու .— Մորիլիզացիան ու Ֆրոնտը իր հերթին,
բայց քու դրուժյունդ, ախպե՛ր ջան, յես ինչպես
տեսնում եմ, ենքան ել լավ չի...

Վ ա ս ու .— Լավ չի... հայրս մահացել է, տանը աշխա-
տող ձեռք չկա, մայրս անդամալույծ. կինս ոտար-
ազդից, լեզու չգիտե: Գյուղում հարադատ, բացի
մորիցս ու կնոջիցս, վոչվոք չունեմ: Յերկար ժա-
մանակ է՝ տնից նամակ չեմ ստանում: Մայրս
արդյոք կենդանի՞ յե, թե՞ մեռած. կինս ի՞նչ է
անում, նա մեր տա՞նն է, թե ուրիշի դռներումն է
ընկած... վոչինչ չգիտեմ... Ե՛իս, անիծվեն այս
կռիվներն ու պատերազմները, ահա՛ թե նրանք
մեզ ո՞ւր հասցրին...

Ս ա մ զ ր ու .— (Դաքիկոյիմ) Ա՛յ, տեսնո՞ւմ ես, յես ինչ
վոր ասում էյի, ճիշտ էյի ասում: Վերջին հաշվով
նա իր կնոջ մասին է մտածում: Վոր նրա կինը
ոտար ազդից է, լեզու չգիտե և այլն, և այլն,
սրանք պատճառարանություններ են: Կամ թի չե՞

որան ո՞վ եր ասում՝ զնա, ոտար շղթից կին վերց-
րու բեր վոր մեր լեզուն չի՞անա:

Ռ ա ք ի կ ու .— Գերմանիայում գերի յեղած ժամանակ ա-
մուսնացել ա ու հետը վերցրել, բերել:

Ս ա մ ղ ր ու .— Վախենում եր՝ Վրաստանում իր համար
աղջիկ չճարվեր, գերմանուհու հետ ա ամուսնա-
նո՞ւմ: Յերևի իմացել ա, վոր արտասահմանի
ապրանքը լավ ա լինում, յենթադրելա, վոր նրանց
կնանիքն ել լավ կլինեն. դրա համար ել վերցրել
ա, հետը բերել: Բայց թի միալ բան ա: Կնիկար-
մասներն ընդհանրապես բոլոր յերկրներում ել մի
վորակի ու մի սորտի ապրանք են, տարբերու-
թյուն չկա: Հա՛, հա՛, հա՛:

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնք, 1-ին և 2-րդ զինվորներ

1-ին զինվոր.— Սարսափելի ցրտեր ա անում: Յես
չեյի կարծում, վոր Հայաստանում ես տեսակ ձմեռ
ա լինում: Լսի՛ր, Վասո՛, դու Գերմանիայի Ֆրոն-
տում յեղել ես, ձմեռն ենտեղ ե՞լ ես տեսակ ցրտեր
ա անում:

Վ ա ս ու .— Գերմանիայի հերն ել անիծած, բոլորինն ել:
1-ին զինվոր.— Բողորինը չե, բայց հայերի հերն
անիծելու տեղն ե:

Վ ա ս ու .— Պատճառը՞:

1-ին զինվոր.— Պատճա՞ռը, վոր նրանք հարուստ են,
նրանք մեծից—փոքրը առևտրականներ են, նրանք
փողասերներ են:

Վ ա ս ու .— Հարուստներ, առևտրականներ ուրիշ աղ-
դերի մեջ ել չկա՞ն:

1-ին զինվոր.— Հրեաների մեջ՞ վորքան ուզես:

Վ ա ս ու .— Իսկ վրացիների՞ մեջ:

1-ին զինվոր.— Վրացիներին դու բերում ես՝ հայերի
ու հրեաների հետ համեմատո՞ւմ:

Վ ա ս ու .— Առանց մտածելու յես խոսում:

- 1-ին գիւմ վոր.—Այսինքն:
- Վասն.—Այսինքն՝ հարուստներ, առևտրականներ
բոլոր ազգերի մեջ ել կան:
- 1-ին գիւմ վոր.—Ճիշտ է, հարուստներ, առևտրական-
ներ ամեն ազգի մեջ ել կան, բայց դաշնակցական-
ներ ամեն ազգի մեջ չկան:
- Վասն.—Ամեն ազգի մեջ դաշնակցականներ ել կան,
բայլ չեւիկներ ել կան ու մենչեւիկներ ել կան:
Դաթիկո՛, վեր կաց դնանք: Հերթափոխութեան
ժամանակը մտանում ե:
- Դաքիկո.—Գնանք: (Փողը վնարում են ու գնում):
- 1-ին գիւմ վոր.—Լսի՛ր, զինվորների մեջ թուլցիկներ
տարածողները սրանք են: Սրանցից հարկավոր ա
զգուշ լինել: Պետք վոր իմանա, սրանց տեղն ու
տեղը կգնդակահարի: Լսի՛ր, են որը յերկու զին-
վորի ձեռքին թուլցիկներ կարդալու ժամանակ
բռնել էյին, յերկուսին ել վոտով, գլխով կորցրին:
- 2-րդ գիւմ վոր.—Դրանք դատարկ բաներ են, մի շիշ
կոնյակ լիներ, խմէյինք:
- 1-ին գիւմ վոր.—Փող ունե՞ս:
- 2-րդ գիւմ վոր.—Չունեմ:
- 1-ին գիւմ վոր.—Չունես, ձեռք կտրի՛ր, տեղումդ
նստի՛ր: Քեզ ո՞վ էր ասում՝ խմելու անուն տաս:
- Սանդրո.—Կոնյակի փող չունեք, վերցրե՛ք թեյ
խմեք: Թեյն ել տաքացնող հատկութիւն ունի:
- 2-րդ գիւմ վոր.—Թեյով բան դուրս չի դա: Լսի՛ր,
Սանդրո՛, նիսյա մեզ մի շիշ կոնյակ չե՞ս տա:
- Սանդրո.—Ինչի՞ չեմ տա: Ամեն անգամ ձեր աֆիցեր-
ներն են խմում, մի անգամ վոր դուք խմեք՝ մեծ
բան ա՞:
- 2-րդ գիւմ վոր.—Վա՛յ, յե՛՜ք քու հողի՛ն մատաղ:
Տաշի՛, —տուշի՛, տաշի՛, —տուշի՛: (Մեկը ծափ է
տալիս, մյուսը պարում է: Իսկ Սանդրոն մի շիշ
կոնյակ և բաժակները ձեռքին նույնպես պարելով՝
տանում է դեռ մըրանց սեղանին: Կացիդանն ներս
է գալիս և զարմացած նայում):

Նույնիք և Կացիդածե

Կացիդածե.—Այս ի՞նչ է նշանակում... Ի՞նչպես եք դուք համարձակվել պոստը թողնել և դալ եստեղ, Հարբեցողութեամբ գրադվել: Յես ձեր գործը վաղը յեվեթ՝ ուղղակիան դատարանին կհանձնեմ: Դո՛ւրս կորեք: (Ապտակում է նրանց. գիմվորները դուրս եմ գնում): Սանդրո՛, դու լավ բան չես անում, վոր թույլ էս տալիս՝ դան եստեղ, Հարբեցողութեամբ պարապեն: Նշանակում է, վոր դու կառավարութեան և որենքի դեմ հակառակ գործ ես բռնում:

Սանդրո.— Կնյա՛դ ջան, յես Հո չգնացի, նրանց պոստից գոտով բերի: Թող չդային, ո՞վ եր նրանց խնդրում: Գալիս են, գուր տեղը խալիսին կրակի մեջ գցում: Դե տանե՞ք մի մեծ հանցանք չի կատարվել... յեկան ասին, թե մըտում ենք, մի ստաքան չայ տո՛ւր, յես ել վերցրի ավի:

Կացիդածե.—Ստում ես. նրանք կոնյակ եյին խմում:

Սանդրո.—Կնյա՛դ ջան, նրանք կոնյակ չեն խմել, նրանք չայ են խմել, յեթե չեք հավատում, հրեն բաժակները:

Կացիդածե.— Թեյ նույնպես չպիտի տայիր, դու գիտես, վոր նրանք պոստի վրա յեն:

Սանդրո.—Յես չեմ հասկանում, բուֆետն ել ինչի՞ համար ա, յեթե յես իրավունք չպիտի ունենամ իմ հաճախորդին իրա ուղած բանը տալու: Պետութեամբ դիլդի ու նալոդի փողն ել ինչի՞ համար եմ տալիս: Յես քյասիր մարդ եմ: Եստեղ յես գիշեր ու ցերեկ տանջվում, չարչարվում եմ նրա համար, վոր մի քանի կոպեկ փող աշխատեմ, տանեմ՝ ընտանիքս ու յերեխեքս կշտացնեմ:

Կացիդածե.— Ո՞վ է քեզ արգելում, աշխատի՛ր:

Սանդրո.— Թողնում ե՞ք, վոր աշխատեմ... Չի՛, ախ-

պե՛ր, համն ու լաղաթը փախալ: Սրանից հետո
եւ յես նեյտրալնի զոնում մնացողը շեմ: Եզուց—
մյուս որն եւ հանկարծ մի բան կպատահի, դե արի
ու ելը ցեխիցը հանի: Եզուցվանից յես իմ փաստ—
փուսեն կհավաքեմ, կգնամ, իմ տեղը թող մի
ուրիշը գա՛ աշխատի:

Կացիդածե.— Ծատ մի՛ խոսա, ինձ համար մի շիշ
կոնյակ բե՛ր:

Սանդրո.— Ա՛, տեսնո՞ւմ եք. կառավարության
որենքը դուք ինքներդ եք խախտում, հետո ուրիշին
մեղադրում: Յես կանյակ չունեմ, գնացե՛ք, ուրիշ
տեղ խմեք: Վաղվանից եւ եստեղ մնալը չարժի:
Յես կհետամնամ:

Կացիդածե.— Վախեցա՞ր:

Սանդրո.— Վախը քիչ բան ա՞: Արար աշխարհ գիտի,
վոր յես կառավարության որենքի դեմ գնացող,
մարդ չեմ: Քսան տարի Հայկաբարում եմ ապրել
չան թաղումը մեծացել: Ենտեղ ինձ ամենքը
ճանաչում են. գնացեք հարցրեք. նրանք ձեզ կա-
սեն, թե Սանդրո Ջանջուղագորվը ի՞նչ տեսակ
մարդ ա...

Կացիդածե.— Եղ հետաքրքիր չի, մի շիշ կոնյակ
բե՛ր. յես խմել եմ ուզում: (Սանդրոն մի շիշ կոն-
յակ ու գակուսկա տանում, դնում է նրա առաջ):

Սանդրո.— (Մի կողմ) Որենքն եւ, հրամանն եւ,
պատիժն եւ հասարակ զինվորի ու քյասիր ժողո-
վրդի համար ա:

Կացիդածե.— Ի՞նչ ես մթթմթթում...

Սանդրո.— Վոչինչ, ասում եմ՝ ինչո՞ւ յեք թևներդ
կապել:

Կացիդածե.— Վերավորվել եմ մի հայ աղջկա պատ-
ճառով:

Սանդրո.— Ախր ձեզ ո՞վ ա ասում՝ հայ աղջկերանց
հետ դործ ունենաք: Դուք չգիտե՞ք, վոր հայ աղ-
ջիկները շատա են:

Կացիդածե.— Լսի՛ր, Սանդրո՛, դու չգիտե՞ս՝ մեր
զինվորների մեջ ո՞վ է թուուցիկներ տարածում:

- Ս ա ն դ ր ու . — Եղ ի՞նչ բան ա . ուտելո՞ւ յա , թե խը
մեկու : Յեթե խողնի ապրանք ա , բերեմ , պահեմ :
- Կ ա ց ի դ ա ձ Ե . — Խողնի ապրանք ե , բեր պահի՛ , բայց
գիտե՞ս՝ նրա դնողը փող չի վճարում :
- Ս ա ն դ ր ու . — Բա ի՞նչ ա վճարում :
- Կ ա ց ի դ ա ձ Ե . — Ա՛յ՛ ինչ ե վճարում : (Ատրճանակը
հանում ե , ուղղում նրա վրա : Սանդրոն սարսա-
փած հետ-հետ ե փաշվում) :
- Ս ա ն դ ր ու . — Դենը կորցրո՞ւ , հանկարծ կտրաքի , իչի
նահատակ կլինենք . դենքի հետ խաղ անելը ընդ-
հանրապես վտանգավոր ա . դի՛ր տեղը : (Մտնում
ե սեղանի տակ) :
- Կ ա ց ի դ ա ձ Ե . — Վախեցա՞ր , հա՛ , հա՛ , հա՛ , խկապես վոր
վախկոտ հայ ես : Լսի՛ր , դու այդ բոլլեկներին
չե՞ս ճանաչում , նրանք վո՞րտեղ են թագնվում :
- Ս ա ն դ ր ու . — Ձե՛ , եդ տեսակ մարդկանց յես վոչ տեսել
եմ , վոչ ել լսել . . .
- Կ ա ց ի դ ա ձ Ե . — Կարմիր Բանակի մասի՞ն ես վոչինչ
չես լսել : Աստամբվելու մասին ընդհանարապես
դյուրացիները վոչինչ չե՞ն խոսում :
- Ս ա ն դ ր ու . — Եդ տեսակ բաների հետ յես գլուխ չունեմ ,
յես վոչինչ , վոչինչ չգիտեմ . . .
- Կ ա ց ի դ ա ձ Ե . — Գուցե գիտես , բայց վախենում ես
ասել : Լսի՛ր , հայտնածդ տեղեկությունների հա-
մար դու ահագին դումար կատանաս :
- Ս ա ն դ ր ու . — Ձեմ ուզում , շնորհակալ եմ . . .
- Կ ա ց ի դ ա ձ Ե . — Չարմանում եմ , թե դու այդ ի՞նչ
տեսակ հայ ես : (Կռնյակի շիշը համարյա վերջաց-
րել ե : Սկսում ե նստած տեղը տատանվել) :
- Ս ա ն դ ր ու . — Յես ելե՛ս տեսակ հայերիցն եմ . . . դու ինձ
ասա՛ կամպանի մեջ նստի՛ր , կախեթի կարմիր
գինին ու գառան խորովածը դի՛ր առաջիդ շուր-
վերցի Գևորգին նստեցրու կողքիդ՝ յերգ ասի , խկ
դու լաղաթին կե՛ր , խմի՛ , քե՛Ք արա՛ տուցիկ—
մուցիկ ի՞նչ իմ խելքի բանն ա : Ձե՛ , կնյա՛ղ ջան ,
քու սասած մարդիկ մեր թաղումը չեն ապրում :
- Աչքեսը սխալ ա տված . . . (Յերգում ե) :

«Մեր հայրենիք, թշվառ, անտեր, մեր թշնամուց
վտանակոխ, յուր վորդիքն արդ կանչում են հանել
յուր վրեժ, քնն ու վոխ»:

Կացիդաձե.— Այդ վո՞ր յերգն ե:

Սանդրո.— Սա «բոժե ցարխա»ն ե հայերեն լեզվով:
Կնյա՛ղ ջան, չի՞ կարելի յերգել ես յերդր:

Կացիդաձե.— Կարելի յե: Արի ես դատարկ չի՛չը
վերցրո՛ւ, ուրիշը բե՛ր:

Սանդրո.— Կնյա՛ղ ջան, Տխեթի մաճառը հո չի, վոր
եղպես իրար հետեից լեցնում ես փորդ. սա կոն-
յակ ա, չի կարելի եղքան խմել, վնաս կտա:

Կացիդաձե.— Վո՛չ մի խոսք... (Մրավալ ժամի յե
յերգում, իսկ Սանդրոն կոնյակի շիշը բերում և
միաժամանակ յերգին ձայնակցում ե: Գալուստը
գլուղացու շորերով, չումաղը ձեռքին, Սիմոնի և
Մակարի հետ, մերս ե մտնում):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք, Գալուստ, Սիմոն և Մակար

Գալուստ.— Ես չունը ետեղ ե յեկե՛ր:

Սիմոն.— Վատ ժամանակ յեկանք:

Մակար.— Դուրս գնանք, քանի նա մեզ չի տեսել:

Գալուստ.— Արդեն ուչ ե:

Կացիդաձե.— Լսի՛ր, Սանդրո, դյուղից չե՞ս կարող
ինձ համար մի աղջիկ բերել: Ո՞վ ե այդ մարդը...
(«Ե՛ր, յարլոչկա» յերգի յեղանակով սուլելով,
մոտենում ե նրան, խորագնեին կերպով մայում):

Սիմոն.— Կնյա՛ղ ջան, դու նրան տեսած չես լինի:

Կացիդաձե.— Ո՞վ ես դու: Գիշերվա այս պահին դու
այստեղ ի՞նչ գործ ունես:

Գալուստ.— Յես ես մոտիկ գեղի չորանն եմ, Կնյա՛ղ
ջան: Վոչխարներիցս մեկը գոմիցը դուրս ա յեկել,
փախել, անտառում ման յեկա, չգտա: Չմոռն
ցուրտ ու դիմամթ գիշեր ա, վոտ ու ձեռս սառել,

փետացել ա, ասի դնամ բուժեալը՝ մի ստաքան
արաղ խմեմ, ջանս տաքանա... Սանդրո՛ ջան, մի
ստաքան արաղ սո՛ւր:

Ս ա ն դ ը ը .—Վերցրու՛ւ, խմի ու դուրս արի դնա, ել
ուրիշ անդամ դեսը չգաս: Վայեննի պալատենի յե:
Գնացքի ժամանակ միայն դուք իրավունք ունեք
կայարան մտնելու: Իսկ նրանից առաջ կամ հետո
դեսը դալը խստիմ արդելում ե:

(Ողիմ լցնում է):

Գ ա յ ռ լ ս տ .—Լավ, ուրիշ անդամ չեմ գա: (Դուրս է
գնում):

Կ ա ց ի դ ա ձ ե .—Նրա դեմքը կարծես մի տեղ տեսելեմ:
Բայց չեմ հիշում... Թե վորտեղ եմ տեսել... Ա՛.
հիշեցի... սրիկա՛, ուրեմն այդ դու եյիր, վոր ինձ
վերապորեցիր...

(Ատրճանակը ձեռնիմ՝ նրա հետևից դուրս է գնում):

Ս ի մ ը ն .—Կնյազի լակո՛տ, շուն շան վորդի՛, եդ ո՞ւր
ես գնում...

Մ ա կ ա ը .—Սոսալու ժամանակը չի, դուրս արի գնանք.
նա նրա գլխին մի փորձանք չբե՞րի... (Ատրճա-
նակները հանած՝ դուրս են գնում):

Ս ա ն դ ը ը .—Ես ի՞նչ են անում, սրանց պատճառով յե-
կրակի մեջ չընկնե՞մ...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Կացիդածնի առանձնա-
սեմյակը: Գրասեղամ, աքոռներ, հեռախոս, քար-
տեղ և մի քանի մեծադիր նկարներ: Գիշեր է:
Յերկու մաուզերիստ դռան առաջ:

Տ Ե Ս Ի Լ 1

Կացիդածն, Վալադյամ և մաուզերիստներ

Վ ա ց ի դ ա ձ ն.— Իշխանութունն, այստեղ բացակայում
է: Մինչև իսկ միլիցիոները չի ճանաչում ձեր հեղի-
նակութունը: Չեզոք գոտում կատարյալ անար-
խիա յե:

Վ ա լ ա դ յ ա մ.— Այդ խնդրում մասամբ ինքներդ եք
մեղավոր: Արձակված միլիցիոներներին դուք
նորից ընդունում եք պաշտոնի, առանց մեր գի-
տության: Այո՛, յես համարձակ կարող եմ ասել,
վոր ստեղծված դրության համար անձամբ Լորդ-
կիսպանիձենն ինքն է մեղավոր:

Վ ա ց ի դ ա ձ ն.— Լավ է, վոր դուք հիշեցրիք: Լորդ-
կիսպանիձենն խառն իշխանության նախագիծ է մը-
շակում:

Վ ա լ ա դ յ ա մ.— Միանգամայն անողուտ: Խառն իշխա-
նության մասին նրա մշակած նախագիծը չեզոք
գոտու խնդիրը չի կարող լուծվել: Ընդհակառա-
կը, մեր փոխհարաբերությունը դրանով ավելի
կարվի:

Վ ա ց ի դ ա ձ ն.— Ախ այդպես... (Նստած տեղից կանգ-
նում է): Այդ դեպքում թույլ ավելք հայտնելու,
վոր սահմանագծի վրա այն, ինչ վոր արվում է
մեր կողմից, դա անհրաժեշտ է... և դա բղխում
է մեր հանրապետության, մեր վրաց ժողովրդի
կենսական շահերից: Այո՛, ռազմական տեսակե-
տով՝ Վրաստանը չի կարող ապրել առանց Լուխ-
Փամբակի:

վ ա լ ա դ յ ա մ . — Հետո՞... (Անհամզիստ շարժումներ
ե անում նստած տեղը) :

Կ ա ց ի դ ա ձ ե . — Հետո ա յ ն , վ որ հանձին Վրաստանի՝
Կովկասում կասեղծվի մի ուժեղ քրիստոնյա պե-
տություն , վ որը Գերմանիայի աջակցությամբ ու
նրա ստանդակությամբ կպաշտպանի և հայե-
րին... :

վ ա լ ա դ յ ա մ . — Ահա թե ի՞նչ... Ուրեմն այդ նկա-
տառումներով կարուկ միջոցներ ձեռք չեն առնը-
վում անարխիան վերացնելու , վ որպեսզի առիթ
լինի չեղոք զոնան նորից զորք մտնելու... (Վոս-
ֆի յե կանգնում) : Ցաեսություն :

Կ ա ց ի դ ա ձ ե . — Ցաեսություն... Հա՛ , հա՛ , հա՛...
Գնացե՛ք դուք , այդ սպաննալիքներով ձեր հավե-
րին վախեցրե՛ք :

վ ա լ ա դ յ ա մ . — Հավերին կվախեցնենք , թե ո՞ւմ , այդ
մենք հետո կտեսնենք... Ցաեսություն... (Դուրս
ե գնում) :

Կ ա ց ի դ ա ձ ե . — Հա՛ , հա՛ , հա՛... (Հեռախոսի զանգի
ձայն , մտտեմում ե , հեռախոսի լսափողը վերց-
նում) : Այլ ո՞... վ ոչ , սիրելի՛ս , ուշացել ես... խըն-
ջույքը մեզ մոտ վաղուց ե սկսված... շտապի՛ր
գալ... բոլորը յեկել , քեզ են սպասում : Ինչպե՞ս ,
կալանավորներին ուղարկում ես ինձ մո՞տ ,
իզուր... նրանց հարցաքննությունը ինքդ այդտեղ
կանեյիք... Յես չափազանց հոգնած եմ : Ինչպե՞ս :
Թոուցիկ տարածող մեր յերկու գինավորներն են ,
իսկ մյուսը՝ կարտոշկա վաճառող գյուղացի՞ն...
չա՛վ , թող դան հարցաքննության ժամանակ կը-
պարզվի : Առայժմս :

(Հեռախոսը դնում է տեղը և գնում ե մյուս սեմ-
յակը : Նրաից մեզմ կերպով լավում եմ յերածը-
տուքյան , յերգի և կցկտուր խոսակցության ձայ-
ներ : Նագիկը տղայի շորով , կարտոշկով լիքը
հոգրիկ տապրակը ուսին , գինվորի հետ ներս ե
գալիս) :

Նազիկ և վրացի յերկու զինվոր

2-րդ զինվոր.—Գնա՛ ներս... (Հրում է նրան) :

Նազիկ.—Տեսնո՞ւմ ես, վոր յես իմ հոժար կամքով
դնում եմ, ել ինչի՞ համար ես հրում :

2-րդ զինվոր.—Շատ մի՛ խոսա, ետեղ կանգնի՛ր,
ու սպասի՛ր, մինչև վոր քեզ ներս կկանչեն :

Նազիկ.—Ինչի՞ համար պիտի կանչեն :

2-րդ զինվոր.—Գիչ սպասի՛, կիմանաս :

Նազիկ.—Լավ, կսպասեմ... Լսի՛ր, ես ո՞ւմ նկարն ե :

2-րդ զինվոր.—Չգիտեմ :

Նազիկ.—Ինչո՞ւ չգիտես : Դե լավ, դա կարևոր չի :
Լսի՛ր, ա՛ն ես կարողովան տամ քեզ, դու ինձ բա՛ց
թող՝ դնամ :

2-րդ զինվոր.—Ձի կարելի :

Նազիկ.—Կա՛ց, յես մի լավ շվի ունեմ, ես ել կտամ :

2-րդ զինվոր.—Ձեմ ուզում, պահի՛ր քեզ համար :

Նազիկ.—Գիտե՞ս՝ իմ շվին շատ լավ ձայն ունի-
ա՛յ կուզես փորձի համար յես փչեմ... (Ուզում է
փչել) :

2-րդ զինվոր.—Չփչես, հիմա՛ր :

Նազիկ.—Ներողութ՛յուն, յես բոլորովին մոռացա,
վոր ետեղ շվի փչել չի կարելի : Լսի՛ր, մենք
ետեղ յերկա՞ր պիտի սպասենք :

2-րդ զինվոր.—Մինչև վոր պետք ինքը կզար :

Նազիկ.—Լսի՛ր, ձեր պետք դուցի չի իմանում, վոր
ետեղ մինք նրան սպասում ենք : Գնա նրան
հայտնի՛ր :

2-րդ զինվոր.—Նրան հայտնել հարկավոր չի : Գալու
ժամանակը նա ինքը գիտե :

Նազիկ.—Գուցե նա մոռացել ա, զն՝ հիշցրո՛ւ :

2-րդ զինվոր.—Նրան հիշեցնել հարկավոր չի :

Նազիկ.—Յերևի դու վախենում ես և չես համարձակ-
վում : Եղ դեպքում յես ինքս կդնամ : (Ուզում է
զնայ) :

2-րդ գիճվոք.—Ներս գնալ չի կարելի... չե՞ս տեսնում՝ այնտեղ ինչ ե գրված:

Ն ա գ ի կ .—Յես ուրիշ լեզվով կարդալ չգիտեմ: Կարդա տեսնեմ՝ ի՞նչ ա գրված:

2-րդ գիճվոք.—(Կարդում է): Մուտքը կողմնակի մարդկանց խառնիվ արդելում է: Հասկացա՞ր:

Ն ա գ ի կ .—Հասկացա... (Զիմվորը հրացանին հեծված՝ ննջում է: Նազիկը մի քանի անգամ փախուստի փորձ է ուզում անել, բայց գիճվորն ամեն անգամ այդ բռայեյին գուլթը բարձրացնում է): Ես ի՞նչ բան ա, սինյակում քե՞ֆ են անում: (Ներսի դռան բանալու անցֆից նայում է): Եստեղ ահագին ժողովուրդ կա, բոլորն ել բարձր պաշտոնյաներ են. բոլորն ել կոտորելու արժան մարդիկ են...

2-րդ գիճվոք.—Ինչ ասացի՞ր...

Ն ա գ ի կ .—Ասում եմ՝ բոլորն ել պատվարժան մարդիկ են: (Նայում է անցֆից): Մեր ժողովուրդը սովից կոտորվում ա, սրանք ետեղ նստել, կանանց հետ քե՞ֆ են անում:

2-րդ գիճվոք.—Ինչ ասացի՞ր:

Ն ա գ ի կ .—Ասում եմ՝ նրանք ենտեղ պարում են, արի մենք ել ետեղ պարենք: (Ներսում սագանդարը լեզգիկա յե նվագում, իսկ Նազիկը սկսում է պարել):

2-րդ գիճվոք.—Իսկապես վոր յերեխա յե, անպատանն, ի՞նչ լավ էլ պարում է: Լսի՛ր, դու խելքդ հավաքի՛ր գլուխդ: Քեզ ետեղ պարելու համար չեն բերել: Քննությունից հետո, կարող ե պատահել, վոր քեզ նստեցնեն, կամ...

Ն ա գ ի կ .—Կամ ի՞նչ...

Զ ի ն վ ո ք .—Կամ կոշտակահարեն: (Նազիկը տխրում է, նստում է իր մեշոկի վրա ու խորատուզվում մտածմունքի մեջ: Հեռախոսով զանգահարում են, վոտֆի ձայն):

Զ ի ն վ ո ք .—Վոտքի կանգնի՛ր, պետը դալիս է:

Նույնի և կացիդածն

Կացիդածն.—(Շեմֆից) Սպասե՛ք, յես նրան հեռախոսով կհայտնեմ, դուք անհող յեղե՛ք: (Զինվորին): Սրան ինչո՞ւ համար ես բերել:

Զինվոր.—Ձերդ պայծառափայլություն, նրան պահակատեղում նկատեցի: Վերցրի տարա շտաբը, ինձ այնտեղ կարգադրեցին, վոր ձեզ մոտ բերեմ:

Կացիդածն.— Լավ... (Նազիկին վտտֆից - գրուխ գնում է): Ի՞նչ դործ ունեցիր դու պահակատեղում...

Նազիկ.—Կնյա՛դ ջան, սուտ ե ասում: Յես շոտեյի ճանապարհով գնում եյի, սա յեկավ առաջս կտրեց և ուզում եր, վոր կարտոշկան ձեռքիցս խլի, իսկ յես չտվեցի, և դրա համար ել նա դիտմամբ վրաս շատ ա ուզում գցել... (Զինվորը բարկանում է և դեմքը նրա վրա ծամածոում):

Կացիդածն.—Ազգդ ինչպե՞ս է:

Նազիկ.—Ազգս Սեդրակյանն է, անու՛նս Համբարձումն է, իսկ գեղում ինձ Համբո յեն ասոյմ: Մեր գեղում առհասարակ սովորությունն է, մարդկանց անունները կրճատում են: Շատ անգամ կրճատված անվան տերն ինքն իր իսկական անունը դժվարանում ե իմանալ...

Կացիդածն.—Լավ, բավականն է, մի՛ յերկարացրու: Ձեր գյուղի սովորությունները բնավ ինձ համար հետաքրքիր չեն: Բայց վոր կարտոշկա յես բերել, այդ լավ ես արել:

Նազիկ.—Մայրիկս տվեց, ասաց տար՝ կնյադներին հարկավոր կլինի. կտաս իրենց, նրանք փող կըտան, կբերես՝ շաքար կառնենք, չայ կլամենք:

Կացիդածն.—Լավ, յես քեզ փող ել կտամ, շաքար ել:

(Դուան շեմֆից կամչում է աղախնին): Նա՛դյա... (Նադյան մտնում է):

Ն ա դ յ ա .— Ի՞նչ եք հրամայում, պարո՛ն:

Կ ա ց ի դ ա ճ ե .— Դու ասում ե՛յիր՝ կարողե՛կա չի ճար-
վում, իսկ կարողե՛կան ինճն իբ Վառու՛ն ե մեր
դուռը դալիս: Վերցրո՛ւ, մեշուկը տա՛ր, դատար-
կի՛ր և մի քանի կտոր շաքար ել հետը բեր, տո՛ւր
այս յերեխային:

Ն ա դ յ ա .— Լսում եմ: (Մեշուկը տանում ե մերս):

Կ ա ց ի դ ա ճ ե .— (Հեռախոսով խոսում ե): Ալլո՛, ալլո՛,
Վալո՛դյա, դո՞ւ յես... Լսի՛ր, կացո՛, Ժողովուրդն
այտտեղ քեզ ե սպասում: Առանձնապես Թամա-
րան շատ ե անհանդատանում... Լավ, յես նրան
կգրադեցնեմ, մինչև քո դալդ, ցտեսու՛թյուն...
(Հեռախոսի լսափողը դնում ե տեղը և գալիս
ե, անցնելու ժամանակ գրպանից փող ե հանում և
տալիս ե Նազիկին): Առ վերցրո՛ւ, իսկ մեշուկն ու
շաքարը աղախինը կբերի: (Ձիմվորին): Իսկ դու
ազատ ես: Աշխատիք հանձնարարութ՛յունները
ճշտութ՛յամբ կատարել... Ապուշ... (Գնում ե
մերս):

Ձ ի մ վ ո թ .— Լսում եմ: Ձերդ պայծառափայլութ՛յուն:
(Ձիմվորը դուրս ե գնում): Իսկ Նազիկը մի քանի
րոպե զարմացած նայում ե):

Ն ա զ ի կ .— Ուրեմն, յես ազատ կերպով հիմա կարող եմ
դնալ: Բայց այն ապուշ գինվորը ինձ վախեցրեց:
(Հեռախոսի վրա ուշադիր նայում ե): Ես հեռա-
խոսը կարծես ասում ե, ինձ վերցրեք տարեք...
Յես ձեզ հարկավոր կլինեմ... Հը՞, տանեմ—չա-
նեմ. տանե՞մ—չառնեմ. տանեմ... (Մոտեցնում ե.
դռան մեղքից նայում և ապա հեռախոսի լարը
կտրում ապարատը վերցնում դնում ե փեշի տակ
և դուրս ե գնում):

Ն ա դ յ ա .— (Ներս ե գալիս և գարմացած նայում):

Ո՞ւր գնաց. ի՞նչու չսպասեց: Յես նրան շաքար
պիտի տայի (I, II զիմվորները վառոյիմ և Դաբի-
կոյին մերս եմ բերում):

S D U Ի Լ 4

Նադյա, Դաթիկո, Վասու, I, II զինվոր, հետո
Կացիդած

2-րդ զինվոր.— Պետը տա՞նն է:

Նադյա.— Տանն է. բայց կարգադրել է վոչվոքի շը-
դունել:

1-ին զինվոր.— Մեզ կընդունի: Գնա պետին հայտնիր,
վոր ձերբակալված զինվորներին բերել են. մնա-
ցածի մասին ինքը դիտե: (Նադյամ մերս է գնում):

Դաթիկո.— Ասում ես, տված հարցերին չպատաս-
խանենք...

1-ին զինվոր.— Խոսել չի կարելի:

Վասու.— Նշանակում ե՛ խոսել դու մեզ արդելում ես:
Յեվ դու շարքային զինվո՞ր ես, չքավոր դուրչացու
զավա՞կ:

1-ին զինվոր.— Ադիտացիա մի՛ արա: Ադիտացիա ա-
նելու համար են ձեր քիթն ու մուտքը շարդել: Իսկ
դուք ելի խելքի չեք դալիս:

2-րդ զինվոր.— Սը՛սս, պետը գալիս է:

Կացիդած.— Բերի՞ք սրանց: Լա՛վ, նախքան հար-
ցաքննության անցնելը, մի բան լավ իմացե՛ք, վոր
բոլոր ձեր ընկերներին անունը պիտի ասեք մեզ:

Վասու.— Մենք վոչինչ չգիտենք:

Կացիդած.— Թուրքիկները դուք ումնի՞ց եք ստա-
ցել:

Վասու.— Չգիտեմ:

Կացիդած.— Տված հարցերին պատասխանի՛ր, ապա
թե վոչ յես քեզ տեղն ու տեղը կսատկացնեմ,
սրիկա՛... (Ատրճամակը բռնում է ձեռքին): Տը-
վածս հարցերին պատասխանելո՞ւ յես, թե՞ վոչ...

Վասու.— Վո՛չ...

Կացիդած.— Դուրս տարե՛ք սրանց և զնդակա-
հարե՛ք... (Զինվորներն ուզում են տանել): Սպա-
սե՛ք մի բուպե: (Մտնում է հեռախոսին): Այս
ի՞նչ է նշանակում... ո՞ւր է հեռախոսը, Նադյա:
(Նադյամ մերս է մտնում):

Ն ա դ յ ա .— Ի՞նչ եք հրամայում, պարո՞ն :

Կ ա ց ի դ ա ձ Ե .— Ո՞վ է տարել հեռախոսը : Քիչ առաջ
այսանդ եր :

Ն ա դ յ ա .— (Ձարմացած) Հեռախոսը... չգիտեմ...
Ա՛, հասկացա... Կարտոչկան բերող տղան տա-
րած կլինի... յերբ յես յեկա, նա այլևս ինձ չեք
սպասել, առանց յարարն ու մեշոկը ստանալու՝
դնացել եր : (Ներս է գնում) :

Կ ա ց ի դ ա ձ Ե .— Հավանական է՝ նա տարած լինի :
Հարկավոր է ատրյադին հայանել, ձերբակալելու
համար նրանք շտապ միջոցներ ձեռք առնեն...
(Գրասեղանի վրայից քույր է վերցնում, յերկ-
տողը գրելուց հետո դնում է ծրարի մեջ և հանձ-
նում 2-րդ զինվորին) : Վերցրո՛ւ և անմիջապես
հասի՛ ատրյադը :

2-րդ զինվոր .— Լսում եմ, ձերդ պայծառափայլու-
թյուն : (Ծրարը՝ վերցնում է և դուրս գնում) :

Կ ա ց ի դ ա ձ Ե .— (Դաքիկոյին) Լսի՛ր, իմ տված հար-
ցերին գուցե դու պատասխանես : Բայլ և իկյան կու-
սակցությանը համակրող մեր զինվորներից ո՞ւմ
ես ճանաչում :

Դ ա ք ի կ ո .— Յես վոչվոքի չեմ ճանաչում :

Կ ա ց ի դ ա ձ Ե .— Թուցիկները ումնի՞ց եք ստանում :

Դ ա ք ի կ ո .— Չգիտեմ :

Կ ա ց ի դ ա ձ Ե .— Գիտեք, բայց չեք ուզում ասել : Սրի-
կանի՛ր... (Վաստյին և Դաքիկոյին ապտակում է) :
Վերցրու սրանց տա՛ր : Յես այս բուպեյիս գալիս
եմ...

1-ին զինվոր .— Լսում եմ, ձերդ պայծառափայլու-
թյուն... բայց թույլ տվե՛ք առանձին ձեզ մի քա-
նի խոսք ասել :

Կ ա ց ի դ ա ձ Ե .— Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ասում : (Նրանք
փաշվում են մի կողմ և առանձին խոսում : Իսկ
Վաստի և Դաքիկոն, ոգտվելով առիթից, աննկա-
տելի կերպով դուրս են գնում) : ☹

1-ին գիցվոք.—Ձերդ պայծառափայլութուն. մեր
զինվորների մեջ թուլցիկներ տարածողը դրանք
են, դրանք բուլեիկներ են... նրանց մենակ
տանել...

Կացիդածե.—Լավ. հասկանալի յե: (Համկարծ ցկա-
տում ե նրանց բացակայութունը): Այս ի՞նչ և
նշանակում:

1-ին գիցվոք.—Սա նշանակում ե, ձերդ պայծառա-
փայլութուն, վոր նրանք փախան...

Կացիդածե.—Ինչպե՞ս թե փախան... նրանց փոխա-
րեն յես քեդ կոնդակահարեմ... շուն... շան...
վորդ'ի: (Ապտակում ե):

1-ին գիցվոք.—Յես մամեղավոր չեմ, ձերդ գերա-
զանցութուն...

Կացիդածե.—Արդարանալու ժամանակ չե, սրիկա,
դուքս արի'... նրանց պետք ե գանել... (Ատրճա-
նակը ձեռքից, զինվորների հետ դուրս ե գնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՏԱՍԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բնքը ներկայացնում է յերկաքգիծը — կամուրջի մտ: Յերկու կողմից խիտ ամտառ և բարձր ապա-
ռածներ: Վրաց ջոկատի մի խումբ գիմվորներ,
հրացամները ձեռքներին, հաստարում կաղնու
տակ, խարույկի շուրջը հավաքված, խոսում են:
Ձմռան ցուրտ և խավար գիշեր է:

Տ Ե Ս Ի Լ 1

Դաքիկո և գիմվորներ

- Ա. գիմվոր.—Անցյալ որը լո՞մ ներկայությամբ մի
դինվորի ենքան ծեծեցին, վոր խեղճը տեղն ու
տեղը խեղճն մահացավ:
- Բ. գիմվոր.—Յեթե դրանց կամքին թողնվի, դրանք
մեզ բուրբիս կամաց—կամաց կմահացնեն:
- Բնվորը.—Դրանց հարկավոր ա բուրբին սրի քաշել
և դրողի ծոցն ուղարկել:
- Գ. գիմվոր.—Յերկու տարի յե՛ տնից դուրս եմ յեկել,
ծնողներիս յերեսը չեմ տեսել: Անցյալ որը տնից
նամակ ստացա, գրում են, վոր հայրս ծանր մերձի-
մահ հիվանդ է: Խնդրեցի, վոր մի քանի որով ինձ
արձակուրդ տան, մերժեցին, չավին:
- Ա. գիմվոր.—Մեզ արձակուրդ չեն տա. իսկ իրենք՝
ուղած բուպեյին ամիսներով կգնան կկորչեն, իրենց
համար քեֆ կանեն:
- Գ. գիմվոր.—Դրա համար ել պատժիչ զորամասերը
ուղարկում են գյուղերը գյուղացիներին հանգըս-
տացնեն իսկ իրենք ցերեկները՝ քեֆեր սարքում,
գիշերը՝ բալլեիկներ վորսում:
- Գ. գիմվոր.—Իմ կարծիքով պատժիչ զորամասերը
գյուղացիներին վոչ թե հանգստացնում, այլ ավե-

- ցամ, ա՛յ, դրա համար մենք պիտի մտածենք:
- Ա. Զի նվար.—Մի դուցե վերադառնալու ժամանակ մենչեիկները նրան ձերբակալել են:
- Բ. Զի նվար.—Կամ մի դուցե խորհրդակցությունը դեռ չի վերջացել:
- Գ. Զի նվար.—Ձե՛, հավանական է, վոր խորհրդակցությունից վերադառնալու ժամանակ նրան ձերբակալած լինեն:
- Բ ը յ ը ը.—Յեթե ձերբակալած լինեն՝ ի՞նչ պետք է անենք:
- Դ ա ր ի կ ո.— Համենայն դեպս ձեռքներս չպիտի ծալնեք ետեղ նստենք և թույլ տանք, վոր մենչեիկներն ենտեղ մեր հարազատներին կոտորեն: Մենչեիկյան կառավարության դեմ վողջ վրաստանը պատրաստ է ապստամբելու, կզնանք նրանց կմիանանք, մենչեիկների դուխը կջարդենք և թավադ ազնավուրների իշխանությունը նրանց ձեռքից կխլենք...
- Ա. Զի նվար.—Ճիշտ է ասում, ուրիշ յեղք չկա:
- Բ. Զի նվար.—Հարկավոր է կնյազի լակոտներին իրենց արժանի հատուցումը տալ:
- Գ. Զի նվար.—Դրանց բոլորին պետք է դժոխք ուղարկել:
- Բ ը յ ը ը.—Ուրեմն ել ինչո՞ւ համար ենք կանգնել:
- Ա. Զի նվար.—Կանգնելու ժամանակը չի. դեմ՛նք:
- Բ ը յ ը ը.—Գնա՛նք...
- (Վաստն յափնջին ուսին, յերկար չոմաղը ձեռքին, ծպտված մերս ե գալիս և իսկույն յափնջին վրայից դեմ շարտում ու վոտից գլուխ զինված ճըրանց առջև կանգնում):

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնք, վաստ և հետո 1-ին զինվոր

Վ ա ս ո.—Սպասեք. այդ ո՞ւր եք դուք այդպես շտապում:

Բ ու յ ու թ թ . — Գ ն ու մ է ն ք մ ե ն շ և ի կ ն եր ի գ լ ու խ ը ջ ար դ ե ն ք ,
Թ ա մ ա դ ա զ ն ա մ ու ը ն եր ի ի շ խ ա ն ու թ յ ու ը ն ը ն ր ա ն ց
ձ ե ո ճ ի ց ը խ լ ն ն ք . . .

Վ ա ս ո ը . — Մ ե ն շ և ի կ ն եր ի գ լ ու խ ը ջ ար դ ե յ ու և Թ ա մ ա դ
ա զ ն ա մ ու ը ն եր ի ի շ խ ա ն ու թ յ ու ը ն ը ն ր ա ն ց ձ ե ո ճ ի ց ը
խ լ ն յ ու ժ ա մ ա ն ա կ կ դ ա — կ ա ն ն ն ք . . . ի ս կ մ ի ն չ ա յ դ
Վ ր ա ս ա տ ա ն ու մ ա ս ս ա տ ա մ ր ու թ յ ա ն ա ո թ ի վ կ ա յ ա ց ա մ
դ ա ղ տ ն ի խ ու ը ը ղ ա կ ց ու թ յ ա ն վ ո թ ղ յ ու մ ն եր ի ն ն ա խ
դ ու ք պ ի ա ի ծ ա ն ո թ ա ն ա ք և ա պ ա ա յ դ գ ո թ ծ ի ն ձ ե ո
ն ա մ ու ի խ ն ն ք . . .

(Բ ու յ ու թ թ հ ա մ ա մ վ ու մ ե ն ն ր ա շ ու թ ջ ը և ու շ ա դ թ ու
թ յ ա ն ք լ տ ու մ) :

Ա ս ս ա տ ա մ ր ու թ յ ու ը ն ը չ ա ս ս ար ա կ և ս ո մ թ ր ա կ ա ն
կ ու ի մ ն եր ի ց ը չ է . . . ա յ դ լ ու ը ջ և պ ա տ ա ս ի ա ն ա տ ու
գ ո թ ծ է : Ի ս կ ա յ դ լ ու ը ջ և պ ա տ ա ս ի ա ն ա տ ու գ ո թ ծ ը
ը ն կ եր Ս տ ա լ ի ն ի ց ու ց մ ու ը ն ն եր ո վ ղ ե կ ա մ ար ու մ և
Չ ա կ ք յ ու թ ու . . .

Բ ու յ ու թ թ . — Ը ն կ եր Ս տ ա լ ի ն ի ց ու ց մ ու ը ն ն եր ո վ . . .

Դ ա ք ի կ ո . — Ս ը ' ս . . . Պ ա հ ա կ ը գ ա յ ի ս է :

(Բ ու յ ու թ թ ց ր վ ու մ ե ն գ ա ն ա գ ա ն կ ո ղ մ ի վ ր ա : Կ ա
մ ու թ ջ ը հ ս կ ո ղ վ ր ա ց ջ ո կ ա տ ի 1-ի ն գ ի ն վ ո թ թ հ ր ա
ց ա ն ը ձ ե ո ի ն գ ա յ ի ս է ն եր ք և կ ա ն գ ու մ ու ու լ ու ո
ն ա յ ու մ) :

Տ Ե Ս Ի Լ 3

Ն ու յ ն ք և 1-ի ն գ ի ն վ ո թ

1-ի ն Ջ ի ն վ ո թ . — Ու ը վ ո թ դ ն ու մ է մ , շ ար ու ը ա կ խ ո
ս ա կ ց ու թ յ ա ն ձ ա յ ն եր է մ լ տ ու մ : Բ ա յ ց վ ո թ մ ո տ ե
ն ու մ է մ , վ ո չ վ ո ճ չ կ ա : Չ ար մ ա ց ք է . ե ս մ ու թ խ ա
վ ար ի մ է ջ կ ար ծ ե ս ծ ա ու եր ն ու թ ի եր ը լ ե զ ու յ ն ա ո
ն ու մ և մ ի մ յ ա ն ց չ ե ս խ ո ս ու մ . . . ա ր ա տ ա ս ո վ ո թ դ ի
չ եր է . . . ա տ ր յ ա դ ու մ յ ե ս ու ր ա խ ու թ յ ա մ ք ս ու ա
կ ա ն ն եր ո վ կ ա շ խ ա տ ե մ , մ ի ա յ ն թ է ե ս ա ն ի ծ ա ծ տ ե ղ ն
ի ն ձ պ ա հ ա կ չ դ ն ն ն . . . ս ո ս կ ա լ ի վ տ ա ն գ ա մ թ ր տ ե ղ
է : Յ ե ս ու ղ ղ ա կ ի վ ա խ ն ն ու մ է մ . . . Չ ո թ ս կ ո ղ մ ը

ճուրթ անտառ, վոչինչ չի յերևում: Նորից ձայներ
են լսվում... Ո՞վ է այդտեղ... (Վասուն յափնջիմ
վրան քաշած՝ վերևից իջնում է և խոպոտ ձայնով
պատասխանում):

Վասուն.— Բարեկամ...

1-ի ն գի ն վոք.— Յես բարեկամ—ճարեկամ չեմ ճա-
նաչում, պարզ ասա՝ ո՞վ ես:

Վասուն.— Յերկաթգծի վրա աշխատող բանվոր եմ:

1-ի ն գի ն վոք.— Բանվոր—ճանվոր յես չեմ ճանաչում,
ինձ համար ժիւնույն ե, ով ուղում ես՝ յեղի՛ր,
բայկան ե տեղիցդ շարժվեցիր, կխփեմ: Այս-
տեղ պոսա ե, իսկ պոստին կողմնակի մարդիկ
մոտենալու իրավունք չունեն:

Վասուն.— Յես կողմնակի մարդ չեմ: Յես քեզ ասեցի,
վոր յերկաթգծի վրա աշխատող բանվոր եմ, սա
եւ իմ պոստն ե... պարտավոր եմ յերկաթգծն
ամեն բոպե հակելու, վորպեսզի դնացքն անցնելու
ժամանակ ավարիս չպատահի...

1-ի ն գի ն վոք.— Ավարիս—ճավարիսյի հետ յես դը-
լուխ չունեմ... քանի չեմ խփել, շանսատակ ա-
րեւ, հեռացի՛, ասում եմ...

Վասուն.— Ա՛յ մարդ, ի՞ծի ցավ դառար գլխի՞ս, վեր
եմ ընկել, վոտս կտորել՝ հերիք չի, դու եւ մի
կոնիցս ես յեկել՝ ցավիս վրա ցավ ավելացնում.
Վա՛յ, դեղի ջան... մեռնում եմ, ողնեցե՛ք...
Վա՛յ մի, դեղի՛ ջան...

1-ի ն գի ն վոք.— Ի՞նչ ես վնդստում, վե՛ր կաց, կո-
րի՛, ու՛ղ իլի...

Վասուն.— Վո՞նց թե կորի՛, ուղ իլի. ինձ իմ պոստից
դու հեռացնելու իրավունք չունես... յես քեզ ասե-
ցի, վոր յես ստրելչիկ եմ. յեկել եմ յերկաթգծի
ստուգեմ: Գնացքը հիմի վորտեղ վորա կգա: Նրա
հետ վոր մի դժբախտություն պատահի, դու պա-
տասխանատու՞ն յես:

1-ի ն գի ն վոք.— Դու եղ ի՞նչ տեսակ ստրելչիկ ես,
վոր մի Փանար եւ չունես:

Վ ա ս ու ն . — Վ ո ՞ ն ց չ ու ն ե ն մ . ք ա մ ի ն տ փ ե ց Փ ա ն ա ր ս հ ա ն դ ց ր ե ց . . . և հ ն ն ց դ ր ա հ ա մ ա ր ե լ Վ ո տ ք ս ք ա ր ի ն կ ա լ ա մ — փ ե ր ը ն կ ա ու Վ ո տ ք ս կ ո տ ր ե ց ի . . . ս ա ի չ կ ա չ ու ն ե ՞ ս , տ ու ր Փ ա ն ա ր ս վ ա ու ի մ , մ ի կ ե ր ա յ ք ա շ դ ա լ ո մ դ ն ա մ կ ո ր չ ե ն մ ե ս տ ե ղ ի ց . Թ ե չ ե կ մ ե ու ն ե ն մ ու կ մ ն ա մ ե ս տ ե ղ : Վ ա ' յ , դ ե դ ի ' ջ ա ն , ո դ ն ե ց ի ' ք . . .

1-ի ն գ ի ն վ յ ր . — Ա ' ո , ս ա ի չ կ ա վ ե ր ց ր ո ' լ , Փ ա ն ա ր ր կ ա ց ր ո ' լ , գ ն ա ո ա դ ե լ ի կ ո ր ի : Ջ ի ն վ ո ր ա կ ա ն պ ո ս տ ի ն մ ո ս դ ա ն ն վ ո ղ տ ե ղ ե ր ու մ կ ո ղ մ ն ա կ ի մ ար ղ կ ա ն ց չ ի Թ ու յ լ ա տ ր վ ու մ :

(Մ ո տ ե ն ու մ ե լ ու ց կ ի ն տ ս յ ու , ա յ դ մ ի շ ո ց ի ն Դ ա ք ի կ ո ն և ա մ ր ո ղ ց խ ու մ ր ր հ ա ր ճ ա կ վ ու մ ե ն ն ր ա վ ր ա և կ ո կ ւ ր ղ ի ց ք ո ն ու մ) :

Վ ա ս ու ն . — Դ ա վ ա ճ ա ' ն , Հ ու ղ ա ' . . . ք ո պ ա տ ճ ա ո ո մ մ ե ր ը ն կ ե ր ն ե ր ի ց շ ա տ ե ր ր ա յ ս ո ր բ ա ն տ ա ր կ վ ա ծ և դ ը ն դ ա կ ա հ ա ր վ ա ծ ե ն :

Դ ա ք ի կ ո ն . — Ա մ ե ն ի ն չ վ ե ր ջ ա ց ա մ . . . ը ն կ ե ր ն ե ր ի ն ն ա ա յ լ և ս չ ի դ ա վ ա ճ ա ն ի :

Բ ո լ ո ր ր . — Ս ր ' ս ս . դ ա լ ի ս ի ն պ ո ս տ ր ս տ ու ղ ե լ ու :

Վ ա ս ու ն . — Մ ի ք շ ի ո Թ Վ ի : Լ ս ի ր , Դ ա Թ ի կ ո . դ ու ա յ դ կ ա մ ու ր ջ ի տ ա կ դ ր վ ա ծ դ թ ո խ ա յ ի ն մ ե ջ ի ն ա յ ի տ ե դ ր գ ի տ ե ս : Հ ա ր կ ա մ ր ե ն ր ա ն տ ե ղ ի ց հ ա ն ե լ կ ա մ չ ե ղ ո ք ա ց ն ե լ :

Դ ա ք ի կ ո ն . — Ի մ ա ց ա , պ ա տ ր ու յ գ ր տ ա կ ի ց կ կ ա ր ե ն մ և ա մ ե ն ի ն չ կ վ ե ր ջ ա ն ա :

(Դ ա ք ի կ ո ն գ ի ն վ ո ր ն ե ր ի հ ե տ ք ա շ ա մ ու մ ե ն ձ ո ր ր : Վ ա ս ո ն մ ա հ ա ց ա ծ գ ի ն վ ո ր ի վ ր ա յ ի ց մ ու շ տ ա կ ր հ ա ն ու մ ե , ի ն է ր հ ա գ ն ու մ և հ ր ա ց ա ն ր վ ե ր ց ն ու մ ձ ե ո ր և վ ո ր պ ե ս պ ա հ ա կ ' կ ա ն գ ն ու մ : Կ ա ց ի դ ա ձ ե ն ու ր ի շ մ ի ք ա ն ի գ ի ն վ ո ր ն ե ր ի հ ե տ խ ո ս ե լ ո մ գ ա լ ի ս ե ն) :

Կացիդածե, գինվորներ, Վաստ, հետո Դաքիկո և
Վյուսները

Կացիդածե.—Գուք գիտեք, վոր հայերը նենդ ժո-
ղովուրդ են: Նրանց բոլորովին հավատ չպիտի
ընծայել: Նրանք ամենուրեք դիմակավորված շք-
ջում են և իրենց կեղտոտ ու քսամենելի գործը կա-
տարում են: Ահա միակ պունկար, վորտեղ պա-
հակն իր պոստում կանգնած՝ արթուն հսկում է:
(Գնում եմ):

Վաստ.—Ձեր պահակը վոչ թե արթուն կերպով հըս-
կում, այլ նա իր պոստում մահվան ծոցում հա-
վիտենական քնով մրափում է:

Դաքիկո.—(Խմբի հետ խոսելով գալիս է): Մենք
մեր գործը վերջացրինք: Կամուրջը ապահովված
է: Այժմ մինք կարող ենք այստեղից ազատ կեր-
պով հեռանալ:

Վաստ.—Գնանք:

Բոլորը.—Գնա՛նք...

(Դուրս եմ գնում):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեւը մերկայացնում է անտառ: Ձմռան մուր և խավար գիշեր է: Կարմիր պարտիզանները քարայրի մոտ կրակ են արել և շուրջը տառկել, քրմել: Պահուկը փարայրի գլխին. հրացանը ձեռքին կանգնած՝ նայում է: Նազիկը հեռախոսի ապարատը փեշի տակ դիտած, անտառի խորքից վազելով գալիս է: Պահուկը խորքից ձայն է տալիս: Նազիկը յեկավ: Բոլորը ընկից վեր են կենում:

Տ Ե Ս Ի Լ 1

Գալուստ, Շամիլ, Նազիկ և պարտիզաններ

Նազիկ.— Քիչ եր մնում, թե բռնվեյի... Վա՛յ, ինչպես հողմել եմ: (Նազիկը նստում է և բոլորը հավաքվում են նրա շուրջը):

Գալուստ.— Նազիկ՛կ ջան, ես ի՞նչ ես բերել...

Նազիկ.— Հեռախոսի ապարատ...

Բոլորը.— Հեռախոսի ապարատ...

Գալուստ.— Իսկ դու ինչ գիտեյիր, վոր ես մեզ հարկավոր եր...

Նազիկ.— Յես գիտեյի... Հեռախոսի ապարատի մասին ձեր խոսակցութունը անցյալ անգամ ձեր տանը յես լսեցի...

Գալուստ.— Ա՛խ, դու սատանա, դու ամեն ժամանակ մեր խոսակցութունը լսում ես...

Նազիկ.— Քեռի՛ ջան, յեթե լսած չլինեյի ետոր դուք ես ապարատը չեյիք ունենա... Բայց յեթե դուք իմանաք, թե ի՞նչպես եմ ես ապարատը ձեռք բերել, ո՛յ, ո՛յ, ո՛յ,...

Բոլորը.— Պատմիր, պատմիր... Հետաքրքիր ա...

Նազիկ.— Են գրութիւնը, վոր դու տվիք՝ տանեմ
ընկեր Լադյանին, ճանապարհին հանկարծ ինձ
վրացի գինւորը բռնեց:

Գալուստ.— Իսկ տվածս գրութիւնը ի՞նչ արիք,
այդ գրութիւնը հո չընկա՞վ նրա ձեռքը:

Նազիկ.— Չընկա՞վ: Նախքան բռնվելս, գրութիւնը
ծամեցի և իսկույն կուլ տվի...

ԲՈՂՈՐԸ.— Մալադե՛ց, Նազիկ...

Շամիրի.— Յես իմ աստվածը, տասը տղամարդ
արժի...

Գալուստ.— Մի՛ք խանդարի, թողի՛ք պատմի: Հե-
տո՞:

Նազիկ.— Հետո, ինձ վոր բռնեցին տարան շտաբը,
շտաբից ել տարան իրենց դիխավոր պետի մոտ...
կնտեղ աֆիցերները քե՛ք եյին անտոմ:

Շամիրի.— Եդ քե՛քում անկարելի բան է, վոր կնանիք
չլինեյին:

Նազիկ.— Կնանիք ել կային:

Շամիրի.— Յես քեզ չասացի՞... ախար յես գիտեմ,
վոր առանց կնոջ քե՛քը դուրս չի դա:

(ԲՈՂՈՐԸ ծիծաղում են):

Նազիկ.— Դե լա՞վ, մի՛ք խանդարի, թողեք պատմեմ:

ԲՈՂՈՐԸ.— Պատմի՛ր, պատմի՛ր...

Նազիկ.— Յես ձեզ ամենից առաջ են ասեմ, վոր յեթե
կարտոշկան մոտս չլինեք, յես նրանից ազատվել
չեյի կարող: Նրանց խարեցի, վոր եզ կարտոշկան
ձեզ համար եմ բերել, վոր դրա վողով տանենք
չարքար առնենք, չայ խմենք...

ԲՈՂՈՐԸ.— Լա՞վ ես խարել... (Միծաղում են):

Գալուստ.— Մի՛ խանդարեք: Դու քո խոսքդ շա-
րունակի՛ր:

Նազիկ.— Վո՞րտեղ մնացի... Հա՛, են եյի ասում:
Բայց եդ պատմութիւնը թողնենք, մի ուրիշ
անգամ կպատմեմ... Այսքանը միայն կատեմ, վոր
ապարատը վերցնելուց նրանք չեյին իմացել: Իսկ
հետո, յերբ իմացել են, իսկույն ընկել են իմ

Հետևից... Գետն անցնելու ժամանակ նրանք սկը-
սեցին կրակել... Հետո ի՛նչ կրակոց, կարծես
յերկնքից վրաս կարկուտ եր թափվում... Գնդակ-
ները մեղրահամեմբի նման տղվզալով գալիս չորս
կողմիցս անցնում էին... յես ուշադրութ՛յուն չեյի
դարձնում, անդադար վազում էյի. վերջապես ինձ
մի կերպ գցեցի ձեզ մոտ... և հիմա, ինչպես տես-
նում եք, ձեր կողքին նստած, ձեզ հետ խոսում
եմ... Բայց ի՛նչպես հոգնած եմ...

Գալուստ.— Իսկապես վոր հոգնած ես: Վե՛ր կաց
դնանք, քարայրում պառկի՛ր ու հանգստացի՛ր:
Այստեղ ցուրտ է, կմբսես: Իսկ դու, Ծամի՛լ,
վերցրո՛ւ այդ հեռախոսի ապարատը և ինչ վոր
հարկավոր է, արա՛, գուցե հնարավոր լինի վորևե
տեղի հետ կապվել:

(Գալուստը և Նազիկը գնում են քարայր):

Ծամիլ.— Հնարավոր կլինի, դրա համար վոչ մի կաս-
կած: Լսի՛ր, Արտաշ, ել կանդնելու ժամանակ չի.
մի քանի հոգու հետ դնացե՛ք, հեռագրական
սյունների վրայից հեռախոսի համար յերկաթա-
լարեր կարե՛ք, բերե՛ք:

1-ին պարտիզան.— Վոր հրամայում ես, պետք է
դնանք: Տղե՛րք, ընկե՛ք առաջ:

(1-ին պարտիզանը մի քանի հոգու հետ դուրս է
գնում: Իսկ Ծամիլն ապարատը սկսում է քան-
դել):

2-րդ պարտիզան.— Յանի բան հասկանո՞ւմ ես, թե՞
հենց իզուր տեղը քարուքանդ ես անում:

Ծամիլ.— Ձիմացած բանին մարդ ձեռ չի տա: Պա-
տերազմի ժամանակ յերկու տարի կապի վաշտում
տեղեֆոնիստութ՛յուն եմ արել: (Յերկարատև լոռու-
քյուն): Նազիկն իսկապես վոր քաջագործութ՛յուն
ա արել: Ոորհրդային կարգերը լոռում հաստատ-
վեցին թե չե, Նազիկին անպատճառ շքանշան կը-
տան: (1-ին պարտիզանը խորքից ձայն է տալիս):

1-ին պարտիզան.— Արա, յեկե՛ք, քոմադ արե՛ք-
յերկաթալարը բերում ենք:

Շ ա մ ի լ .— Սպասի՛ր, քանի չես բերել, եղ յերկաթա-
լարի մի ծայրը տար, միացրու վրացիների ատր-
յաղը տանող ստուրի մավթուլին: Տեսնենք եղ
կնյաղի լակտաներն իրենց ատրյաղին ի՞նչ կարգա-
դրություններ են անում:

1-ին պարտիզամ.— Լավ, եղ հանձնարարությունդ
ել կկատարեմ: (Գնում է):

Շ ա մ ի լ .— Իհարկե, պիտի կատարես, զատո հանձնա-
րարություն է...

2-րդ պարտիզամ.— Մեծ խոստումներ ես տալիս,
բայց վախենում եմ՝ բան դուրս չգա, ու ամոթով
մնաս:

Շ ա մ ի լ .— Նշանակում աս, վոր դուք թերահավատ
մարդիկ եք, կամ իմ վարպետությունն եք թերա-
զնահատում: Վնաս չունի, ինչպես ուզում եք
հասկացե՛ք: Ետ ձեր իրավունքն աս: Լսի՛ր, մի բո-
պե. բռնի՛ր կս ապարատը: (Ապարատը տալիս է
նրա ձեռքը և իր գոտին մեջքից արձակում):

3-րդ պարտիզամ.— Եղ քամարով ի՞նչ ես ուզում
անել:

Շ ա մ ի լ .— Դրա մասին պատմությունն առայժմ
յուրում է: (Ապարատը փամբով ամրացնում է
ծառին): Հը՛, վո՞նց աս, տղեք ջա՛ն, ելա՞վ, թե
չե... Նաստայաչչի կրաննայա պարտիզանակայա
տեղեֆոննայա ստանցիա... (Բոլորը ծիծաղում են):
1-ին պարտիզամը տղաների հետ յերկաթալարի
ֆաշելով բերում են):

1-ին պարտիզամ.— Սպասե՛ք, ծառի դեմ աս առել...
հանեցե՛ք, քաշե՛ք: (Շամիլին) հանձնարարու-
թյունդ կատարեցի...

Շ ա մ ի լ .— Լավ արիք, դրա համար իմ կողմից դու
կպարզեւատրվես...

1-ին պարտիզամ.— Դե տո՛ւր:

Շ ա մ ի լ .— Հիմա հո չեմ ասում:

1-ին պարտիզամ.— Բա յե՞րբ:

Շ ա մ ի լ .— Ապտամբությունը վերջանալուց հետո:

1-ին պարտիզամ.— Համաձայն եմ, վնաս չունի,
տարբերությունը մի քանի որովա խնդիր է: Բայց
Գրամատիկական յերկեթ. — 20

դու գիտես, վոր լետուչի ատրյադի պահակը քիչ մնաց, վոր մեզ տեսնի:

Շամիլ.—Տեսներ՝ բաններս խարար կլինեի: Դե լավ, դուք ել ինչի՞ յեք նրանց եղքան մոտենում:

1-ին պարտիզամ.— Վերջին սյունը ուղիղ գետափին եր, հենց նրանից ել մոտացրի:

Շամիլ.—Յես իմ գործը վերջացրի: Դե հիմի հավաք վենք, տեսնենք՝ արտաքին աշխարհում ի՞նչ ե կատարվում:

(Բոլորը հավաքվում են, Շամիլը հեռախոսի լսափողը դնում ե իր ականջին):

Աբ՛ա, տնաքանդ, դու ուրիշ տեղ ես միացել... սո՛ւա արեք, խոսում են:

(Բերկու մթնում ե: Յերկու մարդկային սիլուետներ հակադիր կողմերում կանգնած հեռախոսով միմյանց հետ խոսում են):

Մի քիստր.— Հեռախոսի մոտ կանգնած ե դաշնակցական կառավարութ՛յան արտաքին գործոց մինիստրը:

Դիվ. անբկ.— Պարո՛ն մինիստր, ձեզ հետ խոսում ե Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը: Ստացված տեղեկութ՛յունների համաձայն, Բազմում բոլշևիկները չարամիտ լուրեր են տարածում այն մասին, վոր Հայաստանում մեծամասնականները յենթարկվում են խիստ հալածանքի, իսկ բանաում դոնվոդները՝ չափազանց ծանր բանդային ուժերի, հաճախ թողնվում են նույնիսկ առանց ճաշի: Ըստ նրանց տարածած լուրերի՝ հրացանազարկ արվածների թիվը հասնում ե յերկու հազարի... նկատի ունենալով, վոր այդ լուրերը չափազանց աննպաստ տպավորութ՛յուն են ստեղծում հասարակական և քաղաքական վորոշ քջաններում մեր կառավարութ՛յան վարկի տեսակետից, պատիվ ունեմ խնդրելու՝ կարգադրեք, վոր այդ մասին մեզ ստույգ մի տեղեկութ՛յուն ուղարկվի...

Մի Թիստր.—Անհապաղ ստույգ ինֆորմացիա կտրվի
թե ձեզ և թե մեր միասիային Աշխարհնում՝ այդ
լուրերը հերքելու համար:

Գիվ. Գերկայացուցիչ.— Պարոն միստր, բացի
այդ, հարկ չե՞ք համարում արդյոք այդ մասին
կառավարական հաղորդագրություն հրատարակե-
լու:

Մի Թիստր.—Այդ մասին կմտածենք... առայժմ ինձ
լսեցե՛ք:

Գիվ. Գերկայացուցիչ.— Յես ձեզ լսում եմ, սլա-
րոն միստր:

Մի Թիստր.—Համաձայն մեր ստացած տեղեկություն-
ների, Վրաստանում ձերբակալված հայ բոլշևիկ-
ներին, առանց մեր կառավարության տեղակալ-
ներու, ուղարկում են Սադախլու, վորտեղից նրանք
անարգել անցնում են Հայաստան: Խնդրում եմ այդ
մասին հայտնեք վրաց կառավարության, վորպեսզի
ամեն պարագային անմիջապես հաղորդվի հայկա-
կան իշխանություններին նրանց Սադախլու հա-
նելը, վորպեսզի հարկ յեղած դեպքում մեր կողմից
պետք յեղած միջոցները ձեռք առնենք... (Բեմը
լուսավորվում է. բոլորը գարմացած միմյանց յե-
րեսի յեմ մայում: Լագոն գաղտնաբերանով իր գալը
հայտնում է):

Պահակ.— Ընկերներ, Լագոն դալիս է:

Գալուստ.—Այդ լավ յեղավ: Յես նրան սպասում
եյի: (Լագոն բարձրահասակ, զինվորական շիմելը
հագին մերս է գալիս):

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնք և Լագո

Լագո.—Բարև ձեզ, ընկերներ:

Բոլորը.—Բարև:

Գալուստ.— Ինչո՞ւ ուշացաք:

- Լ ա գ ու . — Խորհրդակցութիւնը միայն յերեկ վերջացաւ :
Վերադարձիս գնացի շրջանները :
- Գ ա լ ու ս տ . — Երջաններում գործն ի՞նչպէս ե գնում :
- Լ ա գ ու . — Լա՛վ ե գնում : Ժողովրդի տրամադրութիւնը
բարձր ե : Մենք բավականաչափ զինված ուժեր
ունենք : (Մոցի գրպանից ցուցակը հանում ե տա-
լիս Գալուստին) : Վերցրու այս ցուցակը, ծանո-
թացի՛ր...
(Գալուստը ցուցակը վերցնում ե և կարդում) :
- Գ ա լ ու ս տ . — (Կարդում ե) Հաղպատի բջիջը — յերեք
հարյուր հոգի : Սանահնի բջիջը — յերկու հար-
յուր, Ալահվերդին — չորս հարյուր, Ջալալողլին-
յերկուհարյուր, Վարդարաբըր — յոթանասուն,
Վարանցովհան — յերկու հարյուր, Գյառոյառը —
հարյուր յոթանասուն, Ուզունլարը — յերեք հար-
յուր... :
- Լ ա գ ու . — Հեռախօսը վո՞րտեղից եք հարել... :
- Գ ա լ ու ս տ . — Նազիկն ա բերել : (Լագուն ծիծաղում ե
և ապա Գալուստի հետ լուռ խոսում ե) :
- Տ ի գր ա մ . — (Խորփից) Արա, Ծամի՛լ, Հե՛յ... :
- Մ ա մ ի լ . — Կարծես Տիգրանի ձենն ա... ես գիշերվա
կեսին եղ տունը քանդվածն անտատում ի՞նչ ա
չինում :
- Տ ի գր ա մ . — Արա, Ծամի՛լ, Հե՛յ... :
- Մ ա մ ի լ . — Հե՛յ, Հե՛յ, արա, Տիգրան՛ն, դեսն արի՛,
դեսն արի՛... ես տնաքանդը մեր գաղափարի մարդ
չի, մեզ մոտ ինչի՞ համար ա դալիս. չեմ հասկա-
նում :
- 1-ին պարտիզա մ . — Բալքի միտքը փոխել ա ու հմի
մեր գաղափարի մարդ ա դառել :
- 2-րդ պարտիզա մ . — Չեմ կարծում, նա ընենց մարդ
չի :
- Գ ա լ ու ս տ . — Նրա ներկայութեամբ նման խոսակցու-
թիւն չլինի :
- Բ ո լ ո թ ը . — Հրես յեկա՛վ :
(Տիգրանը, շորերը պատառոտված, առանց գր-
խարկի, դեմքը արյունոտ, հոգնած-ուժասպառ
մերս ե մտնում) :

Նույնիք և Տիգրան

Հագո.—Ի՞նչ է պատահել, դու վերավորված ես, քեզնից արյուն է հոսում:

Տիգրան.— Ինձ համար մի՛ք մտածի, ընկե՛ր Հագո, դուք դեղում մնացած ժողովրդի համար մտածե՛ք... նրանց հոգւր քաշեք...

Պալուստ.— Պատմի տեսնենք՝ ի՞նչ է պատահել:

Տիգրան.— Ի՞նչ պատմեմ, Գալո՛ւստ ջան, պատմելու ել բա՞ն ա մնացել: Են արնախում շները մեզ որ չեն տալիս... նրանք մեզ տանջում, չարչարում են... Անասելի բռնություններ ու ճնշումներ են դործ դնում մեզ վրա: Գեղում ել ջահել կնիկ, չափահաս աղջիկ չեն թողել... դալիս, դռուվ քաշ են տալիս, տանում անպատվում ու բաց թողնում... անցյալ գիշերն ել յեկան մեր տուն, աղջկաս բռնեցին, դռուվ ուզում եյին տանել, ել չհամբերեցի, կացնով տվի, աֆիցեբներից մեկի դու՛խը ջարդեցի, ու փախա, ընկա ես շուրբը... յերկու որ ա՛ սոված, ծարավ ես անտառներում ման եմ դալիս, ձեզ չեմ դանում...

(Ուշագնաց է լինում):

Հագո.— Ջուր բերե՛ք. ուշքից դնաց:

Պալուստ.— Սովածությունից է: (Ջուր եմ խմեցնում, ջրով փակատը շփում և այլն):

Պահակ.— Գյուղից ել մի խումբ մարդիկ են դալիս...

Նույնիք, Յեմոֆ, Սահակ, Անուշ, Խաթուն, գյուղացիներ և գեղջկուհիներ

Հագո.— Գյուղում ել ո՞վ մնաց, դուք բոլորդ ձեր տուն ու տեղը թողել, յեկել եք:

Յ Ե Ա Ն Բ.—Մենք տուն ու տեղ չունենք. մեր տուն ու տեղը քարուքանդ արին, ամեն ինչ հավաքեցին, տարան, քարը քարի վրա չեն թողել: Ընկե՛ր Լազո, իս կյանք չի, վոր մենք ենք քաշում... Ես որ չի, վոր մենք ենք ապրում. մեր յերեխեքը սովից կոտորվում են, մեր սղլուշաղը պատվից ու նամուսից ընկնում... Եսպես շարունակել չի կարելի, հարկավոր ա մի ճար, մի իլլաջ անել... (Խաբունը և մյուս կամայք լաց են լինում):

Խ Խ Բ Ո Ւ Ա.—Մեզ համար մահը սրանից լավ ա... (Արտասվում Ե):

Շ Խ Ա Ի Ղ.—Յես չեմ հասկանում՝ մենք ետեղ ինչի՞ համար ենք նստել և ինչի՞ յենք սպասում...

Բ Ո Ղ Ո Ր Բ.— Ճիշտ ա ասում, սա կյանք չի, վոր մենք ենք ապրում, հարկավոր ա սրանց դեմ ապստամբ վել:

Լ Խ Պ Ո.—Ապստամբության մասին յերկու կարծիք լինել չի կարող, ա յտեղ միայն ժամանակի խնդիրն Ե...

Բ Ո Ղ Ո Ր Բ.— Եդ ժամանակը յանի չի լինի՞, վոր մի քիչ առաջ քցենք:

Շ Խ Ա Ի Ղ.—Առհասարակ մենք գործը շատ ենք ձրգձգում... Իմ կարծիքով, ապստամբության գործը հետաձգել չի կարելի: Դանակը բկներիս դեմ Ե առել... դնանք նրանց դեմ կովենք, դնանք եղ շուն շան վորդկերանց հախիցը դանք, հերիք ա՛ ինչքան դրանք մեր արյունը ծծեցին:

Բ Ո Ղ Ո Ր Բ.—Ճիշտ ա ասում, սպասելու Ել ճար չկա... դնանք եղ շուն շան վորդկերանց հախիցը դանք...

Գ ս Ա Ղ Ո Ւ Ս Ս.—Սպասեցե՛ք, իսկ ո՞վ ա ձեզ ասում, վոր մենք չպետք Ե դնանք և դրանց հախից չպիտի դանք... Իհարկե, պիտի դանք, բայց միայն այդ խնդիրը կենտրոնում վորոշելուց հետո:

Շ Խ Ա Ի Ղ.—Կենտրոնը բալքի Եղ խնդիրը մինչև մի տարի չի վորոշում, ուրեմն մենք պետք Ե սպասե՞նք:

Գ ս Ա Ղ Ո Ւ Ս Ս.—Այո՛, յեթե հարկավոր Ե, պետք Ե սպասենք...

Լ ա գ ռ .—Ճիշտ և կարուկ պատասխան: Ընկերներ, դուք կարծիր պարտիզաններ եք, ավելորդ եմ համարում ընդհանրապես կարգ ու կանոնի մասին մեզ հետ խոսել: Ապտամբուլթյան դործը հետաձգել, իհարկե վոր չի կարելի: Մակայն չմոռանաք մի հանդամանք, վոր այս ապտամբուլթյան դործը ղեկավարում ե Անդրյերկոմը ընկեր Ստալինի դիտարկությամբ: Հետևապես նրա տված հրահանգներով և ցուցմունքներով մենք պետք ե շարժվենք: (Դիմելով Գալուստին): Լսի՛ր, Գալուստ, յես գնում եմ: Կռիվն սկսելու համար ամեն բոպե դուք պատրաստ պետք ե լինեք... (Խմսելով Գալուստի հետ՝ դուրս ե գնում):

Շ ա մ ի լ .— Յես չեմ հասկանում՝ Գալուստն ո՛ւր դընաց, ինչի համար գնաց: Ես խալխը հույները դրել են մեզ վրա ու յեկել ետեղ: Նրանց պատասխան տար ու ընենց գնար:

1-իմ պարտիգամ.— Պատասխանը արվեց:

Շ ա մ ի լ .— Են պատասխան չեր: Ես խալխի սրտիցն արյուն ա հոսում, իսկ մենք նրանց ասում ենք՝ գնացե՛ք, սպասե՛ք: Մինչև յե՞րբ սպասեն:

1-իմ պարտիգամ.— Մինչև վոր հարմար դռնվի:

Շ ա մ ի լ .— Այսինքը մի ամիս, մի շաբաթ, թե մի օր...

1-իմ պարտիգամ.— Լսի՛ր, մինչև մեզ ազդանշան չարվի, մենք կռիվն սկսել չենք կարող:

(Գալուստը շտապ գալիս ե):

Գ ա լ ո ս տ .— Դե՛, տղի՛րք, գնե՛քներդ վերցրե՛ք և պատրաստվե՛ք: Լսի՛ր, Շամի՛լ, ովքեր գնե՛ք չունեն, նրանց բոլորին գնե՛ք տ՛ուր:

Շ ա մ ի լ .— Ա՛յ, ինչ եմ ասել: Դե՛, ովքեր գնե՛ք չունեն, թող դան ու ստանան: Չալխազ, անցի՛ր դործի:

(Տղամարդիկ բոլորը գնում են փախչի):

Ա ն ու շ .— Իսկ մենք գնե՛ք չպտի՞ ստանանք...

Գ ա լ ո ս տ .— Ո՞վ ե ասում, թե չպտի ստանաք... գնացե՛ք, ստացե՛ք...

- Ա Ա Ն Ա Շ.—Աղջկե՛րք, յեկե՛ք զնանք: (Գնում են):
- Գ ա լ Ո Ւ Ս Ս.—Նազի՛կ, արի՛ ետեղ: Յես չեզմիտաւրը—
ճանակ եմ խոստացել, արի տամ: (Տալիս է նրան):
Տեսնո՞ւմ ես, չեզ նման փոքր ե, բայց լալն ե:
- Ն ա գ ի կ.—Իսկապէս վոք լալն ե: Բայց Հաստատ
տալիս եք ի՞նձ:
- Գ ա լ Ո Ւ Ս Ս.—Հաստատ:
- Ն ա գ ի կ.—Ել յերբեք Հեռ չպե՞տք ե վերցնեք:
- Գ ա լ Ո Ւ Ս Ս.—Յերբեք: Այդ ատրճանակը յես նվիրում
եմ չեզ: Այսորվանից նա չեզ ե պատկանում, իսկ
դու ատրճանակ կրակել զիտե՞ս:
- Ն ա գ ի կ.—Գիտեմ: Ահա այսպես կրոնեմ, ցուցա-
մատով այտեղից կքաշեմ... (Ատրճանակը կրա-
կում է: Քարայրից բոլորը գիմված դուրս են
գալիս, իսկ պահակը խորքից ձայն է տալիս):
- Պ ա հ ա կ.—Վրացի զինվորներն ընկ. Վասոյի գլխավո-
րությամբ սալիս են:
- Գ ա լ Ո Ւ Ս Ս.—Կեցցե՛ն մեր վրացի ընկերները...
Բ ո լ Ո Ր Ը.—Ուռուա՛... (Բոլորն սկսում են ծափահա-
րել):
- Վ ա ս ո.—Կեցցե՛ն մեր կարմիր պարտիզանները:
Ջ ի մ վ ո Ր Յ Ե Ր ի խ ու մ ք.—Ուռուա՛...
Ս ա հ ա կ.—Վարանցովկայի ուսւ գյուղացիներն ընկեր
Շեստակովի գլխավորությամբ գալիս են:
- Գ ա լ Ո Ւ Ս Ս.—Կեցցե՛ մեր կարմիր Վարանցովկան:
Բ ո լ Ո Ր Ը.—Ուռուա՛...
Ս ա հ ա կ.—Հաղպատի տղաներն ընկ. Սիմոնի գլխա-
վորությամբ գալիս են:
- Գ ա լ Ո Ւ Ս Ս.—Կեցցե՛ կարմիր Լոսին... Կեցցե՛ խոր-
հրդային Վրաստանը...
Բ ո լ Ո Ր Ը.—Ուռուա՛... (Լսվում է կռիվը սկսելու ազ-
դանշանը):
- Գ ա լ Ո Ւ Ս Ս.—Ահա և ազդանշանը: (Խորփում հրացա-
նաճգուքյուն): Ընկերնե՛ր, կարմիր Բանակը թըը-
նամու դեմ Հարձակման դիմեց...
Բ ո լ Ո Ր Ը.—Կեցցե՛ կարմիր Բանակը...

Գ ա լ ու ս տ . — Դ ե առա՛ջ, ընկերնե՛ր... (Ինքը հրա-
ցանք ձեռքին վագում է առաջ. բոլորը նրան հետե-
վում են: Նրանք իսկույն դիրքեր են մտնում և
սկսում կրակել):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՏԱՍԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Քեմբը ներկայացնում է յերկաթուղու կայարանի մոտերքը: Յերկաթգծի վրա շարքով կանգնած են բնակվելու համար հարմարեցված մի քանի մարդատար հին վագոններ: Զմռան մուրք ու մռայլ գիշեր է: Խորքում լսվում են հրացանաձգութայան և քնդանոթաձգութայան խուլ ձայներ: Վրացի զինվորք հրացանը ձեռքին վագելով գալիս է, վագոնի դռան առջև կանգնում և դուռն անդադար ծեծում:

Տ Ե Ս Ի Լ 1

Զինվոր, կացիդածն և հետո վառն ու մի խումբ վրացի զինվորներ

Զինվոր.— *Ձերդ պայծառափայլություն... ձերդ պայծառափայլություն... տուն քանդվածը խորն ա քնել, չի լսում: Ձերդ պայծառափայլություն... Ձերդ պայծառափայլություն...*

Կացիդածն.— (Ներսից) Ո՞վ է:

Զինվոր.— Յես եմ, ձերդ պայծառափայլություն:

Կացիդածն.— Գնա՛, քունս մի՛ խանդարիբ, ամբողջ գիշերը չեմ քնել: Թողե՛ք հանգստանամ:

Զինվոր.— Ես տնաքանդը նորից քնեց: Ի՞նչ անեմ, թողնեմ հեռանա՞մ... Վո՛չ, թող վերջին անգամ իմ զինվորական պարաքս կատարեմ:

(Դուռը նորից ծեծում է):

Ձերդ պայծառափայլուն, կարեվոր լուր եմ բերել:

Կացիդածն.— *Կարևոր լուրերով դուք ինձ սպանեցիք: (Կիսահագնված, քնաքաքախ աչքերով դուրս է գալիս, դռան շեմքում կանգնում): Ասա՛ տեսնեմ՝*

ի՞նչ է պատահել. այս ի՞նչ հրացանաձգության ձայներ են, այս ի՞նչ կրակոցներ են:

Ձիմվոր.— Ձերդ պայծառափայլությո՛ւն, գինվորներն ապստամբվել են, նրանք Կարմիր Բանակի հետ միացած գնում են Թիֆլիզի վրա...

Կացիդավ.— Լռի՛ր, սրիկա՛: (Ապտակում է): Մյուս անգամ դու չհամարձակվե՛ս կրկնել: Գնա՛ ատրոյադ, հերթապահ սպային կանչի՛ր այստեղ...

Ձիմվոր.— Ձերդ դերագանցությո՛ւն, ատրոյադում վրչվոք չկա: Կարմիր պարտիզանները կամուրջը դրսովելու ժամանակ սպաներին և պահակներին ձերբակալել են: (Վաստն մի խումբ վրացի զինվորների հետ խորքում կանգնած խոսում է):

Կացիդավ.— Ինչպե՞ս թե ձերբակալել են: Ապա նրանք ովքե՞ր են: Դու չե՞ս տեսնում, ապո՛ւշ, վոր նրանք մեր գինվորներն են: (Դիմելով զինվորներին): Ինչո՞ւ համար եք դուք այդտեղ աննպատակ կանգնել: Դուք չե՞ք տեսնում, վոր ժողովուրդը մեր դեմ ապստամբվել է: Հարկավոր է նրանց դեմ կռվել և ապստամբությունը խեղդել: Ինչպե՞ս, դուք չե՞ք լսում ինձ և չե՞ք ուզում կատարել իմ հրամանը: Կրկնում եմ, իզուր ժամանակ մի՛ք վատնի, շտապեցե՛ք թշնամու դեմ կռվելու...

Վասու.— Նրանք մեր թշնամիները չեն. նրանք մեր յեղբայրներն են, նրանք մեր բնկերներն են... մեր թշնամին դուք եք և ձեր նմանները, վորոնց դեմ ահա գնում ենք կռվելու...

Կացիդավ.— Ա՛, այդ դո՞ւ յես, սրիկա՛, հայրենիքի դավաճան, յես քեզ տեղն ու տեղը կատակացեմ: (Ատրճանակով ուզում է խփել: Ձիմվորը նրա հետևից հրացանի կոթով խփում է և ատրճանակը ձեռքից վայր է գցում):

Ձիմվոր.— Ո՞ւմը կխփես, ո՞ւմը կսատկացնես, կնյաղի լակոս, շո՛ւն շան վորդի՛:

Վասու.— Վերցրե՛ք դրան, տարեք մյուսներին մտա:

(Կացիդածելին ծեծելով դուրս են տանում: Խոր-
ֆում ուռռանեոհ և կեցցեմերի աղաղակ):

Չ ա յ ն ե ր.—*Կեցցե՛ կարմիր ֆանակը...*

Չ ա յ ն ե ր.—*Կեցցե՛ն կարմիր պարտիզանները...*

Չ ա յ ն ե ր.—*Կեցցե՛ Սորհրդային Վրաստանը...
Ուռռա՛... ուռռա՛...*

(Յերածշտուրյուն և «Ինտերնացիոնալ» յերգի
ձայն: Գնացֆն սկսում է շարժվել):

Չ ի ն վ ո ր ն ե ր.—*Ցտեսություն ընկերներ...*

Չ ա յ ն ե ր.—*Ցտեսություն... բարի ճանապարհ...*

Չ ա յ ն ե ր.—*Հաջողություն...*

(Պարտիզանները գերիներին շրջապատած՝ բերում
են: Գերիների թվում են վալադյանը, Բոգեմսկին,
Բեժամ-բեկը, պրիստավը, Կացիդածեն, վրացի
սպաներ և դաշնակցական մաուգերիստներ):

Տ Ե Ս Ի Լ 2

Շամիլ, Յեմոֆ, Սահակ, Տիգրան, պարտիզաններ
և գյուղացիներ

Շ ա մ ի լ.—*Դենը կացե՛ք. ճանապարհ տվե՛ք, իշխա-
նավորները գալիս են: (Գյուղացիները միմյանց
հրելով և ծիծաղելով նանապարհ են բաց անում):*

Ս ի մ ո ն.—*Հիմա եստեղ սպասեցե՛ք, մինչև վոր ձեր
մատին կարգադրություն կստացվի:*

Չ ա յ ն ե ր.—*Ի՞նչ կարգադրություն, դրանց դատաս-
տանն եստեղ մենք ինքներս կանենք... (Գյուղացի-
ները հարձակվում են գերիների վրա: Իսկ Շամի-
լը նրանց յետ է մղում):*

Շ ա մ ի լ.—*Սպասե՛ք...*

Չ ա յ ն ե ր.—*Ի՞նչ սպասեք:*

Չ ա յ ն ե ր.—*Թողեք նրանց դուրսները ջարդենք, մար-
միները պցենք շների առաջ:*

Չ ա յ ն ե ր.—*Հերիք ա, ինչքան դրանք մեր կաշին պլո-
կեցին. մեր արյունը քամեցին...*

Յ ե մ ո ֆ.—*Սպասե՛ք, ես բռնավորների մեջ ծանոթ*

ոքսի՛ններ կլինեն... Թողեք նրանց վերջին անգամ տեսնենք... (Յերկար ժամանակ գերիներին նայում ե)։ Ես ու՞մն եմ տեսնում, հը՞, պարոն կոմիսա՛ր, չու՛լ ու փալասդ փորիդ տակն ա ընկել, եդ վո՞նց աքո բանը։ (Բոլորը ծիծաղում են)։ Ի՞նչ եք ծիծաղում. ծիծաղելու կարիք չկա։ Նա կամիսար մարդ ա, ձեռքին մի ժամանակ իշխանութ՛յուն կար, մի համարձակ խոսք ասելու համար նա իրավունք եր համարում մարդկանց ծեծել, բանտարկել, յերկրից վտարել։ Վա՛յ, կնյա՛ղ ջան, դու ե՞լ ես եստեղ, եդ ի՞նչպես ե պատահել... Խուզարկութան ժամանակ բալլեիկների տներում սրբեր ու հրեշտակներ եյիբփնտրում։ Յեթե հիշողութ՛յունդ դու չես կոբցրել, եդ հրեշտակներից մեկի թևերով հոգիդ ի վերին Յերուսաղեմ գնաց, բայց ափսոս, վոք նորից յես յեկավ։

Ե ա մ ի լ.— Հիմա մենք սրանց ենպես կուզարկենք, վոք ել հալիստյան յես չգան։

Ձ ա յ ն եր.— Հը՛, յես ձեր ավազակ հերն անիծեմ... (Հարձակվում են. այդ միջոցին ներս ե գալիս Գալուստը)։

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնք, Գալուստ և հետո Սիմոն և Մակար

Գ ա լ ու ս տ.— Սպասե՛ք, նրանք ավազակներ չեն, նրանք հոտավետ ծաղիկներից կաղձված փունջ են։ Յեվ եդ փունջը հարկավոր ե դնել ծաղկամանում և ապահով տեղ պահել, վոք թառամի։ (Բոլորը ծիծաղում են։ Սիմոնն ու Մակարը ներս են գալիս)։

Մ ա կ ա ր.— Սրանց ինչի՞ համար եք եստեղ պահել...
Ս ի մ ո ն.— Ես աղբը հարկավոր ա տանել, դեն ածել...

Ե ա մ ի լ.— Տանում ենք. կարգադրութ՛յունն արդեն ստացվեց։ Հոտավետ ծաղկի փունջ, դե՛, շարժվե՛ք առաջ։

Չ ա յ ն ե ր . — Դ ե ս յ ի ծ ա ղ կ ա մ ա ն ։

(Պարտիզանները գերիներին դուրս են տանում : Բոլորը հետևում են նրանց : Կամաց-կամաց արշալույսն սկսում է բացվել և իր վարդագույն շողերը սփռել ամենուրեք : Գալուստը կայարանում վագոնի աստիճանների վրա նստած՝ մտածում է : Անուշը դանդաղ քայլերով ներս է գալիս, Գալուստի մոտ կանգնում և նայում) :

Տ Ե Ս Ի Լ 4

Գալուստ և Անուշ

Ա ն ու շ . — Գ ա ղ ո՛ւ ս ա տ ջ ա ն , ի ն չ ի՞ մ ա ս ի ն ե ս մ տ ա ծ ու մ :

Գ ա լ ու ս տ . — Մ ա ա ծ ե լ ու հ ա մ ա ր մ ի թ թ ե ք ի՞ չ ի ն ղ ի ր ն ե ր կ ա ն . ն ս ա ի՛ ր , վ ա ղ ու չ ե ՛ մ ե ն ք մ ի ա ս ի ն չ ե ն ք ն ր ս տ ե լ և ա զ ա տ ու հ ա ն զ ի ս տ ս ր տ ով մ ի մ յ ա ն ջ հ ե ա չ ե ն ք խոսել :

Ա ն ու շ . — Բ ա յ յ ի ն չ ո՞ւ ա յ ս տ ե ղ , դ ն ա ն ք տ ու ն . . .

Գ ա լ ու ս տ . — Ի ս կ ո՞ւ ր է ա յ ղ տ ու ն ք : Մ ե ն ք տ ու ն չ ու ն ե ն ք . . . Ա մ ե ն ու ր ե ք ա վ եր ա կ ն եր ու փ լ ա տ ա կ ն եր ե ն . . .

Ա ն ու շ . — Ա մ ե ն ու ր ե ք ա վ եր ա կ ն եր ու փ լ ա տ ա կ ն եր ե ն . . .

(Յերկար լռություն) :

Գ ա լ ու ս տ . — Լ ս ի՛ ր , Ա ն ու շ , ա յ ն յ ե՞ ր ք եր , վ ո ր ք ե ղ հ ե ա ա յ ս ս կ ե ս մ ի ա ս ի ն ն ս տ ա ծ յ եր կ ու ս ո վ զ ր ու յ յ ե յ ի ն ք ա ն տ ա մ . . .

Ա ն ու շ . — Ե ն մ եր տ ա ն ք՝ դ ա ղ ա ն ի խ ո ր հ ղ ա կ ջ ու թ յ ա ն ա ո ա ջ ի ն ո ր ն եր . . . Դ ու ր ս ր թ ա խ ա ի վ ր ա ն ս տ ա ծ խոսում ե յ ի ն ք . . .

Գ ա լ ու ս տ . — Յ ե լ հ ի շ ո՞ւ մ ե ս , թ ե մ ե ն ք ի ն չ ի՛ մ ա ս ի ն ե յ ի ն ք խոսում :

Ա ն ու շ . — Հ ի շ ու մ ե մ :

Գ ա լ ու ս տ . — Դ ու ա յ ն տ ե ղ ի մ ա ո ա ջ ի ն չ վ ո ր մ ի պ ա յ մ ա ն դ ր ի ր . . . դ ու ջ ե ա յ ղ և ս դ ու հ ի շ ե ս . . .

Ա ն ու շ . — Հ ի շ ու մ ե մ . . . և կ ա տ ա ր տ ա մ ե մ ք ո ա ո ա ջ ա ղ ր ա ծ պ ա յ մ ա ն ք :

(Գրկում է ու համբուրում) :

Գ. Կ Ո Ւ Ս Մ. — Այժմ գնանք մեր քանդված, մեր ավերված տների փլատակերի վրա, քեզ հետ ձեռք—ձեռքի տված, մեզ համար նոր տուն կառուցելու, նոր կյանք ստեղծելու...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Վ Ն Ր Զ

„ԱԶՆԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ“


Պիես 7 պատկերով

Կոլխոզային կյանքից

Ղրիմ, 1929—30

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Ավետիք— գլխադիր հոգի նախագահ
2. Տիգրան— կոլխոզի նախագահ
3. Սերո— կոլխոզի բրիգադեր
4. Սահակ— կոլխոզի անդամ
5. Հրուշ— կոլխոզի անդամ
6. Սաման— կոլխոզի անդամ Սահակի կինը
7. Նարգիզ— կոլխոզի անդամ Սերժոյի կինը
8. Զմբուլտ— կոլխոզի անդամ Տիգրանի կինը
9. Մարգար— չքավոր գյուղացի
10. Դանել— նախկին ունևոր
11. Գարասիմ— նախկին խանութպան
12. Տերտեր
13. Հեղինա— Դանելի կինը
14. Յեղոս— Դանելի աղջիկը
15. Շմո— մեծահասակ



ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Քեմք մերկայացնում ե կալստեստուք-յամ դաշտը-կալտեստեսակամները յերգելով աշխատում եմ, իսկ Դամելը, Գարասիմն ու տերտերը հեռու կամզմած՝ միմյանց հետ խոսում եմ:

Տ Ե Ս Ի Լ 1

Գարասիմ.— Այգիս կոլխոզի սահմաններին շատ ե մտա, անիրաջները ձեռքիցս խլելու յեն:

Դամել.— Իմ այգին վոր հեռու յե, դու կարծում ես չե՞ն խլելու. խլելու յեն: Աչքի ընկնող այգիները, յամ մշակած հողամասերը սրանք վերցնելու յեն՝ կենտրոնացնեն իրենց ձեռքում, իսկ անպետք ու անմշակ հողերը տան մեզ:

Տերտեր.— Տալիս են, վոր մշակենք, հետո դան՝ նորից ձեռքներիցդ խլեն:

Գարասիմ.— Ուշացել են: Այգուցս ձեռք կբաշեմ, կչարացնեմ, ծառերը կկտրեմ, վառելափայտ կշինեմ, դե՛ թող կենտրոնացնեն:

Դամել.— Իսկ անասունները. կոլխոզն անասունների կարիք ե զգում: Նրանք առաջին հերթին անասուններն են մեր ձեռքից խլելու:

Գարասիմ.— Ի՞նչ ես ասում. աչքերս բաց յես նրանց անասուն կտամ: Վաղվանից բոլորը կմորթեմ, միտը կզցեմ շների առաջ, նրանց վոչինչ չեմ տա: Սրանց տեսեք...

Դամել.— Դրա մասին նրանք առաջուց մտածած ե միջոցներ ձեռք առած կլինեն, նրանք քնած յեն:

Տերտեր.— Ջուրը չհասած դուք արդեն բորկանում եք. սպասեցե՛ք, դուցե ասածու վողորմածությունը հասնի, մաքերը փոխեն:

Դ ա ն ե լ .— Դ ու ե լ բ ան ե ս աս ու մ . հ ու յ ս ն եր ս վ ո Ր
աս օ ծ ու վ Ր ա դ ն ե ն ք լ ա ղ հ ա ց ի կ ա ի ր ա ն ան ք . ե դ
բ ար ի խ ո Ր հ ու ը դ ն եր ը պ ա չ ի Ր ք ե դ հ ա մ ար : Ա ՚ յ
մ ար դ , բ ա դ ու ե ս ա շ խ ար հ ք ի ց ը չ ե օ , դ ու չ ե օ
տ ե ս ն ու մ Է Ե ս ա ե դ ի ն չ եր ե ն կ ա տ ար վ ու մ :

Գ ա ր ա ս ի մ .— Մ ե դ ա դ ր ե լ ու չ ի , յ ե կ ե դ ե ց ու մ շ ար ու ն ա կ
ս ր բ ր ի հ ե տ ե դ օ Ր ծ ու ն ե ց ե լ :

Դ ր ան ց ը ս ա յ եր կ ու յ թ ի ն լ ա ղ չ ե ս ճ ան ա շ ու մ :
Լ ս ի ր , ն ր ան ք մ ար ք ն եր ու մ ը վ ո Ր դ ր ի ն , տ ա ս ը հ ա
զ ար աս ս լ ա ծ ե լ վ ո Ր յ եր կ ն ք ի ց ի շ ն ի , մ ի ն ն ու յ ն ե
ն ր ան ց մ ի ա ք ը չ ի փ ո խ վ ի , ն ր ան ք ի ր ե ն ց վ ո Ր ո շ ու մ ը
կ ա տ ար ե յ ու յ ն ն : (Ս ա հ ա կ ի Ր շ ա ա ղ գ ա լ ի ս Ե) :

Տ Ե Ս Ի Լ 2

Ն ու յ ն ք և Ս ա հ ա կ

Ս ա հ ա կ .— Ա դ ու ա վ ն եր ը հ ա վ ա ք վ ե լ ե ն , տ ե ս ն ե ս ե լ
ի օ ն չ պ լ ա ն ի ն ք ա շ ու մ : (Ու զ ու մ ե գ ն ա լ) :

Դ ա ն ե լ .— Ս ա հ ա Կ բ ի ծ ա , ե դ օ Ւ Լ ր ե ս ե դ պ ե ս վ ու ա դ
դ ն ու մ :

Ս ա հ ա կ .— Ա շ խ ա տ ան ք ի . Ե ս ո Ր յ ե ս մ ի ք ի չ ու շ ա ց ե լ
Ե մ :

Գ ա ր ա ս ի մ .— Ա ՚ յ մ ար դ , դ ու ն օ Ր ի ց խ ար վ ե ց ի օ Ր :

Դ ա ն ե լ .— Մ ի ա մ ի ա մ ար դ ը , ա մ ե ն Ժ ա մ ան ա կ ե լ կ ը
խ ար վ ի : Վ ա դ ը մ յ ու ա օ Ր ն ու ն ե ց ա ծ — չ ու ն ե ց ա ծ ը
ձ ե ու ք ի ց ը դ ու ը ս կ զ ա , ե դ Ժ ա մ ան ա կ մ ի ա յ ն կ հ ա ս
կ ան ա :

Ս ա հ ա կ .— Դ ու ա ս ե լ ու բ ան չ ու ն ե օ ս :

Տ ե ր տ ե ր .— Մ ո լ յ ո Ր վ ա ծ մ ար դ կ ան ց խ ո Ր հ ու ը թ ա լ ու
հ ա մ ար յ ե ս մ ի շ ա պ ա տ ր աս տ Ե մ : Ս ա հ ա Կ բ ի ծ ա ,
կ ո մ ու ն ի ս տ ն եր ի ն դ ու շ ա ա մ ի Է հ ա վ ա տ ա : Ե դ կ ո լ
խ ո դ — մ ո լ խ ո դ ը դ ա տ ար կ բ ան ա : Կ ո լ խ ո դ ի մ ա հ ան ո վ
ն ր ան ք հ ա շ ի վ ե ն ա ո ն ու մ , տ ե ս ն ե ն օ Ւ վ ի ն չ ու ն ի ,
վ ո Ր ն ր ա հ ա մ ա ձ ա յ ն ե լ տ ու ը ք ն ա վ ե լ ա ց ն ե ն :

Դ ա ն ե լ .— Բ ա ց ի դ ր ան ի ց , դ ու ա շ խ ա տ ա վ ո Ր մ ար դ ե ս ,

կոլխոզում ի՞նչ գործ ունես. կոլխոզնիկներն ընդ-
հանրապես ծուլլեր են, նրանք մի որ աշխատում
են, տասն որ քնում:

Տ եր ս եր.— Արդար խոսք ա. վորքան ծուլլ ու ան-
պետք մարդիկ կան՝ ընդունվել են կոլխոզ: Խելքը
դլխին, աշխատավոր, գործունյա մարդ կոլխոզում
դու չես տեսնի:

Գ ա ր ա ս ի մ.— Տո՛, ջա՛նրմ, նրանք գործ անող չեն,
նրանք հույսները դրել են մեքենաների վրա:

Դ ա ն ե լ.— Մեքենայի արած գործը ի՞նչ պետք է լինի,
մի ժամ կաշխատի, յերկու որ կկանգնի, իսկ կոլ-
խոզի լողերն էլ հո եղպես մի բանի յեն սպա-
սում. գործը թողնեն, յերեսները շուռ տան, ամեն
մեկը մի կողմի վրա գնան:

(Հեռվից լսվում է յերգի ուժեղ ձայն):

Ս ա հ ա կ.— Վերջացրի՞ք, դե հիմի նրանց թամաշա
արե՛ք. համ յերգում են, համ աշխատում: Տես-
նում ե՞ք՝ ինչ սրտով կպել են աշխատանքի: Մեծ-
պատիկ, տղամարդ ու կին միասին գործ են ա-
նում... նրանք իրենց համար եղպես չեյին աշխա-
տում: Եղ աշխատանքը զուր չի անցնի:

Դ ա ն ե լ.— Եղ քյամանչի ձայնը դու հետո՛ կիմանաս:
Մինչև վերջ նրանք իրար հետ եղպես սիրով չեն
մնա. վաղը մյուս որը շուն ու կատու յեն դառնա-
լու՝ իրար միս ուտեն:

Ս ա հ ա կ.— Կապրենք, կտեսնենք...

(Սահակը գնում է):

Գ ա ր ա ս ի մ.— Գնա՛՛ տեսնենք քա՞նի որ ես դու եղ
խելքին մնալու: Բուլլեիկները սուտ չեն ասում,
վոր միջակները տատանվող տարր են:

Եղ տունը քանդվածը յերկու որվա ընթաց-
քում տասներկու անգամ միտքը փոխեց:

Դ ա ն ե լ.— Են կնանիքը դեսն են դալիս, քաշվենք մի
կողմ, մեզ չտեսնեն:

(Յերբեմով գնում են):

Նարգիզ, հետո Հրուշ և Սաճաճ

Նարգիզը յերեխամ գրկած՝ գալիս է, ծառի տակ
Յստում և սկսում յերեխայիմ ծիծ տալ:

Հրուշ.— (Նամակ կարդալով՝ Սաճաճի հետ գալիս
է):

«Կուլակները գիշեր-ցերեկ կոլխոզը քանդելու մա-
սին են մտածում: Արթուն կացե՛ք, կոլխոզը լալ
պահե՛ք»:

Սաճաճ.— Քաղաքում նստած, կոլխոզի մասին աս
մտածում, յերևում աս, վոր խելոք տղա յա:

Հրուշ.— Սելոք վոր չլիներ, յես նրան կսիրեյի՞:

Նարգիզ.— Աղջի՛կ, դու եղ քանի՞ մարդ ես սիրում.
բա ասում են՝ Յեզորանց Ռուստամի տղեն քո վրա
աչք աս դրել, ու ես գիշեր ձեր տուն նշան են բերե-
լու:

Հրուշ.— Քաղաքից ինչ նա յեկել է՝ յես նրա յերեսը
մինչև անդամ չեմ տեսել:

Նարգիզ.— Դու չես տեսել, իսկ տեսնողը տեսել ու
հավանել աս:

Հրուշ.— Հարկավոր է, վոր յես ել տեսնեմ, տեսնե-
լուց հետո գուցե յես նրան չեմ հավանում:

Սաճաճ.— Եղ մեկը դու ներողութուն կանես, ծնող-
ներդ բա իլ ինչացո՞ւ յեն, վոր քեզ ուզող տղին
դու պետք է տեսնես ու հավանես: Նրանք քեզ պա-
հել-մեծացրել են, վոր յերբ ուզողներ դուրս դան,
կոնիցդ բռնած նրանց հրամեք անեն, վերջանա
դնա: Ըսինց աս մեր աղաթը:

Հրուշ.— Հա՛. Հա՛. Հա՛ եղ աղաթներով չեն շարժ-
վում հիմա: Ամուսնական խնդիրը մեզ մոտ հիմա
փոխադարձ սիրո վրա յե հիմնված, հետևապես մեր
ծնողները, մեզ ուզող տղաներին իրենց համաձայ-
նութուն տալուց առաջ, մեր կարծիքը պետք է
հաշվի առնեն:

Նաբգիգ.— Հետաքրքիր աս, եղ խելոք ու իմաստուն մտքերը դու վո՛րտեղ ես սովորել:

Սաճամ.— Ժողովներում, ել ուրիշ վո՛րտեղ պետք ե սովորի:

Հրուշ.— Ժողովներումն ել կարելի յե սովորել, դըպրոցներումն ել, թատրոններումն ել, յերեկույթներումն ել ու ամեն տեղ: Խորհրդային իշխանությունը սովորելու համար բոլոր պայմաններն ստեղծել ե, ցանկացողները կարող են սովորել, յեթե չեն ուզում ձեզ նման տգետ ու խաղար մնալ:

Նաբգիգ.— Լուսավորված ջանիդ մեռնեմ, ենքան լուսավորվել ես, վոր ուրիշներին ել չես հավանում: Հողս գլխիդ: Քանի դու եղ կուրսերը չեյիր գնացել, խելքը գլխիդ, նամուսով ու արուսով աղջիկ եյիր, հիմա արդեն խելքդ գլխիցդ թռել աս, բերանիդ կապը կտրվել: Կոմսոմոլ յեղաք, գլխներիս կրակ ու պատիժ դառաք: Հեռներդ կտոսել չի ըլում: Մի խոսքին տասը ջուղար եք տալիս:

Սաճամ.— Կոմսոմոլները տեսնես բոլորն ել սրա նման են:

Նաբգիգ.— Դրանք բոլորն ել մի թուփից կտրված, մի դալիբից դուրս յեկած ապրանք են: Հողս դրանց գլխին, դրանց վորին վոր խոսացնես, սկսելու աս ճառի, ա՛յ խորհրդային իշխանությունն եսնց աս, եննց աս, Հոկտեմբերյան Հեղափոխությունը մեզ ազատություն տվեց, տղամարդկանց հետմինք ել հավասար իրավունք ունենք, պետական ու հասարակական գործերում մենք ել պետք ե մասնակցենք, ժողովներում մենք ել պիտի դուրս գանք ու խոսենք:

Հրուշ.— Հա՛... հա՛... հա՛... լայ ես սկսել, շարունակի՛ր:

Նաբգիգ.— Ի հարկե վոր կշարունակեմ. կուրսեր վոր չեմ գնացել, դու կարծում ես՝ բերանումս լեզու չկա՞: Տասը քեզ նմաններին կտանեմ ջուրը, ծարավ յես կբերեմ. խելքդ ո՞ւր աս գնում: Քո իմացած են լորի ուսանողներից չեմ: Հողս գլխիդ,

գեղի աչքը Յեզորանց Ռուստամի վրեն ա, իսկ սա կանգնել նազ ու տուղ ա անուս ու փոխադարձ սիրո մասին ա ճառում:

Հ ր ու շ . — Հ ա ' . . . Հ ա ' . . . Հ ա ' . . .

Ն ա ր գ ի գ . — Ի ն չի՞ յես ծիծաղում: Ի՞նչըս ա պակաս. հողս խելքիդ, Յեզորանց Ռուստամի տղին ա' ու, վոր հարուստ տուն ա, լիքը ոջախ. կե'ր, խմ'ի, քե՛ֆ արա'. իսկ Ոհանեսը չքավոր տղա յա, նրա ելած-չելածը վոր բարձես մի աքլորի վրա՝ կտանի:

Հ ր ու շ . — Ի՞նչ անեմ, վոր դու եղպես ես հասկանում: Սանամ մոքիբ, լսիր տես՝ Ոհանեսը ի՞նչ ա դրում: (Կարդում է):

«Հրո՛ւշ ջան, ես յեկող ամսի 15-ին հերթական արձակուրդս կստանամ ու կգամ, կոլխողում քեզ հետ միասին կաշխատենք. . . իսկ հիմա չեմ կարող, վորովհետև մեր դորձարանի բանվորներն եքսկուրսիա յեն գնացել և դեռ չեն վերադարձել:

Հրո՛ւշ ջան, քեզ համար մի քանի մետր լայ դերբիացու յեմ առել, ես մտաիկ որբերս յեկողի ձեռքով անպատճառ կուղարկեմ»: (Շարունակում է կարդալ մտքում):

Ս ա մ ա մ . — Եդ քոռ բախտը հենց իմ քվոր աղջկա համա՞ր եր կտրվել: Պեղճ աղջիկը յերկու տարի ա նշանված ա, մի հասարակ չի՞ր դերբիա ել չունի թե հազնի:

Ն ա ր գ ի գ . — Նշանածը քաղաքումն ա, գրի՛, թող ուղարկի. հողին դուքս չի գա:

Ս ա մ ա մ . — Ունի՞, վոր ուղարկի:

Ն ա ր գ ի գ . — Դե վոր չունի, ինչո՞ւ յեր նշանվում, հողս նրա գլխին, դուք ել կասե՛ք՝ աղբի մեջ մարդարիտ ենք ճարել:

Հ ր ու շ . — Եդ խոսքը դու չպետք է ասելիբ, նրա նշանածը թողակով ապրող չքավոր ուսանող տղա յե, նրա միջոցները չեն ներում, վոր առնի ուղարկի:

Ն ա ր գ ի գ . — Ա՛խ, եդ չքավորութունն աշխարհիս յերեսիցը վերանար՝ լայ կլիներ: Աղջիկ ժամանակս

ել չբալորելի, ինչի՞ նման էր, կյանքումս մի լավ
որ չտեսա: Մտածեցի՝ կամուսնանամ կրախտա-
վորվեմ: Լա՞վ բաղդալորվեցի: Մարդ ու կնիկ
ամբողջ որը չարչարվում ենք, բալբի թե մենք ել
ունեվոր կյանքի տեր դառնանք...

Հրուշ.— Ա՛յ, եղ մեկը դու ճիշտ ասեցիր:

Նարգիզ.— Յես ամեն ինչ ել ճիշտ եմ ասում, բայց թե
ձեռքս պակաս ա, խոսքս բանի տեղ չեք դնում:
Ես երեխեն ինչ ա հակառակվել: Ե՛հ լակոտ, դե
քնի՛, է՛լի, միտս կերար. առանց են ել վրաս խո-
սում են. ասում են, վոր Սեթոյի կնիկը կոլխոզում
դործ չի անում, ամբողջ որը ծառերի հովում
նստած՝ յերեխա յա պահում:

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք, Սեքո, Սահակ, Տիգրան և Ավետիք

Սեքո.— (Տիգրանին) Ինչպես յերևում ա, դու չես
ուզում, վոր քեզ քննադատեն:

Տիգրան.— Դուք ել ձեր քննադատությունով իս-
տակ համը հանեցիք: Չհարումար դառնա, եղ
քննադատության աված՝ ողուար չտեսնաք, իսկ
վնասն՝ ինչքան ուզես: (Ավետիքին) Ավետի՛ք,
դնանք...

Սահակ.— Սպասե՛ք. ո՞ւր եք գնում, են կիսատ մնա-
ցած դործն ել կվերջացնենք՝ հետո:

Սեքո.— Կիսատ մնացած՝ դործն ել կվերջացնենք,
ուրիշ դործ ել կսկսենք, դեռ որ շատ կա:

Տիգրան.— Վնաս չունի, որ շատ կա. դուք աշխա-
տեք, գրասենյակում ստորագրելու թղթեր կան,
յես պետք ե գնամ՝ ստորագրեմ:

Սահակ.— (Մի կողմ) Սա դործից փախչելու նշան
ա:

Սեքո.— Եղ ստորագրելու թղթերը գրասենյակից
չեն փախչում: Յերեկոյան գնալուց՝ կստորա-
գրես: Իմ բրիզազից ետք շատ քիչ մարդիկ են

յեկեւ, մնացե՛ք, դուք եւ մեզ հետ աշխատեք, վոր կարողանանք կենտկոմի հրահանգի համաձայն նշանակված ժամկետին աշխատանքները վերջացնենք:

Տիգրան.— Յենթադրենք, թե չվերջացրինք. դրանով հո աշխարհը չքանդվից. մի յերկու որ եւ նշանակված ժամկետից ուշանա, ի՞նչ կա վոր:

Սեբո.— Դու եղ ի՞նչ տեսակ ես խոսում. կենտկոմի հրահանգն ուրեմն քեզ համար նշանակութուն չունի՞:

Տիգրան.— Կենտկոմի հրահանգն իր տեղում, բայց մեր ինքնուրույնութիւնն եւ մենք չպետք ե կորցնենք և ամեն ժամանակ տառակերությամբ դրադվենք. այդ՝ առաջինը. իսկ յերկրորդն եւ, ո՞վ ա իմացել, վոր կոլխոզի նախագահը ձեզ հետ համասար դա աշխատի:

Քնլորը.— Ուրեմն նախագահը չպե՞տք ե աշխատի:

Սեբո.— Ես խալիբը քո հոր նոքարն եմ. նրանք աշխատում են, դու եւ պարտավոր ես աշխատելու, դու պարտավոր ես աշխատելու դու վերի արտի ծաղիկը չես, դնենք առաջներս՝ հոտ քաշենք:

Նարգիզ.— Դու նախագահ ես, լայեղ չես անում, իսկ ինչո՞ւ թույլ չես տալիս՝ կինդ գա աշխատի: Յերեւի վախենում ես մաշվի, կոները բարակի՞մի՛ վախենա, չի մաշվի, կոները չի բարակի: Խանում—խաթունի նման տանը պարսպ—սարսպ ենքան նստել ա, վոր քառասուն փթանոց խող ա դառել:

Տիգրան.— Ով խոսում ե՛ Վսոսա, գոնե դու մի՛ խոսա: Կոլխոզի համար դու ամենեւին գործ չես անում. ամբողջ որը նստած՝ յերեխեղ ես պա՛հում:

Նարգիզ.— Իմ յերեխան ե՛ պիտի պահեմ, բա հո դեն չեմ գցելու: Դու յերեխա չունես, յերեխա ունեցողների գրության մեջ չես մտնում: Թող կնիկըդ գա՛ յերեխաս պահի, յես՝ գնամ ձեր յերկսի չափ գործ անեմ: Հողս ձեր լողբ դլխին:

Տ Ի Գ ր ա Յ .— Ձեռք կտրի՛ր, թե չե... (Ուզում ե
խփել) :

Ս Ե ք ռ .— Դի տղա յես՝ փորձի... :

Ս ա հ ա կ .— Քամանչու ձենն արդեն լավում ա, վե՛ր
կաց, կնի՛կ... :

Ա վ Ե տ Ի Բ .— Սահակ բիճա, դու ինչի՞ համար ես
դնում, քեզ հո բան չասեց, վոր նեղացար :

Օ ա հ ա կ .— Ասելն ինձ հարկավոր չի, ա՛յ, սրանց
ասե՛ք, վոր շուն ու կատու յեն դառել, իրար միս
են ուտում : Ա՛յ, նրան ասե՛ք, վոր առավոտվանից
կանգնած՝ նամակ ա կարդում, ա՛յ, նրան ասե՛ք,
վոր տնից, ինչ յեկել ա ծառի տակ նստել՝ յերե-
խա յա պահում :

Հարամ ըլի ըսենց կոլխողի աշխատանքը : Գը-
նա՛նք, ա՛յ կնիկ : (Գնում են) :

Հ ր ու շ .— Մեր կոլխողում դեկավարութունը բացա-
կայում ե : Յեթե եղպես շարունակվի, մեր կոլխո-
ղը կքանդվի : Իմ նամակ կարդալը յեթե վորեկ
փնաս հասցրել ե, այդ մեղավորութունը յես
վերցնում եմ ինձ վրա... բայց ես կոլի պատ-
ճառը բոլորովին եղ չի, հիմնական պատճառը
մտուր շունենալն ե... մտուրի խնդիրը հարկավոր
ե լուծել :

Տ Ի Գ ր ա Յ .— Դպրոցի համար՝ կառուցվող նոր շենքի՛
ներքեի հարկը հատկացված ե մտուրին :

Ս Ե ք ռ .— Հատկացնելը բավական չի, մտուրը կազ-
մակերպելու համար դուք գործնական վոչինչ չեք
անում : Յերկու քոստոս դերանի համար եղ խնդի-
րը յերկու ամիս ե՛՛ ձգձգվում ե : Եղ զահրումար
դերաններն ել հո արտասահմանից չենք ստա-
նալու : Անտառում ինչքան ասես ծառեր ունենք,
գնանք կարենք բերենք, դպրոցի շենքը չինենք
վերջացնենք : Դրանով մտուրի գործն ել կլուծվի :

Տ Ի Գ ր ա Յ .— Ուրեմն յեթե ուշանում ա, մեղավորը
յե՞ս եմ :

Ս Ե ք ռ .— Իհարկե, վոր դու յես. յեթե շնորհք չունես
գործ անելու, հեռացի՛ր, թող մի ուրիշ մարդ

հատու՞մ ես. ճիշտ ե, կուսակցական ես, բայց
դեռ գյուղխորհրդի դերն ու նշանակությունը չես
հասկանում, ուրիշ տեղ ել եղ խոսքը կասես,
վրեղ կծիծաղեն, ամոթ ա:

Ս ե Բ ռ.— Ամոթը են ե, վոր մեր կոլխոզը ձեզ նման
ղեկավարներ ունի, ուրեմն ձեր կարծիքով գյուղ-
խորհուրդը առանձին կտրված մի մարմին ե, վո-
րը կոլխոզի հետ բուրբուլին կապ չունի:

Ա վ ե տ ի ք.— Տես ի՞նչ ա ասում: Ես մարդը մինչև
անդամ կոլխոզի ու գյուղխորհրդի ֆունկցիաներն
ել չի հասկանում:

Տ ի գ ր ա մ.— Գնանք, ի՞նչ ես դրա հետ գլուխ դնում:
Դրա հասկացողության մակարդակն ել եղ աստի-
ճանի վրա յա: Նրանից ի՞նչ ես պահանջում:

(Տիգրամն ու Ավետիքը գնում են):

Ս ե Բ ռ.— Դե արի ու ես տեսակ մարդկանց հետ աշ-
խատիք. թ՛ու՛ ձեզ մարդ ասողին...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմք ներկայացնում է գյուղի փոքրիկ հրապարակը: Յեղիու կողմից փողոց: Խորքի ձախ անկյունում նւրակառույց աղբյուրը: Դիմացի նախատում յեղիու հարկանի տուն: Դեպի փողոց նայող առանձին դուռ և լուսամուտներ: Տան վերին հարկում բնակվում է Տիգրանը, իսկ ներքևի հարկում՝ Սահակը: Յերեկոյն յե:

Տ Ե Ս Ի Լ 1

Նարգիզ, Հրուշ. և Զմբուխտ

(Կուժը դրած՝ խոսում են):

Զմբուխտ.— Աղջիկ, չի թողնում, թե վոսս տնից դուրս դնեմ, դուրս դամ՝ ինձ համար մի ազատ շունչ քաշեմ: Առավոտը լուսանում ա, ամենքը դնում են աշխատանքի: Գործից վերադառնալուց հետո լիկկայան են դնում, դրել-կարդալ են սովորում, իսկ յես մնացել եմ անդրադետ: Իմ անդրադիտությունը ամեն անգամ յերեսուլս ա տալիս:

Հրուշ.— Եդ դեպքում ի՞նչու թույլ չի տալիս լիկկայաննիքը գնաս՝ քո անդրադիտությունդ վերացնես:

Զմբուխտ.— Նրան մարդ չի հասկանում: Գոնե թույլ տա դնամ աշխատանքի, տանը ամբողջ որը պարապ նստելով՝ սիրտս մաշվում ա:

Նարգիզ.— Ուրեմն դու ուզում ես դնաս աշխատանքի, իսկ նա թույլ չի տալիս:

Զ մ ր ու խ տ.— Ի հարկ ե: Ասում ա՛ զու աշխատանքը ինձ հարկավոր չի: Յես, ասում ա, կաշխատեմ, իսկ դու տանը նստի, յերեխանց պահի, նրանց մաքրությանը հետևի, նրանց սննդի մասին մտածի. և սա, ասում ա, քիչ աշխատանք չի. և դու ել դործի ելությունը չիմացած, կոլխողնիկների առաջ՝ դուրս ես դալիս ու ինձ անպատվում:

Ն ար գ ի գ.— Դրա համար յես ներողություն եմ խընդրում, աղչի՛, դե յես չեմ իմացել:

Զ մ ր ու խ տ.— Քու սխալն ել հենց դրանումն ա: Դուք դուրսը աշխատանքի ժամանակ եք միայն միմյանցով հետաքրքրվում, իսկ թե ի՛նչ ա կատարվում տան ներսում, դրանով չեք հետաքրքրվում: Մի որ յես նրանից քաղցր խոսք չեմ լսել: Նրանից ընկերական վերաբերմունք յես չեմ տեսել: Բայց յերբ վոր նրա սխալմունքների մասին խոսում եմ, բարկանում ա և սկսում ա ինձ ծեծել... (Արտասվում ե): Ամաչում եմ և վոչ վոքի վոչինչ չեմ ասում... Վախենալուցս, պատահել ե, վոր գիշերները հարևանների շեմքումն եմ լուսացրել:

(Կուծը վերցնում ե ու տուն գնում):

Հ ր ու շ.— Խեղճ կին: Դրա համար հարկավոր ե լուրջ մտածել և միջոցներ ձեռք առնել:

Ն ար գ ի գ.— Դու սրանից հետո տես իդ կոլխողի նստադահ կոչվածին ինչ խոսքեր եմ ուտացնելու: Ժողովներում յես նրան են որը կանգնացնեմ, վոր կուստոմսը մտարերի ու յերկու տակ կարմրի: Հոգս դրա դիտին, յերևում ա, վոր նրա ձեռին ես կինը պանջվում ա:

Հ ր ու շ.— Գլուխս տանում են, թե ինչո՛ւ չես ամուսնանում: Ես տեսակ ամուսնական կյանք տեսնողը ամուսնանալու մասին ել կարո՞ղ ա մտածել... պա՛, պա՛, պա՛, չեմ ուղում, ամսոս չի՞ ազատ կյանքը: Մարդ գնա, կամավոր կերպով իր ազատությունը հանձնի ուրիշին, յերբե՛ք:

Նարգիզ.— Չեմ ուզումը գրպանս դիր. ուզող աղաները ձեր դուռը հենց վոր սկսեն ծեծել՝ ուրախությունից չորս վտաքով ես նրանց գիրկը ընկնելու, հողս գլխիդ:

Հրուշ.— Դրանք դատարիկ խոսքեր են: Եղ կնոջը, իմ կարծիքով, պետք ե ոգնել: Ոնդիրը դնել բջջի նիստում. կուտակցական գծով Տիգրանին հույտալ: Ընտանեկան կենցաղի հարցերի մասին պատի թերթում գրել: Հասարակական պարտավանքի արժանացնել. . .

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնի, Յեղսոս և Սամսո

(Յեղսոսն կուծն ուսին գալիս ե և ուզում ե քուր լցնել, Նարգիզը խանգարում ե):

Նարգիզ.— Կուլակի՛ աղջիկ, դենը քաշվի՛:

Յեղսոս.— Պատճա՞ռը:

Նարգիզ.— Պատճառը կարևոր չի, վոր դու իմանաս: Ասում եմ՝ դե՛նը քաշվի, թե չե կտամ կուժըդ կկոտրեմ, ես աղբրից ջուր խմելու դուք իրավունք չունեք: Հրեն առվի ջուրը, գնացի՛ք, ինչքան ուզում եք՝ խմե՛ք:

Յեղսոս.— Ինչի՞ դու եղ առվի ջրից չես խմում:

Նարգիզ.— Յես շատ եմ խմել. հիմա հերթը ձերն ա.

Յեղսոս.— Կատաղել ես, հետդ խոսալ չի լինի: Արի լցրո՛ւ: (Կուծը վերցնում ե, քաշվում մի կողմ):

Նարգիզ.— Կատաղածը քո հերն ա, վոր սաղ որը պատերի տակ նստած՝ սրա նրա վրա յա խոսում: Կոլխոզը վորոշել ա, ձեր խարարա ջրաղացի չենքը վերցնել, կոլխոզի համար սղոցարան չինել: Դրա համար հերդ լաչառ կնգա նման արդեն սկսել ա ձենը արար ալխարհ բարձրացնել, կոմունիստները, ա՛յ, քանդեցին, ա՛յ, թալանեցին. . . իսկ ինքը վոր քանդում-թալանում եր, եղ վոչինչ:

- Նարգիզ.— Անկեղծ եմ ասում, մտածել եմ, վոր
 փողոցով անցնելու ժամանակ կարից մի մեծ քար
 գցեմ, հորդ գլուխը ջարդեմ:
- Յեղսո.— Ձեզանից ամեն ինչ սպասելի յա: Սուրն
 ել ա ձեր ձեռքին, թուրն ել:
- Հրուշ.— Իսկ դու կարծում եյիր, վոր եդ սուրն ու
 թուրը միշտ ձեր ձեռքին ե մնալո՞ւ:
- Յեղսո.— Մեկը դեռ չվերջացրած, մյուսն ա սկը-
 սում: Ինչքան կամենում եք, խոսացե՛ք: Միևնույն
 ա, յես ձեզ չեմ պատասխանելու:
- Հրուշ.— Նշանակում ե, վոր դու արդեն զինաթափ
 ես լինում:
- Սաճամ.— Ենքան խոսացիք, վոր աղբրի ջուրը
 սկսեց բարակել:
- Նարգիզ.— Սրանց մեղն ա: Հողս սրանց գլխին:
- Հրուշ.— Ծիշտ ե, վորպես դասակարգ սրանք յերբ
 վոր կվերանան, իս աղբյուրի ջուրն ել կվարարի
 ու ամեն ինչն ել...
- Յեղսո.— Ես տեղ քանի նստեմ՝ դուք շատ բան կա-
 սեք. ավելի լավ ա դնամ: Հողս ձեր գլխին: Մի
 կուժ ջուրն ել գլխներիս հարամում եք...
 (Դատարկ կուժը ձեռքին դուրս ե գնում, իսկ
 Նարգիզն ու Հրուշը ծիծաղում են):

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնի և Սահակ

(Սահակը տնից դուրս ե գալիս):

- Սահակ.— Ես կնիկը ինձ ասում ա՝ տանը նստի՛, ին-
 չըր դուրս ա գնում ու ժամերով կորչում: Հրեն
 աղբյուրներում նստած՝ մասլահաթ ա անում,
 բռնեց ել գիտեյի:
 (Դռան առաջ քարի վրա նստում ե և իր չիբուխը
 լցնում):

Ս ա ն ա մ .— Կոմունիստների աղբաթը խեղ լինի: Մեծ վարձք արին, վոր ես գեղի աղբյուրը շինեցին: Եսքան տարի են կեղտոտ ու պղտոր առվի ջուրը խմելով՝ հողիներս դուրս յեկավ:

Ն ա ր գ ի գ .— Միջակի՛ կնիկ, հարցնելը ամոթ չլինի, եդ յերբվանի՞ց ա, վոր դուք կոմունիստների արածները սկսել եք հավանել: Առաջ կոմունիստների արածները ձեր աչքին ծուռ եր յերևում:

Ս ա ն ա մ .— Մարդդ կոմունիստ չլիներ, եդ խոսքը դու չեյիր ասի:

Ն ա ր գ ի գ .— Դու ել բան ասիր: Եստ ել վոր իմ մարդը կոմունիստ ա, ես աղբյուրը հո մենակ նա՛ չի շինել: (Կծերը վերցնում են: Սանամբ գալիս է իրենց տուն, իսկ նրանք գնում են մյուս կողմը):

Տ Ե Ս Ի Լ 4

Ս ա ն ա մ և Ս ա հ ա կ

Ս ա հ ա կ .— Աստված հաջողի, վոր մեկ ել գնաս, յե՞րբ կգաս:

Ս ա ն ա մ .— Ա՛յ մարդ, դե յես մեղավոր չեմ:

Ս ա հ ա կ .— Իհարկե դու մեղավոր չես: Մեղավորը ախպուրն ա: Ժողովատեղի քիչ կար, եդ մեկն ե՛լ ասվելացավ: Աչքներս լո՛ւյս: Քանի եդ զահրուժար ախպուրը չկար, կուժը տանում եյիք տալիս առվի տակովը, լցնում ու յերկու բոպեյում տուն գալի, հմի վոր գնում եք, յերկու ժամ ա տևում:

Ս ա ն ա մ .— Ջուրը բարակել եր, նրա համար ուշացա:

Ս ա հ ա կ .— Ջուրը բարակած ել վոր չլիներ, ելի դու կուշանայիր, անկարելի բան ա, կնանիքը իբար վոր հանդիպեն, երկու ժամ կկանգնեն ու կխոսան: Դե յես գնացի:

Ս ա ճ ա մ . — Ո՞ւր ես գնում . կա՛ց , շա՛յ գցեմ , խմի՛ ,
Հետո գնա՛ :

Ս ա հ ա կ . — Հարկաւոր չի :

Ս ա ճ ա մ . — Գնում ե՞ս :

Ս ա հ ա կ . — Ձե՞ս տեսնում , վոր գնում եմ : Ի՞նչ կա ,
բան էլիբ ասելո՞ւ , ասա՛ : Տեղ եմ գնում , վոս-
գում եմ , ժամանակ չունեմ : Կոտպերատիվի նա-
խադաճը կանչել ա , գնամ տեսնիմ՝ ի՞նչ ա
ասում :

Ս ա ճ ա մ . — Ախր դու խոստացել էլիբ , վոր ես գչեր
ինձ թատրոն տանես :

Ս ա հ ա կ . — Յես էլ ասեմ՝ բան ա ասում :

Ս ա ճ ա մ . — Եղ բան չի՞ : Պետթատրոնի դերասաննե-
րը յեկել , ներկայացում են տալու . հարևանները
գնում են , ասում են՝ մենք էլ գնանք : Քանի՞ տա-
րի յե՞ թատրոն չեմ գնացել :

Ս ա հ ա կ . — Ձես գնացել , մեկ որ կգնաս , աշխարհը
չքանդվեց և դու առանց թատրոնի չմնացիր :
Միևնույն ե , գնանք էլ , մեզ չեն թողնի : Ես ներկա-
յացումը հատկապես կոլխոզնիկների համար ա :

Ս ա ճ ա մ . — Թատրոնը՝ կոլխոզնիկների համար ա ,
կինոն՝ կոլխոզնիկների համար ա , կոտպերատիվի
նոր ստացված ապրանքը՝ կոլխոզնիկների համար
ա , աադիոն՝ կոլխոզնիկների համար ա . . .

Ս ա հ ա կ . — Տրակտորը կոլխոզնիկների համար ա .
վարկը՝ կոլխոզնիկների համար ա , շարքացանը՝
կոլխոզնիկների համար ա , մի խոսքով ես յերկ-
րում ամեն ինչ էլ կոլխոզնիկների համար ա :
Հմի քու ասելը ի՞նչ ա :

Ս ա ճ ա մ . — Իմ ասելը են ա , վոր եղ փոփոխական
խասիաթիդ թարգը տո՛ւր , կոլխոզի համբին
կանգնի՛ , կոլխոզից դուրս մի՛ դա , խելքդ հավա-
քի՛ գլուխդ , եզուցվանից գնա՛ , կոլխոզ գրվի՛ .
ուրիշներին դու մի՛ լսիր :

Ս ա հ ա կ . — Գրվելու յեմ : Դե յես գնացի : Բան ա , թե
վոր կուչանամ դռները կկողպես , ճրագը կհանդ-
ցնես ու կքնես : (Դուրս ե գնում) :

Ս ա ն ա մ .— Ա ն ի ծ Վ ի խ ս ս ի ա թ դ : Ք ա ն ի դ ու ե դ խ ե լ ՝
ք ի ն կ լ ի ն ն ե ս , յ ե ս ք ու ձ ե ո չ ի ն մ ի լ ա Վ ո ր չ ա լ ի ա թ
տ ե ս ն ե մ : (Կ ու ժ ք վ ե ր ց ն ու մ ե և Կ գ ն ու մ ն ե ր ս) :

Տ Ե Ս Ի Լ 5

Տ Ի Գ Բ Բ Ի Կ Ե Լ Ե Զ Ի Բ Ո Ւ Խ Մ

(Փողոցում, դռան շեմքին կանգնած, խոսում են) :

Զ մ բ ու խ մ .— Ո՞ւր ես գնում :

Տ Ի Գ Բ Բ Ի Կ .— Ի՞նչ քու հաշիվն է : Գլխիս կանտրոլը
հո չեա :

Զ մ բ ու խ մ .— Բա եդ խոսալու ձև ա՞— Յես իրավունք
չունե՞մ հարցնելու, թե ո՞ւր ես գնում :

Տ Ի Գ Բ Բ Ի Կ .— Գնում եմ ժողով : Ձեկուցում պիտի ա-
նեմ : Բայց դու ի՞նչ ես հասկանում : Քաղաքական
խնդիրներին քու խելքը չի հասնի : Անպետք բան
ես :

Զ մ բ ու խ մ .— Անպետքը դու յես, վոր ինձ նման
կնոջ արժանիքը չես հասկանում : Իմ խելքին ի՞նչ
ասեմ, վոր քու ձեռքին մինչև որս դիմացել եմ :
Ուրիշը քեզ հետ մի որ չեր ապրի : Ապերա՛խտ :

Տ Ի Գ Բ Բ Ի Կ .— Լեզուդ քեզ քաշի՛, խոսքդ ճանաչի՛,
յես քու հավասար մարդ չեմ :

Զ մ բ ու խ մ .— Յեթե յես քեզ համապատասխան չեմ,
ինձ — ապահարզան տուր, գնա՛ քեզ համապա-
տասխան կին դռի՛ր ու նրա հետ ապրի՛ր : Հողք
քու շաչ խելքին :

Տ Ի Գ Բ Բ Ի Կ .— Ձենդ կտրի՛ :

Զ մ բ ու խ մ .— Ձենդ դու կտրի՛ : Դու վոր խելոք,
հասկացող ամուսին լինեյիր, ինձ անհավասար
դրության մեջ չեյիր թողնի : Բայց թե եդ ել դեռ
հարց ա՛՛ ո՛վ ե մեզնից բարձր և ո՛վ ե ումը ան-
համապատասխան :

Տ Ի Գ Ր Ա Ն.— Նահլա՛թ չար սատանին: Թե կտամ ես շան տղի կնկան կսպանեմ, հետո պետք ե մեղադրեն, վոր կոմունիստները իրենց կանանց սպանում են:

Զ մ ր ու խ տ.— Տո՛, վողորմելի՛, դու մի հավ չես կարողանա մորթել, դու մարդ կարող ես սպանի՞լ: Դու ի՞նչ մարդ ես: Մարդը հրեն, քու հարեանն ե, եղ քոռացած աչքերդ բաց արա՛, տես՛ նա ի՞նչպես ե տուն պահում, կին պահում, նրանից որինակ վերցրո՛ւ: Ուշք ու միտքդ տվել ես չգիտեմ ինչի՛, տունդ ել մոռացել, կինդ ել: Մլ վոչ բարեկամի տուն ես ճանաչում, վոչ հարևանի... ամեն տեղից վոտդ կտրել ես, վոչվոքի տուն դնալ-գալ չունես: Բայդո՛ւլ...

Տ Ի Գ Ր Ա Ն.— Յես քեզ չեմ արդելում, բարեկամի մե հարեանի տները առանց ինձ ել դու կարող ես դնալ-գալ: Յես ժամանակ չունեմ: Յես գրողված եմ, կուսակցությունը ինձ վրա հազար ու մի տեսակ պարտականություն ե դրել:

Զ մ ր ու խ տ.— Իմ առելով, միևնույն ե, դու չես ուղղվի: Վաղվանից յես քեզանից բաժանվում եմ: Գնա՛, դու քեզ համապատասխան կին գտի՛ր և նրա հետ ապրի՛ր: (Սաճամը դուրս ե գալիս փաղոց):

Տ Ի Գ Ր Ա Ն.— Ժողովից կվերադառնամ, դրա մասին կմտածենք: (Գնում ե):

Տ Ե Ս Ի Լ 6

Զմբուխտ և Սաճամ

Ս ա ճ ա մ.— Աղջի՛, ել տեղ չգտաք, դուրս եք եկել, փողոցում կանգնել, իրար հետ կովո՞ւմ: Բա մոթ չի՞, աեսնող-լսողը ձեզ ի՞նչ կասի:

Զ մ ր ու խ տ.— Ինչ անեմ, եստեղս ա հասցրել:

Ս ա ն ա մ .— Աղջի՛, մեղադրելու չի, կուսակցական պատասխանատու մարդ ա, յերեմի ժամանակ չունի:

Զ մ ր ու խ տ .— Ես զահրումար տեղում ել ուրիշ կուսակցական պատասխանատու մարդիկ չկա՞ն: Եդ բոլորը պատճառներ են: Մանամ մոքիր, յերանի քեզ, վոր քու մարդը կուսակցական չի: Դրանով դու բախտավոր ես:

Ս ա ն ա մ .— Դե լավ, մի նախանձի, մի բարի պտուղ ել իմ մարդը չի: Հողս նրա դիլիին, ամոթից ձեն չեմ հանում, դու հենց իմանում ես՝ բախտավոր ե՞մ: Դու չգիտես, թի յես նրա ձեռքին ի՞նչ որեր եմ քաշում: Ամեն ասուու որը հարբած կդա տուն, ել ի՞նչ ավել պահաս խոսքեր ասես, վոր չասի: Խեղճ ըլես, նրա ձեռքն դու մի որ չես դիմանա: Ափսոս չի՞ քու մարդը: Հրեն մարդս դալիս ա: Տնաքանդը ենքան խմել ա, վոր ել յերկու վտաքերի վրա կանգնել չի կարողանում:

(Զմրուխտը գնում ե իրենց տուն, իսկ Սահակը յերգելով գալիս ե):

Տ Ե Ս Ի Լ 7

Ս ա ն ա մ ու Ս ա հ ա կ

Ս ա հ ա կ .—Ա՛յ կնիկ, են ո՞ւմ հետ եյիր խոսում: Յես քեզ չասեցի՞՞ դուռը կողպի՛, ճրագը հանդցրո՛ւ, քնի՛: Հը՛, չլինի՞ միտքդ ծովել ա:

Ս ա ն ա մ .— Ելի սկսեցիր ավել-պակաս խոսել: Չըմբուխտն եր, եստեղ կանգնած գրից եյինք անում: Տեհամ, վոր դու գալիս ես, դնաց իրենց տուն:

Ս ա հ ա կ .—Հա՛. յես ասի բա ուրի՞շ մարդ ա: Դե լավ, ես գիշերով կեսին խոսալու համար ել ուրիշ տեղ չգտա՞ք: Դուք ել հո են կամֆեա ուտողներիցը

չեք, վոր դուքս եք եկել բուլլարը սեյր անելու:
Ա՛յ կնիկ, կարծես մի քիչ հարբած եմ, հը՞:

Ս ա ն ա մ.— Յանի մի որ կլինի՞, վոր դու հարբած
չգաս:

Ս ա հ ա կ.—Վոր հարբած գալիս եմ, ո՞ւմը ի՛նչ վնաս
եմ պատճառում:

Ս ա ն ա մ.— Ինձ ես վնաս պատճառում:

Ս ա հ ա կ.—Դու մի՛ վախի, ա՛յ շաշ, քու ախոռի դարին
չի պակասի: Փող, ինչքան ասես, կաշխատեմ:

Ս ա ն ա մ.—Բու հարեանն ել ե վող աշխատում, բա
ինչի նա գինու-արաղի չի տալիս ու աշխատածը
քոռ ու փուչ անում: Յես նրան մի որ հարբած
չեմ տեսել:

Ս ա հ ա կ.— Կուսակցականներին խմելը՝ արգելված ա:
Կուսակցականները վոր սկսեն խմել, առաջինը՝
դինի-արաղը կթանգանա, յերկրորդն ել՝ վոր
կուսակցական դործերը յերեսի վրա կմնան, յեր-
րորդը՝ վոր պատիժ կա:

(Սահակն ու Սանամը գնում են ներս):

Տ Ե Ս Ի Լ 8

Տիգրան և հետո Ջմրուխտ. (Տիգրանը գալիս է
իրենց դուռը ծեծում: Ջմրուխտը ներսից պա-
տասխանում է):

Ջ մ Ր ո Ւ խ տ.— Ո՞վ է: (Գլուխը լուսամուտից հա-
նած):

Տ ի գ Ր ա ն.— Յես եմ, արի՛, դուռը բաց արա՛:

Ջ մ Ր ո Ւ խ տ.— Բաց չեմ անի, վորտեղից յեկել ես,
ելի դնա՛ ենտեղ:

Տ ի գ Ր ա ն.— Շատ չեն խոսա, արի՛, դուռը բաց ա-
րա՛. հողնածուխունից վոտքերս կոտրվում են:

Ջ մ Ր ո Ւ խ տ.— Շա՛տ հարկավոր է, թեկուզ գլուխդ

եւ կոտորվի: Դրա համար թող քո համապատասխան կրնդ մտածի:

Տիգրան.— Շատ պիտի խոսե՞ս: Յես քեզ ասում եմ՝ արի՛, դուռը բաց արա՛:

Զմբուխտ.— Ձեմ բաց անում: Դու ինձ համապատասխան ամուսին չես, գնա՛, ինձնից հեռացի՛ր: (Լուսամուտը ծածկում է):

Տիգրան.— Գժվե՞լ ե ես կրնը, ի՞նչ է:
(Դուռը ծեծում է: Զմբուխտը լուսամուտից):

Զմբուխտ.— Ի՞նչ ես ուզում վերջապես, դու չպիտի՞ հեռանաս եստեղից:

Տիգրան.— Հարևանները քնից արթնացան, արի՛, դուռը բաց արա՛, կգան, ինձ փողոցում կտեսնեն, ամոթ է:

Զմբուխտ.— Հարևանները քեզ նոր չեն ճանաչում, նրանք գիտեն, թե դու ինչ պտուղն ես: Վոր քու պակասությունների մասին յերեսիդ վոչինչ չեն ասում, դու կարծում ես՝ հեռեկից չի՞ն խոսում: Հողը գլխիդ:

Տիգրան.— Վերջապես դու ինձ համբերությունից հանեցիր, արի՛, դուռը բաց արա՛, կգամ, եզտեղ քեզ հետ կխոսեմ:

Զմբուխտ.— Քո գալը հարկավոր չի: Ա՛ռ, անկողինդ վերցրո՛ւ, գնա՛՝ ուր վոր ուզում ես:
(Լուսամուտից անկողինը դուրս է շարտում):

ՎԱՐԱԿՈՒՅՐ

ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Դամեյի տունը: Դամեյը, անբուրը, Գարասիմը, Ավետիքը և Տիգրանը, սեղանի շուրջը նստած, խմում են:

Տ Ե Ս Ի Լ 1

Գ արասիմ.—Դու իմ ասածը չհասկացար, ես մարդիկը, խոսքի որինակ, ետք քու հյուրերն են: Իհարկե, առհասարակ, անկախ դիրքից ու պաշտոնից, ամեն ժամանակ ել մարդ կարող եր իր ցանկացած տեղը հյուր դնալ: Բայց խնդիրը նրանումն ե, վոր շարամիտ մարդիկ սկսելու յին խոսալ, վոր դյուղխորհրդի նախագահն ու կոլխոզի նախագահը Դանեյ աղի տանը նստած՝ խմում եյին:

Գ անեյ.—Խմելը ամոթ բան հո չի՞: Կամ թե եղ վո՞ր որենսզբքումն ա դրված, վոր դյուղխորհրդի նախագահն ու կոլխոզի նախագահը մասնավորի տուն հյուր չպիտի դնան և վոչ ել գինի պիտի խմեն:

Ա վետիք.—Վոչ մի որենսզբքում նման բան չի գրված և չի ել գրվի: Չարամիտ մարդիկ թող ինչքան ուզում են խոսեն, անձնական գործերում և անհատական խնդիրներում վոչվոք միջամտելու իրավունք չունի:

Տ իգրան.—Չարամիտ մարդիկ դրանով ուզում են մտքեր պղտորել: Վերընտրութունների ժամանակ, փաստը ցույց տվեց, վոր շրջանի մասշտաբով յես և ընկեր Ավետիքը մեծ հեղինակութուն ենք վայելում: Ճիշտ ե, անտակա մարդիկ մի քանի անգամ փորձ արին կոլխոզի նախագահության պաշ-

տոնից ինձ հեռացնեն, բայց չկարողացան, նրանց փորձը անհաջողութեան մատնվեց:

Գ ա ն ե լ.—Չարամիտ և անտակա մարդկանց կատարած ու կատարելիք փորձերը, յես համոզված եմ, վոր միշտ ել անհաջողութեան են մատնվելու: Կրկին և կրկին անգամ խմենք մեր թանկագին Հյուրերի կենացը: Բարով, հազար բարի յեք յեկել: Իմ տան դռները ձեր առաջ միշտ բաց են, յերբ վոր կցանկանաք, համեցե՛ք: (Խմում են):

Գ ա ր ա ս ի մ և տ եր տ եր.—Ձեր կենացը: (Խմում են):

Տ ի գր ա ն.—Շնորհակալ եմ: (Խմում է):

Ա վ Ե տ ի ք.—Շնորհակալ եմ: (Խմում է):

Գ ա ն ե լ.—Յես ել եմ շնորհակալ, վոր արժան համարեցիք, իմ ասուն եկաք: Բայց թե ես մի անգամ զալով բան չի դառնա:

Տ եր տ եր.—Արդար խոսք աս, Դանել աղի տունը դուք ամեն որ պետք է դաք:

Գ ա ն ե լ.—Ո՞վ աս բան ասում, թող գան, բայց չեն գալիս:

Գ ա ր ա ս ի մ.—Ինչի՞ չպիտի դան:

Գ ա ն ե լ.—Մրանց բանը ո՞վ աս հասկանում, կուլակ անունը կպցրել են ճակատներին, ինչքան ուժները պատում աս՝ հուպ են տալիս: Իհարկե, կուսակցական տեսակետով սրանք մեր դեմ գաղափարական պայքար են մղում: Բայց թե իմ կարծիքով պայքար մղելու բոլորովին կարիք չկա: Վորովհետև մենք, խորհրդային պլատֆորմի վրա կանգնած, ազնիվ քաղաքացիներ ենք:

Գ ա ր ա ս ի մ.— Կառավարութիւնը մեզնից ինչ վոր պահանջում աս, մենք տալիս ենք, ինչ վոր ել դրժվարանում ենք և ժամանակին չենք տալիս, միևնույն աս, կատարածուն զալիս պահանջում ու տանում է:

Գ ա ն ե լ.—Մեր ասածները, իհարկե, ուրիշ մաքով չհասկանաք: Մենք են մարդկանցից չենք, վոր կառավարութեան դեմ հակառակ բան ասենք: Մեր կառավարութիւնը լավ կառավարութիւն աս, մեր

ժողովրդի համար ազատութիւն, մեր յերկրին
հանդատութիւն և խաղաղութիւն ա բերել, վոր
մենք խաղաղ ու հանդիստ ապրենք և ուրիշներին
ել մնաս չտանք:

Տ եր տ եր .— Արդար խոսք ա, ավետարանումը գրված
ա՛ ՝ «խաղաղութիւն՝ անմենեցուն» . . .

Գ ա ր ա ս ի մ .— Ինչպես երևում ա, ավետարանում խե-
լոք բաներ կա գրված:

Դ ա մ ե լ .— Ավետարանը ետեղ կապ չունի:

Տ եր տ եր .— Ինչպես թե կապ չունի: Դա սխալ կար-
ծիք ա և եղ սխալ կարծիքն ե, վոր ամբացել ե
մեր ժողովրդի մեջ և նրանք յերեսները դարձրել
են յեկեղեցուց:

Դ ա մ ե լ .— Ետեղ կարևորը յեկեղեցին չի. կարևորը
նա յե, վոր մենք վորպես մի ազգութիւն ազատկա-
նող և մի յերկրի ժողովուրդ, իրար հետ խաղաղ
ու համերաշխ չենք ապրում: Շուն ու կատու յենք
դառել ու իրար միս ենք ուտում: Ի՞նչի համար:
Իրար հետ կռիւլու կամ բաժանելու ի՞նչ ունենք:
Ավելի լավ չի, վոր մենք իրար՝ հետ համերաշխ
ու սերով ապրենք:

Տ եր տ եր .— Արդար խոսք ա, ավետարանումը գրված
ա՛ ՝ «սիրեսցեք զիմիմյանց»: (Գարասիմը նրա փե-
շից քաշում ե):

Գ ա ր ա ս ի մ .— (Կամաց) Դու ել ի՞նչ ես ամեն բոզե
քու ավետարանը մեջ դցում: Դու չգիտե՞ս, վոր
նրանք կուսակցականներ են:

Տ եր տ եր .— Ոոսքը տեղը վոր եկավ, պետք ե ասել:
Դու ինձ շփոթեցիր, ասելու խոսքս ել մոռացա՛:
Հա՛, են եյի ասում: Հարցնելը ամոթ չլինի, դուք
կուսակցականներ ե՞ք:

(Բոլորը զարմացած նայում են):

Տ ի գ ր ա մ .— Ուրեմն, մեր կուսակցական լինելու մա-
սին դուք կասկածո՞ւմ եք: (Յերկուսով միաժա-
մանակ կուստումները համում են ու նրանց ցույց
տալիս): Ոնդրեմ . . .

Ա վ ե տ ի ք .— Ոնդրեմ . . .

Գ ա մ ե լ . — Դ ե հ մ ի հ ա մ ո զ Վ ե ց ի ՞ ր , վ ո ր ն ր ա ն ք կ ու ս ա կ ց ա կ ա ն ն ե ր ե ն :

Տ ե ր տ ե ր . — Բ ա ն չ ե մ ա ս ու մ , թ ո ղ կ ու ս ա կ ց ա կ ա ն ն ե ր լ ի ն ե ն : Մ ի ա յ ն թ ե յ ե կ ե ղ ե ց ի ն , կ ր ո ն ն ու հ ա յ ք ր ի ա տ ո ն ն յ ու թ յ ու ն ր ս ր ա ն ն ր ու մ ա մ ու ր ս ա հ ե ն : Գ ր ի զ ո ր լ ու ս ա Վ ո ր չ ի ս ու ր ք հ ա Վ ա տ ր չ մ ո ղ ա ն ա ն : Ա Վ ե տ ա ր ա ն ու մ գ ր Վ ա ծ ա ՝ զ ս ա հ յ ա և զ ս ա հ ս ա ն յ ա ը ղ ս ու ր ք հ ա Վ ա տ ր ք ո ՞ :

Գ ա մ ե լ . — Ա Վ ե տ ա ր ա ն ու մ ը մ ե ն ք գ ի ա ե ն ք , վ ո ր լ ա Վ բ ա ն ն ր շ ա տ կ ա գ ր Վ ա ծ , բ ա յ ց դ ր ա ն ք ե ս տ ե ղ ա ս ե լ ու տ ե ղ ը չ ի : Վ ե ր ց ր ե ՛ ք ա ու ա ն ձ ն ա ս կ ե ս լ ա մ ե ն ք ը ն կ ե ր Ա Վ ե տ ի ք ի կ ե ն ա ց ր :

Գ ա ր ա ս ի մ . — Լ ա Վ կ ե ն ա ց ա , լ ա մ ե ն ք :

Տ ի գ ր ա մ . — Մ ս ա ս ե ՛ ք , չ ն ա յ ա ծ վ ո ր ա ն հ ա տ ա կ ա ն կ ե ն ա ց ն ե ր ի ն ս կ գ ր ու ն ք ո Վ յ ե ս դ ե մ ե մ , բ ա յ ց թ ե մ ի ք ա ն ի խ ո ս ք ս լ զ ու մ ե մ ե ս կ ե ն ա ց ի ա ո թ ի Վ ա ս ե լ :

Բ ո լ ո ր ք . — Խ ն ղ ր ե ն ք :

Տ ի գ ր ա մ . — Յ ե թ ե ե ս ո ր մ ե ն ք ի ր ե ր ի բ ե ր ու մ ո Վ մ ի ս ե ղ ա ն ի շ ու ր ջ ր ն ա տ ե լ ե ն ք , ս կ տ ք ե վ ո ր մ ե ն ք մ ե ղ մ ի թ ե թ ե ա կ ի կ ե ր ս Վ ը բ ն ու թ ա ղ ր ե ն ք : Ա յ լ կ ե ր ս մ ե ն ք մ ի մ յ ա ն ց չ ե ն ք ճ ա ն ա չ ի և հ ե տ ե ա ս կ ե ս մ ե կ ս մ յ ու լ ի ա ս ա ծ ր չ ե ն ք հ ա ս կ ա ն ա : Ու ր ե մ ն ա ո ա ջ ի ն հ ա ր ց : Ո ՞ վ ե մ յ ե ս : Ք ա ն Վ ե ց թ Վ ի ս ս տ ա ժ ա Վ ո ր կ ու ս ա կ ց ա կ ա ն . ն ե ր կ ա դ ե ս զ ք ու մ կ ո Վ խ ո զ ի ս ա տ ա խ ա ն ա տ ու ն ա խ ա ղ ա հ : Յ ե ր կ ր ո ր ղ հ ա ր ց : Ա յ ս մ ա ր ղ ն ո ՞ վ ե : Ք ա հ ա ն ա , ա յ ս ի ն ք ն յ ե կ ե ղ ե ց ու ս ս ա ս ա Վ ո ր , ն ե ր կ ա դ ե ս զ ք ու մ հ ո ղ ե ո ր դ ա ս ի ս ա շ տ ո ն ա կ ա ն ն ե ր կ ա յ ա ց ու ց ի չ : Յ ե ր ր ո ր ղ հ ա ր ց , ս ր ա ն ք ո ՞ վ ք ե ր ե ն : Մ ա ս ն ա Վ ո ր ս ե փ ա կ ա ն ա տ ե ր , ա յ ս ի ն ք ն ու ն ե ո ր դ ա ս ի ս ա շ տ ո ն ա կ ա ն ն ե ր կ ա յ ա ց ու ց ի չ ն ե ր , ն ե ր կ ա դ ե ս զ ք ու մ խ ո ր հ ր ղ ա յ ի ն ս լ յ ա տ Փ ո ր մ ի վ ր ա կ ա ն ս ն ա ծ ա ղ ն ի Վ ք ա ղ ա ք ա ց ի ն ե ր : Ու ր ե մ ն լ ա մ ե ն ք ը ն կ ե ր Ա Վ ե տ ի ք ի կ ե ն ա ց ր :

Բ ո լ ո ր ք . — Խ մ ե ն ք . . . (Խ մ ու մ ե մ) :

Ա Վ ե տ ի ք . — Շ ն ո ր հ ա կ ա լ ե մ : (Խ մ ու մ ե) :

Բ ո լ ո ր ք . — Մ ե ն ք ե լ ե ն ք շ ն ո ր հ ա կ ա լ : Ա ն ու չ :

Ա Վ ե տ ի ք . — Ա ն ու չ լ ի ն ե ք :

Գարասիմ.—Յես չեմ հասկանում, ընտրությունների ժամանակ ի՞նչ էլին մտածում, վոր ես մարդկանց հասցեյին լավ բան չեյին ասում: Մինչև անգամ ընտրությունից հետո ել ես տեսակ հասկացող մարդկանց ուզում էլին հեռացնել:

Դանել.—Նրանց կողմից շատ մեծ սխալ կլինեիր: Ավետիքի նման դյուշխորհրդի նախագահ, Տիգրանի նման կոլխոզի նախագահ քիչ կան ես յերկրում: Ես խոսքը յես անկեղծ սրտով եմ ասում:

Տերտեր.—Արդար խոսք աս, Դանել աղան եղ խոսքը ձեզ անկեղծ սրտով աս ասում:

Ավետիք.—Թույլ ավելք անկեղծ սրտով մի քանի խոսք ել յես ասեմ:

Բնլորը.—Ոնդրենք, խնդրենք:

Ավետիք.—Դուք դիտեք, վոր մասնավոր սեփականատերերին, սովորական լեզվով, մենք կուլակներ ենք անվանում: Բայց յեթե եղ կուլակ բառը վերլուծենք, դուքս կզատ, վոր նրանք միատարր չեն, նրանց մեջ ել շերտավորում կա: Այսինքն կուլակներ կան, վորոնք հողերանորեն իմպերիալիստական պետությունների որիենտացիան են ընդունում, կուլակներ ել կան, վորոնք խորհրդային պլանֆորմի վրա կանգնած ազնիվ քաղաքացիներ են: Ուրեմն խմում եմ ձեր կենացը:

Տերտեր.—Արդար խոսք աս, խմենք հողերանորեն ազնիվ քաղաքացիների կենացը: (Խմում է):

Բնլորը.—Ո՞մենք: (Խմում են):

Դանել.—Բաժակները լցրե՛ք, յես մի կենաց պիտի ստաջարկեմ:

Գարասիմ.—Պատրաստ աս:

Դանել.—Վերցրե՛ք, ես մի բաժակն ել առանձնապես խմենք Տիգրանի կենացը: Կառավարության ներկայացուցչի կենացը խմելուց հետո որենքով մենք պարտավոր ենք քսանվեց թվի ստաժավոր և պատասխանատու կուլակցականի կենացը նույնպես խմելու: Տիգրան ջան, սաղ ըլես: Յերանի կոմու-

նիստնեբը բոլորն էլ քու սրտի ու քու հասկացողութեան տեր մարդիկ լինեյին: (Խմում Ե):

Գ Թ Բ Խ Ա Ի Մ.—Տիգրան ջան, վողջ լինես, աստված քեզ է՛լ ավելի մեծ շնորհք տա: (Խմում Ե):

Տ Ե Բ Ա Ե Բ.—Ամմեն... (Խմում Ե):

Ա Վ Ե Ա Ի Բ.—Տիգրա՛ն ջան, բարեմաղթութունը յես ավելորդ եմ համարում: Խմում եմ քու կենացը: (Խմում Ե):

Տ Ի Գ Բ Ա Մ.—Նախքան շնորհակալութուն չայտնելը, թույլ տվե՛ք մի քանի խոսք ասել: Քիչ առաջ տեր հայրը մի քանի սխալ արտահայտութուններ թույլ տվեց: Դրանից կարելի յե յեղբակացնել, վոր նա մարքսիզմի մասին բոլորովին դադափար չունի:

Իհարկե, ըստ պաշտոնի և ըստ կոչումի նրա տեսակետը ճիշտ եր: Բայց կրոնը ընդհանրապես Գրիգոր լուսավորչի սուրբ հավատը մասնավորապես, մեզ չի հետաքրքրում, մեզ միայն գլխավորապես դիալեկտիկական մատերիալիզմն է հետաքրքրում:

Ա Վ Ե Ա Ի Բ.—Լսի՛ր, սրանք անկուսակցական մարդիկ են, դիալեկտիկական մատերիալիզմից սրանք վո՛չինչ չեն հասկանա:

Տ Ի Գ Բ Ա Մ.—Նրանք վոր չեն հասկանա, իսկ մենք հո հասկանում ենք: Դու չլսեցի՞ր: Սրանք եստեղ արսուրդ բաներ ին ասում, եղ ասածները յեթե մենք մարքսիստորեն չվերլուծենք, մեզ աջ թեքման մեջ կմեղադրեն, իսկ աջ թեքումը ներկա մոմենտում մեզ համար ամենավտանգավորն է, կրակը մենք նրա դեմ պետք է ուղղենք: (Լուռ խոսում Ե):

Գ Թ Բ Խ Ա Ի Մ.— (Դառնելիմ) Դրա ասածներից դու բան հասկանում ե՞ս:

Դ Թ Ա Մ Ե Լ.—Ինքը շատ ա հասկանո՞ւմ: Շատ չի քաշի, եղ որհնոյած աջ թեքումը գուցե մի բան դրստի:

Տ Ի Գ Բ Ա Մ.—Դանե՛լ աղա, աջ թեքման մասին կարծեմ դու եստեղ ինչ՝վոր բան ասացիր:

Դ Ե Ա Յ Ե Լ.—Յես են եմ ասում, վոր աջ թեքման կողմնակիցները խելքը գլխներին են երևում: Ըստ յերևույթին, նրանք մեզ լավ խորհուրդներ են տալիս, դուք դուր նրանց տված խորհուրդներին չեք հետևում:

Տ Ի Գ Ր Ա Մ.—Նրանց տված խորհուրդներին, յեթե մենք հետևելու լինենք, կուսակցութեան ուղիղ դժից, մենք պետք է շեղվենք: Իսկ մեզ համար վեկապեյի տված խորհուրդներն են կարևորը: Վեկապե դու հասկանո՞ւմ ես՝ ի՛նչ է նշանակում:

Դ Ե Ա Յ Ե Լ.—Հասկանում եմ վոր անկուսակցական եմ, դու կարծում ես՝ յես վոչինչ չե՞մ հասկանում: Ժիշտ է, յես թեև վեկապեյի անդամ չեմ, բայց նրա տված հրահանգներն ու ցուցմունքները, ինչպես վոր հարկն է, յես հասկանում եմ, վորովհետև եմ սոցիալական ծագումը բանվորական է: Մեր տունը սկզբից նեթ դասակարգային է յեղել: Հայրս վոչխար պահող, մայրս՝ բուրդ զգող, տատս՝ թել մանող, քույրս՝ խալի գործող, և հենց եղ ժամանակվանից ել խորհրդային հոգեբանությունը իմ մեջ սկիզբ է առել:

Տ Ի Գ Ր Ա Մ.—Հասկանում եմ:

Ա Վ Ե Ս Ի Բ.—Յես ել եմ հասկանում:

Դ Ե Ա Յ Ե Լ.—Իհարկե, կհասկանաք: Դուք յերկուսով ել խելքը գլխին հասկացող մարդիկ եք:

Գ Ե Ր Ա Ս Ի Վ.—Տո՛, ջանձ, սրանք ամեն բան ել հասկանում են, Սեթոյի նման անհասկներն են, վոր չեն ուզում մեզ հետ յուրա դնալ:

Տ Ի Գ Ր Ա Մ.—Դու ել մարդու անուն տվիր: (Բռունցքով ամուր խփում է սեղանին և իսկույն վոտֆիկանգնում: Մյուսներն ել Յրա հետ ամսիջապես վոտֆի յեմ կանգնում): Նրա արարմունքը դուք կարծում եք յես կմոռանա՞մ:

Դ Ե Ա Յ Ե Լ.— Յե՛վ չպիտի մոռանաս: Ինքնասիրությունը մարդու թույլ չպիտի տա, վոր իրենից քաշ մարդիկ դան, իր մասին վայրիվերտ խոսեն և անհիմն կերպով բամբասեն:

Գարասիմ.— Յեկ դուք չկարծեք, թե եղ բամբասանքները մենք չենք լսում: Իհարկե լսում ենք, բայց ուշադրություն չենք դարձնում:

Դամեկ.— Իսկ յեթե մեր տեղ ուրիշ մարդիկ լինեն, ձեր մասին տարածված եղ բամբասանքները նրանք չար նպատակով կողաազործեյին, իսկ եղպես ստորություն մենք չենք անի: Վորովհետև մենք, խորհրդային պլանֆորմի վրա կանգնած, ազնիվ քաղաքացիներ ենք:
(Դամեկը, Գարասիմը, Ավետիքը և Տիգրանը դուրս եմ գնում):

Տերտեր.— Արդար խոսք ա, մենք ազնիվ քաղաքացիներ ենք. մենք եղ տեսակ բան չենք անի: Ես մի բաժակն ել խմենք գնացողաց ու մնացողաց:
(Խմում է): Լավ դինի յե: Ստաժավոր կուսակցականին ես գինին շատ եր դուր եկել, ինձ ել ա դուր դալի, յերևելի գինի ա: Չի խանդարի, յեթե ես գինուց մի շիշ վերցնեմ հետս տանեմ:
(Սեղամի վրայից մի շիշ վերցնում է դնում գրքպանը): Հիմա կարելի յե գնալ: Տեր դուղղյա ըզ ճանապարհ իմ... (Դուրս է գնում):

ՎԱՐԱԳՈՒԹԻ

ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմբ մերկայացնում ե կոլխոզի գրասնյակը:
Սեղամ, արոններ, դեկավար ընկերների մեծա-
դիր մկարներ, կարմիր դրոշակ և այլն:

Տ Ե Ս Ի Լ 1

Սեբո, Տիգրամ, Նարգիզ, Սամամ և մի խումբ
կոլխոզնիկներ

Տիգրամ.— Յես իմ կյանքում չեմ սխալվել և չեմ ել
սխալվի: Իհարկե, յես Ֆինանսական տեսակետով
եմ խնդրին մոտենում:

Սեբո.— Ինչ տեսակետով ել վոր մոտենաս, միև-
նույն ե, տեսակետդ սխալ ե: Գարասիմը մեզ հա-
մար անհարազատ ելեմենտ ե: Նրան կոլխոզում
ընդունել չի կարելի:

Տիգրամ.— Դու շատ կարճ ես մտածում: Նրան յե-
թե մենք կոլխոզ ընդունենք, դրսում այլևս ուժեղ
հակառակորդ չենք ունենա:

Սեբո.— Դրսում չենք ունենա, ներսում կունենանք:
Նրան ընդունելու դեպքում, նշանակում ա, Դա-
նել աղին ել պետք ե ընդունենք:

Տիգրամ.— Վոր ընդունենք, դու կարծում ես կոլ-
խոզը կտուժի՞, ընդհակառակը կոլխոզը մեծ շահ
կունենա: Դանել աղան մեծ անտեսության տեր ե,
բացի դրանից, նա ահադին դրամագլուխ ունի,
հարկավոր դեպքում մենք կարող ենք կոլխոզի կա-
րիքների համար սզտագործել:

Սեբո.— Դու են ասա՛, գլուխդ վրադ ե՞, թե մոտա-
ցել, ուրիշ տեղ ես թողել: Բա դու չգիտե՞ս, վոր
եղ տեսակներին թույլ չենք տա՛ մինչև անգամ
կոլխոզի շեմքովն անցնեն:

Տիգրամ.— Ինչո՞ւ.

Ս Ե Ք Ո.— Գայլերի առաջ փարախի դռները միշտ փակում են:

Տ Ի Գ Ր Ա Ո.— Եղ վախի զգացումը անհամատեղելի յեմեր կուսակցական լինելուն: Դու թերազնահատում ես գյուղացուն, դու տրոցկիտական ուղղությամբ ես գնում:

Յեռ քու հարցը կդնեմ շրջկոմի բյուրոյի նիստում: Դու մեր կուսակցության շարքերում չբացեաք ե լինես: Դու արժանի չես:

Ս Ե Ք Ո.— Արժանի չեմ, կուստոմսը թող իմ ձեռքիցս խլեն: Վնաս չունի, յես այնուամենայնիվ իմ աշխատանքով կապացուցեմ, վոր քեզանից լավ կուսակցական եմ: Իսկ ինչ վերաբերում ե տրոցկիտական ուղղության, շրջկոմում հարցը քննելիս կտեսնենք, թե մեզանից ո՞վ ինչա: Հասկացա՞ր, աջ սպորտունի՛սա:

Տ Ի Գ Ր Ա Ո.— Իմ աջությունս դու ինչո՞վ ես հաստատատում:

Ս Ե Ք Ո.— Քու աջությունդ նրանով ե հաստատվում, վոր Գարասիմին կոլխոզում ընդունելու առաջարկ ես անում, և Դանել աղի ունեցած դրամադիտով կոլխոզն ես ուզում դարգացնել:

Տ Ի Գ Ր Ա Ո.— Բա դու ի՞նչ եյիր կարծում: Մեր կոլխոզն ամենաչքավոր կոլխոզներիցն ե, ներդրման կարգով կառավարությունը մեզ դումար չի տալիս, իսկ մենք ել միջոցներ չունենք: Իսկ մեր կոլխոզն ուժեղացնելու ամենաառաջին նախապայմանը դրամական միջոցն ե, վորից մենք միանդամայն զուրկ ենք:

Ս Ե Ք Ո.— Տո՛, խելքի տուպրակ, կառավարությունը ներդրման կարգով յեթե մեզ դումար ե տալու, ել մենք ինչացո՞ւ յենք: Մենք մեր կոլխոզը ենպիսի հիմքերի վրա պետք ե դնենք, վոր եղ դումարը ինքներս ստեղծենք և կառավարությանն ել մենք մեր հերթին ոգնենք: Պետք ե տնտեսական լայն դործունեյություն ծավալենք, ինչպես ուրիշ կոլխոզներն են անում:

Ն ա ր գ ՚ ի գ . — Ժողովականները հավաքվել, ենտեղ
ձեղ են սպասում: Գնանք, ենտեղ նրանց ներկա-
յությամբ խոսացեք, վոր նրանք հնարավորու-
թյուն ունենան իրենց կարծիքը հայտնելու:

Ս ե ր ը . — Ծիշա ե ասում, ենտեղ մեր խոսալը ավել-
նորդ ե: Գնանք, դու քու ղեկուցումդ տուր, ըստ
եյության մենք դուրս կգանք — կխոսանք:
(Գնում եմ մերս):

Տ Ե Ս Ի Լ 2

Դ ամ Ե Լ և Շ մ ը

(Շ մ ը մ վոտից կազում ե և դեմքը այլակերպ)

Դ ամ Ե Լ . — Հետո՞ :

Շ մ ը . — Հետո ե՛ն, վոր ասում ա՛ կոլխոզը իր սղո-
ցարանը շինելու համար ահագին դումար ա ծախ-
սել, մասնազեւոներ հրավիրել, և նրանք գտել են,
վոր սղոցարանի համար միակ հարմար տեղը Դա-
նել աղի հին ջրաղացն է:

Դ ամ Ե Լ . — Հետո՞, հետո՞ :

Շ մ ը . — Հետո ե՛ն, վոր ասում ա՛ կոլխոզի վարչու-
թյունը վորոշում ունի եղ տեղը Դանել աղի ձեռ-
քից վերցնել. իսկ նրանք, ասում ա, դնացել են,
գինու ազդեցության տակ խոստացել, վոր չվերց-
նեն: Եղ տեղը թողնեն ու մի ուրիշ տեղ գտնեն
սղոցարանի համար: Բայց թե եղ խնդիրը կար-
ծեմ չըջկոմը քննության ե առել, տեսնենք ինչ
ընթացք կստանա: Տիգրանի ղեկուցումը ես որվա
ժողովում հինց դրա համար ել դրել են: Կոլխոզի
նախագահության պաշտոնից նրան կհեռացնեն,
կոլխոզում բոլորը նրանից դժգոհ են:

Դ ամ Ե Լ . — Սխալ բան ե: Տիգրանը յեթե կոլխոզից
հեռանա, առաջի հերթին կոլխոզնիկները իրենք
կվնասվեն:

Շմո.— Սխալ ա, թե՛ ճիշտ, դրա մասին խոսարն ա-
վելորդ ա: Նրանք ես որ իրանց իմացածը կանեն:
(Սահակը շտապ գալիս է, իսկ Շմոն գնում է ներս):
Սահակ.— Ինչպես յերևում ա, ժողովից ուշացել եմ:
(Սահակը ուզում է ներս գնալ, բայց Դանելը նրան
կանգնեցնում է):

Տ Ե Ս Ի Լ 3

Դանել և Սահակ

Դանել.— Կա՛ց, ո՞ւր ես գնում: Ձի կարելի, ժողովը
դռնփակ ա:
Սահակ.— Դուռը բա ինչի՞ յա բաց:
Դանել.— Բաց կլինի: Բա Հո կողպեքով չեյին կող-
պելու, դռնփակ՝ նշանակում ա, վոր կողմնակի
մարդկանց չի կարելի:
Սահակ.— Յես կոլխոզնիկ եմ, կողմնակի մարդ չեմ:
Դանել.— Կոլխոզնիկ ես, բայց վոր նախկին միջակ
ես, դրա համար էլ քեզ ես ժողովին գնալ չի կա-
րելի:
Սահակ.— Ձի կարելի, յես ել չեմ գնա: (Նստում է):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք և Գարաւիմ

Գարաւիմ.— Ա՛յ մարդ, քու Հեռեից յես մի ժամ
ա ման եմ դալիս: Ի՞նչ արիք: (Նստում է):
Դանել.— Ինչ վոր հարկավորն ա՛ արել եմ տես-
նենք՝ ի՞նչ ա դուրս դալիս:
Սահակ.— Պա՛հ քու տիրու Հերն անիծած... կատու
յեր, թե ի՛նչ եր, եկամ, ես արանքով, անցկա-
ցամ: (Նայում է չորս կողմը):
Գարաւիմ.— Ո՞ւր ա Եստեղ կատու:
Դանել.— Միջակների աչքին ամեն տեղ շուն ու կա-

տու յե յերևում: (Ներսից աղմուկ): Ղալմաղաւ-
ներն արդեն սկսվեց:

Գ ա թ ա ս ի մ.— Հետաքրքիր ա, տեսնես զալմաղաւ-
ներն ինչի՞ համար ա:

Դ ա մ ե լ.— Ինչի համար ուզում ե՛ թող լինի, դրանից
մեզ ոգուտ չկա: Կուժն ու կուլան վերջը մեր գըլ-
խին և կոտրվելու: Տիգրանին նախագահության
պաշտոնից ուզում են հանեն:

Գ ա թ ա ս ի մ.— Իսկ ո՞ւմն են ուզում նրա տեղ ըն-
տրեն:

Դ ա մ ե լ.— Սեթոյին են ուզում ընտրեն:

Ս ա հ ա կ.— Սեթոն գործունյա մարդ ա:

Դ ա մ ե լ.— Նրա գործունյա լինելը մեզ համար կա-
րեւոր չի: Տիգրանը յոյա գնացող մարդ ա, նա
ուզում ա ինքն ել ապրի, ուրիշին ել ապրեցնի:
Իսկ Սեթոն, ընդհակառակը, ուրիշներին առելով
ատում ե: Նրա հետ յոյա գնալ չի կարելի:

Գ ա թ ա ս ի մ.— Իհարկե, Տիգրանի բանը ուրիշ ա:
Նա վոր կոլխողի նախագահի պաշտոնում մնար,
մեր գործը լավ կըլիներ: Երեզի մոռացա՝ թե
նրանից մի գրություն վերցնեմ, են մնացած ապ-
րանքն ել տանեմ ծախեմ, կորչի գնա:

Դ ա մ ե լ.— Յես ել հենց ետ նպատակով եմ յեկել:
Քիչ սպասենք, դուքս կգա, կոլխողի անունից
պաշտոնական գրությունը կտա: Յես ել ծախելու
մի քանի բան-ման ունեմ: Կտանենք, ուղ կա-
նենք:

Ս ա հ ա կ.— Հետո՞, կոլխողի անունով նա ձեզ եղպես
գրություն կտա՞:

Դ ա մ ե լ.— Կտա:

Գ ա թ ա ս ի մ.— Մի քանի անգամ տվել ա: Ես առա-
ջին անգամը չի: Ես պարտխան ել վոր ծախեմ,
բավական ոգուտ կունենամ: Առաջին պարտխումը
վնասվեցի:

Ս ա հ ա կ.— Յես ելի դլխի չեմ ընկնում: Դուք ձեր ապ-
րանքը եղ ո՞ւմ վրա յեք ծախում:

Գ ա թ ա ս ի մ.— Պետական հիմնարկների վրա, ել

մասնավոր առևտրականներ չկան, վոր մեր ազ-
րանքը նրանց տանք: Մոնոպոլի մասին դու սկի
գաղափար չունե՞ս:

Ս ա հ ա կ .— Մոնոպոլից բան չեմ հասկանում. բայց են
գիտեմ, վոր կենտրոնից հատուկ հրահանգ կա,
վոր պետական հիմնարկները մասնավոր մարդ-
կանցից առևտուր չանեն:

Դ ա ն ե լ .— Իսկ քեզ ո՞վ ա ասում, վոր պետական
հիմնարկներն առանց հրահանգի յեն գործ անում:
Պետական հիմնարկներում ամեն ինչ ել հրահան-
գով ու ծրագրով ա կատարվում: Բայց թե եդ
հրահանգ տվողներն ու հրահանգ կատարողները
ուրիշ-ուրիշ մարդիկ են: Մինչև կենտրոնից ու-
ղարկված հրահանգը տեղերում կհասկանան,
մենք մեր իմացածը կանենք: (Ներսում աղմուկ,
իրարանցում, Տիգրանը քրտինքը սրբելով դուրս
ե գալիս):

Տ Ե Ս Ի Լ 5

Նույնք, Տիգրան, հետո Նարգիզ

Տ ի գր ա ն .— Գնա՛, ինձ քարկոծողների թվին թող մեկն
ել ավելանա: Ինչ ուզում ես՝ արա՛, միևնույն ա:

Ս ա հ ա կ .— Ասում են դժնիակ ա, նրա համար չեկա:
Կուլակներից յանի մարդ իեր կստանա՞:

(Սահակը գնում ե ներս):

Տ ի գր ա ն .— Գնա՛, ինձ քարկոծողների թվին թող մեկն
ել ավելանա: Ինչ ուզում ես՝ արա՛, միևնույն ա,
քննադատության ժամանակ ամենքը վրադ պիտի
խոսան, իսկ դուք ի՞նչի համար եք յեկել: Ես
խոսակցութունը դիտավորապես ձեր պատճառով
եք: (Նարգիզը ժողովի սրահի դռան շնիքում
կանգնած՝ լսում է):

Դ ա ն ե լ .— Քեզ հետ առանձին գործ ունենք:

Տ ի գր ա ն .— Խնդրում եմ, վոր սրանից հետո դուք
ինձ հետ այլևս գործ չունենաք...

- Ն ա ր գ ի գ .— Փառք ասածո, խելքի եկար:
(Դամելլն ու Գարասիմը Նարգիզին տեսնելուն պես հեռամուս եմ):
- Տ ի գ ր ա մ .— Մեծ անբաղաքավարութիւն ե ձեր կողմից, յերբ մարդկանց զաղտնի հետևում եք:
- Ն ա ր գ ի գ .— Իսկ քո կողմից մեծ քաղաքավարութիւն ա, վոր կուլակների հետ կանդնած սիրաբանութիւն ես անում: Կարոտել եյիր, վաղուց ա՛ դու նրանց չեյիր տեսել: Հարցնելն ամոթ չըլնի՝ ճնորհրդային պլատֆորմի վրա կանդնած եդ աղնիվ քաղաքացիները—ը ի՞նչի համար եյին յեկել, ի՞նչ եյին ուղում: Յեթե վորեւ նպատակ չունենային, նրանք ետեղ չեյին գա:
- Հսի՛ր, քանի ուշ չի, խելքդ հավաքի դոււխդ, դնա՛, որինամբ աշխատի՛: Դու եդ կուլակներից ձեռք քաշի՛. բացի վնասից, նրանք մեզ ոգուտ չեն տա:
- Տ ի գ ր ա մ .— Եդ բարի խրատներդ դու պահի՛ քեզ համար: Յես դիտեմ, թե ի՞նչպես կաշխատեմ:
- Ն ա ր գ ի գ .— Աշխատանքդ տեսնում ենք: Կոլխոզ ընդունվելու համար գիմում տվողներ կան, յերկու ամիս ե՛ պատասխան չեն ստացել:
- Տ ի գ ր ա մ .— Սուտ ես ասում, յես նրանց պատասխանը տվել եմ:
- Ն ա ր գ ի գ .— Են պատասխան չի, վոր դու տվել իս: Նրանց պետք ե բացատրել, խոսել, համոզել...
- Տ ի գ ր ա մ .— Նրանց հետ խոսելու ե ժամերով նրանց բացատրութիւններ տալու յես ժամանակ չունեմ:
- Ն ա ր գ ի գ .— Իսկ կուլակների հետ գինի խմելու ժամանակ ունե՞ս:
- Տ ի գ ր ա մ .— Զայնդ կտի՛ր:

Նույնք և Ավետիք

(Պատի քերթը ձեռքին, փոզոցի կողմից շտապ-
շտապ մերս և գալիս):

Ավետիք.— Աստվածդ սիրես, մի տես ի՞նչ խայ-
տառակութունն է, պատի թերթում մեզ նկարել
են: Նայի՛ր, սրանք կուլակներ են, իսկ սրանցից
մեկը դու յես, մյուսը՝ յես: Գինու բակալները
ձեռքներին՝ կուլակների հետ համարովում ենք:
Իսկ ես մյուսը տերտերն է, խաչով ու ավետարա-
նով մեզ որհնում է: Տակն էլ գրել են՝ «խաղա-
ղութուն ամենեցուն»:

Տիգրան.— Դե արի, լեզու գտի՛ր ու սրանց հետ
աշխատի՛ր:

Նարգիզ.— Կորած լեզու չկա, վոր դու գտնես: Կու-
լիտանիկի լեզուն կոլխոզի ծրագիրն ա. եղ ծրա-
գրով դուք վոր աշխատեք, ձեր մասին թիրթում
վաս բան չեն գրի: Իսկ յեթե գրում են, նշանա-
կում է՝ գրելու տեղիք եք տվել:

Ավետիք.— Ուրիշների մասին ինչի՞ վոչինչ չեն
գրում: Ետ զահրումար լրագիրը հենց մեզ համար
ե լույս տեսնո՞ւմ: Մի համար չեղավ, վոր մեր
մասին վորեւ բան գրած կամ նկարած չլինեն:

Նարգիզ.— Դրա համար դուք նեղանո՞ւմ եք:

Ավետիք.— Քու մասին վոր գրեն, դու չե՞ս նեղա-
նա:

Նարգիզ.— Յեթե սխալ գործ կրոնիմ, թող գրեն:

Տիգրան.— Խնդրում եմ՝ դու մեզ հետ չհավասար-
վես, մենք կուտակցականներ ենք: (Կուլտուրա
ցույց և տալիս):

Նարգիզ.— Դու քու արած դո՛րծդ ինձ ցույց տուր
և կատարածդ աշխատանքո՛վ ինձ զարմացրու:
Կուլտուրաբերում, աչքս ես կոխում թե ի՞նչ:

Հողս գլխիդ, յերևում ա, թե դու ի՞նչ տեսակ
կուսակցական ես: Քեզ նման կուսակցականները
բազարում ջուխտը մի շահի ա...

Տիգրան.— Ձայնդ կտի՛ր, լիբր անդգամ:

Նարգիզ.— Կուսակցականը բա եղ խոսքը կասի՞:
Հողս քեզ պես կուսակցականի գլխին: Դու ի՞նչ
կուսակցական ես: Սրանից — նրանից մի քանի
խոսք լսել ես, դրանով ուզում ես ուրիշներին
զարմացնե՞ս: Մի հարցնող լինի՝ ո՞վ ես, ինչա-
ցո՞ւ յես: Եղ կուսակցական տո՞մսն ել ո՞վ ա ի-
մանում՝ ումնից ես զողացել: Ես տո՞մսն ել վոր
չունենայիր, փողոցումն ընկած, սոված—ծարավ
կսատկեյիր, յերեսիդ նայող չեթ լինի: Հողս
գլխիդ:

(Գնում ե ժողովարանը):

Տ Ե Ս Ի Լ 7

Նույնք և Մարգար

Տիգրան.— Ես տեսակ բերանը պատուած կնոջ յես
մի բուպե չեյի պահի:

Ավետիք.— Դրանք զատարկ բաներ ին: Յես բոլո-
րովին մոռացա, վոր քեզ ասեմ: Երջկոմի քար-
տուղարն ինձ կանչել եր իր մոտ: Լսի՛ր, մեր
խնդիրը դրված ե վաղվա բյուրոյի նիստում:

Տիգրան.— Ա՛յ քեզ խայտառակութուն...

Հրուշ.— Երջկոմի քարտուղարը. ձեզ կանչում ա:
Համեցեք...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Դամեյլ ազի մարագի մտ: Մարգարը դարմանով լի յերկու քոնցնեքը դուրս է բերում, դնում մարագի դռան առջև: Իսկ Սահակը փառոցի հակառակ կողմից, դարմանով լի քոնցը շալակիմ, ինքն իրեմ խոսելով գալիս է:

Տ Ե Ս Ի Լ 1

Սահակ և Մարգար

Սահակ.— Թեկուզ հազար անգամ ասա՛, նրանք իրենց ուղածն անելու յեն: Դրուսա վոր աշխարհը շուտ ա յեկել:

Մարգար.— Ճիշտ ա, շուտ ա յեկել: Բայց շուտ դալը դու ի՞նչպես ես հասկանում, Սահակ բիձա:

Սահակ.— Յես եսպես եմ հասկանում, վոր ես կնիկարմատները շատ են յերես առել:

(Քոնցը դնում է գետնին):

Մարգար.— Սահակ բիձա, յես ինչպես տեսնում եմ, կնիկարմատները քեզ նեղացրել են:

Սահակ.— Ուրիշ կնանոց հետ յես ի՞նչ հաշիվ ունեմ: Թոսքը մեր տանըցոնց համար ա: Լսի՛ր, դնացել եմ տուն, վո՛չ ճրագ ա վառված, վո՛չ ջուրն ա բերված, վո՛չ տունն ա ավլած, յերեսի վրա թողել ա ու դնացել, չեմ իմանում վո՛ր ջհանդամը կորել: Քեզ եմ հարցնում, բա ես կարգ ու կանոն ա՞:

Մարգար.— Դե լավ, կարգն ու կանոնը ետեղ ի՞նչ կապ ունի:

Ս ա հ ա կ .— Ինչպես թե ինչ կապ ունի: Առաջ տղա-
մարդը դրսի գործն եր կատարում, իսկ կնանի-
քը՝ տան գործը: Հմի ընենց ա դառել, վոր տղա-
մարդն ել ա դրսի գործ կատարում, կնիկարմատն
ել: Տան գործը մնացել ա յերեսի վրա, անող
չկա: Բալքի յես եմ ու սոված-ծարավ մեռնում
եմ, բա են քանդվածումը մի ստաքան ջուր չըլի-
նի՞ վերցնեմ խմեմ, մի պատրաստի հաց չըլնի՞
վերցնեմ ուտեմ:

(Զիրուխը լցնում ե ու սկսում ծխել):

Մ ա ր գ ա ր .— Դրա համար ել նեղացե՞լ ես: Տնաշե՛ն:
Սանամ մոքիրը յերևի գործ ունի, ուչացել ա,
վերցրո՛ւ տան գործը ինքդ արա՛, տան գործ ա-
նելն ի՞նչ մի դժվար բան ա: Քաղաքից կոլխոզի
չեֆերն ես որ եկել են, կինո յեն ցույց տալու,
Սանամ մոքիրն ուրիշ կնանոց հետ յերևի դնացել
ա թամաշա անի:

Ս ա հ ա կ .— Դրանք ել հո թամամ համը հանեցին: Որը
մի մահանա յեն բռնում, քաղաքից վեր կենում
ու դալիս: Գալուց ել հո մեկը կամ յերկուսը չի
դա, թորունով են դալիս:

Մ ա ր գ ա ր .— Դե լավ, նրանք իրենց քեֆի համար հո
չե՞ն դալիս:

Ս ա հ ա կ .— Գիտեմ՝ ինչի համար են դալիս: Գալիս են
թող դան, բան չեմ ասում: Գան կոլխոզին քոմագ
անեն, յես ել կոլխոզի անդամ եմ: Թող դան մեզ
լուսավորեն, մի խոսքով՝ մեզ ինչ ուզում են՝
թող անեն, միայն թե կնիկարմատներին հասկա-
ցնեն, վոր նրանք տան գործը յերեսի վրա չթող-
նեն ու դնան՝ դրսի գործերով զբաղվեն, կնիկար-
մատը ստեղծված ա տան գործի համար. տունն
ավլի, երեսա սաՀի, կերակուր խիլ, վոր տղա-
մարդը դրսից դա, ամեն ինչ տանն արած պատ-
րաստ լինի:

Մ ա ր գ ա ր .— Եղպես չի: Ընկեր Լենինը իրա ժամա-
նակին ասել ա, վոր խոհարարներն ել յերկիր
սլիտի կտավարեն: Իսկ յերկիր կտավարելու

Համար, նրանք տան չորս պատերից պիտի դուրս
գան, ամեն ինչ տեսնեն ու ամեն ինչ սովորեն:

Մ ա հ ա կ .— Ձե՛ր, ընկեր Լենինի հետ եղ մի՛ րանումը
յես Համաձայն չեմ: Կառավարական գործերում
վոր կնանիքն ել սկսեցին խառնվել, գործը լավ
չի գնա: Ընտանեկան Համերաշխությունն ել անից
կվերանա: Մարդը կնգան ա ասելու՝ տան գործ
արա՛, կնիկը մարդուն, մեջտեղ վոչ նա յա անե-
լու, վոչ մյուսը:

Մ ա ր գ ա ր .— Սահա՛կ բիձա, ուրիշ տեղ ել դու եղ
խոսքը կասես, քեզ կմեղադրեն: Կասեն բուր-
ժուական տեսակետի կամ թե կուլակների ազդե-
ցության տակ ընկած մարդ ա:

Մ ա հ ա կ .— Բուրժուաների հերն ել անիծած, կուլակ-
ներինն ել: Իմ խելքը վոնց վոր կտրում ա, ընենց
ել ասում եմ: Յես կոլխոզի անդամ եմ, ուրիշի
հետ յես ի՞նչ Հաշիվ ունեմ:

Մ ա ր գ ա ր .— Սահա՛կ բիձա, վոր կոլխոզի անդամ ես,
եղ լավ ա. բայց վոր կնանոց մասին սխալ ես
մտածում, եղ լավ չի: Սրանից հետո քու կնիկը
մենակ՝ քու տան գործը չպիտի անի: (Դարմանով
լի ֆրոցը շալակում է ու դուրս գնում):

Մ ա հ ա կ .— Ես ի՞նչ ա ասում: Յես կնիկ եմ բերել,
վոր իմ տան գործն անի, բա վո՞նց... (Քրոցը
շալակում է ու դուրս գնում):

Տ Ե Ս Ի Լ 2

Դամել և Հեղինա

Մի մեծ սնդուկ, յերկուսով բռնած, բերում են

Հ ե ղ Ի ն ա ր .— Կաներս կոտորովեց, ա՛յ մարդ, վե՛ր
դիր՝ մի փոքր հանգստանամ:

Դ ա մ ե լ .— Դու ել հանգստանալու ժամանակ ես
գտել: Վերցրու ու տանենք դնենք ենտեղ, նրանից
հետո, ինչքան ուզում ես, հանգստացի՛:

(Սնդուկը դնում եմ մարագի ներսում և դուրս եմ գալիս մարագի դռան առջև քարի վրա նստում)։

Եստեղ աչքից հեռու տեղ ե, վոչոք չի տեսի։
Հ ե դ ի ն.— Դե լալ, անից տանողը եստեղից չի՞ տանելու։

Դ ա ն ե յ.— Տեղը վոր խմանան, իհարկե կտանեն։ Բայց նրանց մաքովը չի անցնի, թե մարագում, հողի տակը վոսկեղեն և պահված։ Ե՛հ, հարամեց, ա՛յ կնիկ։ Ես քանդվածումը ել ապրել չարժի։

Հ ե դ ի ն.— Ա՛յ մարդ, յեթե եղպես ե, ել ինչի՞ յենք մնում։ Տուն ու տեղ հավաքենք՝ դնանք ուրիշ յերկեր։

Դ ա ն ե յ.— Ել արդեն ուշ է։ Դե ել ինչի՞ համար ես նստել, վեր կաց դնա՛։ Քիչ հետո եստեղ ուրիշ մարդիկ են գալու։ Գաղտնի խորհրդակցություն ունենք։ Յեղսոյին սրա մասին վոչինչ չասես, թե չե դյադի ահանջը կընկնի, ել տերը չես։ Եդ դյադեն եդ դարմանով լիքը քթոցը ի՞նչի համար ե եստեղ թողել։

Հ ե դ ի ն.— Յերևի մեկը տարել ե, եդ մեկն ել թողել ե, վոր հետո դա տանի։

(Հեղիմարը գնում ե)։

Դ ա ն ե յ.— Կարծես մեջքը կկոտրվեր, վոր իրկու քթոցն ել վերցնեք, միասին տանեք։ Քանի չեն յեկել, դնամ տեղավորեմ։ (Գնում ե ներս, մարագի դուռն իր հետևից կողպում)։

Տ Ե Ս Ի Լ 3

Գարասիմ, տերտեր, և հետո Դանել

Տ եր տ եր.— Աշխարհի բանը նարդվան ա, մեկը վոր քաշանում ա, մյուսը պետք ե բարձրանա։

Գ ա ր ա ս ի մ.— Ուրեմն դու բարձրանալու հույս ունի՞ս։

Տ Ե Ր Ա Ե Ր.— Իհարկե: Բա հո իսպես չենք մնալու. եղ բախտի դուռը անպատճառ մի որ ել մեր առաջ կրացվի: Քանի սրանք չեյին եկել, իմ դործս հաջող եր: Եղ անիծվածները եկան—չեկան, իմ յեկամուռը բոլորովին կտրվեց: Չահրումար զազար մեջ ընկավ, ել վոչ հարսանիք ե լինում, վոչ կնունք: Մեռելները հո, սովորություն ե դառել, կուսակցական, թե անկուսակցական, առանց տերրի յեն տանում թաղում:

Դ Թ Ա Յ Ե Լ.— Բա ել ո՞ւր ես կանգնել, փարաջեղ հանի՛, զնա քեզ համար մի ուրիշ դրաղմունք հարի՛: Տերտերությունն արդեն խողից ընկել ե:

Տ Ե Ր Ա Ե Ր.— Ա՛յ մարդ, վո՞րտեղից դուրս եկար, դու եղ մարաղում ի՞նչ եյիր շինում:

Դ Թ Ա Յ Ե Լ.— Ճղնում եյի: Վաղուց ա մարագ չեյի յեկել, ասի մի մտնեմ տեսնեմ՝ դարմանն ես տարի անասուններին հերիք անելո՞ւ ա:

Տ Ե Ր Ա Ե Ր.— Ձեր անասունների մասին դուք մտածում եք, իսկ ձեր քահանայի մասին չե:

Դ Թ Ա Յ Ե Լ.— Մեր քահանան իր մասին ինքը վաղուց մտածած կլինի: Նա հին աղվես ա...

Տ Ե Ր Ա Ե Ր.— Եղպես ասելով յես ես որն եմ ընկել-ճիշտ եմ ասում, վոր վոչինչ չունեմ:

Դ Թ Ա Յ Ե Լ.— Գարասի՛մ, հալատո՞ւմ ես:

Գ Թ Ր Ա Ս Ի Մ.— Վոչ հալատամ սոււտ Քրիստոս: Աչխարհիս յերեսին հողևորականներից մեծ ստախոս վոչ մի տեղ չկա:

Դ Թ Ա Յ Ե Լ.— Յես ել եղ կարծիքին եմ: Առհասարակ հողևորականները շատ աչքածակ մարդիկ են, աչխարհի ամբողջ հարստությունը վոր տան նրանց, նրանց աչքը չի կշտանա, մի գլուխ կասեն՝ տուր: Մար ու ձոր — տերտերի վոր վոր ասել են՝ ճիշտ են ասել:

Տ Ե Ր Ա Ե Ր.— Հետո՞:

Դ Թ Ա Յ Ե Լ.— Հետո են, վոր դու թեև եղքան լաց ես լինում, բայց մեչոկներով վոսկի—արծաթը, ո՞վ

ա խմանում, վո՛րտեղ ես դրել ու պինդ, պինդ պահել:

Տ Ե Ր Ա Խ Ի Ր.— Առածն ասում ա՛ շուտ արա դողին բռնի՛ր, թե չե դողը քեզ կբռնի: Հմի քոնն ե: Դու վոր մեշոկնեքով կամ սնդուկնեքով հարստությունդ պահել ես, կարծում ես ուրիշներն ել պահել ե՞ն: Խնդրում եմ քու արշինով ուրիշներին չչափես:

Գ Խ Ր Ա Ս Ի Մ.— Մո՛ւս արեք, մարդ ա դալիս: (Մտնում եմ մարագը: Մարգարը Յեղսոյի հետ խոսելով գալիս եմ):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք, Մարգար և Յեղսո

Մ արգար.— Ծիշտ ա, դատակարգային թշնամուն ջախջախել ենք, բայց դեռ վերջնականապես թաղել չինք: Իսկ թաղման արարողությունը սկսված ա:

Յ Ե Ղ Ա Ս Ն.— Քու ասածներից յես վոչինչ չեմ հասկանում:

Մ արգար.— Կամաց-կամաց կհասկանաս: Դե ել ի՞նչ ես կանգնել, դնանք մարագը, դու քթոցը բռնի, յես դարմանը կլցնեմ:

Յ Ե Ղ Ա Ս Ն.— Հրին, քթոցը դարմանով լցրած և պատրաստ դրված ա:

Մ արգար.— Ներողություն, յես սխալվեցի: Ուզում եյի ասեմ՝ դնանք, դու քթոցը բռնի՛, յես դատարկեմ:

Դ Ե Ա Ն Ի Լ.— (Մի կողմ) Գյադի միտքը ծուռ ա:

Յ Ե Ղ Ա Ս Ն.— Յես չեմ հասկանում, թե վոր դատարկելու եյիր, ել ինչի՞ համար ես լցրել:

Մ արգար.— Սխալվել եմ, քու հերը ասել ա, վոր ես տարի մեր դարմանը քիչ ա — խնայողաբար բանեցրո՛ւ, վոր անասունների կերը չպակասի:

Գ Թ Ա Յ Լ.— (Մի կողմ) Ստի Հերն անիծած, թե եղ
խոսքը յես քեզ ասել եմ:

Յ Ե Ղ Ա Ս.— Վո՛ւյ, քոռանամ, սա իմ Հայրիկիս ձայնն
է:

Մ արգաք.— Գու Հայրիկը ես գիշերվա կեսին եստեղ
ի՞նչ դործ ունի: Հիմա նա, ո՛վ ա իմանում, վոր
քունը ու պուճախում նստած, խորհրդային իշ-
խանության Հիմքերն ա փորում:

Գ Թ Ա Յ Լ.— Իմաստո՞ւն ա շան տղեն:

Յ Ե Ղ Ա Ս.— Վո՛ւյ, քոռանամ, թե սուտ ասեմ, իսկա-
կան Հորս ձայնն եր:

Մ արգաք.— Դու ել Հենց մի գլուխ քու Հոր ձենն
ես լսում: Հորդ ձենը լսելու Ժամանակը չի, արի
ես քարի վրա նստենք, իրար Հետ քիչ գրից ա-
նենք:

Յ Ե Ղ Ա Ս.— Չեմ ուզում:

Մ արգաք.— Արի՛, մի՛ վախենա, վիշապ չեմ, վոր
քեզ մի բաշ կուլ տամ:

Յ Ե Ղ Ա Ս.— Դե լավ, իմ նստելով տեսեմ դու ի՞նչ բա-
վականություն ես դդում:

(Յեղսմն ու Մարգաքը նստում են քարի վրա):

Մ արգաք.— Շատ մեծ բավականություն: Դու չես
պատկերացնում. մի տես, թե ինչքա՞ն գեղեցիկ
ու Հետաքրքիր տեսարան ա: Լուսնյակը վերևից ա
լուսավորում, ներքևից՝ առուն ա կշկշալով դը-
նում. իսկ մենք իրար կողքի, ես փափուկ քարի
վրա նստած, գրից ենք անում:

Յ Ե Ղ Ա Ս.— Փափուկ քարի վրա, Հա՛, Հա՛, Հա՛...:

Մ արգաք.— Ինչի՞ ես ծիծաղում: Տու՛Քի քարը փա-
փուկ չի, բա ի՞նչ ա: Ուրագով տաշում են, մեխ
են խփում:

Յ Ե Ղ Ա Ս.— Կարծես, ել ուրիշ խոսալու բան չկա, քա-
րից ու մեխից ես բռնել:

Մ արգաք.— Դե լավ, վոր եղպես ե, լուսնյակից
խոսենք, Յեղսո, դու կիմանաս, մեր Հին գրող-
ները են լուսնյակի մեջ ի՞նչ են տեսել, վոր նրա
մասին ենքան շատ բաներ են գրել:

Յեղսոն.— Չգիտեմ, յեթե դու եղբան հետաքրքրվում ես, դնա իրենցից հարցրո՛ւ, իմացի՛ր:

Մարգար.— Նրանց հետ յես ի՞նչ հաշիվ ունեմ, յես քեղնից եմ ուզում իմանալ: Լսի՛ր, Յեղսո՛, իմ կարծիքով եղ մարդիկ կամ սիրահարվածներ կլինեն, կամ թե մի ուրիշ պատճառ կլինի: Առանց պատճառի աշխարհիս յերեսին, դու գիտես, վոր վոչինչ չի կատարվում: Ա՛յ, խոսքի որինակ, են առու՛ն, վոր ընենց կշկշալով դնում ա, նա մի պատճառ ունի: Արևը վոր մայր ե մտնում, լուսնյակը դուրս դալիս, դա ել մի պատճառ ունի: Յես և դու, վոր խապես իրար կողքի նստել ու իրար հետ գրից ենք անում, ես ել մի պատճառ ունի... (Շարունակ մտտեցում ե նրան):

Դանիել.— (Դռան շեմքից) Վոր մի քար վերցնեմ, խփեմ՝ ձեր յերկուսի գլուխն ել ջարդեմ, իզ ել իր պատճառը կուեննա...

Յեղսոն.— Ինչի՞ համար ես մտածում:

Մարգար.— Յես մտածում եմ և չեմ հասկանում, թե եղ գրողները, արեգակի պայծառ լույսը թողած, լուսնյակի եղ աղոտ լույսի մեջ ի՞նչ են տեսնում: (Յերկար նայում ե լուսնին):

Յեղսոն.— Մարդա՛ր, ինչի՞ համար ես լուսնին եղբան խորասուզված նայում: Մի դուցե եղ հին գրողների նման դու ել սիրահարված ես:

Մարգար.— Եղպես ա յերևում... Յեղսո՛ ջան, դու ել մի լավ նայի՛ր, լուսնի մեջ կարծես իսկապես մի խորհրդավոր բան կա...

(Յեղսոն յերկար ժամանակ նայում ե լուսնին: Իսկ Մարգարը փորձ ե անում նրան գրկել, բայց չի համարձակվում):

Յեղսոն.— Ո՛ւր ե, յես նրա մեջ խորհրդավոր բան չեմ տեսնում:

Մարգար.— Դե յես մեղավո՛ր եմ, վոր դու չես տեսնում: Լսի՛ր, Յեղսո՛, արի ես գիշեր մինչև լույս ես քարի վրա նստենք, լուսնյակին թամաշա անենք:

Յեղսւ.— Ինչ ա, ուրիշ գործ չկա՞, վոր նստեմ՝ ամբողջ գիշերը լուսնին թամաշա անեմ:

Մարգար.— Դե լա՛վ, դրա մասին չխոսենք: Դու էն ասա՛, մենք վոր երկուսով եսպես իրար կողքի նստել ենք, լա՞վ ա, չե՞:

Յեղսւ.— Քեզ համար ի՞նչպես ե:

Մարգար.— Ինձ համար անասելի լա՛վ ա: Հողիս փառավորում ա:

Դամեյլ.— Շան տղա, սիրուն-ջաշել աղջկա կողքին նստել ես, քե՛՛՛՛՛ կս քաշում, իհարկե հոգիդ կփառավորվի:

Մարգար.— Յեղսո՛՛ ջան, դու վոր կողքիս նստած ես, կարծես ամբողջ աշխարհը ինձ են տվել: Ուրախությունից քիչ ե մնում, թե՛վեր առնեմ ու յերկինք բարձրանամ:

Դամեյլ.— Շան տղա, վեր կընկնես, գլուխդ կկոտրվի, մեղք ես...

(Յերկար լռություն):

Յեղսւ.— Ի՞նչի չես խոսում:

Մարգար.— Ձեմ իմանում՝ ինչ խոսամ: Ուրիշ անգամ մտքիս շատ բան ա գալիս, իսկ հիմա, հակառակի պես, յեղածն ել մոռանում եմ: Յես դարձանում եմ՝ գրողները իրենց գրվածքներում ինքան լա՛վ-լա՛վ խոսքերը վո՞րտեղից են ճարում: Ա՛խ, յերանի, թե յես ել գրող լինեյի:

Յեղսւ.— Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել:

Մարգար.— Դրանով յես էն եմ ուզում ասել, վոր, ա՛յ, տեսնո՞ւմ ես, տրեխներս մաշվել ա...

(Կռամում ե և իր տրեխների տակը մայում):

Յեղսւ.— Դե լա՛վ, ինձ վոր ասում ես, յես ի՞նչ անեմ: Հորս ասա, նա քեզ նոր տրեխացու կտա:

Մարգար.— Հորդ տասն անգամ ասել եմ, չի տալիս:

Յեղսւ.— Ինչի՞նչ չի տալիս, մեր տանը ենքան տրեխացու ունենք վոր...

Դամեյլ.— Մեր տանը շատ բան ունենք, ձեզ ի՞նչ...

Մարգար.— Յեղսո՛՛ ջան, մի բան ասեմ՝ չնեղանաս:

Գուհերը շատ սկուզոյ մարդ ա: Սուտ չեն ասել,
վոր չաղ հազիւրը ձու չեն ածի:

Դ Թ Ա Ն Ե Լ.—Շան տղեն առակներով ա խոսում:

Մ Ե Ր Գ Վ Ե Ր.—Յեղսո՛ ջան, հլա մի տես, ես տրեխը բա
հազնել կըլնի՞:

Յ Ե Ղ Ա Ս Ն.—Առաջոտը ինձ հիշեցրո՛ւ, մի զույգ տրե-
խացու յես թագուն վերցնեմ տամ:

Դ Թ Ա Ն Ե Լ.—Շան աղջիկ, իմ հաշիին նրան լալություն
ա անում:

Դ Ե Ր Ա Ս Ի Մ.—Թող տեսնեմ, եդ ո՞ւմ հետ ես խոսում:
(Գլուխը դռան շեմքից կիսով չափ դուրս ե հա-
նում: Դ Թ Ա Ն Ե Լ Ը նրան ներս ե հրում):

Դ Թ Ա Ն Ե Լ.—Տեսնելու կարիք չկա, նրանք ձեզ կտեսնեն,
կզնան խարար կտան, կզան մեզ կձերբակալեն:

Մ Ե Ր Գ Վ Ե Ր.—Յեղսո՛ ջան, դու քու աչքովդ մտիկ
տո՛ւր. բարիկ վտաններով սուր քարերի վրա ենքան
ման եմ եկել, վոր քարերի ճղած տեղից արյունը
դնում ա:

Յ Ե Ղ Ա Ս Ն.—Ո՞ւր ա, թող տեսնեմ...

(Յեղսոն կռանում ե տեսնելու, Մ Ե Ր Գ Վ Ե Ր նրան
գրկում ե և սկսում համբուրել):

Դ Թ Ա Ն Ե Լ.—Վա՛յ յես քու հերն անիծեմ...

Յ Ե Ղ Ա Ս Ն.—Թո՛ղ, մարդ կտեսնի:

Մ Ե Ր Գ Վ Ե Ր.—Ես գիշերվա կեսին մարդն ետեղ ի՞նչ
գործ ունի: (Գրկում ե, նորից համբուրում):

Դ Թ Ա Ն Ե Լ.—Շան տղի բերանը համի յե ընկել, բռնելա
ու ել բաց չի թողնում:

Տ Ե Ր Ա Ս Ե Ր.—Ես ո՞ւմն ա բռնել, թող մի տեսնենք:

(Տ Ե Ր Ա Ս Ե Ր գլուխը դուրս ե բերում, իսկ Դ Թ Ա Ն Ե Լ Ը
նրան հրում ե ներս):

Դ Թ Ա Ն Ե Լ.—Գլուխդ ներս տար, չտեսնեն: Շան տղան
արջի նման փաթաթվել ա, քիչ ա մնում, թե
խեղճ աղջկան խեղդի: (Գարասիմն ու տերտերը
գլուխները նորից դուրս են բերում):

Տ Ե Ր Ա Ս Ե Ր.—Ուրեմն եդտեղ աղջիկ ել կա՞:

Դ Թ Ա Ն Ե Լ.—Աղջկա անուն ո՞վ տվեց: Դուք ինչ եք ձե-

զանից բաներ հնարում: Գլուխներդ ներս տարե՛ք,
եստեղ թամաշի բան չկա:

Յեղսն.—Դե բախկան ա, թո՛ղ, ասում եմ:

Մարգար.—Հողիվ ես ձեռս ընկել: Վոր թողնեմ,
ուրիշ անգամ դու իմ ձեռը չես ընկնի:

Յեղսն.—Յես քեզ ասում իմ՝ թո՛ղ, թե չե ձայն
կտամ, գյուղից մարդիկ կհավաքվեն:

Մարգար.—Ձե՛ն չտաս, շա՛ն աղջիկ, թե չե տուն-
ներս կքանդվի:

(Յեղսն Մարգարի ձեռից մի կերպ ազատվում է):

Յեղսն.—Ձես ամաչո՛ւմ: Սրա համա՞ր դու ինձ ես-
տեղ բերիր: Մի նայի՛ր, ամբողջ շորերս պատռե-
ցիր:

Մարգար.—Վնաս չունի, հերդ փող շատ ունի, քեզ
համար նորը կաննի:

Դամեւ.—Շան տղա, շորը՝ դու պատռես, ջարմեն՝
յես քաշե՞մ...

Գարաւիմ.—Ջարմեն ինչի՞ն յես մենակ դու քաշում:

Տերտեր.—Ջարմի բանը հեշտ ա, դու ասա՛ սկսած
դո՛րծը հաջողութ՛յամբ գլուխ դա:

Յեղսն.—Յես դնում իմ: (Վագելով գնում է):

Մարգար.—Մենակ մի՛ գնա, կա՛ց, ես քի՞տոցը դա-
տարկեմ, դամ քեզ ճամբու դնեմ:

(Դարմանով լիքը քոնցը շուռ է տալիս մարագի
շեմքում և դատարկ քոնցը վերցնում ու դուրս
վազում):

Տ Ե Ս Ի Լ 5

Դամեւ, տերտեր և Գարաւիմ

Տերտեր.—(Ներսից) Ես դարմանը ո՞՞վ լցրեց գլուխ-
ներես, ոգնեցե՛ք, յես խեղդվեցի:

Դամեւ.—Սո՛ւա, ձայն մի՛ հանի:

Տերտեր.—Դարմանը լցվել ա բերանս, շունչս կտրու-
վում ա, քիչ է մնում մեռնեմ, դու ասումի՛ս սուս
արա՛, ձայն մի՛ հանի՞:

(Դարմանը վրաներից թափ տալով՝ մարագից դուրս եմ գալիս) :

Գ ա ր ա ս ի մ .— *Քեկուզ մեռնես, ի՞նչ կա վոր...*

Դ ա մ ե լ .— *Ճիշտ ա ասում, ընդհանուր դործի համար կարելի ա ն մեռնել :*

Տ ե ր տ ե ր .— *Ընդհանուր դործի համար եղ ինչի՞ դուք չեք մեռնում :*

Դ ա մ ե լ .— (Առանձին) Մպասի մի դամ տուն, յես քու հերը կանխձեմ : Ուրիշ պայմաններում լիներ, դու մեր ձեռքից չեյիր ազատվի...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Դանել աղի տունը: Դանելը քալոստի վրա նստած մտածում է և համբիշի հատիկները փաշում: Իսկ Հեղինարը լուսամուտի առջև կանգնած նայում է: Լսվում է կեցցեների և ուռաների ազագակ:

Տ Ե Ս Ի Լ 1

Դանել և Հեղինար

Ձ ա յ ն.— *Կեցցե՛ Հոկտեմբերյան հեղափոխությունը. ուռա՛...*

Ձ ա յ ն եր.— *Ուռա՛, ուռա՛...*

Ձ ա յ ն.— *Կեցցե՛ համաշխարհային պրոլետարիատի զեկավար և առաջնորդ ընկեր Ստալինը. ուռա՛...*

Ձ ա յ ն եր.— *Ուռա՛... ուռա՛...*

Հ ե ղ ի ն.— *Ես տոների ժամանակ, ամեն տարի դրանք մե՛ր փողոցով պիտի դան անցնեն. կարծես ել ուրիշ փողոց չկա: Հողս մեր գլխին:*

Դ ա ն ե լ.— *Դիտմամբ են գալիս մեր փողոցովն անցնում: Դրանց միտքը դու չես հասկանում: Լուսամուտը ծածկի՛ դրանց ձայնը չլսես: Անիծվածներն ուրուրի նման գլխներին շարունակ պտտվում են: Դրանցի՛ց ազատում չկա:*

Հ ե ղ ի ն.— *Քար ընկներ դրանց գլխին. հախ միայն տերը դրանց զիվանն անի: Ո՛վ սուրբ Մարիամ աստվածածին, ստեղծո՛ղ արարիչ աստված...*

(Ձեռները դեպի յերկինք պարզած՝ աղոթում է):

Դ ա ն ե լ.— *Մարիամ աստվածածնի հերն ել անիծած, ստեղծող արարիչ աստծուն ել հեար: Իս դրությունը աղոթքներով ու անեծքներով չի փոխվի՛թե ուրիշ միջոց գիտես, ասա՛:*

Հ ե ղ ի ն . — Դու քու խելքը թամամ կորցրել ես : Հարց-
նելը ամոթ չլինի, եղ վո՞ր որվանից ե, վոր դու
կուսպաշտ ես դառել :

Դ ա ն ե յ . — Են որվանից, վոր եղ անիծվածները մեր
յերկիրը վոտ դրին : Ես որ-եզուց դարնանացանի
նախապատրաստական աշխատանքները կսկսեն,
նրանից հետո մթերման կամպանիան մահանա
կանին և կզան հոգեհան հրեշտակի նման բկներին
կչոքեն :

(Յերկար ժամանակ լուռ մտածում ե) :

Հ ե ղ ի ն . — Ա՛յ մարդ, հերիք աստածես, հերիք աս
տանջվես . . .

Դ ա ն ե յ . — Նո՞ր պետք ե մտածեմ, նո՞ր պետք ե
տանջվեմ . . . Նրանց եկած որվանից եմ յես մտա-
ծում, նրանց եկած որվանից եմ յես տանջվում :

Հ ե ղ ի ն . — Հավաքվեցին գյուղխորհրդի առաջ :

Դ ա ն ե յ . — Հավաքվեցին, հիմա կսկսեն ճառել . . .
Ա՛խ, յեթե հնար լիներ, սրի կքաշեյի ու բոլորին
կկոտորեյի . . . յես դրանց հերն անիծեմ :

Հ ե ղ ի ն . — Կարմիր դրոշակները կարծես քիչ եր,
հրեն մի քանիսն ել բերին, նորից ավելացրին :

Դ ա ն ե յ . — Եղ կարմիր դրոշակի անուշը հերիք աս
տաս . կարմիր անուշը վոր լսում եմ, գլխիս
վորդները ժաժ աս դալի : Վո՞րտեղից եկան ես ան-
իծվածները . հազիվ մեղ համար ազատ ու հան-
գիտ ապրում եյինք . եկան խանդարեցին, ամեն
ինչ տակն ու վրա արին . . .

Հ ե ղ ի ն . — Ա՛յ մարդ, աստվածդ սիրես, արի թամա-
շա արա՛, տես ո՛վ աս բարձրացել ամբիոնի վրա
ու տաք-տաք խոսում : (Դանելը մտնում ե լու-
սամուտիմ) :

Դ ա ն ե յ . — Ի՞նչ ես զարմանում, ա՛յ կնիկ . աշխարհի
բանը եզպես աս : Երեկ-մյուս որը մեր տանը նո-
քարություն եր անում, իսկ ես որ ճառ աս ասում :
Նրան տե՛ս, ի՞նչպես ձեռքերը թափ աս տալի, ես
յերկրի տերը կարծես մենակ ինքն աս : Շուն շան
վորդի՛, դաշնակցականների ժամանակ դու եզպես

Համարձակվեցիր խոսել, գլուխդ տասը տեղից կկտորվեր:

Հեղիմ.— Յանի մի բան հասկանում աս, վոր խոսում աս:

Դառնել.— Հասկանալ կամ չհասկանալը ո՞վ աս հարցնում: Պորհրդային իշխանությունը բերաններին լեզու աս դրել, սլիտի խոսեն:

Հեղիմ.— Տես վոնց ել են ահազին ժողովուրդը նրան լսում աս:

Դառնել.— Ախմախ ժողովուրդ աս:

Հեղիմ.— Ա՛յ մարդ, Շմոյին կարծեմ դու ուզում եիր տեսնել: Հրեն դնում աս:

Դառնել.— Լավ միտս գցեցիր. կանչի՛ դա, վոչխարները տամ դրան:

Հեղիմ.— (Լուսամուտից): Շմո՛, ա՛յ Շմո, Դանել աղան քեզ հետ գործ ունի: Արի տես՝ ի՛նչ ասում:

Շմո.— (Դրսից) Դանել աղին ասա՛, վոր ես բուսիցիս կգամ:

Դառնել.— Են որը մենատնտեսներին կանչել են գյուղխորհուրդ, դարնանացանի առաջադրանքներն են կազմում: Ենպես բարձր պլաններ են կազմում, վոր ելած-չելածը հավաքենք տանք իրանց, դարձյալ պլանը կիսով չափ կատարած չենք լինի: Եուն շան վորդի՛ք, պլան կազմելը ո՞վ աս իմացել: Ով ինչքան կարողանում աս՝ թողանի. ո՞ւմ ինչ գործն աս... Եդ դյադեն դա՛ տեսնենք ի՛նչ ենք անում:

Հեղիմ.— Են յերկու կովը մորթեցիր. յերկու յեղը տարար Աբարանում կիսատ դնի ծախեցիր. չորսը տարար Լենինական՝ սրան-նրան տվիր, դեռ փողն ել չես ստացել. վոչխարներն ել տալիս ես եդ դյադին. միտքդ ի՞նչ աս, յես չեմ հասկանում:

Դառնել.— Իմ միտքս են աս, պլանները չկատարեմ և սրանց վոչինչ չտամ:

Հեղիմ.— Լավ ես մտածել. բայց վոչխարները վո՞

տալիս ես եղ գյաղին, բա չե՞ն ասի, եղքան ա-
նասունները նրան վո՞րտեղից ա:

Դ ա մ ե յ լ . — Ձե՛ն ասի: Կոմունիստների ծրագիրն ել
հենց ես ա պահանջում: Երեզվա շունեվորները
եսոր ունեւորներ պիտի դառնան: Մեր հաշվին
նրանց ուղում են հարստացնել:

Հ ե ղ ի մ . — Եղ վո՞նց ա. բա ասում են, վոր կոմու-
նիստները ընդհանրապես, սեփականության դեմ
են:

Դ ա մ ե յ լ . — Դեմ են, յեթե եղ սեփականությունը
մասնավորների ձեռքին ա. իսկ յեթե եղ սեփա-
կանությունը իրանց ձեռքին ա, նրանք դեմ չեն:

Ձ ա յ մ . — Կեցցե՛ք բանվորների և գյուղացիների դա-
շինքը.

Ձ ա յ մ ե ր . — ուռա՛. ուռա՛...

Ձ ա յ մ . — Կեցցե՛ք մեր հարազատ և անպարտելի կար-
միր բանակը.

Ձ ա յ մ ե ր . — ուռա՛. ուռա՛...

Հ ե ղ ի մ . — Ե՛ն գյաղեն հմի վորտեղ վոր ա կգա,
մասածի՛ ի՛նչ ես անում: Իմ կարծիքով, եղ վոչ-
խարնները քան թե տալիս ես դրան, ա՛վելի լավ
կանես տաս կառավարության, գլուխդ դինջ լինի:

Դ ա մ ե յ լ . — Վոր ասում եմ՝ բան չես հասկանում, դու
նեղանում ես: Հսի՛ր, ա՛յ կնիկ. եղ վոչխարները,
յես վոր տալիս եմ եղ գյաղին, հույս ունեմ, վոր
վաղը կամ մյուս որը դրությունը կփոխվի, գյա-
ղի գլխին կտամ, վոչխարները նրանից կխլեմ:
Իսկ կառավարության ձեռը վոր մի բան ընկավ,
եւ պրծավ. նրանից ել յես չես ստանա:

Հ ե ղ ի մ . — Հա՛... գլխի ընկա:

Դ ա մ ե յ լ . — Հա՛ու ջան: Ե՛ն գյաղեն եկավ: Գնա դու-
որ բա՛ց արա՛ թող դա:

Հ ե ղ ի մ . — Գնամ:

(Հեղինակը դուրս ե գնում: Դամելը իսկույն
թախտի վրա չոփում ե և ձեռքերը դեպի յերկինգ
պարզած՝ աղոթում: Եմն մերս ե գալիս և գար-
մացած մայում):

Ծմո.— Վա՛հ. ես ինչ բան ա: Դանեյ աղան աստվածապաշտ մարդ ա յեղէլ, յես բեխարար: Չլինի դասըդի ա անում:

Դամեյ.— (Մի կողմ) Վա՛յ, յես քու հերն անիծեմ: Ո՛վ յերկնային թաղավոր, ստեղծող արարիչ աստված, դու ոգնական ու պահապան յեղի՛ր բուր աղքատներին ու չքավորներին

Ծմո.— (Մի կողմ) Կատարյալ երազ ա... Դանեյ աղան աղքատների ու չքավորների համար աղոթք ա անում: Ուրիշը վոր ասեր, չիյի հավատա: Բայց թե աչքովս տեսնում եմ, վո՞նց չհավատամ:

Դամեյ.— Հայր մեր, վոր հերկինս ես, սուրբ յեղիցի անուն քո. յեկեսցե արքայություն քո. յեղիցին կամք քո...

(Եարուսակում ե մինչև վերջ. իսկ Ծմոն գետնին ծալապատիկ նստում ե ու սպասում):

Ծմո.— Ողորմած հոգի հայրս կասեր, յեթե մտնում ես տուն և տեսնում ես, վոր մեկն իր համար աղոթք ա անում, նրան մի խանդարի. թող աղոթքն անի ու վերջացնի: Կամ թե ճանապարհ ես գնում և հանկարծ տեսնում ես՝ ոճը կուացել աւովից ջուր ա խմում, նրան ել մի՛ խանդարի. թող կենդանին հալալ սրտով ջուր խմի... Չե՛, իմ ողորմած հայրս շատ խելոք մարդ ա յեղել...

(Դամեյ ազան ազոթքը վերջացնում ե և սկսում ե յերեսը խաչակնքել: Իսկ Ծմոն նստած տեղից վեր ե կենում ու գլխարկը վերցնում):

Դամեյ.— Ծմո, դու եկել ես:

Ծմո.— Եկել եմ, Դանե՛յ աղա: Կարծեմ դու ինձ կանչել եյիր:

Դամեյ.— Ճիշտ ա, կանչել եմ: Քեզ հետ մի շատ կարևոր խնդրի մասին ուզում եմ խոսել: Նստիր:

Ծմո.— Չե՛, Դանե՛յ աղա, ըսենց կանգնած լավ ա:

Դամեյ.— Դե լավ, վոնց վոր ուզում ես:

Ծմո.— Ներողություն, Դանե՛յ աղա. խոսքդ կարում

եմ: Ներստանց Մարգարին խոստացել ես մի լուծ-
յեղը տա՞լ:

Դ ա մ ե յ լ.— Խոստացել եմ և կտամ, ի՞նչ կա վոր:

Շ մ ն.— Առանձնապես վոչինչ չկա. բայց թե հայրը
իր վորդուն եղ լավությունը չի անի, ինչ վոր
դու յես անում:

Դ ա մ ե յ լ.— Բնավորության խնդիր ա: Իմ բնավորու-
թյունս ել եսպես ա: Ուրիշը, իհարկե, չի անի.
բայց յես կանեմ: Իմ ուզած մարդու համար,
կյանքս չեմ խնայի: Ինչ վոր ուզի կտամ. մի լուծ-
յեղը ի՞նչ ա վոր: Միևնույն ա, իս աշխարհից,
բացի երկու տախտակից ու մի քանի մեար կտա-
վից, ուրիշ բան հետս չեմ տանելու:

Շ մ ն.— Ճիշտ ես ասում, Դանե՛լ աղա: Ամեն ինչ
կդնա, մեծակ անունը կմնա:

Դ ա մ ե յ լ.— Բացի դա, դու դիտես, վոր եղ մարդը մի
քանի տարի իմ կշտին ծառայել ա. լավ, թե
վատ, դրա մասին չխոսենք. բայց թե ուրիշի
խելքով ընկավ, իմ կշտից դուրս եկավ, զնաց
կոխող գրվեց: Վնաս չունի. թող գրվի. բան չեմ
ասում, բայց թե փոշմանելու յա:

Շ մ ն.— Ի՞նչ խոսք, վոր փոշմանելու յա: Կոխողը
լավ վոր բլեր, յես ել կգրվեյի: Չե՛, նա սխալվել
ա:

Դ ա մ ե յ լ.— Կոխող գրվողները, ընդհանրապես, բուր-
բը սխալվել են: Բայց թե, ասած ա, եշ նստիլը մի
ամոթ, վեր գալը՝ երկու ամոթ:

Անցնենք բուն խնդրին: Լսի՛ր, դու խելքով-չնոր-
քով աղա յես, մեր Յեղսոյին դու շատ դուր ես
յեկել: Ամբողջ Ժամանակ նա քու մասին ա խո-
սում: Ասում ա, յեթե ինձ Շմոյին չտաք, յես ինձ
կսպանեմ:

Շ մ ն.— Յերեի նա մասխարի յա պցում. չունքի մի
քանի անգամ լսել եմ, վոր նա իմ անունը մայ-
մուն ա դրել. . . Աղբյուրը զնալիս իմ հասցեյին
անոխյել խոսքեր ա ասում ու վրես ծիծաղում:

Դ ա մ ե յ լ.— Դա շատ սիրելուցն ա. . . ուշադրություն

Տի՛ դարձրու: Լսի՛ր, յես տեսնում եմ, վոր դու ել դեպի Յեղսոն անտարբեր չես: Մինչև որս յես քեզ հետ հարեանություն եմ արել: Բայց վորոչեւ եմ, վոր սրանից հետո քեզ հետ բարեկամություն անեմ. կարծում եմ, վոր դու դեմ չես լինի:

Տմն.— Դեմ չեմ. բայց թե... յես լսել եմ, վոր Յեղսոյին Մարգարին ես ուզում տաս:

Դաճել.— Քեզ թողած, յես Մարգարին աղջիկ կտամ. խելքդ ի՞նչ ա կտրում: Նա ո՞վ ա, ի՞նչի տեր ա:

Տմն.— Եդ մեկը ճիշտ ա, վոր նա վո՛չ անտեսություն ունի, վորչեւ ել անամեջ: Իսկ յես անամեջ ել ունեմ և անտեսություն ել. անտեսությունս թեև փոքր ա, բայց քանի վոր դու վորոչեւ ես ինձ հետ բարեկամություն յանել, նշանակում ա, վոր իմ անտեսությունն ել կմեծանա...

Դաճել.— Իհարկե, վոր կմեծանա. դրանում ի՞նչ կասկած: Կարևորը են ա, վոր դու քու հավատարմությունդ ցույց տաս, ուրիշի ասածներին չլսես: Լսի՛ր, քեզ վոր մի հիսուն գլուխ վոչխար տամ, կարո՞ղ ես պահի:

Տմն.— Ինչի՞ չեմ կարող. ամեն ինչ կթողնեմ, մենակ դրանով կգրադվեմ: Հիսուն վոչխարը քիչ բան չի: Յես խոսք եմ տալիս՝ եդ հիսուն վոչխարը տարվա վերջում մի քանի հարյուր դարձնեմ:

Դաճել.— Վոր եղպես ա, ալի:

(Նստում և սեղանի առաջ, մի յերկտող գրում):
Ես դրությունը վերցրո՛ւ, կտանես դոմերը, կըտաս Արբահամին, նա հիսուն վոչխար կհանձնի քեզ: Նրան կասես, վոր եդ վոչխարները Դանել աղից յես առել եմ:

Տմն.— Եղպես ել յես կասեմ:

(Գրուքյունը վերցնում-դնում և գրպանը):
Դանել աղա. Յեղսոյի մասին յես չեմ տարկում. բայց ուզում եմ իմանալ, դու եդ վոչխարները ի՞նչ պայմանով ես ինձ տալիս:

Դ Ե Ա Յ Լ.— Լսի՛ր. դու վոր ներս յեկար, յես ինչ եյի
անում:

Շ մ ը.— Յես վոր ներս եկա, դու աղոթք եյիր անում:

Դ Ե Ա Յ Լ.— Ուրեմն, նշանակում աս, վոր նախ քան
մարդկանց հետ գործ բռնիր, աստծո հետ եմ
յես գործ ունենում: Հետևապես, պայմանը նրա
հետ կապելուց հետո, վոչխարները հանդիստ սըր-
տով աալիս եմ քեզ: Տար պահի՛ր, վորպես քու
սեփական ապրանքը:

Շ մ ը.— Շնորհակալ եմ, Դանն'լ աղա, ամեն կերպ
կաշխատեմ քու առաջ պարզերես դուրս գամ:
Մինչև իմ մահը քու արած ես լավությունը յես
չեմ մոռանա:

(Դուրսը աղմուկ, իրարանցում: Հեղինարը
շտապ մերս ե մտնում):

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնք և Հեղինար

Հ Ե Ղ Ի Ա.— Ա՛յ մարդ, ենտեղ ինչվոր դամաղալ են
բարձրացրել: (Մոտեցնում ե լուսամուտին):

Դ Ե Ա Յ Լ.— Մի գնա տես եդ ի՞նչ աս պատահել:

Շ մ ը.— Ես բողեյիս գնամ իմանամ: (Դուրս ե գը-
նում):

Հ Ե Ղ Ի Ա.— Ձե, լուրջ բան աս. նրանց միտինդը խան-
գարվեց. բոլորը խառնվել են իրար...

Դ Ե Ա Յ Լ.— Հը՛. ասում ես՝ նրանց միտինդը խան-
գարվե՞ց, նրանք խառնվել են իրա՞ր... Թող
խառնվեն, Թող գլուխները կորցնեն... Թող ամեն
ինչ խանգարվի...

Հ Ե Ղ Ի Ա.— Ա՛յ մարդ, հաստատ բան աս պատահել.
արի տես՝ վո՞նց են շփոթված դես ու դեն վազ-
վղում: Ձլնի՞ նրանք մերոնց դալը իմացել ու հմի
գլուխները կորցրած, ամեն ինչ Թողել՝ փախ-
չում են...

Դ Ե Ա Յ Լ.— Ի՞նչպես թե փախչում են: Սրի կքաչեմ

բուրբին, կկոտորեմ... կթողնե՞մ, վոր նրանք
փախչեն...

Հեղին.— Հրեն Շմոն գալիս ա:

Դու անիլ.— Գա տեսնենք՝ ի՞նչ խարար ա բերում:
(Մտնն անքս և գալիս):

Դե՛, շարժվի՛, չուլիս յարամազ, Նոյի ազնավը
դառա՞ր: Մինչև տեղիցդ շարժվում ես, իմ սիր-
տը պատուվում ա... (Ապտակում և): Չուլիս շան-
վորդի, ինձ հետ բարեկամութուն ա ուզում
անի... փեսա՛ յե ուզում դառնա... ախմա՛խ,
շան տղա՛... տե՛ս հլա մտքովը ինչե՛ր ա անց-
նում...

Մտն.— Դանե՛լ աղա.

Դու անիլ.— Չոռ աղա, զահրումար աղա... կամու-
նիստները գնացին, լեզուդ փորդ ա ընկել, հա՞:
Են թուղթը վոր տվի քեզ, ի՞նչ արիր:

Մտն.— Մոտս ա:

Դա՛.— Տուր ինձ: (Գրուք-յունը վերցնում և ու
պատում): Դե հիմա աղատ ես, կարող ես գնալ:

Մտն.— Դանե՛լ աղա. ախր դու ի՞նքդ ինձ կանչեցիր,
ինձ հետ բարեկամութուն եյիր ուզում անել:
Ախր աստու հետ պայման կապեցիր, վոչխարները
տալիս եյիր ինձ:

Դու անիլ.— Ի՞նչ ես ախմախ-ախմախ գլխիցդ դուրս
տալիս: Ի՞նչ բարեկամութուն, ի՞նչ աստված,
ի՞նչ պայման. դու ո՞վ ես, ի՞նչացու յես. աշ-
խարհիս յերեսին մարդը կարվել ա՞, գամ քեզ
հետ բարեկամութուն անեմ: Կամ թե չե հիսուն
վոչխարը քեզ կարելի՞ և տալ, դժվել հո չեմ:

Մտն.— Դու չես դժվել, Դանե՛լ աղա, յես իմ դըժ-
վել... Ձե՛, իմ ողորմած հոգի հայրս շատ ախմախ
մարդ ա յեղել... վոր տեսնում ես, ո՞՞ք կուացել,
առվից ջուր ա խմում, քարը վերցրո՛ւ, տուր
գլուխը ջարդի՛ր... (Մտնն դուրս և գնում. իսկ
Յեղսնն անքս և գալիս):

Նույնի և Յեղսոն

Յեղսոն.— Են մայմունը եստեղ ինչի՞ համար եր յեկեւ... (Հեղինարը իսկույն մտտեմում ե Յեղսոյիմ և լուռ խոսում):

Դամեիլ.— Յես ձեր հերն անիծեմ... Յես կուլակ իմ, հա՛. յես ձեր դասակարգային թշնամին եմ, հա՛... Դրա համար ել աջ ու ձախ դուք ինձ հուպ եք տալիս... դե հմի հուպ տվեք՝ տեսնեմ, վո՛նց եք հուպ տալիս... բավակա՞ն ա. յես վոր ձեն չեմ հանում, դուք կարծում եք յես խեղճացել ե՞մ, ուժ ու զորութ՛յունից ընկե՞լ... սխալվում եք. Դանել աղան նորից հարութ՛յուն ա առնում. նորից նա ուժ ու զորութ՛յուն ա ստանում... հա՛, հա՛, հա՛:

Յեղսոն.— Ինչի՞ համար ես եղ խոսքերը ասում: Բա դու չես վախենո՞ւմ: Միտինդում ահադին ժողովուրդ կա:

Դամեիլ.— Վո՞նց թի, բա նրանք չգնացի՞ն:

Յեղսոն.— Ո՞ւր պիտի գնան:

Հեղին.— Աղջի՛, բա մենք հենց իմացանք՝ մի բան ա պատահել:

Յեղսոն.— Պատահելը են ա, վոր ամբիոնի վրա ահադին մարդիկ էյին հավաքվել, ամբիոնը չդիմացավ, կոտորվեց, դրա պատճառով ել միտինդը մի քանի բոպեյով իսանդարվեց:

Հեղին.— Աղջի՛, բա ինչի՞ համար էյին ընենց վազվզում:

Յեղսոն.— Մեկը կարծեմ վնասվեց, տարան դրին ավտոյի մեջ ուղարկեցին հիվանդանոց: (Դրսում շարունակվում ե ուռռաների ու կեցցեմերի աղաղակը):

Չայն.— Կեցցե՛ հոկտեմբերյան: Հեղավոխութ՛յունը. ոււււ՛...

Ձ ա յ ն ե ր . — Ուռա՛ . ուռա՛ . . .

Ձ ա յ ն . — Կեցցե՛ համաշխարհային պրոլետարիատի
դեկամբար և առաջնորդ ընկեր Ստալինը . ուռա՛ .

Ձ ա յ ն ե ր . — Ուռա՛ . . . ուռա՛ . . .

(Ձուռնի նվագածուրյան տակ, յերգելով գալիս
անցնում են : Իսկ Դանել տղան մտալսո՞ւ հանգ-
ձած նայում է) :

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅՈՒՆԻՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը մերկայացնում է կոլխոզի պահեստի առջև:
Քաղաքից զոհեալտոտ արդյունաբերական ապրանքը
սայլերի վրայից իջեցնում են և տեղափոխում պա-
հեստը: Յերեկոյն:

Տ Ե Ս Ի Լ 1

Սերո, Սահակ, Մարգար, Նարգիզ, Հրուշ և Սանամ

Սերո.— Նրանք քնած չեն: Նրանք գիշեր-ցերեկ մաս-
ժում են, թե ինչպես անեն, վոր կոլխոզին վնասեն:
Նարգիզ.— Հողս նրանց գլխին: Կոլխոզը դրանց աչ-
քի վաւըն ա դառել: Նրանք մեր հաջողությունը
տեսնում, այլևի յին կատարում:
(Արագ-արագ ապրանքը կրում են):

Մարգար.— Սահակ բիձա, տեսնում ես, մեր աղտի-
վը վ՞ոնց ա աշխատում: Կոլխոզի մյուս բրիգադ-
ներն ել յեթե ես տեմպով աշխատեն, եկող տարի
մեր կոլխոզը այլևի կուժեղանա:

Սահակ.— Եդ ճիշտ ես ասում, բայց թե կոոպերատի-
վի ապրանքը ես գիշեր ինչ ուզում ե ըլի, պետք ե
բերենք:

Մարգար.— Կրեբենք, ինչ կա վոր, հաղիվ մի իշարեռ.
ապրանք ա մնացել:

Սահակ.— Դե վոր բաննց ա, եչը վերցնեմ դամ. զուր
տեղը սայլը չտանեմ:

Մարգար.— Դու ես իմանում. ուզում ես դնա:

Սահակ.— Գնամ: (Դուրս ե գնում):

Նարգիզ.— Ընկեր նախադահ, մենք մեր դործը վեր-
ջացրինք, կարճող ենք դնալ տուն:

Սերո.— Ազատ իրավունք ունեք: Վաղը յես կկար-
գադրեմ, վոր պահեստում ես որվա ձեր կատարած

աշխատանքի դիմաց մի բան ավել գրեն:

(Կամայք միմյանց հետ լուռ խոսում եմ):

Մարգար.— Ելի սկսեցին իրար հետ քչփչալ:

Նարգիզ.— Քչփչոց չի:

Հրուշ.— Մենք մեր պահանջի ծրագիրն ենք կազմում:

Սեթու.— Դե լավ, կազմեք:

Սանամ.— Արդեն կազմեցինք:

Սեթու.— Ասեք տեսնեմ, ծրագրի առաջին կետը վո՞րն ար:

Նարգիզ.— Ծրագրի առաջին կետը նա ե, վոր պահեստում հստակ մեր կատարած աշխատանքի համար մենք վոչինչ չենք պահանջում:

Հրուշ.— Իսկ ծրագրի յերկրորդ կետն ել նա ե, վոր դուք կարդադրեք, հստակ ստացված են քիչմիբի կտորներից մեր հաշվին մեղ համար մի մի դեյրացու առանձնացնեն:

Սեթու.— Շատ բարի, ձեր պահանջը վաղը կձեռակերպենք:

(Շմռն հարբած մերս ե գալիս):

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնք և Շմռ

Շմռ.— Դուք խարա՞ր եք, վոր սղոցարանի պատը ջուրը եկել քանդում ար:

Սեթու.— Եդ ջուրը ախր մենք վերեվից կտրել եյինք:

Շմռ.— Դուք կտրել եք, իսկ մեկ ուրիշը ձեր կտրած ջուրը, յերևի չի իմացել, դնացել բաց ար թողել:

Նարգիզ.— Ել յերկար խոսելու ժամանակը չի մարդա մի բահ վերցնենք, դնանք ջուրը կտրենք:

Մարգար.— Ծիշտ ար ստում: Հրես բահերը, վերցրեք դուք դնացեք, յես ել պահեստը կողպեմ դամ:

(Բահերը պահեստից բերում ե տալիս մրանց):

Սեթու.— Դե մենք դնացինք, դու ել գործդ շուտ վերջացրու արի:

(Մերոն, Նարգիզը, Հրուշը և Սամաւը բաւերը վերցնում եմ գնում) :

Մարգար.— Դու ինչի՞ համար չզնայիր :

Շմո.— Յես ինչի պիտի դնամ, յես մենաստնաես մարդ եմ, կոլխողի սղոցարանի հետ յես ի՞նչ հաշիվ ունեմ : Կոլխող ընդունվելու համար դիմում ներկայացրի, չընդունեցիր :

Մարգար.— Ձընդունեցինք, վորովհետև վերևի ետաժող դարդակ ա : Կուլակները ինչ վոր ասում են, դու լսում ես. նրանց վորոշումներին յենթարկվում : (Պահեստը կողպում ե ու գնում) :

Շմո.— Իմ վերևի ետաժող դարդակ ա, ձերը՝ լիքը, դե հմի դնացեք չարչարվեք : (Դուրս ե գնում) :

Տ Ե Ս Ի Լ 3

Սահակ և հետո Ավետիք

(Սահակը մերսից «չոչ, չոչ» ասելով մերս ե գալիս)

Սահակ.— Շան տղի անասուն, ես որ դու ինձ մորթեցիր : Պահո, սրանք դնացել են :

Ավետիք.— Սահակ բիձա, են շոֆերը ի՞նչ եր ուզում քեզանից :

Սահակ.— Շոֆեր չե, ատվակատ ասա : Պահ, պահ, պահ :

Ավետիք.— Խնդիրը ինչո՞ւմն ե, յես չեմ հասկանում :

Սահակ.— Խնդիրը նրանումն ա, վոր կոտպերատիվի ապրանքը բերելիս, սվխատոկ տվեց, եչս խրտնեց, բեռը վրից շուռ եկավ ու ինքն ել դնաց ընկավ չոլերը : Բա սա կարդ ու կանոն ա՞ :

Ավետիք.— Դե լավ, ետեղ շոֆերը ի՞նչ մեղավոր ա, վոր քու եչը սվխատոկի ձենից խրտնում ա :

Սահակ.— Շոֆերը մեղավոր չի, բա յես եմ մեղավոր : Գնացի եչին մի կերպ վերցրի բերի ճանբի վրա կանդնացրի, բայց թե բեռը վրան չդրած նորից ես ավտոն եկավ, սվխատոկը տվեց ու նորից խեղճ

անտոռնը խրտնեց ընկալ չուերը: Ախպեր, դե յես հալիվոր մարդ եմ, ամեն անգամ նրա քամակիցը հո չեմ կարա դնա:

Ավետիք.— Դե լալ, հիմա դու ի՞նչ ես առաջարկում: Ավտոռների յերթեվեկությունը արդեկն՞նք, թե հնարավորություն պետք ե տալ նրանց ել աշխատելու:

Սահակ.— Դրանով խնդիրը չլուծվեց: Գյուղխորհրդի նախագահ ես:

Ավետիք.— Շատ ել դյուղխորհրդի նախագահ եմ, յես իմ աշխատանքը պտի թողնեմ քու եշի խնդրով զբաղվե՞մ: Առանց են ել աջ թեքման մեջ են մեղադրում, յեթե եդ ուղղությամբ վորևե կարգադրություն անելու լինեմ, աջ ուկլոնը թամամ վրաս կհաստատվի: Ձե, եդ տեսակ հիմարություն յես չեմ անի: (Ուզում ե գնալ):

Սահակ.— Գնո՞ւմ ես:

Ավետիք.— Բա հո ետեղ չեմ մնալու: (Ուզում ե գնալ):

Սահակ.— Ախր, սպասիր, քեղ բան եմ ասում:

Ավետիք.— Դե ասա տեսնեմ ինչ ես ասում, յես տեղ պիտի գնամ, վրադ դործ ունեմ, ինձ մի ուշացնի:

Սահակ.— Տնաչեն, ինքան շշկլացրիր, վոր ասելու խոսքս ել մոռացա: Հա, են եյի ասում: Կոռպերատիվի ապրանքը կկորչի, տակից դուրս դալ չեմ կարող եդ շոֆերների համար մի կարգադրություն արա, նրանք շատ են յերես առել, հետները խոսալ չի ըլում:

Ավետիք.— Յես բան եմ ասում, սա ելի իրա եշն ա քրչում: Լսիր, դու ես աշխարհում չե՞ս ապրում: Ես քաղաքական անց ու դարձից բա դու սկի դադափար չունե՞ս:

Սահակ.— Դե լալ, եդ դադափարի հետ իմ ելը ի՞նչ կապ ունի:

Ավետիք.— Շատ մեծ կապ ունի: Բա դու չգիտե՞ս, վոր մեր յերկիրը ինդուստրիալ ե դառնում: Վոր

սրանից հետո, վորպես քաշող ուժ, վորպես փոխադրական միջոց, յեղն ու դոմեշը, եշն ու ձին մեջտեղից վերանսում են:

Սահակ.— Վո՞նց թե վերանում են:

Ավետիք.— Այսինքն նրանց փոխարինելու յե ելեկտրական յերկաթուղին, տրամվայը, անրոսլանը — այսինքն ուրիշ խոսքով, մենք մեր յերկրում սոցիալիզմ ենք կառուցում, մեզ տեմպ ա հարկավոր... իսկ դու հասկանում ես տեմպը ինչ ա նշանակում: (Դուրս ե գնում):

Սահակ.— Հասկանում եմ... Են ել եմ հասկանում, վոր տրամվայն ու անրոսլանը ելած տեղը, չի խանդարում, վոր մենք վորպես քարշող ուժ յեզն ու դոմեշը, եշն ու ձին ել ունենանք... (Դուրս ե գնում):

(Սերքոն, Մարգարը, Նարգիզը, Հրուշը և Սանամը խոսելով գալիս են անցնում):

Սերքո.— Հարկավոր ա եղ խնդիրը ուսումնասիրել:

Մարգար.— Դասակարգային թշնամին իր գործը կատարում ա նաղդի վրա, դու ուզում ես ուսումնասիրի թեկուզ ինչ ուզում ես արա: (Դուրս են գնում):

ՏԵՄԻԼ 4

Դանել, Գարասիմ, հետո տերտեր և Շմո

Դանել.— Անիրավները շուտ իմացան:

Գարասիմ.— Բայց միևնույն ե, եղ սդոցարանը ել բանի պետք չի: Ասենք դրանց համար ինչ նշանակութուն ունի. նորից կշինեն:

Դանել.— Նրանք կշինեն, յես նորից կքանդեմ:

Տերտեր.— Արի, Դանել—ազան ել հրես ստեղ ա, նա քեզ կարևոր բան պտի ասի:

Շմո.— Գիտեմ, եղ կարևոր բանը նա ինձ ասել ա:

Տերտեր.— Յեթե ասել ե, նշանակում ե, վոր նրա ասածը պետք ե կատարել:

Շմո. — Բա ինչի նա իր տված խոստումը չի կատարում:

Դամեյլ. — Կկատարեմ:

Շմո. — Դե աստժով յերդվիր:

Դամեյլ. — Աստված վկա:

Քարասիւմ. — Մենք ել վկա ենք:

Տերտեր. — Դանել աղան են տեսակ մարդ չի, նա իր տված խոստումը կկատարի:

Շմո. — Դե վոր ըտենց ա, են նավթոտ շորը տվեք:
(Տերտերը փարաջի տակից նավթոտ փալասի կտորը հանում է տալիս նրան):

Ձե, Դանել աղա, չեմ անի:

Դամեյլ. — Ինչ վախկոտն ես յեղել: Վերցրու ես նավթոտ շորը, ես ել սպիչկան կվառես ու պահեստի կտարված լուսամուտից ներս կգցես: Դե, ե՛լ ժամանակ մի կորցրու:

Շմո. — Դանել աղա, վախենում եմ...

Քարասիւմ. — Այ շաչ—եդ խոսքը դու վոր ասում ես, Դանել աղան ել քեզ աղջիկ կտա՞: Դու գիտես, վոր նրա աղջկա համար ուրիշները դուրս են կտարում:

Տերտեր. — Ճիշտ ա ասում, աշխարհը վոր քանդես, Յեղոսոյի նման տեսքով աղջիկ դու չես ճարի: Նրան ձեռքիցդ բաց մի թող: (Շմոն նավթոտ փալասը և լուցկին ձեռքին գնում է):

Քարասիւմ. — Գնաց...

Դամեյլ. — Գնաց, բայց կարող ա հետ գալ:

Տերտեր. — Ձե, սպիչկեն կպցրեց:

Դամեյլ. — Ասում ես կպցրե՞ց:

Քարասիւմ. — Արդեն ծուխը բարձրացաւ:

Դամեյլ. — Ծուխ բարձրանալը նշանակութուն չունի, կրակի ալիքները պիտի յերկինք բարձրանան, վոր սիրաս հովանա...

Տերտեր. — Գյաղեն դալիս ա...

Դամեյլ. — Դե անցեք գործի...

(Գաղտագողի կերպով մրամբ հետապնդում եմ, չրդեհը բարձրամում ե: Լսվում ե Շմոյի ճայնը՝ շոգնեցեք... սպանեցիմ... խորհում անգուկ-իրար-անցում):

Ձայնեք.— Կոլխոզի պահեստը կրակ ա ընկել, հասեք... (Կոլխոզնիկները վագելով գալիս եմ, վերքոնքրով և կծերով ջուր եմ բերում և սկսում կրակը հանգցնել):

Սերք.— Տղերք ջան, ապրանքը զգուշությամբ դուրս քերեք, վոր չփչանա:

Նարգիզ.— Ես տեղ ինչ վոր մեշոկ ա ընկած.

Մարգար.— Դեռ քերեք տեսնեք:

(Կոլխոզնիկները պահեստի հետևի կողմից մեշոկը քաշ տալով բերում եմ):

Հրուշ.— Մեշոկում կարծես մարդ լինի նստած:

Սամա.— Իսկապես մարդու նման ա:

Սերք.— Յենթադրություններդ թողեք:

(Մեշոկը քաց եմ անում և սարսափով հետ քաշվում):

Իսկապես մարդ ե յեղել. նոր ե սպանված...

Բոլորը.— Հանեք տեսնեք ո՞վ ե...

Մարգար.— Շմոն ե...


Բոլորը.— Շմոն...

Տ Ե Ս Ի Լ 5

Նույնք, Սահակ և մի խումք գյուղացիներ (Դանելիմ, Գարասիմիմ և տերտերիմ շրջապատած բերում եմ):

Սահակ.— Կոլխոզի պահեստը պատարեք զցել հերիջ չի, ուղում եք փախչե՞լ... Կարկաճներդ կջարդեմ, շուն-շան վորդիք...

ՎԱՐԱԳՈՒՅՐ



Լեզվ. խմբ. Հ. Պետրոսյան
Տեխ. խմբ. Ս. Ալբունյան
Տիպոգր. նկ. Ս. Գասպարյան
Սրբազրիչներ՝ Հ. Դուրխանյան, Հ. Մամուկյան



Գլխավորի տեղը №—9217. Պատվեր 622
Հրատակչ. 4071, Տիրաժ 3000
Թղթի չափսը 62—94 տպագր. 25. Համար. ձեռն առ-
ձույնով կա 26880 նիշ հեղինակ. 16 $\frac{3}{4}$

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029872

A $\frac{\text{II}}{29870}$